ԱԼԵՔՍԱՆ
ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ
(ԱՐՑԱԽ ԵՒ ՈՒՏԻՔ)

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ՎԻԵՆՆԱ - ԵՐԵՒԱՆ
2009

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՏՈՐ ՄԽԱ.

NATIONALBIBLIOTHEK
BAND 241

ALEXAN
HAKOBIAN

HISTORISCH-GEOGRAPHISCHE UND EPIGRAPHISCHE FORSCHUNGEN (ARTZACH UND UTIQ)

MECHITARISTEN-VERLAG
WIEN-YEREWAN
2009

ԱԼԵՔՍԱՆ
ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ (ԱՐՑԱԽ ԵՒ ՈՒՏԻՔ)

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ՎԻԵՆՆԱ - ԵՐԵՒԱՆ
2009

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Գիրքը հրատարակուել է
Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան
հովանաւորութեամբ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մխիթարեան միաբանութեան «Ազգային մատենադարան» պատմա-բանասիրական շարքի այն հատորում Մեծ Հայքի Արցախ, Ուտիք եւ յարակից նահանգների պատմական աշխարհագրութեանն ու վիմագրութեանն առնչուող՝ «Հանդէս ամսօրեայ»-ի վերջին տասնամեակի տարեգրքերում զետեղուած մեր աշխատանքների վերահրատարակութիւնը լաւագոյն առիթն է՝ շահեկանօրէն ամբողջացնելու գիտական ու ազգային հետաքրքրութիւն ներկայացնող մի ծաւալուն խնդրի մասնագիտական նորօրեայ լուսաբանման ընթացքը: Ուստի նոր շարքի հրատարակիչներն ու մեկենասները, անշուշտ, արժանի են ամենայն գնահատանքի ու երախտագիտութեան:

Ժողովածոյում ընդգրկուած աշխատանքները առանձնանում են նախ եւ առաջ նրանով, որ լինելով, քան ամենայնի, պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական բնոյթի՝ դրանք այնուամենայնիւ յենում են մատենագրական ամենաբազմակողմանի հետազօտութեան, այսինքն՝ ծագող պատմական ու բանասիրական խնդիրների առաւել մանրակրկիտ քննութեան վրայ, որը բնորոշ է հայ դասական աղբիւրագիտութեանը (Նորայր Բիւզանդացի, Հ. Ներսէս Ակինեան, Հ. Պօղոս Անանեան եւ այլոք): Դրանով հնարաւոր է դառնում նաեւ բուն պատմա-աշխարհագրական այլեւայլ կնճիռների՝ բազմաբնոյթ աղբիւրների սպառիչ ընդգրկման ու դաշտային որոնումների արդիւնքների վրայ յենուած առաւել մանրամասն վերհա-

նումը՝ այդպիսով յաւակնելով ներկայացնելու նախկին ու նոր եզրայանգումների բոլոր հիմքերի վերաբերեալ ամբողջական տեղեկատու: Միւս կողմից, թւում է, թէ յաղթահարւում է հայագիտութեան մէջ աւանդական դարձած մօտեցումը, երբ Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք աշխարհներին վերաբերուող խնդիրները քննարկւում էին առաւելապէս ընդհանուր ձեւով՝ առանց գուցէ եւ տեղային նշանակութեան մանրամասների մէջ մինչեւ վերջ խորանալու:

Ձեռնամուխ լինելով այս ժողովածոյի կազմմանը՝ որոշեցինք ձեռնպահ մնալ հրապարակուած նախօրինակների մէջ մեծ փոփոխութիւններ կատարելուց: Այդ պատճառով ստորեւ ոչ թէ նոր մենագրութիւն է, այլ հրատարակուած աշխատանքների իսկական ժողովածոյ, որում ընթերցողը կարող է հանդիպել նաեւ ինչ-ինչ փոքրիկ կրկնութիւնների: Որոշ դէպքերում *«[հեղ., 2009]»* նշումով յղել ենք նոր լոյս տեսած գրականութիւնը կամ նշել նախորդ եւ յաջորդ հատուածների աւելի մանրակրկիտ լուսաբանման տեղիները:

Յօդուածներին ուղեկցած քարտէզները, յատակագծերը եւ լուսանկարները եւս որոշեցինք զետեղել միեւնոյն հին վիճակով՝ միայն ամենից աւելի անհրաժեշտ դէպքերում առանձին ոչ մեծ շտկումներ կատարելով: Տպագրական դիւրութեան նկատառումով այդ օժանդակ նիւթերը տրուած են գրքի վերջում կամ էլ որպէս ներդիր: Չափազանց օգտակար պատեհութիւն եղաւ գրքի ընդհանուր անուանացանկերի (անձնանունների եւ աշխարհագրական ու էթնիկական անունների), ինչպէս նաեւ

վերջին քարտէզի կազմման հնարաւորութիւնը, որի յաջող իրագործման համար երախտապարտ եմ ինձ սիրալիրաբար օժանդակած մասնագէտներին (Յովհ. Կիզողեան, Յոլակ Յակոբեան եւ այլոք):

Ժողովածոյի նիւթերը դասաւորուած են իրենց տպագրման ժամանակի հերթականութեամբ եւ վեց հատուածներով համարակալմամբ: Դրանցից չորսը «Հանդէս ամսօրեայ»-ի՝ վերջին տասնամեակի տարեգրքերում լոյս տեսած հետեւեալ յօդուածներն են.

I. «Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը», - ՃԺԳ տարի (1998 թ.), սիւն. 269-322,

II. «Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները», - ՃԺԳ տարի (1999 թ.), սիւն. 247-300,

III. «Միծեռնավանքի եկեղեցու անուանումը, նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը», - ՃԺԴ տարի (2000 թ.), սիւն. 135-196,

IV. «Սիսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումը ըստ «Աշխարհացոյց»-ի», - ՃԻԲ տարի (2008 թ.), սիւն. 91-148:

Պատեհ առիթն օգտագործելով՝ դրանցից յետոյ զետեղել ենք նաեւ 2004 եւ 2005 թթ. Ստեփանակերտում տեղի ունեցած երկու միջազգային գիտաժողովներում ընթերցուած «Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը. Բ» եւ «Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք աշխարհները անտիկ աղբիւրներում» (V եւ VI) զեկուցումների էապէս լրամշակու-

ած բնագրերը, որոնք այլուր հրատարակուած չեն եղել:

Նշենք նաեւ, որ դասական ուղղագրութեան կանոնները՝ ինչպէս մեր նախորդ գործերում, այնպէս էլ այս ժողովածոյում կիրառուել են ըստ վերջին՝ Հ. Պօղոս Գոճանեանի աշխատութեան[1]:

Ալ. Յակոբեան

1 Հ. Պ. Գոճանեան, *Ուղեցոյց դասական ուղղագրութեան*, Վիեննա-Եր., 2006:

I

ՀԱԿԱՐԻ ՎԵՐՆԱՀՈՎՏԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Հակարի գետի վերին աւազանը, որը կազմուած է Շալուայ, Հոչանց եւ Աղաւնոյ վտակների հովիտներից, հնում համապատասխանում էր Մեծ Հայքի Սիւնիք նահանգի Աղահեճք եւ Արցախ նահանգի Վայկունիք եւ Բերձոր գաւառների տարածքին:

Ղեւոնդ Ալիշանից, Սուրէն Երեմեանից ու նրանց հետեւորդներից պատմագրութեան մէջ արմատաւորուել է աւանդական դարձած այն սխալ պատկերացումը, ըստ որի նշուած ամբողջ շրջանը, արեւելքում մինչեւ Արցախեան լեռնաշղթան, մաս է կազմել Աղահեճք (հետագայում Քաշաթաղ) գաւառի: Սակայն Ստեփաննոս Օրբէլեանի «Սիւնեաց պատմութիւնը», Մովսէս Դասխուրանցու (կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Պատմութիւն Աղուանից»-ը, Տաթեւի արքեպիսկոպոսանիստի հարկատու գիւղերի ցանկերը, Ամարասի (Հարաւային Արցախի) եպիսկոպոսութեան թեմական սահմանները նշող Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ Սիւնիքում ու Արցախում ստեղծուած այլ սկզբնաղբիւրներ, հստակօրէն արձանագրում են աշխարհացոյցեան եւ հետագայ Սիւնիքի ու Արցախի սահմանը Հակարի գետի ամբողջ երկա-

րութեամբ, Հիւսիսում՝ Հոչանց օժանդակով ու վերջինիս ձախ օժանդակ Գորանիխով: Հարցի խոր քննարկումը թողնելով այլ առիթի, այստեղ նշենք միայն, որ սիւնիք-արցախեան սահմանը Հակարի-Հոչանցով փոփոխութիւն չի կրել մինչեւ նոր ժամանակները, մինչեւ ԺԹ դարում ռուսական կայսրութեան Ելիզաւետպոլի նահանգի Զանգեզուրի գաւառի ստեղծումը, որն արեւելքում արդէն հասնում էր Արցախի լեռնաշղթային:

Այստեղ արձանագրենք նաեւ մեր տարածքի երեք գաւառների հարաւային սահմանագծերը: Աղահեջքի սահմանը Հաբանդ գաւառի հետ անցնում էր Հակարիի Աղաւնոյ վտակի (Ծիծեռնավանուց գետ) եւ վերջինիս վտակ Խրովի (Արաւուսի գետակ) ջրբաժան սարահարթի գծով: Վայկունիքի սահմանը Բերձոր գաւառի հետ անցնում էր, ամենայն հաւանականութեամբ, Հակարիի ձախ վտակ Եաղինի ձորակով (Թղիկ եւ Ջերտի գիւղերի միջեւ): Բերձորի հարաւային սահմանը (Սիսական-ի Կոտակի հետ) անցնում էր, ամենայն հաւանականութեամբ, Հակարիի ձախ վտակ Փոքր Ակերայի ձորակով (Ամուտեղ եւ Թովմասար լեռնագագաթների միջեւ):

Քոչուոր էթնիկական տարրերի ներթափանցումից երկուս ու կէս դար անց Հակարիի վերնագաւառը վերստին լիովին հայաշունչ է, եւ այդ վերածնունդի պտուղներից մէկն էլ նորագոյն ժամանակի գիտութեանն անյայտ յուշարձանների անընդհատ յայտնաբերումն է վերաբնակիչների կողմից: Ստորեւ ներկայացուող վիմագրերը հէնց այդպիսի յայտնագործութիւնների արդիւնքն են:

1. ԱՂԲԱԹԽԵՐՏ

Աղբաթխերտի գիւղատեղին գտնւում է Աղաւնոյ վտակի (Ծիծեռնավանուց գետ, Աղօղլան, Զաբուխչայ) վերնահովտում, Իշխանասարի հիւսիսային լանջերի յորդառատ աղբիւրներից ձեւաւորուող եւ շուրջ 10 կմ զուգահեռ հոսող երկու օժանդակների միջեւ հարաւից հիւսիս ձգուող սարահարթի վերջին մասում, Աղաւնոյի ափից 2 կմ հարաւ-արեւմուտք, Հակ գիւղից (ԺԸ-Ի դդ. յորջորջուած՝ Միճքեճղ*) դէպի Իշխանասարի աղբիւրները գնացող դաշտային ճանապարհով 4 կմ հարաւ, ծովի մակերեւոյթից 1650 մ բարձրութեան վրայ: ԺԹ դարի քարտէզներում այդ տեղում նշուած է* Աղպաթխիր, Աղվաթխէր, Աղբաղխիռ *(վրիպակով՝ Абадхирь) բնակավայրը եկեղեցու նշանով[1]: Իսկ ներկայումս սարահարթի մէջտեղում հնաւուրց շինութիւնների աւերակների ուրուագծերի մէջ բարձրանում է 1989-1992 թթ. «Իշխանասար - Լաչին քաղաք» ջրագիծը կառուցող աշխա-*

1 **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ-Ս.Ղազար, 1893, էջ 267 (նաեւ քարտէզում); **Е. Кондратенко**, *Карта Елисаветпольской губернии с показаніемъ сельскихъ обществъ и распределения населения по вероисповеданию*, Тифлисъ, 1888; *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1910; *Специальная карта Евразийской России*. Масштабъ 1:420000, Тифлисъ, 1911:

ջանցի շինարարների կողմից Հոկայ կոյտի մէջ հաւաքուած տապանաքարերի, խաչքարերի ու եկեղեցու անկիւնաքարերի մի բլուր:

Մեզ յայտնի չէ գիւղատեղիի որեւէ ուսումնասիրութիւն հայ կամ օտարազգի մասնագէտի կողմից[2]: Այն փաստօրէն յայտնաբերուել է Թաշաթաղի շրջանի ջրաշինարարների պատահական այցելութեան պահին (Միշա Ժամկոչեան եւ այլոք) ու հետազօտուել մեր կողմից 1999 թ. հոկտեմբերին շրջակայ բնակիչների աջակցութեամբ: Նախնական տպաւորութեամբ՝ գիւղատեղիի դիրքը եւ առկայ քարակոթողների մշակման որակը յուշում են, որ մեր առջեւ գոնէ միջնադարում բարձր կարգավիճակ ունեցած բնակավայրի աւերակներ են, որի վերջնական որակները կարող են ճշտուել հնագիտական պեղումներով:

Հնավայրի երեւացող քարակոթողներից համառօտ տապանագրեր ունեն երեք գերեզմանաքար, եւ ընդարձակ, 4 տողից բաղկացած արձանագրութիւն ունի մեծ չափերով մի ամբողջական խաչքար: Տապանաքարերից երկու-

2 Սամուէլ Կարապետեանը *Աղվառխէրը* ճանաչում է «Տաթեւու թեմի... ԺԴ գաւառացն» 1730 թ. պտղացուցակից յայտնի *Աղուէսաճարի* (տարբ. *Աղուէսայաքի*) գիւղանուան հետ, որը դժուար է ճշգրտել կամ մերժել (**Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Եր., 1999, էջ 132): Հմմտ. *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի**, Հրատ. պատրաստեց... **Աշ. Աբրահամեանը**, Եր., 1942 /Յանելուած/, էջ 42 («Միրիկն..., Հէրի..., *Աղուէսաճաքի*..., Հակ...»):

ան ուղղանկիւն են, մէկն՝ օրօրոցաձեւ: Ուղղանկիւն, մեծ չափերի (220x90x20 սմ) իրար նման տապանաքարերի երեսին, երկգիծ մարզակերպ շրջանակի մէջ մէկական տողով փորագրուած են համառօտ տապանագրեր.

ԱՅՍ Է ՀԱ›Յ‹ՆԳԻՍՏ ՄՍՐԻԿԱ *(կամ* ՅՐԻԿԱ, *ընդ որում սկզբի* Յ-ն՝ *բոլորագրով):*

ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Է ԼՐՈՅ *(տե՛ս պատկեր. 1):*

Առաջինում կցագիր են Ս+Է *եւ* Ա+Յ+Ն *տառերը: Վերջին բառի* Ս-*ի ձախ ստեղնն սկսուած է կէսից, հաւանաբար, նախորդ* Մ-*ին միախառնուելուց խուսափելու նպատակով:* Տ-*ն գրուած է* Օ-*ի նման կլորակով: Կամ, եթէ այդ կլորակը զարդանախշ է, իսկ* Մ-*ն՝* Տ, *ապա անունը պէտք է կարդալ* ՑՐԻԿԱ‹Յ›*: Երկրորդ տապանագրի մէջ կասկածելի տեղեր չկան, բացի այն հանգամանքից, որ* Լրոյ (< Լու"ր, Լա"ր, Լի"ր) *կամ* Էլրոյ *անուան այլ ժիշտաակութիւն մեզ յայտնի չէ: Նոյն կերպ չունենք նաեւ* Օրիկ *անուն: Փոխարէնը՝* Մարիկ-ը *ուր միջնադարում տարածուած իգական անուն է, որի մասին կը խօսենք ստորեւ:*

Օրօրոցաձեւ տապանաքարը, որը խնամքով զարդանախշուած է փարդեակներով, խաչերով ու մարզաքանդակներով, երկատարեան է եւ երկլանջ վերնամասով: Վերջինիս հարաւային նիստին եղել է երկտող արձանագրութիւն, որից հողմնահարութեան պատճառով ընթերցւում են միայն առաջին տառերը, ԱՅՍ Է Հ[...]*: Դրանց չափերից երեւում է, որ իւրաքանչիւր տողում եղել է 12-15 տառ:*

Քառատող վիմագիրը կրող խաչքարը (չափերը 190x90x20 սմ) պահպանուել է չնչին ջարդուածքներով եւ օրօրոցաձեւ տապանաքարի նման զարդանախշուած է բարձրարուեստ յաւերժութեան նշաններով, խաչերով եւ վեցանկիւններով լցուած վարդեակներով: Արձանագրութեան առաջին տողը փորագրուած է խաչքարի քիւին, իսկ մնացած երեքը՝ մինչեւ մեծ խաչի շրջանակը հասնող, դէպի ներս փոքր կլորութիւն ունեցող քիւատակին: Քարի երեսի աջ վերին անկեան ջարդուածքի պատճառով բացակայում է 1-ին տողի առաջին տառը (հաւանաբար՝ {Ջ}) եւ 2-րդ տողի առաջին տառի վերեւի կէսը (հաւանաբար՝ Ե): Թուականն առնուած է կրկնակէտերի մէջ, պատուոյ եւ այլ նշաններ չկան (տե՛ս պատկեր 2): Գրչանկարը հետեւեալն է.



Մեր ընթերցումն է.

{Ջ}ԳԻՆՈՍ ‹Յ›ԻՇԵՑԷՔ :ԹՎ[ԻՆ] ՊԿԲ: *(=1413 թ.)*

ԵՍ՝ ԱՂԲ‹Ա›ԹԽԷՐՏՈՒ ԾԱՏԽԷՐՍ,

Կ‹Ա›ԿՆԵՑԻ ՋԽԱՁՍ ՀՕՔ‹ՈՅ›Ն

ՄԱԻՐՆ ՄԵՐՈ ԲԷԾՔԵՆԱ ՄՍՐԻԿԱ:

Ըստ այսմ կցագրուած են. 1-ին տողում՝ առաջին բառի Գ-ն ու Ի-ն, առաջին եւ երկրորդ բառերի կից Ս-ն ու Ի-ն: 2-րդ տողում՝ առաջին եւ երկրորդ բառերի կից Ս-ն ու Ա-ն, երկրորդ բառի Տ-ն ու Ո-ն, երրորդ բառի Ա-ն ու Տ-ն եւ Է-ն ու Ր-ն: 4-րդ տողում՝ առաջին բառի երեք տառերը՝ Մ+Ա+Ի, առաջին եւ երկրորդ բառերի կից Ն+Մ+Ե, երրորդ եւ չորրորդ բառերի կից Ն+Ա+Մ տառերը:

Անհրաժեշտ է վերապահում անել, որ կցագրման երկու դէպքերում ստացուել է մէկական տառ (Գ+Ինոս, եՍ+Աղբաթխէրտու), որն, իհարկէ, ստիպում է հնարաւոր համարել ապագայ ուսումնասիրողների գուցէ եւ այլ վերծանութեան փորձեր: Թէպէտ նախ եւ առաջ հարկ է նկատի ունենալ, որ ԳԻՆՈՍ բառի Գ-ի աջ ե-[illegible] նման է [illegible] Ի-երի [illegible], քան Ն, Է, Ի եւ Ո տառերի հորիզոնական գծիկներին: Իսկ երկրորդ դէպքի համար նշենք, որ Ս եւ Ա տառերի կցագրման օրինակներ, այդ թւում ԵՍ դերանուան եւ Ա-ով սկսուող յաջորդ բառի հարեւանութեան պարագայում, հանդիպում է նաեւ այլուր: Օր.՝ Վայոցձոր մարզի Ս. Ստեփաննոս եկեղեցու հարաւային պատում խաչքարի պատուանդանի վիմագրում (ԵԱՃԱԳՍ ԿԱ‹Ն›Կ/ՆԵՑԻ ՋԽԱՁՍ) Սեդրակ Բարխուդարեանը չապացուցուած վերծանել է ԵՍ՝ ՃԱԳՍ[3], այնինչ ճիշտը՝ ԵՍ ԱՃԱԳՍ ընթերցելն է.

3 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II. Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1960, էջ 105, N 304:

ինչպէս որ առաջին իսկ հայեացքից երեւում է լուսանկարում յստակ նոյնացող երեք Ա-երի համեմատութիւնից (տախտակ XXVIII, լուս. 109), ընդ որում Աճապ-ը (նաեւ՝ Աչաք) ուշմիջնադարեան տարածուած արական անուն է[4], իսկ Ճապ անուն այլուր չունենք: Մի այլ դէպքում՝ Վաղադնոյ վանքի Ս. Կարապետ եկեղեցու սրահի որմնամոյթի վրայի 1438 թ. ութ տողանոց արձանագրութեան մէջ (ԵՍ ՄԻՐ Մ[Ա]Ր-Գ[ԻՍ], ՈՐԴԻ // ԶԱՋԻԿԻՆ ԱՆԿԵ//ՂԱԿՈԹԵՑԻ, ՇԻՆԵ//ՑԻ...) վիմագրագէտն իրաւացիօրէն ծանօթագրել է. «Կարող է ԵՍ ԱՄԻՐ կարդացուել»[5]: Յաւելենք նաեւ Կեչառոյքի Ս. Աստուածածին եկեղեցու հարաւային պատին Գրիգոր Մագիստրոսի թողած մեծ վիմագրի 4-րդ տողում գրուածը (ԶԺԱՄՆ ՀԱՍԱՆԱ‹Յ› ԱՐԱՅԵՆ ԱՆԽԱՓԱՆ...), որի համար Գարեգին Յովսէփեանը ծանօթագրել է. «sic! արդեօք Ա Ս-ի հետ միացա՞ծ, չի նկատւում»[6]: Այդպէս է նաեւ Խոտակերաց Ս. Նշանի արծաթեայ պահարանի վրայ Էաչի Պռոշեանց իշխանի արձանագրութեան 3-րդ տողում. ՈՐԴՈ‹Յ› ՄԵԾԻՆ ՎԱՍԱԿԱ‹Յ› (=Վասակայ)[7]:

4 Հմմտ. Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա, Եր., 1942, էջ 203:

5 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 103, N 297 (ընդգծումները այստեղ եւ ստորեւ մերն են - *Ա. Յ.*):

6 Տե՛ս **Գարեգին վարդապետ [Յովսէփեանց]**, *Քարտէզ հայ հնագրութեան*, - «Շողակաթ», գիրք Ա, Վաղարշապատ, 1912, էջ 181:

7 Նոյն տեղում, տախտակ ԺՁ:

Երեւում է, որ մեր փորագրողը (կամ բնագիր կազմո՞ղը) իրականում յապաւել է միայն ձայնաւորները (Աղբ[ա]թխէրառ, կ[ա]կնեցի, հօք[ոյ]ն կամ հօք[ու]ն) եւ կիսաձայն Յ-ն ([Յ]իշեցէք, հօք[ոյ]ն, մերո[յ], Բէշքենա[յ], Մարիկա[յ]): Միեւնոյն տառի տարբեր գրելաձեւ ունենք Յ-ի դէպքում. ‹Յ›ԻՇԵՑԷՔ-ում այն բոլորագիր է, իսկ Կ‹Ա›ԿՆԵՑԻ-ում՝ երկաթագիր: ԱՂԲ‹Ա›ԹԽԷՐՏ-ի Տ-ի վերջին ստեղնն իջնում է մինչեւ տողագիծը՝ հաւանաբար, Ռ-ի հետ կցագրելու արդիւնքում, իսկ ՇԱՏԽԷՐ բառի մէջ նոյն ստեղնն աւարտւում է վերին կէսով՝ ըստ երեւոյթին, կցագրուած Ա-ի հորիզոնական ելուստին չմխրճուելու համար: Ուշագրաւ է ՀՕՔՈՅՆ բառի մէջ ոչ միայն Ք-ի, այլեւ Օ-ի օգտագործումը (ուշմիջնադարեան Սիւնիքում տարածուած գրելաձեւ[8]) եւ միաժամանակ ՄԱՒՐՆ բառի մէջ ԱՒ-ի պահպանումը:

Արձանագրութեան ճշգրիտ բնագիրը վերականգնւում է մի անխուսափելի վերադասման շնորհիւ: Եթէ բնագրի ընթերցումն սկսում ենք քիւի տողից, ապա ստացւում է, որ առաջինն իրեն յիշատակում է ոմն Գինոս (որը, պարզ է՝ փորագրողն է), որից յետոյ միայն գրւում է պատուիրատուի մասը. «Ես՝ Աղբաթխէրառ Շատխէրս, կ‹ան›կնեցի գնաչս...»: Նման հերթականութիւն երբեմն հանդիպում է ձեռագրերի յիշատակարաններում, բայց վիմագրերի

8 Խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում վիմագրագէտ Սուրէն Սաղումեանին:

4247

բազմահազար նմուշներից մեզ չի հանդիպել եւ ոչ մէկում: Բոլոր այն փորագրիչները, ովքեր երբեմն իրենց թոյլ են տուել սեփական անունը յիշատակել պատուիրատուի անուան կողքին (եւ այդպիսի կանոնազանցումների շնորհիւ, բարեբախտաբար, ունենք հին հայ վարպետների թանկագին անուններ[9]), արել են դա բնագրի վերջում[10]: Սակայն կարծում ենք, որ այս դէպքում էլ գործ ունենք սովորական հերթականութեան հետ: Այսինքն՝ արձանագրութիւնն սկսել է գրուել քիւատակից (այսօրուայ երկրորդ տողից)՝ «Ես՝ Աղբաթխէրատս Շատխէրս...»: Երեք տող անց փորագրողը հասել է մեծ խաչի շրջանակին եւ ստիպուած վճռել է թուականը գրել վերեւում, քիւի վրայ՝ ընդ որում թուականից առաջ տեղ (ու քաջութիւն) գտնելով նաեւ իր անուան յիշատակման համար: Այդպէս առաջացել է այսօրուայ առաջին, իսկ իրականում «հեղինակային» բնագրի վերջին

9 Համտ. Ս. Բարխուդարեան, *Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ*, Եր., 1963, էջ 22-25:

10 Բերենք դրա ամենագեղեցիկ օրինակներից մէկը՝ Ամաղուի Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու գաւթի արեւմտեան մուտքի հարաւային կողի 1308 թ. խաչքարի արձանագրութիւնը. ԵՍ՝ ԹԱՄԹԱ ԽԱԹՈՒՆՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿ//ՈՒԹԻ[ԻՆ] ՀՈԳՈ‹Յ› ԱԹԱՊԱԿ ՏԱՐՍԱ‹Յ›ԻԺԻՆ ԵՒ ՅԱՐԵՒՇԱ//ՏՈՒԹԻ[ԻՆ] ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԲԻ‹Ւ›ՐԹԷԼԻՆ ԵՒ ԲՈՒՂՏԱՅԻՆ: // ԹԻՎՆ ։ՉԾԷ։ ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ ՅԻՇ[ԵՑԷ՛Ք] (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. III, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1967, էջ 243; **Ս. Բարխուդարեան**, Նշ. աշխ., էջ 80):

տողը. «զ Գինոս յիշեցէք. թվին ՉԿԷ»: Յաւելենք, որ շատ նման ձեւով Աստմ քարգործ վարպետը («գործող») 1154 թ. խաչքարի վրայ (Մածնաբերդի վանքից Զովդարի եկեղեցի տեղափոխուած) իր անունն սկսել է գրել վիմագրի վերջին՝ վեցերորդ տողում, սակայն չտեղաւորելով ամբողջը՝ շարունակութիւնը տարել է վերեւի աջ հատուածը, ապա մի քանի տառից յետոյ ստիպուած բարձրացել է եւս մէկ տող (...ԵՒ ԶԱՏ//ՈՄ, ՈՐ ԳՈՐԾ//ՈՂ ԷՐ ԽԱՉԻՍ)[11]:

Սովորական չէ նաեւ Շատխէր Աղբաթխէրացու մօր անունը (ի դէպ, սպասելի էր «մաւրն իմոյ», ոչ թէ «մաւրն մերոյ» գրելը)՝ Բէշքեն-Մարիկ: Զարգացած եւ ուշ միջնադարում Մարիկ-ը (նաեւ՝ Մարի, Մարիխաթուն, Մարիշահ) տարածուած իգական անձնանուն է[12], սակայն Բէշքեն-ը (նաեւ՝ Բեժքեն, Պեշգին) արական է[13]: Իհարկէ, կարելի է խօսանալ մեր խաչքարի բնագրում աղաւաղումներ ենթադրելու եւ վերականգնումներ անելու մէջ (օր.՝ փորձելով վերականգնել. «մաւրն [եւ հօրն] մերոյ՝ Բէշքենայ [եւ] Մարիկայ»): Բայց աւելի պարզ մօտեցմամբ ուղղակի կարելի է տեսնել իգական Բէշքեն-Մարիկ երկատար անձնանուան առաջին օգտագործում, ինչպէս նաեւ՝ ենթադրել, որ

11 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1982, էջ 264, N 1024:

12 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, Եր., 1946, էջ 474-475:

13 Նոյն տեղում, հտ. Ա, Եր., 1942, էջ 493:

«-մարիկ» բաղադրիչը կիրառուել է «տիրուհի» նշանակութեամբ. այդպէս ունենք՝ «-տիկին», «-խաթուն», «-խան», «-խանում», «-շահ» եւն:

Խաչքարի եւ գուցէ նաեւ նոյնանման զարդանախշերով օրօրոցաձեւ տապանաքարի հեղինակի Գինոս *արական անձնանունը բազմիցս օգտագործուած է միջնադարում*[14]*: Հր. Աճառեանի օրինակներին կարելի է յաւելել եւս մէկը.* Գինոս *էր Բաշաթաղի իշխան Մէլիք Հայկազի (ԺԶ-ԺԷ դդ.) եղբօր անունը*[15]*:* Շատխէր *անձնանուան այլ օգտագործման օրինակ մեզ յայտնի չէ: Փոխարէնն ունենք «շատ-» բաղադրիչով կազմուած բազմաթիւ այլ անուններ.* Շատաղէկ *(ԺԳ դ.),* Շատարեւ *(8 դէպք, ԺԵ-ԺԷ դդ.),* Շատեմայր *(ԺԵ դ.),* Շատլոյս *(3 դէպք, ԺԳ-ԺԵ դդ.)*[16]*: Հր. Աճառեանի հաւաքած օրինակներին աւելանում է Սամուէլ Կարապետեանի կողմից 1987 թ. Տրտուի ձորում յայտնաբերուած Դադիվանքին մերձակայ Ս. Աստուածածնի վանքում արձանագրութիւն թողած նուիրատու* Շատբարին *(ԺԲ կամ ԺԳ դար)*[17]*:*

14 Նոյն տեղում, էջ 446:

15 **Մ. Հասրաթեան**, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, Եր., 1985, էջ 163:

16 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ. Եր., 1948, էջ 148-150:

17 **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*..., էջ 77: [Հմմտ. **Ս. Ա. Աւագեան**, *Ի յանգող անձնանունների սեռական, տրական յոլովների կազմութիւնը Ժ-ԺԳ դարերի վիմական արձանագրութիւններում*,– «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Եր., 1968 (վերահրատ. *Վիմագրական պրպտումներ*, Եր., 1981, էջ 184-185). «*Շատբարի*.– Նորագիւտ ար. անուն, որ կազմուած է հյ. *շատ* եւ *բարի* բառերից Շատաղէկ, Շատարեւ, Շատլոյս անունների նմանութեամբ. բոլորն էլ արական: Անուան ուղղական եւ տրական (*Շատբարէ*) յոլովաձեւերը վկայուած են Շամշադինի շրջանի Կապտավանքի հարաւային մուտքի բարաւորին փորագրուած նուիրատուական արձանագրութեան մէջ. «Կամաւն Այ ես *Շատբարի* միաբանեցայ...» ...այս նուիրագրութիւնը թուագրուած չէ, սակայն նրա ժամանակը մօտաւոր ճշտութեամբ որոշւում է Կապտավանքի վիմագրութեան տուեալներով՝ ԺԳ դարի կէսերը» - *հեղ., 2009*]:

Աղահեջք-Բաշաթաղ գաւառի Աղբաթխէրտ գիւղանուան յիշատակութիւնը ԺԵ դ. սկզբի խաչքարի վրայ թոյլ է տալիս կատարել մի կարեւոր պատմա-աշխարհագրական դիտարկում: Ինչպէս յայտնի է, Ստեփաննոս Օրբէլեանի «Պատմութիւն տանն Սիսական»-ի[18] *վերջում տրուած Տաթեւի արքեպիսկոպոսարանին հարկատու գիւղերի ցանկում Աղահեջքին յարորդող* Հաբանդ *(տարբ.* Համբանդ*) գաւառի*

18 Երկի առայժմ լաւագոյն ուսումնասիրութիւնը աշխարհաբար թարգմանութեան ներածութիւնն է (Ա. Ա. Աբրահամեան): Բանի դեռ չկայ քննական բնագիր, նախապատուութիւնը պէտք է տալ հնագոյն ձեռագրի ընթերցումներին (ՄՄ 6271, ընդօրինակուած 1513 թ.), որոնք հիմականում արտացոլուած են մոսկովեան հրատարակութեան եւ աշխարհաբար թարգմանութեան մէջ (**Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861; **Ստեփանոս Օրբէլեան**, *Սիւնիքի պատմութիւն*, Թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները **Ա. Ա. Աբրահամեանի**, Եր., 1986): Փարիզեան (=թիֆլիսեան) հրատարակութեան ընթերցումներն տալիս ենք իբրեւ տարբերակ (*Պատմութիւն նահանգին Սիսական*, Արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց**, Թիֆլիս. 1910):

ցուցակն սկսւում է Աղախիրտ (տարբ. Աղախերդ) գիւղանունով: Վերջինիս նմանութիւնը մեր Աղբ(ա)թխերտ-ին թոյլ է տալիս ենթադրել, որ պաղաղացուցակի սկզբնագրում Աղ(բ)ա(թ)խէրտ-ն է եղել Աղահեջքի վերջին գիւղը եւ ինչ-որ ձեռագրական աղաւաղման արդիւնքում կա՛մ Ստեփաննոս Օրբէլեանի, կա՛մ նրա սկզբնագիրն ընդօրինակողներից մէկի գրչի տակ այն վերածուել է Հաբանդի ցուցակի առաջին գիւղի: Այսօր էլ առկայ ձեռագրերի մեծ մասում գիւղացանկերը տրուած են երկու-երեք սիւնակով, եւ եթէ ենթադրենք, որ «Հաբանդ գաւառ» բառերը գրուած են եղել մայր ձեռագրի սիւնակներից մէկի վրայ (ոչ թէ սիւնակների մէջտեղում), ապա դրա դիմացի սիւնակի բառը, իրականում լինելով նախորդ գաւառի վերջին գիւղը, կարող էր ընկալուել որպէս Հաբանդի առաջինը: Աւելացնենք, որ Հաբանդի գիւղացանկն սկսւում է Աղբաթխէրտից շատ հեռու՝ Խնձորեսկի մերձակայքում (վերջինս 3-րդն է), շարունակւում դէպի Կոռնիձոր (Խոռեայ, 7-րդ) եւ Տեղ (11-րդ), անցնում դէպի Խանածախ (տարբ. Խոնածախ, 16-րդ), Վաղաթու (տարբ. Վաղատու, 17-րդ)[19] եւ Խորխոր (տարբ. Խորխոռ, 19-րդ)[20], այդտեղից վերադառնում

19 Ուշ միջնադարում՝ Պայինդուր, Բայանդուր (*Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42):

20 Հաւանաբար, ԺԷ դարից՝ *Խոզանավար, Խազնավար* (տե՛ս *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42):

զոյգ Մակաղոցներով (Խնածախի գետակի վերնահոսանքում) ու Կարբիներներով (ներկայիս՝ Քարաշէն)[21] դէպի Գորու (ներկայիս Հարթաշէնի մօտ), հասնում Հակարիի ափը (Բազմածակը - Մազմազակ եւ Քրաւնք - Քեօռլար[22]), իջնում մինչեւ Որոտանի գետաբերանը, վերադառնում նրա ձախ ափով մինչեւ Գորայք ու Ջագաձոր, եւս մի շրջան կատարում Խոտ գիւղի գետակի ափերով եւ աւարտւում Ծնոյհերք (Շնհեր - Շինուհայր) եւ Հալէ (Հալիձոր) գիւղերով:

«Սիւնեաց պատմութեան» ձեռագրերում գտնում ենք սպրդած եւս մի ընդօրինակման սխալ: Աղահեջք գաւառի ցանկում յիշատակւող 43 (=42) գիւղերից 37-րդը (=36-րդ) Հայրին է, որը յայտնի է նաեւ այլ աղբիւրներից: Տաթեւի վանքի 1730 թ. պաղաղացուցակում այն յիշատակւում է Հէրի (տարբ. Հէրէ), իսկ յաջորդ դարի քարտէզներում ու գրականութեան մէջ մինչեւ Ի դ. սկզբները՝ Հէրիկ ձեւով[23]: Գիւղը

21 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42: *Կարբինք*-ի ստուգաբանութեան մասին որպէս «ժայռ» տե՛ս **Յ. Կարագեոզեան**, *Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում)*, հտ. I, Եր., 1998, էջ 102:

22 Անունների համադրումն ըստ Մորուս Հասրաթեանի (*Պատմա-բանասիրական ուսումնասիրութիւններ*, էջ 155): [Վերաշինացուած Ծաղկաբերդ (ԺԹ դարում՝ *Մազմազակ*) գիւղից 2-3 կմ հարաւ գտնուող Քրօնք-Քեօռլարի ուշագրաւ ժայռափոր եկեղեցու մասին այժմ մանրամասն տե՛ս **Ս. Ճահինեան**, *Նոր հնագիտական վկայութիւններ Քաշաթաղից*. - «Հանդէս ամսօրեայ», ՃԺԶ տարի, Վիեննա-Եր., 2002, էջ 374-379 - *հեղ.*, *2009*]:

23 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յա-

գտնւում է Աղբաթխէրտի գիւղատեղիից դէպի արեւելք ընկած յաջորդ ձորակում, ԺԹ դ. քարտէզներում նշւած եւ ներկայումս խոտածածկ սայլի ճանապարհով 3-4 կմ հեռաւորութեան վրայ: Աղահեջքի ցանկում Հայրիից յետոյ գտնում ենք եւս վեց գիւղանուն (38-43-րդ)՝ Անոշաւան (տարբ. Անուշաւան), Աղտաւ (տարբ. Աղտառ), Շամրթա, Արքո, Վասակերտ (տարբ. Վասակակերտ) եւ Աւարակ (տարբ. Աւորոկ): Սակայն հետաքրքիր է, որ նոյն անունները չնչին տարընթերցումներով[24] եւ նոյն հաջորդականութեամբ յիշատակւում են նաեւ Ճահուկ գաւառի գիւղացանկի վերջում. Անուշաւան (տարբ. Անուշավանք), Աղտաւ (տարբ. Աղդաւ), Շոմրթայի (տարբ. Շմրթայի), Արքոյքա, Վասակերտ (տարբ. Վասակակերտ), Աւերակի[25]: Հաւանական է, որ երկու հատւածներից մէկում գիւղանունները կրկնւել են ինչ-որ մի գրչի սխալի արդիւնքում: Այս անուններից մի քանիսը որոշակի հաւանականութեամբ համադրւում են Նախիջեւանի Ճահուկ-Շահապոնք գաւառի գիւղերի հետ[26], միեւնոյն ժամանակ՝ Աղահեջք-Բաշա-

ւելուած/, էջ 42; **Հ. Ղ. Ալիշան**. *Սիսական*, էջ 267; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 195; **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 132-133:

24 Միակ լուրջ տարընթերցումը Ճահուկում *Աղտաւ*-ից յետոյ *Նորաշինիկ* գիւղանուան առկայութիւնն է, որի պատճառը տուեալ դէպքում կարեւոր չէ:

25 Ձեռ. ՄՄ 6271, 333ա, 335բ: **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, էջ 375, 379; *Պատմութիւն նահանգին Սիսական...*, էջ 516, 523:

26 Տե՛ս **Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ.**

թաղում որեւէ համադրութիւն չի նկատւում: Դրանից բխում է, որ կարող ենք ուղղել գրչական սխալը եւ Աղահեջքի գիւղացանկը համարել աւարտւած Հայրի-Հէրիկով: Իսկ վերջինս, ինչպէս ասացինք, հեռու է Աղբաթխէրտից (իրականում Աղահեջքի վերջին, իսկ գրիչներից մէկի սխալի արդիւնքում՝ Հաբանդի առաջին գիւղից) 3-4 կմ կամ ընդամենը մէկ ձորակ[27]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Աղահեջքի գիւղացուցակը, սկսւելով Աղաւնոյ գետի ձախ ափին Հակ (Մինքենդ) գիւղին արեւելքից հարեւան բնակավայրերից, Հակից (որը 5[<6]-րդն է) պտտւում է դէպի հիւսիս մինչեւ Ականք - Սպիտակաջուր[28] (8-րդ), շարունակւում դէպի հարաւ-արեւելք Հոչանց օժանդակի, ապա Հակարի գետի աջ ափերով (Արուական - Արբիկան[29] 9-րդ, Մշենի - Միշնի՝ 10-րդ,

Խ. Բարսեղեան. *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան* (այսուհետեւ՝ *ՀՅՇՏ Բառարան*), հտ. 1, Եր., 1986, էջ 198, 287, 362; հտ. 4, Եր., 1998, էջ 140, 765:

27 Թւում է, թէ նման սխալ է սպրդել նաեւ Սոթք - Աղահեջք անցման տեղում: Աղահեջքում 1-ինը նշւած *Աւժէն* գիւղը, գուցէ, Սոթքի վերջինն է: Կարծում ենք, որ հիմքում եղել է *Աւձէն* (*Աւձի գետ*-ից յետոյ), որը թելադրութեամբ ընդօրինակման պահին յաջորդ *Անէժ*-ի հնչողութեան ազդեցութեան տակ վերածւել է *Աւժէն*-ի:

28 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42): ԺԹ-ի դդ. յորջորջւել է *Աղբուլաղ*: Վերաշէնացւած *Սպիտակաջուրը* յայտնի է գիւղամիջի յորդ աղբիւրով եւ գիւղից ցած Հոչանցի խորաձորը գահավիժող 40 մետրանոց ջրվէժով:

29 **Е. Кондратенко**, *Карта Елисаветпольской губернии с*

Զիւնասար - *Սոնասար*[30] *13-րդ*, Հունչաւք[31] - *Հօ-*

показаніемъ сельскихъ обществъ..., Тифлисъ, 1888; *Карта Кавказского края*, Тифлисъ, 1904; *Пятиверстная карта Елисаветпольской губерніи*, Тифлисъ, 1910 (Арбиванъ); Հ. Գ. Ալիշան, *Սիսական*, քարտէզ (*Արցախ-ան*): 1730 թ. պտղացանկում *Արտական* է: Ի դարում յորջորջուել է *Այխասար*:

30 Տարբերակներն այս գլխում՝ *Զեւասար*, *Զիասար*: «Զիւնասարի վանք» (**Ստեփաննոս Օրբէլեան**, գլ. ԿԲ, տարբ. *Զիւնարու*) - *Сунасаръ* (ԺԹ դ. ռուսական քարտէզներում) - *Սոնասար* (Ի դ.) համադրման հեղինակը Յովհ. Կարագեոզեանն է: Վերաշէնացուած Սոնասարի բնակիչները գիւղի պահեստների ու զոմերի պատերի մէջ յայտնաբերել են եկեղեցու խոյակների, խաչքարերի ու պատուանդանների բազմաթիւ կտորներ, որոնք մինչեւ ազատագրումը բարբարոսաբար կոտրտուել ու շինաքարի են վերածուել (1936 թ. մի խումբ խաչքարեր դեռեւս ամբողջական են եղել, ինչպէս երեւում է Ա. Ալեքպերովի լուսանկարից. **А. Алекперов**, *К вопросу об изучении культуры курдов*, - ...Известия Азерб. ФАИА", т. XXV, Баку, 1936, էջ 37, նկ. 3): Դրանց զարդաքանդակների բացառիկ որակը ցոյց է տալիս, որ հողակոյտի տակ փակուած Զիւնասարի եկեղեցու պեղումները պատմա-ճարտարապետական յուրջ անակնկալ են մատուցելու մեզ: [Շինաքարի վերածուած կտորների վրայ առայժմ ամբողջական վիմագրեր չեն վերականգնւում, այլ միայն ընթերցւում են առանձին տառախմբեր, օր.՝ գիւղամիջեան խնուղու սկզբնամասի ձախակողմեան տներից մէկի տնտեսական կառոյցի պատի մէջ մի ուղղաձիգ կտրած սրբատաշ քարին՝ երկաթագիր 4 տող. «Ի ՅԱՄ{...} //ՅՈՎԱ{...} // ԵԻ ՅԱ{...} //ԻՈՅՍ {...}», իսկ կողքի քառատուածի վրայ՝ 2 տող, նոյնանման գեղագիր տառերով. «{...} ԵՍ //{...}ԱՄ //{...}» - *հեղ., 2009*]:

31 Տարբ. *Հունչաք*: Հետագայում՝ *Հօշանց* (**Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, Աշխատասիրութեամբ **Լ. Ա. Խանլարեանի**, Եր., 1990, գլ. ԻԱ, էջ 222: *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւե-

չանց՝ *16-րդ*, Մարգը - *Մարքից* [*<Մարգիս*]՝ *17-րդ*, Լօռը - *Սուս* [*>Լօռս*][32] *20-րդ*), *հասնում մինչեւ նրա Աղաւնոյ աջ վտակի* (*Ծիծեռնավանուց գետ*, *Աղօղլան*) *գետակիցը* (Ագարակուցետ՝ *21-րդ*), *թեքւում վերջինիս աջ ափով դէպի արեւմուտք* (Ծաքակի[33] - *Զաբուխ*՝ *22-րդ*, Արամուծ - *Արբէհլար*[34] *27-րդ*, Ծիծառնովանք[35] *28-րդ*, Հայկեակ - *Հալաքս*[36] *29-րդ*) *եւ աւարտ-*

լուած/, էջ 42), ԺԹ-ի դդ. յորջորջուած՝ *Հոչազ-Ղոչազ*:

32 *Սուս - Լօռք* (*>[*Լօռ°րս]*) համադրման համար հմմտ. *Տոյորս > Տոյրու* զուգահեռը: Յովհ. Կարագեոզեանի վարկածը (*Սեպագիր տեղանուններ*, էջ 118) այս գիւղանուան մէջ բիաինական բնագրերից յայտնի *susi* («տաճար»՝ հայերէնում պահպանուած որպէս *սիւս* - «պալատ», «ապարանք») բառը դիտարկելու մասին դժուար է անվերապահօրէն ընդունել:

33 Տարբ. *Ծաղուկի*: Համադրումը՝ **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 156; **А. Карагезян**, *К локализации гавара Кашатаг*, - «Լրաբեր հաս. գիտութիւնների», 1987, թիւ 1, էջ 43:

34 ...*Карта Кавказского края*" (Тифлисъ, 1904) 5-վերստանոց քարտէզի համապատասխան պլանշէտում *Арыхларъ* է (տե՛ս նաեւ՝ **Д. Д. Пагиревъ**, *Алфавитный указатель к пятиверстной карте....* Тифлисъ, 1913), իսկ 1911 թ. ...*Специальная карта Евразийской России*" 10-վերստանոցում՝ *Арыхларъ*: Ի դ. յորջորջուել է *Մալիբեյ*:

35 Տարբ. *Ծիծառնուվանք*:

36 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42: Ի դ. յորջորջուել է *Հաջիսար*: [Աղահեջք-Քաշաթաղի ուշմիջնադարեան գիւղերի թուարկումն ունենք արդէն նաեւ Քրիստինէ Կոստիկեանի յայտնաբերած 1691/92 թ. պարսկերէն փաստաթղթում (ՀՊԿՊԱ, ֆ. 59, ցուց. 1, գործ 1, էջ 4), տե՛ս **Ք. Կոստիկեան**, *Քաշաթաղի 17-րդ դարի պատմութեանը վերաբերող մի փաստաթուղթ*, - «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ» (այսուհետեւ՝

ւում Աղաւնոյի վերնաՀովտում Հայրի *(36-րդ) եւ* Աղբաթխէրտ *գիւղերով՝ Հակի դիմացի ափին:*

Ընդմիջարկելով Հիմնական շարադրանքը՝ այստեղ կ՚ուզէինք նշել, որ Ստեփաննոս Օրբէլեանի գիւղացանկերի ուշադիր վերլուծութիւնը յանգեցրել է մեզ գիւղերի Հերթականութեան մասին մի դիտարկման, որը կարող է օգտակար լինել նաեւ միջնադարեան ուրիշ ցանկերի ծագման տրամաբանութիւնն ընկալելու Համար: Խնդրոյ առարկայ ցանկերում գիւղերը դասաւորուած են ո՛չ աշխարՀագրական, ո՛չ այբբենական, ո՛չ էլ մեծից-փոքր Հերթականութեամբ, բայց մի ոլորապտոյտ գծով, որը Համընկնում է տուեալ գաւառի Հին ճանապարՀների ուղղութիւններին (ընդՀանուր առմամբ՝ բացառութիւն չեն նաեւ Սոթքն ու ՃաՀուկը, որոնց ցանկերն սկսւում են գաւառակենտրոններից): Թւում է, թէ այդ գիծը պարզապէս եղել է այն «Հարկային» երթուղին, որով տարին մէկ անգամ իր սայլերով անցել է ՀարկաՀաւաքը՝ տանելով գիւղերի «պտուղը», որը վերջում

ՄՄԱԵԺ), XX, Եր., 2001, էջ 168-175: Ուսումնասիրողը վերծանել է Տաթեւին Հարկատու գիւղերի 1730 թ. ցանկի *Քաշթաղից գաւառ*-ի գիւղանունների հետ էապէս համահունչ հետեւեալ անունները (էջ 169-170, տալիս ենք նաեւ մեր դիտարկումները). Հալաք, Բայանդուր (=*Պայինտուր*), Վաղազաղուն (=*Վարազգոմ*), Սուարան (<*Սթունի՞ս*), Ղուշչի, Մերիկ (=*Միրիկ*), Հաբար (<*Հէրի՞կ*), Աֆաթխար (=*Աղբաթխէր*), Մինքենդ (=*Հակ*), Փուլ, Հոչաս (=*Հօչանց*), Յալղուզդամ (=*Եալղուզտամ*), Արափս (<*Արաճո՞ւծ*): Հմմտ. այս ժողովածոյում, էջ 354-356 - *Խմբ., 2009*]:

Հասցրել է Տաթեւ: Հաւանաբար, ժամանակի ընթացքում Հարկային տուեալ «գրաֆիկը» մշակուել է այն աստիճան, որ դարձել է Հաստատուն թէ՛ ՀարկաՀաւաքի, թէ՛ գիւղերի, թէ՛ վանքի Համար: Այդ պաՀին այն վերածուել է գրաւոր փաստաթղթի, պաՀուել Տաթեւում եւ Ստեփաննոս Օրբէլեանի շնորՀիւ Հասել մեզ՝ իբրեւ մի անգնաՀատելի սկզբնաղբիւր:

Եւ աւարտելով՝ նշենք, որ Աղբաթխէրտ *տեղանուան ստուգաբանութիւնը, Հաւանաբար, անակնկալներ կը պարգեւի ապագայ ուսումնասիրող լեզուաբաններին: Կարծում ենք, որ նրա առաջին բաղադրիչը կարող է քննարկուել* Աղբաթանը *(Ռշտունիքում),* Հաղբատ *(տարբ.* Հաղբաթ, *Ձորոփորում),* Աղբանու-խնոսյ *(Տայքում),* Աղբակ *(Վասպուրականում եւ Կորճայքում) տեղանունների ստուգաբանութեան Համատեքստում*[37]*: Իսկ երկրորդ բաղադրիչը կարող է Համադրուել Հնդեւրոպական* $*g^{[h]}(e)rd^{[h]}$ *Հիմքից առաջացած խեթերէն* gurta *«ամրոց», Հին Հնդկերէն* *gṛdha *«ապրելու տեղ», «տուն», ալբաներէն* gardh *«ցանկապատուած տարածք», Հին սլաւոներէն* gradu *«ամրոց», «քաղաք», «այգի» բառերի Հետ*[38] *նաեւ չբացառելով կա-*

37 *Աղբակ*-ի Հիմքում Յովհ. Կարագեոզեանը դիտում էր *մեծ* իմաստն արտայայտող *այրա* չստուգաբանուած բառը (**Յ. Կարագեոզեան**, *Սեպագիր տեղանուններ*, էջ 201):

38 **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов,** *Индоевропейские языки и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т. II, Тбилиси, 1984, էջ 743-744:

պը իրանական kert-gird-ի հետ («արած», «շինած», «կերտուածք»)[39]։

2. ՄԻՐԻԿ

Ուշ միջնադարի սկզբնաղբիւրներում յիշատակուող եւ այսօր վերստին հայաշունչ դարձած Միրիկ գիւղը գտնւում է Աղաւնոյի աջ, նոյն Միրիկ անունով վտակի ձորակում, Հէրիկից 4 կմ դէպի արեւելք։ Գիւղի հիւսիսային ծայրին կանգուն է 1682 թ. շինարարական արձանագրութիւն կրող Ս. Աստուածածին եռանաւ բազիլիկ ոճի եկեղեցին, որի պատերի մէջ ագուցուած են նաեւ աւելի վաղ շրջանի անարձանագիր քարակոթողներ։

Տաճարի եւ շրջակայ քարերի վրայ պահպանուել են հինգ վիմագրեր, որոնք ընթերցուել են Սեդրակ Բարխուդարեանի եւ Սամուէլ Կարապետեանի կողմից[40]։ Վերջինս մեծապէս ուղղել է յայտնի պատճառներով յապճեպ աշխատած Ս. Բարխուդարեանի վերծանութիւնների սխալները։ Մասնաւորապէս կարեւոր է եկեղեցու միակ դռան բարաւորի վրայ արտաքուստ փորագրուած մեծ շինարարական արձանագրութեան մէջ եւ նրանից քիչ վերեւ գլխաւոր պատուիրատու մէլիք Հախնազարի անուան ճիշտ վերծանումը (ԵՍ՝ Պ[Ա]Ր[Ո]Ն ՀԱԽՆ[Ա]Զ[Ա]ՐՍ... եւ Պ[Ա]Ր[Ո]Ն Հ[Ա]ԽՆ[Ա]Զ[Ա]Ր)՝ Սեդրակ Բարխուդարեանի

39 Հմմտ. Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Եր., 1973, էջ 579-580։

40 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 196; **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 134-136։

«Պարոն Համինապար» թիւրընթերցման փոխարէն։ Սակայն Ս. Կարապետեանն էլ վրիպել է նոյն բնագրի 4-րդ (ո՛չ 5-րդ) տողի կարեւոր կտորն ընթերցելիս (գուցէ՝ լուսանկարից), որի արդիւնքում վերծանութեան մէջ անսպասելիօրէն յայտնուել է հնաւոր Մարգիս գիւղը (իբրեւ թէ՝ «ՄԱՐԳԻ‹Ս›ԱՅ»)[41]։

1999 թ. Նոյեմբերին մեր կողմից արձանագրութեան մօտիկից հետազօտութիւնը (Յար. Արմէնեանի եւ միրիկցիների մասնակցութեամբ) թոյլ տուեց ճշգրիտ վերծանել կրասուաղի բարակ շերտի տակ հնուց երբեմն այլ տպաւորութիւն թողնող տառերը։ Մեզ հետաքրքրող 4-րդ տողի սկիզբն ունի հետեւեալ պատկերը (տե՛ս պատկեր 3).

ԻՆՋԵԻԾՆՂՅՆ:ՄԵՆՔՐԿԻԺՂՎՐԴՍ

Գրչանկարից պարզ երեւում է, որ վերջակէտից յետոյ ունենք.

ՄԵՆՔ՝ ՄԻՐ‹Ի›ԿԻ Ժ[Ո]Ղ[Ո]Վ[ՈՒ]ՐԴՍ (ապա նաեւ՝ ՏՈ‹Ի›ԻՆՔ Ս[ՈՒՐ]Բ ԵԿ[Ե]Ղ[Ե]Ց‹Ի›ՈՅՍ)։

Մնացածը (վերջին, 5-րդ տողը) ճիշտ է.

Ե (5) Թ[ՈՒ]Մ[Ա]Ն՝ ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ ՄԵԶ ԵՒ ՄԵՐ ԾՆ[Ո]Ղ[Ա]ՑՆ: Ի ԹՎԻՆ :ՌՃԼ: ՄԷԿՆ (=1682 թ.)։

Այստեղ կցագիր են ՄԵՆՔ բառի վերջին եւ ՄԻՐ‹Ի›ԿԻ բառի առաջին երկու տառերը՝ Ք+Մ+Ի, ինչպէս նաեւ ՏՈ[Ի]ԻՆՔ բառի Ո+Ի տառերը։ Յապաւումները սովորական են՝ Ի կի-

41 Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 134։

ղաձայնի եւ ձայնաւորների (Ա, Ե, Ի, Ո, ՈՒ), այդ թւում, գուցէ, ՄԻՐ‹Ի›ԿԻ բառի երկրորդ Ի-ի (եթէ դա՝ ուղղակի շեշտազուրկ ձայնաւորի սղման արդիւնք չէ):

Այսպիսով, բնագրում որպէս Ս. Աստուածածին եկեղեցու երրորդ պատուիրատու (Պ[Ա]Ր[Ո]Ն Հ[Ա]ԽՆ[Ա]Զ[Ա]Ր-ից[42] եւ ՏԱՆ[ՈՒ]Տ[Է]Ր, ՎԵՐ[Ա]Կ[Ա]Ց[Ո]Ւ Ս[ՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑ[ԻՈՅ]Ս կոչուած «ՆՕԱՐԳՍ»-ից[43] յետոյ) յիշա-

տակում է Միրիկ գիւղի «ժողովուրդը», որն այդ գործի համար յատկացրել էր ուղիղ տանուտէր-վերակացուի չափ՝ 5 թումանի գումար: Իհարկէ, մեզ համար ամենից կարեւորը Աղահէջք-Քաշաթաղ գաւառի եւս մէկ գիւղանուան յիշատակութիւնն է վիմագիր սկզբնաղբիւրում (թէպէտ եւ պարզ է, որ իբրեւ սկզբնաղբիւր պակաս կարեւոր չեն քաշաթաղեան գիւղանունների թուարկումները Տաթեւի գոյքացուցակներում, ձեռագրերի յիշատակարաննե-

42 [Այժմ, 1693 թ. Խնածախում ընդօրինակուած մագաղաթեայ Աւետարանի (ՄՄ թիւ 7840, բոլորագիր, գրիչ՝ Եփրեմ քահանայ, ստացող՝ Մէլիք Հախնազարի կին Մահփարի խաթուն) յիշատակարանի մի տոհմաբանական ցուցման շնորհիւ՝ «մեծին Մէլիք Հախնազարին, *որդոյն Մէլիք Գասպարին* եւ թոռն պարոն Հայկազին» (թ. 337ա), պարզ է դարձել, որ Միրիկի այս վիմագրի վերծանութիւնն անհրաժեշտ է սրբագրել նաեւ Մէլիք Հախնազարի հօր անուան մէջ: Վիմագրում վերջինիս յիշատակումը կատարուած է «ՀԱՅՐՆ ԻՄ ՊՐՆ ԳՍՊԻՆ» գրութեամբ, որի վերջին բառի *Գ*-ն ներսից կցագրուած է նախորդող *Ս* տառի աջ ստեղնին: Ս. Բարխուդարեանն այստեղ յապճեպօրէն ստացել էր իրականութեան հետ կապ չունեցող «ՀԱՅՐՆ ԱՊՐՀԱՄԻՆ» ընթերցումը (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 196, N 703), իսկ Ս. Կարապետեանը, որը չէր նկատել կցագրումը, փորձել է վերականգնել Պ[Ա]Ր[Ո]Ն ‹ՍԱՐ›ԳՍԻՆ յապաւուած անուանաձեւը (նշ. տեղում): Այժմ, իհարկէ, պարզ է, որ վերականգնումը պէտք է կատարել Պ[Ա]Ր[Ո]Ն Գ[Ա]ՍՊ[ԱՐ]ԻՆ ձեւով: Հմմտ. այս ժողովածոյում՝ էջ 393 - *հեղ., 2009*]:

43 [Այժմ, դռան բարաւորը խորհրդային տարիների կրաներկից մաքրելուց եւ տառերը վերստին ճշտելուց յետոյ այս ՆՕԱՐԳՍ-ը պէտք է համարել *Նաջարգուլ* (<Նաջար-ղուլի) անձնանուան մի անյաջող փորագրման փորձ (ԵՄ՝ Ն[Ա]ՋԱՐԳ[ՈՒ]Լ,Ս)՝ *Ջ* տառի՝ *Օ*-ին նմանուող կլորակից ներքեւ իջնող մասի վատ նկատելի փորագրումով, շատ փոքր *Լ*-ի տեղաւորումով նախորդող *Գ*-ի աջ հորիզոնական ստեղնի տակ եւ երկու ձայնաւորի սղումով (*Ա, ՈՒ*): Հր. Աճառեանը չունի այս անունը եւ ստուգաբանում է նման կազմութիւն ունեցող այլ արաբական անձնանունները. *Աղաղուլի* (թրք. «աղայի ծառայ») եւ *Աղագուլ* (պրս. «աղայի փառք» */կարծում ենք, ուղղելի՝ թրք. ծառայ/ - Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա, Եր., 1942, էջ 94, 96); *Թանգրիղուլի* (թրք. «աստծու ծառայ» - հտ. Բ, Եր., 1944, էջ 278. յաւելենք, որ մեծ խմբով Տաթեւի արքեպիսկոպոսարան եկած *Գեղարքունոյ* մէլիքներից մէկը վանքում թողած 1513 թ. կալուածագրում ստորագրել է «ես՝ Թանկրիղուլս», իսկ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու պատի (արտաքուստ) վիմագրում կոչուել «Մէլիք Թանգրղուլ» - *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 46; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 27, N 47); *Միրանգուլ* («իշխանների փառք» */ուղղելի՝* ծառայ/ - հտ. Գ, Եր., 1946, էջ 322) եւն: Բայց *Նաջագուլ* (*<Նաջա‹ր›ղո"լ*) անուն կայ Ծիծեռնավանքի հարաւ-արեւմտեան դռնից վեր պատի մէջ ագուցուած քարին 1779 թ. զանգակատան կառուցման առիթով փորագրուած վիմագրում. «...ի ժ[ա]մանա[ա]կ[ի]ն Իբրահիմ // խանին. ձեռ[ա]մբն // Աւոուքի որդի Նաջա‹ր›//ղուլին Խնածորկցի» (**Մ. Հասրաթեան**, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, էջ 236, հմմտ. այս ժողովածոյում՝ էջ 212 - *հեղ., 2009*]:

րում, Մովսէս Դասխուրանցու եւ ԺԷ դարի պատմիչների մօտ): Նման օրինակներ ունենք ընդամենը եւս երկուսը՝ Աղբաթխէրտի քննարկուած վիմագիրը եւ Հակ գիւղի 1675 թ. կառուցուած եռանաւ բազիլիկ տիպի, այսօր էլ կանգուն եկեղեցու մուտքի բարաւորի եռատող արձանագրութիւնը. ԾԻՆԵՑԱՒ Ս[ՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱԿ//ՆՈՒՆՔ ՀԱԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ: // ԹՎ‹ԻՆ› ՌՃԻԴ *(=1675 թ.)*[44]*: Վերապահում անենք, որ Խնածախ գիւղում Մէլիք Հայկազ Բ-ի կնոջ՝ Գուլպարիխանի տապանաքարի հարաւային ճակատին պահպանուած արձանագրութեան մէջ յիշւում են* ԽՆ[Ա]Ծ[Ա]Խ, ՊԼ[Ա]ՑԻՆԴ[ՈՒ]Ր *եւ* ԽԶՆ[Ա]Վ[Ա]Ր *գիւղանունները*[45]*, որոնք Ստեփաննոս Օրբէլեանի ժամանակներում մտնում էին ոչ թէ Աղահեջքի, այլ Հաբանդ գաւառի մէջ*[46]*, թէպէտ 1730 թ. պտղացուցակում՝ արդէն Բաշաթաղի*[47]*:*

44 Հմմտ. **Ս. Կարապետեան**, Նշ. աշխ., էջ 131: Սեդրակ Բարխուդարեանի մօտ մի երկիցս ցաւալի թիւրընթերցում է սպրդել. «ՆՈՐԱԿՆՈՒՆՔ ՀԱ/Յ/ԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 194, N 694):

45 Տե՛ս **Մ. Հասրաթեան**, Նշ. աշխ., էջ 164:

46 Աւելի ճիշտ՝ միայն առաջին երկուսը՝ *Խանածախ* (15-րդ, տարբ. *Խոնածախ*) եւ *Վաղաթու* (16-րդ, տարբ. *Վաղատու*). *Խզնավար* կամ *Խոզանավար* գիւղանուան որեւէ տարբերակ Սիւնեաց պատմիչի մօտ չի հանդիպում: Տե՛ս Ձեռ. ՄՄ 6271, թ. 333ա: **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԴ, էջ 375, *Պատմութիւն նահանգին Սիսական*, գլ. ՀԴ, էջ 517:

47 «Բաշթաղուց գաւառն. *Խանածախն*..., *Պայինտուրն*..., Հալաքսն..., *Խազնավարն*..., Սթունիս..., Ղուշչի..., Միրիկն..., Հէրի...» (*Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42):

3. ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

Աղահեջք-Բաշաթաղ գաւառի ամենից նշանաւոր այս ուխտատեղին 1998-2000 թթ. ենթարկուեց հիմնաւոր հնագիտական պեղումների եւ պատմա-ճարտարապետական հետազօտութեան Հայկական յուշարձանների համահաւաքի խմբագրութեան արշաւախմբի կողմից (ղեկ.՝ Յակոբ Սիմոնեան. նախորդ ուսումնասիրողների դիտարկումները[48] *ճշգրտող, էապէս լրացնող ու ամփոփող աշխատանքը շուտով կը հրատարակուի*[49]*): Գիտարշաւի ընթացքում խումբն ուսումնասիրուել է նաեւ այլ յուշար-*

48 **Մ. Ս. Հասրաթեան**, *Ծիծեռնավանք*, - «Պատմա-բանաս. հանդէս», 1980, N 2, էջ 39-58 (վերահրատ. **Մ. Հասրաթեան**, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, էջ 219-240. ստորեւ յղումները տրւում են վերջինիս); **P. Cuneo**, *La basilique de Tsitsernakavank (Cicernakavank) dans le Karabagh*, - „Revue des études Arméniennes", NS, T. IV, Paris, 1967; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 192-193; **Ս. Կարապետեան**, Նշ. աշխ., էջ 141-151 (այստեղ Ծիծեռնավանքում ընթերցուած վիմագրերի ամենից լրիւ հաւաքածոն է):

49 [Այժմ արդէն տե՛ս **Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան**, *Ծիծեռնավանք*. - «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», Եր., 2001, էջ 200-213; **Յ. Սիմոնեան**, *Վերաօծուած Ծիծեռնավանքը*, - «Յուշարձան», տարեգիրք Գ, Եր., 2005, էջ 58-63; **Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան, Ա. Գնունի**, *Արցախի եւ ազատագրուած տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազօտութիւնների հիմնական արդիւնքները (ցուցահանդէսի ցանկ)*. Եր., 2007, էջ 14-18 - *հեղ.*, 2009]:

ժաններ, որոնց մի մասը՝ նորագիւտ: Դրանցից վիմագրեր կան Սպիտակաջուր (աւելի հին՝ Ականք, *ԺԹ-ի դդ. յորջորջուած՝* Աղբուլաղ) *գիւղի աւերուած եկեղեցու եւ գերեզմանատան շրջակայքում եւ Մոխչաաշէնի (ԺԹ-ի դդ. յորջորջուած՝* Քիրդհաջի) *գերեզմանոցում, բայց՝ աննշան կամ անվերծանելի բնագրերով:*

Նոյն խմբի կողմից մշակուած նախագծով, Քերոլայն ու Ջորջ Նաճարեաններին եւ Գուրգէն Մելիքեանի ֆինանսական աջակցութեամբ քաշաթաղցի եկեղեցաշինարարները 2000 թ. սկսել են Մծեռնավանքի Դ դ. եռանաւ բազիլիկ տաճարի վերականգնման աշխատանքը (ղեկ.՝ Գէորգի Առաքելեան): Դրա շնորհիւ հնարաւոր է դարձել եկեղեցու բարձրադիր պատերին փոռուած եւ ներքեւից դժուարընթեռնելի վիմագրերի մօտիկից ուսումնասիրումը, որն իրերի բերումով առաջինը կատարուեց մեր կողմից 2000 թ. Մայիսին: Արդիւնքում ընթերցուեցին Հարաւային պատի երեք լուսամուտների կողերի ուշմիջնադարեան արձանագրութիւնները, մէկ նորայայտ վիմագիր Հարաւային պատին, ինչպէս նաեւ Հիւսիսային սիւնաշարի արեւելեան կրկնակամարի վրայի՝ յուշարձանի ամենախորհրդաւոր վիմագիրը:

Հարաւային պատի՝ արեւմուտքից առաջին լուսամուտի արեւմտեան կողին վերեւից ներքեւ առկայ են նախկինում չնկատուած, խաչերով ընդմիջուած հետեւեալ վիմագրերը.

ՊԷԳԻՍՈՒ//ԼԹ//ԱՆ:

ՄԱՐ//ՈՒՆ:

ԵՂԻԾ//ԱՅ ԻՐ//ԻՑԻՆ:

ՍԻՄ//ՈՒՆ:

Նոյն լուսամուտի արեւելեան կողին, ներքեւում.

ԽՉ‹Ս› ՊԷԿԻՆՍՈՒԼԹԱՆ//ԻՆ:

Արեւմուտքից երկրորդ լուսամուտի արեւելեան կողին, երեք քարերի վրայ, ներքեւից վերեւ, խաչերով ընդմիջուած ընթերցւում են.

Ս[ՈՒՐ]Բ ԽՉՍ Բ//ԱՐ/ԽԱԻՍ // ՍԱՐԱԻ[Ր]Ն՝ // ՄԱՑՐՆ // ՊԱՐՈՒՆ // ՀԷԳԱ//ՋԻՆ: // ԹՎ‹ԻՆ› // ՌԾ//Թ *(=1610 թ.)*:

ՍԱԻ//ԱՐԻՆ:

ՊԷԳԻ//ԽԱՆ:

ՈՀԱՆ//ԻՆ:

ՌԼՀ {...}ՈԼԻԼԹ*(՞)*:

ԽԸԴՅ//ՄԻՐԻՆ:

ԽԱԹՈՒՆ//ԻՆ:

ԱԻՐ//ՊԷԼ//ԻՆ *(սկզբնատառը՝ բոլորագրով): Նոյն լուսամուտի դիմացի՝ արեւմտեան կողին, վերեւից ներքեւ.*

ԳՈՒ//ԼԽԱՍ//Ն:

ԹԱՍ//ԱԼՆ:

ՀԷՐԳ:

ԽԱԹ//ՈՒՆԻՆ:

ՍԱԻ//ԱՐԻՆ:

Վերջին երկուսից ներքեւ արտաքատառ փոքրիկ արձանագրութիւն կայ, որը հասկանում ենք. «Յանուն Ալլահի»:

Արեւմուտքից երրորդ լուսամուտի արեւելեան կողին.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉ‹Ս› Բ[Ա]ՐԷԽ[ԱԻ]Ս Տ[Է]Ր Ո-ՀԱՆ//ԷՍԻՆ: Պ‹Ե›ՏՐՈՍԻՆ:

Նոյն լուսամուտի արեւմտեան կողին, վերեւից ներքեւ.

ՅՈՀ‹Ա›Ն//ԻՆ:

ՄԱՐ//ՈՒՆ:

ԱՂ‹Ա›ՑՊԷԿՆ:

ՈՒՍՏԱՅ // ՍԱՐՀԱՏԼԻՆ: ՓԱՍՋԷՔ//ԷՍ(՞) // ՋԿԸ ԷՐ *(=1519 թ.)*:

ՓԻՐԱՋԻՆ ՄԱԻՐՆ // ՆԵՂ‹Ա›Ց‹Ե›Լ‹Ո›Յ‹Ն›:

Հնագէտների խմբի պեղումների շնորհիւ բացուեց նաեւ հարաւային պատի երրորդ, արեւելեան դռան արեւմտեան կողքի հատուածը, որը փակուած էր մոնղոլական տիրապետութեան ժամանակներում հարաւից տաճարի պատին հպեցրած կառոյցից մնացած վերջին կոպտաշար պատի մնացորդով[50]*: Բացուած ճակատի բազալտի շարուածքի երկու քարի վրայ կայ նախկինում չնկատուած քառատող արձանագրութիւն՝ իւրաքանչիւր տողում մէկական բառ (տե՛ս պատկեր 4).*

50 Ըստ Յակոբ Սիմոնեանի եւ Յովհ. Սանամեանի՝ դա եղել է Ապաշխարողաց գաւիթ: Ի դէպ, դրա տանիքը բարձրանալու ճեչտութիւնից է, որ Ծիծեռնավանքի ճարտարային պատի վերեւի ճատուածում եւ չորս լուսամուտներից երեքի կողապատերին Ժ.Զ-Ժէ. դարերի այդքան շատ արձանագրութիւններ ու յիշատակի խաչեր են յայտնուել:

ԱՆԱՆԻԱ. ԱՆԱՆԻԱ

ԱՋԱՐԻԱ. ԱՋԱՐԻԱ

ՄԻՍԱ‹Յ›ԷԼ ՄԻՍԱԷԼ

ՍՊԱՍԱՒՈՐ: ՍՊԱՍԱՒՈՐ

Երկրորդ քարի վերեւի աջ անկիւնում երեւում են երեք տառ՝ Ս եւ տակին՝ ՍՐ: Թւում է, թէ դրանք արդիւնք են փորագրողի գրափորձի: Նոյն քարի մէջտեղում բուն արձանագրութիւնն է՝ երկու տողով, մէկական բառով.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՏԵՓԱՆՈՍ

ՔԱՀԱՆԱ: ՔԱՀԱՆԱ

Այս վեց նախկինում չնկատուած բառերն իրենց տառաձեւերով շատ նման են (աւելի փոքր չափի լինելով) նոյն դռան միւս՝ արեւելեան կողքի ճակատին, նոյնպէս երկու քարի վրայ փորագրուած եւ նախկինում նկատուած այն հնագոյն արձանագրութեանը, որի տառաձեւերը, Սամուէլ Կարապետեանի կարծիքով՝ թուագրելի են ոչ ուշ քան Ժ դարով, իսկ մեր կարծիքով՝ հաւանաբար, Թ դարով: Ի դէպ, նկատենք, որ այդ արձանագրութիւնը պարունակում է վերեւի նեղ քարի վրայ գրուած երեք տող (Ո՞Վ ՏՐ ՔՍ, Ա//ՋԱՏ ԵՂԲ//ԱՅՐ ՍԻՐՈՂ), եւ երկուսը՝ ներքեւի երկար քարի վրայ (ՋԳՐԻ-ԳՈՐ ՋԱՆԱՐԺԱՆ // ԾԱՌԱՅՍ ՅԻԾԵՑԷ՛Ք ՅԱ-ՂԱԻԹՍ)[51]*: Ընդ սմին, ուշադիր վերլուծելով դրանց բովանդակութիւնը՝ տեսնում ենք, որ երկու քարերի վրայ իրականում ոչ թէ մէկ, այլ*

51 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 192, N 685: Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 148, 150:

իրարից լրիւ տարբեր երկու արձանագրութիւն է փորագրուած, թէպէտ եւ՝ ըստ ամենայնի, նոյն փորագրչի կողմից (տե՛ս պատկեր 6):

Յիշատակուած Անանիա, Ազարիա, Միսայէլ եւ Գրիգոր ծիծեռնավանցիները այլ աղբիւրներից յայտնի չեն: Ունենք միայն «Ստեփաննոս Ծիծառնայ վանական»[52], որը Հայոց ՄՂԳ թ. (=844) ի թիւս այլոց ստորագրել էր Տաթեւի մի կալուածագիր: Նրա նոյնութիւնը նորայայտ վիմագրի «Ստեփաննոս քահանայի» հետ դժուար է ճշգրտել, բայց եւ՝ մերժել:

Մօտիկից հետազօտման շնորհիւ կատարուած ամենից ուշագրաւ գիւտը կրկնակամարի կրնկաքարերի վրայ փորագրուած հնագոյն տառաձեւերով արձանագրութեան ընթերցումն է: Այն գտնւում է եկեղեցու կառուցման սկզբնական երեք փուլերից (Դ-Զ դդ.) յետոյ հիւսիսային սիւնաշարի յաւելեալ ամրացման նպատակով երկշար կրկնասիւների ու կրկնակամարների աւելացման արդիւնքում առաջացած արեւելքից առաջին կրկնակամարի զոյգ՝ կրկնաքիւին յենուած կրնկաքարերի վրայ: Ձախ քարի վրայ չորս տող է՝ երեքական տառերով, աջի վրայ՝ 5 տող՝ 3, 3, 2, 3 եւ 1 տառերով: Նախորդ ուսումնասիրողները ներքեւից կարողացել են կարդալ ձախ քարի բոլոր տառերը (ՏԱԻ//ՈՐ Յ//ԻԾԵ//ՅԷՔ) եւ աջ քարի առաջին երկու տողը (ՋԳԻ//ՈՐԳ): Անյաջող փորձեր են

52 Տարբ. *Ծիծառնոյ* (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԼԸ, էջ 152; *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 208):

եղել վերծանելու բնագիրը որպէս «Տաւոր յիշեցէք զԳրիգոր[ի]գս. յիշեցէք» կամ «[Ուխ]տաւոր յիշեցէք զԳիրգ ԳՍԻԽՍՏ»[53]:

Մօտիկից հետազօտումը նախ եւ առաջ թոյլ է տալիս պարզաբանել մի քանի որոշիչ հանգամանք. փոքրիկ ջարդուածքների պատճառով ներքեւից ամենից վատ հասկացուող՝ աջ քարի 4-րդ տողի առաջին տառը Ծ է (երկաթագրից բոլորագրի անցման ոճի)՝ ճիշտ նոյնպիսի, ինչպէս ձախ քարի ՅԻԾԵՅԷՔ բառի մէջ է: Նոյն քարի 3-րդ եւ 4-րդ տողերի վերջին տառերը Ա-եր են (ըստ այդմ ունենք ԳԱ եւ ԾԽԱ), ոչ թէ Ս, ինչպէս ենթադրուել է[54]: Արձանագրութեան տառերը ներկուած են նոյն բաց կարմիր ներկով (ներքեւից դա չի նկատւում), որով ներկուած են տաճարի կառուցման երկրորդ, երրորդ եւ չորրորդ փուլերի մի շարք մանրամասներ (ատամիկների արմունկները, օձանախշերը եւն), ընդ որում պարզ է, որ դա կատարուել է չորրորդ փուլի շինարարի կողմից: Բայց աջ քարի երկու տառ ներկուած չեն՝ վերջին տողի միակ տառը (Տ) եւ 2-րդ տողի վերջինը: Դա սովորական երկաթագիր Գ է (միւս երկուսի նման), բայց հորիզոնական գծիկ չունի՝ քարի ծայրին գրուած լինելու պատճառով: Նշուած հանգամանքները պարզ են դարձնում, թէ ինչ է կատարուել դարեր առաջ: Հե-

53 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 193, N 687; **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 233; **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 148, 150:

54 **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 143:

զինակն աջ քարի 2-րդ տողում գրել է Գ (ՁԳԻՈՐԳ բառի վերջին տառը), սակայն չի հաւանել այն (հորիզոնական ելուստը չտեղաւորելու պատճառով) եւ նոյն տառը կրկին գրել է յաջորդ տողում: Նոյն կերպ՝ հինգերորդ տողում գրել է Տ, սակայն, տեսնելով, որ հասել է քիւին եւ ստիպուած է լինելու կիսատ թողնել (սղել) բնագիրն ու «կիսահասկացուած» մնալ սերունդների առջեւ, խոտանել է նաեւ այդ Տ-ն եւ բնագիրը մի նոր Տ-ով շարունակել... ոչ թէ աջ (հին կամարի նեղ կրնկաքարի), այլ ձախ, այսինքն՝ նոր կառուցուած կրկնակամարի հարեւան քարի վրայ (!): Աւարտած բնագրի տառերը կարմիր ներկելուց բացի, նա գուցէ նաեւ սուաղել է խոտանուած Գ-ն եւ Տ-ն, բայց դարերի ընթացքում սուաղը թափուել է:

Այսպիսով, ունենք աջ քարի վրայ սկսուած ու ոչ ստանդարտ անցումով ձախի վրայ աւարտուած, ինչպէս նաեւ երկու խոտանուած տառ պարունակող պարզ բնագիր (պատկեր 5).



ՁԳԻ//ՈՐ›Գ‹//Գ Ա//ՇԽԱ//›Տ‹//ՏԱԻ//ՈՐ Յ//Ի-ՇԵ//ՑԷՔ:

Եւ արդէն նոյնքան էլ պարզ է, որ իրեն կարող էր այդպիսի բան թոյլ տալ (այսինքն՝ իր համար յիշատակութիւն խնդրել խորանին ամենից մօտիկ կրկնակամարի՝ սուրբ սեղանին ու կենտրոնական նաւի սրահին նայող արձանագրութեամբ եւ իր յղացած բնագրի կէսը տեղաւորել նախորդից ձախ ընկած քարին՝ խոտանելով դուրս չեկած տառերը) ոչ այլ ոք, քան տաճարի կառուցման չորրորդ փուլի ճարտարապետը: Աշխատաւոր (որոշ դէպքերում՝ Աշխատող) բառը տարբեր շինարարական արձանագրութիւններում հէնց դա էլ նշանակում է՝ «աշխատանքի, գործի կատարողը»[55]: Եւ քանի որ Ծիծեռնավանքի կառուցման չորրորդ փուլն առնուազն կառուցողական արուեստի (կոնստրուկտիւ) տեսանկիւնից չի զիջում առաջին երեք փուլերին, ուրեմն յանձին Գիորգի՝ ունենք միջնադարի մի շնորհալի քարգործ-ճարտարապետի՝ «գաղատոսի» (ինչպէս Զուարթնոցի տաճարի հեղինակին իր «Պատմութիւն Աղուանից»-ում կոչում էր Ժ դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցին[56]) թանկագին անունը:

---

55 Պէտք է նշել, որ բառարաններում «աշխատաւոր» բառի այս իմաստը գրեթէ արտացոլուած չէ: Հր. Աճառեանն անգամ համարում է այն «նոր բառ», որի հետ հնարաւոր չէ համաձայնել: «Աշխատաւորի» այդ իմաստին հանդիպում ենք նաեւ Բոլի Եղցում, Երիցմանկանցում, Վայոց ձորի Հերհերում, Գօշավանքում, Տաթեւում, Բղենոյ Նորավանքում եւ այլուր:

56 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Եր., 1983, գիրք Գ, գլ. ԺԵ, էջ 317): Այս

Աղբիւրագիտական պրպտումները թոյլ են տալիս Մխենանավանքի «Գիորգ աշխատաւորին» համադրել Բղենոյ Նորավանքի կառուցող «Հայր Գիորգ աշխատաւորի» հետ: Ներկայիս Բարձրաւան (ԺԸ-ԺԹ դդ.՝ Իրիցաթումբ) գիւղից 3-4 կմ դէպի արեւելք գտնուող «Բղենոյ գաւառի Նորավանքը» հիմնադրուել է Հայոց ՅՁԵ թ. (=936) Հրահատ իշխանի եւ Ստեփաննոս քահանայի կողմից[57]*: Սակայն յուշարձանների մեզ հասած խումբը («կենտրոնում փոքրիկ եկեղեցի, որին հարաւից եւ հիւսիսից կցուած են աւելի եւս փոքրիկ սենեակներ եւ այդ բոլորի առաջ արեւմուտքից մի շատ գեղեցիկ սրահ-գաւիթ»)*[58] *կառուցուել է ԺԱ դարում եւ աւարտուել Հայոց ՇԺԱ թ. (=1062): Սիւնեաց պատմիչն այդ մասին գրում է. «Բայց յետ սակաւուց շինեցաւ եկեղեցին յոյժ գեղեցիկ յօրինուածովք, եւ զրանն կամարք զարմանալիք ի*

հրատարակութեան հեղինակը հետեւել է «Պատմութիւն Աղուանից»-ի Աց ենթախմբի ձեռագրերին, որի մայր գրչագիրը հնագոյն a-ից 1761 թ. արտագրելիս Ղունկիանոս դպիրը Գ գրքի ԺԷ գլուխը երկու մասի է բաժանել եւ երկի վերջին գլխահամարները մէկով աւելացել են ու հասել ԽԴ-ի (Դասխուրանցու գրչագրերի քննութիւնը եւ ճիւղագրութիւնը տե՛ս **Ա. Յակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*, - «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-143): Ստորեւ սխալ գլխահամարները տալիս ենք կոտորակային փակագծերում:

57 **Ստեփաննոս Օրբէլեան**, գլ. ԽԶ, էջ 179-180 (Փարիզի եւ Թիֆլիսի հրատարակութիւններում՝ գլ. ԽԷ); *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 42:

58 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 42:

սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք եւ խարսխաւոր սեամբք ի հայր Գէորգայ *եւ ի Յովհաննիսէ քահանայէ»*[59]*: Յիշեալ անձինք եկեղեցում մի քանի վիմագրեր են թողել, որոնցից երկուսի հեղինակը հէնց «Հայր Գիորգ Աշխատաւորն» է (երեսապատման քարերի վրայ՝ 12 տող եւ 7 տող): Դրանցից առաւել համառօտը հետեւեալն է.*

ՅՈՏՍ ԱՆԿԵԱԼ ԱՂԱՁԵՄ ՁՁԵԶ, Ս[ՈՒՐ]Բ ԵՒ Ա[ՍՏՈՒԱ]Ծ//ԱՀԱԾՈ‹Յ› ԵՂԲԱՐՔ, ՈՐՔ ԱՂԱՒԹԷ//Ք Ի Ս[ՈՒՐ]ԲՈՑ ԵԿԵՂ‹ԵՑ›ՈՋԴ ԵՒ ԱՌԱՋԻ Ա[ՍՏՈՒԱ]ԾԸ//ՆԿԱԼ ՍՐԲՈՑ ՍԵՂԱՆՈՑԴ, ԶԻՍ՝ ԶՏ//ԱՌԱՊԵԱԼՍ *ԶՀԱՅՐ ԳԻՈՐԳ ԶԱ//ՇԽԱՏԱՒՈՐ* ԵՒ ԶԿԱՏԱՐԻՉ Ս[ՈՒՐ]ԲՈՑ // ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՅԻՇԵՑԷ՛Ք[60]:

Գիորգ Աշխատաւոր ճարտարապետն արձանագրութիւն է թողել նաեւ Տաթեւի մայր տաճարի սրահի երկրորդ մոյթի հարաւային կողին, 4 տող.

ԶՀԱՅՐ *ԳԷՈ//ՐԳ ԱՇԽԱՏԱՒ//ՈՐ* ՏԱՆՍ ՅԻՇԵ//ՑԷ՛Ք Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս[61]:

Ամփոփելով կատարուած ուսումնասիրութիւնը՝ կարող ենք Մխենանավանքի տաճարի շինարարութեան չորրորդ (Գիորգ Աշխատաւորի կողմից իրագործուած յաւելեալ ամրացման) փուլը առաւել մեծ հաւանականութեամբ թուագրել ԺԱ դ. կէսերով:

59 **Ստեփաննոս Օրբէլեան**, գլ. ԽԵ, էջ 180:

60 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 45 (N 103):

61 Նոյն տեղում, էջ 21 (N 32):

4. ՐԱԽԻՇ (ԱՐԱԽԻՇ)

1653-1654 թ. արտագրուած մի Աւետարանի ընդօրինակողի կողմից յիշատակուած Մաղաւուզ երկրի Րախիշ *գիւղն*[62]*, ամենայն հաւանականութեամբ, նոյնանում է ԺԶ դ. երկու յիշատակարաններում արձանագրուած Վ‹ա›կունիս երկրի* Արախիշ *գիւղի հետ*[63] *եւ իր համադրութիւնը ստանում զինուորական մեծամասշտաբ քարտէզներում (50 եւ 25 հազարանոց) առկայ Արախչուն (Арахшун) հանդամասի անուան մէջ: Վերջինս գտնւում է Շալուայ գետի երկու վտակների՝ Ղորչուչայի եւ նրանից արեւելք մի փոքրիկ առուակի ստորին հոսանքների միջեւ 3 կմ երկարութեամբ հիւսիսից հարաւ ձգուող սարահարթում, վերաշինուած Զորախաչ (ԺԹ-Ի դարերում Արիքլու II) եւ Արախիշ (Արիքլու I) գիւղերից դէպի հարաւ:*

62 *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ (1641-1660 թթ.), կազմեց **Վ. Յակոբեան**, Եր., 1984, էջ 601: Աւետարանի յիշատակարանում ասւում է. «...արդ գրեցաւ Սբ. Աւետարանս ձեռամբ Մարտիրոս կղերիկոսի, որ էր նա ի յերկրէն Ծագաձորոյ, ի գեղջէն Խնծորեկոյ: ...Ի թվին ՌՃԲ *(=1653 թ.)* ստացաւ Ս. Աւետարանս Ննգանոցի Թաղէոս էրէցն, ...որ էր նա բնակեալ ի *յերկրէն Մաղաւզոյ*, ի *գեղջէն Րախիշոյ*, որ եւ եկեալ բնակեցաւ ի յերկիրս Ծարայ, ի գեօղն Մոս» (Ձեռ. ՄՄ 3647, թ. 342բ):

63 Ձեռ. ՄՄ 4181 (Աւետարան, 1568 թ., գրիչ Կարապետ), թ. 257ա («ի յերկիրն *Վ‹աա›կունիս*, ի գ[ե]աւղս, որ կոչի Արախիշ»): Արախիշի նոյն Ս. Աստուածածին եկեղեցում եւ նոյն գրչի կողմից 1578 թ. ընդօրինակուած միւս Աւետարանը ՄՄ թիւ 2537 ձեռագիրն է (յիշատակարանը՝ թ. 288ա-բ):

Մաղաւուզ գաւառի տեղադրութիւնը Շալուայի աւազանում հաստատւում է երկու ուրիշ ձեռագրերի գրիչների կողմից Մաղայուզ *(տարբ.* Մաղայոզ*) երկրի* Արտաշիբի *(գրուած՝* Արտայշիբի *եւ* Արտաշիպի*) գիւղանուան յիշատակութեամբ (1615 եւ 1637 թթ.)*[64]*, որի համապատասխանութիւնը ԺԹ դարի գրականութեան մէջ յայտնի Արտաշաւա-Արտաշաւի (Ի դարում* Արտաշեւի*, արցախցիների բանաւոր խօսքում* Արտաշեաբի*) գիւղի հետ*[65] *կասկած չի յարուցում:*

Արախչունի սարահարթի հիւսիսային հատուածում գտնւում է ԺԲ-ԺԳ դդ. կառուցուած յայտնի միանաւ բազիլիկ տիպի եկեղեցին (որը 1983 թ. պայթեցուել է ադրբեջանցի ճանապարհաշինարարների կողմից) շրջակայ ընդարձակ հանդստարանով, որտեղ աւերակների մէջ մասամբ պահպանուել են ԺԳ-ԺԷ դդ. մի քանի արձանագիր տապանաքարեր ու խաչքարեր[66]*: Նոյն սարահարթի հարաւային հրուանդանի*

64 Տե՛ս *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Ա (1601-1620 թթ.), կազմեցին **Վ. Յակոբեան**, **Ա. Յովհաննիսեան**, Եր., 1974, էջ 561; հտ. Բ (1621-1640 թթ.), կազմեց **Վ. Յակոբեան**, Եր., 1978, էջ 699:

65 Ադրբեջանցիները Արտաշաւիի եկեղեցու եւ գերեզմանատան քարերն օգտագործել են փոստատան շէնքը կառուցելու համար, որն այսօր կիսաքանդ սպասում է հնագէտների կողմից մաքրման աշխատանքների: Շրջակայքում թափուած մի քանի քարերի վրայ կան նաեւ արձանագրութիւնների կտորներ, որոնցից մէկն ունի Հայոց ՋԼ թուականը (=1481 թ.): Տե՛ս **Ս. Կարապետեան**, նշ. աշխ. էջ 176:

66 Հետազօտուած է Ս. Կարապետեանի կողմից (նշ. աշխ., էջ 168-169):

ծայրին Հարեւան Վազգէնաշէն եւ Մովսէսաշէն գիւղերի բնակիչները յայտնաբերել են մեծ չափերի արձանագիր խաչքար (Միշա Բալայեան, Սամուէլ Գորգիսեան եւ ուրիշներ): Մեզ յաջողուեց հետազօտել այն 2000 թ. Յունիսին բանասէր, լուսանկարիչ Զոհրաբ Ըաքոյեանի եւ շինարար, այս յօդուածի գրչագրերի հեղինակ Տիգրան Մեջլումեանի մասնակցութեամբ:

Խաչքարը գտնւում է ադրբեջանցի մելիորատորների կողմից տեղահան արուած տապանաքարերի, խաչքարերի եւ աւերուած եկեղեցու կամ մատուռի քարերի մի կոյտի մէջ, որն սպասում է խնամքով մաքրման ու հնագիտական հետազօտութեան: Կոթողը մեծ չափերի է (235x105x35 սմ) եւ կիսակլոր, թոյլ սլաքով աւարտուող վերնամասով: Ժամանակին այն, ըստ երեւոյթին, որմնափակուած է եղել իր շրջանակի գլանաձեւ զարդանախշը կրկնող, փոքր չափի քարերով, որոնցից երկուսն ընկած են հէնց կողքին: Անսպասելիութեան չափ բարձրարուեստ զարդանախշերով այս կոթողը կարող է մրցել արցախեան խաչքարերի լաւագոյն նմուշների հետ (պատկեր 7): Արձանագրութիւնը գրուած է քարի ներքեւի ձախ անկիւնից՝ ողջ եզրագծով մինչեւ ներքեւի աջ անկիւնը: Ցաւօք, կոտրուածքի պատճառով բացակայում են վերջին տառերը (ըստ տեղի՝ մօտ 7-8): Յապաւումներ ու կցագրումներ գրեթէ չկան[67], եւ բնագիրը հեշտութեամբ է վերծանւում.

67 Կցագրուած է միայն երկրորդ ԵՒ-ը: ԲԱՐԷԽԱՒՍՈՒ-



ՅԱՆՈՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ԵՍ ԳԵՐԳ, ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽՀՉՍ Ի ԲԱՐՀԽԱՒՍՈՒԹ[Ի]Ւ[Ն] ԻՆՁ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ՄԻՆԱՅԻՆ ԵՒ ԱՂԲԵՐԱՅՆ Չ...

Ամբողջութեամբ պահպանուած վերջին Չ տառը մենք համարում ենք տարեթիւ նշող, չնայած այն անջատուած չէ կրկնակէտերով եւ

Թ[Ի]Ւ[Ն] բառի վերջին Ն տառի հետ միասին պատուոյ նշանի տակ սպասելի էր, անշուշտ, նախավերջին Ւ-ի, այլ ոչ թէ նրան նախորդող Ւ-ի յապաւումը:

չունի պատուոյ նշան (ի դէպ, այդպիսին չունի նաեւ ԱՅ - «Աստուծոյ» յապաւումը): ԱՂԲԷՐԱՅՆ բառից յետոյ կարող էր գրուած լինել ՄԵՐՈՅ կամ ԻՒՐՈՅ, որոնք Զ-ով չեն սկսւում, չենք մտաբերում նաեւ այդ տառով սկսուող որեւէ յարմար անձնանուն: Զ-ից յետոյ պահպանուել է նաեւ յաջորդ տառի մասնիկը (վերեւի եւ աջ կողմը զոհ են գնացել կոտրուածքին): Դա տողից քիչ վեր փորագրուած հորիզոնական կիսակլոր մասնիկ է, որը նոյնանում է ԿԱՆԿՆԵՑԻ բառի Կ-երի համապատասխան մասնիկների հետ: Այսպիսով, կարելի է իբրեւ հաւանական տարբերակ ընդունել, որ արձանագրութեան կոտրուած մասում կարող էր գրուած լինել «ԶԿ[(՞) Թ[ՈՒԻ]Ն Հ[ԱՅՈ]Յ]» սպասելի արտայայտութիւնը, եւ ըստ այդմ Գերգի խաչքարը ենթադրաբար թուագրել մօտաւորապէս 1310-ական թուականներով:

Վիմագրում յիշատակուող Գերգ իշխանն իր Մինայ տիկնոջ հետ նուիրատուական արձանագրութիւն է թողել Գանձասարում, գաւթի արեւմտեան պատի հիւսիսային մասում[68]: Վեց

68 *Надписи Гандзасара и hАвоцптука*. Собрал и подготовил к печати **И. Орбели**. Пгр., 1919 (շարուածք), էջ 25; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 53, N 130; **Բ. Ուլուբաբեան**, *Գանձասար*, Եր., 1981, էջ 136: Ցաւօք, արդէն Ս. Բարխուդարեանի այցելութեան պահին կորսուած է եղել արձանագիր երկրորդ քարը (վերանորոգումների ժամանակ փոխարինուել է նորով)՝ առաջին հինգ տողի վերջին տառախմբերով ([ՐԴԻ ՀԱ], [ՆԱ ԻԾԽԱՆՈՒԻ], [ԽՏԻՍ ՏՎԱՔ], [ԻՆ ՊԱՏԱՐԱԳ], [ՆԻՆ ՅԱՅ ԽԱՓԱՆ]:

տողանոց այդ արձանագրութիւնը, որը նաեւ ստուգել ենք տեղում, բերում ենք ամբողջութեամբ (բացելով պատուոյ նշանի տակ գրչի յապաւումները).

ԿԱՄԱՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ԵՍ՝ ԳԵՐԳ, ՈՐԴԻ ՀԱ//ՅՐԱՊԵՏԱՅ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԻՆԱ, ԻԾԽԱՆՈՒԻ//ԹԵ[ԱՆ] ՋԱԼԱԼԻՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ Ս[ՈՒՐ]Բ ՈՒԽՏԻՍ, ՏՎԱՔ // ԸՆԾԱ‹Յ›: Տ[Է]Ր ՅՈՀ[ԱՆՆԷՍ] ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ ՊԱՏԱՐԱԳ // ՆՈՐ ԿԻՐԱԿ‹Է›ԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ Ա[ԻՐ]ՀՆԻՆ ՅԱ[ՍՏՈՒԾՈ]Յ, ԽԱՓԱՆ//ՈՂՆ ԴԱՏԻ: ԹՎ[ԻՆ] :ՉԿԷ: *(=1318 թ.)*:

Հասկանալի է, որ Ռախիշի (Արախիշի) եկեղեցին Գանձասարի պէս յայտնի հոգեւոր կենտրոն չէր, որպէսզի մտածենք, թէ Գերգ իշխանը, մի հեռու գաւառից գալով, այնտեղ խաչքար էր կանգնեցրել: Ուրեմն անկասկած է, որ Ռախիշն ու նրա շրջակայքը պարզապէս եղել են այդ իշխանի տիրոյթը: Դա նշանակում է, որ շնորհիւ նորայայտ խաչքարի՝ մեզ յայտնի է դարձել Արցախի Վայկունիք (հետագայում՝ Մաղաւուզ) գաւառի իշխանի (կամ իշխաններից մէկի) անունը ԺԴ դ. սկզբներին: Տեղին նշենք, որ Վայկունիք գաւառանուան վերջին յիշատակութիւններից մէկը վերաբերում է ԺԴ դարին: ԺԴ դարավերջին Կուրի ձախափնեայ Կապաղակ գաւառի Մեծ Սեօղիւթլու գիւղի եկեղեցում պահուող ձեռագիր Աւետարանի մէջ Մակար Բարխուդարեանցը կարդացել էր Հայոց ՊԼԶ թուականին (=1387) Սարգիս վարդապետ գրչի թողած յիշատակարանի հե-

տեւեալ բովանդակութիւնը. «Նախ հալածուելով փախայ Վակունիս գաւառ, ապա Ղարաբաղ, Ծափանիս գիւղաքաղաք, հուսկ ուրեմն վերստին եկի բնիկ երկիրս Մար»[69]: Ի դէպ, Վակունիս գաւառ-ի եւ երկիրս Մար-ի տարբերութիւնն արձանագրող այս վկայութիւնը գուցէ հիմք դառնայ վերջապէս յաղթահարելու պատմագրութեան մէջ անարդարացիօրէն արմատաւորուած այն թիւրիմացութիւնը, որի հեղինակները Վայկունիք-Վակունիս գաւառը Շալուայ գետի վերնահովտի փոխարէն տեղադրում են Տրտուի եւ նրա վերին վտակների աւազանում: Փաստօրէն, դրա համար հիմք է ծառայում միայն Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում Վայունիք գիւղի (=Ջերմաջուր - Իստիսու) յիշատակութիւնը («Ատրներսէհ շինէ զբերդն հանդու եւ զապարանս իւր եղեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր եւ բաղանիք արքունական են»)[70], որն ամենեւին չի կարող բաւարար համարուել Վայունիք գիւղ - Վայկունիք գաւառ նոյնացման համար[71]:

Ինչպէս տեսանք, Գանձասարի 1318 թ. արձանագրութեան մէջ յիշատակուած է Գերգ իշխանի հօր անունը՝ Հայրապետ: Թւում է, թէ այս վերջինի միւս որդու (այսինքն՝ Գերգի եղբօր) տապանագիրն է փորագրուած վերը նշուա-

69 Մ. վրդ. Բարխուտարեանց, *Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան)*, Թիֆլիս, 1893, էջ 220:

70 *Պատմութիւն Աղուանից*, գիրք Գ, գլ. ԻԲ /ԻԳ/, էջ 340:

71 [Այս հարցի մասին մանրամասն տե՛ս սոյն ժողովածոյի միւս հատուածում, էջ 220-227 – *հեղ*., *2009*]:

ած «պայթեցուած» եկեղեցու մօտ ընկած օրօրոցաձեւ գերեզմանաքարին.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱԽՏԱ‹Յ›, ՈՐԴ‹Ւ›Ո‹Յ› ՀԱՅՐԱՊԵՏԱ‹Յ›, // ՈՐ ԿԱՐԻ ԾԵՐՈՒԹԵ[ԱՄ]Բ ՎԱՂՃԱՆԵՑԱՒ: // ՅԻՇԵՑԷ՛Ք // Ի ԲԱՐԻՆ: ԹՎԻՍ ՉԽԷ (=1298 թ.)[72]:

1298 թ. վախճանուած եղբօր «կարի ծեր» լինելը նշանակում է, որ Գերգը, թերեւս, եղել է Հայրապետի կրտսեր որդին: Որ Գերգ *եւ* Հայրապետ *անունները աւանդաբար շարունակուել են Վայկունիքի իշխանատոհմում, երեւում է Գանձասարի գաւթի մէկ այլ վիմագրից, որն անթուական է, սակայն, ըստ ամենայնի, կարող է թուագրուել ԺԴ դարով: Բերում ենք գաւթի հիւսիսային պատի արեւելեան մասում, որմնախարսխից վերեւ արեւելքից չորրորդ քարի վրայ փորագրուած այդ բնագրի սկիզբը.*

ԿԱՄԱՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ԵՍ՝ ՀԱՅՐԱՊԵ//Տ, ՈՐԴԻ ԳԵՐԳԱ‹Յ›, ՄԻԱԲԱՆ//ԵՑԱ‹Յ› Ս[ՈՒՐ]Բ

72 Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 169 (փոքրիկ ճշգրտումները մերն են - *Ա. Յ.*): Տեղին նշենք, որ հնարաւոր չէ ընդունել հեղինակի այն միտքը, թէ *Արիքյու* գիւղը կարող է կապ ունենալ Աղահեջք գաւառի *Արքուգետ* աւանի հետ, որի մասին Թ դ. դէպքերի առնչութեամբ գրում է Մովսէս Դասխուրանցին (*Պատմութիւն Աղուանից*, գիրք Գ, գլ. ԺԹ /Ի/, էջ 327), ինչպէս նաեւ նոյնացնել Օրբէլեանի գիւղացանկի *Արքոյ* գիւղի հետ: Արժէքաւոր աշխատանքի բազմաթիւ յաջող համադրումների կողքին, Աղահեջքի գիւղացանկի հերթականութեան պարզաբանումից յետոյ չենք կարող ընդունել նաեւ *Հարճյանք* - *Հաչիլար*, *Մախոյն* - *Մայիբեյլ* եւ *Մեղի* - *Մըղիդարա* համադրումները:

ՈՒԽՏԻՍ. ՏՎԻ // ԶԻՄ ՀՈԳ‹Ւ›Ո‹Յ› ԱՐԴԻԻՆՍ: ՍՈՔԱ ՏՎԻՆ...[73]:

Աւելացնենք, որ պատի նոյն հատուածում, հարեւան արձանագրութեան մէջ, ամենայն հաւանականութեամբ, յիշատակւում է Գերգի միւս որդին՝ Սարգիսը.

ԿԱՄԱՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ԵՍ ՍԱՐ//ԳԻՍ ՔԱՀԱՆԱ‹Յ›, ՄԻԱԲ//ԱՆԵՑԱ‹Յ› Ս[ՈՒՐ]Բ ՈՒԽՏԻՍ, // ՈՐԴԻ ԳԵՐԳԱ‹Յ›, ՏՎԻ // ԸՆԾԱ‹Յ›: ՍՈՔԱ ՏՎԻՆ //...[74]:

Բերուած արձանագրութիւնների մէջ կարեւոր է այն փաստը, որ Գերգի որդիները (մէկը՝ քահանայ, միւսը՝ նոյնպէս հոգեւորական, քանի որ ասում է. «տվի զիմ հոգո‹յ› արդիւնս») «միաբանել են» Գանձասարի ուխտին: Նշանակում է, նրանք Գանձասարի ծառայողներ չեն, այլ՝ մէկ ուրիշ եկեղեցու: Դժուար չէ ենթադրել, որ դա կարող էր լինել Ռախիշի կամ Արախիշի՝ ներկայումս աւերակ եկեղեցիներից մէկը:

73 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 58, N 148; **Բ. Ուլուբաբեան**, *Գանձասար*, էջ 128; **И. Орбели**, նշ. աշխ., էջ 16:

74 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 59, N 149; **Բ. Ուլուբաբեան**, *Գանձասար*, էջ 124; **И. Орбели**, նշ. աշխ., էջ 17: Այն, որ *Սարգիս* անունը զարգացած միջնադարում նոյնպէս տարածուած է եղել Վայկունիքում, երեւում է *Արջաձոր* (յորջորջուած՝ *Աղջայեագի*) գիւղի՝ զոյգ խաչաքանդակներով խաչքարի յապճեպ գրուած արձանագրութիւնից. «Ի ԹՎԻՍ ՈՁԴ *(=1235 թ.)*, ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՋԱԼԱԼԻՍ, ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՁԱՅՍ ԻՆՁ ԵՒ...» (տե՛ս **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 173):

5. ԱՂԲՐԱՁՈՐ

2000 թ. Յունիսին մեզ յաջողուեց հետազօտել նաեւ Ղորչուչայ վտակի (Նորօրեայ Քաշաթաղում արդեն վերանուանուած Ռախիշի գետակ) վերնահովտում գտնուող Աղբրաձոր (Ղորչուբուլաղ, ԺԹ դարում Կիւրջաբուլաղ) եւ Հայթաղ (Ղորչու, ԺԹ դարում Ղարաչանլի) գիւղերի բնակիչների կողմից (Ասատ Կիւրքչեան, Արթուր Յակոբեան եւ ուրիշներ) յայտնաբերուած փոքր չափերի եկեղեցիով պարսպապատ վանքը եւ մօտակայքի հանգստարանը:

Վանական համալիրը գտնւում է Աղբրաձորի դիմաց Ռախիշ գետակի մէջ աջից թափուող առուակի ակունքներից քիչ ներքեւ, ձորակի հիւսիսային լանջին, գինուորական քարտէզներում Քեշիշթափա *(«Քահանայի բլուր») կոչուող գագաթից 1,5 կմ հիւսիս, խիտ անտառի մէջ (որի անունն էլ հետաքրքիր է՝* Գադիմ-կիմեշա, *այսինքն՝ «Հինաւուրց անտառ»), ծովի մակերեւոյթից 1850 մ բարձրութեան վրայ: Աղբրաձոր գիւղից այն հեռու է 2,5 կմ, սակայն հարկ է նշել, որ ԺԹ դ. քարտէզներում Կիւրջաբուլաղ գիւղը տեղադրուած է Ռախիշի աջ ափին, այսինքն՝ եկեղեցու հարեւան ձորակի ներքեւի մասում, որտեղ ցայսօր պահպանւում են ուշմիջնադարեան տապանաքարեր: Եկեղեցուց 150 մ դէպի հիւսիս, նոյն լեռնաբազուկի թամբի համեմատաբար հարթ հատուածում փռուած է ընդարձակ հանգստարանը:*

Ներկայումս եկեղեցու թաղը եւ ամբողջ պարսպապատը թափուել ու ծածկել են պատերի

գրեթէ կէսը: Չնայած դրան, առաջին իսկ հայեացքից պարզ երեւում է, որ կոպտատաշ քարերով շարուած եկեղեցին ԺԱ-ԺԲ դարերի շինարարական ոճի ակնյայտ տարրեր ունեցող (պատերի սլացիկ բարձրութիւն, պայտաձեւ խորան, արեւմտեան միակ դուռն վերեւում կիսակլոր բացուածք, պատերի վերին թաղատակի մասում ամբողջ եզրագծով կրածեփ խողովակաձեւ խոռոչներ) կառոյց է: Պատերը ներսից սուաղուած են ուշ շրջանում (հաւանաբար, ԺԷ դարում): Չափերը ներսից. երկարութիւնը 420 սմ է, լայնութիւնը՝ արեւմուտքում 220 սմ, խորանի առջեւ՝ 240 սմ: Խորանի բացուածքը 200 սմ է, խորութիւնը՝ 215 սմ: Արեւմտեան միակ դուռն բացուածքը 75 սմ է:

Եկեղեցու մուտքի առջեւ թափուած են արձանագիր երկու մեծադիր, ջարդուած խաչքարերի կտորներ (երեք եւ երկու) եւ մէկ ուղղանկիւն տապանաքար: Տապանաքարի վրայ պարզ դաւազան է քանդակուած եւ ճակատին՝ փոքրիկ արձանագրութիւն.

ԹՎ‹ԻՆ› ՌՂ *(=1641 թ.):*

Փոխարէնը՝ երկու խաչքարն էլ կարող են դրուել նախորդ եւ յաջորդ դարերի խաչքարերից իւրայատուկ ոճով առանձնացող ԺԱ դարի խաչքարերի լաւագոյն (Ցաղաց քարի) օրինակների կողքին: Չորակով մօտ 30 մ ներքեւ գլորուած են խաչքարերից մէկի ուղղանկիւն արձանագիր պատուանդանը եւ մի խորանազարդ պատուանդանի անարձանագիր քարերից մէկը: Խաչքարերի արձանագրութիւնները փորա-

գրուած են ճակատի ստորին մասում գտնուող վարդեակների երկու կողմերում: Ցաւօք, առաջինի (աւելի փոքր, երկու կտորի կիսուած) ձախ ներքեւի կտորը ջարդուած է, եւ կարող ենք ընթերցել միայն աջ կողմում երեւացող տառերը (պատկեր 10), ուր երկու տողով գրուած է.

ՇԺԷ
ԷՐ *(=1068 թ.):*



Երկրորդ (քիչ աւելի մեծ եւ երեք կտորի կիսուած) խաչքարի վարդեակի երկու կողմերի տառերն էլ պարզ ընթերցւում են (ձախ կողմում 3 տող է, աջում՝ 5): Արձանագրութիւնն ունի հետեւեալ տեսքը եւ բովանդակութիւնը (պատկեր 8-9).



ԹՎ‹ԱԿԱՆՆ› Հ‹ԱՅՈՑ› // ՇԺԸ // ԷՐ *(=1069 թ.):* ԵՍ՝ Գ//ՐԻԳՈՐ՝ // ԻՇԽԱՆ/ԱՑ ԻՇԽ/ԱՆ, ՈՐԴ//Ի ԱՏՐ//[...]

Ակնյայտ է, որ այս Գրիգոր իշխանաց իշխանի հայրանունը կիսատ է, հետեւաբար արձանագրութիւնը շարունակուել է խաչքարի պատուանդանի վրայ:

Չորակում գտնուող ուղղանկիւն, չորս կողմից սրբատաշ պատուանդանի վրայի արձանագրութիւնը գրուած է արեւմտեան եւ հարաւային նիստերին, չորսական տողով: Այն ան-

վնաս է, գրեթէ առանց յապաւումների[75] եւ ընթերցւում է ամբողջութեամբ (պատկեր 11-12).



ՀՈԳԵՒՈՐ Տ[Է]ՐՆ ԻՄ ԵՒ ՎԱՐԴԱՊ

-ԵՏՆ ՍՈՍԹԵՆԷՍ ՓՈԽԵ

-ՑԱՒ ՅԱԾԽԱՐՀԷՍ ԱՌ Ք[ՐԻՍՏՈ]Ս: ԵՍ՝ ՆՈՐ

-ԻՆ ԵՂԲԱՒՐՈՐԴԻՍ ՍՏԵՓԱՆՈՍ //

ԿԱ‹Ն›ԳՆԵՑԻ ՋՍ[ՈՒՐ]Բ ՆՇԱՆՍ Ի ԲԱ

-ՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ Տ[ԵԱՌ]Ն ԻՄՈ‹Յ›,

ԶՈՐ ԴԱՍԵՑԷ Ք[ՐԻՍՏՈ]Ս ԸՆԴ Ս[ՈՒՐ]Բ ՀԱ

-ՅՐԱՊԵՏՍՆ ԻՒՐ: ԱՄԷ՜Ն:

Բերուած բնագրերի համեմատութիւնից անմիջապէս երեւում է, որ ուղղանկիւն պատուանդանի վրայ շարունակւում է առաջին խաչքարի արձանագրութիւնը: Համընկնում են նաեւ խաչքարի ելուստի եւ պատուանդանի փոսի չափերը: Դրա հիման վրայ կարող ենք վստահօրէն պնդել, որ այստեղ մեզ անծանօթ Սոսթենէս վարդապետի եղբօրորդի Ստեփան‹ն›ոսի արձանագրութիւնը գրուած է Հայոց ՇԺԷ թուականին (=1068):

Ինչ վերաբերում է Գրիգոր իշխանաց իշխանի կնոջ Հայրանուանը, որի շարունակութիւնը կրող պատուանդանը կորել է աւերակների մէջ[76], ապա միանգամայն պարզ է, որ ԱՏՐ *տառերը* Ատրներսէհ *անուան սկիզբն են: Թ-Ժ դդ. այդ անուան բազմաթիւ յիշատակութիւններ ունենք թէ՛ Սիւնիքում, թէ՛ Արցախում: Դա էր Խաչէնի եւ Փառիսոսի իշխանների նախապապ Սահլ Սմբատեանի որդու անունը Թ դ. կէսերին[77]: Վերջինիս որդիներից մէկը Մեծ Մազրայի նշանաւոր խաչքարի թիկունքին 881 թ. (*ՅԼ թվականութեանս Հայոց*) գրուած արձանագրութեան մէջ իրեն* Գրիգոր Ատրներսէհեան *կոչող* Սիւնեաց եւ Աղվանից իշխանն *է[78]:* Ատրներսէհ *անունն էին կրում վերջինիս երկրորդ որդի Սահակ Սեւադայի (որը դարձաւ Փառիսոսի հզօր իշխանութեան սկզբնաւորողը Ժ դ. առաջին կէսին) թոռը եւ սրա եղբօր երրորդ որ-*

75 Կցագրման միակ դէպքը ճակատի վերջին տողի ԵՂԲԱՒՐՈՐԴԻ բառի մէջ է, որտեղ *Ի*-ի հորիզոնական գծիկը կցուած է նախորդ *Բ*-ին (!) իբրեւ երկրորդ հորիզոնական ելուստ:

76 Յուսալ կարելի է, որ այդ փնտրտուքը կարող է յաջող աւարտուել մաքրման շատ մեծ աշխատանքներով:

77 Տե՛ս *Պատմութիւն Աղուանից*, գիրք Գ, գլ. ԻԲ /ԻԳ/, էջ 340:

78 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. IV. *Գեղարքունիք*, կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1973, էջ 334, N 1358:

դին (ընդ որում երկրորդի անունը Գրիգոր էր)[79]: Ցաւօք, Մովսէս Դասխուրանցու շարադրանքն աւարտւում է Ժ դ. վերջով, եւ ԺԱ դարի համար Արցախի իշխանների անունները յիշատակող սկզբնաղբիւրները քիչ են. օր.՝ միայն վրաց աղբիւրն է պահպանել Լոռու Կիւրիկեան թագաւոր Դաւիթ Անհողինի (996-1048 թթ.) չորս որդիներից կրտսերի Ատրներսէհ անունը[80]: Բայց փոխարէնը՝ Ստեփաննոս Օրբէլեանի եւ վիմագիր մի քանի վկայութիւններից գիտենք, որ Սիւնեաց իշխանաց իշխան Աշոտիկի որդի, 1051-1072 թթ. Բաղաց թագաւոր Գրիգորի աները Խաչէնի իշխանաց իշխան (թագաւոր) Սեւադան էր՝ Սիւնեաց բարեպաշտ տիրուհի դարձած Շահանդուխտ Երկրորդի հայրը («ի տանէն Աղուանից՝ դուստր նոյին թագաւորազին մեծին

79 *Պատմութիւն Աղուանից*, գիրք Գ, գլ. ԻԲ /ԻԳ/, էջ 341: Տեղին նշենք, որ ընդունելի չէ Բագրատ Ուլուբաբեանի փորձը՝ Խաչէնը տեսնել Փառիսոսի թագաւորութեան կազմում մինչեւ վերջինիս անկումը ԺԱ դ. սկզբներին (**Բ. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում*, Եր., 1976, էջ 102-104): Մովսէս Դասխուրանցու, Անանիա Մոկացու, Ստեփաննոս Օրբէլեանի (Տաթեւի հիմնարկէքի կալուածագրի) եւ Կոստանդին Ծիրանածնի բազմատեսակ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Սահակ Սեւադայի եղբօրից սկսած՝ Խաչէնում ձեւաւորուել է ուրոյն իշխանատոհմ:

80 *Матиане Картлиса*, Перевод, введение и примечания **М. Лордкипанидзе**, Тбилиси, 1976, էջ 54; **Լ. Մելիքսեթ-Բէկ**, *Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. Ա (Ը-ԺԲ դար), Եր., 1934, էջ 207: Համտ. **Ռ. Ի. Մաթեւոսեան**, *Տաշիր-Ձորագետ (X դ. - XII դ. սկիզբ)*, Եր., 1982, էջ 87:

Սեւադայի»)[81]: Նշենք նաեւ որ, Փառիսոսի թագաւորութիւնն այդ տարիներին արդէն գոյութիւն չունէր (վերջին իշխանը Գրիգորի որդի Փիլիպպէն էր), իսկ տարածքը բաժանուած էր Լոռու Կիւրիկեանների եւ Գանձակի Փադլունեանների միջեւ[82]:

Այսքան սուղ տուեալների պայմաններում մենք այնուամենայնիւ հնարաւոր ենք համարում ենթադրել, որ Աղբրաձորի արձանագրութեան մէջ 1069 թուականին իրեն յիշատակում է ո՛չ Խաչէնի եւ ո՛չ Փառիսոսի կամ Լոռու, այլ Դիզակի՝ այլ աղբիւրներից մեզ անյայտ իշխանաց իշխան, Ատրներսէհի որդի Գրիգորը: Բագրատունեաց թագաւորութեան թուլացման արդիւնքում Ժ դ. երկրորդ կէսին Հայաստանի արեւելեան մասում ինքնուրոյն պետութիւններ դարձան ինչպէ՛ս Լոռին (Ձորագետը), Փառիսոսը, Խաչէնը, Սիւնիքը (Բաղքը), այնպէ՛ս էլ Դիզակը՝ իր կենտրոնի անունից կոչուած նաեւ Գորոզու, որպիսի փաստն ամենից քիչն է արտացոլուած հայ պատմագրութեան մէջ: Թ դ. առաջին կէսում Ստեփաննոս Աբլ-Ասադի եւ Եսայի Աբու-Մուսէի օրօք ստեղծուած Դիզակի իշխանու-

81 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԾԸ, էջ 233: **Գ. Մ. Գրիգորեան**, *Վիմագրութիւններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից*, - «Պատմա-բանաս. հանդէս», 1980, թիւ 2, էջ 164-165:

82 **Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ** *Պատմութիւն տիեզերական*, Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861, էջ 134-135: Համտ. **Բ. Ուլուբաբեան**, Նշ. աշխ., էջ 92-95:

Թիւնը[83] *Ժ-ԺԱ դդ. սահմանագծին երկու անգամ կոչուած է* թագաւորութիւն *կամ* իշխանաց իշխանութիւն: *Տումի գիւղի մօտ, Կարմիր Եղցու մի արձանագրութեան մէջ*[84], *օր.՝ ասւում է.*

Ի ՆԽԹ ԹՎ‹Ի›Ն› Հ‹Ա›ՅՈՑ› *(=1000 թ.)* ԵՒ Ի // ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ Տ[ԵԱՌ]Ն ԳԱԳԻԿԱ‹Յ›, ՈՐԴ‹Ւ›Ո‹Յ› // ՄՈՒՍԷԻ, ԵՍ՝ ՍՈՓԻ, ԴՈՒՍՏՐ ՄՈՒՍԷԻ, ԾԻՆԵՑԻ // ՏՈՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈ‹Յ› ԻՄՈ‹Յ› ԵՒ // ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ[85]:

Թաղավարդ գիւղի մօտ Ջուխտ Պռուածառ վանքի՝ ներկայումս կորած մի խաչքարի վրայ Մակար Բարխուդարեանցը, Երուանդ Լալայեանցը եւ Լէօն կարդացել են Հայոց ՆԽԶ Թուականը (=997 թ.), որից յետոյ՝ «յամս Աստուածապատիւ եւ Հոգեւոր տեառն Յովհաննիսի՝ Ամարասա‹յ› եպիսկոպոսին, եւ պետութեան տեառն Գագիկայ՝ Աղուանից իշխանաց իշխանի, *եւ՝ Կիրակոս, առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւրորդի Կոկոնա‹յ›...»*[86]:

Մովսէս Դասխուրանցին Եսայի Աբու-Մուսէ իշխանին ենթակայ գաւառները թուարկում է հետեւեալ կերպ. «Վերին Վայկունիք, Բեր-

83 Իշխանութեան տարածքի մասին տե՛ս ստորեւ:

84 Ներկայումս քարը տեղափոխուել եւ պահւում է Ստեփանակերտի երկրագիտական թանգարանում:

85 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 173, N 604:

86 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 91; **Ե. Լալայեանց**, *Վարանդա*, հտ. 2, էջ 8; **Ա. Բաբախանեանց**. *Ուխտաւորի յիշատակարան*, Շուշի, 1885, էջ 5; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 169, N 587:

ձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ»[87]*: Դիզակի իշխանութեան տարածքի այսպիսի ընդգրկմանը համապատասխանում է նաեւ Ամարասի (Հարաւային Արցախի) եպիսկոպոսութեան սահմանների նկարագրութիւնը Գտչավանքի 1246 թ. շինարարական արձանագրութեան մէջ, որտեղ յիշատակւում են Հակարի գետից (որը հնում կոչւում էր նաեւ* Աղուանոյ - Աղունոյ) *դէպի արեւելք ընկած տեղանունները.* ...Ի ԱՂՈՒՆՈ‹Յ› ԳԵՏՈ‹Յ› ԻՆՉՈՒ Ի ԵՐԱՍԽ, ԻՆՉՈՒ Ի ԱՒԱԶՆ ԳԵՏԱՀԱՏԻ, ՎԱԿՈՒՆԻՍ Ի ՎԱՂԱԶՆՈ‹Յ› ԳԵՏՈՎՆ, ՔԱՐԱՏՆԻՍՆ ԽՈՋԱԲԵՐԴՈՎ, ՋԱՈՒՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ, ՀԱԿԱՐԻ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ, ԴԻԶԱԿՈ‹Յ› ԲԷԼՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ... *(տուել ենք մեր կողմից արձանագրութեան մօտիկից ուսումնասիրութեան արդիւնքում կատարած ճշգրտումներով, որոնք ամբողջապէս կը հրատարակենք առաջիկայում)*[88]:

87 *Պատմութիւն Աղուանից*, գիրք Գ, գլ. ԺԹ /Ի/, էջ 325:

88 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 182-183: [Այժմ տե՛ս **Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները*.– «Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ տարի, Վիեննա, 1999, էջ 261, այս ժողովածոյի՝ էջ 91-93: Յաւելենք նաեւ, որ իբրեւ զուտ վարկած (ցաւօք, այն չի ճշգրտւում աղբիւրի կորստի պատճառով)՝ հնարաւոր է ենթադրել, թէ Դիզակի իշխանաց իշխան Գրիգորը կարող էր թողած լինել 1071 թ. այն վիմագիրը, որը ԺԹ դ. վերջին ընթերցուել է (թէկուզ եւ՝ թերիներով) եւ նկարագրուել հետեւեալ ձեւով. «Եկեղեցուցս */=Աղին նահատակ՝ Դոնավարզ գիւղից արեւելք* - Ա. Յ./ փոքր-ինչ վերեւ է սրբատաշ չիչ քարով շինուած

Ադրբաձորի վանքի մերձակայ գերեզմանատան տապանաքարերը նոյնպէս կարող են համարուել հազուագիւտ գտածոներ: Նախ եւ առաջ, դա վերաբերում է այն խաչքարին, որը յար եւ նման է եկեղեցու աջեւի՝ Գրիգոր իշխանաց իշխանի եւ Սոսթենէս վարդապետի եղբօրորդի Ստեփաննոսի խաչքարերին: Կոտրուածքի պատճառով վերեւի հատուածը չունեցող այդ կոթողը ընկած է պատուանդանի՝ գլանաձեւ զարդանախշեր ունեցող մեծ (աւելի մեծ, քան ձորակում ընկածը) քարերի առջեւ, որից երեւում է, որ դա եղել է յուշարձանախմբի առաւել նշանակալի կոթողը[89]:

Աւելի պարզ ոճի տապանաքարերի ու խաչքարերի մէջ աչքի են ընկնում երկու խաչքարեր, որոնց զարդանախշը երկրաչափօրէն

բեմն /*որմնափակ խաչքարեր* - Ա. Յ./, որ ունի 3 մետր լայնութիւն, 2 հաստութիւն եւ 5 մետր բարձրութիւն: Բեմիս արեւմտահայեաց ճակատում զետեղուած է երեք գեղեցկաքանդակ եւ նրբագործ խաչարձան, որոց վերեւ գրուած էր. «Թվ. ՇԻ */=1071 թ./*. կամաւ ամենակալին Աստուծոյ ես... *Գրիգոր*... Աստուծոյ միաբան եղբարքս լա... գխաչս իշխանութեան... եւ հայրապետութեան... Օհանէսի տէր Ներսէսի ո... աղաւթեցէք» (**Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 131): 2004 թ. Գեւորգ Տոնոյեանի եւ քռասնեցի գիւղացիների հետ մեր այցելութեան պահին կառոյցը, ցաւօք, գետնայատակ աւերուած էր, իսկ աւազաքարից («չիչ») կոթողների պահպանուած բեկորները՝ ամբողջովին հողմնահարուած – *հեղ., 2009*]:

89 Ենթադրելի է, որ խաչքարի ներքեւի, արձանագիր հատուածը հեռացուել է գերեզմանատնից եւ օգտագործուել շինարարութեան մէջ: Հրաշալի կը լինէր, եթէ այն մի օր գտնուէր:

ճշգրիտ մշակուած բազմաթիւ խաչերից առաջացած մի իւրօրինակ պատկեր է: Դրանցից միայն մէկն է արձանագիր՝ ճակատին ունենալով մէկ, իսկ հարաւային կողին՝ տասնմէկ տող: Խաչքարի ճակատին, խաչերից վերեւ արձանագրուած է միայն թուականը (պատկեր 13).

ԹՒՎՆ ՈՂԳ ԷՐ *(1244 թ.):*

Իսկ շարունակութիւնը քարի հարաւային կողին է.



ՈՐ ԵՐԿՈՒ
ՀԱՐԱՋ
-ԱՏՔ' ԳՐԻ
-ԳՈՐԷՍ ԵՒ Մ
-ԽԻԹԱՐ, ԿԻ
-ՍԱՒՐԵԱ‹Յ›
ՓՈԽԵՑԱՆ.
ԵՒ ՄԱՅՐՆ ԻՒՐ
-Ե‹Ա›ՆՑ ԽԱԹ
-ՈՒՆ: ԱՍՏՈՒԱԾ ՈՂ
-ՈՐՄԻ ՆՈՑԱՅ:

Վերծանուած շարագրանքն, ինչպէս տեսնում ենք, պարզ է, կցագրուած են միայն 4-րդ եւ 11-րդ տողերի Ո+Ր կապակցութիւնները, սղուած է միայն ԻՒՐԵ‹Ա›ՆՑ-ի Ա-ն: Արձանագրութեան մէջ յիշատակուած երեք «հարազատներն» էլ անծանօթ են այլ աղբիւրներից, սակայն դժուար չէ ենթադրել, որ դրանք պիտի տեղի իշխանական տոհմի ԺԳ դարի ներկայացուցիչները եղած լինեն:

Գերեզմանատան ամենամեծ, միջապանման տապանաքարն էլ է ուշագրաւ արձանագրութիւն կրում նիստերի վրայ. երկու տող՝ հարաւային, մէկ տող՝ հիւսիսային (պատկեր 14-15): Բնագիրը պարզ է եւ հեշտ ընթերցւող.



ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Ի ՄԵԾԻՆ ՎԱՐԴԿՈ‹Յ›
ՄԱՅՐԷՋՐԵՑՈ‹Յ›, ՀԱՒՐ ՍՈՍԹԵՆԻՍԻ. //
ՈՐ ՏԱՑԷ Ք[ՐԻՍՏՈ]Ս ԱՐՔԱ‹Յ›ՈՒԹԻՒՆ:

Երեւում է, որ գրիչը ագել է ձայնաւորներին յաջորդող Յ-երը. այդպէս է ոչ միայն ՎԱՐԴԿՈ‹Յ› եւ ՄԱՅՐԷՋՐԵՑՈ‹Յ›, այլեւ ԱՐՔԱ‹Յ›ՈՒԹԻՒՆ բառի մէջ: 1-ին տողում Է օժանդակ բայի փոխարէն, թերեւս, պարզ սխալմունքի հետեւանքով գրել է Ի (ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Ի), իսկ 2-րդում սեռական յոլովը ճիշտ է թեքել (ՍՈՍԹԵՆԻՍԻ, թէպէտ կարող էր ուրիշ շատ փորագրողների նման պահպանել անձնանուան վերջածանցի Է-ն: Վերջին տողի սկզբում սպասելի էր Զ տառի առկայութիւն (‹Զ›ՈՐ ՏԱՑԷ Ք[ՐԻՍՏՈ]Ս...), ինչպէս որ վերեւում ունենք Սոսթենէսի վարդապետի տապանագրի 7-րդ տողում ԶՈՐ ԴԱՍԵՑԷ Ք[ՐԻՍՏՈ]Ս...:

Ենթադրելի է, որ արձանագրութեան մէջ յիշատակուած Սոսթենէսը նոյն այն վարդապետն է, որի վախճանուելու կապակցութեամբ եկեղեցու առջեւ խաչքար է դրել նրա եղբօրորդի ու աշակերտ Ստեփաննոսը: Իսկ Սոսթենէսի հօր՝ Վարդկո‹յ› (<Վարդի՞կ) Մայրէջրեցու՝ Մեծ յորջորջումով յիշատակումը թոյլ է տալիս ենթադրել, որ վերջինս, հաւանաբար, եղել է տեղի յայտնի իշխանը (գուցէ, նաեւ իր որդու վանքի հիմնադրման նախաձեռնո՞ղը):

Ուշագրաւ է վիմագրում Մայրէջուր տեղանուան յիշատակութիւնը: Այն յայտնի է ուսումնասիրողներին ԺԱ դարի երկու այլ յիշատակութիւններով (Մարէջուր ձեւով) Սիւնիքի հոգեւոր կենտրոններից մէկում՝ Վահանավանքում: Վերջինիս շրջակայ գերեզմանատան ուղղանկիւն տապանաքարերից մէկի վրայ վեց տողով գրուած է. Հ‹ԱՅՈՑ› Թ‹ՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ› ՇԻԵ (=1076 թ.): // ԶՔՈՒՐԴԻԿ // ՄԱՐԷՋՐԵՑԻ // ՅԱՂԱԻԹՍ ՅԻ//ՇԵՑԷՔ. ԱՂ//ԱՉԵՄՔ[90]: Մէկ ուրիշ տապանաքարի վրայ եռատող արձանագրութիւն է թողնուած Սողոմոն Մարէջրեցու յիշատակին. ԶՍՈՂՈՄՈՆ ՄԱՐ//ԷՋՐԵՑԻ ՅԱՂԱԻԹ//Ս ՅԻՇԵՑԷՔ: Թ‹ՈՒԻՆ› ՇԼԳ (=1084 թ.)[91]: Քուրդիկ եւ Սողոմոն Մարէջրեցիների մասին այլ աղբիւրներից ոչինչ չգիտենք:

Որքանով կարող ենք դատել Ստեփաննոս Օրբէլեանի հաղորդած հարուստ նիւթից, Սիւնիքում Մարէջուր տեղանուն չկայ, ուստի մասնա-

90 Գ. Գրիգորեան, *Վահանավանքի պեղումների նախնական արդիւնքները (1966-1970 թթ.)*, - «Լրաբեր հաս. գիտութիւնների», 1970, թիւ 10, էջ 89:

91 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 139:

գէտներն իրաւացիօրէն փնտրում են այն Արցախում (եւ Աղբրաձորի նորայայտ արձանագրութիւնը հաստատում է նրանց կարծիքը)[92]*: Ընդհանրապէս, յայտնի իրողութիւն է, որ Գանձակի սելջուկեան ամիրաների առաջխաղացման ու անխափան հալածանքների հետեւանքով ԺԱ դ. վերջին տասնամեակներին Բաղք են տեղափոխուել եւ, մասնաւորապէս, Վահանավանքում թաղուել արցախցի աշխարհիկ ու հոգեւոր բազմաթիւ այրեր (Սիւնեաց պատմիչի խօսքերով՝ «բազում թագաւորք եւ թագուհիք Աղուանից»*[93]*): Նրանց թւում էին, օր.՝ Սոփի Աղուանից թագուհին, որի տապանագիրը թւագրուած է 1081-ով*[94]*, եւ Ստեփաննոս կաթողիկոսը, որի անթուական տապանագիրը («Ես՝ տ[է]ր Ստեփանոս՝ Աղվանից կաթողիկոս, նեղեալ ի Տաճկաց՝ եկա(ք) հանգեայ ա[ստուած]աւէր թագուհեայ Շահանդխտին եւ Կատա(ր)ին շինած եկեղեցոյս գաւթիս...») վերագրւում է 1086 թուականին յաջորդած տարիներին*[95]*:*

92 *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 3, էջ 677: **Բ. Ուլուբաբեան**, նշ. աշխ., էջ 96:

93 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԽԴ, էջ 175:

94 Տե՛ս **Գ. Մ. Գրիգորեան**, *Վիմագրութիւններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից*, էջ 162:

95 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 139; **Գ. Գրիգորեան**, *Վահանավանքի պեղումների նախնական արդիւնքները*, էջ 90: Հմմտ. Հմմտ. **Բ. Ուլուբաբեան**, նշ. աշխ., էջ 97: Ըստ Օրբէլեանի՝ «յորոց [Սենեքերիմի եւ նրա քոյրերի՝ Շահանդուխտի ու Կատայի - *Ա. Յ.*] աւուրս եկն երջանիկ կաթողիկոսն Աղուանից տէր Ստեփաննոս եւ անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ

Վահանավանքի տապանագրերում յիշատակուող Մարէջուր-ը *նաեւ համադրւում է Հայոց Արեւելից կողմերից 1073 թ. Կիլիկիա արտագաղթած Օշին Հեթումեանի հայրենի (ժառանգական)* Մայրեաց ջուրք *կալուածքի հետ, որի մասին ժամանակագիրը ծանօթագրում է՝ «հանդէպ Գանձակայ» («Ի ՇԻԲ ամին* [=1073 թ.] *ի բռնութենէն Տաճկաց ել Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ, որ կոչի* Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ, *ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր՝ ազատագունդ իշխանօքն եւ ամենայն գահիւն...»)*[96]*:* Գանձակ *քաղաքանուան յիշատակութիւնը պատճառ է եղել, որպէսզի Հեթումեանների «ժառանգութիւն»* Մայրեաց ջուրք-ը *տեղադրուի Մեծ Հայքի Ուտիք նահանգի Շակաշէն (որտեղ Գանձակ քաղաքն էր) կամ Գարդման գաւառներում, կամ աւելի հաւա՝ Արցախ նահանգի Կողթ գաւառում*[97]*: Սակայն*

ի տեղւոջն եւ եդաւ ի նմին սրբարանի» (**Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԽԴ, էջ 176):

96 **Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...*, Յառաջաբանով... եւ ծանօթութիւններով **Ա. Տէր Միքելեանի**, Վաղարշապատ, 1893, էջ 117: Հմմտ. **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսուան*, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 46:

97 Տե՛ս, օր.՝ *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 3, էջ 677; ԳԱԹ, Սարգիս Քամալեանի ֆոնդ, տետր N 1, VI-II, թ. 18-19 (խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս պիտի յայտնեմ Սամուէլ Կարապետեանին): [Այժմ տե՛ս նաեւ **Ս. Կարապետեան**, *Հիւսիսային Արցախ*, Եր., 2004, էջ 65-66, 135-136 – *հեղ., 2009*]:

«Մենծ Վարդիկ (կամ Վարդկոյ) Մայրէջրեցու» *տապանաքարի յայտնաբերումը Բախիչի Հովտում, Աղբրաձորի վանքի գերեզմանատանը եւ գեղանախշ խաչքարերի հարեւանութեամբ լիովին հնարաւորութիւն է տալիս ենթադրել, որ* Մայրէջուր-*ը հէնց այդ տեղանքի, այսինքն՝ Արցախի Վայկունիք գաւառի մի յայտնի տեղանուն է եղել: Սամուէլ Անեցու շարադրանքի բովում Գանձակի յիշատակումը աղբիւրագիտօրէն մեկնաբանելի է նրանով, որ ԺԲ դ. ժամանակագրին հասած գրաւոր կամ բանաւոր պատմութեան մէջ, հաւանաբար, խօսուել է հէնց* Գանձակից *(այսինքն՝ այդ քաղաքում գահակալող Փադլոնեան ամիրաներից կամ, որ աւելի հաւանական է, վերջիններիս այնտեղից հեռացնել ջանացող սելջուկեան սուլթանի ուղարկած ինչ-ինչ պաշտօնեաների կողմից*[98]*) «մայրեացջուրքցիներին» հասած աղէտների մասին («ի բռնութենէն Տաճկաց»): Բացի այդ, կատարելով* Մայրեաց ջուրք - Մայրէջուր *համադրութիւնը՝ պէտք է նաեւ մտածենք, որ «Հանդէպ Գանձակայ» ասելով Սամուէլ Անեցին կամ նրա աղբիւրը պարզապէս նկատի ունէին ողջ* Հայոց Արեւելից կողմերը *(կամ որ նոյնն է՝* Առան երկիրը*), որի կենտրոն էր ընկալւում արդէն իր զարգացման ամենից ծաղկուն ժամանակաշրջանը թեւակոխած Գանձակ քաղաքը:*

98 [Այս խնդրի մասին ավելի մանրամասն տե՛ս սույն ժողովածուի Նախավերջին հատուածում, էջ 332-336 – *Խմբ., 2009*]:

Հնարաւոր է, որ Մայրէջուր *անուան ինչ-որ պատաղումներից առաջ եկած լինեն մեր վանքից 4 կմ հարաւ, Բախիչի (Ղորչուչայի) եւ Շալուայի հովիտների միջեւ բարձրացող սարահարթի վրայ գտնուող գիւղատեղիի (ուշմիջնադարեան հանդատարանով)՝* Մունջուխլու, *կամ Բախիչ վտակի ձախ օժանդակի՝* Մամեդի *յորջորջումները: Ենթադրելի է անգամ, թէ* Մայրէջուր-*ի աղաւաղման արդիւնքում է առաջացել հէնց* Մաղաւուզ *ուշմիջնադարեան տեղանունը: Յիշենք, օր.՝ որ Վայոց ձորի* Մայրաղուրք *գիւղանունը (ենթադրելի հայցականի ձեւով՝* *Մայրաղուրս*), աղաւաղուելով, ԺԹ դարում դարձել էր* Մարաթուզ *(գիւղ եւ լիճ)*[99]*, Ծղուկի* Տոլորս *գիւղանունը մի փոքր այլ տարբերակով վերածուել էր* Տուլուս-*ի, Աղահեջքի* Լսորք-*ը՝* Սուս-*ի*[100] *եւ այլն: Իբրեւ վարկած, քանի դեռ ուղղակի վկայութիւններ ի յայտ չեն եկել, առաւել հաւանական պէտք է համարել, որ* Մաղաւուզ *գաւառի նոյնանուն գիւղը գտնուել է Շալուայի ձախ,* Բչանիս *կամ* Նաղդալի *կոչուած (այսօր արդէն՝* Մաղդանց*) մեծ վտակի երկու օժանդակների գետկիցի մօտ, ԺԹ-Ի դդ.* Ալեակչի *անունը կրած գիւղի տեղում: Վերջին յորջորջումը թարգմանւում է «Մաղագործ, մաղավաճառ»,*

99 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 372: *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 3, էջ 676, 717: Հմմտ. **П. М. Мурадян**, *Винительные формы в именительном по данным топонимики Армении*, - «Լրաբեր հաս. գիտությունների», 1971, թիվ 4, էջ 21-38:

100 Տե՛ս վերեւում, ծնթ. 32:

եւ բնական է ենթադրել, որ իր ծագմամբ այն կարող է պարտական լինել հէնց Մաղաւուզ - մաղ զուգորդութեանը:

Աւարտելով աշխատանքը՝ պիտի արձանագրենք, որ Հակարիի վերնահովտի նորայայտ յուշարձանները վկայում են տարածաշրջանի բաւականին բարձր կարգավիճակի մասին միջնադարեան Հայաստանի քաղաքական ու մշակութային համատեքստում, եւ ապագայ նոր յայտնագործութիւնները, ամենայն հաւանականութեամբ, աւելի հրապուրիչ անակնկալներ կը պարգեւեն գիտական աշխարհին:

II

ԳՏՉԱՎԱՆՔԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Նուիրւում է Արթուր Մկրտչեանի
լուսաւոր յիշատակին

Գտչավանքի համալիրի մէջ մտնող ԺԳ դարի գմբեթաւոր եկեղեցին իր ճարտարապետական յօրինուածքով եւ քարգործ վարպետի կատարողական արուեստով միջնադարեան Արցախի առաւել գեղակերտ կառոյցներից մէկն է (Գանձասարի եւ Դադիվանքի տաճարների կողքին): Նոյն վարպետի ձեռքով քանդակուած ու գաւթի ներսում տեղադրուած գտչավանքեան երկու խաչքարերն իրենց «պաւղոսեան» նրբագեղութեամբ լաւագոյններն են Արցախում (Դադիվանքի երկու որմնափակ խաչքարերի հետ միասին):

Գմբեթաւոր եկեղեցու ներքուստ հիւսիսային որմին փորագրուած ընդարձակ շինարարական արձանագրութիւնն էլ միջնադարի վիմական արձանագրութեան մէջ առանձնանում է պատմա-աշխարհագրական չափազանց ծաւալուն տեղեկատուութեամբ: Այն Ամարասից Գտչավանք տեղափոխուած հարաւային Արցախի եպիսկո-

պատութեան տիրոյթներն ու սահմանները նշող 1246 թ. մի խրօրինակ կալուածագիր է, որն իր մանրամասնութեամբ քիչ զուգահեռներ ունի վիմագիր աղբիւրներում:

Դեռեւս 1718 թ. Գտչավանքի արձանագրութիւնն արտագրել է Եսայի Հասան-Ջալալեանցը մի տետրակում, որի մէջ նա հաւաքել էր Արցախի մի քանի տասնեակ նշանաւոր վիմագրեր: Այդ չպահպանուած տետրակից երկու ընդօրինակութիւն է կատարուել շուրջ մէկ դար անց՝ Մաշտոցի անուան Մատենադարանի 20 թերթանոց այն ձեռագիրը, որը Գանձասարում 1809 թ. արտագրել էր Բաղդասար վարդապետ (հետագայում՝ միտրոպոլիտ) Ջալալեանցը[1], *եւ 13 տարի անց Յովհաննէս Շահխաթունեանցի՝ «հին տետր ձեռամբ Եսայի կաթուղիկոսին Աղուանից»-ից կատարած ընդօրինակութիւնը*[2]:

1 Ձեռագրի յիշատակարանն է. «Ի ՌՄԾԸ թուին Հայոց */=1809 թ./*, ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ ձեռամբ Բաղդասար վարդապետի Ջալալեան եւ որդւոց Դանիէլ հազարապետին՝ տեառն Խաչենոյ» (Ձեռ. ՄՄ 7821, թ. 18ա. «Քթշա վանից» արձանագրութիւնը՝ թ. 5ա-բ):

2 Ձեռ. ՄՄ 9923, թ. 2ա. «Յամի Տեառն 1822, յամսեանն Յուլիսի մէկին ընդ սրբազնակատար Եփրեմ կաթուղիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում վանորէից, եկեղեցեաց եւ խաչից հնագոյն արձանաց օրինակս՝ ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթուղիկոսին Աղուանից ի թուականութեանն Հայոց ՌՃԿԷ */=1718 թ./*, զոր եւ օրինակեցի կրկին իմով ձեռամբ. ի. ծ. Յօհաննէս եպիսկոպոս, երբեմն գրագիր Սուրբ Էջմիածնի» («Քաթիշայ վանից» արձանագրութիւնը՝ թ. 11ա):

1842 թ. «Քաթիշայ վանից արձանագիրը» հրատարակել են Յովհ. Շահխաթունեանցը[3] *եւ Սարգիս Ջալալեանցը*[4]*: Դարավերջին «Գտչայ վանքի» մի շարք վիմագրերի հետ միասին «հիւսիսային որմի» արձանագրութիւնը հրատարակել է Մ. Բարխուդարեանցը*[5]*: 1887 թ. Գտչավանքի երկու մեծ վիմագրերը մանրակրկիտ ընթերցել ու արտագրել է Խաչիկ վարդապետ Դադեանը, որը, ցաւօք, չի հասցրել հրատարակել դրանք*[6]*:*

1960-1964 թթ. Արցախի վիմագրերի հետազօտութեան արշաւախմբի աշխատանքի ընթացքում «Գտչա վանքի» արձանագրութիւնները վերծանուել են Սեդրակ Բարխուդարեանի կողմից եւ հրատարակուել յետմահու 1982-ին՝ ուսումնասիրողների համար փոխարինելով ժթ դարի ընթերցում-բնագրերին[7]*:*

3 *Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, Աշխատասիրութեամբ **Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարեցւոյ**, ...բաժանեալ յերկուս հատորս, հտ. Բ, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1842, էջ 366-367:

4 *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, Աշխատասիրութեամբ **Սարգիս վարդապետի Ջալալեանց**... ի 1841 ամի, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 209-210:

5 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 80-81:

6 Խաչիկ Դադեանի՝ Դիզակի պատմութեանն ու աշխարհագրութեանը վերաբերող մատենագրական վկայութիւններ եւ վիմագրեր պարունակող տետրակը գտնւում է Հայաստանի Պատմութեան ազգային արխիւում (ՀՊԿՊԱ, ֆ. 319, ցուց. 1, գործ 107, թերթ 21բ-22ա):

7 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, Կազմեց Ս.

1999-2000 թթ. մի քանի այցելութիւնների ընթացքում մենք հնարաւորութիւն ենք ունեցել մօտիկից ընթերցելու, մանրամասն հետազօտելու եւ լուսանկարելու Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը՝ շրջակայ Տող եւ Տումի գիւղերի բնակիչների օժանդակութեամբ:

Տասնչորս տողանոց արձանագրութիւնը փորագրուած է վանական համալիրի գմբեթաւոր եկեղեցու ներսում՝ հիւսիսային, վերեւում կամարով աւարտուող պատի միջին մասում, շարուածքի հինգ (սալայատակից հաշուած՝ 10-րդից 6-րդ) շարքերի ամբողջ երկայնքով: Վերեւի 4 շարքերից իւրաքանչիւրի վրայ փորագրուած է 3-ական տող, 5-րդ շարքի վրայ՝ 2 տող: Հեղինակի կողմից իր տեղում բաց թողնուած, չորս բառից բաղկացած մի հատուած փորագրուած է նշուած պատին արեւելքից յարող աւանդատան ճակատի երեք քարերի վրայ, երկու տողով՝ վիմագրի 9-րդ եւ 10-րդ տողերի կողքին: Բնագրի առաջին տողի վերեւի եզրը սալայատակից բարձր է 410 սմ, իսկ վերջին տողի ներքեւի եզրը՝ 180 սմ: Տողերի երկարութիւնը ներքեւի երեք շարքերում 314 սմ է, վերեւի երկուսում, որոնք կողերից կտրուած են կամարի եզրային որմնասիւնակներով՝ 266 սմ:

Ներկայումս եկեղեցու շատ հատուածների նման վնասուած է նաեւ հիւսիսային պատը: Արձանագիր առաջին շարքի հինգ քարերից 2-րդն այժմ ընկած է նոյն պատի տակ, բարեբախ-

Գ. Բարխուդարեան. Եր., 1982, էջ 182-183:

տաբար, անխաթար վիճակում (Սեդրակ Բարխուդարեանի այցելութեան օրերին այն իր տեղում է եղել): Չափազանց ցաւալի է մէջտեղի շարքի (սալայատակից՝ 8-րդ) ձախ կողմի երկու քարերի կորուստը (ենթադրում ենք՝ երկուսի, որովհետեւ 135 սմ երկարութեամբ խորշը մեծ է թւում մէկ քարի համար), որոնց վրայ եղել է վիմագրի 7-9-րդ տողերի սկիզբը (շուրջ 2/5-րդը): Քարերն իրենց տեղում են եղել ԺԹ դարավերջին, բայց բացակայել են արդէն Ս. Բարխուդարեանի այցելութեան պահին: Շրջակայ բնակիչները ոչինչ չեն յիշում նրանց անհետացման հանգամանքների մասին: Նախորդ ուսումնասիրողների նման մեր երկամեայ փնտրտուքը եւս, ցաւօք, արդիւնք չտուեց ո՛չ Հայաստանի ու Արցախի թանգարանների պահոցներում, ո՛չ էլ վանքի շրջակայ անտառներում[8]:

Կորած քարերի վրայ եղած արձանագրութեան հատուածը հնարաւորինս ճշգրիտ վերականգնելու համար անհրաժեշտ է համեմատական քննութեան ենթարկել ԺԹ դարի ընթերցումները: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Յովհ. Շահխաթունեանցը եւ Սարգիս Ջալալեանցը չեն ընթերցել այս վիմագիրը: Առաջինի

8 Հաւանական է ենթադրել, որ կորած քարերը ինչ-որ անհասկանալի տրամաբանութեամբ պոկուել ու հեռացուել են եկեղեցուց 20-30-ական թուականներին, երբ ամենուր բարբարոսաբար քանդում էին սրբավայրերը կամ պոկում դրանց պսակող խաչերը: Գտչավանքի խաչի կործանման ու հետագայ ճակատագրի մասին եւս տողեցիների ու տումեցիների յիշողութեան մէջ ոչինչ չի պահպանուել:

տպագրութեան համար հիմք է ծառայել Եսայի Հասան-Ջալալեանցի տետրակից 1822 թ. իր կատարած ընդօրինակութիւնը, որի գլխաւոր տարբերակիչը 1809 թ. ձեռագրից՝ «Խաչենամարգ խորդեղ» բառակապակցութեան բացակայութիւնը, առկայ է Շահխաթունեանցի գրքում: Լրիւ ճշգրտութեան համար անհրաժեշտ է նշել, որ այդտեղ որոշ ընթերցումներ տարբերւում են 1822 թ. ձեռագրից եւ նոյնանում 1809 թ. ձեռագրի ընթերցումների հետ: Դա նշանակում է, որ ապագիրը պատրաստելիս Յովհ. Շահխաթունեանցը, թերեւս, հնարաւորութիւն է ունեցել համեմատելու իր ձեռագիրը 1809 թ. գրչագրի հետ: Համեմատութեան արդիւնքում նա փոխառել է վերջինիս որոշ ընթերցուածքները (օր.՝ «ողէ» փխ. 1822-ի «ողե»; «յԱղուանայ» փխ. «յԱղուանոյ»; «ի Երասխն» փխ. «յԵրասխին»; «Գառուհատի» փխ. «Գետոյհատի»; «Խոզանագետոյն» փխ. «Խոզագետոյն»; «մ̅ լուծ ու հող» փխ. «մէկ լուծ եւ հող»), սակայն նորից վրիպել (կամ անտեսե՞լ) «Խաչենամարգ խորդեղ»-ի բացը:

Սարգիս Ջալալեանցը եղել է Գտչավանքում երկու անգամ[9]: Բացի շինարարական արձանագրութիւնից, նա ընթերցել եւ հրատարակել է եւս հինգ վիմագիր (դրանցից երեքում յիշատակւում է Վրթանէս եպիսկոպոսը): Սակայն «Ճանապարհորդութեան» Ա հատորում տպագրուած տեքստի ուսումնասիրութիւնը ցոյց է

9 Տե՛ս Ս. վրդ. Ջալալեանց, նշ. աշխ., հտ. Բ, էջ 257-258:

տալիս, որ այն բնօրինակ չէ, այլ յանգում է Եսայի կաթողիկոսի ընթերցմանը («Վարդան եպիսկոպոս»-ով փխ. «Վրթանէս»-ի եւ այլն): Աւելի ստոյգ՝ դա 1809 թ. ձեռագիրն է, քանի որ տեքստում առկայ է Խաչենամարգ Խորդեղ բառակապակցութիւնը: Նկատուող տարընթերցումներն ընդամենը անփութութեան կամ սխալաշատ տպագրութեան արդիւնք են («Ջաբխատր» փխ. «Ջարխատ»; «Յադուրի» փխ. «Հաքարի»; «Դեղակ» փխ. «Դիղակ»; «Պահես» փխ. «Տայիս» եւ այլն): Որ Ջալալեանցի ձեռքի տակ չի եղել 1718 թ. մայր օրինակը, այլ դրանից կատարուած մի ընդօրինակութիւն (իմա՛ 1809 թ. ձեռագիրը), երեւում է այն դէպքերից, երբ Բաղդասար միտրոպոլիտի եւ Սարգիս Ջալալեանցի համընկնող տեքստերից տարբերուող 1822 թ. ձեռագրի ընթերցուածքները համարժէք են բուն վիմագրին եւ այդպիսով ենթադրել են տալիս, որ Եսայի կաթողիկոսի օրինակից կարող էր շեղուած լինել Բաղդասար միտրոպոլիտը (օր.՝ «Գետոյհատի[10]» փխ. «Գառուհա̅տի», Ս. Ջալալեանցի մօտ՝ «Կառուհատի»; «ի յԱղուանոյ» փխ. «ի Հաղուանայ»):

Մակար Բարխուդարեանցը նոյնպէս եղել է Գտչավանքում, տեսել շինարարական արձանագրութիւնը եւ մի քանի այլ վիմագրեր, որոնք հրատարակել է 1895 թ.[11]: Սակայն բնագրերի համեմատութիւնից երեւում է, որ մեր

10 *Գետահատի* ճիշտ ընթերցման մասին տե՛ս ստորեւ:
11 Մ. եպ. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 80-82:

վիմագիրն, ըստ էութեան, չի ընթերցուել նրա կողմից: Մ. Բարխուդարեանցը բաւարարուել է նրանով, որ վիմագրի հետ խիստ թռուցիկ համեմատել է իր ձեռքի տակ եղած, ըստ ամենայնի, Յովհ. Շահխաթունեանցի հրատարակած բնագիրը «Խաղինամարգ խոռոտեղ»-ի պակասով (դա կարող է եղած լինել նաեւ 1822 թ. ձեռագիրը, որը նոյնպէս չունի այդ բառերը): Այդպիսի թռուցիկ համեմատութեան արդիւնքում հեղինակը կատարել է միայն փոքր թուով ուղղումներ. օր.՝ ճշտել է եկեղեցու եւ վիմագրի պատուիրատու Վրթանէս եպիսկոպոսի անունը, փոխանակ նախորդ «Վարդան» թիւրընթերցման (որին, անկասկած, նպաստել է հարաւ-արեւելեան աւանդատան դրան վերեւի պատին Վրթանէսի թողած ութտողանոց արձանագրութեան յաջող վերծանումը[12]): Դրանից բացի, նրա տպագրած տեքստը շեղւում է Շահխաթունեանցի բնագրից եւ համընկնում բուն վիմագրին եւս չորս դէպքերում («աւերեաց» փխ. «աւերեցին»; «յԱղուանոյ» փխ. «յԱղուանայ»; «Վաղարշնակետոյ» փխ. «Վաղարշնակետոյ»; «Զառիտ» փխ. «Զարիտ»): Սակայն այդ ուղղումները, եթէ իրականում պատահական խմբագրման արդիւնք չեն (օր.՝ Մ. Բարխուդարեանցը գրել է՝ «յետ առնէ» փխ. «յետ ունէ», որն աւելի է հեռացնում բուն վիմագրից), միեւնոյն է, չնչին են արձանագրութեան բնագրից Յովհ. Շահխաթունեանցի (այսինքն՝

12 Նոյն տեղում, էջ 81: Հմմտ. Դիւան հայ վիմագրութեան. պր. V, էջ 183:

Եսայի կաթողիկոսի) մեծաքանակ շեղումների համեմատ: Հեղինակն ուշադիր չի եղել անգամ վիմագրի աւարտական տողի բառերի նկատմամբ, որոնք պարզ ընթերցւում են գետնին կանգնած մարդու կողմից («ընդ Յուդայի եւ ընդ խաչեցողսն եղիցի եւ ընդ Կաեն»), եւ բնագիրն աւարտել է Շահխաթունեանցի «ընդ Յուդայի առցէ» բառերով:

Բոլորովին այլ է եղել Խաչիկ Դադեանի մօտեցումը վիմագրի ընթերցմանը: Աղբիւրագէտ գիտնականը 1887 թ. մեծ համբերատարութեամբ եւ խնամքով ընթերցել ու վերծանել է Գտչավանքի երկու արձանագրութիւնները, բաւականին ուշադիր նշել բառերի վերջաւորութիւնները, չի աւելացրել ոչ մի բառ եւ պակասեցրել է ընդամենը երկուսը: Համեմատութեան համար նշենք, որ Եսայի Հասան-Ջալալեանցի ընթերցման մէջ (ըստ 1809 թ. ընդօրինակութեան) առկայ բնագրից պակասեցրած է 22 բառ եւ աւելացրած՝ 11-ը (անգամ Սեդրակ Բարխուդարեանի մօտ 5 բառ վրիպած է եւ մէկն՝ աւելացած): Երիտասարդ գիտնականն ուշադիր է վերծանել զգուշութիւն պահանջող բառերը («եպիսկոպոսի», «Մոխենիսն», «Յուդայի», «Կաեն») եւ նկատել 4-րդ տողի «Վրթանէս» վրիպակը:

Սակայն Խաչիկ Դադեանն էլ է վրիպումներ ունեցել: Չորս տեղում սխալ են բառերի վերջաւորութիւնները: 1-ին տողի «Վրթանէս»-ի փոխարէն նա էլ գրել է «Վարդան» (գուցէ նախորդ որեւէ տպագրութեան ազդեցութեան

տա՞կ)։ «Գետո ինչու ի Երասխ, ինչու ի աւազն» հատուածն ընթերցել է «գետուն չու ի Երասխին չու ի աւազն»՝ առաջին Ի-ն Ի կարդալով։ Պարզեցրել է 13-րդ տողի «իշխան» բառը, չնայած բնագրում առկայ է (թէկուզ եւ՝ սխալով) ՅԻՇԱՆ։ «Եկեղեցաձոր» է կարդացել այն դէպքում, երբ բնագրում երրորդ Ե-ն բացակայում է (նոյն սխալը կատարել է նաեւ Սեդրակ Բարխուդարեանը)։

Ամենազարմանալի սխալներից մէկը Խ. Դադեանը կատարել է, երբ ընթերցել է փորագրողի կողմից իր տեղում վրիպած եւ հիւսիս-արեւելեան աւանդատան դրան վերեւի պատին («լուսանցքում») աւելացրած չորս բառերը։ Գետնից էլ բաւականին հեշտ ընթերցուող (յատկապէս՝ կէսօրից յետոյ) ՀՋԱՐԱԳԵՏՈ ՔՐԴԱԳԵՏ բառաձեւերի փոխարէն տետրակում առկայ է. «Հզարագետոքն Քարդագետ»[13]։ Ստիպուած ենք ենթադրել, որ յոգնածութեան արդիւնքում գիտնականը Ք տառը կարդացել է երկու անգամ։ Մէկ ուրիշ դէպքում տետրակում կարդում ենք՝ «եկեղեցաձորիւք իւր սահմանովն» առաջին բառի իւք հատուածը ջնջած հէնց իր կողմից։ Դրանից պարզ է դառնում, որ վիմագրի՝ տեղում կատարուած առաջին ընթերցման սեւագիրը Դադեանն այնուհետեւ արտագրել է մեզ հասած տետրակի մէջ եւ այդ արտագրութեան ընթացքում ուղղել որոշ սխալ-

13 Այն, որ «Քարդագետ» կայ նաեւ Սարգիս Ջալալեանցի մօտ, զուտ պատահականութեան հետեւանք է թւում։

ներ (տուեալ դէպքում ԵԿԵՂՅԱՁՈՐ-ին յաջորդող ԻԻՐ-ի ԻԻՔ թիւրընթերցումը)։ Նման մի բան էլ կատարուել է 8-րդ տողի սկիզբն արտագրելիս։ Տետրակում գրուած է՝ «ի մաղունո (թէ՞ հաղունո) գետուն»։ Պարզ է, որ սեւագրում վիմագրից ընթերցուած է եղել «մաղունո»՝ հաւանաբար, Ա-ի հետ Մ-ի կցագրում ենթադրելով (իրականում՝ քարի որեւէ ճեղքուածքի պատճառով)։ Տետրակում արտագրելիս հեղինակը զգացել է, որ «Մաղունո» գետանուն չկայ եւ, ըստ երեւոյթին, ենթադրել, թէ սեւագիրն անելիս ինքը պատահաբար Մ է գրել քարի վրայ եղած (իրականում՝ չեղած) մէկ ուրիշ յարմար տառի՝ ենթադրաբար Հ-ի փոխարէն։ Եթէ նա «մաղունո» ընթերցման վրայ կասկածէր ոչ թէ երկրորդ արտագրութեան ժամանակ, այլ տեղում վիմագրի ուսումնասիրութեան պահին, ապա «ճաղունո»-ն հարցականով չէր լինի (վիմագրի Մ եւ Հ տառերն իրար նման չեն)։

Երկու այլ դէպքերից երեւում է, որ վիմագիրը Խաչիկ Դադեանի կողմից ընթերցուել է ոչ շատ մօտիկից, այսպէս ասած, ո՛չ շօշափելով։ 9-րդ տողում ԽՈՋԱԲԵՐԴՈՎ բառի ԲԵՐԴ հատուածը բաւականին մաշուած է, սակայն մօտիկից յստակ ուրուագծւում են բոլոր տառերի բնորոշ մասնիկները։ Վարդապետն այդ բառն ընթերցել է «խոզանարգով»՝ ճիշտ հաշուելով վնասուած տառերի քանակը, սակայն նկատելով նրանց միայն որոշ ուրուագծերը[14]։ ԳԱՏԱՀԱՏԻ

14 Եսայի կաթողիկոսն այդ բառը կարդացել էր «խոզա-

բառը (ճիշտը՝ ԳԵՏԱՀԱՏԻ) հեռուից ընթերցողին թւում է (քարի փոքրիկ ճեղքուածքի պատճառով), թէ երրորդ Ա-ին աջեւից Վ-ի մասնիկ է կցագրուած: Եթէ Դադեանն ընթերցէր «շօշափելով», ապա կը տեսնէր քարի թերութիւնը եւ չէր ընդօրինակի «գատահվատի»[15]*: Եւ, վերջապէս, մէկ դէպքում գիտնականը բնագրի աղճատում է թոյլ տալիս՝ ուղղակի դեն նետելով 10-րդ տողի առաջին «իւր կերովն» բառերը (որի պատճառի մասին՝ ստորեւ):*

Այսպիսով, ամփոփենք կորած քարերի բնագրի վերականգնման նկատառումով ձեռնարկած աղբիւրագիտական անդրադարձն այն եզրայանգմամբ, որ ըստ էութեան վիմագիրը տեղում ընթերցել են միայն Եսայի Հասան-Ջալալեանցը եւ Խաչիկ Դադեանը: Նրանց թողած բնագրերի համեմատութեամբ էլ պէտք է վերականգնել պակասող տեքստը:

Կորած քարերի առաջին (վիմագրի՝ 7-րդ) տողում Եսայի կաթողիկոսը եւ Խաչիկ վարդապետը ընթերցել են նոյն ձեւով՝ «Սրբոյն Գրիգորիսի, որ է հաստատեալ...»*: Դա էլ առանց կասկածի կարող ենք համարել բնօրինակի տեքստը:*

Երկրորդ (վիմագրի՝ 8-րդ) տողում Եսային ունի «Վիճակաւ եւ սահմանով ի յԱղունոյ գետոյ...»[16]*, իսկ Դադեանը՝ «Վիճակով եւ սահմանաւ ի Աղունո գետուն...»: Մեր սխալից է առաջացել առաջին բառերի վերջաւորութիւնների տարբերութիւնը. թւում է, թէ տուեալ դէպքում բնագիրը ճիշտ է ընթերցել Եսային: 11-րդ տողում ունենք՝ ԵԿԵՂՅԱՋՈՐ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ պահպանուած հատուածը, որի փոխարէն, եթէ ճիշտ լինէր Խ. Դադեանը, ապաակի պիտի լինէր ՍԱՀՄԱՆԱՒՆ ձեւը: Վերջինիս սխալի պատճառը, կարծում ենք, եղել է ինքնաթելադրութեան պահին առաջացած շփոթը: Ինչ վերաբերում է գետանուան հատուածին, ապա կարելի է պնդել, որ դժուար թէ Դադեանը չնկատէր ԱՂՈՒՆՈ բառից առաջ եղած Յ-ն, եթէ այն լինէր վիմագրում: Աւելի եւս, որ քիչ անց ունենք՝ «ի Երասխ», ոչ թէ «ի յԵրասխ», եւ՝ «ի աւազն», ոչ թէ «ի յաւազն»: Վերը ցոյց տուեցինք, որ Մ-ի առկայութիւնն էլ Ի նախդիրից յետոյ Ա տառի գոյութեան ապացոյց է, քանի որ միայն նրան կցագրուած Մ կարող էր յիշեցնել քարի որեւէ ճեղքուածքը:*

Երրորդ (վիմագրի՝ 9-րդ) տողում Եսայի կաթողիկոսն ունի «Վակունիս վաղագնագետոյ

գետով» (ըստ 1822 թ. ընդօրինակութեան. 1809 թ. ձեռագրի գրիչը բառը դարձրել էր «Խոզա*ճագետով*»):

15 Նոյն սխալը հետագայում կատարել է նաեւ Սեդրակ Բարխուդարեանը: Եսայի կաթողիկոսը տուեալ դէպքում աւելի ուշադիր է եղել:

16 «Վիճակաւ» ձեւը մենք վերականգնում ենք՝ 1809 եւ 1822 թթ. ձեռագրերի համեմատելով: Առաջինն ունի «վիճաւ և սահմանով» փոքր-ինչ աղճատուած ձեւը (Սարգիս Ջալալեանցի մօտ՝ «Վիճակաւ»), իսկ երկրորդը՝ «վիճակեցաւ եւ սահմանով»: Թւում է, թէ առաջին ընթերցումը չէր կարող առաջանալ «վիճակեցաւ»-ից, այնինչ երկրորդը կարող էր ստեղծուել «վիճակաւ»-ից՝ այդ բառը ոչ թէ «վիճակ*ով*», այլ «վիճակ*ուեց*» իմաստով ընկալելու արդիւնքում:

ի Քարջատնիսն...», իսկ Խ. Դադեանը՝ «վակունիսի վաղագնո գետովն, քարջատնիսն...»: Վերը կատարուած աղբիւրագիտական անդրադարձը թոյլ է տալիս պնդել, որ տուեալ դէպքում առկայ տարբերութիւնն առաւել հաւանական է վերագրել Եսայու «խմբագրական» ընթերցմանը. նման տիպի վրիպում Խաչիկ Դադեանի մօտ ուղղակի չենք գտնում: Հետեւաբար կարող ենք վերականգնել բնագիրը ըստ վերջինիս՝ միայն փոխելով «Վակունիսի» բառի երկրորդ Ի-ն յաջորդ բառի նախդիրի. «Վակունիս ի Վաղագնո գետովն...»:

Աւարտելով պակասող քարերի բնագրի վերականգնումը եւ անցնելով վիմագրի վերծանութեանը՝ որպէս առաջին քայլ պէտք է վերլուծենք նախորդ ընթերցողների թոյլ տուած միեւնոյն սխալը՝ փորագրչի կողմից իր տեղում բաց թողնուած եւ յետոյ «լուսանցքում» աւելացուած 4 բառերի տեղը բնագրի մէջ որոշելու խնդրում: ՀԶԱՐԱԳԵՏՈ ԲՐԴԱԳԵՏ ԻԻՐ // ԿԵՐՈՎՆ երկտողանոց հատուածը գրուած է (քիչ աւելի փոքր տառերով) արձանագրութեան 9-րդ եւ 10-րդ տողերն իրարից բաժանող քարերի եզրագծի դիմաց: Առաջին տպաւորութեամբ՝ «Հզարագետո...» տողը շարունակում է վիմագրի 9-րդ տողին (ՀԱԿԱՐԻ բառին), իսկ «կերովն»-ը՝ 10-րդ տողին (ԳՈԴԱՆՈՑՆ-ին): Այդպէս է վերծանել Սեդրակ Բարխուդարեանը, իսկ Եսայի կաթողիկոսը եւ Խաչիկ Դադեանը համարել են, որ ՀԱԿԱՐԻ բառին հետեւել են «լուսանցքի» բոլոր չորս բառերը:

Սակայն մօտիկից դիտարկումը ցոյց է տալիս, որ փորագրողը որեւէ ջանք չի գործադրել աւելացուող տեքստը կոնկրետ տողի ուղղութեամբ համադրելու համար: Այդ տառերը գրուած են պարզապէս տուեալ քարի վերեւի եզրի տակ, այդ եզրից նոյնքան ներքեւ, ինչպէս որ բուն արձանագրութեան մէջ է: Միւս կողմից՝ չորս կամ երեք բառերը ՀԱԿԱՐԻ-ից յետոյ դնելով նախորդ վերծանողները դժուարութիւնների առաջ են կանգնել եւ ստիպուած աղճատել բնագիրը: Եսայի կաթողիկոսի մօտ առաջացել է «Բրդագետ իւր գետովն[17] իւր սահմանովն[18]» ինքնին անբարեհունչ եւ բնագրին ոչ բնորոշ կրկնողութեամբ տեքստը: Ս. Բարխուդարեանը «կերովն»-ը չկրկնելու համար տուել է «Բրդագետ իւր // գետովն», որի հետեւանքով կորել է 10-րդ տողի սկզբի ԻԻՐ-ը: Խաչիկ Դադեանն էլ այստեղ թոյլ է տուել բնագրի միակ աղճատումը՝ ընդհանրապէս անտեսելով 10-րդ տողի սկզբի ԻԻՐ ԿԵՐՈՎՆ բառերը:

Մեր ուսումնասիրութիւնից պարզ է դառնում, որ այդ ամենի փոխարէն անհրաժեշտ է

17 Եսային զարմանալի հետեւողականութեամբ չորս դէպքերից երեքում «կերովն» բառի փոխարէն ընթերցել է «գետովն» (մի դէպքում էլ՝ «սահմանովն»):

18 Իրականում 10-րդ տողն սկսւում է ոչ թէ «իւր սահմանովն», այլ «իւր կերովն» բառերով, որտեղ ԿԵՐ հատուածը մաշուած է, սակայն մօտիկից ընթերցւում է շատ որոշակի: Ս. Բարխուդարեանն առաջարկում է կարդալ՝ «իւր գետովն», որը, սակայն, չկրկնուող բնագիր ստանալու չյաջողուած (մի ԻԻՐ-ի անտեսման պատճառով) փորձի հետեւանք է:

«լուսանցքում» աւելացուած չորս բառերն ընթերցել ոչ թէ 9-րդ, այլ 10-րդ տողից յետոյ: Այդպիսով ստացւում է՝ ...ԳՈԴԱՆՈՑՆ // ՀԶԱՐԱԳԵՏՈ, ՔՐԴԱԳԵՏ ԻԻՐ // ԿԵՐՈՎՆ, // ԵԿԵՂՑԱԶՈՐ ԻԻՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ ընագիրը, իսկ 9-րդ տողի վերջում եւ 10-րդի սկզբում՝ ...ՀԱԿԱՐԻ // ԻԻՐ ԿԵՐՈՎՆ: Մնում է բացատրել, թէ ինչու փորագրողը չի ջանացել աւելացուող բառերը «լուսանցքում» տեղադրել ճշգրիտ նախորդող ԳՈԴԱՆՈՑՆ բառի կողքին, բայց այդպիսի բացատրութեան որեւէ տարբերակի յաջողութիւնն, ըստ էութեան, կարեւոր էլ չէ:

Արձանագրութեան մնացեալ հատուածներում փորագրողը նման մեծ վրիպումներ թոյլ չի տուել: Անկասկած, սխալներ են թւում 2-րդ տողի ԻՊԻՍԿՈՊՈՍՔ-ը փխ. ԵՊԻՍԿՈՊՈՍՔ-ի եւ 13-րդ տողի ՅԻՇԱՆ-ը փխ. ԻՇԽԱՆ-ի: Վերջին բառի Յ-ն նոյնպէս աւելորդ է թւում, քանի որ արգելքի չարքի մէջ ունենք՝ ԿԱՄ ԹԱԳԱՒՈՐ եւ ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ առանց Ի նախդիրների: Հետաքրքիր է նաեւ, որ Յ-ից առաջ՝ նախորդող Մ-ի հորիզոնական գծիկի տակ, մի ուղղաձիգ կարճ ստեղն կայ: Հնարաւոր է, որ Խ-ն բաց թողնելուց յետոյ փորագրողը որոշել է յարմար անկիւնում վերականգնել այն, սակայն սկսելուց յետոյ նկատել է ընտրած տեղի սխալը եւ իր մտադրութիւնը կիսատ թողել:

Հնարաւոր է, որ տառերի բաց թողման արգիւնք են ԵԿԵՂՑԱԶՈՐ (փխ. ԵԿԵՂԵՑԱԶՈՐ) եւ ՄՈԽԵՆԻՄՆ (փխ. ՄՈԽՐԵՆԻՄՆ) գրուածքները 11-րդ տողում. բայց գուցէ եւ այդ տեղա-

նուններ ԺԳ դարում հնչել են առանց Ե-ի եւ Ր-ի: Հետաքրքիր է 13-րդ տողի վերջում «յամէն» բառի գրութիւնը, որն ստացուել է առանց Մ-ի՝ ՅԱԷՆ: 7-րդ տողի վերջում ԳԱՒԱԶԱՆՈՎՍ բառի Ն-ի աջ ստեղնը սխալմամբ բարձրացուած է մինչեւ տողագիծը: 10-րդ տողում երկրորդ ԿԵՐՈՎՆ բառի մէջ փորագրողը Ե-ին Ր է կցագրել, սակայն մոռացել է դա եւ նորից առանձին Ր գրել: Անկասկած, ոչ թէ սխալի արգիւնք, այլ գրելաոճի (թերեւս ընդհանրապէս վիմագիր գրչութեան) առանձնայատկութիւն է բառավերջում կամ զոյգ ձայնաւորների միջեւ կիսաձայն Յ-ն չգրելը (ՈՐԴՈ, ԱՄԱՐԱՍԱ, ԱՂՈՒՆՈ ԳԵՏՈ, ՎԱՂԱՋՆՈ, ԴԻՋԱԿՈ, ՀԶԱՐԱԳԵՏՈ, ԼՃՈ, ԽՈՏՈ, ՅՈՒԴԱՒ, ԿԱԵՆ):

Որոշ դէպքերում փորագրողը, իր սխալը նկատելով, փորձել է ուղղել այն: 4-րդ տողում ՎՐԹԱՆԷՍ բառի մէջ նա Թ-ի փոխարէն սկսել է գրել յաջորդ Ա տառը, սակայն, ժամանակին նկատելով դա, նրա աջ ստեղնը դարձրել է Թ-ի սիւնակ (իսկ առաջին ստեղնը մնացել է ու դարձել Եսայի կաթողիկոսի համար «Վարդան» կարդալու պատճառ): 8-րդ տողում ԳԵՏԱՀԱՏԻ բառի Ե-ի փոխարէն փորագրողը սկզբում գրել է Ա, որի երկու աջ սեպիկներն էլ յստակ երեւում են: Սակայն յետոյ դա համարել է սխալ եւ Ե-ի աւելի խոր աջ ստեղն ու հորիզոնական գծիկ է փորել Ա-ի աջ ստեղնի վրայ, ապա, դրանով էլ չբաւարարուելով, հորիզոնական գծիկին զուգահեռ եւս երկու գծիկ է փորել (առանց սեպիկների)՝ գուցէ երեք գծիկներով Ե-ն

յատակեցնելու համար[19]: Իհարկէ, լրիւ չենք կարող բացառել նաեւ հակառակը, բայց դա կարելի է ճշտել միայն Գետահատ *կամ* Գատահատ *տեղանուան քննութեան կամ մի ուրիշ վկայութեան յայտաբերման դէպքում: Նշենք նաեւ, որ փորագրողը երբեմն, ինչպէս ընդունուած է վիմագրութեան մէջ, շրջանցել է քարի ճեղքուածքները: Դրա հետեւանքով որոշ դատարկ տեղեր հեռուից տառի են նմանւում: Այդպէս վրիպել է, օր.՝ Սեդրակ Բարխուդարեանը, երբ ԳԵՏԱՀԱՏԻ բառի մէջ Հ եւ Վ է ընթերցել (ԳԱՀՏԱՀՎԱՏԻ)[20]:*

Արձանագրութեան մէջ կցագրումները փոքրաթիւ են. երկուսից աւելի տառի կցագրման դէպք չունենք: Սովորական են Ո+Ր եւ Ա+Թ կցագրերը, ԵՒ շաղկապը միայն մէկ դէպքում է կցագիր արուած (վերջին տողի վերջում): Յապաւուած բառերի ու վերջաւորութիւնների վերեւում խնամքով փորագրուած են բոլոր պատուոյ նշանները, թուականները երկու կողմից

անջատուած են կրկնակէտերով: Շատ ուրիշ վիմագրերի համեմատ՝ Գոշավանքի «արձանագիրն» ընդհանուր առմամբ աչքի է ընկնում հեղինակի որդեգրած գրելաձեւի եւ քերականական կանոնների հետեւողական պահպանմամբ:

Արձանագրութեան վերծանութիւնը ներկայացնում ենք՝ հնարաւորինս պահպանելով հեղինակի գրելաձեւի առանձնայատկութիւնները, բացելով նրա նշած յապաւումները, աւելացնելով միայն կէտադրութիւնը, երկու ակնյայտ վրիպակները՝ ‹Խ›, ‹Մ›, եւ երկու դէպքում ‹Յ› գուցէ եւ յապաւուած կիսաձայնը (տե՛ս գրչանկարը՝ ներդիր 1).

[1] ՅԱՆՈՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴՒՈ ԵՒ Ս[ՈՒՐ]Բ ՀՈԳՒՈՅՆ, ԵՍ Տ[Է]Ր ՍԱՐԳԻՍ ԵՒ Տ[Է]Ր ՎՐԹԱՆԷՍ,

[2] ԱՄԱՐԱՍԱ ԻՊԻՍԿՈՊՈՍՔ, ՀԻՄՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎԻՍ :ՈՂ: *(=1241 թ.)*: ՇԱՏ ԱՇ-

[3] ԽԱՏՈՒԹ[ԵԱՄ]Բ ԻՆՉ ԶԱՒԱԳ ԽՈՐԱՆՆ ԽՓԵՑԱՒ, ԵՂԲԱՅՐ ԻՄ Տ[Է]Ր ՍԱՐԳԻՍ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս ՓՈԽ-

[4] ԵՑԱՒ: ԵՍ Տ[Է]Ր ՎՐԹԱՆԷՍ, ԿԱՏԱՐԵՑԻ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹ[ԵԱՄ]Բ Ի ՄԵՐ ՀԱՂ-

[5] ԱՂ ԱՐԴԻՒՆԻՑ, Ի :ՈՂԵ: ԹՎԻՍ *(=1246 թ.)*, Ի ԴԱՌՆ ԵՒ ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՅԱԶԳԷՆ ՆԵՏՈՂԱՑ,

[6] ՈՐ ԶԲԱԶՈՒՄ ԳԱՒԱՌՍ ԱՒԵՐԵԱՑ, ԵՒ ՄՆԱՑ ԱՅԼԱՍԵՌԻՑՆ ԱԹՈՌՍ ԵՒ ՎԻՃԱԿՍ

---

19 Խ. Դադեանը եւ Ս. Բարխուդարեանը նախընտրել են այդ տառը *Ա* ընթերցել, իսկ Եսայի կաթողիկոսը բառը կարդացել է, հաւանաբար, «գետոհատի» (որը վերականգնում ենք 1809 թ. եւ 1822 թ. արտագրութիւնների համեմատելով. առաջինում՝ «գ ուհ ի» է, երկրորդում՝ «գետոդհատի»):

20 Վիմագրագէտը սխալուել է նաեւ՝ ԳԱՎՀԱՋԱՆՈՎՍ, ՀԶԱՐԱԳԵՏՈՎ, ԳՈՏԱՆՈՑՆ, ԽԱԶԻՆԱՄԱՐԳ ընթերցելով, ԽՈՋԱԲԵՐԴՈՎ-ը մաշուածքի պատճառով վերականգնել է ԽՈՋԱԳԵՏՈՎ, իսկ ՎԵՐՈՎՆ-ը՝ ԳԵՏՈՎՆ (10-րդ տողում), ինչպէս նաեւ վրիպել Ի (8-րդ տող) եւ ՅՈՒԴԱՒԻ ԵՒ ԸՆԴ (14-րդ տող) բառերը:

[7] *[ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐ Է ՀԱՍՏԱ-ՏԵԱԼ* Ս[ՈՒՐ]Բ ՆՇԱՆԱՒՍ ԵՒ Ս[ՈՒՐ]Բ ԱՋՈՎՆ ԵՒ ԳԱՒԱԶԱՆՈՎՍ,

[8] *[ՎԻՃԱԿԱՒ ԵՒ ՍԱՀՄԱՆՈՎ Ի ԱՂՈՒՆՈ* ԳԵ/ՏՈ ԻՆՉՈՒ Ի ԵՐԱՍԽ, ԻՆՉՈՒ Ի ԱԻԱՋՆ ԳԵ-ՏԱՀԱՏԻ,

[9] *[ՎԱԿՈՒՆԻՍ Ի ՎԱՂԱՋՆՈ ԳԵՏՈՎՆ, ՔԱՐԱ/*ՏՆԻՍՆ ԽՈՋԱԲԵՐԴՈՎ, ՁԱՈՒՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ, ՀԱԿԱՐԻ

[10] ԻՒՐ ԿԵՐ›Ր‹ՈՎՆ, ԴԻՋԱԿՈ ԲԷԼՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՓԱ-ՐԱԽՆ, ԳՈԴԱՆՈՑՆ

[10ա] ՀՋԱՐԱԳԵՏՈ, ՔՐԴԱԳԵՏ ԻՒՐ

[10բ] ԿԵՐՈՎՆ,

[11] ԵԿԵՂՑԱՁՈՐ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ, :Ա̄: ԼԾՈ ՀՈՂ Ի ՏԱՀԻՍ, :Ա̄: ԼԾՈ՝ Ի ՏՈՂ, :Ա̄:՝ Ի ԳԱ-ՔՍ, :Ա̄:՝ Ի ՄՈԽԵՆ-

[12] ԻՍՆ, ԽԱՉԻՆԱՄԱՐԳ՝ ԽՈՏՈ ՏԵՂ: ՈՐ ՅԱՅՍ ՎԻՃԱԿԷՍ ԵՒ Ի ՍԱՀՄԱՆԷՍ Ի ՅԵՏ ՈՒ-ՆԻ՝ ԿԱ՛Մ ԹԱԳԱՒՈՐ,

[13] ԿԱ՛Մ ՅԻՇ‹Խ›ԱՆ, ԿԱ՛Մ ՀԱՅՐԱՊԵՏ, :Գ̄: Ս[ՈՒՐ]Բ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ՛, ՅԱ[ՍՏՈՒԾՈ]Յ ԵՒ ՅԱ‹Մ›ԷՆ ՍՐԲՈ-

[14] Յ ԱՆԻԾԵԱԼ ԵՂԻՑԻ՛, ՄԱՍՆ ԵՒ ԲԱ-ԺԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱ‹Յ›Ի ԵՒ ԸՆԴ ԽԱՉԵՑՈՂՍՆ ԵՂԻՑԻ՛ ԵՒ ԸՆԴ ԿԱ‹Յ›ԵՆ:

Գոչավանքի շինարարական արձանագրութեան պարունակած տեղանունների քննարկումը կը կատարենք բնագրում առկայ հերթականութեամբ՝ վերապահում անելով, որ ներկայ

աշխատանքում, իհարկէ, հնարաւոր չէ կատարելապէս ամփոփել նրանց մասին եղած ողջ գրականութիւնը:

1. ԱՄԱՐԱՍԱ‹Յ› *Ի*ՊԻՍԿՈՊՈՍՔ. *Ամարասի եպիսկոպոսական թեմը, ինչպէս երեւում է նախ եւ առաջ հէնց մեր արձանագրութիւնից, ամփոփել է Արցախի ողջ հարաւային մասը: Աւանդաբար համարւում է հիմնադրուած Գրիգոր Լուսաւորչի թոռան՝ Բուն Աղուանքի եպիսկոպոս Գրիգորիսի կողմից, ինչպէս պնդում է նաեւ մեր վիմագրի հեղինակը: Իրականում վաղ շրջանի աղբիւրներից յայտնի է միայն, որ Մազքթաց երկրի Վատնեան դաշտում Գրիգորիսի նահատակուելուց յետոյ նրա մարմինը բերուել եւ ամփոփուել է Արցախի Հաբանդ գաւառի Ամարաս աւանում*[21]*: Յենուելով Ժ դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու (կոչուած*

---

21 **Փաւստոս Բուզանդ**, դպր. Գ, գլ. Ե-Զ, էջ 14 («Եւ ապա բարձին զնա, որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց, ի կողմանց /*տարբ.* կողմանս/ Աղուանից ի սահմանս Հայոց, ի Հաբանդ, ի գեօղն, որ անուանեալ կոչի Ամարաս /*տարբ.* Ամարազ/: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին»); **Մովսէս Խորենացի**, գիրք Գ, գլ. Գ, էջ 260 («Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»): Փաւստոսի բնագրի աղբիւրագիտական քննութիւնը տե՛ս **А. А. Акопян**, *...История Армении" Фавста Бузанда kak источник ...Повести о Вачагане" (снова о первом и втором апрутюнах Фавста Бузанда)*, - ...Кавказ и Византия", вып. 5, Եր., 1987, էջ 74-75:

նաեւ՝ Կաղանկատուացի) *«Պատմութիւն Աղուանից»-ում պահպանուած Զ դարի աղբիւր «Վաչագանի վէպ»-ի մի կարեւոր վկայութեան վրայ («ընդ այնմ ժամանակս եպիսկոպոս ոչ կայր յԱմարաս»*[22]*)՝ ժամանակին ենթադրել ենք, որ Ամարասի եպիսկոպոսութիւնը ստեղծուել է Ե դարի աւարտից յետոյ*[23]*, թէպէտ աւանդութիւնները նրա գոյութեան մասին խօսում են աւելի վաղ ժամանակի հետ կապուած*[24]*:*

Պատմագրութիւնը դեռեւս պէտք է պատասխանի այն հարցին, թէ ինչպիսի վարչական կամ աւատական հանգամանքներ են նպաստել Արցախի հարաւային մասը մնացեալ նահանգից առանձնացնող եպիսկոպոսական թեմական միաւորի ձեւաւորմանը (ըստ Բաբկէն Յարութիւնեանի վեր հանած մեթոդաբանութեան)[25]*: Չյաւակնելով վերջնական եզրայանգ-*

22 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը **Վ. Առաքելեանի**, Եր., 1983 (այսուհետեւ՝ *ՊԱ*), գիրք Ա, գլ. ԻԱ, էջ 74:

23 Տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 130: [Այժմ տե՛ս նաեւ **Ա. Յակոբեան**, *Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին*, - ՄՄԱՆԺ, հտ. XXVI, Եր., 2007, էջ 72-88 – *հեղ., 2009*]

24 Տե՛ս, օր.՝ *ՊԱ*, գիրք Բ, գլ. Ն, էջ 119 («ի ժամանակս Վաչագանայ Աղուանից արքայի եւ Գառնիկայ Ամարասայ եպիսկոպոսի...»):

25 Տե՛ս **Բ. Յարութիւնեան**, *Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսաւորչի հովուապետութեան շրջանում*, - «Պատմա-բանաս. հանդէս», 2000, թիւ 2, էջ 108-127:

ման եւ վերապահում անելով «Աշխարհացոյց»-ի (Է դարի սկիզբ) քննական բնագրի բացակայութեան պատճառով սխալուելու հնարաւորութեան մասին՝ այնուամենայնիւ նշենք, որ այդ երկի երկու թուարկումներում (Բուն Աղուանքի եւ Մեծ Հայքի գաւառների) Արցախի կենտրոնական եւ հարաւային գաւառների հերթականութիւնը էական տարբերութիւն է դրսեւորում: Մեծ Հայքի Արցախ աշխարհի նկարագրութեան մէջ հերթականութիւնը խառն է. «Միւս Հաբանդ, Վայկունիք, Բերձոր, *Մեծ Իրանք, Մեծ Կուանք, Հարճլանք,* Մուխանք, *Պիանք,* Պածկանք, Սիսական-ի Կոտակ...»[26]*: Իսկ Բուն Աղուանքի նկարագրութեան մէջ, որն արձանագրում է 428 թ. յաջորդած վիճակը, այդ գաւառներն առանձնացուած են իրարից. «եւ այլ գաւառք, զոր ի Հայոց հանեալ է. ...Մեծ Կուանք, Մեծ Իրանք, Պիանք, Հարճլանք,* Պածկանք, Մոխանք, Վակունիք, Փոքր Հաբանդ, Սիսական-ոստաստակ, Բերձոր, ‹Տրի›, *Ասոստ»*[27]*:*

26 *Աշխարհացոյց* **Մովսէսի Խորենացւոյ**, Յաւելուածովք նախնեաց, Վենետիկ-Ս.Ղազար, 1881, էջ 33; *Армянская география VII века по Р. Х.*, Текст и перевод, издал **К. П. Патканов**, СПб., 1877, էջ 19; **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, Եր., 1944, էջ 350: Այստեղ եւ ստորեւ պարզեցրել ենք տարընթերցումները: Նաեւ ընդգծել ենք հետագայում Դիզակի իշխանութեան մէջ մտած հարաւային գաւառների անունները:

27 **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, էջ 348: Վերջին անունն, անշուշտ, Ուտիքի *Առան-ռոտ* գաւառի աղաւաղուած ընթերցումն է. Նրանից առաջ, թերեւս, պիտի լինէր որեւէ գրչի կողմից

2. Ի ԱՂՈՒՆՈ‹Յ› ԳԵՏՈ‹Յ›. Աղաւնոյ - Աղունոյ գետանունը յիշատակւում է արդէն «Աշխարհացոյց»-ը. «Աշխարհ Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխայ եւ Արձախայ, ...մինչեւ ցՆակորզեան քաղաք, անցն իւր[28] հոմանուն գետովք եւ Աղաւնոյ գետ»[29]: «Սիւնեաց պատմութիւնը» հաստատում է, որ Աղաւնոյ-ով է անցել Սիւնիք եւ Արցախ նահանգների սահմանագիծը. «Համանէ եւ զսահման Աղուանից ըԹմբի խոռն, Մար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղունոյ գետն հատանէ մինչ ի Քարաւագին կամուրջն, եւ Հաբանդ գաւառ...»[30]: Դեռեւս Ժ դարում Աղաւնոյ գետը կոչուել է նաեւ Հակարի, որը պահպանուել է ցայսօր (տարբ. Ագար, Աքերայ, Հագարու): «Սիւնեաց պատմութիւնը» նկարագրում է Ամբատ եւ Սահակ Սիւնեաց իշխանների տիրոյթների սահմաններն այսպէս. «Ամբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արեւմուտս կողմն եւ զբոլոր Վայոց ձորն ունէր ի բաժնի, իսկ Սահակ՝ ընդ արեւելս մինչ ի Հակարի»[31]:

3. ԻՆՁՈՒԻ Ի ԵՐԱՍԽ. Արցախի ամենահարաւային գաւառը, որը ձգւում էր Արցախեան

բաց թողած *Տրի* գաւառանունը, որը տուել ենք անկիւնաւոր փակագծերով:

28 Պէտք է հասկանալ՝ */ց/անցն իւր*, որպէս շարունակութիւն «*ցՆակորզեան* քաղաք»-ի:

29 Պէտք է հասկանալ՝ */ց/Աղաւնոյ գետ*: Տե՛ս *Աշխարհացոյց* **Մովսեսի Խորենացւոյ**, էջ 33:

30 **Ստեփաննոս Օրբէլեան**, գլ. ԾՁ, էջ 227-228 (յղումները տալիս ենք ըստ 1861 թ. մոսկովեան՝ Մկրտիչ Էմինի հրատարակութեան):

31 **Ստեփաննոս Օրբէլեան**, գլ. ԼԼ, էջ 144:

լեռնաշղթայի Դիզափայտի լեռնազանգուածից մինչեւ Արաքս գետի ափերը. «Աշխարհացոյց»-ի Սիսական-ի Կոտակն է, որը «Պատմութիւն Աղուանից»-ում կոչուած է Սիսան կամ Սիսական: Մովսէս Դասխուրանցին Թ դ. 40-ական թուականներին բայլականցիների մի աւարառութեան մասին պատմում է այսպէս. «...եկին, հասին Բաղականացիքն եւ աւարին վնաս Սիսան, Տրւոյ եւ Ամարաս գաւառաց: Եւ եկ Եսայի անուանեալն Աբու-Մուսէ ի վերայ նոցա եւ կոտորեաց զնոսա»[32]: Միւս տեղեկութիւնը, փաս-

32 *ՊԱ*, գիրք Գ, գլ. Ի /ԻԱ/, էջ 331: Հարկ է նշել, որ «*Տրւոյ*» ընթերցումը տալիս են *ՊԱ* Ա խմբի ձեռագրերը եւ Բ խմբի bII ենթախմբից I-ը (Ս.Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտի C-59՝ ընդօրինակուած 1678 թ., խնդրի մասին տե՛ս **Ա. Յակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից Պատմութեան» ձեռագրերը*, - «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-144): Բ խմբի crv ենթախմբի ձեռագրերը տալիս են «*ձորւոյ*» ընթերցումը, որը կարող էր յուշել ոչ թէ *Տրի*, այլ Բեր*ձոր* գաւառի յիշատակման հնարաւորութիւնը, իսկ b ձեռագիրը (ՄՄ 1725) ունի երկու դէպքի համար էլ յարմար «*որւոյ*» բառը: Վերջերս Երուսաղէմի պատրիարք, գերաշնորհ Թորգոմ արքեպ. Մանուկեանի սիրալիր օժանդակութեամբ (որին ակնածանքով յղում եմ խորին երախտագիտութիւնս) ստացանք *ՊԱ* i ձեռագրի (Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարանի թիւ 375՝ ընդօրինակուած 1685 թ.) համապատասխան էջի լուսանկարը եւ պարզեցինք, որ այդ գրչագիրը եւս ունի «*տրւոյ*» տարբերակը: Ճիշտ է, մանրակրկիտ համեմատութեան արդիւնքում յստակուեց նաեւ, որ i-ն արտագրուած է ուղիղ I-ից (ըստ այսմ տուեալ ենթախումբն այսուհետ պէտք է կոչել bI. տեղին նշենք, որ Մխիթարեան Միաբանութեան ընդհանրական աբբահօր՝ գերաշնորհ Հ. Եղիա Քիլաղպեանի օ-

տորէն, Դիզակի իշխանութեան գաւառների թուարկումն է. «Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, *Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ»*[33]*: Դրանց համադրութիւնից երեւում է, որ* Սիսան - Սիսական [-ի Կոտակ] *գաւառը պէտք է տեղադրել Հակարի գետի եւ Հագրութի գետակի տորին հոսանքների միջեւ*[34]*: Նրանից հիւսիս-արեւմուտք (Փոքր Ակերայ վտակից սկսած), ընկնում էր* Բերձոր *գաւառը, ուղիղ գծով դէպի հիւսիս (Դիզափայտի*

ժանդակութեամբ ստացած լուսանկարների շնորհիւ Ներկայումս հետազօտուած է նաեւ v_1 ձեռագիրը՝ Վենետիկի Մխիթարեան մատենադարանի թիւ 1485-ը, եւ այն իրօք անկախ է ենթախմբի միւս՝ c եւ r գրչագրերից, ինչպէս ենթադրել էինք ժամանակին անուղղակի հանգամանքների հիման վրայ): Բայց միեւնոյն է, i-ում չստանալով *«Ծորւոյ»*-ին օժանդակող փաստարկ, կարող ենք այդ ընթերցումը մեծ հաւանականութեամբ համարել crv խմբի մայր օրինակի վրիպում եւ վերջնականապէս կանգ առնել *«Տրւոյ»*-ի վրայ:

33 *ՊԱ*, գիրք Գ, գլ. ԺԹ /Ի/, էջ 327:

34 Հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 1963, էջ 70: Համառօտ նշենք, որ հեղինակի մնացեալ կարծիքները *Միւս Հաբանդ - Սիսական-ի Կոտակ* համադրութեան եւ վերջինիս առաջացման ժամանակի մասին մեզ թւում են ոչ բաւականաչափ հիմնաւորուած: Բաց ենք թողնում յղումները այլ չարդարացուած տեսակէտների վրայ, որոնցից ամենատարածուածը՝ *Սիսական-ի Կոտակ*-ը զարգացած եւ ուշ միջնադարում յաճախ *Փոքր Սիւնիք* կոչուած Ծար գաւառի հետ համադրելն է եւ դրա հիման վրայ այն եւս Թարթառի վերնահովտում տեղադրելը (վերջին անգամ՝ **Ս. Սարգսեան**, *Արցախ. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ*, Եր., 1996, էջ 29-30): [Այս հարցի մասին առաւել մանրամասն տե՛ս սոյն ժողովածոյի չորրորդ աշխատութեան մէջ - *հեղ., 2009*]:

լեռնապանդուածից սկսած)՝ Միւս Հաբանդը, *իսկ դէպի հիւսիս-արեւելք (Հագրութի գետակից սկսած)՝ Ուտիքի* Տրի *գաւառը:*

4. ԻՆՉՈՒ Ի ԱՒԱԶՆ ԳԵՏԱՀԱՏԻ *(կամ* ԳԱՏԱՀԱՏԻ). *Գետահատի (կամ Գատահատի) գետանցը («աւազը») Արաքս գետի վրայ այլ աղբիւրներում չի յիշատակւում: Աղբիւրներից յայտնի են նաեւ Նակորզանի գետանցը՝ Սիւնիքի ու Միւս Բաղք կամ Քաշունիք անուանուած գաւառում, եւ Քարաւազի գետանցը, որը գտնուել է Աղաւնոյ-Հակարիի գետաբերանի շրջանում կամ Խուդափերինի մօտ (հմմտ. «...մինչ յեզր Երասխայ, ի տեղին, որ կոչի* Քարաւազ, *որ յերիս ճղէ զջուրն»*[35]*): Կարելի է մտածել, որ Գետահատի «աւազը» համապատասխանում է Ասլանդուզի կամ Խորադիզի յայտնի գետանցին: Հնարաւոր է, որ ոչ թէ Խուդափերինի Ձ դարի կամրջով, այլ հէնց այստեղով էին անցնում Իրանից Արցախ թափանցող աւարառուները (օր.՝* «Էանց *Բաբան* զգետովն *Երասխ ի Պարսից յայս կողմն եւ յԱմարաս գաւառ բնակեցաւ»)*[36]*:*

Անուան ստուգաբանութիւնը չատ աւելի հեշտ կը լինէր «Գետահատ» տարբերակի դէպքում, որն, ինչպէս նշեցինք, սկզբում վրիպել, իսկ այնուհետեւ խոր փորագրել է Գոչավանքի վիմագրի հեղինակը: Ասլանդուզի գետանցի շրջանում Երասխից սկսւում, «հատւում» են երկու

35 **Ստեփաննոս Օրբէլեան**, գլ. ՀԳ, էջ 376; գլ. Ի, էջ 58:

36 *ՊԱ*, գիրք Գ, գլ. ԺԹ /Ի/, էջ 327:

հինաւուրց եւ բաւականին մեծ ջրանցքներ, որոնցից առաւել յայտնի ձախափնեայ Գեաուրարխը ձգւում է դէպի հիւսիս մինչեւ Խոնաշէն գետակի ստորին հոսանքի շրջանը:

Գետահատ տարբերակն ընդունելու եւ այն Այանդուզի գետանցի հետ համադրելու դէպքում չափազանց հրապուրիչ է թւում նաեւ այդ անուան համադրումը Հաղրութ տեղանուան հետ, որը ԺԵ-ԺԹ դարերում աւելի յայտնի էր զուգահեռ Հատրութ (անգամ՝ Հատրուղ) գրութեամբ[37]: Նկատենք, որ Հաղրութի գետակն Արաքսի մէջ է թափւում հէնց Խորադիզի

37 Օր.՝ 1428 թ. մի Աւետարանի յիշատակարանում ունենք. «ձեռամբ յոգնամեղ եւ փցուն գրչի Եղիայի, ...աշխարհաւ յԱղվանից, եւ տեղեաւ Դիզակեցի եւ գեղաւ Հատրուղեցի...» (**Մ. վրդ. Մաքսուդեան**, *Ագուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը*, - «Արարատ», 1911, էջ 567: *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Մասն I, Եր., 1955, էջ 382-ում վրիպակով է՝ «Հաղրուղեցի»): Հայոց ՌԼԳ թ. (=1584) մի ձեռագիր ընդօրինակուած է «‹յ›երկիրս Դիզակայ եւ գ‹ե›ղս Հատրութի, ‹յ›անապատս որ կոչի Շախկախ» (*Ցուցակ ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին*, Կազմեց **Մ. վրդ. Քեշիշեան**, Վիեննա, 1964, էջ 38. Շահէն Մկրտչեանի մօտ վրիպմամբ «Հաղրութի» է, տե՛ս **Շ. Մկրտչեան**, *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները*, Եր., 1985, էջ 134): Տե՛ս նաեւ **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, Քննական բնագիր, ռուսերէն թարգմանութիւն, առաջաբան եւ ծանօթագրութիւններ **Ն. Կ. Ղորղանեանի**, Եր., 1973, գլ. 47, էջ 149 («...զմեծ բարեկենդանն ի միասին արարաք ի Տող եւ ի Հատրութ եւ զաղուհացից սկիզբն երկուշաբթի չուեցի ի Հատրութ գեղէ...»): **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 68 («Հատրութ աւան»):

գետանցի մօտ: Մասնագէտները հակուած են Հաղրութ տեղանունը ստուգաբանել «իրանական hadd-e rud («գետապատուար», «գետեզր», «գետափ՞», «գետարգել՞») արտայայտութիւնից»[38], որի առաջին բաղադրիչը ծագում է արաբերէն «հադ» բառից («սահման»), իսկ «ռոդ», «ռուդ» բառը իրանական լեզուներում նշանակում է «գետ»: Սակայն այժմ ակնառու է նաեւ, որ հայերէն «գետ-ա-հատ» բառակապակցութիւնը իրանական լեզուի՝ ինչ-որ մի պատճառով տառացի ընկալմամբ կարող էր դառնալ «հատ-ե-ռուդ», որից էլ ունենք «Հաղրութ»: Ըստ այսմ հաւանական է, որ գետանցի «Գետահատ» անուան իրանական յորջորջումից է առաջացել մօտակայ գետանունը, որն էլ այնուհետեւ անցել է իր վերնահովտում գտնուող բնակավայրին:

5. ՎԱԿՈՒՆԻՍ Ի ՎԱՂԱԶՆՈ‹Յ› ԳԵՏՈՎՆ. Վակունիս բնակավայրի եւ գաւառի (նաեւ՝ Վակունիք, Վերին Վայկունիք) տեղադրութիւնը ճշտելու համար օգնում է հէնց Վաղազնոյ գետի տեղորոշումը: Գետանունը չի պահպանուել, սակայն այսօր էլ շէն Վաղազին գիւղի գոյութիւնը Հակարիի Շալուայ եւ Նաղգալի (Մաղգանց) վտակների գետաբերանի մօտակայքում,

38 Յովհ. Կարագեոզեանը նշում է (*Սեպագիր տեղանուններ*, էջ 170), որ *Հաղրութ* անունը կարող է ծագած լինել նաեւ բիաինական դիցարանի *Աղարութա* աստծու անունից, որը, սակայն, թւում է պակաս հաւանական: Տե՛ս նաեւ **Շ. Մկրտչեան**, նշ. աշխ., էջ 134 («միջագետ, կամ բառացի երկու գետերի մէջ»):

Բաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքից շուրջ 30 կմ հիւսիս, ցոյց է տալիս, որ այդ հովտում էլ եղել են Վաղազին գետը եւ Վակունիս բնակավայրը: Այդպիսի տեղադրութեանը յարմարւում է նաեւ Դիզակի իշխանութեան գաւառների վերը բերուած թուարկման յաջորդականութիւնը՝ «Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական...»:

Յաւօք, պատմագրութեան մէջ բաւականին տարածուած է գտել մի թիւրընկալում, համաձայն որի Վայկունիք գաւառը տարւում է Տրտու (Թարթառ) գետի վերնահովիտ, ուր ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի վերջին գրուագներից մէկի՝ գտնուել է Վայունիք գիւղը («Առներսեհ շինէ զբերդն Հանդու եւ զապարանս իւր եղեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր եւ բաղանիք արքունական են»)[39]: Սակայն մեր արձանագրութիւնը եւ Դիզակի գաւառների քարտէզագրումը ստիպում են բացառել կապը Վայունիք, ապա եւ Ջերմաջուր անունը կրած բնակավայրի (ԺԹ-ի դարերում յորջորջուած՝ Իստիսու) եւ Վայկունիք գաւառի միջեւ[40]:

Ինչ վերաբերում է Վաղազնոյ գետի մօտ գտնուած Վակունիս բնակավայրին, ապա մեզ ամենից հաւանական է թւում նրա համադրումը ԺԹ դարից Բչանիս անունով յայտնի գիւղի հետ, որը գտնւում է Շալուայի եւ Մաղդանցի գետակիցի վերեւում բարձրացող սարահարթի

39 ՊԱ, գիրք Գ, գլ. ԻԲ /ԻԳ/, էջ 340:

40 [Այս խնդրի մասին աւելի մանրամասն տե՛ս սոյն ժողովածոյի նախավերջին հատուածում - *հեղ., 2009*]:

վրայ: Հնարաւոր է թւում ենթադրել, որ ուշ միջնադարում Վակունիս տեղանունը վերջին վանկի վրայ շեշտի ուժեղացման հետեւանքով ձեւափոխուել է առաջին կարճ ձայնաւորներով Վըկընիս-ի, որից էլ Վ-Բ եւ Կ-Չ հնչիւնափոխութիւններով[41] առաջացել է Բչանիս-ը[42]: Ըստ այսմ Վաղազնոյ գետն էլ, հաւանաբար, պէտք է համադրել Մաղդանց (յորջորջուած՝ Նաղդալի) կամ Շալուայ գետերից մէկի հետ:

6. ՔԱՐԱՏՆԻՍՆ ԽՈՋԱԲԵՐԴՈՎ. ԺԹ դարում՝ Խոզաբերդ (տարբ. Խուզաբիրթ, Խազաբիրթ) անունով յայտնի էր Խծաբերդ գիւղը: Աւանդութիւնը նրա անունը ստուգաբանում է նաեւ որպէս Օձաբերդ (Օխծաբերդ միջանկեալ տարբերակով), իսկ Շահէն Մկրտչեանը համարում է, որ Խծաբերդ-ը «Եկեղեցաբերդ» անուան

41 Այս հնչիւնափոխութիւնների մասին տե՛ս **Յ. Կարագեոզեան**, նշ. աշխ., էջ 131; **Г. Б. Джаукян**, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ер., 1967, էջ 170: Ուշ միջնադարում *Վ-Բ* անցման օրինակ է *Վարանդայ* գաւառանուան *Բրետիս* տարբերակը (**Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, Եր., 1990, գլ. Գ, էջ 63), իսկ *Կ-Չ* անցման օրինակ՝ *Կոմէն-Չորման* անցումը՝ ընկալուած դեռ Ղեւոնդ Ալիշանի կողմից (*Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ-Ս.Ղազար, 1893, քարտէզ):

42 Նշենք, որ Սամուէլ Կարապետեանը *Բչանիս*-ը համադրում է *Բճանց* տեղանուան հետ, որը վկայուած է Դադիվանքի մի վիմագրում (**Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Եր., 1999, էջ 169): Սակայն մեզ համար ակնյայտ է, որ Հակարիի վերնահովիտը չէր կարող գտնուել Դադիվանքի իրաւազօրութեան տակ:

ժողովրդական արտասանութիւնն է[43]: Առաքել վարդապետ Կոստանդեանցը, որը ԺԹ դ. երկրորդ կէսին եղել է Գտչավանքի վանահայրը, «Պատմագրութիւն Ազգային» վերտառութեամբ մի ձեռագիր երկհատոր աշխատութեան մէջ ի թիւս այլ աւանդութիւնների վերապատմում է «Օձաբերդ» անուան առաջացման մանրամասն զրոյցը[44]: Սակայն ԺԳ դարի վիմագիր յիշատակութիւնը ցոյց է տալիս, որ նախնական անուանաձեւը պէտք է դիտել հէնց Խոզաբերդը՝ «խոզ» բաղադրիչով, որից առաջացած բազմաթիւ տեղանուններ ունենք Հայկական լեռնաշխարհի բոլոր անկիւններում[45]:

Խծաբերդից 3 կմ հիւսիս-արեւմուտք, Բարինգ-Արփագեադուկից նոյնքան դէպի հիւսիս-արեւելք ԺԹ դ. յայտնի էր մի տեղանուն՝ Դաշաթլի կամ Դաշալթի[46], որն, ամենայն հաւանականութեամբ, Գտչավանքի վիմագրի յիշատակած Քարատնիսն է: Վերջինիս վերածումը Դաշաթլի, ապա Դաշալթի ձեւի (թարգմանաբար՝ «քարի տակ») նաեւ ցոյց է տալիս Խծաբերդի ձորակից Շուշիի մերձակայքը տեղափոխուած բնակչութեան կողմից հիմնադրուած գիւղի Քարինտակ (նաեւ՝ Դաշալթի) անուան ծագման իրական պատճառը:

7. ՋԱՌԻՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ. Ջառիսլու (կամ Ջառիստու) գիւղը Կարկառի վերին հովտում, Շուշիից 8 կմ հարաւ-արեւմուտք, պահպանուել է մինչեւ ԺԹ-ի դարերը: ԺԹ դ. առաջին կէսի հայկական թեմական փաստաթղթերում յիշատակւում է նաեւ Ջառիստ գաւառակը: 1841 թ. Ղարաբաղի կոնսիստորիայի կազմած «Ցուցակ թուոյ Հայոց ժողովրդականաց կրկին սեռի իւրաքանչիւր եկեղեցւոյ քաղաքի եւ գեղջ Ղարապաղու վիճակի» վերնագրով ցանկում «Ղարապաղ գաւառի» Դիզաղ, Ջրաբերդ, Բարտապան, Իկիրմիտեօրտ (=Գիւլիստան), Խաչէն եւ Վարանդայ գաւառակների կողքին յիշւում է Ջառիստ գաւառակն իր չորս հայկական գիւղերով՝ Ղարաղիշլաղ (=Բերդաձոր), Հարար, Արկաթալի եւ Տաշալթի (=Քարինտակ)[47]: Նշուած գիւղերից երկուսը գտնւում են Կարկառի վերնահովտում, միւս երկուսը՝ Լիսագորի լեռնանցքից արեւմուտք, Հակարիի հովտում, որը եւ

---

43 **Ծ. Մկրտչեան**, նշ. աշխ., էջ 126:

44 Ձեռագիրը պահւում է Մաշտոցի անուան Մատենադարանում, թիւ 7822, 7823: Օձաբերդի աշտարակի աւանդութիւնը՝ թ. 149բ-154բ: [Առաքել վարդապետի գործերի մասին այժմ մանրամասն տե՛ս **Ա. Մաղալեան**, *Առաքել Կոստանեանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» աշխատութիւնը*, - «Բանբեր Մատենադարանի», 18, Եր., 2008, էջ 283-304 - *հեղ., 2009*]:

45 Տե՛ս **Հ. Հիւբշման**, *Հին Հայոց տեղւոյ անունները*, Վիեննա, 1907, էջ 353-354; **Հ. Ս. Էփրիկեան**, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հտ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1907, էջ 186-188; *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 2, Եր., 1988, էջ 757-762:

46 Տե՛ս **Е. Кондратенко**, *Карта Елисаветпольской губернии с показанием сельских обществъ и распределения населения по вероисповеданию*, Тифлисъ, 1888 եւ *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1910 քարտէզներում, ինչպէս նաեւ *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 2, էջ 25: Հմմտ. ստորեւ, ծնթ. 66:

47 ՀԴԿՊԱ, ֆ. 56, գործ 305, թ. 45բ:

ճշտում է Ջառխստ գաւառակի տարածքային ընդգրկումը Արցախեան լեռնաշղթայի երկու կողմում: 1862 թ. Ղարաբաղի թեմի առաջնորդին ուղղած մի նամակում Խաչէն գաւառակի քահանաները յիշում են նաեւ Յակովբ քահանայի ծառայութիւնը Ջառիստ գաւառակի Ալիղուլի գիւղում[48], որն այսօրուայ վերաշէնացուած Ղազարապատն է Շալուայ գետի ստորին աւազանում[49]: 1842 թ. Սարգիս Ջալալեանցը Ջառխստը յիշատակում է Հակարիի վերնահովտում գտնուած Մաղաւուզ գաւառի հարեւանութեամբ. «Մուխանք է Մըղօվուզն Ջառխստին,

48 ՀԴԿՊԱ, ֆոնդ 57, գործ 139, թ. 17բ:

49 ԺԹ դարում յայտնի Ալիղուլի (Ալղուլիշէն) գիւղի հայութիւնը Ի դ. սկզբին (1905 եւ 1918 թթ.) կոտորածի ենթարկուեց եւ բռնագաղթեցուեց՝ հիմնականում Վարարակն-Խանքենդի (1923-ից՝ Ստեփանակերտ): Մանրամասն տե՛ս **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 173-174: [Այժմ տե՛ս նաեւ *20-րդ դարասկզբին ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հայկական գիւղերի բնակիչների բռնի տեղահանման 100-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերը*, Բերձոր, 2005: Հետաքրքրական է էջ 90-ում (**Գ. Մ. Բաղալեան**, *Աղահեճք-Քաշաթաղի տեղանունների պատմութիւնից (պատմա-աշխարհագրական ճշգրտումներ)*, ծնթ. 14). «Ալիղուլիշէնի հայկական անուանումը եղել է *Սարէնշէն* (*Սարիշէն*): Այս ուշագրաւ տեղեկութիւնն անձամբ մեզ հաղորդեց 1908 թ. ծնուած, բնիկ Ալիղուլիշէնցի *Գուրգէն Յակոբեանը* 2005 թ. Հոկտեմբերի 16-ին Բերձորում... (Գ. Բ.)»: Միաժամանակ նշենք, որ այս զեկուցման մէջ տեղ են գտել Ստեփաննոս Օրբէլեանի գիւղացանկում եւ Տաթեւի 1730 թ. պտղացուցակում յիշուած աղահեջքեան գիւղերի որոշ անընդունելի, պատահական նմանութեան վրայ հիմնուած համադրութիւններ (*Հայնելակ-Հայաքս*, *Որբորոյ քար*, նաեւ՝ *Աղահեճ*, *Արախիշ*) - *հեղ., 2009*]:

ուստի եկանէ եւ գետն Ագար»[50]: Նշուած տեղեկութիւնները Ս. Կարապետեանը բաւարար է համարում, որպէսզի Ջառխստ գաւառակը տեղադրի ոչ այնքան Կարկառի հովտի Ջառխլու գիւղի շրջակայքում, որքան Հակարիի հովտում[51]: Եթէ այդ տեսակէտը հաստատուի, ապա կարելի կը լինի քննարկել Ջառիստ-ի հետ այսօրուայ Ջերտի գիւղանուան կապի հնարաւորութիւնը (Բերձոր քաղաքից 6 կմ հիւսիս):

8. ՀԱԿԱՐԻ ԻԻՐ ԿԵՐՈՎՆ. Հակարի աւանն առաջին անգամ յիշատակում է Մովսէս Դասխուրանցին 829 թ. դէպքերի նկարագրութեան մէջ. «... զՍտեփանոս՝ զկոչեցեալն Աբլ-Ասադ, որ էառն զԲաբան եւ եհար զԲաղականեցիսն, որ ի սուր նիզակաց կոտորեցին զԲերձոր գաւառի զաւանն զՈւռեաց, զԿառնակաչ, զՀակարի եւ զՏափատ»[52]: Բոլոր ուսումնասիրողները վաղմիջնադարեան Հակարի աւան-ը արդարացիօրէն համադրել են ԺԹ դարի Աքերլու գիւղի հետ (Ի դարում այն լքուել է), որը գտնւում է Հարար

50 **Ս. վրդ. Ջալալեանց**, նշ. աշխ., էջ 351: Ուշմիջնադարեան Մաղաւուզ գաւառի մասին տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, - «Հանդէս ամսօրեայ», ՃԺԲ տարի, Վիեննա, 1998, էջ 290, 303, 308 [այս ժողովածոյում՝ էջ 46-47, 71-72 - *հեղ., 2009*]:

51 **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 167: Հետեւելով Մակար Բարխուդարեանցի մի տեղեկութեանը՝ հեղինակը *Ջառիստ*-ը համադրում է *Հաջի-Սամլու* գիւղի հետ, որն այսօրուայ վերաշէնացուած *Վազգէնաշէնն* է:

52 *ՊԱ*, գիրք Գ, գլ. ԺԹ /Ի/, էջ 327 (բերուած է սխալներից զերծ Բ խմբի ձեռագրերի ընթերցումը):

վերաշէնացուած գիւղի մօտերքից հոսող վտակի ստորին հոսանքում Հակարի գետի մէջ նրա թափուելու տեղից 3 կմ հիւսիս-արեւելք[53]: ԺԶ-ԺԷ դդ. մի քանի ձեռագրերի յիշատակարաններում արձանագրուած են «Հակարու», «Հագարան» կամ «Հագարեան» երկիրը (գաւառը) եւ նրա Հարար, Փարաջանց եւ Գետուզ գրչօջախները[54]: Առաքել վարդապետն իր «Ագարի» գաւառի մէջ է մտցնում նաեւ Եկեղեցաձոր եւ Օձաբերդ (Ոծաբերդ) գիւղերը[55]:

Այսպիսով, պարզ է, որ ուշ միջնադարում Հակարի գետի ձախափնեակում ձեւաւորուել էին Մաղաւուզ, Ջառիստ եւ Հակարի (հիւսիսից՝ հարաւ) գաւառակները, որոնք, սակայն, իրենց սահմաններով ոչ լրիւ էին համընկնում աշխարհացոյցեան երեք գաւառներին (Վայկունիք, Բերձոր եւ Սիսական-ի Կոտակ):

9. ԴԻԶԱԿՈ‹Յ› ԲԷԼՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ. միեւնոյն Բէլուկան անունով հայկական աղբիւրներում յիշատակւում են Շաքի-Հերէթի Բելուկանին (Կուրի ձախափնեակում) եւ յայտնի Բայլականը Միլի-Մուղանի դաշտավայրի Կուր-

53 Տե՛ս, օր.՝ *ՀՅԸՏ Բառարան*, հտ. 1, Եր., 1986, էջ 134:

54 **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 156-157, 179: Հեղինակը *Հակարու երկրի* հետ է կապում նաեւ ԺԴ դարում յիշատակուած *Հայքարայ ձոր*-ը (էջ 185), որը, սակայն, Կորճայքի մի շրջան է (*ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Եր., 1950, էջ 450, 621): [Հակարի գաւառակի երեք գրչական կենտրոնների մասին մանրամասն տե՛ս այս ժողովածոյի յաջորդ աշխատանքում, էջ 285-286 - *Խմբ., 2009*]:

55 Ձեռ. ՄՄ 7822, թ. 149բ:

Արաքսեան միջագետքի հատուածում: Շեշտելով «Դիզակի Բէլուկան»՝ վիմագրի հեղինակը ճշտում է, որ խօսքը Կուրի աջափնեայ բնակավայրի մասին է: Տեղեկութիւնը կարող է եւ կասկածելի թուալ, քանի որ հայերից բացի հոծ մահմեդական բնակչութիւն եւ իշխանութիւն ունեցող Բայլական քաղաքը Թ-Ժ դդ. յայտնի էր իր թշնամական վերաբերմունքով Սիւնիքի ու Արցախի հայկական իշխանութիւնների հանդէպ[56]: Բայց թւում է, թէ անհրաժեշտ է վստահել վիմագրի հեղինակին գոնէ մի այսպիսի վերապահումով. «Զգրուեալ միճա՛կ հաստատ[եց]ի եւ զհայրենի՛քս» պնդող Վրթանէս եպիսկոպոսը (արտայայտութիւնը Գտչավանքի 1246 թ. միւս վիմագրից է[57]), թերեւս, արձանագրել է Բայլականի շրջակայքում ինչ-որ մի կալուածքի գոյութիւնը՝ թէկուզ եւ անցեալում, թէկուզ եւ իր ժամանակ չօգտագործուող[58]:

Բէլուկանի վերագրումը Դիզակին (Ամարասի եպիսկոպոսութեան տիրոյթներին) վկայում

56 Թ դ. Բայլականում արաբերէն գրուած մի արժէքաւոր սկզբնաղբիւր ցայսօր, ցաւօք, դուրս է մնացել հայագէտների ուշադրութիւնից. **V. Minorsky, C. Cahen**, *Le recueil transcaucasien de Mas'ud b. Namdar (début XI/XII siècle)*, - „Journal Asiatique", T. CCXXXVII, f. 1, Paris, 1949, էջ 93-142; **Масуд ибн Намдар**, *Сборник рассказов, писем и стихов*, Предисловие и указатели **В. М. Бейлиса**, Москва, 1970:

57 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 183 (N 649):

58 Եթէ *Բէլուկանն* այդուհանդերձ *Բայլականը* չէ, ապա այն, գուցէ, կարելի է փնտրել Դիզակի ցածրադիր գօտում (օր.՝ *Բալեա՞ն*):

է, թերեւս, Տրի *աշխարհացոյցեան գաւառի ձգուածութեան մասին դէպի արեւելք, ուր այն, ըստ ամենայնի, պիտի սահմանակցէր Ուտիքի Ռոտ Պացեան (հիւսիսում) եւ Առան-ռոտ (արեւելքում) գաւառներին: Յաւելենք, որ ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի ուղղակի վկայութիւնների՝ Դիզակի իշխանութեան մէջ մտած այդ միակ ուտիքեան գաւառն արեւմուտքում պէտք է յարէր արցախեան Միւս Հաբանդին, հարաւ-արեւմուտքում՝ Սիսական-ի Կոտակին, եւ հիւսիս-արեւմուտքում՝ Մուխանք - Մխանցին ու Ամարաս յետաշխարհացոյցեան գաւառակին*[59]*: Այդպիսով՝ Տրին պիտի քարտէզագրել իր՝ Ուրեանսար-Կուսքասար-Խորադիզ հաւանական արեւմտեան սահմանագծից մինչեւ Գեաւուրարխի ջրանցքն արեւելքում:*

10. ԳՈԴԱՆՈՑՆ ՀԶԱՐԱԳԵՏՈ‹Յ›. *Երկու տեղանուններն էլ այլ աղբիւրներից ծանօթ չեն: Մենք հնարաւոր ենք համարում միայն վարկածի ձեւով ենթադրել նրանց որոշակի տեղայնացումը:* Հզարա- (<Հզար) *գետանուան հետ կարող են կապ ունենալ հետագայ աղճատումների արդիւնքում իրենց այսօրուայ (ԺԹ-Ի դարերի) անուններն ստացած* Խազազ *լեռը եւ* Ղաչար *գիւղը* Քեօնդալան *յորջորջուած գետի հովտում: Վերջինս հայերի կողմից կոչւում էր* Մանաս[60] *(մեր ժամանակի գիտական գրականութեան մէջ նորամոյծ աւանդոյթով՝* Վարանդայ*): Սակայն հնարաւոր է, որ* Քեօնդալան-չայ *գետի բաւականին տարօրինակ իմաստ ունեցող անունը (բառացի թարգմանութեամբ՝* Մուտիկ գետ*) իրականում ծագած լինի ենթադրաբար նրա վերնահովտում գտնուած* Գոդանոց *տեղանուան աղճատումից՝* Գո- *բառահատուածի փափկացմամբ* (Քեօ-)*, նրանից յետոյ* -ն- *անձայնի յաւելմամբ* (Քեօնդ-) *եւ* -անոց *վերջածանցի վերափոխմամբ* -ալու*, ապա* -ալան *թարգմանուած ձեւի: Մանասի վերնահովտում* Աւետարանոց *անունով (նաեւ՝* Չանախչի *յորջորջմամբ) գիւղի առկայութիւնը կարող է լրացուցիչ կռուան դառնալ՝ այդ տարածքում* Գոդ-անոց *տեղանուան գոյութիւնը ենթադրելու համար: Վերջինս, դասական լեզուի շրջանում բառացի նշանակելով «ուրկանոց», «բորոտանոց», իր ծագման շրջանում, ամենայն հաւանականութեամբ, լիովին բարեհունչ իմաստ է ունեցել.* Գոդան *բաղադրիչն, ըստ ամենայնի, կովկասեան ստուգաբանութիւն ունեցող հայերէն «գուլթան», «գոլթան» բառի մի տարբերակն է*[61]*, որից Հայկական լեռնաշխարհում բազմաթիւ*

59 Տե՛ս *ՊԱ*, գիրք Բ, գլ. Զ, էջ 120-121 («...Աշխարհք ծածկեալ ի գաւառին Արցախայ, ի *Միանց* տոհմին, ի վայրս Կաղնետու: ...սուրբ հայրապետն Աբաս... արձակեաց զԴանիէլ մեծահաւատ քահանայն *Տրիոյ* իրագէտ լինել մեծասքանչ խորհրդոյն»): գիրք Գ, գլ. Ի /ԽԱ/, էջ 331 («...արարին վնաս Սիսան, *Տրւոյ* եւ Ամարաս գաւառաց»):

60 Տե՛ս Առաքել Կոստանդեանցի մօտ. «Ի վերայ *Մանաս* գետոյն, որ մահմեդք *Քօնդալան* կոչեն զգետն» (Ձեռ. ՄՄ 7822, թ. 116բ):

61 Հմմտ. **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, Եր., 1971, էջ 587-588:

տեղանուններ ունենք[62]*: Սակայն անբարեհունչ լինելով արդէն Հայոց միջնադարում՝ թիւրքալեզու ցեղերի տիրապետութեան տակ այն, հաւանաբար, վերջնականապէս դատապարտուած է եղել փոխուելու, այս դէպքում* Գող-*անոցից* Աւետարան-*ոցի (Հր. Աճառեանի գիտարկած* Կոթ-*ից* Ադիեաման *անցման օրինակով)*[63]:

11. ՔՐԴԱԳԵՏ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ. *այս տեղանունը եւս այլուր վկայուած չէ: Վարկածի տարբերակով, գուցէ, հնարաւոր է նրա հետ կապել Կարեագինո-Ֆիզուլի քաղաքից 8 կմ հարաւ-արեւելք գտնուող գիւղի* Քիրդլար *անունը: Վերջինիս տակով անցնող գետակն սկսւում է Հադրութից հիւսիս բարձրացող Վնեսայ (նաեւ՝* Արգունաշ *յորջորջմամբ) լեռնազանգուածի հիւսիսային լանջերից, Քիւրաթաղ (նաեւ՝* Հիւքիւրաթաղ, Դուդուկչի*) եւ Իսէլեցիք (նաեւ՝* Էղիլլու*) գիւղերից վեր: Այդ գետակը, որը եւ, գուցէ, մեր վիմագրի* Քրդագետն *է, նշուած քաղաքի շրջագծի մէջ մօտենում է Իշխանագետի ու Մանաս գետի ձորակներին, մի քանի կմ հոսում նրանց զուգահեռ, բայց յետոյ հեռանում է եւ իր առանձին, տարուայ մեծ մասը ցամաք հունով իջնում մինչեւ Արաքս (այդպէս՝ նաեւ միւս երկուսը): Ի դէպ, բնութեան այս հետաքրքիր պատկերը (երեք գետերի մօ-*

62 Տե՛ս Հ. Ս. Էփրիկեան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հտ. Ա, Վենետիկ-Ս.Ղազար, 1902, էջ 515-530; *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 1, էջ 929-931, 972:

63 Տե՛ս Հ. **Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Դ, Եր., 1979, էջ 632:

տենալը մի կէտում, ապա հեռանալը) հիմք է տալիս ենթադրելու եւս մի վարկած. հնարաւոր է, որ հէնց դրանից է ծագել Տրի *գաւառի անունը: Այն ուղղակի «երեք» է նշանակում (գուցէ՝* Տրի-ռոտ-*ից - «Երեք գետ», հմմտ.* Առան-ռոտ, Աղանդ-ռոտ, Ճուաշ-ռոտ, Ռոտ Պացեան *եւ այլն) հնդեւրոպական ընտանիքի մի քանի լեզուներում՝ թոխարերէն, հին հնդկերէն, խեթերէն, յունարէն, ալբաներէն, հին սլաւոներէն, բալթեան լեզուներում եւ այլն*[64]:

Եթէ այս տեղագրութիւնն ընդունելի համարուէր, մենք կը գերադասէինք Քրդա-գետ *բնակավայրի եւ նրա «կեր»-ի տակ ենթադրել Հադրութի շրջանի վերը նշուած գիւղերից որեւէ մէկը (հմմտ., օր.՝* Քիւր-ա-*թաղ)՝ իր ներքեւի բերրատա արտերով («կեր», «կերուածք» բառերն իրաւացիօրէն ընկալւում են իբրեւ «կալուածք», «աւատ», «իշխանութեան սահման», «գաւառ», «թեմ»*[65]*), քան կիսաանապատային*

64 Հ. **Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Եր., 1973, էջ 50; **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, *Индоевропейские языки и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т. I-II, Тбилиси, 1984, էջ 217, 845-847: Գետանունների նմանատիպ կառուցուածքի մասին տե՛ս **Յ. Կարագեոզեան**, Նշ. աշխ., էջ 30, 109:

65 Հ. **Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, էջ 576-577; **Ս. Աւագեան**, *Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն*, Եր., 1976, էջ 265-268): Թւում է, թէ մեր վիմագիրը թոյլ է տալիս որոշ նրբերանգ ընկալել այդ իմաստի մէջ: Ուշագրաւ է, օր., որ հեղինակն ասում է «իւր *կերով*» Ջանիստ եւ Հակարի գիւղերի համար, որոնց կողքին հացահատիկի անջրդի,

դաշտավայրում գտնուող Քիւրդլարը, դէպի որը հասնող հին ջրանցքներ մեզ յայտնի չեն: Այդ դաշտավայրն իր կլիմայական պայմաններով կարող էր միայն իբրեւ ձմեռային արօտավայր, «ձմերոց» ծառայել Կուր-Արաքսեան ողջ հարթավայրի պէս, գոնէ մինչեւ Սասանեան եւ արաբ տիրակալների կողմից քաղաքային բնակավայրերի կառուցումը՝ Պերոզ-Կաւատ (Պարտաւ), Բայլական, Շամքոր, Գանձակ, Բեղապատ եւն:

12. ԵԿԵՂՅԱՁՈՐ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ. այս գիւղի մասին մեզ յայտնի է միայն Առաքել վրդ. Կոստանդեանցի հաղորդած աւանդութիւնը՝ վերը նշուած ձեռագիր աշխատութեան «Յաղագս Եկեղեցաձոր անուանեալ բնակութեան եւ Օձաբերդ աշտարակին» վերնագրով գլխում: Ըստ այդ պատմութեան՝ Եկեղեցաձորը գտնուել է Օձաբերդի, այսինքն՝ Խծաբերդի մօտակայքում («մերձ եւ հուպ միակցեալ ի ծայրս ձորակի միոյ, եւ ի հարաւային կողմն առ ոտս Դեգափայտ լերինն ի նահանգին Դիզակու»), ունեցել է նշանաւոր եկեղեցի, որից էլ ստացել

բայց բերքառատ արտեր կան (իհարկէ, Զառիստի դէպքում մեր ասածը ճիշտ է, եթէ դա Զերտին է, ոչ թէ Զառիսյուն): Եկեղցաձորի դէպքում, որը կտրտուած, լեռնային երկրապատկեր (լանդշաֆտ) ունի, հեղինակը գրում է՝ «իր սահմանով»: «Իւր կերով» չի գրուած նաեւ Քարատնիսի եւ Գողանոցի դէպքում, որոնցից առաջինի տեղը հաստատապէս յայտնի է, եւ այն նոյնպէս լեռնային է: Ուրեմն կարելի է ենթադրել, որ «կալուածք» իմաստն ունեցող «կեր» եզրոյթը գոնէ ԺԳ դարում նշանակել է «հացահատիկի արտ - կալուածք»: Ըստ այդմ կարելի է նոյնատիպ «արտ-կեր» ենթադրել նաեւ Բէյուկանի եւ Քրդագետի մօտ:

է իր անունը («չգտանի յԱղուանիս հաւասար այնր մեծութեան եկեղեցի, բայց գլուխն բոլորովին անկեալ»), կործանուել է մահմեդականների անսպասելի յարձակման հետեւանքով, որից յետոյ բնակչութիւնը գաղթել է Գտչավանքի, ապա Շուշիի մերձակայքը, ուր հիմնել է Քարէնտակ գիւղը[66]: Շահէն Մկրտչեանն արձանագրում է «Եղցուն ծոր» անունով աւերակ եկեղեցի՝ Արփագեաղուկից «դէպի արեւելք, Սղնախաշէն գնացող ճանապարհի մօտ: Եկեղեցու աւերակների մէջ անկանոն թափուած են արձանագրութիւններ պարունակող քարաբեկորներ»[67]:

13. :Ա: ԼԾՈ‹Յ› ՀՈՂ Ի ՏԱՀԻՍ. Տահիս գիւղը ներկայումս գոյութիւն չունի: Սակայն Տայիս կամ Տահէս է կոչւում Տող գիւղից 2 կմ հիւսիս գտնուող գիւղատեղի-հանդամասը Գտիչ սարի հիւսիսային ստորոտում, Իշխանագետի հովտում[68]: Ըստ Շահէն Մկրտչեանի նկարագրութեան՝ «Գիւղատեղում մնում են եկեղեցու աւերակները եւ շուրջը մի քանի տապանաքարեր»:

14. :Ա: ԼԾՈ‹Յ ՀՈՂ› Ի ՏՈՂ. նշանաւոր այս գիւղաքաղաքի, աւանի յիշատակութիւնը ամե-

66 Ձեռ. ՄՄ 7822, թ. 146բ-149ա:

67 Շ. Մկրտչեան, նշ. աշխ., էջ 125: Հեղինակն արձանագրում է նաեւ. «Դայաբուց եղցէ, իսկ տեղանքը՝ Եղցուն ձոր: Գիւղատեղի, աւերակ մատուռով, գտնւում է Խծաբերդից դէպի հիւսիս-արեւմուտք, մօտ 3-4 կմ-ի վրայ» (էջ 126): Մենք կարծում ենք, որ դա Քարատնիս-Դաշաթլի գիւղի տեղն է:

68 Շ. Մկրտչեան, նշ. աշխ., էջ 85, 89:

նեւին էլ փոքրարժէք չէ, քանի որ նրա մասին միւս տեղեկութիւնները վերաբերում են ամենավաղը ԺԷ դարին (յաճախ՝ Դող կամ Դողու ձեւով): Միւս կողմից՝ Հարեւան գիւղերի շարքում ոչնչով չառանձնացուելը ցոյց է տալիս, որ Տողի ծաղկման շրջանն իրօք սկսւում է ուշ միջնադարում:

15. :Ա: ‹ԼԾՈՅ ՀՈՂ› Ի ԳԱՔՍ. այս անունը երբեմն ենթադրաբար վերագրուել է Հակակու (նաեւ՝ Հկակու) գիւղին, որը գտնւում է Տողից 3 կմ հարաւ-արեւմուտք (Հակակուի մասին եւս յաջորդ տեղեկութիւնները սկսւում են ԺԷ դարից[69]): Սակայն մեզ աւելի հաւանական է թւում տողեցի պատմաբան Սերգեյ Ամիրջանեանի տեսակէտը, ըստ որի Գաք անունը վերաբերում է Տումի գիւղից 2 կմ հիւսիս, Իշխանագետի ձորակի լանջին գտնուած Իգակ կո-

69 Օգտագործելով տեղը եւ Սամուէլ Կարապետեանի սիրալիր համաձայնութիւնը՝ հրատարակում ենք նրա կողմից ՀՀ Պատմութեան կենտրոնական պետական արխիւում յայտնաբերուած ԺԷ դ. մի ուշագրաւ փաստաթուղթ, ուր առաջին անգամ յիշատակւում է *Հկակուն* (պահպանում ենք կէտադրութիւնը). «Ես մէլ-մէլիք Եկանըս իմ Արչայձոր վերկալի դվէ խծեցի խօջայ Ղասումին, զամ տր Մօսէսին, ապլուն իմ կամօվըս դվի Լ. թմանու, էս մին թարափ քարէ կապըն, մին թարափ խաչըն, մին թարափըն ախպուրըն, մին թարափ *Հկագվայ* կեղըն, օրիշ մարթու պան չլնի, թվն ՌՃԼԷ-ն /=1688 թ./ Յունվրի ամէս էր»: Ձախ լուսանցքում իրար տակ գրուած են երեք վկաների անունները՝ «Իսայ վկայ, Առին վկայ, Եղայզար վկայ», եւ երեք կիսաջնջուած կնիքները: Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 57, ցուց. 1, գործ 3, թ. 2ա:

չուած լքուած գիւղատեղիին (մի քանի տարի առաջ Իգակի աւերակներում եւ շրջակայ հանդամասում էլտիկուզեան դրամների նմուշներ են յայտնաբերուել)[70]: Ս. Ամիրջանեանը նաեւ համարում է, որ մեր վիմագրում նշուած է հէնց Ի-ԳԱՔ ձեւը՝ այսպիսով ենթադրելով կրկնակի Ի-ից խուսափելու-սղելու կամ երկրորդ Ի-ն վրիպելու երեւոյթ («ի ‹Ի›գաքս»): Շահէն Մկրտչեանը տալիս է Իգակոց (Մակար Բարխուդարեանցի մօտ՝ Իգակուց) հին գիւղատեղիի նկարագրութիւնը եւ Իքեակ վտակի անունը[71]:

16. :Ա: ‹ԼԾՈՅ ՀՈՂ› Ի ՄՈԽԵՆԻՍՆ. Մոխրենէս չէն գիւղը գտնւում է Տողից 4 կմ արեւմուտք: ԺԹ դարում կոչուել է նաեւ Մուխրանէս կամ Սուսանըղ: Եթէ ընդունենք, որ Մոխրենէս ձեւը ուշ շրջանի վերաիմաստաւորման արգիւնք է («մոխիր» յայտնի բառից), ապա նախ-

70 **Ս. Ամիրջանեան**, *Սելջուկեան դրամները Դիզակում*, - «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, 1998, Յուլիս 28: *Տումի*-ի մասին յայտնի առաջին վկայութիւնը Խաչիկ Դադեանի արտագրած ԺԷ դ. մի Աւետարանի յիշատակարանից է, որը բացակայում է Վազգէն Յակոբեանի կազմած ժողովածոյում. «Թվին Հայոց ՌԾԳ /=1604 թ./, եւ՝ Մէլիք Սուջում Դիզակայ, որդի մեծին Մերդանա իշխանին *Տումոց*, եւտու գրել զայս Աւետարանս ի յերկիրն Արրան Տիզակա, ի գիւղս, որ կոչի Խանձաձոր, ձեռամբ Մարտիրոս քահանայի, եղբօր կթղկին Աղուանից տն Պետրոսի սրբասիրի...» (ՀՊԿՊԱ, ֆ. 319, ցուց. 1, գործ 55, թ. 2բ; **Ս. Ամիրջանեան**, *Տումի գիւղի պատմական յուշարձանները*, - «Գիտութիւն եւ տեխնիկա», 1991, թիւ 2, էջ 30):

71 **Շ. Մկրտչեան**, նշ. աշխ., էջ 99-101: Հմմտ. **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 87:

նական Մոխենիս (<Մոխենիք[72]) *տեղանուան հիմքը կարող ենք զուգադրել* Մուխանք-Մոխանք-Մխանց *գաւառանուան հետ: Իհարկէ, վերապահում անենք, որ նրանց տարածքային որեւէ համընկնում չի կարող լինել.* Մուխանք գաւառը *գտնուել է Սեւջուր (Ձարտարի) գետակի վերնահովտում (մինչեւ Ուրեանսար-Կարմիր ժայռ բարձունքներով՝ Հարաւ-արեւելեան Հաբեւան* Տրի *գաւառի հետ սահմանը), Խոնաշէն գետակի հովտում (մինչեւ նրա՝ դաշտավայր մտնելը) եւ Կարկառի միջնահովտի աջափնեակում[73], որտեղ գաւառի արեւելեան սահմանն անցնում էր, հաւանաբար, Ջէյլի բլրաշարից դէպի Կարկառի հունը ձգուող գծով, որից այն կողմ ընկնում էր Ուտիքի* Ռոտ Պացեան *(նաեւ՝* Ռոտ Պարսեան, Ռոտ Պայեան*) գաւառը: Իսկ Մուխանքից արեւմուտք, Կարկառի վերնահովտի աջափնեայ հատուածում գտնւում էր* Պազկանք *(նաեւ՝* Պարսականք, Պարզկանք, Պածկանք*) գաւառը, որն ընդգրկում էր նաեւ Բովուրխանի լեռնազանգուածից հարաւ, Մանաս (Քեօնդալան) գետի եւ նրա Ամարաս (Քաչաւ) վտակի վերնահովիտներում ընկած Աւետարանոցի եւ Հերհերի գիւղախմբերը*[74]:

72 Վերջածանցի ձեւի մասին տե՛ս **П. М. Мурадян**, *Винительные формы в именительном по данным топонимики Армении*, - «Լրաբեր հաս. գիտութիւնների», 1971, թիւ 4, էջ 21-38 (*Մոխրենիքը*՝ էջ 27):

73 **Ս. Երեմեան**, նշ. աշխ., էջ 71:

74 «Վաչագանի վէպ»-ում Գրիգորիսի նշխարները գտնելու նպատակով արքայի շքախմբի՝ *Դիւտական* նստավայրից (ներկայիս Թալիշի մօտ) Արցախի այն ժամա-

17. ԽԱԶԻՆԱՄԱՐԳ՝ ԽՈՏՈ‹Յ› ՏԵՂ. Խազինամարգ *տեղանունն այլուր չի յիշատակւում: Տաթեւի վանքի 1730 թ. պաղպացուցակի տեղեկութիւններից երեւում է, որ «խոտատեղ» եզրոյթն առաւելապէս գետափերի մարգագետնային խոտհարք է նշանակում (տե՛ս, օր.՝ «Իսկ խոտատեղիքն են սոքա. Ղազալկայն՝ Քարահունջի* գետէն *մինչ ի ծակն...: Կեռատմբալաւքէն մինչ ի* գետն»)[75]: *Ըստ այսմ* Խազինամարգ-*ը կա-*

նակուայ «հիւսիս-հարաւ մայրուղով» կատարած ուղեւորութեան նկարագրութեան մէջ յիշւում են *Արամանք* գիւղը (հաւանաբար՝ ներկայիս Աշանը) եւ *Քարուէնը*, որը հաւանաբար ներկայիս Քարահունջն է (հմմտ. **Յ. Կարագեոզեան**, նշ. աշխ., էջ 155; **Ս. Սարգսեան**, նշ. աշխ., էջ 71): Դրանք անցնելուց յետոյ Ամարաս ժամանած Վաչագան թագաւորին, ի թիւս այլ բաների, պատմում են նաեւ *Պազկանք* գաւառը (Ա խմբի ձեռագրերում՝ *Պարսականք*) դարձի բերած Յոբ ճգնաւորի կողմից յաճախակի Ամարաս այցելելու եւ Գրիգորիսի գերեզմանը գտնելու վերաբերեալ մարգարէութիւն անելու մասին (*ՊԱ*, գիրք Ա, գլ. ԻԲ, էջ 75): *Պազկանք* գաւառանունը *Պազուա* ձեւով վկայուած է դեռեւս Մովինարի սեպագրում (**Յ. Կարագեոզեան**, նշ. աշխ., էջ 202): [1999 թ. հրատարակուած աշխատանքում շտապողաբար ենթադրել էինք, թէ *Մուխանքը* հիւսիսում չի հասել Կարկառի հոսանքին, որի ափերով հաւանաբար տարածուած է եղել *Պազկանք* գաւառի արեւելեան մասը (էջ 283), բայց հետագայում ուղղել ենք դա (տե՛ս **Ա. Յակոբեան**, *Միսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, - «Հանդէս ամսօրեայ», ՃԻԲ տարի, Վիեննա-Եր., 2008, էջ 136-137, ծնթ., 125-126): Ուղղուած տարբերակով է շարադրուած նաեւ վերեւի պարբերութեան, այս եւ 76-րդ տողատակի բնագիրը - *հեղ., 2009*]:

75 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի**, Հրատ. պատրաստեց... **Աշ. Աբրահամեանը**, Եր., 1942

րելի է փնտրել մօտաւորապէս Հաբանդից Տրի հոսող գետերից որեւէ մէկի միջնահովտում:

Այսպիսով, վիմագրի տեղանունների քարտէզագրումը ծածկում է հարաւային Արցախի գաւառների տարածքի մեծ մասը, այն է՝ Վայկունիք գաւառը (Վակունիս եւ Վաղազնոյ գետ), Բերձորը (Հակարի, Քարատնիս, Խոզաբերդ, Եկեղցաձոր, որոշ հաւանականութեամբ՝ Ջառիստ, եթէ այն Ջերտի գիւղն է[76]), Սիսական-ի Կոտակը («ինչու ի Երասխ»), Պագկանքը (Գողանոց՝ որոշ թէականութեամբ), Հաբանդը (Տանիս, Տող, Գաք, Մոխենիս, որոշ հաւանականութեամբ՝ Քրդազետ), Ամարասը, որն «Աշխարհացոյց»-ում Միւս Հաբանդի մի մասն էր[77] (Ամարաս, որոշ հաւանա-

/Յաւելուած/, էջ 45:

76 Իսկ եթէ *Ջառիստը* եղել է Կարկառի հովտում (*Ջառիսլու*), ապա դա *Պագկանքի* հիւսիս-արեւմտեան մասն է: Պէտք է վերապահում անել, որ Վարարակն գետից հարաւ ընկած տարածքը հարաւարցախեան որեւէ գաւառի մէջ հաստատապէս մտցնելու համար աղբիւրների տեղեկութիւնները շատ չեն: Գիտենք լոկ այն, որ ուշ միջնադարում դա հարաւարցախեան Վարանդայ մելիքութեան մաս է կազմել եւ շարունակել է մնալ Ամարասի եպիսկոպոսութեան իրաւազօրութեան տակ: Այսպէս, 1428 թ. ընդօրինակուած մի Աւետարանի յիշատակարանում կարդում ենք. «...ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ» (*ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Մասն I, էջ 384): Տեղին նշենք, որ նոյն գրիչը նոյն տարում մի ուրիշ Աւետարան է ընդօրինակել Գտչավանքում. «ձեռամբ մեղապարտ գրչի տէր Մանուէլի, ի վիճակս Ամարասայ, ի վանքս Քթիսոյ» (նոյն տեղում, էջ 385): [Հմմտ. վերեւում, ծնթ., 74 - *հեղ., 2009*]:

77 Թ· դարի *Ամարաս գաւառը* կարող էր ընդգրկել Ե

կանութեամբ՝ Հզարագետ), ինչպէս նաեւ Ուտիք աշխարհի Տրի գաւառը (Դիզակ‹ի› Բէլուկան):

Որոշ տեղանունների վերջնական եւ ճշգրիտ տեղորոշման անհնարին լինելը (Քրդազետ, Գողանոց, Հզարագետ, Խազինամարգ) ստիպում է այժմ բաւարարուել ընդհանուր պատկերով՝ խուսափելով մի շարք հարցադրումներից: Օր.՝ թէ ինչու ընդգրկուած չեն կալուածքներ Մուխանք գաւառում: Իհարկէ, հնարաւոր է, որ այդ գաւառում ուրիշ եպիսկոպոսութեան իրաւազօրութիւն է գործել: Նկատի ունենք Բաի եղցու ԺԳ դ. երկրորդ կէսի թուագրում ունեցող արձանագրութիւններում մի քանի անգամ ոմն Ներսէսի եպիսկոպոսութեան յիշատակումը առանց Ամարասի մասին նշումի (օր.՝ «Թվին ՉԺԹ [=1270 թ.], ի կաթողիկոսութե[ան] Տ[է]ր Ստեփանոսի եւ յէպիսկոպոսութե[ան] Տ[է]ր Ներսէսի, Ա[ստուծո]վ մեր եղբարցս...»)[78]: Բայց այդ ընդ-

դարում Փոքր Հաբանդի մէջ մտնող Մանաս գետի ամբողջ հովիտը (այսինքն՝ ուշ միջնադարում Դիզակի իշխանութեան տարածքից անջատուած Վարանդայ գաւառի հարաւային կէսը) կամ միայն նրա Ամարաս վտակի (*Քոչուս* գետակ, *Աղօղլանչայ*) աւազանը: Այդ գաւառն արեւելքում, հաւանաբար, պէտք է հասնէր մինչեւ Ուրեանսար - Կաւաքասար բլրագիծը՝ նրանով սահմանակցելով Տրիին:

78 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 125-126: *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 155 (N 529). տե՛ս նաեւ էջ 154-155 (N 528), 156 (N 534): Նշելի է, սակայն, որ այս Ներսէսի՝ երկու անգամ էլ 1270-ով թուագրուած *եպիսկոպոսութիւնը* կարող էր նաեւ պարզապէս յաջորդած լինել Ամարասի եպիսկոպոսութեան՝ 1259 թ. առաջ տեղի ունեցած անկմանը (տե՛ս այս յօդուածի վերջում):

Հանուր պատկերն էլ բաւական է երկու կարեւոր եզրակացութեան յանգելու համար: Առաջին՝ Գտչավանք տեղափոխուած Ամարասի եպիսկոպոսութիւնը առնուազն յաւակնում է ողջ հարաւային Արցախի տարածքի նկատմամբ թեմական իրաւազօրութեան: Երկրորդ՝ ԺԳ դ. կէսերին այդ եպիսկոպոսութեան ծաղկումը, յանձին Գտչավանքի հոյակերտ եկեղեցու կառուցման եւ արտակարգ բարձր որակի զարդանախշման, ինչպէս նաեւ՝ մեծածաւալ նուիրատուութիւնների, հասնում է իր բարձրակէտին:

[Աւարտից առաջ, նշուած նուիրատուութիւնների առիթով օգտագործենք տեղը՝ հանգամանալից հրատարակելու Գտչավանքի եկեղեցու ներսի առաւել ծաւալուն նուիրատուական արձանագրութեան ընթերցումը: Դա խոռանից բացուող հիւսիսային աւանդատան դռան արեւելեան պատին փորագրուած այն վիմագիրն է, որը ժամանակին չափազանց անյաջող ձեւով են վերծանել Սարգիս Ջալալեանցը եւ Մակար Բարխուդարեանցը[79], իսկ Սեդրակ Բարխուդարեանը կա՛մ չի նկատել, կա՛մ, գուցէ, վրիպել է հրատարակչական բնագիր ընդգրկելիս[80]: Այսօր միայն կողերից փոքր-ինչ վնասուած (մեր նշումը՝ {...}), թուագրում չունեցող, տասնմէկ կարճ տողերից բաղկացած, կցագիր ԵՒ-երով, խնամքով գրուած պատուոյ նշաններով եւ բառավերջի Յ կիսաձայնի հետե-

79 Տե՛ս Ս. վրդ. Ջալալեանց, նշ. աշխ., հտ. Բ, էջ 358: Մ. եպ. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 156:

80 Հմմտ. *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 185:

տողական բացթողմամբ (նշում չենք անում) աչքի ընկնող արձանագրութեան իրական ընթերցումը հետեւեալն է.



[1] ԵՍ՝ ԳԵՐԳՈՍ, ԵՒ ՈՐԴԻ ԻՄ ՊԱ{...}

[2] -ԱՔ, ՄԻԱԲԱՆԵՑԱՔ Ս̅Բ̅ ՈՒԽՏԻՍ, ԵՒ

[3] Տ̅Ր̅ ՎՐԹԱՆԷՍ ԻՒՐ ԿԱՄԱՒ Ջ̄-ԱՄԱՏ

[4] -ՈՒՌՆՍ ԻՆՁ ԵՐԵՏ, ԵՒ ԵՍ ԻՄ ՀԱԼԱԼ

[5] ԱՐԴԻՒՆ ԸՆԾԱ ԲԵՐԵՑԻ Ս̅Բ̅ ԱԹՈ

[6] -ՌՈՅՍ: Ե̄ ԱՒՐ ԺԱՄ ՏԱՐՈՒՄՆ ԱՌՆ

[7] -ԵՆ. Ա̄ ԱՒՐՆ՝ ԻՄ ՀԱՒՍ ՍԱՐԳՍԱ, Ա̄՝ ԱՐԵՒ

[8] -ԻԿԱ, Ա̄՝ ԻՆՁ՝ ԳԵՐԳՈՍԱ, Ա̄՝ ՊԱ-ՊԱՔ{...},

[9] Ա̄՝ ԳՈՒԼԱՔԱ: ՈՐ ՉԱՔ ՈՐ ԱՅԱ[՞] ԵԿ{...}

[10] -ՂԵՑԻՍ ՀԱՍՏԱՏ Է, ՄԻԱԲԱՆ Ե{...}

[11] ՅԱՋԳԷ-ՅԱՋԳ։

Վիմագրի բոլոր չորս վնասուած տողաւարտներն առանց դժուարութեան վերականգնելի են ըստ բովանդակութեան. առաջին տողում՝ ԴԱ[Դ]//ԱՔ, 8-րդ տողում՝ ԴԱԴԱՔ[Ա]//, 9-րդում՝ ԵԿ[Ե]//ՂԵՑԻՍ, 10-րդում՝ ՄԻԱԲԱՆ Ե[ՄՔ]//։ Բնագրի 3-րդ տողի բայական երետ *(*=տունեց*) ուշագրաւ ձեւի համար հմմտ. Սուրէն Աւագեանի դիտարկումները*[81]*։ 9-րդ տողում, մեր դրած հարցականից առաջ հեղինակի, ըստ ամենայնի, պատահական* Ս-Ա *տառասխալն ուղղելով՝ պէտք է հասկանալ «Որ չափ որ այս ե-կ[ե]ղեցիս...» իմաստը։* Չափ-ի *փոխարէն տարբեր բարբառներում այսօր էլ հանդիպող «չաք» բառի համար ՆՀԲ-ում ծանօթագրուած է. «Բառ ռամկ[ական] որպէս Չափ... Ուստի եւ ՈՐՉԱՔ՝ է Որչափ»*[82]*, իսկ ըստ Հր. Աճառեանի՝ այն «Միջին հայերէնի* չաք *ձեւից է»*[83]*։*

81 **Ս. Ա. Աւագեան**, *Վիմագրական սրբագրումներ, Ա. Դաւիթ Շողոթկա որդու նուիրագիրը եւ Ե աճականի կիրառութիւնը վիմական արձանագրութիւններում*,- «Պատմա-բանասիրական հանդէս», 1968, թիւ 4, էջ 205-215 (վերահրատ. *Վիմագրական պրպտումներ*, Եր., 1981, էջ 132-146)։

82 *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. Բ, Եր., 1981, էջ 575։

83 **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Գ, Եր., 1977, էջ 626։ Տե՛ս նաեւ՝ **Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան**, *Միջին հայերէնի բառարան*, հտ. Բ, Եր., 1992, էջ 250։ *Հայոց լեզուի բարբառային բառարան*, հտ. Դ, Եր., 2007, էջ 398։ Խորհրդատուութեան համար կրկին երախտագիտութիւնս եմ յայտնում Պարոյր Մուրադեանին։

Ինչ վերաբերում է վիմագրի 3-րդից 4-րդ տող անցնող բառին, ապա պիտի խոստովանենք, որ, ցաւօք, անուշադրութեան մատնելով նրա Զ սկզբնատառի վրայ փորագրուած պատուոյ նշանը (որը յստակ երեւում է նաեւ հրատարակուած լուսանկարում)՝ մենք սկզբնապէս շտապողաբար վերծանել էինք այն իբրեւ «գամատուռնս» անսովոր բառ եւ ծանօթագրել, թէ այն, «թերեւս, կարելի է հասկանալ «ժամատունս» (գուցէ «գաւիթ» նշանակութեամբ)»[84]*։ Ուղղելով սխալը՝ այժմ պէտք է ենթադրենք, որ մեր առջեւ, ամենայն հաւանականութեամբ, նորայայտ բառ է՝* Զ̄-ԱՄԱՏՈՒՌՆՍ, *այսինքն՝ «6-ամատուռնս» (*<վեցամատուռն*)։ Իբրեւ զուտ նախնական վարկած՝ մեզ թւում է, թէ առաջացած լինելով սկզբնական «վեց-ա-մարտիւրիոն» յունա-հայկական ստուգաբանութեամբ բառից (բառացի՝ «վեցավկայ»),* վեցամատուռն *հայերէն ծիսական եզրոյթը կարող էր նշանակել «վեցատոն»*[85] *կամ «վեցակիրակի» եւ վերաբերուել,*

84 Տե՛ս Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ տարի, Վիեննա, 1999, էջ 286։

85 Նիկիոյ Ե կանոնի հայերէն թարգմանութեան մէջ ունենք. «Քանզի կամ եղեւ մեծ ժողովոյն, եթէ ի տարւոջն երկիցս /*տարբ.* երիս/ ժողովս /*տարբ.* ժողով] արասցեն. մի՝ յաշունն /*տարբ.* յաշնան/ ժամու, զոր /*տարբ.* եւ մի, զոր/ մատրունս կոչեմք /*տարբ.* մատուռնն կոչեն/, եւ մի՝ յառաջ քան զՔառասներորդսն» (բերում ենք Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ի նոր հրատարակութեան համար մեր կողմից պատրաստուած գիտա-քննական բնագրի հատուածը՝ որպէս տարբերակ նշելով ԺԱ դարի «դասական» խմբագրութեան տարընթերցումները, որոնք նախորդ հրատարակութե-

առաւել մեծ հաւանականութեամբ, Ս. Զատկից մինչեւ Ս. Հոգեգալուստ ընկած Յինանց շրջանի վեց կիրակիներին կամ դրանցից վերջին երկուսից որեւէ մէկին (Ս. Համբարձման տօնից առաջ եւ յետոյ): Ս. Զատկին յաջորդող կիրակիներից երկրորդը Հայոց եկեղեցու պահպանուած աւանդոյթում կոչւում է ոչ միայն Կանաչ կիրակի, այլեւ «Աշխարհամատուռն» (միւսները Ս. Զատկից յետոյ համապատասխանաբար՝ Նոր կիրակի կամ Կրկնազատիկ [I], Կարմիր կիրակի [III], Երեւումն խաչին կամ Յինանց Ե կիրակի [IV], Յինանց Զ կիրակի [V] եւ Երկրորդ Ծաղկազարդ [VI])[86], իսկ դա թոյլ է տալիս մտածել, որ մատուռն բաղադրիչը կարող էին պարունակել նաեւ միւս կիրակիների (կամ նրանցից մի քանիսի) նախնական կամ աւելի վաղ եւ հետագայում ենթադրաբար կորսուած անունները: Նշենք, որ ուրիշ ազգեր եւս համարակալել են Յինանց կիրակիները, օր.՝ լիտուացիների մօտ ե՛ւ Ս. Համբարձումը, ե՛ւ նրան յա-

ան մէջ շտապողաբար ներկայացուել են իբրեւ Ը դ. հեղինակային բնագիր. տե՛ս *Կանոնագիրք Հայոց*, Աշխատասիրութեամբ **Վ. Յակոբեանի**. հտ. Ա, Եր., 1964, էջ 120, հմմտ. **Ա. Յակոբեան**, *Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Անանիա Մոկացին*. - «Հանդէս Ամսօրեայ», ՃԻԱ տարի, Վիեննա-Եր., 2007, էջ 213-256):

86 Տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. Բ, Եր., 1981, էջ 575; **Մ. արքեպ. Օրմանեան**, *Ծիսական բառարան*, Արեւմտահայերէնից փոխադր. կատարել են **Ի. Աւետիսեանը**, **Ռ. Նազարեանը**, Եր., 1992, էջ 7 (նաեւ՝ էջ 18, 24-25):

յորդող կիրակին կոչուել են նաեւ Շեշտինէ, այսինքն՝ Վեցեակ[87]:

Բնագրում հանդէս եկող նուիրատուի Գերգոս անունը հանդիպում է առաջին անգամ, բայց այն, անկասկած, մի տարբերակն է յայտնի Գերգ անուան (ծագումը՝ Գէորգ-ից), որը Հր. Աճառեանի բառարանի տուեալներով տարածուած է եղել ԺԲ-ԺԴ դարերում (ԺԳ դ. հանդիպում է եւս 2 անգամ)[88]: Նրա որդու Պապաք (ՊԱՊԱՔԱ‹Յ›) անունը բառարանում արձանագրուած է 6 անգամ (ԺԳ դարում՝ ուրիշ 4 դէպք)[89]: Սարգիս անունով պայլին (?! - ԽՄ ՀԱԽՍ ՍԱՐԳՍԱ‹Յ›) յաջորդող Արեւիկը (ԱՐԵՒԻԿԱ‹Յ›) եղել է նուիրատուի կա՛մ տատը, կա՛մ էլ՝ որ աւելի հաւանական է, մայրը[90], իսկ վեր-

87 Տե՛ս **Ս. Գուտաուտաս**, *Լիտուացիների ժողովրդական օրացոյցը*, Վիլնիւս, 1991 (լիտուերէն), էջ 15: Խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Հայր Աթանաս վրդ. Մովսիսեանին:

88 **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, էջ 453-455: Մի ուրիշ *Գերգ*-ի մասին (վակունիքեան) տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 291-294 [այս ժողովածոյում՝ էջ 49-54]:

89 Նոյն տեղում, հտ. Դ, էջ 225-226:

90 Հր. Աճառեանին յայտնի էին *Արեւիկ* իգական անունով ուրիշ 3 անձեր, որոնցից 2-ը՝ ԺԳ դարից (Նոյն տեղում, հտ. Ա, էջ 272-273): Բնագրի բառացի ընկալման դէպքում պիտի մտածենք, որ Գերգոսի հայրը (նաեւ՝ գուցէ, մայրը) վիմագրում չի յիշատակուել՝ ենթադրաբար, վախճանուած լինելու պատճառով: Սակայն, թերեւս, հնարաւոր է նաեւ ենթադրել, թէ Սարգսի համար «հաւ» (=*պապ*) եզրոյթը օգտագործուած է իր երկրորդ՝ *նախնի* իմաստով (տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*,

*ջում յիշատակուած Գուլաքը՝ անշուշտ, նրա կինը (*Գուլաք *անուան 2 այլ յիշատակութիւն յայտնի էր միայն ԺԵ դարից*[91]) - հեղ., 2009]:

Աւարտելով՝ կարող ենք ամփոփել, որ Գտչավանքի եպիսկոպոսութեան ծաղկման շրջանը ԺԳ դ. կէսերին, ցաւօք, նոյնպէս երկար չտեւեց: Մեր քննարկած մեծ վիմագրի փորագրման ժամանակից շուրջ մէկ տասնամեակ անց վրայ հասաւ աղբիւրներից մեզ անյայտ արհաւիրքը, որի հետեւանքով Վրթանէս եպիսկոպոսը ստիպուած էր վտարանդի դառնալ եւ հեռանալ հիւսիս՝ դէպի աւելի ամուր հայկական շրջաններ: Ի վերջոյ, նա վախճանուեց այդքան փայփայած իր «հայրենիքից» հեռու՝ Խաղարավանքում, որտեղ մինչեւ այժմ պահպանուած նրա տապանաքարին հինգ տողով գրուած է. ԱՅՍ Է ՀԱՆԳ//ԻՍՏ ՏԷՐ ՎՐԴ//ԱՆԻՍԻ ԱՄԱՐ//ԱՍԱ‹Յ› ԵՊԻՍԿ//ՈՊՈՍԻ: Թ‹ՈՒԻՆ› :ՉԸ: *(=1259 թ.)*[92]:

հտ. Բ, էջ 71), ըստ որում այս դէպքում նշանակելով հէնց *հայր, ծնող*:

91 Նոյն տեղում, էջ 499:

92 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 124 (N 408):

III

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒԱՆՈՒՄԸ, ՆԱՀԱՏԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ծիծեռնավանքի անունն առաջին անգամ յիշատակւում է Ստեփաննոս Օրբէլեանի «Սիւնեաց պատմութեան» մէջ մտած Հայոց ՄՂԳ թուականի (=844 թ.) կալուածագրում (գլ. ԼԸ): Փիլիպպէ իշխանի կողմից Տաթեւ գիւղի նուիրատուութիւնը Սիւնեաց աթոռին հաստատում են աշխարհիկ աւատատէրերից բացի նաեւ նահանգի ազդեցիկ հոգեւորականները. «եւ ի կրօնաւորաց՝ Աճարոն Երիցու վանական, Գրիգոր քահանայ, Ստեփաննոս Մաքենոցաց վանական, Յակոբ Ուլձայ աւագերէց, Մանկիկ Ծղկաց քորեպիսկոպոս, Ստեփաննոս Ծիծառնայ *[տարբ.* Ծիծառնոյ*] վանական, Գրիգոր դրան երէց, Սիմէոն Շաղատոյ վանական, Գրիգոր Սիւնեաց վարդապետ»*[1]*:*

Պատմիչը Ծիծեռնավանքն ընդգրկում է Սիւնիքի 30 ամենից նշանաւոր եկեղեցիների ու

1 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*. Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861, գլ. ԼԸ, էջ 152; *Պատմութիւն նահանգին Սիսական*. Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, գլ. ԼԹ, էջ 208:

վանքերի ցուցակում (գլ. ԿԱ), որը ԺԱ-ԺԲ դդ. կազմուած բնագրի տպաւորութիւն է թողնում: Այստեղ Աղահեջքի վանքերի կարգում թուարկւում են, հաւանաբար, հետեւեալ երեքը՝ «Ծիծառնոյ վանք, *Խաչատրոյ վանք*[2], *Ջիւնասարու վանք*»[3]:

Ստեփաննոս Օրբէլեանի բուն ժամանակին՝ ԺԳ դ. աւարտին է վերաբերում Ծիծեռնավանքի միւս յիշատակութիւնը աշխատութեան վերջին հատուածում (գլ. ՀԱ): Այստեղ թուարկւում են Սիւնեաց միտրոպոլիտութեան 10 նշանաւոր վանքերն ու անապատները, որոնցից վերջինն է «Ծիծեռնակու *սուրբ վանքն*»[4]: *Եւ*

2 Խաչատրոյ վանքի տեղը հաստատապէս չգիտենք:

3 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԿԱ, էջ 249: *Ջիւնասարի վանքի* աւերակները գտնւում են վերաշէնացուած *Սոնասար* գիւղում, Հոչանցի ձորի հարաւային բարձրադիր լանջին: Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, - «Հանդէս ամսօրեայ», ՃԺԲ տարի, Վիեննա, 1998, էջ 306, ծնթ. 24 [այս ժողովածոյում՝ էջ 26]:

4 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԱ, էջ 365: Մորուս Հասրաթեանը սխալմամբ կարծում էր, թէ այդ գլուխը չի պատկանում Ստեփաննոս Օրբէլեանի գրչին եւ աւելացուած է նրա տեքստին ԺԸ-ԺԹ դդ. (իբրեւ թէ՝ «Ծիծեռնավանքից բացի, այստեղ նշուած բոլոր վանքերն ու անապատները հիմնադրուել եւ կառուցուել են XVII դ.»): Տե՛ս հեղինակի *«Ծիծեռնավանք»* յօդուածը «Պատմա-բանաս. հանդէս»-ում, 1980, թիւ 2 (էջ 39), վերահրատարակուած՝ **Մ. Հասրաթեան**, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, Եր., 1985 ժողովածոյում (էջ 219, ծնթ. 4): Իրականում «Սիւնեաց պատմութեան» ՀԱ

վերջապէս, երկի աւարտական գլխում (ՀԳ), որը Սիւնեաց 12 գաւառների բնակավայրերի ցուցակն է Տաթեւին մուծած հարկաչափերով, Աղահեջքի 38 գիւղերի թւում[5] *յիշատակւում է* Ծիծառնովանք *(տարբ.* Ծիծառնուվանք) *տեղանունը, որն, անկասկած, առաջացել է վանքի անունից: Գիւղը մուծում էր 10 միաւոր հարկ*[6], *որը միջին չափ է 6-15 միաւոր հարկ մուծող աղահեջեան գիւղերի ցուցակում:*

ԺԳ դարում Վարդան Արեւելցին իր «Աշխարհացոյց»-ում Սիւնիք աշխարհի նկարագրութիւնը սկսում է հետեւեալ կերպ. «Մեծ Սիւնիս եւ Փոքր Սիւնիս, ուր կայ աթոռն Եւստաթէի առաքելոյն, որ կոչի Տաթեւ, եւ Ծիծեռնայ վանքն *եւ Բաղաբերդն...»*[7]: *Վարդանի երկը բազմաթիւ ընդօրինակութիւններ է ունեցել, որոնց գրիչներն օգտագործել են* Ծիծռան, Ծիծեռու, Ծիծառնայ, Ծիծռավանք, Ծիծռանավանք *տարբերակները*[8]:

գլուխն ամբողջութեամբ առկայ է երկի մեզ հասած հնագոյն ձեռագրում (ՄՄ թիւ 6271, ընդօրինակուած Հայոց ՋԿԲ = 1513 թ.) եւ Փարիզեան հրատարակութեան «Յաւելուածի» հետ (ԺԹ դ.) որեւէ կապ չունի:

5 Մեզ հասած ձեռագրերում այս թիւը 42 է: Գրչական այդ սխալի մասին տե՛ս **Ա. Յակոբեան**, նշ. աշխ., էջ 278-279:

6 Ձեռ. ՄՄ 6271, թ. 335ա; **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 375:

7 *Աշխարհացոյց* **Վարդանայ վարդապետի**, Քննական հրատ. **Հ. Պերպերեանի**՝ համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 12:

8 Նոյն տեղում, տողատակ:

ԺԷ դարում Թովմայ վարդապետ Վանանդեցին գրել է «Բան չափեալ ի սրբազան տեղիս աշխարհին Հայոց» չափածոյ ստեղծագործութիւնը, որտեղ յիշատակում է տասնեակ Հայոց վանքեր ու սրբատեղիներ, այդ թւում բուն Սիւնիքում միայն երեքը. «Իսկ յԱգուլեաց յուղի անկեալ, Ի սուրբ ուխտն Տաթեւ հասեալ: Զսրբութիւնն՝ որ գումարեալ, Սեռն սիրով գնոքօք փարեալ: Եւ յԱնապատն անդուստ դիմեալ, Ուր է սրբոցն բնակ եղեալ: Անտի ի վանսըն մեծ անցեալ, Որ Ծիծեռնան էր կոչեցեալ»[9]:

Սրանով սպառւում են Ծիծեռնավանքի յիշատակութիւնները միջնադարեան մատենագրութեան մէջ: ԺԹ դ. վերջից սկսւում են նրա նկարագրութիւնները գիտական երկերում: Հ. Ղեւոնդ Ալիշանը, Եր. Լալայեանը, Արտակ եպ. Սմբատեանցը եւ Կայծ-Սիւնին, յղելով ժողովրդի մէջ տարածուած աւանդութիւնները, նշում են, որ Ծիծեռնավանք անունն առաջացել է Պետրոս առաքեալի ճկոյթի՝ ծիծեռնի անունից, որն, իբրեւ մասունք, ինչ-որ ժամանակ պահուել է վանքում, կամ կապուած է ծիծեռնակի պաշտամունքի հետ[10]: Նրանք նաեւ վերապատ-

9 Հրատարակուած է «Ճռաքաղ» հանդէսում (Մոսկուա, 1860, տետրակ Թ, էջ 137): Իր ներբողի վերջում Թովմա վարդապետը նշել է գրութեան ժամանակը՝ «Թիւն Հայոց գՌՃԴ ցուցեալ», այսինքն՝ 1655 թ.:

10 **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ-Ս.Ղազար, 1893, էջ 268; **Ե. Լալայեան**, *Զանգեզուր. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար*, - «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, թիւ 2 (Երրորդ տարի, Դ գիրք), էջ 18, 46-49; **Ա.**

մում են մէկ այլ աւանդութիւն, ըստ որի եկեղեցու կառուցման ժամանակ ագռաւն ինքնազոհութեամբ փրկել է շինարարներին թունաւորուած ճաշից, որի մէջ օձ էր ընկել. Հասկանալով եղելութիւնը՝ մարդիկ ագռաւին թաղել են մի բարձր ժայռի մէջ, այն անուանելով «Ագռաւի գերեզման» կամ «Ագռաւախաչ», իսկ օձի պատկերը քանդակել եկեղեցու պատին[11]: Ի դէպ, այս «Ագռաւաքարի» աւանդութիւնը չի կապւում յատկապէս կամ միայն Ծիծեռնավանքի հետ. այն լայնօրէն տարածուած էր Հայաստանի բազմաթիւ անկիւններում[12]: ԺԹ դ. վերջին արդէն չգործող, սակայն շրջակայ ժողովրդի կողմից չափազանց սիրուած Ծիծեռնավանքի սրբատեղին ամենից շատ ուխտաւորներ էր

եպ. Սմբատեանց, *Համառօտ պատմութիւն Սիւնեաց թեմի 6 նշանաւոր վանքերի*, - «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Գ, Կազմեց **Ս. Բեհբութեան**, Եր., 1997, էջ 598-602:

11 **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական*, էջ 268; **Ե. Լալայեան**, *Զանգեզուր*, էջ 18, 48; **Ա. եպ. Սմբատեանց**, նշ. աշխ., էջ 600-602; **Կայծ-Սիւնի**, *Ջէյվա (Թղթակցութիւններ)*, - «Նոր Դար», Թիֆլիս, 1890 (թիւ 105, 24 Յուլիսի), էջ 2-3:

12 Տե՛ս **Ա. Ղանալանեան**, *Աւանդապատում*, Երեւան, 1969, էջ 224 (թիւ 605), 241-242 (թիւ 649), 262-263 (թիւ 703), 264 (թիւ 709), 269 (թիւ 721); **Ա. Ղազիեան**, *Ագռաւի պաշտամունքի հետքերը հայ ժողովրդական աւանդութիւններում*, - «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», Եր., 2001, էջ 135-137: Ծիծեռնավանքի հետ առնչուող երկու աւանդութիւնների (ծիծեռն-ճկոյթի եւ ագռաւ-օձի) առասպելաբանական հիմքերի վերաբերեալ մանրամասն տե՛ս **Ս. Յարութիւնեան**, *Հայ առասպելաբանութիւն*, Բեյրութ, 2000, էջ 306-313, 335:

ընդունում Սուրբ Համբարձման եւ Սուրբ Խաչի տօներին:

Ինչպէս տեսնում ենք, Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը չունի ուղիղ վկայութիւն: Վերջին տարիների աշխատանքներում փորձեր են եղել գտնելու այն, սակայն՝ անյաջող: Այսպէս, Սամուէլ Կարապետեանը, համարելով, որ «Ծիծեռնավանքի եկեղեցին մինչեւ 20-րդ դարի սկզբները Զէյվա գիւղի համար ծառայել է որպէս ծխական եկեղեցի», պնդում է, որ այն կոչուել է «Սուրբ Ստեփաննոս»[13]: Ցղումը կատարւում է «Արարատ» հանդէսում հրատարակուած մի ցուցակի, որի մէջ, սակայն, յիշատակուող Զէյվա գիւղը (իր Ս. Ստեփաննոս եկեղեցիով) իրականում ոչ թէ Աղաւնոյի հովտի, այլ Կապանի շրջանի Զէյվան է (ներկայիս Դաւիթ-Բէկ գիւղը)[14]: Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրողը սխալւում է նաեւ՝ Ծիծեռնավանք գիւղը Զէյվայի հետ համադրելով: Մինչեւ 1906 թ. կիսով չափ հայաբնակ եղած Զէյվան գտնւում է Աղաւնոյ վտակի ձորի ձախ (հիւսիսային) բարձրադիր լանջին՝ վանքից ուղիղ գծով 3-4 կմ հեռաւորութեան վրայ: Իսկ Ծիծեռնավանք վերաշինացուած գիւղը (Աղաւնոյի աջ ափին), ուր այժմ բնակւում է 30 ըն-

13 **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Եր., 1999, էջ 142, ծնթ. 91:

14 Տե՛ս Հայկական Առաքելական (Լուսաւորչական) եկեղեցի Ռուսիայի մէջ. - «Արարատ», Վաղարշապատ, 1879 (ԺԲ տարի, թիւ Թ), էջ 398:

տանիք, ԺԹ դ. լինելով քրդաբնակ, յորջորջուել է Քեօսալար, իսկ խորհրդային տարիներին, մինչեւ ազատագրումը՝ Գիւսուլու:

Յակոբ Սիմոնեանը եւս, կրկնելով Զէյվա-Ծիծեռնավանք համադրման նոյն սխալը, գտնում է, որ «ծխական եկեղեցու վերածուած Ծիծեռնավանքը յայտնի էր Ս. Ստեփաննոս Նախավկայ կամ Ս. Մինաս անուամբ»[15]: Ցղումը կատարւում է «Արարատ»-ի վերը նշուած սխալ ընկալուած ցուցակին, ինչպէս նաեւ Հ. Ղ. Ալիշանի աշխատութեանը (էջ 268) եւ այնտեղ նշուած «Նոր Դար» հանդէսի մի յօդուածի («է, 72»), որոնցում խօսքն իրականում գնում է Խօզնավար գիւղի ու նրա Սուրբ Մինաս եկեղեցու մասին[16]:

15 **Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան**, *Ծիծեռնավանք*. - «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», էջ 202:

16 Համտ. **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական*, էջ 268; **Սպ. Սպանդարեան**, *Խազնավար գիւղ (Թղթակցութիւններ)*. - «Նոր Դար», Թիֆլիս, 1890 (թիւ 72, Է տարի), 5 Յունիսի, էջ 3-4: [Այժմ ճշգրտենք, որ 1886 թ. Ռուսաստանի կայսրութեան Անդրկովկասեան երկրամասի բնակչութեան մասին վիճակագրական տուեալների ժողովածոյում *Զանգեզուրի* գաւառի 13-րդ՝ *Մոլլալարի* համայնքի 7 գիւղերի ցանկում (N 767-773) հայ բնակչութիւն է նշուած ոչ թէ *Զէյվայում* (Зейва /Зейвалу/ - 60 ծուխ, քրդեր), այլ միայն *Уджанабасъ* անունով գիւղում *(37 ծուխ, 317 մարդ, հայեր.* տե՛ս *Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г., IV. Елисаветпольская губерния, Зангезурский уездъ*, Тифлисъ, 1893 (без пагин.), II участокъ, 13. Моллаларское с. о., N 773): Այս անունը ցարական 5-վերստանոց քարտէզում չկայ, բայց ե՛ւ այնտեղ, ե՛ւ 1952 թ. խորհրդային զինուո-

Այնուամենայնիւ, մեզ թւում է, որ Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը պահպանուած է մատենագրութեան մէջ, սակայն՝ առանց վանքի անուան յիշատակութեան: Ժ դ. վերջի հեղինակ Մովսէս Դասխուրանցու (կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Պատմութիւն Աղուանից»-ի մէջ Հայոց ՄՂԵ թուի (=846 թ.) տակ յիշատակւում է Աղահեջք գաւառում արաբական զօրաբանակի հետեւեալ աւարառութեան եւ պարտութեան մասին. «Յետ այսորիկ արշաւանս առնէր [Խալթ Փատգոսի որդին] յաշխարհն Սիւնեաց եւ գերի վարեալ զԲաղացն սահմանս՝ գայ իջանէ յԱղահեջ գաւառ՝ յաւան մի՝ Արքուգետն [ձեռ. a. ձեռագրերի Բ խմբի crv

րական 1:25000 մասշտաբով քարտէզում Աղաւնոյի բարձրադիր ձորալանջերով *Ջեյվայից* 4-5 կմ արեւելք, *Ջիյրիկից* (1886-ին՝ *Зикрикъ*) յետոյ նշուած են *Абаслар* անունով 2 գիւղեր (1,5 կմ իրարից հեռու): Նրանցից հարաւայինի անունը հետագայում վերածուել է *Аваз-лар*-ի, իսկ հիւսիսայինը վերանուանուել է *Моллалар* [III]: Սրանից հարաւ ընկած անտառը խորհրդային մեծամասշտաբ քարտէզները կոչում են *«Եալղուզղամ հանղամա»* (урочище *Ялгуз-Дам*), որի համանուն հայկական գիւղը յիշուած է 1691/92 թ. պարսկերէն փաստաթղթի՝ Քաշաթաղի գեղջաւագների թուարկման մէջ եւ Տաթեւի 1730 թ. պտղացուցակում (տե՛ս **Ք. Կոստիկեան**, *Քաշաթաղի 17-րդ դարի պատմութեանը վերաբերող մի փաստաթուղթ*, - ՄՄԱՆԺ, հտ. XX, Եր., 2001, էջ 170; *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի**, Հրատ. պատրաստեց... **Աշ. Աբրահամեանը**, Եր., 1942 /Յաւելուած/, էջ 42): Թերեւս, այս հիւսիսային *Աբասղարի* հետ էլ պէտք է համադրել 1886 թ. *Ուշանարարը*՝ ենթադրելով, որ Ի դ. սկզբում այն յայտնի է եղել նաեւ *Ջեյվա* [II] անունով - *հեղ., 2009*]:

ենթախումբն ունի Արքունագետն, bl ենթախումբը՝ Արքուագետն] կոչեցեալ, եւ խսկոյն հրամայէ այրել զեկեղեցին, որ Սրբոյն Գիորգայ [ձեռ. a. crv ենթախումբն ունի Գրիգորկայ, bl ենթախումբը՝ Գրիգորի] էր անուանադրեալ: Եւ յայնժամ զօրութիւն Աստուածային հասեալ՝ հեծեալ մի ի ձիոյ ճերմակ ճեպով ելանէ յեկեղեցւոյն արտաքս, ակն յայտնի ամենեցուն, ընթացեալ ի բանակն՝ չփոթեալ զայրն անօրէն հանգերձ զօրօքն իւրովք դարձուցանէ ի փախուստ ընդ սարն, որ կոչի Եղջերխոռ [ձեռ. a եւ Բ խմբի ձեռագրեր. Աց ենթախմբի ձեռագրերը եւ նրանց յանգող բոլոր 3 հրատարակութիւններն ունեն՝ Եղջիւր խոյի]. եւ անդ հողմ դժնդակ մրրկեալ շրջապատեաց զնոսա. եւ միայն ի ձի ապաստան փախուցեալքն զերծան. իսկ պաղանաւորքն (յ)առապուրք ի լերանց վերայ կորեան. եւ գերեալքն մնացին խաղաղութեամբ՝ փառս Աստուծոյ տալով»[17]:

17 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*. Քննական բնագիրը եւ ներածութիւնը **Վ. Առաքելեանի**, Եր., 1983, գիրք Գ, գլ. Ի (այս հրատարակութեան մէջ սխալմամբ, Աց ենթախմբի ձեռագրերի հետեւողութեամբ՝ ԻԱ), էջ 331-332: Մէջբերուած հատուածում տուել ենք կարեւոր տարընթերցումները եւ առանց նշման ուղղել քննական հրատարակութեան որոշ անընդունելի, հիմք-ձեռագրերի ընթերցումներից շեղուող տարընթերցումներ: «Պատմութիւն Աղուանից»-ի գրչագրերի մանրամասն վերլուծութիւնը տե՛ս **Ա. Յակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*, - «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-144; **Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի*

Այս հատուածը Մովսէս Դասխուրանցին ընդօրինակել է Թ դ. վերջում - Ժ դ. սկզբում կազմուած մի ինչ-որ ժամանակագրութիւնից, որի մէջ, ենթադրաբար, հաւաքուած են եղել Աղուանից կաթողիկոսարանի դիւանում պահուած ձեռագրերի յիշատակարանների ժամանակագրական տեղեկութիւնները[18], ուստի նրա հաւաստիութիւնը որոշակիօրէն երաշխաւորուած է: Ցաւօք, հիմնական անունները ձեռագրական լուրջ տարընթերցումներ ունեն, սակայն այսօրուայ գիտելիքներով բոլոր երեք դէպքերում էլ դժուար չէ վերականգնել Դասխուրանցու բնագիրը:

Որ եկեղեցու անուան՝ հեղինակային սկզբնօրինակի տարբերակը Գիորգ-ն է (=Գէորգ), երեւում է նախ եւ առաջ նրանից, որ B խմբի crv ենթախումբը տալիս է Գրիգորկայ ընթերցումը: Այն չէր կարող առաջանալ, եթէ ենթախմբի մայր ձեռագրի գրիչն իր առջեւ տեսնէր Գրիգորոյ քաջ ծանօթ բառը (որն առկայ է

եպիսկոպոսութեան սահմանները, - «Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ տարի, Վիեննա, 1999, էջ 279, ծնթ. 31 [այս ժողովածոյում էջ 97-98 - *հեղ., 2009*]:

18 Տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Եր., 1987, էջ 210-211: [Այժմ աւելի մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, *Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է. դարի վերջին - Ը. դարի սկզբին*, - «Հանդէս ամսօրեայ», ՃԺԸ տարի, Վիեննա-Եր., 2004, էջ 269-271; նոյնի՝ *Միսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, - «Հանդէս ամսօրեայ», ՃԻԲ տարի, Վիեննա-Եր., 2008, էջ 119-121, այս ժողովածոյում էջ 270-272 - *հեղ., 2009*]:

bl ենթախմբում): Այն կարող էր առաջանալ միայն այն դէպքում, եթէ գրիչը (տուեալ դէպքում՝ B խմբի մայր ձեռագրի գրիչը) իր առջեւ տեսնէր կամ թելադրութեամբ լսէր ականջին փոքր-ինչ խորթ Գիորգայ անունը, որը համաբերով գրչական սխալմունքի արդիւնք, նա կարող էր յօրինել crv ենթախմբի ձեռագրերի շնորհիւ մեզ հասած Գրիգորկայ տարբերակը: Հաւանական է նաեւ, որ bl ենթախմբի մայր ձեռագրի գրիչն առանց այլեւայլութեան կարող էր «ուղղել» այդ տարբերակը Գրիգորոյ-ի:

Աւելացնենք, որ a ձեռագիրը «Պատմութիւն Աղուանից»-ում 14 անգամ հանդիպող Գէորգ անունը 12 անգամ տալիս է Գիորգ տարբերակով: Այդ բոլոր դէպքերում B խմբի ձեռագրերը նախընտրում են Գէորգ տարբերակը, բացի մի դէպքից (B գրքի Զ գլխում, էջ 120, տող 14), երբ crv ենթախմբի մայր ձեռագրի գրիչը նորից Գիորգիոս-ն «ընթերցել» է Գրիգորիոս, ընդ որում դա այն տեղում է, ուր ոչ մի կասկած չի կարող լինել, որ խօսքը Սուրբ Գեւորգի մասին է («...սուրբքն Վարոս, Մամաս, Մար, Սարգիս, Գէորգիոս [crv ձեռ.՝ Գրիգորիոս] վկայ, Կոզմաս եւ Դամիանոս եւ մասն մի ի սուրբ քառասնիցն»):

Եւ վերջապէս, «Ճերմակ ձիով հեծեալի» յաղթանակը դժուար թէ կապ չունենայ Ճերմակաձի նիզակաւոր Սուրբ Գեւորգ յաղթանակող նահատակի հետ[19]: Հնարաւոր է թւում անգամ

19 Խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս պի-

ենթադրել, որ Մովսէս Դասխուրանցու սկզբնաղբիւրի համար հիմք ծառայած ականատես գրու պատմածի մէջ Սուրբ Գէորգի եկեղեցուց ճերմակ ձիով յաղթանակող հեծեալի դուրս գալու մասին ասուած լինէր «Սուրբ Գէորգի նման» արտայայտութիւնը, որը բաց է թողնուել գրի առնողի կողմից:

Որ լեռնանունը Դասխուրանցու բնագրում Եղջերխոռ է եղել (ոչ թէ Եղջիւր խոյի), կասկած չի կարող յարուցել, քանի որ այդ ընթերցումն ունեն «Պատմութիւն Աղուանից»-ի բոլոր հին եւ սկզբնօրինակի վերականգնման համար կարեւորութիւն ունեցող ձեռագրերը (abclrv): Ճիշտ է, հնագոյն a ձեռագրում (ՄՄ թիւ 1531՝ ընդօրինակուած 1289 թ. Յովհաննավանքում) «Եղջերխոռ» բառի վերջին տառի աջ ուղղաձիգ ստեղը թղթի եզրի մաշուածութեան պատճառով միայն ներքեւի ծայրով է նշմարւում: Դրա հետեւանքով a-ից ընդօրինակուած «երկրորդական» գրչագրերում բազմաթիւ տարընթերցումներ են յայտնուել. h-ում առաջացել է Եղջերխու տարբերակ, d-ում՝ Եղջերիս, իսկ g-ում, որին այս կամ այն կերպ յանգում են 1860 թ. մոսկովեան ու փարիզեան եւ 1983 թ. քննական հրատարակութիւնները, յայտնուել է Եղջիւր խոյի բառակապակցութիւնը: Սակայն հնագոյն ձեռագրի համապատասխան էջի (թերթ 372ա, աջ սիւնակ) ուշադիր զննութիւնը բացառում է անցման (արեւելեան) բոլո-

տի յայտնեմ ուսուցչիս՝ Պարոյր Մուրադեանին:

րագիր Ռ-ից բացի որեւէ այլ տառի ընկալման հնարաւորութիւնը:

Ինչ վերաբերում է Արքուգետ-Արքուագետ-Արքունագետ ընթերցուածքներին, ապա, մեր կարծիքով, հեղինակային բնագրում պէտք է եղած լինէր Արքուագետ-ը, որից ամենից հեշտ կարող էին ընդօրինակուել թէ՛ a ձեռագրի Արքուգետ-ը, թէ՛ crv ենթախմբի մայր ձեռագրի Արքունագետ-ը: Սակայն պէտք է նշել, որ երեք ընթերցուածքների տարբերութիւնը էական չէ, քանի որ բոլորի հիմքում էլ ընկալուել է Արք-Արքայ իմաստը. օր.՝ Գուգարք նահանգի Ձորափոր (Ձորոփոր) գաւառի Արքունաշէն գիւղում ծնուած Սահակ Ձորափորեցի կաթողիկոսը բազմաթիւ պատմիչների մօտ եւ ձեռագիր գաւազանագրքերում կոչուած է ինչպէս Արքունաշէնցի, այնպէս էլ՝ Արքուշէնցի[20]:

«Պատմութիւն Աղուանից»-ի այս հատուածում յիշատակուած Սուրբ Գէորգ «անուանագրեալ» եկեղեցին որոշակի հաւանականութեամբ կարող է համադրուել Ծիծեռնավանքի եկեղեցու հետ հետեւեալ փաստարկումների հիման վրայ.

20 Այս յուշումի համար երախտագիտութիւն պէտք է յայտնեմ Խորէն Պալեանին: [Տեղին նշենք, որ Գուգարքի եւ Ուտիքի աշխարհացոյցեան գաւառների ճշգրտուած քարտէզագրումից յետոյ հնարաւոր է ենթադրել, որ վաղմիջնադարեան *Արքունաշէն* բնակավայրին կարող էր համապատասխան լինել զարգացած միջնադարից *Կունէն* անունով յայտնի գիւղը՝ համանուն գետակի (ներկայումս՝ Ոսկեպար-Ջողազի վտակ *Քարահան* կամ *Կիրանց ջուր*) ափին – *հեղ., 2009*]:

ա) Եղջերխոռ լեռնանունը մատենագրութեան մէջ եւս մէկ անգամ յիշատակւում է 1407 թ. գրուած մի յիշատակարանում Եղջախոռ ձեւով: Յիշատակագրութեան հեղինակ Առաքեալ քահանան յայտնում է, որ աւազակների կողմից սպանուած իր եղբօր՝ տուեալ ձեռագրի գրիչ Բարսեղ քահանայի մարմինը եօթամսեայ «յերկրէ յերկիր» փնտրտուքից յետոյ գտել է Եղջախոռ լեռան վրայ («ի սարն, որ կոչի Եղջախոռ»), այնտեղից տեղափոխել է Վաղադնավանք եւ ամփոփել Սուրբ Կարապետ եկեղեցու առջեւ («եւ առեալ զնշխարս նորա, եդաք ի տապան ի վանս Վաղադնոյ, առ սեմաւք դրանցն Ս. Կարապետին»)[21]: Համադրելով այս տեղեկութիւնը Աղահեջք գաւառում մատնանշուած Եղջերխոռ լեռան յիշատակութեան հետ՝ պէտք է ենթադրենք, որ այդ լեռան առաւել հաւանական տեղը Սիւնիքի երկու սահմանակից գաւառների միջեւ է՝ Ծղուկի, որտեղ Որոտան գետի ձախափնեակում գտնւում է Վաղադնավանքը, եւ Աղահեջքի: Դժուար չէ նկատել, որ դա, ամենայն հաւանականութեամբ, այսօրուայ Իշխանասարն է (օտարների կողմից յորջորջուած՝ Իշիխլի, 3550,4 մ), որի հարաւ-արեւմտեան լանջերն իջնում են դէպի Որոտանի

21 Տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի*, կազմեց **Հ. Յ. Աճառեան**, Վիեննա, 1910, էջ 83: *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Եր., 1950, էջ 602: Յիշատակարանում տէր Առաքեալը չի յայտնում, թէ որտեղ է իր նահատակ եղբայրը 1393 թ. արտագրել, իսկ ինքը 1407 թ. ծաղկել տուեալ Աւետարանը:

հովիտ, իսկ հիւսիս-արեւելեան լանջերը մի քանի լեռնաբազուկներով հասնում են այսօր Աղաւնոյ անուանուած վտակի (նաեւ՝ Ծիծեռնավանոց գետ, Աղօղլանչայ) աղեղնաձեւ հովտագծին[22]: Եթէ այս ենթադրութիւնը ճիշտ է, ապա «Պատմութիւն Աղուանից»-ում յիշուող Աղահեջք գաւառի Սուրբ Գէորգ եկեղեցին, որի առջեւ պարտութեան մատնուած արաբ զինուորները փախուստի էին դիմել «ընդ սարն, որ կոչի Եղջերխոռ», անհրաժեշտ է փնտրել գաւառի՝ դէպի Իշխանասարն ընկած բնակավայրերի շրջակայքում, այսինքն՝ Ծիծեռնավանուց գետի աջ ափի (հարաւային) ձորալանջերին:

բ) Արքուագետ-Արքունագետ աւանը կարող է համադրուել Ծիծեռնավանքի դիմացի ափին, 1 կմ հեռաւորութեան վրայ գտնուող բնակավայրի հետ, որտեղ պահպանուել է ԺԶ դարով թուագրուող յայտնի մէլիքական ապարանքը[23]:

22 Հ. Ղեւոնդ Ալիշանը (*Սիսական*, էջ 3), Աղահեջքի «Եղջերուի խոռ սարը» առանց մեկնաբանութեան համադրում է *Չալբուռուն* կոչուած լեռան հետ, որը Իշխանասարից սկսուող արեւելեան լեռնաբազուկի մի գագաթն է Քարաշէն գիւղից վեր: Նման տեղորոշումը մեզ քիչ հաւանական է թւում՝ հէնց Վաղադնավանքից հեռու լինելու պատճառով:

23 **Ա. Ղուլեան**, *Արցախի եւ Սիւնիքի մէլիքական ապարանքները*, Եր., 2001, էջ 17-22: Տեղին նշենք, որ դժուար է ընդունել հեղինակի այն տեսակէտը, թէ Մէլիքաշէնի տեղում եղել է հին *Քաշաթաղ* բնակավայրն իր յայտնի ամրոցով, որի անունը զարգացած միջնադարում անցել էր ողջ գաւառին (հմմտ. նաեւ **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 151-153): Ստեփաննոս Օրբէլեանի՝ վաւերագրի արժէք ունեցող գիւղացանկի

Վերաշէնացուած գիւղը ներկայումս վերանուանուած է Մէլիքաշէն, իսկ ԺԹ-ի դդ. Սրդարնակների կողմից կոչւում էր Սուլթանբէկով, այսինքն՝ Արքայաշէն: Ստեփաննոս Օրբէլեանի մօտ պահպանուած Աղահեճք գաւառի 38 գիւղերի ցանկում Արքունագետ տեղանուն չկայ: Սակայն հէնց դա էլ յուշում է, որ Մովսէս Դասխուրանցու յիշատակած աղահեճքեան աւանն անհրաժեշտ է փնտրել Աղաւնոյ (Ծիծեռնավանուց) փակի ձախ ափի այն հատուածում, որի բնակավայրերն առայժմ անհասկանալի մի պատճառով դուրս են մնացել Սիւնեաց պատմիչի մօտ պահպանուած ցանկից: Առիթ ենք ունեցել գրելու, որ վերջինիս Թուարկումն

համեմատութիւնը ցոյց է տալիս, որ *Քաշաթաղը* գտնուել է աւելի հիւսիս, Հոչանց գետի աջափնեայ ձորալանջի կենտրոնական հատուածում անխալ տեղորոշուող գիւղերի միջեւ (**Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 375. «...Արուական 6, Մշենի 6, *Քաշաթաղ* 6, Վերին շէն 6, Ձիւնասար 6..., Հունչաւք 12...»), ինչպէս առաջինը ճիշտ նկատել է Հ. Ղ. Ալիշանը (*Սիսական*, էջ 268. մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 279): Նշենք, որ ժամանակին, Արմէն Ղարագեօզեանին հետեւելով՝ սխալուել ենք նաեւ մենք՝ *Քաշաթաղ*-ը համադրելով Աղաւնոյի ձախ ափին գտնուող *Ղարաղշլաղ* (**Е. Кондратенко**, *Карта Елисаветпольской губернии с показаниемъ сельскихъ обществъ и распределения населения по вероисповеданию*, Тифлисъ, 1888 եւ *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1910 քարտէզներում, թերեւս, սովորական տպագրական վրիպակով՝ *Карыгышлагъ*) գիւղի հետ (հմմտ. **А. Карагезян**, *К локализации гавара Кашатаг*, - «Լրաբեր հաս. գիտութիւնների», 1987, թիւ 1, էջ 40):

սկսւում է Աղաւնոյի ձախ ափի վերին հովտում գտնուող գիւղերից՝ Հակ (Մինքենդ) գիւղից ընդամենը 5 գիւղ արեւելք, Հակից պտտւում է դէպի հիւսիս, ապա արեւելք՝ Հոչանց օժանդակի ապա Հակարիի աջ ափով (14 գիւղանուն), Աղաւնոյի հետ գետակիցից անցնում է վերջինիս աջ (հարաւային) ափը, ուղղւում դէպի արեւմուտք (16 գիւղանուն) եւ հասնում մինչեւ Հակի դիմացի լանջը՝ Հայրի եւ Աղբաթխէրտ[24]: Ըստ այսմ ենթադրելի է, որ Աղաւնոյի ձախ (հիւսիսային) ափին ցանկի մէջ չեն մտել, գուցէ, տասնեակի չափ գիւղանուններ, որոնցից մէկն էլ կարող էր լինել Արքունագետ-ը: Այս վարկածն ընդունելու դէպքում պարզ է դառնում նաեւ, որ Ծիծեռնավանուց գետի հնամենի անունը, թերեւս, եղել է հէնց Արքունագետ:

գ) Ճերմակ ձիով հեծեալի յաղթանակի պատմութիւնն, անկասկած, որոշ առասպելական տարրեր է պարունակում (մէկ ձիաւորի յաղթանակը արաբական ողջ բանակի նկատմամբ, Սուրբ Գեւորգի հետ զուգորդութիւնը եւ այլն), սակայն միաժամանակ թւում է, թէ այն հիմնուած է իրական դէպքի եւ կոնկրետ տեղանքի կենդանի նկարագրութեան վրայ: Ականատեսը պէտք է լաւ դիտարկւող եկեղեցու ներքեւում քայլող գերիների մէջ լինէր, որպէսզի պնդէր, թէ հեծեալը եկեղեցուց դուրս եկաւ ու դէպի բանակն ընթացաւ «ակն յայտնի ամե-

24 **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 278-279 [այս ժողովածոյում՝ էջ 25-28]:

նեցուն»: Գերիների խմբի ընթացքի այդպիսի տեղանքը չափազանց յարմարւում է Աղաւնոյի աջ ափին յառնող Ծիծեռնավանքի եկեղեցակիր ժայռի դէմ-դիմաց փռուած Մէլիքաշէնի ձախափնեայ հովտին: Պատահական չի թւում նաեւ ձիաւորի՝ եկեղեցու միջից *դուրս գալու մասին պնդումը («ելանէ յեկեղեցւոյն արտաքս»): Ծիծեռնավանքի բարձր դռները (270 սմ) իրօք կարող էին հիմք ծառայել ականատեսի՝ նման ընկալման համար: Նշենք, որ տարածաշրջանի միւս եկեղեցիների դռների բարձրութիւնը 2 մետրից ցածր է, իսկ Ծիծեռնավանքի դռները, թերեւս, ամենաբարձրն են Հայաստանի վաղ-միջնադարեան եկեղեցիների մէջ*[25]*:*

*Կարծում ենք, որ մեր ենթադրութեանը չի խանգարում այն հանգամանքը, որ «Պատմութիւն Աղուանից»-ում Ծիծեռնա*վանքի *անունը չի յիշատակւում այն դէպքում, երբ երկու տարի առաջ (844 թ.) նրա Ստեփաննոս վանահայրը ստորագրել էր վերեւում նշուած Տաթեւի կալուածագիրը: Ժամանակագրութեան (Յիշատակարանի՞) տուեալ վկայութեան հիմքում այն ականատես գերու պատմածն էր, որը ծիծեռնավանցի կամ աղահեջցի չէր (հաւանաբար, բաղքեցի էր, հմմտ. «...գերի վարեալ զԲաղացն սահմանս»), ուստի նրա համար կարեւոր էր ոչ թէ տեղի բնակչին հարազատ* վանքի, *այլ հէնց*

25 Տե՛ս **М. Асратян**, *Армянская архитектура раннего христианства* (Москва, 2000) գրքի հարուստ աղիւսակները (էջ 89-172): Հմմտ. **Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան**, նշ. աշխ., էջ 211:

եկեղեցու *անունը՝* Սուրբ Գէորգ: *Չէ՞ որ հէնց այդ սուրբի նմանողութեամբ էր գերիների փրկութիւնն ապահովել «ճերմակ» ձիաւորը (այնուամենայնիւ՝ թերեւս, այդ անանուն հերոսի գլխաւորած զօրաջոկատը):*

* * *

1998-2001 թթ. ընթացքում Յակոբ Սիմոնեանի գլխաւորած հնագիտական արշաւախմբի կողմից Ծիծեռնավանքում կատարուած պեղումները ի յայտ բերեցին մի շարք ուշագրաւ գտածոներ, որոնց մի մասը կարելի է իսկական գիւտերի շարքը դասել[26]:

2000 թ. Օգոստոսի վերջին եկեղեցու հարաւային պատի կենտրոնական դռան առջեւ հնագէտները պեղեցին մի գերեզման, որն անմիջապէս գնահատուեց որպէս նահատակի դամբարան: Հանգուցեալի մասունքները յայտնաբերուեցին երկու մասի բաժանուած. գլուխը եւ ոսկորների մի մասը՝ ժայռի մէջ խնամքով փորուած գերեզմանի արեւմտեան, իսկ մնացեալ ոսկորները՝ արեւելեան անկիւնում: Ոսկորների տարբեր մասերում առկայ են բռնի մահուան հետքեր՝ անցք ճակատոսկրի, քերուածքներ նախաբազկի ոսկորների վրայ: Գլխի շրջակայքում թափուած էին շուրջ վեց տասնեակ երկաթեայ

26 Պեղումների արդիւնքները նախնական ձեւով ամփոփուած են Յակոբ Սիմոնեանի եւ Յովհաննէս Սանամեանի վերը նշուած «*Ծիծեռնավանք*» յօդուածում («Հայոց սրբերը եւ սրբավայրերը» ժողովածոյում, էջ 200-211), ինչպէս նաեւ մի քանի զեկուցումներում:

գամեր՝ փշեպսակի մնացորդները, որը եզակի գիւտ է Հայաստանում: Հողի վերին շերտում մինչ այդ յայտնաբերուել էին եկեղեցական սպասքի հազուագիւտ խեցեղէն նմուշներ՝ ճաճանչաւոր խաչ, գայլախնի գլխին ամրացուող Տիրամօր սրբապատկեր, ճրագաման եւ այլն: Հնագէտները գնահատել են գտածոն իբրեւ ճա-ճառակ, *որը խաչ է հանուել եւ նետահարուել գլխից, որից յետոյ յանձնուել է հողին չափազանց մեծ պատիւներով՝ փշեպսակի ու եկեղեցական սպասքի յաւելումով: Ըստ մարդաբան Ռուզան Մկրտչեանի՝ հանգուցեալը եղել է 25-30 տարեկան տղամարդ:*

Մէկ ամիս անց եկեղեցու վերականգնող շինարարները հիւսիսային պատի շարուածքի վերին՝ ուշ շրջանում դրուած շերտը մաքրելիս կրաշաղախի մէջ յայտնաբերեցին մի տափակ քար, որի վրայ Թ-Ժ դարերի տառերին նմանուող երկաթագրով ընթերցւում է «...ԾԱ-ՏՈՒՐ» բառը: Քարի ճակատային մասը (20x9 սմ) մաքուր մշակուած է, եւ յստակ երեւում է, որ այն փոքր ջարդուածք ունի ձախ հատուածում: Այստեղ կարող էր տեղաւորուել մէկ տառ, եւ ենթադրաբար դա Ա *է: Այսինքն՝ արձանագրութիւնը եղել է* (Ա)ԾԱՏՈՒՐ - *«Ա[ստուա]ծատուր»: Վիմագրի տառերն աչքի են ընկնում ընդգծուած նրբագեղութեամբ: Դրանց շատ նման են եկեղեցու հարաւային ճակատի արեւելեան դռան երկու կողմերում՝ ենթադրաբար Թ-Ժ դդ. փորագրուած 4 արձանագրու-*

թիւնների տառերը[27]*: Ի դէպ, այս վիմագրերի առիթով այսօր հնարաւոր ենք համարում առաջ քաշել մի վարկած: Նշուած դռնից արեւմուտք, ըստ ամենայնի, միեւնոյն ձեռքով փորագրուած երկու կից արձանագրութիւններում յիշատակւում են 4 հոգեւորականներ: Առաջինում թուարկւում են նրանցից երեքի անունները՝ «Անանիա, Ազարիա, Միսա(յ)էլ սպասաւոր» (ի դէպ, դրանք նոյնանում են Ս. Գրքի այն 3 մանուկների անունների հետ, որոնց Նաբուգոդոնոսորը երիտասարդ Դանիէլ մարգարէի հետ միասին գերեվարեց Բաբելոն եւ այնտեղ անուանափոխեց՝ դարձնելով Սեդրաք, Աբեդնագով եւ Միսաք*[28]*), իսկ երկրորդում յիշատակւում է չորրորդի անունը՝ «Ստեփան(ն)ոս քահանա(յ)» (ենթադրաբար, դա կարող է լինել նաեւ վերը նշուած 844 թ. կալուածագիրը ստորագրած* Ստեփաննոս Ծիծառնայ վանական-*ը*[29]*): Հէնց նոյն դռան առջեւ, շեմքից 1 մ հեռաւորութեան վրայ գտնուող ժայռափոր գերեզմանում, 2000 թ. աշնանը հնագէտները յայտնաբերեցին խմբով թաղուած չորս «նահատակնե-*

27 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1982, էջ 192; **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 148; **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 286, 307, ծնթ. 40 [այս ժողովածոյում՝ էջ 38-40]:

28 Տե՛ս *Դան.* Ա, 7:

29 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԼԸ, էջ 152: Հմմտ. վերեւում, ծնթ. 1 եւ **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 307, ծնթ. 40:

րի», որոնց «գանգերի ու ոսկորների վրայ երեւում են գուրզերի, սրերի եւ քարերի հարուածների հետքերը»[30]*: Այս համընկնումը դժուար է պատահական համարել, ուստի դրան առջեւի գերեզմանում թաղուածներն, ամենայն հաւանականութեամբ, պէտք է նոյնացուեն վիմագրերում յիշուող 4 անձերի հետ: Կարծում ենք նաեւ, որ նշուածին յաջորդող երկրորդ ժայռափոր գերեզմանում պեղուած հանգուցեալը կարող է նմանապէս նոյնացուել այն անձնաւորութեան հետ, որը յիշատակւում է դրան արդէն արեւելեան կողմի ճակատին փորագրուած երկրորդ արձանագրութեան մէջ. «զԳրիգոր զանարժան ծառայս յիշեցէ՛ք յաղաւթս»*[31]*:*

Արդ՝ ակնյայտ է, որ մեր փորագրողը ձգտել է յատուկ զարդանախշել ԱԾԱՏՈՒՐ *գրուածքը (տե՛ս պատկեր 16):* Ծ *եւ* Ւ *տառերի աջ գծիկներն աւարտւում են դէպի վեր ու վար կլորացող այնպիսի նրբագեղ «բեղիկներով», որպիսիք մեզ յայտնի չեն հայկական որեւէ վիմագիր արձանագրութիւնից եւ առկայ են միայն թանկարժէք մետաղների եւ փայտի զարդանախշուած փորագրութիւններում*[32]*: Նկատի*

30 Տե՛ս **С. Геолецян,** *Венец терновый надели на него,* — ...Новое время" շաբաթաթերթ, Եր., 14 Ապրիլի, 2001 թ. (թիւ 740), էջ 4:

31 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 192, N 685; **Ս. Կարապետեան**, նշ. աշխ. էջ 148, 150; **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 307, ծնթ. 40 [այս ժողովածոյում էջ 39-40]:

32 *Համեմատութեան* համար տե՛ս **Ե. Մուշեղեան**, *Հայերէն արձանագրութեամբ առարկաներ* (Եր., 1964) գրքի

ունենալով նշուած նրբագեղութիւնը եւ քարի տափակ փոքրիկ ձեւը՝ դժուար չէ անել այն ենթադրութիւնը, որ մեր առջեւ պարզապէս մի ցուցանակ է՝ յուշատախտակ: Դժուար չէ նաեւ կռահել, որ դա եղել է յայտնաբերուած նահատակի գերեզմանի յուշատախտակը՝ ագուցուած այն փոքրիկ երկար մատուռի պատի մէջ, որը կառուցուել է, հաւանաբար, հէնց այդ գերեզմանի վրայ եւ որի ներքեւի շարքերի որոշ մասեր պահպանուել են ցայսօր (մինչեւ բակի կառուցապատման աշխատանքները):

Հայոց վարքագրութեան մէջ Աստուածատուր *անունով ծանօթ է միայն մէկ նահատակ: Դա մատենագրութիւնից քաջ յայտնի* Ցիզդբուզիդ *նահատակն է՝ խաչուած Հայոց մարզպանութեան մայրաքաղաք Դուինում 553 թ.՝ Սասանեան Խոսրով Անուշիրուան արքայի օրօք: Նրա մասին ունենք ինչպէս հայ մատենագիրների (առաջինը՝ Է դ. վերջում Փիլոն Տիրակացու «Ժամանակագրութեան»*[33]*), այնպէս էլ իր հայկական վկայաբանութեան տուեալները, որը*

չափազանց հարուստ նիւթը:

33 **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, Եր., 1944, էջ 397 («Եւ ի սորին աւուրս ձեռնադրեցաւ Աբդիշու եպիսկոպոս ի Ներսիսէ՝ Հայոց կաթողիկոսէ. եւ յետ սակաւուց եղ եւ մարտիրոսացաւ ի Հայս սուրբն *Ցիզտբուզտ* ի պարսիկ մարզպանաց»): [Այժմ տե՛ս նաեւ նոր քննական հրատարակութեան մէջ. **Փիլոն Տիրակացի**, *Ժամանակագրութիւն*, Առաջաբանը (հեղինակակցութեամբ Հ. Բարթիկեանի) եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**. - «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 965 – *հեղ., 2009*]:

պահպանուել է ընդարձակ (ճառընտիրային) եւ համառօտ (յայսմաւուրքային) տարբերակներով[34]*: Ընդարձակ խմբագրութիւնը մեզ հասել է նաեւ վրացերէն գրեթէ բառացի թարգմանութեամբ*[35]*: Յոյն ուղղափառ եկեղեցու Յայսմաւուրքում կայ* Ἰσβοζήτης *վկայի ոչ մեծ պատմութիւնը*[36]*: Ասորական մի ձեռագիր պատա-*

34 *Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց. Հատընտիր քաղեալք ի Ճառընտրաց*, հտ. Բ, Վենետիկ-Ս.Ղազար, 1874, էջ 124-130; *Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց, որք կան ի հին Տօնացոյցի Եկեղեցւոյ Հայաստանեայց*, ի **Մկրտիչ վարդապետէ Աւգերեան**, հտ. Ժ, Վենետիկ-Ս.Ղազար, 1814, էջ 234-238; **Ի. Վ. Աբուլաձէ**, *Վրաց-հայկական գրական կապերը Թ-Ժ դդ. Ուսումնասիրութիւններ եւ բնագրեր*, Թբիլիսի, 1944 (վրացերէն. «Վկայաբանութիւն Սրբոյ Յիզտիբուզտեայ» հայերէն բնագիրը՝ էջ 114-123): Հմմտ. *Յուշիկք Հայրենեաց Հայոց* ի **Հ. Ղ. Ալիշան**, հտ. Բ, Վենետիկ-Ս.Ղազար, 1921, էջ 274-293; *Армянские жития и мученичества V-XVII вв.*, Перевод с древнеармянского, вступительные статьи и примечания **К. С. Тер-Давтян**, Ер., 1994, էջ 271-281: Յիզդբուզիդի վկայաբանութիւնը պարունակող հայկական ամենահին ձեռագիրը հնագոյն Ճաշոցն է՝ ընդօրինակուած 1154 թ. Սկեւռայում (ՄՄ թիւ 832), տե՛ս **Մ. Աւդալբեգեան**, *«Յայսմաւուրք» ժողովածուները եւ նրանց պատմագրական արժէքը*, Եր., 1982, էջ 45:

35 **Ի. Վ. Աբուլաձէ**, նշ. աշխ., էջ 114-123:

36 *Sinax. Eccl.* CP., p. 294, au 9 Decembre; cf. *Act. SS.*, t. c., § 17, p. 200 (յղումն ըստ **P. Peeters**, *Une légende Syriaque de S. Iazdbozid*, – „Analecta Bollandiana", t. XLIX, fasc I-II, Bruxelles, 1931, էջ 21, ծնթ. 4): Իմ երախտագիտութիւնը պէտք է յայտնեմ ուսուցիչներիս՝ Կարէն Իւզբաշեանին եւ Պարոյր Մուրադեանին, որոնց սիրալիր օժանդակութեամբ են յաղթահարուած ներկայ աշխատանքի բազմաթիւ դժուարութիւններ:

ռիկ պահպանել է վկայութիւններ Iazdbozid *Պարսեցի նահատակի մասին*[37]*: Ըստ Նիկ. Մառի՝ վկայաբանութեան հայկական բնագիրն ստեղծուած է ամենաուշը Է դարում*[38]*: Իլիա Աբուլաձէն այդ ժամանակը հասցնում է մինչեւ Ը դ. առաջին քառորդի վերջը*[39]*:*

Յիզդբուզիդն ազգութեամբ պարսիկ էր՝ Մախոժ *անունով, ծնուած Իրանի* Բեշապուհ *կամ* Բերշապուհ *(ընդարձակ վարքում) գաւառի* Քունարաստան *(համառօտ վարքում՝* Քուրաստան*) գիւղում*[40]*, մոգի ընտանիքում (մօտաւորապէս՝ 525 թ.): Մանկուց կրթուել է մոգ դառ-*

37 Պատառիկի բնագիրը հրատարակել է Պոլ Պետերսը (**P. Peeters**, *Une légende Syriaque de S. Iazdbozid*, էջ 5-21, ասորերէն բնագիրը՝ էջ 7-10, լատիներէն թարգմ.՝ էջ 10-13):

38 **Н. Марр**, *Из поездки на Афон. О грузинских рукописях Ивера. О древне-грузинских переводах с армянского*, — ЖМНП, CCCXXII, СПб., 1899, N 3, էջ 23-24:

39 **Ի. Վ. Աբուլաձէ**, նշ. աշխ., էջ 0164:

40 *Բեհ-Շապուրը* Պարսք աշխարհի գլխաւոր քաղաքներից էր (տե՛ս, օր.՝ **J. Marquart**, *Ērānšahr nach der Geographie des Ps. Mōses Xorenači*, Berlin, 1901, էջ 27; **Н. В. Пигулевская**, *Города Ирана в раннем средневековье*, Москва-Ленинград, 1955, էջ 147, 219): *Քունար* (թարգմ.՝ «շուշան»), *Քունարեստան* անունով բնակավայրեր յայտնի են Արեւելեան Իրանում եւ Քերմանում (**В. Бартольд**, *Историко-географический обзор Ирана*, СПб.,1903, էջ 56; *Словарь географических терминов и других слов, формирующих топонимию Ирана*. Сост. **В. И. Савина**, Москва, 1971, էջ 124): Իհարկէ, չի կարող ուշադրութիւն չգրաւել անձնանուան նմանութիւնը Տիզբոնի ասորաբնակ թաղամասի անուանը՝ «*Մահոզէ դ՝ Բեթ Արամայէ*»:

նալու համար, սակայն երիտասարդ տարիներին, մի դիպուածով Թագաւորական բանակում ներկայ գտնուելով Գրիգոր Ռաժիկ անունով յայտնի պարսիկ քրիստոնեայի նահատակութեանը, սկսել է մտածել քրիստոնէութիւն ընդունելու մասին: Իր ճանապարհորդութիւնների ընթացքում հասել է «յաշխարհն Սիւնեաց, պարապելով յունկնդրութիւն Գրոց Սրբոց». ցաւօք, աղբիւրը չի նշում, թէ Սիւնիքի որ գաւառում է «լեալ սակաւ ամիսս»: Այնուհետեւ գնացել է Դուին՝ Խոսրով Պերոզ անունով մոգի մօտ: Վերջինիս ապարանքում մի հրդեհի ժամանակ տեսնելով քրիստոնեայ քահանայի խաչի զօրութիւնը՝ յայտարարել է իր քրիստոնեայ լինելը: Նիխորական անունով պարսիկ մարզպանը մոգերի պահանջով բանտ է նետել նրան եւ փորձել տանջանքներով մոգութեան վերադարձնել, սակայն՝ անօգուտ: Այդ ժամանակ, ըստ իր խօսքերի, Մախոժը 25 տարեկան էր: Տանջանքներով քրիստոնէութիւնից հրաժարուելու պահանջ է դրուել նաեւ «յետ սակաւ ժամանակի» Նիխորականին փոխարինած Նախապետ Քնարիկ (այսինքն՝ Քունարցի) մարզպանի կողմից: Երեք տարի մնալով բանտում՝ Մախոժը հաւատակիցների կողմից կնքուել է Յիզդբուզիդ անունով, որն ըստ հայկական աղբիւրների՝ նշանակում է «Աստուածատուր» կամ «Աստուած ապրեցոյց»[41]: Բանտակիցներից մէ-

41 Հմմտ. Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, Եր., 1946, էջ 527-528: Իսկ նահատակի իրանական անունների մասին տե՛ս **F. Justi**, *Iranishes Namenbuch*, Marburg, 1895, էջ 147; **H. Hübschmann**, *Armenische Grammatik*, Bd. 1, Leipzig, 1895, էջ 55-56; *Iranishes Personennamenbuch*, Bd. II, *Mittelpersische Personennamen*, Wien, 1986, NN 214, 1046 (խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Գառնիկ Ասատրեանին):

կը՝ Ներսէս Ռաժիկը (այսինքն՝ Ռազա, Ռէյ քաղաքից), համառօտ խմբագրութեան վերջում հանդէս է գալիս իբրեւ Յիզդբուզիդի վկայագիրը. «Եւ ես՝ Ներսէս (ասէ վկայաբանն), չարչարակից եւ ընկերակից սորոյն, արարի զպատմութիւնս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»[42]: Մի նոր նշանակուած մարզպան եւս փորձել է նրան մոգութեան վերադարձնել, սակայն վերստին մերժում է ստացել: Դրանից յետոյ Դուին են ժամանում Խոսրով արքայի հաւատարիմ մարդիկ՝ «անուն միումն Նատոյ, որ կոչի Դրովանդական, եւ երկրորդին Պերոզ, որ էր Ռէոյ գաւառից մոգպետ, եւ երրորդին Խոյապ, որ էր սպասաւոր արքային», որոնց հայ վկայագիրը դրական է բնորոշում («եկեալ ի Հայս՝ բազում ուղղութիւնս արարին»): Նրանք ներում են շնորհում եւ բանտից ազատում Ներսէս Ռաժիկին ու Սահակին («յԱտրպատականէ»), որոնք մանկուց քրիստոնեայ էին եղել, սակայն հաւատափոխ անելու նոր անյաջող փորձից յետոյ մահապատժի վճիռ են կայացնում Յիզդբուզիդի նկատմամբ: Նա խաչ է հանւում Դուինում (այսպիսով՝ 28 տարեկան հասակում), Խոսրով Անուշիրուանի 33-րդ տա-

42 *Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*, հտ. Ժ, էջ 238:

բում, Սահմի ամսի 2-ին (=553 թ. Նոյեմբերի 9-ին), կիրակի օրը, երրորդ ժամին (այսինքն՝ առաւօտեան ժամը 9-ին): Նրա հետ խաչւում են եւս երկու մարդ՝ մի քրիստոնեայ հուժիկ, (այսինքն՝ Խուզաստանցի*) եւ մի հրեայ*[43], *որոնցից մէկը նաեւ* նետահար է արւում *խաչի վրայ: Մարզպանը թոյլ է տալիս թաղել մարմինը. ըստ վկայաբանութեան համառօտ խմբագրութեան՝ «Յայնժամ դիմեաց հայրապետն քահանայիւք եւ ժողովրդովք եւ բարձեալք զպատուական մարմին սրբոյն՝ տարան ի մեծ եկեղեցին Դունայ եւ եդին ի տապանի սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, եւ զխաչն մասունս արարեալ՝ բաշխեցին ամենայն հաւատացելոց»*[44]*:*

Տեղին նշենք, որ հայկական բնագրերի այս շարադրանքից իրենց կարճ տեղեկութիւններով փաստօրէն չեն շեղւում յունական Յայսմաւուրքի եւ ասորական պատառիկի պատմութիւնները[45]*: Պօլ Պեետերսի հրատարակած՝ Բրիտանական թանգարանի ասորերէն մէկ թերթանոց մագաղաթեայ պատառիկի երկու երեսների*

43 Ուշ հայկական աղբիւրները նշում են նրանց անունները՝ *Սահակ-Սամուէլ* եւ *Յազդմխուաստ* (**Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 75; *Պատմութիւն նահանգին Սիսական*, գլ. ԻԴ, էջ 97; **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԻԳ, էջ 70, ծնթ. 3):

44 *Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*, հտ. Ժ, էջ 238:

45 Տե՛ս **P. Peeters**, *Une légende Syriaque de S. Iazdbozid*, էջ 18:

60 տող բնագրից միայն վերջին 5-ն է վերաբերում Իազիդբոզիդ-*ին: Ամբողջ նիւթը պատմում է* Տէր Աբրահամ *անունով վարդապետի ու նրա ընկերների՝* Տէր Իսահակի *եւ* Տէր Մովսէսի *մասին, ընդ որում ակնյայտ է, որ նիւթի սկիզբն ու վերջը բացակայում են (ձեռագրի թերթերի կորստի պատճառով): Մեզ հետաքրքրող բնագրի թարգմանութիւնն է. «Տէր Աբրահամի եւ Տէր Իսահակի եւ Տէր [Մովսէսի] ընկերոջ անունն էր Իազիդբոզիդ: Նա Պարսից երկրից էր, ազգով* {...}*: Իազիդբոզիդն ազնուազարմ էր, սակայն ծնունդով՝ ոչ քրիստոնեայ: Պարսից արքան շատ բարձր էր գնահատում նրան իր* {...} *իմաստութեան համար, եւ երբ հասել էր երեսնամեայ տարիքի* {...}*»*[46]*:*

Ժ դ. սկզբի հեղինակ Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսը նշում է, որ Յիզդբուզիդ *նահատակը հողին է յանձնուել Դուինի Հայոց կաթողիկոսարանի, այսինքն՝ հնագիտական պեղումներից մեզ քաջ յայտնի եռանաւ բազիլիկ եկեղեցու խորանից արեւելք («բարձեալ զսուրբ մարմինն սրբոյ մարտիրոսին՝ մեծի հայրապետին Ներսէսի բովանդակ եպիսկոպոսօք եւ կղերիւք եկեղեցւոյ՝ եդին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարեւելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք»)*[47]*:*

46 Նոյն տեղում, էջ 13, պատառիկի b երես, տող 26-30:

47 **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** *Պատմութիւն Հայոց*, Եր., 1996, էջ 66: Տե՛ս նաեւ **Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ** *Պատմութիւն տիեզերական*, ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861, էջ 80:

Պատմիչը նաեւ յայտնում է, որ երբ նահատակուեց Դաւիթ Դւինեցին (մոտաւորապէս 700 թ.), նրա մարմինը եւս թաղեցին կաթողիկոսարանի մօտ՝ Յիզդբուզիդի վկայարանի կողքին («...տարեալ եպիսկոպոսաց եւ քահանայից՝ հանգուցին զմարմին նորա մերձ ի վկայարան սրբոյն Յիզտբուզտի»)[48]: Տեղին յաւելենք, որ «Վկայաբանութիւն Սրբոյն Դաւթի, որ ի Դուին կատարեցաւ» վերնագրով «Սոփերք Հայկականք»-ում տպագրուած բնագիրը զուգահեռաբար յայտնում է. «Եւ բերեալ պատուական հանդերձ՝ պատեցին զսուրբն հանդերձիւ իւրով զգեստուն եւ կազմեցին խնկօք եւ իւղովք եւ տարան ի գերեզման հանդերձ սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգօք հոգեւորօք եւ պայծառ լուցմամբք եւ եդին ի յարկս սրբոյն Յիզտբուզտի. եւ փայտ սրբոյ վկային յօրինեալ խաչ՝ կանգնեցին ի վերայ գերեզմանին»[49]:

Յովհաննէս կաթողիկոսը (898-929 թթ.) ծնուել ու երիտասարդ տարիներին, մինչեւ Դուինի 893 թ. աւերիչ երկրաշարժը պաշտօնավարել է Դուինում, ուստի նրա տեղեկութիւնները, թէ երկու նահատակների մասունքները մայրաքաղաքում էին պահպանւում, դժուար է կասկածի տակ առնել: Սակայն Դուինի կաթողիկոսարանի ու նրա շրջակայքի պեղումների ընթացքում Կարօ Ղաֆադարեանի արշաւա-

48 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ *Պատմութիւն Հայոց*, էջ 98:

49 *Սոփերք Հայկականք*, ԺԹ, Վենետիկ-Ս.Ղազար, 1854, էջ 95:

խումբը չի գտել ո՛չ Յիզդբուզիդի, ո՛չ էլ Դաւիթ Դւինեցու մասունքները[50]: Այն սրբատաշ հաստ պատերով ուղղանկիւն կառոյցը, որը Կ. Ղաֆադարեանը համարում էր Յիզդբուզիդի վկայարանը, եւ այն փոքրիկ քառակուսի շինութիւնը, որը նահատակի վկայարանն է համարւում նոր հետազօտողների կողմից[51], պեղումների պահին դատարկ են եղել: Պարզ է, որ մասունքները կա՛մ իրենց վերագրուած գերեզմաններում չեն եղել, կա՛մ ինչ-որ ժամանակ հանուել են այնտեղից: Մի վկայութեան համաձայն, որը նկատել է Գեղամ Գեւոնեանը (դեռեւս չհրատարակուած)՝ Դաւիթ Դւինեցու մասունքները տեղափոխուել են Դուինից եւ պահպանուել Բարձր Հայքի վանքերից մէկում[52]: Անկասկած, դա պէտք է տեղի ունեցած լինէր 893 թ. աւերիչ երկրաշարժից յետոյ, որը գրեթէ ամբողջովին կործանեց Դուին մայրաքաղաքը: Այնտեղից տեղափոխուեց ոչ միայն հայ բնակչութեան մեծ մասը, այլեւ Հայոց կաթողիկոսարանը՝ կաթողիկոսական դիւանի հետ միասին[53]:

50 **Կ. Ղաֆադարեան**, *Դուին քաղաքը եւ նրա պեղումները*, հտ. Ա, Եր., 1952; հտ. Բ, Եր., 1982: Ստուգել ենք նաեւ հնագիտական արշաւախմբի աշխատանքների օրագրերը (Յակոբ Սիմոնեանի օժանդակութեամբ, որին յայտնում եմ երախտագիտութիւն):

51 Տե՛ս **Ա. Քալանթարեան, Ն. Յակոբեան**, *Կաթողիկոսանիստ Դուինը*, - «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը», Եր., 2000, էջ 75-79:

52 Սոյն տեղեկատուութեան համար երախտագիտութիւն եմ յայտնում Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեանին:

53 **Կ. Ղաֆադարեան**, նշ. աշխ., հտ. Բ, էջ 128-129:

Բաւարա՞ր է արդեօք այս ամէնը՝ ենթադրելու, որ Ցիզդբուզիդ-Աստուածատուր նահատակի մասունքները Թ դ. վերջին տեղափոխուել են Սիւնիք եւ մեծ պատիւներով վերաթաղուել հէնց Ծիծեռնավանքի հարաւային պատի տակ: Իբրեւ լրացուցիչ անուղղակի փաստարկ կարող է ծառայել Ստեփաննոս Օրբէլեանի յայտնի վկայութիւնն այն մասին, որ Սիւնեաց իշխաններն ու հոգեւոր առաջնորդները ջանք չէին խնայում տարբեր վայրերից հաւաքելու «դնչխարս առաքելականս եւ հայրապետականս եւ մարտիրոսականս, ի գլխաւոր եւ յերեւելի սրբոցն», Սիւնիք տեղափոխելու ու իրենց վանքերում կենտրոնացնելու գործում[54]: Այդպիսի վանքերից մէկը, ենթադրաբար, կարող էր լինել Ծիծեռնավանքը, որտեղ պահպանուել է փշեպսակով նահատակի գերեզմանը եւ «Աստուածատուր» գրութեամբ յուշատախտակը:

Մեր ենթադրութեան հետ կարող է հակասութեան մէջ գտնուել մի հանգամանք, որը վերը նշուած փաստերի հետ ուղիղ կապ չունի: Ասորական նեստորական մատենագրութեան մէջ պահպանուել է «Ցազդպանահի վկայաբանութիւնը», որը պատմում է Խոսրով Անուշիրուանի ժամանակներում կատարուած մի նահատակութեան մասին: «Վկայաբանութիւն Տէր Ցազդպանահի՝ յաղթանակող վկայի» վերտառութեամբ այդ երկի[55] համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է. Հուզայէ գաւառում բանտ էր նետուած ոմն Ցազդպանահ, որի անունը թարգմանւում է «Աստուած է նրա պահապանը»: Նա ծնուել էր Կարգա դ՛ Լադան քաղաքին մօտ մի գիւղում, որը կոչւում էր Շուշ, հմուտ մոգ էր, «աւագ եւ դատաւոր» իր գաւառում: Մկրտուելուց յետոյ («նա հրաժարուեց դիւական Զրադաշտի հետեւորդների մոլորութիւնից, որից յետոյ եկաւ քաղաք եւ համայնքի եղբայրների հետ զրոյցներից որոշ բան իմացաւ Քրիստոսի մասին») սկսում է հանդէս գալ մոգերի դէմ: Սրանք բողոքում են գաւառի մեծ մոհպատին, որի հրամանով Ցազդպանահը շղթայակապ է արւում եւ պահւում հինգ տարի, մինչեւ Գրիգորի նահատակութիւնը: Այդ ժամանակ հրամայում են տեղափոխել նրան Հուզիստան գաւառից Բեթ Արամայէ: Ճանապարհին Պերոզշաբոր քաղաքում, ուր գտնւում էր արքայական բանակը, նրան քննում է Մոբեդանմոբեդը, որը խոստանում է քրիստոնէութիւնից հրաժարուելու դէպքում նշանակել մեծ մոհպատ (այսպէ՛ս - Ա. Յ.), իսկ հակառակ դէպքում՝ արժանացնել Գրիգորի ճակատագրին: Բանավէճից յետոյ, բանտ տեղափոխելու ճանապարհին քրիստոնեաները Ցազդպանահին ազատելու փորձ են կատարում, բայց նա հրաժարւում է փախուստից ու վերադառնում բանտ: Պերոզշաբորից դէպի Բեթ Արամայէ ճանապարհին, համոզելու հերթական անյաջող

54 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԼԸ, էջ 148:

55 Մենք կարողացել ենք օգտագործել միայն գերմաներէն թարգմանութիւնը՝ **G. Hoffmann**, *Auszüge aus Syrischen Akten Persischer Märtyrer*, Leipzig, 1880, էջ 87-91:

փորձից յետոյ մոգպատը մի զինուորի հրամայում է սպանել նրան, եւ Յազդպանահը գլխատւում է Տայմա անունով գիւղում: Բիճարդաշիր քաղաքից Աբրոդաք անունով մի քրիստոնեայ գաղտնի (այսպէ՛ս - Ա. Յ.) տանում է մարմինը Մաճոզէ դ՛ Բեթ Արամայէ եւ թաղում տէր Գրիգորի կողքին: Նոյն օրը նահատակին պատժող մոգպատն ընկնում է ձիուց ու մահանում: Իսկ մահապատժի վայրը դառնում է քրիստոնեաների կարեւոր սրբատեղի:

Յազդպանահը հետեւորդն է եղել Գրիգոր-Պիրանգուշնասպ Ռէյացի (այսինքն՝ Ռաժիկ) նահատակի, որի վկայաբանութիւնը նոյնպէս պահպանուել է նեստորական աւանդոյթում[56]: «Վկայաբանութիւն Տէր Գրիգոր նահատակի, որը վկայեց Խոսրով արքայի օրերում» վերտառութեամբ այս երկի համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է. Պերոզ արքայի ժամանակներից սկսուած բարեացակամ վերաբերմունքը քրիստոնեաների նկատմամբ Քոսրաւ Անուշիրուանի 10-րդ տարում փոխւում է հետապնդումներով: Ռայ քաղաքից, Միհրան ցեղից Փիրանգուշնասպ (=Փիրան-Վշնասպ) անունով նշանաւոր ազնուականը Քովադ արքայից արքայի կողմից նշանակուած էր հիւսիսի սահմանի՝ Գուրզան եւ Արրան երկրի նահանգապետ: Կաւատ արքայի 30-րդ տարում Ֆրորդիգան կոչուած տօնի օրերին նա երեք երազ է տեսնում եւ, անսալով հրեշտակի յորդորին, մկրտւում

56 Տե՛ս **G. Hoffmann**, *Auszüge aus Syrischen Akten*, էջ 78-86:

քրիստոնեայ՝ Գրիգոր անունով: Հրաժարւում է կատարել Հորմիզդ աստծու երկրպագութեան «Յաշտը», որի համար թագաւորի կողմից պաշտօնանկ է արւում եւ բանտարկւում տակառի մէջ: Երեք տարի բանտարկուած՝ ինչ-որ հրաշքներ է կատարում, որից յետոյ ազատւում է ու վերականգնւում իր պաշտօնում: Հռոմէացիների դէմ Գուրզան եւ Արրան երկրում տեղի ունեցած պատերազմում, լինելով զօրքի հրամանատարը, պարտութիւն է կրում ու գերի տարւում կայսեր մօտ: Նրա կողմից որպէս քրիստոնեայ աւելի բարձր պաշտօնի է արժանանում: Հռոմի եւ Իրանի միջեւ խաղաղութեան 14-րդ տարում գահ է բարձրանում Խոսրովը, որը դեսպանութիւն է ուղարկում կայսեր մօտ Զաբերգանի գլխաւորութեամբ: Վերջինս բանակցութիւններից յետոյ խնդրում է թոյլատրել Գրիգորին՝ վերադառնալու հայրենիք: Կայսեր կամքին հակառակ՝ Գրիգորը որոշում է վերադառնալ «Յիսուսի բնութեան վերաբերեալ Հռոմէացիների սխալ հաւատի եւ ամբարիշտութեան պատճառով»: Զաբարգանի հետ մեկնում է Նսիբին քաղաք, ապա հասնում արքայի մօտ, որից վերստին պատիւների է արժանանում ու վերադարձւում հին պաշտօնին: Բարկացած մոգերի պահանջներին զիջելով՝ Խոսրովն ի վերջոյ հեռացնում է Գրիգորին պաշտօնից եւ շղթայակապ անում: Սկսուած նոր պատերազմում Անտիոք հանելուց եւ այն աւերելուց յետոյ արքան շարժւում է Հեգար երկրի (=Եգերք, Լազիկա) վրայ: Այդ ընթացքում նա Մաճոզէ դ՛ Բեթ Արա-

մայէում հանդիպում է մեծ մոհպատի հսկողութեան տակ պահուող Գրիգորին, Միհրան տոհմի իշխանների պահանջով փորձում համոզել՝ թողնելու քրիստոնէութիւնը, եւ անյաջողութիւնից յետոյ յանձնում է նրան արքայական բանտապետին: Հեգար երկրից յաղթանակով վերադառնալուց յետոյ Խոսրովը տեղափոխում է Գրիգորին ուրիշ բանտ՝ Զքարտա դ՝ Բեթ Բալան, որը Տիգրոնից արեւելք էր: Այստեղի բոլոր բանտարկեալները սուրբի շնորհիւ քրիստոնեայ են դառնում: Ուայ քաղաքից մէկին դրա համար պատժում են՝ ականջներն ու քիթը կտրելով, սակայն յետոյ արքայի հրամանով ազատում են ու վերականգնում պաշտօններում: Գրիգորին տեղափոխում են ուրիշ բանտ, իսկ երկրում սկսւում են քրիստոնեաների լայնածաւալ հալածանքները: Նոր պարսկա-հռոմէական պատերազմի ժամանակ Խոսրովի մօտ Պերոզշաբոր քաղաք է գալիս Հեգարի իշխանը Միհրան ցեղից, եւ մոգերը նորից համոզում են նրան իր քրիստոնեայ հօրեղբօրորդու համար մահապատժի վճիռ պահանջել արքայից: Խոսրովը մէկ օր տատանուելուց յետոյ հրամայում է բերել Գրիգորին մեծ մոհպատի մօտ: Սուրբը ուրախութեամբ հրաժեշտ է տալիս իր բանտակիցներին՝ Լադանի եպիսկոպոս Ծալմային, Զաբէի եպիսկոպոս Միհրնարսէին ու այլ վարդապետների եւ տարւում արքայական բանակատեղի: Խոսրովի զօրքը տեղափոխւում է մինչեւ Դանահիտ կոչուող գիւղը՝ արքայական Ակրայի (ամրո՞ց, դաստակե՞րտ) մօտ: Այստեղ էլ, ուր-

բաթ օրը ժամը 6-ին Գրիգորը գլխատւում է (ըստ հաշւումների՝ դա 538 թուականն էր): Գիշերը քրիստոնեաների ամբոխը կարողանում է վերցնել նահատակի մարմինը եւ տանում թաղում է Բեթ Արամայէ քաղաքում: Որոշ մասունքներ ուղարկւում են տարբեր մարզեր եւ, որպէս հրաշագործ, պահւում ոսկեայ տապանակների մէջ, իսկ Ակրայի հրապարակը դառնում է կարեւոր սրբատեղի:

Մեր կողմից վերաշարադրած այս երկու բնագրերը նահատակների անուններով եւ բովանդակութեան ինչ-ինչ տարրերով որոշակի նմանութիւններ ունեն հայ մատենագրութեան մէջ առկայ Յիզդբուզիդի եւ Գրիգոր Մանաճիհր Ռաժիկի պատմութիւններին: Առաջինի մասին խօսուեց ամենասկզբում, իսկ Գրիգոր Ռաժիկի պատմութիւնը պահպանուել է ձեռագիր ճառընտիրներում «Վկայաբանութիւն Սրբոյն Գրիգորի Պարսկի» վերտառութեամբ եւ հրատարակուել Գալուստ Տէր-Մկրտչեանի կողմից 1901 թ.[57]: Այդ ոչ մեծ բնագիրը հիմնականում նման է վերեւում ներկայացուած ասորական տարբերակին (թէպէտ բաց է թողնուած բովանդակութեան մեծագոյն մասը) եւ շեղւում է միայն որոշ մանրամասներում: Դրանցից գլխաւորը վկայի

57 **Գ. Տէր-Մկրտչեան**, *Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկ, Միհրան տոհմից*, - «Արարատ», ԼԵ տարի, Վաղարշապատ, 1901, էջ 468-474 (բնագիրը՝ էջ 473-474): Վերահրատ.՝ **Գ. Տէր-Մկրտչեան**, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, Աշխատասիրութեամբ **Պ. Հ. Յակոբեանի**, գիրք Բ, Վաղարշապատ-Ս.Էջմիածին, 1998, էջ 153-165:

աշխարհիկ անուան Մանաճիհր տարբերակն է. «Յորում ժամանակի [=«ի հնգետասաներորդ ամի թագաւորութեանն Խոսրովայ որդւոյ Որմզդի (?!) Պարսից արքայի»] այր ոմն, որում անուն էր Մանաճիհր, աշխարհաւ Ռաժիկ, յազգէ, որ կոչի Միհրան. սա էր ի զինուորութեան ի Վրաց աշխարհին եւ յուսացեալ յԱստուած... եւ անուանեալ Գրիգորիոս, զոր Սուրբ Հոգին կարգեալ էր ի դասս զուարթնոցն: Այս երանելիս Գրիգորիոս բազում տանջանս կրեաց ի Վրաց մարզպանէն, որոյ անուն էր Երուանդ Վշնասպ»[58]: Գ. Տէր-Մկրտչեանը ասորական տարբերակի նկատմամբ իրաւացիօրէն առաւելութիւն է տալիս հայկական ձեռագրերում պահպանուած բնագրի որոշ մանրամասների, օր.՝ նոյն Մանաճիհր աշխարհիկ («հեթանոսական») անուանը, որը գրեթէ ժամանակակից (Զ դ. կէսի) հաստատում է գտնում «Գիրք Թղթոց»-ում պահպանուած Ներսէս Բագրեւանդացի կաթողիկոսի՝ հաւաստիութեան խնդրում կասկած չյարուցող փաստաթղթում[59]: Սակայն այդ վստահութիւնն, իհարկէ, ամենեւին չի տարածւում հայկական Յայսմաւուրքում յայտնուած տարբերակի վրայ, ուր Գրիգոր Պարսիկն անսպասելիօրէն ներկայացուած է որպէս Հայաստանում ապրած ու նահատակուած վկայ. «Յայսմ աւուր (2 Յունուար) վկայաբանութիւն սրբոյն Գրիգորի Պարսկին ի

58 **Գ. Տէր-Մկրտչեան**, *Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկ*, էջ 474:

59 *Գիրք թղթոց*, Թիֆլիս, 1901, էջ 72: Հմմտ. **Գ. Տէր-Մկրտչեան**, *Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկ*, էջ 471:

Հայս»: Հ. Մկրտիչ Աւգերեանը սրա հիման վրայ է իր կազմած ժողովածուում զետեղել «Սրբոյն Գրիգորիսի կամ Գրիգորի Պարսկի եւ որոց ընդ նմա ի Հայս» վերտառութեամբ կցկտուր եւ խառնակ ժամանակագրութեամբ մի վկայաբանութիւն[60], որի սկիզբն է. «Առաքինիս այս եւ ճգնաւոր նահատակ Քրիստոսի՝ էր հայրենեօք ի Պարսից աշխարհէն ի Ռաժիկ անուանեալ ազգէ, յաւուրս երեւելոյն Խոսրովու Պարսից արքայի՝ որդւոյ Կաւատայ. եւ կոչիւր յառաջ անուն նորա Մանաճիհր: Դէպ եղեւ սմա գալ պանդխտութեամբ յաշխարհս Հայոց եւ բնակել ի մայրաքաղաքն Դուին [այսպէ՛ս - Ա. Յ.]. ուր եւ վրայ հասեալ ճշմարտութեան Քրիստոսական հաւատոց՝ դարձաւ ի քրիստոնէութիւն. եւ ի մկրտութեան անուանեցաւ ի պատիւ Սրբոյն Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի՝ Գրիգոր կամ Գրիգորիս»: Գալուստ Տէր-Մկրտչեանն այս բնագիրն իրաւամբ համարում է՝ «հիմնուած լոկ միամիտ յաւելումների, խախուտ ընդհանրացումների եւ անփաստ ընդլայնումների վրայ»[61]:

Ինչեւէ, ասորական եւ հայկական տարբերակների որոշ նմանութիւններով հանդերձ, ակնյայտ են նաեւ էական տարբերութիւնները, որոնցից ամենամեծն այն է, որ ասորական աւանդոյթում ոչ միայն Գրիգոր Ռայացին (Ռաժիկը), այլեւ Յազդպանահը Հայաստանի ու Դուի-

60 *Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*, հտ. Ա, Վենետիկ-Ս.Ղազար, 1810, էջ 461-465:

61 **Գ. Տէր-Մկրտչեան**, *Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկ*, էջ 473:

նի հետ ոչ մի կապ չունեն: Երկուսն էլ նահատակուել են Միջագետքում Սասանեան արքայի բանակատեղիում, եւ երկուսն էլ թաղուել Մահոզէ դ՝ Բեթ-Արամայէ քաղաքում[62]*, այսինքն՝ Սելեւկիայում, որը Տիգրիսի վրայ կառուցուած Տիզբոնի աջափնեայ թաղամասն էր: Պարզ է, որ աւանդոյթներից որեւէ մէկն առաջ է եկել միւսի հիման վրայ՝ որոշ մանրամասների պահպանմամբ, բայց գաղափարական ու գրական-գեղարուեստական այլ յենքով: Ուստի եթէ հիմքում եղած համարուի ասորական նեստորական աւանդոյթը, ապա պատմական իրականութիւնից հեռու պէտք է դասուեն Յիզդբուզիդ-Աստուածատուրի վկայաբանութեան ոչ միայն «ծիծեռնավանեան» (իբրեւ վարկած վերականգնուող), այլեւ դուինեան դրուագները:*

Սակայն բնագրերի վերլուծութեան մէջ խորանալիս բաւականին ակնառու երեւում է աւելի բարդ պատկեր: Գրիգոր Պարսիկին *Հայաստանի հետ կապող յայսմաւուրքային պատմութեան տեղեկութիւններն իրօք չափազանց կցկտուր են ասորական բնագրի, նրա հայկական ճառընտիրային տարբերակի համեմատութեամբ եւ ընդհանրապէս: Երեւում է, որ տուեալ բնագրի ստեղծման միակ լուրջ հիմքը եղել է Հայոց կաթողիկոս Ներսէս Բ Բագրեւանդա-*

62 Հմմտ. **J. Labourt**, *Le christianisme dans l'empire Perse sous la dynastie Sassanide (224-632)*, Deuxième édition, Paris, 1904, էջ 178-180: Ի տարբերութիւն Գրիգոր Ռէյացու եւ Յազդպանահի՝ հեղինակը չի ճանաչում Դուինում նահատակուած Յիզդբուզիդին:

ցու (548-557 թթ.) «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս» փաստաթղթում Դուինում կամ նրա մերձակայքում Գրիգոր Մանաճիհր Ռաժիկի *անունով վանքի յիշատակութեան առիթով արուած խօսքը («Եւ ի տասն եւ յեւթներորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի մարզպանութեան Նիհորականայ, արարին [Դուինի նեստորականները - Ա. Յ.] իւրն չինած յանուն Մա-*նաճիհրի Ռաժկի, որ հաւատացեալ ի Քրիստոս եւ մկրտեալ անուանեցաւ Գրիգոր, եւ սպանաւ վասն նորին հաւատոյ, *եւ ապա անուանեցին զնա [այդ «չինածը» - Ա. Յ.] տեղի ժողովոյ պղծութեան իւրեանց»)*[63]*. դրան վարքագիր հեղինակն աւելացրել է ընդամենը ուշ շրջանի խառնակ ժամանակագրական եւ այլազան պատկերացումների վրայ յենուած, նովելային տարրերով հարուստ սեփական շարադրանքը: Այնինչ, միեւնոյն ժամանակ, գրեթէ հակառակ պատկերն է* Յիզդբուզիդի *դէպքում:* Յազդպանահի վկայաբանութեան *ասորական բնագիրը, ի տարբերութիւն Գրիգոր-Պիրանգուշնասպի վկայաբանութեան, աւելի շատ վիպական նովելային ու դաւանաբանական քարոզային հատուածներ է պարունակում, քան պատմական տեղեկութիւններ, եւ, ինչպէս նկատեցինք վերեւում, անընդհատ յղումներ է կատարում Գրիգոր Ռաժիկի հաւատի պատմութեանը*[64]*: Յենուելով այս գիտ-*

63 *Գիրք թղթոց*, էջ 72. Նորայր եպ. Պողարեանի աշխատասիրած երկրորդ հրատարակութիւնում (Երուսաղէմ, 1994)՝ էջ 200:

64 Տե՛ս ծնթ. 55-ին յաջորդող կտորում. «...Յազդպանահը

արկման վրայ՝ երկրորդ դէպքում՝ Յիզդբուզիդ-Յազդպանահի *պարագայում, աւելի արդարացուած է թւում արձանագրել, որ մեծ հաւանականութեամբ տեղի է ունեցել հէնց հայկական հողի վրայ ծնուած ու որոշակիօրէն պատմական իրականութեան վրայ հիմնուած աւանդոյթի վերամշակում Հայաստանից դուրս՝ նեստորական միջավայրում: Յաւելենք, որ Յիզդբուզիդի՝ Միւնիքում ուսանելու եւ Դուինում նահատակուելու տարբերակի հաւաստիութեան օգտին ուշագրաւ փաստարկներ է բերում նաեւ Պօլ Պեետերսը (բայց ինչ-որ պատճառով չանդրադառնալով Յազդպանահի պարագային)*[65]*:*

Բոլոր դէպքերում, վերջնական եզրակացութիւնները թողնելով ասորագէտների մանրամասն հետազօտութիւններին՝ մենք կարող ենք բաւարարուել այն ամփոփումով, որ Հայոց մտածողութեան մէջ խոր արմատներ ձգած Յիզդբուզիդ-Աստուածատուր նահատակի պաշտամունքը չափազանց հարազատ է եղել Միւնիքում, եւ ինչ-ինչ հիմքեր կան՝ գոնէ իբրեւ վարկած ենթադրելու, որ Դուինում թաղուած նրան վերագրուող մասունքները Թ դ. վերջի աւերիչ երկրաշարժից յետոյ տեղափոխուել են հէնց Ծիծեռնավանք[66]*:*

շղթայակապ է արտում եւ պահում հինգ տարի մինչեւ *Գրիգորի* նահատակութիւնը», «…իսկ հակառակ դէպքում արժանացնել *Գրիգորի* ճակատագրին», «…եւ թաղում *տէր Գրիգորի* կողքին»:

65 **P. Peeters**, *Une légende Syriaque de S. Iazdbozid*, էջ 17-21:

66 [Հնագիտական ու մարդաբանական ուսումնասիրու-

* * *

Ներկայ յօդուածի շրջանակներում հնարաւոր ենք համարում անդրադառնալ նաեւ Ծիծեռնավանքի եկեղեցու կառուցման ու վերակառուցումների փուլերին եւ դրանց ժամանակի պարզաբանմանը: Այդ հնարաւորութիւնն առաջացել է Հայկական յուշարձանների համահաւաքի խմբագրութեան՝ Յակոբ Սիմոնեանի եւ Յովհ. Սանամեանի գլխաւորած ճարտարապետա-հնագիտական արշաւախմբի եռամեայ ջանադիր հետազօտութիւնների շնորհիւ: Այսօր, փաստօրէն, էապէս փոխուել են տասնամեակներ շարունակ գիտական շրջանառութեան մէջ եղած՝ Մորուս Հասրաթեանի նախնական հայեցիկ պատկերացումները[67]*, ինչը պահանջում*

թիւնների եւ Ծիծեռնավանքի բակի կառուցապատման աշխատանքների աւարտից յետոյ Աստուածատուր նահատակի մասունքների վերաթաղման արարողութիւնը նոյն գերեզմանում (յատուկ պատրաստուած տապանակի մէջ) կատարուեց 2002 թ. Սեպտեմբերի վերջին (Սուրբ Գէորգի տօնին) Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի Քաշաթաղի շրջանի հոգեւոր հովիւ Հ. Աթանաս վրդ. Մովսիսեանի կողմից - *հեղ., 2009*]:

67 Նշուած նախնական պատկերացումների մասին տե՛ս **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 225-232; **Ա. Սահինեան**, *Քասաղի բազիլիկայի ճարտարապետութիւնը*, Եր., 1955, էջ 116; **Վ. Յարութիւնեան**, *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն*, Եր., 1992, էջ 114-115; **P. Cuneo**, *La basilique de Tsitsernakavank (Cicernakavank) dans le Karabagh*, - …Revue des études Arméniennes", NS, t. IV, Paris, 1967, էջ 203-216; **F. Gandolfo**, *Le basiliche Armene. IV-VII secolo*, Roma, 1982, էջ 85-95; **M. Асратян**, *Армянская архитектура раннего христианства*, էջ 17-18: [Իսկ նմանատիպ լայն քննարկման

է նոր ու հնարաւորինս լայն քննարկում եւ արդիւնքների ամփոփում: Միեւնոյն ժամանակ, Յ. Սիմոնեանը եւ Յովհ. Սանամեանը առաջ են քաշել մի վարկած, ըստ որի Ծիծեռնավանքի եկեղեցու առաջին կառուցողական փուլը նախորդել է Հայաստանում որպէս պետական կրօն քրիստոնէութեան ընդունմանը Դ դ. սկզբին: Հեղինակների կողմից բերւում են ինչ-ինչ ուշադրութեան արժանի փաստարկներ, այդ թւում հնագիտական ու մարդաբանական, որոնցից իւրաքանչիւրն, իհարկէ, կարող է գիտական հետաքրքրաշարժ քննարկումների ու բանավէճի առարկայ դառնալ: Սակայն դրա կողքին եւ գուցէ դրանից առաջ, մեր կարծիքով, կարեւոր է փորձել նորայայտ փաստերը հիմնաւորապէս դիտարկել վաղմիջնադարեան ճարտարապետութեան ընդունուած դասակարգման անվիճելի շրջանակներում: Ներքոշարադրեալն անհրաժեշտ է հէնց այդպիսի

ու արդիւնքների ամփոփման պատեհ առիթ եղաւ 2002 թ. Նոյեմբերի 10-ին Ծիծեռնավանքի ԺԷ դարի սեղանատան վերականգնման եւ իբրեւ Բերձորի երկրագիտական թանգարանի մասնաճիւղ բացման առիթով հէնց տեղում կազմակերպուած մէկօրեայ գիտաժողովը, որին սիրալիրաբար իրենց մասնակցութիւնը բերեցին ճարտարապետութեան եւ արուեստի պատմութեան բազմաթիւ մասնագէտներ՝ երջանկայիշատակ ակադ. Վարազդատ Յարութիւնեանը, Գրիգոր Գրիգորեանը, Յակոբ Սիմոնեանը, Կորիւն Ղաֆադարեանը, Միշա Յակոբեանը, Վլադ. Ծաղարեանը, Ալիկ Մկրտչեանը, Յովհ. Սանամեանը, Սլաւա Սարգսեանը, Սամուէլ Կարապետեանը, ինչպէս նաեւ հեռակայ՝ Արմէն Ղազարեանը եւ Նիկոլայ Քոթանջեանը – *հեղ., 2009*]:

փորձ դիտել՝ առանց ճարտարապետական վերլուծութեան որեւէ չափով ամբողջականութեան յաւակնութեան:

Ենթադրական I փուլ (Դ դարի առաջին կէս)

Ծիծեռնավանքի պատերի առաջին 7–9 շարքերը կառուցուած են բազալտեայ սրբատաշ չորսուածեւ քարերով՝ 2-6 շարք կոպտատաշ քարից որմնախարիսխների վրայ (ներսանեայ խորանի եւ զոյգ աւանդատների պատերը): Ժամանակին Մորուս Հասրաթեանը եկեղեցու յատակագծային բազալտեայ մասը երկու տարբեր փուլերի արդիւնք է համարել. իբրեւ թէ՝ սկզբնապէս հիմնադրուել է «հեթանոսական մեհեանի»՝ արեւելք-արեւմուտք ձգուածութեամբ մի ուղղանկիւն շէնք (որի արեւմտեան մասում պիտի լինէր կրակարանը), որը յետոյ շարունակել են իբրեւ եկեղեցի՝ արեւելեան մասում հպուած վիճակով խորանի ու աւանդատների պատեր յաւելելով[68]*: Սակայն 1999 թ. Յակոբ Սիմոնեանը եւ Յովհ. Սանամեանը նախ ճշտեցին հպուած պատերի բացակայութիւնը, ապա պեղեցին աւանդատների յատակները մինչեւ ժայռը եւ բացայայտեցին, որ հէնց ժայռի վրայ միաժամանակ յատակագծուել են ե՛ւ*

68 Մ. Հասրաթեան, նշ. աշխ., էջ 229, 237-238: Այս վարկածը պէտք է ի սկզբանէ թէական համարուէր, քանի որ հեթանոսական մեհեանի համար արեւելք-արեւմուտք ձգուածութիւնն ընդունուած չէ: Օրինակ, Գառնիում մեհեանն ուղղուած է հիւսիս-հարաւ, եւ կրակարանն էլ հարաւում է:

արեւելեան պատի, ե՛ւ խորանի երկայնական պատերի որմնախարիսխների հիմքերը[69]*: Այդպէս երեւաց, որ Ծիծեռնավանքի տաճարն ի սկզբանէ նախագծուել է որպէս եկեղեցի:*

Տաճարի յատակագիծն ընդհանուր առմամբ նման է հայկական ամենավաղ շրջանի բազիլիկ եկեղեցիներին. ճշգրիտ չափերն են՝ 12,55x25,52 մ (էջ 205): Ճարտարապետը շինութեան յատակին թեքութիւն է տուել (գրեթէ չխախտելով ժայռի բնական թեքութիւնը), որը աղօթարահի հատուածում կազմում է 40 սմ: Որմնախարսխի քարերը եւ սրբատաշ 2 շարքերը արեւմուտքից դէպի արեւելք շարուած են համապատասխան թեքութեամբ՝ անընդհատ մօտենալով հորիզոնական գծին, որին հասել են երրորդ շարքում (էջ 210-211): Արեւելեան ճակատի տակ, խորանի եւ զոյգ աւանդատների հատուածում որմնախարսխի ամենաբարձր հատուածն է՝ 6 շարքով, որը դէպի հարաւ շարունակւում է նաեւ պատից դուրս՝ 5 մ[70]*: Հարաւային ճակատի երեք դռներից երկուսը՝ արեւելեանը եւ կենտրոնականը, տեղադրուած են այդ պատի մօտաւորապէս 1/3 առանցքների վրայ, ինչպէս Քասաղի, Եղվարդի բազիլիկաներում*

69 Տե՛ս **Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան**, նշ. աշխ., էջ 206: Այսուհետեւ «Հայոց սրբերը եւ սրբավայրերը» ժողովածոյի (Եր., 2001) այս յօդուածի էջերը յղում ենք տեքստում, առանց այլ նշումի:

70 Մանրամասն խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Գէորգի (Մենուշ) Առաքելեանին:

են: Եկեղեցու չորրորդ դուռը հիւսիսային ճակատին է եւ դրուած է մօտաւորապէս հարաւային պատի կենտրոնական դռան առանցքով:

Մորուս Հասրաթեանն առաջինն է նկատել «արեւմտեան» դռան անսովոր տեղը՝ արեւմտեանի փոխարէն հարաւային ճակատում: Սակայն նա համարել է, որ դրա պատճառը արեւմուտքում տեղանքի անյարմարութիւնը չէ, եւ դրա մէջ տեսել է «հեթանոսական մեհեանի» մի նշան եւս: Այնինչ պեղումները բացեցին դրսից արեւմտեան պատի ներքեւի երկու շարքերի մէջ մտնող հսկայ ժայռի ուրուագիծը (կենտրոնից քիչ հարաւ), եւ ակնյայտ դարձաւ, որ դուռը արեւմտեան պատի կենտրոնի փոխարէն հարաւային պատի արեւմտեան մասում տեղադրելու պատճառը հէնց այդ խոչընդոտն է եղել: Դրանով պարզուեց նաեւ, թէ ինչու է արեւմտեան պատն աւելի հաստ՝ 150 սմ, այլ ոչ թէ 125, ինչպէս մնացած երեքն են: Ըստ երեւոյթին, ճարտարապետն այդ պատի դրսի շարքի քարերը հիւսիս-արեւմտեան անկիւնի որմնախարսխի կողմից կիսով չափ շարելուց յետոյ է միայն նկատել, որ ժայռը քերելն անհնար է, ուստի վերջինիս մի կտորը ստիպուած է եղել թողնել դէպի ներս 25 սմ-ով հաստացուած պատի լայնութեան մէջ, իսկ «արեւմտեան» շաբլոնային դուռն էլ տեղադրել է հարաւային պատի արեւմտեան ծայրին (իրօք, բոլոր համաչափութիւններից դուրս, անմիջապէս արեւմտեան պատին հպուած):

Դժուար է լրիւ ճշգրտութեամբ որոշել, թէ ինչ բարձրութիւն եւ ինչպիսի տանիք է ունեցել Մրծեռնավանքի եկեղեցին I փուլում: Յովհ. Սանամեանը հաւանական է համարում, որ պատերը բարձր են եղել պահպանուած բազալտեայ հատուածից մի քանի շարք. դռների համաչափութիւններից ելնելով՝ տանիքը եղել է փայտեայ եւ երկթեք՝ ներսում յենուելով երկու զոյգ փայտեայ սիւների վրայ (այդպիսով՝ լինելով եռանաւ), որոնք դրուած են եղել քարէ սիւնախարիսխներին: Եկեղեցու բակում ընկած երկու հսկա միակտոր սիւնախարիսխները, հաւանաբար, հէնց դրուած են եղել առաջին փուլի փայտեայ սիւների տակ:

Հնագէտների խումբը պեղեց նաեւ մեզ հասած միջին բարձրութեան խորանը եւ նրա տակ յայտնաբերեց հերթական եզակի գտածոն՝ եկեղեցու առաջին բեմի ճակատը եւ յատակը: Պարզուեց, որ I փուլում բեմի ճակատն ունեցել է միայն մէկ շարքի բարձրութիւն եւ շարուել է կոպտատաշ քարերով (որմնախարիսխների քարերին շատ նման), իսկ բեմի յատակը եղել է կաւաշաղախ: Ճակատի առջեւ ուշ շրջանի կոպիտ սալայատակի տակ յայտնաբերուեց նաեւ աղօթարահի հաստ կաւահունց յատակի մի ամբողջ շերտ (էջ 208): Խորանից 1,5 մ հեռաւորութեան վրայ, նշուած կաւահունց յատակի մէջ թաղուած էր միջին չափի հնամենի կարասի ստորին մասը: Ըստ Յակոբ Սիմոնեանի՝ դա ցոյց է տալիս, որ ամենավաղ շրջանում եկեղեցական արարողութիւնների ժամանակ օգտագործուած գինին պահուել է ոչ թէ սկիհի, այլ նմանատիպ կարասի մէջ:

Առաջին փուլի պատերի վրայ զարդանախշեր չկան՝ բացառութեամբ 3 հատ շրջանագծի մէջ առնուած հաւասարաթեւ խաչերի, որոնք փորագրուած են հարաւային պատի երկու դռների հսկայական միակտոր բարաւորների (արխիտրաւ) կենտրոններում (արեւելեանի վրայ՝ արտաքուստ, կենտրոնականի վրայ՝ երկու կողմից): Բոլոր 4 դռների բարաւորները դրուած են անտիկ շինարարական աւանդոյթից եկող կալունակների (կրոնշտեյն) վրայ, որպիսիք բացի Մրծեռնավանքից կան նաեւ Տեղ գիւղի միանաւ բազիլիկ եկեղեցու հարաւային դռան վրայ (էջ 206)[71]:

Առաջին փուլի բազալտեայ պատերը շարուած են անտիկ դարաշրջանի եւ վաղսասանեան ժամանակների շինարարական տեխնիկային բնորոշ կաւաշաղախի օգտագործումով չորսուաձեւ քարերի միջեւ: Ընդունուած է համարել, որ Հայաստանում կրաշաղախի լայն կիրառումն սկսուել է Դ դ. կէսերից (առաջին յայտնի կառոյցը Աղցքի արքայական դամբարանն է՝ հիմնադրուած հաստատապէս 361 թ.)[72]: Ըստ այդմ Մրծեռնավանքի տաճարի հիմնադրումը

71 Հմմտ. Մ. Հասրաթեան, *Տեղ գիւղի միջնադարեան յուշարձանները* (հեղինակի նոյն ժողովածոյում, էջ 242): Դրա փոխարէն Քասաղի, Տեկորի, Երերոյքի բազիլիկաների դռները շքամուտքեր ունեն:

72 Վ. Յարութիւնեան, *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն*, էջ 104:

(շինարարական I փուլը) մեծ որոշակիութեամբ թուագրւում է դրան նախորդած ժամանակով, այսինքն՝ մօտաւորապէս Դ դ առաջին կէսով:

Եւ մի վերջին դիտարկում: Վերականգնողական աշխատանքների ժամանակ, տանիքի կենտրոնական լանջերի կղմինդրը դնելուց եւ ուղիղ գիծ ստանալուց յետոյ նկատուեց, որ եկեղեցու առանցքը դէպի արեւմուտք ճշգրիտ նայում է «յետեւի» լեռան լանջին բարձրացող մի հսկայական ժայռի, որի ուրուագիծը երեւում է երկնքի ֆոնի վրայ: Ստուգումից պարզուեց նաեւ, որ ժայռի վեղարի կենտրոնում գտնուող ձագարաձեւ ճեղքուածքում, վաղնջական մոխրի հետքերով հողի մէջ մի հազարամեայ գիհի է աճում: Դրանից ծագեց այն ենթադրութիւնը, թէ, ամենայն հաւանականութեամբ, հէնց այդ «օջախագագաթ» ժայռն էլ եղել է հեթանոսական շրջանում պաշտամունքի առարկայ «Ագռաւաքարը»[73]: Իսկ դա նշանակում է, որ պաշտօնական քրիստոնէութեան արշալոյսին «Սուրբ Գէորգ անուանագրեալ» եկեղեցու կառուցումը ձեռնարկած յիրաւի նորահաւատ ծիծեռնավանցիները յատակագծել են այն ոչ այլ կերպ, քան իրենց հինաւուրց ուխտատեղիի «տակ»:

Շինարարական II փուլ (Ե դարի կէս)

Երկրորդ շինարարական փուլի գլխաւոր խնդիրն է եղել՝ բարձրացնել պատերը եւ աւելի լուսաւոր դարձած եկեղեցին ծածկել արդէն քառալանջ տանիքի տակ: Այս փուլին են պատկանում I շինարարական փուլի բազալտեայ շարքերի վրայ բարձրացող սպիտակաւուն ֆելզիտատուֆի քարից (ժամանակի ընթացքում արտաքինից բաց դեղնաւուն երանգ ստացած)[74] պատերը: Դրանց մէջ չորսական մեծ լուսամուտներ կան հարաւային ու հիւսիսային ճակատներում, բարձր կրկնալուսամուտներ (ինչպէս Լեռնակերտում, Փարպիում եւ Աշտարակում)՝ արեւմտեան ու արեւելեան ճակատներում, ինչպէս նաեւ 6 աւելի փոքր լուսամուտներ, երկուսը՝ արեւմտեան, չորսը՝ արեւելեան ճակատում: Բոլոր պատուհանները «երկարուկ, դէպի ներս լայնացող բացուածքներ են, որոնք աւարտւում են պայտաձեւ կամարներով» (էջ 206): Կիսաշրջանաձեւ մի բացուածք կայ արեւելեան ճակատում՝ կրկնալուսամուտների առանցքով դէպի վեր:

Երկրորդ փուլում են կառուցուած Ծիծեռնավանքի խորանի ու աւանդատների՝ մեզ անխաթար հասած թաղերը եւ նրանցից վեր խորանի «երկրորդ յարկի» պատշգամբն ու աւանդատների «երկրորդ յարկի» ուղղանկիւն յատակագծով զոյգ «գաղտնասենեակները»: Աւելի վեր, եկեղեցու՝ արդէն քառալանջ դարձած տանիքից պահպանուել եւ այսօր առկայ են

73 Հմմտ. վերեւում, ծնթ. 11-12:

74 Այդ քարի հանքը Ծիծեռնավանքի դիմացի լանջին է՝ Հոչանց լեռը բարձրացող ճանապարհով 0,5 կմ հեռաւորութեան վրայ: Նոյն հանքի քարն օգտագործուեց նաեւ վերականգնողների կողմից:

միայն խորանի ու աւանդատների «երկրորդ յարկի» նշուած երեք սենեակները ծածկող քարէ թաղերը: Աղօթասրահի վերեւում բարձրացող տանիքն ամբողջութեամբ փոխուել է յաջորդ՝ III փուլում, որի պատճառով այն աւելի ցածր է խորանի վերեւում բարձրացող հատուածից 25-40 սմ (էջ 206): Մորուս Հասրաթեանը «արեւմտեան» տիպի յօրինուածք է անուանում, երբ «գլխաւոր նաւը արտաքուստ չեշտւում է շէնքի ծաւալում»[75]: Տեղին նշենք, որ հնարաւոր չէ համաձայնել նրա յաջորդ պնդման հետ, ըստ որի՝ «մեզ հասած հայկական միւս եռանաւ բազիլիկաները պատկանում են «արեւելեան» տիպին, որի միջին նաւը միւսների հետ գտնւում է ընդհանուր երկթեք ծածկի տակ»[76]: Ըստ վերակազմութիւնների՝ քառալանջ են եղել մեզ հասած Երէրոյքի, Աշտարակի (Ծիրանաւոր), Դուինի, Օձունի, Տեկորի եռանաւ բազիլիկաները, ինչպէս նաեւ, հակառակ Ալ. Սահինեանի բերած ապացոյցների՝ Քասաղի բազիլիկան[77]: Ինչպէս նշեցինք, ըստ Յովհ. Սանամեանի՝ թերեւս, երկթեք ծածկի տակ «արեւելեան» տիպի մեզ չհասած տանիք է ունեցել Ծիծեռնավանքի I փուլի եկեղեցին:

75 **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 225: Հմմտ. **P. Cuneo**, նշ. աշխ., էջ 205-206:

76 **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 225:

77 Տե՛ս. օր.՝ **А. Казарян**, *Архитектура Армении V-VI веков и раннехристианское зодчество Каппадокии, Киликии и Исаврии*. - «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը», էջ 244, 264, ծնթ. 37: Հմմտ. **Ա. Սահինեան**, նշ. աշխ., էջ 63-87, 125-188:

Այս փուլում եւս առանց լուսամուտի թողնուած խորանի գմբեթարդը եւ դէպի աղօթասրահ կամարակապ բացուածքը չեշտուած պայտաձեւութիւն ունեն (էջ 206): Խորանի ճակատի երկու կողմերում եւ եկեղեցու արեւմտեան պատին Յովհ. Սանամեանն առաջին անգամ նկատեց համեմատաբար նեղ որմնամոյթերի առկայութիւնը, որոնք ներքեւում հպւում են բազալտեայ շարքերին, իսկ վերեւում մտնում II փուլի պատերի շարուածքի մէջ: Դրանք համադրելով հարաւային եւ հիւսիսային պատերի չորսական լուսամուտների համաչափութեան հետ՝ ճարտարապետն ի յայտ բերեց Մորուս Հասրաթեանի կողմից չնկատուած այն փաստը, որ աղօթասրահի ներկայ 4 զոյգ մոյթերի եւ 5 զոյգ կամարների փոխարէն եկեղեցու տանիքը սկզբնապէս (այս II փուլում) յենուած է եղել վերը նշուած նեղ որմնամոյթերի, 3 զոյգ բարակ մոյթերի եւ 4 զոյգ կամարների վրայ բարձրացող կենտրոնական նաւի՝ այսօրուանից աւելի բարակ երկայնական պատերի վրայ: Հարաւային ու հիւսիսային պատերի լուսամուտները դէպի ներս են բացուել հէնց այդ չորս զոյգ կամարների առանցքներով:

Աղօթասրահի մասում II փուլի առաստաղը, հաւանաբար, կառուցուած է եղել փայտեայ ֆերմաներից (էջ 208), իսկ ամբողջ տանիքը եղել է կղմինդրածածկ: Պեղումներից գտնուած հարթ, այսպէս կոչուած «մարսէլեան» տիպին նմանուող կղմինդրի կտորները (տափակ հատ «առուակներ», երկու կողքից եզրաններով՝ ի-

բար ամրանալու համար)[78]*, թերեւս, հէնց այդ տանիքին են վերաբերում: Հաւանաբար, II փուլի արտաքին քիւի մնացորդն է գտնուել վերականգնողական աշխատանքների ժամանակ (կենտրոնական նաւի հիւսիսային պատի փոքր լուսամուտի՝ ուշ շրջանում փոխուած պարակալի տեղում). դա ատամնաքիւ է, որի ատամիկների (սուխարիկներ) չափերը չեն համընկնում շինարարական III եւ IV փուլերի մոյթերի ատամնաքիւերի չափերի հետ:*

Հայ ճարտարապետութեան մէջ իբրեւ եզակի նմուշ պահպանուած՝ Ծիծեռնավանքի եկեղեցու խորանի վերեւում գտնուող պատշգամբը (ըստ Մորուս Հասրաթեանի՝ վերնայարկ-անտրեսոլ) դէպի աղօթասրահ է ուղղուած «պարզ խարիխներ եւ խոյակներ ունեցող երկու սիւների վրայ յենուած երեք կամարակապ բացուածքներով» (էջ 206): Նրա գործառական նշանակութեան մասին աւելի հաւանական ենք համարում Մորուս Հասրաթեանի կարծիքը, ըստ որի՝ «վերնայարկը ունի հիմնականում գեղագիտական նշանակութիւն»՝ որպէս լոյսի աղբիւր երկրորդական դեր խաղալով: Գիտնականն աւելացնում է. «Կարելի է ենթադրել, որ կամարների միջեւ կանգնեցուած են եղել ազատ թեւերով քարէ խաչեր, որոնք կամարակապ բացուածքների լուսաւոր ֆոնի վրայ երեւացել են իրենց ուրուանկարով (նման տպաւո-

78 Խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Միքայէլ Համամչեանին:

րից ձեւաւորում է ունեցել Սիւնիքի մի այլ հնագոյն կոթող՝ Աղուդիի VI դարի մահարձանի եռակամար բացուածքով վերին մասը, որի խաչի բեկորները մինչեւ վերջերս գտնուելիս են եղել Սիսիանի տաճարում)»[79]*: Աւելացնենք, որ «երկրորդ յարկի» 3 սենեակներն իրար հետ հաղորդակցւում են փոքր, աւելի շատ պատուհանի նմանուող ուղղանկիւն բացուածքներով, իսկ ներքեւից մուտքը, հաւանաբար, իրականացուել է շարժական աստիճանով՝ հարաւային սենեակի ճակատին բացուած նոյնատիպ մուտք-պատուհանից (հիւսիսային սենեակի՝ դէպի աղօթասրահ ուղղուած պատը որեւէ բացուածք չունի): Ուշագրաւ է նաեւ այն կառուցողական հնարքը, որ «երկրորդ յարկի» յատակի նիշում բոլոր 3 սենեակների պատերի պարագծով երկու կողմից տեղադրուած են մեզ հասած եզակի, չորսուաձեւ կտրուածքով գերաններ, «որոնք, անկասկած, հակասեյսմիկ նշանակութիւն են ունեցել» (էջ 206):*

Երկրորդ փուլում եկեղեցու եւ խորանի յատակը, հաւանաբար, նոյնութեամբ պահպանել է I փուլի կաւածեփը: Յամենայն դէպս, որեւէ այլ յատակի նշան մասնագէտները չեն յայտնաբերել: Սակայն պատերը եւ թաղերը կառուցուել են կրաշաղախի օգտագործումով: Բացի այդ, ներքուստ բոլոր պատերը սուաղուել են շատ բարձրորակ կրասուաղով, որի մեծ մասը պահպանուել է մէկուկէս հազարամեակ եւ հա-

79 Մ. Հասրաթեան, նշ. աշխ., էջ 226:

սել մեզ (գլխաւորապէս՝ ֆելզիտատուֆի հատուածներում, բայց տեղ-տեղ՝ նաեւ բազալտեայ շարքերի վրայ): Հաւանաբար, պատերի սուաղումը ինչ-որ ժամանակով յաջորդել է II փուլի բուն շինարարութեանը, քանի որ երկու տեղում սուաղով են ծածկուել այդ փուլի զարդանախշուած քարերը (տե՛ս ստորեւ): Բոլոր դէպքերում, սակայն, պատերի սուաղումը կատարուել է մինչեւ III փուլը, քանի որ վերջինիս ընթացքում կառուցուած որմնամոյթերն ու կամարների վերեւի երկայնական պատերը II փուլի պատերի վրայի սուաղին են հպուած: Արեւմտեան պատի կենտրոնական նաւի հատուածի սուաղը ներկուած է բարձրորակ դեղնադարչնագոյն ներկով, իսկ հիւսիսային պատի արեւելեան կողմի երկու հատուածում պահպանուել են հնագոյն որմնանկարների մնացորդներ: Դրանցից մէկի վրայ ուրուագծւում են երկու կամ երեք սրբերի (ամբողջ հասակով) պատկերները:

Հարաւային աւանդատան արեւելեան մասում մի լայնակի շերտով սուաղը բացակայում է, եւ երեւում են ինչ-որ ժամանակ կառուցուած, իսկ հետագայում հանուած որմնասիւների ու կամարի հետքեր: Դրանք դրուել են սուաղումից առաջ, բայց՝ II փուլի բուն շինարարութիւնից յետոյ, քանի որ հպուել են պատերին: Յակոբ Սիմոնեանը եւ Յովհ. Սանամեանը ենթադրում են, որ այդպիսի կամարով աւանդատան մէջ մի երկրորդ խորան է առանձնացուել, որպիսիք «յայտնի են Արցախի միջնադարեան փոքրածաւալ միանաւ եկեղեցիներում» (էջ 209): Հարաւային այդ «խորանի» թաղի սուաղի վրայ հրեշտակի որմնանկար է պահպանուել: Ծիծեռնավանքի իրենց հնութեամբ եւ թուագրման հնարաւորութեամբ փաստօրէն բացառիկ որմնանկարները, ցաւօք, դեռեւս հիմնաւոր կերպով ուսումնասիրուած չեն:

II փուլի պատերի վրայ քանդակուած զարդանախշերը քիչ են, սակայն՝ չափազանց արտայայտիչ: Արեւմտեան պատին եւ խորանի ճակատին յենուած «նեղ» որմնամոյթերի վրայի 4 խոյակները պարզ քիւեր ունեն (հորիզոնական սալեր՝ դէպի ներքեւ մոյթին կորագիծ ձուլուող) եւ զարդանախշեր չեն կրում: Կրկնաճառագայթներով 4 մասի բաժանուած ուղղանկիւններից եւ 6 մասի բաժանուած շրջանագծերից բաղկացած նուրբ զարդանախշ են կրում խորանի գմբեթարդի ճակատային պայտաձեւ կամարից («յաղթակամար») դէպի խորանի ներս դուրս եկող երկու բացառիկ որմնախոյակները (իմպոստներ), որոնց վրայ զարմանալիօրէն սուաղի կտորներ են պահպանուել: Գուցէ II փուլի չպահպանուած 6 մոյթերից մէկի վրայ է դրուած եղել պեղումներից յայտնաբերուած այն խոյակի նմանուող քարը, որը պարզ քիւի տակ մի գլանակազարդ եւ ակոսիկ ունի, թէպէտ հնարաւոր է նաեւ, որ դա լինի II կամ III փուլի Սուրբ սեղանի հորիզոնական քարի ջարդուած կտորը (այն ոչ միայն սրբատաշ մշակուած է 3 կողմերից ու վերեւից, այլեւ որոշ մշակուածութիւն ունի տակի մասում, այն

էլ՝ փոքր ուռուցիկութեամբ եւ առանց կրաջրի հետքերի): Հիմնական զարդանախշերը արտաքին պատերի վրայ առկայ կրկնաշրջանագծի մէջ առնուած 9 հաւասարաթեւ խաչերն են (վեցը՝ հարաւային, երկուսը՝ հիւսիսային, մէկը՝ արեւելեան պատին)[80] եւ բոլոր մեծ լուսամուտների պսակազարդերը՝ շախմատաձեւ դասաւորութեամբ ատամնաւոր, տրամատաւոր եւ գծային նախշերով: Ընդ որում հարաւային եւ հիւսիսային ճակատների լուսամուտների վերեւում դրանք պատի հարթութիւնից դուրս եկող կիսաշրջանաձեւ միակտոր պարակալների վրայ են (էջ 206), որոնք, ցաւօք, մեզ հասել են բաւականին հողմնահարուած վիճակում:

Ծիծեռնավանքի շինարարական II փուլի ժամանակը որոշելու հնարաւորութիւն է առաջանում խորանի վերեւի «երկրորդ յարկի»՝ պատշգամբի կամ անտրեսոլի եւ Վայոց ձոր գաւառում, Եղեգիսի ու Արփայի գետախառնուրդի մօտ Վարդանանց պատերազմի նահատակների մասունքների վրայ Գիւտ Արահեզացի կաթողիկոսի (461-478 թթ.) 9-րդ տարում կառուցուած մի եկեղեցու սիւնազարդ վերնայարկի համադրման շնորհիւ: Մեզ չհասած այդ եկեղեցին Մորուս Հասրաթեանը կոչում է «Սրկղօնքի»[81], սակայն պէտք է նկատել, որ պատմիչը չի տալիս տուեալ վայրի անունը («...հասեալ ի գաւառամէջն Վայոց ձորոյ մերձ ի բլուրն, որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան ի գետամիջին Եղեգեաց եւ Մոզան [=Արփայի], ...կոտորեցին զբազումս... Իսկ զառաջին սուրբսն, որ կատարեցան առ բլրաւն՝ ի ժամուն ամփոփեցին քրիստոնեայք»)[82]: Սրկղօնքի մասին պատմիչը գրում է միայն, որ մինչեւ այդ անունով կոչուած լեռնակողմն ընկած տարածքն ընծայուեց եկեղեցուն. «Եւ վայրն ամենայն ի մեծ գետոյն մինչեւ ի վեր ի լեռնակողմն՝ որ Սրկղօնք կոչի, ընծայեցաւ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյ պաշտօնէիցն»[83]: Վայոց ձորի գիւղացանկում առկայ է Սարկողվք գիւղանունը՝ 20 միաւոր մեծ հարկաչափով[84], որը, հաւանաբար, Սրկղօնք անուան մի ձեւն է[85]: Սիւնեաց պատմիչի օրերում եկեղեցու տեղը կոչւում էր Խստորալեզ (տարբ. Խոտորալեզ, որը պէտք է գրչական վրիպակ համարել).

80 Պէտք է նշել, որ այս փուլի՝ կրկնաշրջանագծի մէջ առնուած խաչերը (երկուսը՝ ներքեւից ընդգրկուած արմաւենու տերեւների մէջ) ամենից աւելի նրբագեղներից են վաղմիջնադարեան նմանատիպ զարդանախշերի շարքում: Հմմտ. Մուրադ Հասրաթեանի վերը նշուած ռուսերէն մենագրութեան աղիւսակները:

81 **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 228:

82 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԺԸ, էջ 49, 51:

83 Նոյն տեղում, էջ 51: Ձեռագրերից մէկը տալիս է *Կղօնք* տարընթերցումը, որը պէտք է գրչական վրիպակ համարել, քանի որ տեղանունը *Սրկղունք* ձեւով («ի Սրկղունս») յիշատակուած է Ցաղաց քարի վանքի մի արձանագրութեան մէջ. տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. III, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1967, էջ 143, N 435:

84 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 373:

85 Հմմտ. *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 4, Եր., 1998, էջ 541, 693:

«Բայց այժմ յետ աւերման տեղւոյն՝ եղեւ չինանիստ գեղջկաց, եւ կոչեցաւ տեղին Խստորալեզ»[86]*: Վերջին անունը բացակայում է Վայոց ձորի գիւղացանկում, սակայն յիշատակուած է Թանահատի եւ Սպիտակաւոր Աստուածածնի վանքերի 4 վիմագրերում, ընդ որում նաեւ* Սխտորալէզ *տարբերակով*[87]*: Սեդրակ Բարխուդարեանը* Սխտորալէզ *բնակավայրը տեղադրում է Եղեգնաձոր քաղաքի (նախկինում՝ Քեշիշքենդ) տեղում*[88]*: Աւերուած եկեղեցու տեղը նա ենթադրում է գիւղի հարաւ-արեւմտեան ծայրին գտնուող բլրի վրայ՝ կոպտատաշ քարերից պարիսպներով հնագոյն ամրոցում՝ զարմանալիօրէն առանց պեղելու թողնելով այդ վայրը*[89]*:*

86 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԺԸ, էջ 51:

87 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. III, էջ 82 (N 226), էջ 97 (N 273), էջ 100 (N 283), էջ 101 (N 288): «Սխտոր» եւ «խստոր» բառերը նոյն ծագումն ունեն եւ իրար յաճախ փոխարինում են նաեւ բարբառներում: Հմմտ. **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Եր., 1973, էջ 428 (խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Յովհ. Կարագեոզեանին):

88 **Ս. Բարխուդարեան**, *Պատմահնագիտական-տեղագրական դիտողութիւններ. Ե դարի երկու յուշարձան Սիւնիքում*, - «ՀԽՍՀ պատմութեան եւ գրականութեան ինստիտուտի տեղեկագիր», I գիրք, Եր., 1936, էջ 84-89: Հմմտ. նաեւ **Հ. Եղիազարեան**, *Ազիզբէկովի շրջանի կուլտուրայի յուշարձանները*, Եր., 1955, էջ 45; **Ա. Օ. Խաչատրեան**, *Վայոց ձորի մի շարք պատմական բնակավայրերի տեղադրութեան մասին*, - «Պատմա-բանաս. հանդէս», 1974, թիւ 4, էջ 112:

89 **Ս. Բարխուդարեան**, *Պատմահնագիտական-տեղագրական դիտողութիւններ*, էջ 89: Կարծում ենք, որ այսօր

Արդ՝ Ստեփաննոս Օրբէլեանի մօտ ունենք մեզ չհասած Խստորալեզի եկեղեցու հետեւեալ նկարագրութիւնը. «Ապա ձեռն ի գործ արկեալ... հիմն արկին սրբոյ կաթողիկէին յիններորդ ամին Գիւտայ կաթողիկոսի [=469/470 թ.], *յամսեան ամսամտին, որ օր հինգ էր ամսոյն: Եւ կատարեալ զնա մեծածախ գանձիւք՝ կանգնեցին ճեմարան երկնանման հրաշաքարտաշ շինուածով երկագմբեթ եւ եռախորան. եւ յերկուս կողմանս գաւիթս, սրահակս եւ վերնատունս՝ սեամբք եւ աքանչելի յօրինուածովք»*[90]*: Հաշուի առնելով նկարագրուած սիւնազարդ պատշգամբի («վերնատունս՝ սեամբք») բացառիկութիւնը՝ արդարացիօրէն ենթադրւում է, որ Ծիծեռնավանքի պատշգամբի կառուցման փուլը նոյնպէս պէտք է վերագրել Ե դ. կէսերին*[91]*: Կարելի է միայն աւելացնել, որ զարդանախշերի բուսականին արխաիկ տեսքը թոյլ է տալիս ենթադրել Ե դ. առաջին կէսի աւարտի առաւել հաւանական լինելը*[92]*:*

անհրաժեշտ է ջանք չխնայել Ստեփաննոս Օրբէլեանի նկարագրութեան մէջ Երէրոյքի եւ Ծիծեռնավանքի եկեղեցիները յիշեցնող այս յուշարձանի հիմքերը փնտրելու գործում (ըստ որում Եղեգնաձորի ամրոցում չյայտնաբերելու դէպքում, թերեւս, պէտք է տեղափոխուել 1 կմ հարաւ-արեւմուտք՝ Եղեգիսի եւ Արփայի գետախառնուրդին յարող բլրակների հատուածը, ինչպէս որ յուշում են Սիւնեաց պատմիչի խօսքերը):

90 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԺԸ, էջ 51:

91 **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 228; **М. Асратян**, նշ. աշխ., էջ 18:

92 Ծիծեռնավանքի վերակառուցման երկրորդ փուլը քիչ

Շինարարական III փուլ (Ե դարի վերջ - Զ դարի սկիզբ)

Շինարարական III փուլի նպատակը եղել է եկեղեցու տանիքի փայտեայ մասը քարէ թաղերով փոխարինելը: Դրա համար քանդուել են աղօթասրահի 3 զոյգ բարակ մոյթերը, որոնց փոխարէն միեւնոյն ֆելզիտատուֆի քարից կառուցուել են աւելի մեծ ծանրութիւն կրելու ընդունակ, այսօր մեզ հասած 4 զոյգ հաստ (քառակուսի) մոյթերը եւ նրանց վրայ յենուած երկայնական կամարապատերը: Ընդ որում II փուլին պատկանող, արեւմտեան պատին եւ խորանի ճակատին յենուած նեղ որմնամոյթերը մնացել են, եւ կողքից նրանց աւելացուել են (հպուած վիճակով) մէկական ուղղաձիգ շարքով հատուածներ (էջ 209): Արեւմտեան պատի վրայ երկու հետք է մնացել II փուլի նեղ որմնամոյթերի վրայ ժամանակին կանգնած երկայնական պատերից: Դա մի ցցուած քարի կտոր է հարաւ-արեւմտեան որմնամոյթի խոյակի վերեւում (նոր երկայնական պատի առաջին կամարի կրնկաքարի կողքին) եւ մի ուղղաձիգ նեղ խորշ հիւսիսային երկայնական պատի վերին հատուածի կողքին (այդ խորշի մէջ խորացած են եղել II փուլի երկայնական պատի քարերը): Այս հետքերը ցոյց են տալիս, որ II փուլի երկայնական պատերի ուղղաձիգ գծերը խոյակներից վեր շարունակել են որմնասիւների ուղղաձիգ գծերին (III փուլում այդ գծերը 10 սմ-ով ներս են դրուել):

աւելի վաղ՝ Դ-Ե դարերով թուագրելու հնարաւորութեան մասին Յ. Սիմոնեանի եւ Յովհ. Սանամեանի փաստարկումները (էջ 212-213), մեր կարծիքով, բաւարար չափով ուղղակի ժամանակագրական ցուցումներ չեն պարունակում:

Ճարտարապետը նկատել է հիւսիսային պատի թուլութիւնը (դրսի կողմից պահպանուել է երկրաշարժի կամ որմնախարսխի նստուածքի հետեւանքով առաջացած ուղղաձիգ ճեղքը, ինչպէս նաեւ վերին շարքերի որոշ թեքուածութիւնն ու երկայնական կորութիւնը՝ մօտ 10 սմ)[93]: Այն ծանրութիւնից բեռնաթափելու համար նա տուել է հետաքրքիր լուծում. ներքուստ պատին հպուել են 7 որմնամոյթեր, որոնց վրայ բարձրացող 6 կամարների վրայ նստեցուել է հիւսիսային նաւի թաղի դրսի կողմի հիմքը (էջ 209)[94]:

Բազալտեայ աստիճանաձեւ գետնախարիսխների վրայ դրուած հաստ եւ արդէն 4 զոյգ մոյթերի վրայ բարձրացուել են երկայնական աւելի ամուր թաղակիր կամարապատերը, որոնք ճարտարապետին թոյլ են տուել կառուցել աղօթասրահի առաստաղի՝ մեզ հասած քարէ թաղերը (էջ 208)[95]: Դրանցից կենտրոնականը

93 Եկեղեցու հիւսիսային պատի ամրացման համար վերակազմութեան նախագծով վերաշարուեցին վերին 2 շարքերը (նոյն քարերով):

94 Մորուս Հասրաթեանը (նշ. աշխ., էջ 229) վրիպել է՝ հիւսիսային պատի այս ամրացումը կառուցողական յաջորդ՝ IV փուլին վերագրելով (հիւսիսային մոյթերի եւ նրանց կապող կամարների հաստացումը ԺԱ դարում):

95 Փայտեայ տանիքները քարէ թաղերով փոխելու մասին տե՛ս նաեւ **Մ. Յակոբեան**, *Աշտարակի Ծիրանաւոր*

սլաքաձեւ (եռակենտրոն, ձուաձեւ) կտրուածք ունի, իսկ հարաւայինը եւ հիւսիսայինը՝ շրջանաձեւ (էջ 205): Հիւսիսային նաւի թաղը աւելի նեղ է եւ ցածր՝ II փուլի պատի փոխարէն ամրացնող կամարաշարի վրայ յենուած լինելու պատճառով (էջ 205): Կենտրոնական նաւի թաղակիր երկայնական պատերի մէջ ճարտարապետն ամեն կողմից երկուական փոքր պատուհաններ է բացել: Քարէ թաղերի վրայ դրուած տանիքը երեսապատուել է նոր կղմինդրածածկով՝ «մեքսիկական» կոչուող տիպի կղմինդրով, որի սեղանաձեւ «առուակների» եւ կիսագլանակների բազմաթիւ կտորներ յայտնաբերուել են տանիքի ու բակի պեղումներից (էջ 206): III փուլի արտաքին քիւի քարեր պեղումներից չեն յայտնաբերուել[96]:

Փոփոխութեան է ենթարկուել եկեղեցու բեմը: Բեմի ճակատի գիծն առաջ է բերուել մինչեւ որմնամոյթերի առջեւի գիծը, իսկ նրա յատակի նիշը բարձրացուել է հնի համեմատութեամբ մօտ 1 մ: Խորանի պատերի վրայ այդ նիշով յստակ պահպանուել է կրաջրի գիծը, որից երեւում է, որ բարձրացուած բեմի յատակի մէջ կրաշաղախ է օգտագործուել: Պեղումներից յայտնաբերուել է մի ֆելզիտատուֆից տափակ քար, որը խոյակի սալաքարի է նմանւում, սակայն վերեւից սրբատաշ է եւ ընդամենը 15 սմ հաստութիւն ունի: Նրա ճակատը զարդարուած

եկեղեցին եւ նրա շինարարական հիմնական շրջանները, - «Յուշարձան», տարեգիրք Բ, Եր., 1993, էջ 32:

96 Սակայն տե՛ս ստորեւ, ծնթ. 99-ից յետոյ:

է խնամքով մշակուած գլանազարդով, որն իր համաչափութիւններով նմանւում է III փուլի մոյթերի եւ որմնամոյթերի խոյակներից եօթի վրայ հանդիպող գլանազարդերին: Սակայն խոյակների սալերի հաստութիւնը շատ աւելին է՝ մօտաւորապէս 25 սմ, ուստի մեզ մնում է ենթադրել, որ մէկ գլանազարդով տափակ քարը ոչ այլ ինչ է, քան III փուլի բեմի ճակատի քիւի սալաքարը: Աւելացնենք, որ «բարձր» բեմի սալայատակից մնացած այս միակ նմուշի վերեւի սրբատաշ երեսին կրաաւազի շատ բարակ շերտի կտորներ են պահպանուել:

III փուլում աղօթարահի առջեւի մասի յատակը հաւանաբար կրաաւազ է դարձուել, որի որոշ կտորներ բացուել են (պեղումների շնորհիւ) ուշ շրջանի կոպտաքար «սալայատակի» տակ եւ I փուլի կաւահունց յատակից բարձր (կարասի մնացորդները գտնւում էին այդ շերտի տակ): Յովհ. Սանամեանի ուշագրաւ դիտարկման համաձայն՝ արեւելքից առաջին շարքի զոյգ մոյթերի սրբատաշ բազալտեայ քարերով աստիճանաձեւ գետնախարիսխների տակ շարուած կոպտատաշ քարերով հիմքերի բաւականին բարձր լինելը (30 սմ) յուշում է, որ III փուլի ճարտարապետն, ըստ երեւոյթին, նախատեսած է եղել աղօթարահի առջեւում բարձր սալայատակով դաս կառուցել, որը պէտք է ծածկէր մոյթերի կոպտաշար հիմքերը (էջ 210): Սակայն կրաջրի հետքերի ակնյայտ բացակայութիւնը ցոյց է տալիս, որ այդ մտայղացումը չի իրագործուել, եւ փոխարէնը՝

բաւարարուել են դասի հատուածը ցածր նիշով կրասուաղ յատակով պատելով:

III փուլի բազմաթիւ զարդանախշեր են պահպանուել աղօթարահի ներսի երկայնական պատերին, մոյթերի ու որմնամոյթերի խոյակների եւ նրանց տակի քարերի վրայ: Զափազանց ուշագրաւ է հիւսիս-արեւելեան մոյթի քիւի տակ դէպի արեւելք ուղղուած վերին ձախ քարի անկիւնում աւանակի եւ արմաւենու ծառի պատկերը, որը խորհրդանշում է Ծաղկազարդի տօնը (Հ. Աթանաս վարդապետ Մովսիսեանի կարծիքով՝ դա նշանակում է, որ III փուլի վերակառուցումից յետոյ Ծիծեռնավանքի եկեղեցին օծուել է հէնց Ծաղկազարդի տօնին): Զորաւոր զոյգ մոյթերի եւ հիւսիսային պատին հպուած որմնամոյթերի խոյակները զարդարուած են թուով ու ձեւով իրար չկրկնող գլանազարդերով, ատամիկներով, «ալիքներով, պարանահիւս քանդակով, ճառագայթներով ութ եռանկեան բաժանուած ուղղանկիւններով, սալիկներով եւ գլանիկներով: Մոյթերի վրայ քանդակուած են վեց թերթիկանի վարդեակներ, ուղղանկիւն շրջանակի մէջ առնուած հարթ եւ լայն ժապաւէնի օձանման հիւսկէն քանդակ, ութ ճառագայթներով եռանկիւնիների բաժանուած ուղղանկիւններով շրջապատուած պարանաձեւ հիւսուածք: Մոյթերից վերեւ նրանց [երկուսի - Ա. Յ.] առանցքով, կան երեսակալներ ունեցող ձագարաձեւ խորշեր, իսկ աւելի վեր՝ կամարաշարի պատերին քանդակուած են յաւերժութեան նշաններ, ինչպէս նաեւ բազմա-

թերթ վարդեակներ»[97]: Ի դէպ, Մուրադ Հասրաթեանի նկատած երկու «երեսակալներ ունեցող ձագարաձեւ խորշերը», ամենայն հաւանականութեամբ, նախատեսուած են եղել հնագոյն ջահի շղթան պահող գերանի համար: Ընդ որում երկու խորշից էլ աջ եւ մի փոքր վեր նրբագոյն վարդեակներ են քանդակել, որն, անշուշտ, աղօթարահի ջահի սրբացման՝ եզակիօրէն պահպանուած նշան է:

Զափազանց ուշագրաւ է հիւսիսային երկայնական կամարապատի արեւելեան կողմում փորագրուած շրջանագծի մէջ առնուած եզակի ութաթեւ աստղը, որի կենտրոնում շրջանագծի մէջ ներգծուած փոքրիկ հաւասարաթեւ խաչ կայ: Նոյն զարդանախշը հանդիպում է նաեւ Տեղ գիւղի Ս. Գեւորգ վաղմիջնադարեան միանաւ բազիլիկ եկեղեցու մի պատի վրայ, առանց կենտրոնում հաւասարաթեւ խաչի[98]: Ի դէպ, օգտագործելով առիթը՝ նշենք, որ այդ ուշագրաւ ճարտարապետական կառոյցում կրկնուած ենք գտնում Ծիծեռնավանքի եկեղեցու մի քանի եզակի մանրամասներ՝ I փուլի դռների կալունակները, II փուլի խորանի գմբեթարդի ճակատը եւ III փուլի իւրայատուկ զարդանախշերը: Թւում է, թէ դրանից կարող է բխել այն միանշանակ եզրայանգումը, որ ոչ այլ ոք, քան Ծիծեռնավանքի III փուլի ճարտարապետն է հէնց եղել նաեւ Տեղ հարեւան գիւղի բազիլի-

97 **Մ. Հասրաթեան**, Նշ. աշխ., էջ 230:

98 **Մ. Հասրաթեան**, Նշ. աշխ., էջ 242, 245: Հմմտ. **М. Асратян**, *Армянская архитектура...*, էջ 91:

կայի կառուցողը (եւ ըստ այդմ՝ Զ դարի սկըզբներին, ոչ թէ աւելի վաղ, ինչպէս համարւում էր[99]): Իսկ հնարաւո՞ր է արդեօք նման եզրայանգումից յետոյ գոնէ հարցադրման կարգով նաեւ ենթադրել, թէ Ծիծեռնավանքի III փուլի տանիքի՝ մեզ ոչ մի օրինակով չհասած քիւերը կարող էին ունեցած լինել հէնց այն նոյն պարզ քիւի կտրուածքը, որպիսին պահպանուել է Տեղ գիւղի եկեղեցում:

III փուլի՝ վերը նշուած, բոլորն էլ երկրաչափական ձեւերով զարդանախշերը անխտիր իրենց զուգահեռներն են գտնում Ե դարի երկրորդ եւ Զ դ. առաջին կէսի յուշարձաններում[100]: Եւ միաժամանակ, դրանք որոշակիօրէն տարբերւում են («կատարման վարպետութեամբ, սիւժետային ձեւերով, քանդակների համաչափութեամբ» եւ այլն) Զ դարի վերջի - Է դարի զարդանախշերից, որոնց մէջ իշխող են դառնում այսպէս կոչուած Աւան-Զւարթնոցեան ոճի հիւսկէն, ոլորուող ճիւղազարդերը, տերեւազարդերը եւ պտղազարդերը[101]: Այս դիտարկումը կարեւոր թուագրող նշանակութիւն ունի, քանի որ մեծ հաւանականութեամբ թոյլ է տալիս Ծիծեռնավանքի շինարարական III

99 Տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը:

100 Հմմտ. Մուրադ Հասրաթեանի ...Армянская архитектура раннего христианства" գրքի աղիւսակները:

101 Տե՛ս **Բ. Առաքելեան**, *Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում*, Եր., 1949, էջ 41-48, 83-87, յատկապէս՝ էջ 48: Նաեւ՝ **Լ. Ազարեան**, *Վաղ միջնադարեան հայկական քանդակը*, Եր., 1975, էջ 66-70:

փուլը վերագրել Ե դարի, թերեւս, ամենավերջից մինչեւ Զ դարի կէսերն ընկած ժամանակահատուածին[102]:

Շինարարական IV փուլ (ԺԱ դարի կէս)

ԺԱ դարի կէսերին հայր Գիորգ (Գէորգ) ապեղայ Աշխատաւոր անունով յայտնի ճարտարապետն ամրացրել է Ծիծեռնավանքի եկեղեցու հիւսիսային մոյթերն ու կամարները կրկնամոյթերով եւ կրկնակամարներով. այդպիսիք չեն աւելացուել միայն կողային երկու կամարների տակ: Շինարարութեան համար օգտագործուել է նոյն ֆելզիտատուֆի քարը, իսկ ներքեւի որոշ հատուածներում՝ նաեւ տեղական բազալտը: Կրկնամոյթերի խոյակները զարդարուած են ատամնաքիւով, որը կատարման վարպետութեամբ էապէս զիջում է վաղմիջնադարեան ատամնազարդերին: Որոշ զարդանախշեր Գիորգը փորագրել է հին մոյթերի քարերի վրայ (անկասկած, դրանցից է նաեւ երեք ոլորուած օձերի նմանուող պատկերը հիւսիսային երկրորդ մոյթի հարաւային ճակատին), որոնք եւս զիջում են Ե-Զ դարերի զարդաքանդակներին[103]:

102 Լրիւ հասկանալի չէ, թէ ինչպէս է Մօրուս Հասրաթեանը (նշ. աշխ., էջ 228) կենտրոնական նաւի թաղի կառուցումը վերագրել Թ-Ժ դարերի ինչ-որ մի վերակառուցման, այն դէպքում, երբ ինքն առաջինն է այդ թաղը պահող երկայնական կամարապատերի վրայ առկայ զարդանախշերը արդարացիօրէն համադրել Ե դ. երկրորդ կէսի կառոյցների դեկորատիւ մանրամասների հետ (էջ 230-232):

103 Ըստ այսմ ընդունելի չի կարող համարուել Յակոբ Սի-

Շինարարի արձանագրութիւնը փորագրուած է հիւսիս-արեւելեան մոյթից վեր՝ կրկնակամարի հիմքի զոյգ կրնկաքարերի վրայ, իւրաքանչիւր քարին չորսական շարք տառերով, երկու «չյաջողուած» տառի խառնումով եւ անսպասելիօրէն աջ քարից ձախին մի անկանոն անցումով. ՁԳԻ//ՈՐ›Գ‹//Գ Ա//ՇԽԱ//›Տ‹//-ՏԱԻ//ՈՐ Յ//ԻՇԵ//ՑԷՔ[104]: Այն թուագրուած չէ, սակայն Բղենոյ Նորավանքի (որի շինարարութիւնը նոյն Գիորգն աւարտել է 1062 թ.) եւ Տաթեւի կաթողիկէի արձանագրութիւններից, ինչպէս նաեւ Ստեփաննոս Օրբէլեանի տեղեկութիւններից[105] երեւում է, որ այս ճարտարապետի

մոնեանի եւ Յովհ. Սանամեանի ներդրութիւնը, թէ նշուած օձաքանդակը վաղքրիստոնէական է (էջ 212):

104 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 285-289 [այս ժողովածոյում՝ էջ 41-43]:

105 Նոյն տեղում, էջ 288-289; **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԽԶ, էջ 180 («...յետ սակաւուց շինեցաւ եկեղեցին յոյժ գեղեցիկ յօրինուածովք, եւ ի դրանն կամարք զարմանալիք ի սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք եւ խարսխաւոր սեամբք ի *հայր Գէորգայ* եւ ի Յովհաննիսէ քահանայէ»); *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1960, էջ 45, N 102 («Ի թվ. Հայոց ի ՇԺԱ */=1062 թ./*, ի թագաւորութեան քրիստոսապսակեալ արքային Գրիգորո‹յ› եւ հայրապետութեան տեառն Յովաննու Սիւնեաց եպիսկոպոսի... աշխատութեամբ հիմնարկեալ եկեղեցիս վասն փոխման յաշխարհէս թերակատար մնացեալ էր, եւ՝ *հայր Գիորգ*, հրամանով քրիստոսապսակեալ թագաւորին կատարեցի շինութեամբ եւ աւհրնեցի յաւգնականութեամբ քրիստոսապսակեալ թագաւորին...»); եւ էջ 21, N 32 («Զհայր *Գէորգ աշխատաւոր* տանս յիշեցէ՛ք ի

աշխատանքի ժամանակն անհրաժեշտ է վերագրել ԺԱ դ. 40-50-ական թուականներին, երբ նա դեռեւս աբեղայ՝ Հայր Գիորգ (Գէորգ) չէր:

Հաւանաբար, Գիորգ Աշխատաւորն է եղել եկեղեցու վերջին, մեզ հասած բեմի կառուցողը: Այն ցածր էր III փուլի (ըստ երեւոյթին՝ քայքայուած) բեմի յատակի նիշից 35 սմ, իսկ ճակատն աւելի առաջ էր բերուած որմնամոյթերի ճակատային գծից (որոշ լայնակի թեքութեամբ) 20-30 սմ: Պեղումների ընթացքում (որի շնորհիւ յայտնաբերուեց I փուլի բեմը) կազմաքանդուած բեմի այս յատակը ծածկուած էր բարակ եւ ոչ բարձրորակ կրաշաղախի մնացորդներով, իսկ ճակատը ձեւաւորուած էր Ժ-ԺԱ դդ. բնորոշ ոճական առանձնայատկութիւններ ունեցող խաչքարերով, որոնք, մեր տպաւորութեամբ, կերտուել էին հէնց խորանի ճակատի մէջ տեղադրուելու նպատակով[106]:

Քրիստոս»):

106 ՀՀ Յուշարձանների պահպանութեան վարչութեան գիտական խորհրդի կողմից հաստատուած Յովհ. Սանամեանի վերակազմութեան նախագծի համաձայն՝ վերականգնուած եկեղեցու բեմն ունի III փուլի բեմի բարձրութիւնը (որի հետեւում սալաքարերով եւ օրգանական ապակիով ծածկուած շուրֆի մէջ պահպանւում է I փուլի կաւահունց յատակի յետեւի մասը՝ խորանի պատի մէջ թողնուած քարէ աստիճանով՝ վարդապետաց դասով) եւ I փուլի ճակատի գիծը (բարձր ճակատի նոր բազալտեայ շրջանակը դրուած է I փուլի բեմի ճակատի քարերի վրայ, որոնց առջեւ եկեղեցու նոր սալայատակի մէջ թողնուած շուրֆի շնորհիւ պահպանւում է նաեւ I փուլի կաւահունց յատակի առջեւի մասը): IV փուլի խաչքարերը տեղադրուած են նոր ճա-

Գիորգ Աշխատաւորը բաց կարմիր ներկով ներկել է իր արձանագրութեան տառերը եւ այդ պահին եկեղեցու ներսի պատերին եղած բոլոր հին զարդանախշերի փորուածքները: Որ այդ գործի հեղինակը հէնց ինքն է, երեւում է նրանից, որ իր արձանագրութիւնը փորագրելիս երկու տառեր խառնուել են ու նորից փորուել (առանց հորիզոնական գծիկի Գ-ն եւ աջ քարի ներքեւի Տ-ն), եւ այդ խառնուածները ներկուած չեն[107]: Այս հանգամանքը կարեւոր է նաեւ՝ որպէս զարդանախշերի ժամանակագրական ցուցիչ: Օր.՝ պարզ է դառնում, որ ներկուած խաչաքանդակով երկու կտորի ջարդուած Սուրբ սեղանի ոտքի բազալտեայ քարը (նրա մի կտորը մեր օրերում դրուած էր խորանի անկիւնում, միւսը՝ աղօթասրահի յատակի առջեւի մասի ուշմիջնադարեան կոպիտ «սալայատակի» քարերի մէջ՝ շուռ տուած վիճակով, մի քանի ուրիշ խաչքարերի կտորների նման) ԺԱ դարի է, իսկ մեր տպաւորութեամբ՝ հէնց Գիորգի կողմից քանդակուած[108], ինչպէս եւ իր

կատի բազալտեայ շրջանակի մէջ, իսկ III փուլի բեմի քիւի սալաքարը՝ այդ շրջանակի վերին հորիզոնական շարքի կենտրոնում: Ի դէպ, խորանի առջեւ, աղօթասրահի դասի մէջ թողնուած քառակուսի շուրթի շնորհիւ պահպանւում եւ ցուցադրւում են նաեւ I փուլի կարասը, այն ընդգրկող կաւայատակը եւ մի-մի կտոր՝ III փուլի կրասուաղ յատակից եւ V փուլի կոպտաքար «սալայատակից»:

107 Ա. Յակոբեան, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 286-287:

108 Երկու մասի կիսուած վիճակում պահպանուել է նաեւ այս փուլի Սուրբ սեղանի հորիզոնական բաւականին

բեմի ճակատի՝ նոյնպէս կարմիր ներկուած խաչերով խաչքարերը[109]:

Եւ մի վերջին դիտարկում: Խորանի ներսի բազալտեայ պատի մէջ տարբեր ժամանակներում առանձին քարեր հանելու միջոցով ստեղծուել են ծիսակարգում օգտագործելու համար նախատեսուած դարակ-խորշեր (խորհրդանոցներ)[110], իսկ մի բաւականին մեծ քարի վրայ[111] քանդակուած են 7 խաչեր եւ գրականութեան

անշուք քարը՝ կենտրոնում ներքեւից քառակուսի փոսով, որով դրուել է ոտքի քարի վերեւում փորուած ելուստի վրայ: Ի տարբերութիւն ոտքի քարի, որը սոսնձուելուց յետոյ տեղադրուեց Ծիծեռնավանքի նորակառոյց խորանում (Սուրբ սեղանի բազալտեայ նոր հորիզոնական քարի տակ), այս կոտրուած քարը պահպանութեան համար տեղադրուեց հարաւային աւանդատան մէջ՝ մէկ ուրիշ, աւելի փոքր սեղանի հորիզոնական՝ նոյնպէս կիսուած քարի կտորների հետ միասին, որը ուշ միջնադարում հաւանաբար դրուած է եղել հէնց հարաւային աւանդատան մէջ: Ի դէպ, որ եկեղեցու նոր Սուրբ սեղանը Բերձոր շրջկենտրոնի Սուրբ Համբարձման եկեղեցու օրինակով հպուեց «Մոմիկի» քարից կառուցուած սրբապատկերակիր խաչակոթողին (ճարտարապետ՝ Հրաչեայ Գասպարեան, քանդակագործ՝ Յովհաննէս Մկրտչեան, Տիրամօր գեղանկարի հեղինակ՝ Կարէն Սմբատեան):

109 Ըստ այսմ չի կարող ընդունելի համարուել Յակոբ Սիմոնեանի եւ Յովհ. Սանամեանի այն ենթադրութիւնը, թէ մեզ հասած բեմը ուշ միջնադարի է (էջ 209-210):

110 Այդ խորշերից իւրաքանչիւրի բարձրութիւնից երեւում է նրա՝ վերակառուցողական որ փուլին պատկանելը: Ըստ այդմ 3 խորշ փորուած է III փուլում, իսկ երկուսը՝ IV-ում: III փուլի խորշերից հարաւայինի մէջ աջ կողմի քարի ներքեւում 2 աստիճան է տաշուած:

111 Այդ քարի վերեւում՝ III, իսկ ներքեւում՝ IV փուլի խորշդարակներ կան:

մէջ յայտնի՝ Մհոտիկի արձանագրութիւնը. ԵՄ՝ // ՄՀ//ՈՏ//ԻԿ, // ԿԱՆԳՆԵՑԻ ՔԽԱՉՍ ՀԱԻՐ ԻՄ՝ // ՄԽԻԹԱՐ ԱԹԱՐԲԷԿԻՆ[112]: *Մօրուս Հասրաթեանը վերապահութեամբ ենթադրել է, որ այս վիմագիրը ԺԵ դարի է, քանի որ պատուիրատուի անուանը մօտ* Մահուտ *անձնանունը յիշատակուած է մէկ անգամ 1422 թ.*[113]: *Սակայն պարզ համեմատութիւնն իսկ ցոյց է տալիս, որ Մհոտիկի քարի կլոր թերթիկներով 4 մեծ խաչերը բացարձակ նմանութիւն են դրսեւորում Գիորգ Աշխատաւորի կառուցած բեմի ճակատի նոյնատիպ խաչերի հետ (նոյն կերպ՝ Մհոտիկի քարի սեպաձայր 3 փոքր խաչերը նման են բեմի ճակատի սեպախաչերին, սակայն միայն դա չէր կարող ծագման նոյնութիւն բացայայտել, քանի որ տուեալ տիպի խաչերը ժամանակային աւելի մեծ տարածում ունեն): Այս դիտարկումից յետոյ արդէն բնական է դառնում Մհոտիկի եւ Գիորգի վիմագրերի բաղդատումը, որից ակնյայտ երեւում է նաեւ դրանց նմանութիւնը (բազմաթիւ տառերի, ինչպէս նաեւ բուն փորագրման տեխնիկայի նմանութեան կողքին միայն* Տ *տառի ձեւի տարբերութիւնը էական*

112 Մշգրիտ գրչագրով եւ վերծանութեամբ հրատարակութիւնը՝ **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 148, 150: Տե՛ս նաեւ **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 234-235: *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 193, N 686 (յայտնի սխալներով, ինչի արդիւնքում պատուիրատու Մհոտիկի հօր անունը դարձել է՝ *Մխիթարա Խարբեկին*):

113 **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 235: Հմմտ. **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, Եր., 1946, էջ 171:

դեր չի խաղում): Այսպիսով, պարզւում է, որ Մհոտիկի արձանագրութիւնն ու խաչաքանդակները փորագրուած են կա՛մ հէնց ճարտարապետ Գիորգի, կա՛մ նրա խմբի քանդակագործ վարպետի ձեռքով (տե՛ս պատկեր 17):

Միեւնոյն ժամանակ, հասկանալի է, որ Սուրբ խորանի մէջ, այսինքն՝ եկեղեցու ամենից աւելի պատուաւոր տեղում կարող էր իր հօր յիշատակի համար արձանագրութիւն թողնել ոչ այլ ոք, քան Ծիծեռնավանքի վերակառուցման տուեալ՝ IV փուլի պատուիրատու իշխանը *(վիմագրի բովանդակութիւնից երեւում է, որ Մհոտիկը բարձրաստիճան հոգեւորական չէ, այլ՝ աշխարհիկ տիրակալ): Ուրեմն մենք, ամենայն հաւանականութեամբ, ունենք ԺԱ դ. կէսերին, Սիւնեաց թագաւորութեան մի ծաղկուն ժամանակահատուածում, երբ թագաւորում էր Աշոտիկ իշխանաց իշխանի որդիներից մէկը՝ Սմբատ Բ (1040-1051 թթ.) կամ Գրիգոր Ա (1051-1072 թթ.)*[114], *Աղահեջք-Բաշաթաղ գաւառում տիրակալած որդի եւ հայր իշխանների անունները՝* Մհոտիկ[115] *եւ* Մխիթար Աթարբէկ:

114 Բաղաց թագաւորների՝ վիմագրական վերջին գտածոների շնորհիւ ճշգրտուած ժամանակագրութիւնը տե՛ս **Գ. Գրիգորեան**, *Սիւնիքի թագաւորութիւնը (X-XII դարեր)*, - «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը», էջ 120-126:

115 *Մհոտիկ* արական անձնանունն, ըստ ամենայնի, ծագում է պարսկերէն *mah* «լուսին» բառից, որից ունենք Հր. Աճառեանի կողմից ստուգաբանուած *Մահաւգուն* (ԺԳ դ.), *Մահբանու* (Դ դ.), *Մահբար* եւ *Մահփարի* (ԺԷ դ.), *Մահի* (ԺԶ-ԺԷ դդ.), *Մահմլքէ* (ԺԳ դ.), *Մա-*

Օգտագործելով տեղը՝ կը ցանկանայինք նշել, որ Աղահեճք-Քաշաթաղի իշխանական տունը դեռեւս սպասում է իր ուսումնասիրողին: ԺԵ դարից յայտնի Մելիք-Հայկազեանների տոհմը Վայոց ձորի Շահուռնեցիների իշխանական տոհմի հետ կապելու մասին Մօրուս Հասրաթեանի տեսակէտի բոլոր փաստարկումները[116]*, մեր կարծիքով, լրացուցիչ ստուգման կարիք ունեն: Ընդհակառակը, չափազանց ուշագրաւ է թւում Արմէն Ղարագեօզեանի այն*

հուտ (ԺԵ դ.) անձնանունները (**Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, էջ 169-171), ինչպէս նաեւ ԺԳ դ. վիմագրերում հանդիպող *Մահեան* իգական անունը (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 51, N 123, էջ 210, N 740; **Գ. Յովսէփեան**, *Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ*, Երուսաղէմ, 1937, էջ 23): Հր. Աճառեանը Բաղքից Անի եւ Վայոց ձոր գաղթած յայտնի *Մահեւանեանների* (Զուրջեանց) տոհմանուան ծագումը կապում է իրանական *Mihr* անուան հետ (նշ. աշխ., էջ 312), սակայն հնարաւոր է թւում թէական համարել նրա՝ *Մեհեւան* վերականգնումը եւ «Սիւնեաց պատմութեան» բազմաթիւ դրուագներում ու վիմագրերում արձանագրուած *Մահեւան* անուանաձեւը եւս կապել *Միհուտիկ* (<*Մահուտիկ*) անուան հիմքի հետ: Աւելացնենք, որ «իկ» փոքրացուցիչ մասնիկով ձեւը զարգացած միջնադարում շատ տարածուած է եղել հէնց Սիւնիքում (խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Գրիգոր Գրիգորեանին). մատենագրութեան մէջ եւ վիմագրերում յիշուած են Մանկ*իկ* քորեպիսկոպոսը եւ Ջագ*իկ* իշխանը (Թ դ.), Աշոտ*իկ* իշխանաց իշխանը, Գրիգոր*իկ*, Սմբատ*իկ*, Խոսրով*իկ*, Սահակ*իկ*, Վահան*իկ* իշխանները (ԺԱ դ.), Մոմ*իկ* վարդպետը (ԺԴ դ.) եւ այլն:

116 **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 158-161:

դիտարկումը, որ Աղահեճքի իշխանական տոհմի անունը, թերեւս, արձանագրուած է Է դարում Արուիճան *ձեւով, որը յիշեցնում է Ստեփանոս Օրբէլեանի գիւղացանկից եւ Տաթեւի 1730 թ. պողպացուցակից յայտնի* Արուական *գիւղանունը (ԺԹ դարում՝* Արուայեան, Արփեան, *խորհրդային տարիներին՝* Ալխասլու*)*[117]*: Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի մէջ ամբողջութեամբ արտագրուած Է դարի մի երկում, որը մենք պայմանականօրէն կոչում ենք «684 թ. պատմութիւն», ասւում է. «Յայսմիկ նայելով նախարարացն Հայոց եւ Վրաց աշխարհին՝ խորհէին ի ծննդոց իւրեանց տալ նմա [Ջեւանշէր իշխանին] կին: Իսկ նա յԱրուիճան [*a յԱրուեւծան*] տոհմէն առնոյր կին՝ դըստր իշխանին [*bclr չիք *իշխանին] Սիսականեան աշխարհին, ընդ որ յաւէժ ուրախ եղեն Սիւնիք»*[118]*:*

Շինարարական V փուլ (ԺԷ-ԺԸ դարեր)

Ուշ միջնադարում Ծիծեռնավանքի եկեղեցում որոշ կառուցողական փոփոխութիւններ են կատարուել, որոնց շնորհիւ, ըստ երեւոյթին, ուռուածքներ ունեցող կառոյցը համեմատա-

117 Տե՛ս **А. Карагезян**, նշ. աշխ., էջ 42:

118 *ՊԱ*, գիրք Բ, գլ. ԺԹ, էջ 179: «684 թ. պատմութեան» մասին մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, նշ. աշխ., էջ 196-201: [Այժմ տե՛ս նաեւ քննական բնագիրը. **Անանուն**, *684 թուականի պատմութիւն*, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**, - «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 795-895, հմմտ. էջ 815, նախ. ԺԹ 21-22 – *հեղ., 2009*]:

բար բարուօք վիճակի է բերուել: Մեծ հաւանականութեամբ ԺԷ դ. սկզբին, Մէլիք Հայկազ իշխանի ժամանակ են կառուցուել վանքի ստղանատունը եւ մեզ հասած պարսպապատը, ինչպէս երեւում է քրդարնակների կողմից վերջին ժամանակներում ոչնչացուած մի քարի արձանագրութիւնից. «Կամաւն Ա[ստուծո]յ նորոգ//եցաւ պարիսպս ի ձեռն Հայ//կազ իշխանիս ի առ[ա]ջն[որ]դու//թի[ւն] Մկ[ր]ա[ի]չ եպ[իսկո]պո]ս[ին]: Թվ‹ին› ՌԿԲ [=1613 թ.]»[119]*: Ի դէպ, բերուած բնագրի առիթով անհրաժեշտ է նշել, որ Տաթեւի արքեպիսկոպոսարանում* Մկրտիչ եպիսկոպոս *չի եղել, ուստի պէտք է արձանագրենք, որ մի պահ (գոնէ՝ ԺԷ դ. սկզբին) Ծիծեռնավանքը հաւանաբար եպիսկոպոսանիստ է դարձել*[120]*: Տեղին նշենք նաեւ, որ ժամանակով*

119 **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 149: Հմմտ. **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 236; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 193:

120 Հմմտ. *Պատմութիւն նահանգին Սիսական*, գլ. ՀԵ (Յաւելուած. «Շարակարգութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց՝ արարեալ միաբանից Տաթեւոյ վանաց»), էջ 524-544: [Այժմ դա երեւում է նաեւ երկու աբեղայի ընծայագործման մասին 1605 թ. մելանագիր ինը տողանոց վիմագրում (տե՛ս պատկեր 19) մէջ Ծիծեռնավանքը «կաթողիկէ» կոչելուց, այսինքն՝ «աթոռանիստ», «եպիսկոպոսարան» (հմմտ. ՆՀԲ, հտ. Ա, էջ 1032): Մելանագիրը եկեղեցու հիւսիսային աւանդատան արեւելեան պատի սուաղի վրայ նկատել է Յակոբ Սիմոնեանը, որը սիրալիր մեզ է տրամադրել նրա լուսանկարն ու մասնակի ընթերցումը՝ հրատարակելու համար: Իր բոլորագիր փոքրատառերով, շարադասութեամբ ու լեզուով այն բաւականին անկանոն է եւ ուշադիր վերծանութիւն է պահանջում: Բնագիրը վերծանւում է այսպէս.

այս վիմագրին մօտ է պեղումների ընթացքում Ռուստկէսեանների գերեզմանաքարի կողքին,

«Աթանէս՝ հբե{ղ}//այս. թվ‹ին› ՌԾԴ *[=1605 թ.]*. // Ոհաննէս // վա‹ր›դապետին // աղայգ›կ‹ (Գրիքոր՝ հբեղայս. // թիվ ՌԾԴ) աւրհն//եցին զմեզ. հետ կ[ա]թ[ո]ղ[ի]կէի//ւն եւ Ա[ստուծո]վն // աւրհնեց{ին}»: Բնագրի կրկնուող «*հբեղայ*» բառը «*աբեղայի*» ուշ, խօսուածքային տարբերակն է (**Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, Եր., 1971, էջ 74. «Ցետնաբար եղած է *հաբեղայ*»): Պարզ է, որ 5-րդ տողի սկզբում օգտագործուածը բարբառային «աղաք»-«աղագ» բառն է (երկրորդ Ա-ի ու բաղաձայնի միջեւ անկանոն Յ անականով. նոյնն է նաեւ նախորդ՝ «վա[ր]դապետ» բառի մէջ)՝ *առաջ*, *առջեւ* իմաստով («Ոհաննէս վարդապետի առջե՛ւ օրհնեցին [աբեղայ]»): Խօսուածքային է նաեւ «հետ» բառի կիրառումը գործիական յոլովի իմաստը շեշտելու համար («կաթողիկէո՛վ ու Աստուծո՛վ օրհնեցին»): 6-րդում «Թիվ ՌԾԴ» թուագրումը յաջորդում է տողասկզբում գրուած «աւրհն//եցին» բառի առաջին կէսին (մենք դրել ենք նրանից առաջ՝ կլոր փակագծերի ներսում), եւ դրանից պարզ է դառնում, որ ամենայն հաւանականութեամբ՝ արձանագրութիւնը գրուել է երկու շնչով: Սկզբում գրադաշտի վերեւում ու կենտրոնում երկուական տողով գրել են նորընծայ աբեղաների անունները եւ ամեն մէկից յետոյ ընծայագործման թուականը, ապա՝ գրադաշտի ազատ մասերում տեղաւորել ընծայագործման հանգամանքների մասին շարադրանքը: Գուցէ, մելանագրողը փորձել է ստանալ մէկ միաւորուած միտք (այդպէս տուել ենք մեր վերծանութեան տարբերակը՝ Գրիքորի կտորն առնելով կլոր փակագծերի մէջ), սակայն հնարաւոր է, որ 5-րդ տողի «աղայգ» եւ «Գրիքոր» բառերի միջեւ դրուած, Կ տառին նմանուող (ինչպէս «*կաթողիկէիւն*» բառի մէջ է) կայծակնաձեւ գրանշանն իրականում պէտք է գնահատել ոչ թէ իբրեւ սխալմամբ գրուած տառ (›կ‹), այլ հէնց որպէս կայծակնաձեւ բաժանիչ նշան՝ երկու բնագրերի մասերն իրարից տարբերակելու համար - *հեղ., 2009*]:

հողի տակ յայտնաբերուած «բազալտէ, երկաստիճան հիմքով ուղղանկիւնաձեւ» տապանաքարի (էջ 204) ուշագրաւ վիմագիրը (տե՛ս պատկեր 18). ԱՅՍ Է ՀԱՆԳԻ›Ի‹ՍՏ ՄԱՐ//ԿՈՍ ՊԱՐՈ/ՆՏ[Է]ՐԻՆ. ԹՎԻ‹Ն› ՌՀ (=1621 թ.):

Թերեւս, Մէլիք Հայկազի ժամանակ են կրաշաղախով շարուել հարաւային 3 մոյթերը մէկ կամ երկու կողմից ընդգրկող այն կոպտատաշ բազալտից (որձաքար) կրկնամոյթերը, որոնց ամրացնող յատկութիւնները մասնագէտները գնահատեցին զրոյական (դրանք կազմաքանդուեցին վերականգնման ընթացքում): Մօրուս Հասրաթեանի կարծիքով՝ դրանց աւելացումն արուել է 1779 թ.՝ եկեղեցու տանիքում զանգակատուն կառուցելու հետ միասին[121]: Սակայն, քանի որ զանգակատունը շարուած է դեղնաւուն սրբատաշ ֆելզիտատուֆով, աւելի հաւանական է ենթադրել, որ որձաքարից կրկնամոյթերը Ծիծեռնավանքի հարաւային մոյթերին աւելացուել են աւելի վաղ, բազալտեայ պարիսպը կառուցելու հետ միաժամանակ:

Աղօթարահի առջեւի մասում, ըստ երեւոյթին, վերջնականապէս քայքայուած կրասուաղ յատակի վրայ դրուել է գետաքարերից եւ չուռ տուած խաչքարերի ու գերեզմանաքարերի կտորներից հաւաքուած կոպիտ «սալայատակ» (էջ 210), որն ամբողջովին հանուեց պեղումների ընթացքում[122]: Իսկ հարաւային նաւի

121 Մ. Հասրաթեան, նշ. աշխ., էջ 229:

122 Վերակազմութեան նախագծով՝ եկեղեցու աղօթա-

մէջ հաւանաբար ԺԴ-ԺԶ դարերում տնտեսական նպատակներով փորուած եւ օգտագործուած փոսերը՝ հացահատիկի հորերը, որոնք յայտնաբերուեցին պեղումների ընթացքում (էջ 210), լցուել են հողով ու քարով: Հաւանաբար, այդ նոյն ժամանակ կոպտաշար պատերով փակուել են նաեւ դռների եւ լուսամուտների մի մասի խոռոչները:

Հարաւ-արեւմտեան դռան վերեւում, պատի մէջ ագուցուած քարի վրայ գրուած 1779 թ. արձանագրութեան համաձայն՝ այդ տարում եկեղեցու տանիքին զանգակատուն է կառուցուել («Նորոգեցաւ դաճ[ա]րս // եւ ս[ուր]բ զանկա‹կա›դուննս // ի ժ[ա]ման[ա]կ[ի]ն Իբրահիմ // խանին, ձեռ[ա]մբն // Աւռուքի որդի Նաջա//գուլին Խնածորկցի, // եւ էր վաքիլ գոր//ծ[ո]յս ու‹ս›դի Յոհանն: // Թ[ու]ն ՌՄԻԸ-ն [=1779 թ.]»)[123]: Քրդարնակների կողմից տեղահան է արուած եղել նաեւ այս քարը: Նրա մի կտորը (վերեւի ձախ անկիւնը) յայտնաբերուեց պեղումների ժամանակ եւ տեղադրուեց իր խորշի

սրահը պատուեց բազալտեայ սալայատակով՝ որմնախարսխի առաջին շարքի քարերի կէսի նիշով, յետնի մասում՝ թեքութեան պահպանումով, իսկ առջեւում՝ 6 սմ բարձրութեամբ դասի հատուածում՝ հորիզոնական գծով (արեւելեան մոյթերի կոպտաշար հիմնախարիսխների կէսի նիշով):

123 Մ. Հասրաթեան, նշ. աշխ., էջ 236 (տալիս ենք մեր փոքրիկ ճշգրտումներով): Յիշատակուած (եւ վիմագրի լուսանկարում միանշանակ ընթերցուող) *Խնածորկ* տեղանունն իրականում ճիշտ է թւում դիտել որպէս շատ մօտիկ գտնուող *Խնածախ*-ի, ոչ թէ *Խնձորեսկ* գիւղի անուան մի ձեւ:

մէջ (էջ 202)։ Տեղին նշենք, որ ժամանակով այս վիմագրին մօտ է եկեղեցու հարաւ-արեւմտեան դռան առջեւ, 2 մ հեռաւորութեան վրայ տեղադրուած Ռստակէսեանների մեծ ու գեղաքանդակ ուղղանկիւն տապանաքարի արձանագրութիւնը, որի տակ հնագէտները խմբային թաղում յայտնաբերեցին (այդ թւում՝ մէկ երեխայի)։ Ընդարձակ վիմագիրը ճշգրիտ հրատարակել է Սամուէլ Կարապետեանը[124], որը վրիպել է միայն թուագրումն ընթերցելիս։ Նրա կողմից վերծանուած ՌՄԾԸ-ի փոխարէն, քարի վրայ ընթերցւում է ՌՄԺԸ, այսինքն՝ 1769 թուականը։ Վիմագրում Ծ տառն օգտագործուած է եւս մէկ անգամ՝ «Ածատուր» բառի մէջ, եւ այլ պատկեր ունի, քան մեր թուականի Ժ-ն։

Ծիծեռնավանքի զանգակատունը նման է Սիւնիքի ուշմիջնադարեան այլ զանգակատներին՝ վեցսիւնանի եւ կոնաձեւ վեղարով (էջ 207)։ Վերականգնողական աշխատանքների ընթացքում շինարարները (ղեկ.՝ Գէորգի Առաքելեան) նկատեցին, որ զանգակատան վեղարի պահպանուած վեց շարքերի մէջ օգտագործուած քարերի թիւը չափազանց ուշագրաւ օրինաչափութիւն է պարունակում՝ ներքեւից վերեւ համապատասխանաբար՝ 13, 11, 9, 7, 5, 3։ Նոր տաշուած խնձորակի քարը դարձաւ վերջին շարքի «1»-ը, որի վրայ էլ կանգնեցուեց վերածնուած եկեղեցու նոր խաչը[125]։

124 Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 149-150։

125 Նոր խաչը պատրաստուեց Աշտարակի արհեստա-

Ամենայն հաւանականութեամբ, հէնց այս ժամանակ՝ ԺԸ դ. վերջում, իրականացուել է Ծիծեռնավանքի տանիքի մաքրումը ջարդուած կղմինդրի մնացորդից եւ պատումը հաստ կաւաշերտով։ Նշենք, որ նման ճարտարապետա-կառուցողական լուծումը կարող էր օգտակար լինել շէնքին մի քանի տասնամեակով, բայց՝ ոչ աւելի[126]։ Կաւալիցքը պահելու նպատակով բոլոր պատերի վերին եզրագծերով տափակ, կիսամշակ քարեր են դրուել, առանց կրաշաղախի[127]։

նոցի դարբին վարպետների կողմից։ [Ծիծեռնավանքի վերածնուած խաչի եւ եկեղեցու (*Սուրբ Գէորգ* անունով) օծման արարողութիւնները կատարուեցին 2001 թ. հոկտեմբերի 6-7-ին Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպ. Մարտիրոսեանի կողմից – *հեղ., 2009*]։

126 Վերակազմութեան նախագծով՝ այդ կաւածածկ, խոտածածկ եւ կենտրոնական նաւի հատուածում գրեթէ ամբողջովին փլուած տանիքը թաղի վերականգնումից յետոյ պատուեց կղմինդրով, որի համար ընտրուեց III փուլի կղմինդրին արտաքինից նման «պորտուգալական» կոչուած տիպի կղմինդր («առուակը» եւ կիսագլանակը մէկ կտորով)՝ հին չափերի պահպանումով (այն պատրաստեցին Արտաշատի արհեստանոցի վարպետները «Յուսայի» յայտնի կաւից)։

127 Վերակազմութեան նախագծով՝ այդ «քիւը» հանուեց եւ փոխարինուեց այն ատամիկներով քիւի չափսերով տաշուած նոր ատամնաքիւի շարքերով, որը յայտնաբերուել էր տանիքի հիւսիսային կողմի պեղումներից եւ ենթադրաբար վերագրուել վերակառուցողական II փուլին։ Իսկ հնագոյն ատամնաքիւի քարը որոշուեց տեղադրել նոր շարքերից մէկի մէջ՝ արեւմտեան ճակատի հարաւային հատուածում։

[Աւարտելով աշխատանքը՝ նշենք, որ Ծիծեռնավանքի՝ վերստին Սուրբ Գեւորգ անուանակոչուած եռանաւ բազիլիկ եկեղեցու վերածնուած խաչի եւ Սուրբ սեղանի օծման արարողութիւնները կատարուեցին 2001 թ. Հոկտեմբերի 6-7-ին Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանի կողմից: Թերեւս, կարելի է անվարան պնդել, որ ճարտարապետական արուեստի այս վերածնուած յուշարձանը թէ՛ իր պատմական արժէքով ու անթաքոյց հմայքով, թէ՛ վերականգնողական աշխատանքների գիտական սկզբունքների հետեւողական պահպանմամբ լիովին յաւակնում է՝ ընդգրկուելու UNESCO-ի արձանագրած համաշխարհային գոհարների ցուցակում – հեղ., 2009]:

IV

ՍԻՍԱԿԱՆ-Ի ԿՈՏԱԿ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԻՒՍ ԳԱՒԱՌՆԵՐԻ ՏԵՂՈՐՈՇՈՒՄՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Մեծ Հայքի տասներորդ՝ Արցախ նահանգի գաւառներից երկուսի՝ Հարջլանքի եւ Պիանքի յիշատակութիւնը հայկական աղբիւրներում սահմանափակւում է բացառապէս «Աշխարհացոյց»-ի երկու գաւառացանկերով՝ Բուն Աղուանք երկրին Ե դ. առաջին կէսում միացուած ուտիք-արցախեան 20 եւ Մեծ Հայքի Արցախ աշխարհի 12 գաւառների թուարկումներում: Իսկ միւս տասի (այդ թւում Սիսական-ի Կոտակի) տեղորոշումները մասնագէտները հնարաւորութիւն ունեն կատարել աւելի ծաւալուն աղբիւրագիտական հիմքերով: Սակայն բազմաթիւ դէպքերում սկզբնաղբիւրների վկայութիւնների իմաստի անմիանշանակութեան հետեւանքով Արցախի գաւառների տեղադրութեան խնդրի լուծումները դառնում են ոչ դիւրին ու երբեմն վարկածային՝ պահանջելով «Աշխարհացոյց»-ի եւ մնացեալ աղբիւրների տուեալների ամէն անգամ նոր, աւելի ուշադիր ընթերցանութիւն եւ աւելի զգոյշ օգտագործում: Այդպիսի մի համակարգուած քննութեան շնորհիւ ակադ. Սուրէն Երեմեանին յաջողուեց իր մեծարժէք ուսումնա-

սիութեան մէջ[1] հաստատագրել Սիսական-ի Կոտակ գաւառի տեղորոշումը Արցախ նահանգի ոչ թէ արեւմտեան, ինչպէս համարւում էր մինչ այդ, այլ հարաւային հատուածում, Արցախեան լեռնաշղթայից մինչեւ Արաքս գետի ափերն ընկած տարածքում:

«Աշխարհացոյց»-ի ինչպէս վերը նշուած, այնպէս էլ մնացեալ գաւառացանկերում երկու-երեք (երբեմն՝ չորս եւ աւելի) անուններից բաղկացած թուարկման խմբաշարերի բացայայտումը[2] թոյլ է տալիս նկատել, որ վաղմիջնադարեան հայ աշխարհագէտ-հեղինակը գոնէ իր հայրենի երկրի նկարագրութիւնը կատարում է հետեւելով իր առջեւ փռուած Մեծ Հայքի մի հինաւուրց քարտէզի կամ էլ, թերեւս, ճանապարհացոյց-իտիներարիաների հիման վրայ կազմուած երկրագրական սխեմայի[3]: Հա-

1 **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրական հիմքի վրայ)*, Եր., 1963:

2 Ուսումնասիրողները նկատել են այդ օրինաչափութիւնը մասնաւորապէս *Վասպուրական* աշխարհի նկարագրութեան մէջ. **Հ. Հիւբշման**, *Հին Հայոց տեղւոյ անունները*, Թարգմանեց **Հ. Բ. Պիլէզիկեան**, Վիեննա, 1907, էջ 224; **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя*, СПб., 1908 (վերահրատ. Եր., 1971), էջ 315; **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Մաս Ա, Եր., 2001, էջ 367:

3 Հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 32, 45; **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն*, էջ 32, 45:

մադրելով ուտիք-արցախեան գաւառների թուարկումների հերթականութիւնը (մի կողմից՝ երկու աշխարհներում, միւս կողմից՝ Բուն Աղուանքին միացուած վիճակում) եւ օգտուելով «Աշխարհացոյց»-ի՝ մեր կողմից պատրաստուող գիտա-համեմատական բնագրից՝ մենք փորձել ենք վերականգնել մեծ հաւանականութեամբ հեղինակի ձեռքի տակ եղած, ճանապարհացոյցերի եւ այլ նիւթերի հիման վրայ կազմուած Մեծ Հայքի այդ երկրագրական քարտէզ-սխեմայի մի հատուածի պատկերը[4]:

Արդ՝ Արցախ նահանգի նկարագրութիւնն սկսելով ինչ-որ իմաստով նրա, ըստ ամենայնի, գլխաւոր Միւս Հաբանդ գաւառից՝ հայ աշխարհագէտ-հեղինակն այնուհետեւ տալիս է արցա-

4 Տե՛ս վերջում՝ *«Աշխարհացոյց»-ի հեղինակի օգտագործած Մեծ Հայքի քարտէզ-սխեմայի վերակազմութեան փորձ»* մեր յաւելուածը: [Նկատենք, որ նոր քննական բնագիրը եւս թոյլ չի տալիս ընդունել մասնագիտական լուրջ գրականութեան մէջ վերջին տարիներին ձեռնարկուած փորձերը (օր., **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 2001; **Ա. Վ. Մուշեղեան**, *Մովսէս Խորենացու դարը*, Եր., 2007)՝ ապացուցելու Մովսէս Խորենացուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ կոչող ձեռագրական աւանդոյթի հաւաստիութիւնը: Երկի ստեղծագործական գաղափարն, ըստ ամենայնի, ուղղակիօրէն ներշնչուած է 610-ական թթ. Բիւզանդիայի թուլացման պահին Խոսրով Բ Ապրուէզ Սասանեան արքայի տիրապետութեան տակ վերամիաւորուած *Մեծ Հայք* աշխարհ-շահրում *Հայոց իշխանի* ինստիտուտի հաստատման իրողութիւնից – *հեղ., 2009*]:

խեան հարաւային եւ կենտրոնական գաւառների հետեւեալ մէկընդմէջ խմբերով թուարկումները. Վայկունիք → Բերձոր // Մեծ Իրանք → Մեծ Կուանք → Հարջլանք // Մուխանք → Պիանք → Պածկանք → Սիսական-ի Կոտակ *(դրանից յետոյ նշւում են* Քուստ-ի Փառնէսը *եւ* Կողթը *ամենահիւսիսում)*[5]*: Իսկ* Բուն Աղուանքին *միացուած ուտիք-արցախեան գաւառների թուարկման («Աշխարհացոյց»-ի միայն համառօտ խմբագրութեան գրչագրերում առկայ) մէկընդմէջ խմբերն այսպիսին են. հիւսիսային մասում՝* Ծակաշէն → Գարդման // Քուստ-ի Փառնէս → Կողթ // Աղուէ → Տուս Քուստակ, *կենտրոնական եւ հարաւային մասերում՝* Ուտ-Ռոստակ → Ռոտ Պացեան // Մեծ Կուանք → Մեծ Իրանք → Պիանք → Հարջլանք // Պածկանք → Մուխանք // Վայկունիք →

5 *Աշխարհացոյց* **Մովսեսի Խորենացւոյ**. Յաւելուածովք նախնեաց, Վենետիկ-Ս.Ղազար, 1881, էջ 33; *Армянская география VII века по Р. Х.*, Текст и перевод издал **К. П. Патканов**, СПб., 1877, էջ 19; **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, Եր., 1944, էջ 350; **Մովսէս Խորենացի**, *Աշխարհացոյց*,– «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, Ե դար, Անթիլիաս, 2003 (այսուհետեւ՝ *ՄՀ*), էջ 2153, 2172, 2188: Համառօտ խմբագրութեան շուրջ երեք տասնեակ գրչագրերում ուտիք-արցախեան գաւառանունների տարընթերցումները տե՛ս **Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*,– «Շուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան». Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նուիրուած գիտաժողովի նիւթեր. Ստեփանակերտ-Շուշի, 2007, Եր., 2007, էջ 22-24:

Բերձոր // Փոքր Հաքանդ → Սիսական-ի Կոտակ → «Ցրի»[6] → Առան-ռոտ[7]:

Ի դէպ, Բուն Աղուանքին միացուած հայկական գաւառների այս թուարկումն «Աշխարհացոյց»-ի միայն համառօտ խմբագրութեան գրչագրերում է պահպանուել ՝այն պատճառով, որ, ինչպէս երեւում է երկի ընդարձակ խմբագրութեան՝ մեզ հասած միակ գրչագրի (Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի ձեռ. թիւ 1276) բնագրի ուշադիր համեմատութիւնից տասնեակ ձեռագրերում պահպանուած համառօտ խմբագրութեան հետ, ընդարձակի այս հատուածում մի բաւականին անփոյթ գրչի վրիպման հետեւանքով պարզապէս կորսուած է շուրջ երկու պարբերութիւն: Դրանցից առաջինը եղել է Բուն Աղուանքի նկարագրութեան վերջում, իսկ երկրորդը՝ Մեծ Հայքի նկարագրութեան սկզբում: Այդ ակնյայտ գրչական վրիպման հետեւանքով նախագաղափար օրինակի «...ընդ որոյ մէջ՝ գնան Սէքոյջ դէպ ի հարաւոյ */…/» հատուածին (որից յետոյ, թերեւս, պէտք է շարունակուէր՝ «բաժա-*

6 «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան ձեռագրերում, հաւանաբար, մի շատ հին գրչական վրիպակի արդիւնքում այս գաւառի անունը բացակայում է, սակայն նրա հետքերը մի քանի գրչագրերում պահպանուել են յաջորդ՝ *Առան-ռոտ* (>*Ասռոտ*) գաւառանուան սկզբին կցուած ՍՏ կամ ՈՏ տառերի տեսքով (տե՛ս **Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 23):

7 **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, էջ 348; *ՄՀ*, էջ 2186-2187:

նէ...» եւ այլն) յաջորդում են «ըստ Փոքր Հայոց: Ունին Մեծ Հայք...» բառերը[8]: Համառօտ խմբագրութեան բնագրի Մեծ Հայքի նկարագրութեան առաջին պարբերութեան մէջ վերջին երեք բառերով ու շաղկապով («Եւ ունին Մեծ Հայք...») սկսուող նախադասութեանը նախորդում է այսպիսի նախադասութեան աւարտ. «...մինչեւ ցնոյն դարձուածք Եփրատայ ի հարաւ կոյս [տարբ. հարաւակոյս]»[9]: Ամենայն հաւանականութեամբ, վենետիկեան թիւ 1276 գրչագրի ընդարձակ բնագրի նախագաղափար օրինակի (ըստ այդմ՝ «Աշխարհացոյց»-ի բնօրինակի) այս հատուածում եղել է՝ «...դարձուածք Եփրատայ դէպ ի հարաւոյ [փխ. ի հարաւ կոյս], ըստ Փոքր Հայոց» նախադասութեան աւարտը, եւ «դէպ ի հարաւոյ» բառերի (հաւանաբար, տողավերջում յայտնուած) նոյնութիւնը Բուն Աղուանքի՝ վերը բերուած նկարագրութեան մէջ առկայ հատուածի հետ (հաւանաբար, էլի տողավերջում յայտնուած) պատճառ է դարձել մեր շատ անուշադիր գրչի վրիպման համար:

Պատկերի ամփոփման համար նշենք, որ Մեծ Հայքի 12-րդ՝ Ուտիք աշխարհի ութ գաւառների թուարկումը «Աշխարհացոյց»-ը տալիս է ծայրագաւառներից դէպի կենտրոն ուղղուած հետեւեալ խմբաշարերով. Արան-ռովտ → Տռի → Ռոտ Պացեան // Աղուէ → Տուչքատակ (<Տուս Քուստակ) → Գարդման → Շակաշէն → Ուտի Ա-

8 Տե՛ս ՄՀ, հտ. Բ, էջ 2151, նախ. 55: Այստեղ եւ ստորեւ բերուած բնագրերում բոլոր ընդգծումները մերն են:

9 Տե՛ս ՄՀ, հտ. Բ, էջ 2171, նախ. 51; էջ 2187, նախ. 74:

ռանձնակ (=Ուտ-Ռոստակ)[10]: Նշենք նաեւ, որ Ուտիքի եւ նախորդող նահանգի՝ Փայտակարանի նկարագրութիւնը եւս պահպանել են «Աշխարհացոյց»-ի միայն համառօտ խմբագրութեան գրչագրերը, իսկ մեզ հասած ընդարձակ խմբագրութեան միակ ձեռագրում այդ հատուածը պակաս է: Թւում է, թէ նման ակնյայտ գրչական վրիպման պատճառը եղել է այն, որ նախագաղափար օրինակում (ըստ այդմ՝ «Աշխարհացոյց»-ի բնօրինակում) Ուտիքի նկարագրութեան վերջում պարզապէս կրկնուած է եղել նոյն արտայայտութիւնը, ինչ որ ունենք Արցախի նկարագրութեան վերջում՝ «զայս ամենայն Աղուանք ունին՝ հանեալ ի Հայոց»: Իբրեւ պարբերութեան աւարտ՝ այն, հաւանաբար, էլի եղել է տողավերջում, եւ մեր խիստ անուշադիր գրիչն էլի չի խուսափել վրիպումից:

Արդ՝ չնայած «Աշխարհացոյց»-ում ներկայացուած այս, ըստ ամենայնի, բաւական յստակօրէն Արցախի հարաւը մատնանշող պատկերին՝ դեռեւս Ղեւոնդ Ալիշանի եւ Մակար Բարխուդարեանցի կողմից Սիսական-ի Կոտակ գաւառն, այնուամենայնիւ, տեղորոշւում էր Տրտուի վերնահովտում, հետագայ Ծար գաւառի տարածքում, «յոլորտս ծովուն Գեղամայ»[11]:

10 Տե՛ս *Աշխարհացոյց* **Մովսեսի Խորենացւոյ**, էջ 33; *Армянская география VII века*, էջ 20; **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, էջ 350; *ՄՀ*, հտ. Բ, էջ 2172, 2188:

11 Հ. Ղ. Ալիշան, *Արցախ*, Եր., 1993, էջ 10, 47; Նոյնի՝ *Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենե-

Մեր օրերում այս «Հիւսիսային» տեղորոշումը փորձում է հիմնաւորել Սլաւա Սարգսեանը[12]: *Այդ կարծիքը փաստարկւում է նրանով, որ զարգացած եւ ուշ միջնադարում Տրտուի վերնահովիտը կամ* Ծար գաւառն, *իրօք, շատ յաճախ է «Փոքր Սիւնիք» կոչուել*[13], *իսկ* Սիսական-ի Կոտակ *իրանական անուանձեւն, ինչպէս յայտնի է, հայերէն բառացի թարգմանութեամբ հէնց* Փոքր Սիսական, *այսինքն՝* Փոքր Սիւնիք *է նշանակում*[14]: *Այլ հետազօտողներ, սկսած նոյն Ղեւոնդ Ալիշանից եւ Մակար Բարխուդարեանցից, Ծարում կամ նրա արեւելեան մասում տեղորոշել են աշխարհացոյցեան* Վայկունիք *գաւառը*[15]:

Վերջինիս առումով՝ մեր նախորդ աշխատանքներում փորձել ենք ցոյց տալ, որ աւելի քան բաւարար աղբիւրագիտական հիմքեր կան՝ աշխարհացոյցեան Արցախի Վայկունիք *(կամ* Վակունիք, Վակունիս, *իսկ Մովսէս Դասխուրանցու ներկայացրած Դիզակի իշխանութեան ութ*

գաւառների ցուցակում՝ Վերին Վայկունիք) *գաւառը հաստատապէս տեղորոշելու Հակարի գետի Շալուայ ձախ օժանդակի հովտում, Արցախը Սիւնիքից բաժանող նրա միւս՝ Հոչանց օժանդակի եւ Արցախեան լեռնաշղթայի միջեւ, հիւսիսում մինչեւ Հակարիի եւ Տրտուի ջրբաժան* Բեւեռաթափի *(յորջորջուած՝* Միխթոքեան) *լեռները*[16]: *Մանրամասնենք, որ Շալուայի հովտում իր անունը ցայսօր անփոփոխ պահպանած* Վաղազին *չէն գիւղի (ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր շրջկենտրոնից 30 կմ հիւսիս) մերձակայքում գտնուած* Վաղազնոյ *գետը* Վակունիս *բնակավայրի հետ միասին է հանդէս գալիս դեռեւս Գտչավանքի 1246 թ. շինարարական վիմագրում.* «Վակունիս *ի* Վաղազնոյ *գետովն»*[17]: *Դրա շնորհիւ առաջանում է* Վակու-

---

տիկ-Ս.Ղազար, 1893, էջ 532; **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 404:

12 **Ս. Սարգսեան**, *Արցախ. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ*, Եր., 1996, էջ 29-30:

13 Մանրամասն տե՛ս ստորեւ, ծնթ. 139-144:

14 Հմմտ. **Հ. Հիւբշման**, *Հին Հայոց տեղւոյ անունները*, էջ 228:

15 **Հ. Ղ. Ալիշան**, *Արցախ*, էջ 10, 14-16; **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 402-403: Տե՛ս նաեւ **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 82; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1982, էջ 8, 112, 217:

16 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*,– «Հանդէս ամսօրեայ», ՃԺԲ. տարի, Վիեննա, 1998, էջ 293, 309, ծան. 55; նոյնի՝ *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները*,– «Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ. տարի, Վիեննա, 1999, էջ 266 [այս ժողովածոյում՝ էջ 51-52, 101-103 – *հեղ., 2009*]; նոյնի՝ *Կենտրոնական Արցախի Հարքլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի*,– «Ռուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան»..., Եր., 2007, էջ 44-45:

17 **Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 250-256, 261 [այս ժողովածոյում՝ էջ 92 – *հեղ., 2009*]: Այս վիմագրի նախորդ՝ Եսայի Հասան-Ջալալեանց կաթողիկոսի (ՄՄ ձեռ. թիւ 7821, թերթ 8ա-բ, թիւ 9923, թ. 11ա), Խաչիկ Դադեանի (ՀՊԿՊԱ, ֆ. 319, ցուց. 1, գործ 107, թ. 21բ-22ա), Մակար Բարխուդարեանցի (*Արցախ*, էջ 80-81), Սեդրակ

նիս տեղանունը Վաղազին գիւղից 4 կմ դէպի հիւսիս-արեւմուտք (Շալուայ օժանդակի Նաղդալի յորջորջուած, ներկայումս Մաղդանց կոչուող վտակի դիմացի ձորալանջին) Բչանիս յորջորջմամբ գիւղանուան հետ համադրելու հնարաւորութիւնը[18]: Հէնց այս Բչանիս-Վակունիսից 9 կմ դէպի հիւսիս-արեւմուտք գտնուող եւ ներկայումս էլ չէն Արախիշ գիւղում (որի անունը ԺԹ-Ի դդ. վերածուել էր Արիքլու-ի, թէպէտ գիւղի առջեւում ռազմական մեծամասշտաբ քարտէզներն արձանագրում էին Արախշուն հանդամաբ) ԺԶ դ. ընդօրինակուել են 2 ձեռագրեր, եւ նրանցից մէկում գրչութեան տեղը նշուած է՝ «ի յերկիրն Վկունիս, ի գ‹ե›աւղս, որ կոչի Արախիշ»[19]: Վերջին գիւղանունն առանց սկզբի ձայնաւորի տարբերակով յիշատակուած է 1653 թ. «ի յերկիրս Ծարա‹յ›, ի գեօղն Մոս» ընդօրինակուած ձեռագրում, որի ստացող Թադէոս երէցը կոչուած է՝ «բնական ի յերկրէն Մաղաւզայ, ի գեղջէն Րախիշոյ»[20]: Ուշմիջ-

Բարխուդարեանի (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, էջ 182-183) ընթերցումները պէտք է համարել հնացած:

18 Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Գուշավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 266-267 [այս ժողովածուում՝ էջ 102 – *հեղ., 2009*]:

19 ՄՄ, ձեռ. թիւ 4181 (Աւետարան, 1568 թ.), թ. 257ա: Արախիշի նոյն Ս. Աստուածածին եկեղեցում եւ նոյն Կարապետ գրչի կողմից 1578 թ. ընդօրինակուած միւս Աւետարանը ՄՄ թիւ 2537 ձեռագիրն է (յիշատակարանը՝ թ. 288ա-բ):

20 ՄՄ, ձեռ. թիւ 3647 (Աւետարան, գրիչ՝ Մարտիրոս Խնձորեկցի), թ. 342բ:

նաղարեան այս Մաղաւուզ (նաեւ՝ Մաղայոզ, Մաղայուզ) գաւառի տեղորոշումը Շալուայի գետահովտում կասկածի ենթակայ չէ, քանի որ յիշատակարաններում ու վիմագրերում վկայուած են նրա Արտաշիբի (նաեւ՝ Արտաշիպի, ներկայիս չէն՝ Արտաշաւի, Վաղազինից 2 կմ հարաւ)[21] եւ Բազմատուս (հմմտ. Բիլիլդուզ [<*Բիւրատո°ւս] յորջորջումով գիւղը՝ եւս 6 կմ հարաւ)[22] բնակավայրերը: Ըստ ԺԶ դ. մի յիշատակարանի՝ «Վակունիս երկրի» Հովատուս գիւղը (մի երկրորդ ձեռագրի յիշատակարանում

21 ՄՄ, պատառիկ թիւ 1015, թ. 3բ («ի *երկիրս Մաղայոզ*, ի գողս *Արտաշիբի*»); **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 140 («ի *երկիրս Մաղայոզ*, ի գեւղս *Արտաշիպի*»): Հմմտ. *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Ա (1601-1620 թթ.), Կազմեցին **Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան**, Եր., 1974, էջ 561, հտ. Բ, Կազմեցին **Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան**, Եր., 1978, էջ 699:

22 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. IV, *Գեղարքունիք*, Կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1973, էջ 129 (Գեղարքունիքի Վանքով խարաբայ կոչուող եկեղեցուց հիւսիս-արեւելք ընկած օրօրոցաձեւ տապանաքարի 4-տողանոց վիմագրում. «Սբ. խաչս բարէխօս Հանուրին... *երկրէն Մաղաւուզոյ*, ի գեղչէն *Բազմայտուսոյ*. թվին ՌՃԸ [=1659 թ.]»); պր. V, *Արցախ*, էջ 56 (Գանձասարի գաւթի արտաքուստ հիւսիսային պատի արեւելեան մասում 7-տողանոց, ներկայումս կորսուած վիմագրում. «Ես՝ Խութ, տվի *Բազմայտվեց նովերին* հող ի սբ. ուխտս... թվ. ՋԽԴ [=1495 թ.]»): Վերջին բնագրի *նովերի* հետ կարող է կապ ունենալ *Բիլիլդուզ* յորջորջուած ներկայիս չէն Բազմատուս գիւղից 2 կմ հիւսիս բարձրացող սարի *Новыбаш* անունը ռազմական քարտէզում (1779,7 մ), եթէ ենթադրենք, որ այն առաջ է եկել հայերէն «Նովի գլուխ» հիմքից:

Հաւատուս) իր երկրորդ անունով կոչւում էր Հընկուզակ-Հինգուզակ[23], որը համադրելի է թւում Կոզլու գիւղատեղիի յորջորջմանը՝ Արտաշաւիից 5 կմ հարաւ-արեւմուտք (պրսկ. «գոզ» - «ընկոյզ» բառից[24]):

Մի այլ ենթատեքստում, այն է՝ Կուրի ձախափնեայ Կապաղակ գաւառի Մեծ Սեօգիւթլու գիւղում Մակար Բարխուդարեանցին հանդիպած, «Ծար գիւղաքաղաքում Սարգիս անուն վարդապետի» կողմից Հայոց ՊԼՁ թուին (=1387 թ.) ընդօրինակուած Աւետարանի յիշատակարանում, Վակունիս եւ Ծար գաւառանունները յիշատակուած են կողք-կողքի, որն ուղղակիօրէն ստիպում է բացառել նրանց համադրման հնարաւորութիւնը: Այդ յիշատակարանում «թաթարաց հրոսակների խուժած ժամանակի» մասին ընիկ ծարեցի գրիչը սրտնջում էր հետեւեալը. «Նախ հալածուելով փախայ Վակունիս գաւառ, ապա Ղարաբաղ՝ Ծափանիս գիւ-

23 Յիշատակարանը Քերթ գիւղի Աւետարանից 1890 թ. արտագրել է Խաչիկ Դադեանը (ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 240, վաւ. 134, թ. 1-2. «…գրեցաւ ի գաւառս *Վակունիս*, ի գե‹ւ›ղս, որ կոչի *Հովատուս*, որ *Հընկուզակս* անուանի»): Տե՛ս նաեւ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի*, Կազմեց **Հ. Յ. Աճառեան**, Վիեննա, 1910, էջ 68 («…գիրեցաւ սբ. Աւետարան ի գեղոջս *Հաւատուս* կոչի, որ է *Հինգուզակս*»):

24 **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Եր., 1973 էջ 130; **Գ. Մ. Նալբանդեան**, *Պարսկերէն-հայերէն բառարան*, Եր., 1987, էջ 493; *Персидско-русский словарь*. Сост. **Б. В. Миллер**, Москва, 1960, էջ 429; *Инструкция по русской передаче географических названий Ирана*, Москва, 1979, էջ 112:

ղաքաղաք, հուսկ ուրեմն վերստին եկի ընիկ երկիրս Ծար»[25]: Վայկունիքի եւ Ծարի համադրումը նոյնքան բացառող պէտք է համարել նաեւ սկզբնաղբիւրների այն ենթատեքստերը, ուր կողք-կողքի յիշուած են Ծար գաւառը եւ Մաղաւուզը (որի համապատասխանութիւնը աշխարհացոյցեան Վայկունիքին նշեցինք վերեւում): Այդպէս է օսմանեան Սարը-Մուստաֆա փաշայի՝ 1728 թ. հրապարակուած հրովարտակում, որը Գանձակի («Գեանջայի»), Ծարի («Զարուգիրիլի») եւ Մաղաւուզի հայ բնակչութեանը, մէլիքներին ու գեղջաւագներին ծանուցում էր Գանձասարի Եսայի Հասան-Ջալալեանց վախճանուած կաթողիկոսի փոխարէն նրա եղբօր՝ Գրիգոր վարդապետի աթոռակալեալ մասին[26]:

Այսպիսով, անհրաժեշտ է վերջնականապէս ուղղել պատմագրութեան մէջ, ցաւօք, արմատաւորուած այն աւանդական փոխանցիկ սխալը, ըստ որի Տրտու գետի վերնահովտում տեղայնւում էր Վայկունիք գաւառը՝ Մովսէս Դասխուրանցու (գրականութեան մէջ կոչւում նաեւ Կաղանկատուացի) «Պատմութիւն Աղուա-

25 **Մ. վրդ. Բարխուտարեանց**, *Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան)*, Թիֆլիս, 1893, էջ 220:

26 ՀԳԿՊԱ, ֆ. 57, ցուց. 1, գործ 4, թ. 1: Հմմտ. **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Եր., 1999, էջ 12; **Պ. Չոբանեան**, *Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ*,– «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ» *(այսուհետեւ՝ ՄՄԱԵԺ)*, XX, Եր., 2001, էջ 220-221:

նից» երկում յիշատակուած «Վայունիք» գիւղանուան հետ զուգորդութեան՝ միակ եւ իրապէս ոչ բաւարար փաստարկով[27]: Այդ տարածքը, որը զարգացած միջնադարից կոչւում էր Ծար երկիր կամ գաւառ (իր կենտրոնական, իշխանանիստ բնակավայրի անունից[28]), վաղ միջնադարում պէտք է համարել Սիւնիք նահանգի հիւսիս-արեւելեան Սոթք գաւառի մի մասը, ինչպէս գտնում էր դեռեւս Սեդրակ Բարխուդարեանը («...Սահլին Կաղանկատուացին կոչում է Սիւնիքի տէր, եւ իրաւամբ, որովհետեւ Վայկունիքը [հիմա՝ Տրտուի վերնահովիտը - Ա. Յ.] միջին դարերում միշտ Սիւնիքի մաս է համարուել եւ Ստ. Օրբէլեանը իր ցանկերի մէջ նրա բոլոր գիւղերը Սիւնիքի Սոդք գաւառի վրայ է թուարկել: Ըստ երեւոյթին Վայկունիքը, որը նաեւ Ծար գաւառ եւ Ծարայ երկիր է կոչուել,

27 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը **Վ. Առաքելեանի**, Եր., 1983 *(այսուհետեւ՝ ՊԱ)*, գիրք Գ, գլ. ԻԲ /ԻԳ/ (այսուհետեւ՝ Գ.իբ /իգ/), էջ 340 (բնագիրն է. «Ատրնէրսեհ շինէ զբերդն Հանդու եւ զապարանս իւր եղեալ ի գիւղն /*ա ձեռ.*՝գեղն/, որ կոչի *Վայունիք*, ուր եւ բաղանիք արքունական են»): Երկի գրչագրերի մանրամասն քննութիւնը տե՛ս **Ա. Յակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*,– «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-143:

28 Հմմտ. **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, Եր., 1975, էջ 34; **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 55:

հէնց այս շրջանից սկսած Սոդքի հետ մի ամբողջական միաւոր է կազմել»)[29]:

Մանրամասնենք, որ Ստեփաննոս Օրբէլեանը, օգտագործելով վաղ շրջանի տուեալները (մինչեւ Թ դ. փոփոխութիւնները), Ծար-ը թուարկում է Տաթեւի վանքին պատկանող եւ Աղուանից երկրին (հիմա՝ Արցախին) սահմանակից շրջանների շարքում («Հատանէ եւ զսահման Աղուանից՝ Ըռմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղուէնոյ գետն հատանէ մինչ ի Քարաւագին կամուրջն, եւ Հաբանդ գաւառ»)[30]: Աղբիւրագիտական առումով կարեւոր է, որ դրանից առաջ պատմիչի մօտ բերուած Հայոց Սարգիս Սեւանցի կաթողիկոսի շրջաբերականում ուղիղ խօսւում է հին կարգի եւ հին սահմանների վերականգնման մասին. «...էր բովանդակն 55 նամակ շրջագայական թղթի իւրաքանչիւր հայրապետի կնքով, եւ այն երկար բանիւք եւ հրահոսան նզովիւք գրեալ... Վասն որոյ եւ մեք երկուցեալ յայնպիսի ատաբեկական հարցն հրամանէ եւ պատկառեալ ի ծերացեալ բազմաժամանակեայ աթոռոյն Սիւնեաց՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա եւ վերստին հաստատեցաք գեղեալ պա-

29 **Ս. Գ. Բարխուդարեան**, *Արցախի, Ծարի եւ Փառիսոսի իշխանութիւնները IX-X դարերում*,– «Պատմա-բանաս. հանդէս», 1971, թիւ 1, էջ 73:

30 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861, գլ. ԾԶ, էջ 227-228: Հմմտ. *Պատմութիւն նահանգին Սիսական*. Արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց**, Թիֆլիս, 1910, ԾԼ, էջ 310:

տիւ նոցա...»: Այնուհետեւ թուարկւում են Սիսական տան գաւառները. «Եւ այս իսկ են գաւառք՝ վիճակեալք հաւտի նոցա. Սիւնիք, Բաղք, Արեւեաց տունն, Որդուատ, Արգուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ՝ որքան Երասխայ գետն հատանէ, Ճահուկ, Վայոց ձոր՝ Խաչերոյ խոռովն, Գեղաքունի՝ Կոզաբակովն, Երիշատ, Ջաղացաձորն եւ Փորակն իսկ բոլորովին, յորում բազում հակառակութիւնք լեալ էին, եւ մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթողիկոսքն Հայոց: Հատանէ եւ զսահման Ագուանից՝ Ըռմբի խոռն...»[31]:

Տեղին նշենք, որ Սեւանայ լճից հիւսիս եւ Ըռմբի խոռից (Լեւագետի վերնահովիտ) արեւմուտք ընկած վերջին երեք տեղանունների նկատմամբ («Երիշատ, Ջաղացաձորն եւ Փորակն») անուշադիր լինելով՝ Բագրատ Ուլուբաբեանը նշում էր, թէ Սոթք գաւառի հատուածը յիշատակուած չէ Սիւնեաց պատմիչի բնագրում, ուստի այն իբրեւ թէ վերագրուել է Արցախ-Խաչէնին[32]: Սակայն նկատենք, որ Սիմէոն Երեւանցու մօտ Սեւանայ լճի հիւսիսային ափին թուարկուած են հէնց Սոթքի Մաքենեաց վանքին ենթակայ միեւնոյն գիւղերը (Սոթ-ից դէպի արեւմուտք երեք գիւղից յետոյ). «...գՋաղացաձոր, գՀամաթիար, գԴարանակս [=Սոթքի գիւղացանկում՝ Դարանակ, հետագա-

31 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԾԶ, էջ 227; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԾԷ, էջ 310:

32 Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը*, էջ 46-47:

յում Դարայ], գԱղջաղալայ, գԵրիշատ, գՄկունիս, գՁիլ, գԱրտաւուճ [=հետագայում Արտանիշ], գԳետիկ, գԿարմունջ, գՂարաքեափանակ [=հետագայում Թոխլուջա, այսօր՝ Դրախտիկ]»[33]: Ըստ ուսումնասիրողի մի այլ դիտարկման՝ նախորդող տեղանունը (երկի երկու ձեռագրախմբերում՝ Գոզայ բակովն եւ Կոզայ բակովն[34]) հնարաւոր չէ գտնել այլ աղբիւրներում[35]: Բայց մեզ ծանօթ է նրա յիշատակումը գոնէ «Ջամբռ»-ում, «Շղուաքայ վանքի» գիւղացանկի սկզբում. «Կորզաբակ, Մեծ Զագ, Փոքր Զագ, Եանխատն, Շղուաք, Ծակքար...»[36]:

33 Սիմէօն Երեւանցի, *Ջամբռ. Գիրք որ կոչի Յիշատակարան*, Վաղարշապատ, 1873, էջ 283: Վերջին գիւղի համար տե՛ս եւ հմմտ. նաեւ Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան* (այսուհետեւ՝ *ՀՅՇՏ Բառարան*), հտ. 2, Եր., 1988, էջ 465; Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, *Ջամբռ*, Թարգմ. Վ. Գ. Համբարձումեանի, Պատմա-աշխարհագրական բնոյթի ծանօթագրութիւնները եւ քարտէզները՝ Գ. Բադալեանի, Եր., 2003, էջ 509-510:

34 Հմմտ. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԾԶ, էջ 227: *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԾԷ, էջ 310):

35 Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը*, էջ 47:

36 Սիմէօն Երեւանցի, *Ջամբռ*, էջ 284: Հմմտ. Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, *Ջամբռ*, էջ 500: Ենթադրուել է նաեւ, թէ *Կոզաբակ*-ը կարելի է համադրել միջնադարում շատ յայտնի *Սոթ* գիւղաքաղաքի հետ (*ՀՅՇՏ Բառարան*, հտ. 3, Եր., 1991, էջ 186, 242), որը հաւանական չէ, քանի որ վերջինս Գեղաքունի գաւառում սահմանային դիրք չի գրաւել:

Առիթն օգտագործենք՝ անդրադառնալու նաեւ Սիւնեաց պատմիչի կողմից յիշատակուած խաչերով խոռ *գաւառաշատուածին: Մեր կարծիքով՝ այն պէտք է գրուած լինէր ներկայիս Խաչիկ գիւղի շրջակայքից դէպի Արփայ գետն իջնող տարածքը (Նրա դիմացի աջափնեայ ձորալանջերով հանդերձ), որը սահմանային դիրք ունէր Այրարատ նահանգի արեւելեան գաւառների եւ ժամանակ առ ժամանակ Վասպուրականին անցնող Նախճաւան գաւառի միջեւ: Այս կտորի մասին «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան մէջ Այրարատի նկարագրութեան վերջում պահպանուել է հետեւեալ շարադրանքը. «Իսկ յելից կուսէ Դունայ են գաւառք Ուրծաձոր եւ Արածոյ կողմն՝ ընդ մէջ կալով Վայոց ձորոյ եւ Շարուր դաշտի, ընդ որ հոսի գետն Արփաւնկն [գրչի ակնյայտ վրիպակով՝* Արտաւէնկն - Ա. Յ.] *առ Մարւնայ [դեռ Ս. Տ. Երեմեանի կողմից իրաւացիօրէն վերականգնուած՝ «Մար[ա]ւ[ա]նայ»* - Ա. Յ.] *քաղաքով, անցանելով ի հարաւ՝ խառնի յԵրասխ»*[37]*: Տեղին նշենք, որ բերուած բնագրում առկայ* Մարւնայ *քաղաքն «Աշխարհացոյց»-ում, հաւանաբար, յիշատակուած է եւս մէկ անգամ: Դա Վասպուրական աշխարհի նկարագրութեան վերջում է, որն ընդարձակ խմբագրութեան մէջ չի պահպանուել (այստեղ աւարտն է.*

37 *Աշխարհացոյց* **Մովսէսի Խորենացւոյ**, էջ 34; *ՄՀ*, հտ. Բ, էջ 2154; Հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 111-112, նաեւ գրքին կից քարտէզում:

«...զՆախճաւան, յորում հոմանուն քաղաք»), իսկ համառոտում պահպանուել է խաթարուած ձեւով. «...Գողթն գիւնեւէտ, Նախճաւան, յորում քաղաքն, եւ Մարմարանքն *[տարբ.* Մարմանոքն, Մարմարսն, Մարմարոն, Մարմանոք, Մարանդ, Մագանդ, Մարանդն*]»*[38]*: Թւում է, թէ կարելի է հաւանական համարել, որ ճիշտը ոչ թէ վերջին տեղանուան մէջ Վասպուրական աշխարհի նոր գաւառանուն* (Մարանդ) *տեսնելն է, որպիսի ենթադրութեամբ ուսումնասիրողները մեր նահանգի սահմանը շտապողաբար հասցրել են մինչեւ հարեւան Ատրպատականի Մարանդ քաղաքը*[39]*, այլ վերջում ՔՆ տառերն ունեցող այդ խաթարուած բնագիրը՝ «Մարա*[ւ]*ան* քաղաքն*» ձեւով վերականգնելը: Իրաւացիօրէն համարւում է, որ նոյն* Մարաւանին *է վերաբերում Մովսէս Խորենացու՝ բանաւոր վէպից քաղուած տպաւորութիւն թողնող յայտնի տեղեկութիւնը. «Արտաւազդայ ո՛չ գտեալ, ասեն, տեղի ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, առէ, գնաց եւ շինեաց ի մէջ Մարաց* զՄարակերտ*, որ է ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ»*[40]*: Գուցէ, իրաւացի կը*

38 *Армянская география VII века*, էջ 19; *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, էջ 350; *ՄՀ*, հտ. Բ, 2172, 2188; **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը*, էջ 357:

39 Տե՛ս, օր.՝ **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 44, 65

40 **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց*. Աշխատութեամբ **Մ. Աբեղեան** եւ **Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913 *(այսուհետեւ՝ ՊՀ)*, Ա.Լ, էջ 84; *ՄՀ*, հտ. Բ, էջ 1829.

Առիթն օգտագործենք՝ անդրադառնալու նաեւ Սիւնեաց պատմիչի կողմից յիշատակուած Խաչերոյ Խոռ գաւառահատուածին: Մեր կարծիքով՝ այն պէտք է գտնուած լինէր ներկայիս Խաչիկ գիւղի շրջակայքից դէպի Արփայ գետն իջնող տարածքը (նրա դիմացի աջափնեայ ձորակներով հանդերձ), որը սահմանային դիրք ունէր Այրարատ նահանգի արեւելեան գաւառների եւ ժամանակ առ ժամանակ Վասպուրականին անցնող Նախճաւան գաւառի միջեւ: Այս կտորի մասին «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան մէջ Այրարատի նկարագրութեան վերջում պահպանուել է հետեւեալ շարադրանքը. «Իսկ յելից կուսէ Դունայ են գաւառք Ուրծաձոր եւ Արածոյ կողմն՝ ընդ մէջ կալով Վայոց ձորոյ եւ Շարուր դաշտի, ընդ որ հոսի գետն Արփաւնկն [գրչի ակնյայտ վրիպակով՝ Արտաւնկն - Ա. Յ.] առ Մարւնայ [դեռ Ս. Տ. Երեմեանի կողմից իրաւացիօրէն վերականգնուած՝ «Մար[ա]ւ[ա]նայ» - Ա. Յ.] քաղաքով, անցանելով ի հարաւ՝ խառնի յԵրասխ»[37]: Տեղին նշենք, որ բերուած բնագրում առկայ Մարւնայ քաղաքն «Աշխարհացոյց»-ում, հաւանաբար, յիշատակուած է եւս մէկ անգամ: Դա Վասպուրական աշխարհի նկարագրութեան վերջում է, որն ընդարձակ խմբագրութեան մէջ չի պահպանուել (այստեղ աւարտն է.

37 *Աշխարհացոյց* **Մովսեսի Խորենացւոյ**, էջ 34: *ՄՀ*, հտ. Բ, էջ 2154: Հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 111-112, նաեւ գրքին կից քարտէզում:

«...ցՆախճաւան, յորում հոմանուն քաղաք»), իսկ համառօտում պահպանուել է խաթարուած ձեւով. «...Գողթն գինեւէտ, Նախճաւան, յորում քաղաքն, եւ Մարմարանքն [տարբ. Մարմանդքն, Մարմարսն, Մարմարոն, Մարմանոք, Մարանդ, Մագանդ, Մարանդն]»[38]: Թւում է, թէ կարելի է հաւանական համարել, որ ճիշտը ոչ թէ վերջին տեղանուան մէջ Վասպուրական աշխարհի նոր գաւառանուն (Մարանդ) տեսնելն է, որպիսի ենթադրութեամբ ուսումնասիրողները մեր նահանգի սահմանը չտապողաբար հասցրել են մինչեւ հարեւան Ատրպատականի Մարանդ քաղաքը[39], այլ վերջում ՔՆ տառերն ունեցող այդ խաթարուած բնագիրը՝ «Մարա[ւ]ան ք[աղաք]ն» ձեւով վերականգնելը: Իրաւացիօրէն համարւում է, որ նոյն Մարաւանն է վերաբերում Մովսէս Խորենացու՝ բանաւոր վէպից քաղուածի տպաւորութիւն թողնող յայտնի տեղեկութիւնը. «Արտաւազդայ ո՛չ գտեալ, ասեն, ...տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց եւ շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ»[40]: Գուցէ, իրաւացի կը

38 *Армянская география VII века*, էջ 19; *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, էջ 350; *ՄՀ*, հտ. Բ, 2172, 2188; **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը*, էջ 357:

39 Տե՛ս, օր.՝ **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 44, 65

40 **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Աշխատութեամբ **Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913 *(այսուհետեւ՝ ՊՀ)*, Ա.Լ, էջ 84; *ՄՀ*, հտ. Բ, էջ 1829,

լինի նաեւ ենթադրել, թէ նրան կարող էր վերաբերուել Ստրաբոնի «Աշխարհագրութեան» վկայութիւնը եւս (XI, XIV, 6)՝ Արտաշատ-Արտաքսատա մայրաքաղաքից արեւելք ընկած Արքսատա *քաղաքի մասին (Ἄρξατα): Վերջին տեղանունը վերականգնելի է թւում *[M]αρ[ά]-ξατα-Մարաշատ՝ ենթադրելով Արտաշիսեան եւ Արշակունեաց Հայաստանում, թերեւս, նշանակալի համբաւ ունեցած այս քաղաքի անուան նաեւ տուեալ երրորդ ձեւի գոյութիւնը:*

Արդ՝ Ստեփաննոս Օրբէլեանն իր երկի վերջում տալիս է նաեւ Սիւնեաց 12 գաւառների գիւղացանկերը, ընդ որում դրա վերտառութեան մէջ նշուած է. «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկք եկեղեցւոյ ըստ հին սահմանին *այս են»*[41]*: Այդ ցանկի* Սոթք *գաւառի 75 (76) գիւղերի ցուցակի վերջնամասում պատմիչը նշում է ոչ միայն* Ծար-*ը՝ 15 միաւոր հարկաչափով, այլեւ ուրիշ գիւղանուններ (օր.՝ Ծարից յետոյ՝ 7-8 անուն)*[42]*, որոնք համադրելի են թւում Տրաւէի վերնահովտում եղած բնակավայրերի հետ: Այսպէս, օր.՝* Գետաբակք - Գետամիջոյ վանք *(Սոթքի ցանկում* -բակ / -բակք *վերջաւորութեամբ անունների առատութեան վե-*

Նախ. 10:

41 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԴ, էջ 371; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ՀԴ, էջ 509:

42 Տե՛ս **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԴ, էջ 374; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ՀԴ, էջ 514-515:

րաբերեալ Հ. Հիւբշմանի իրաւացի դիտարկումից յետոյ, իրօք՝ 75-ից 14-ը[43]*, կարելի է նաեւ նկատել, որ փոխարէնն այս գաւառի ցանկում բացակայում են* -վանք *վերջաւորութեամբ գիւղանուններ, այն դէպքում երբ միւսներում դրանց թիւը 2-ից 9 է, ընդ որում այնտեղ էլ չկան* -բակ-*ով աւարտուողներ. թւում է, թէ այս դիտարկումը բաւարար է՝ համարելու, որ ըստ Հ. Հիւբշմանի՝ «շրջապատուած տեղ, գաւիթ, փարախ, ծիր, պարուակ» նշանակող* բակ *եզրոյթը տուեալ ենթատեքստում ունեցել է հէնց «վանք» իմաստը*[44]*);* Երերի - Ջերմաջուր *(ըստ Յովհ. Կարագեոզեանի՝ հետագայում* Իստիսու *յորջորջուած* Ջերմաջրի *հետ համադրելի է Ռուսա Ա-ի Ծովինարի սեպագիր արձանագրութեան* Երելթուա *երկրանունը՝ կազմուած վաղնջական շրջանի հայերէն* եռ /<երս/ *արմատով* եռել /<եռեալ/ *եւ* թուա *- «ջուր» բառերից*[45]*);* Հոնջենք

43 Հ. Հիւբշման, *Հին Հայոց տեղւոյ անունները*, էջ 275-276:

44 Այս վարկածն ընդունելու դէպքում, բացի *Գետաբակք - Գետամիջոյ վանք* համադրութիւնից, հնարաւոր է նկատել նաեւ այս ցուցակի *Նորաբակք* անուան համապատասխանութիւնը Մովսէս Դասխուրանցու երկի Գ.իր գլխում յիշատակուած *Նորավանքի* հետ, որը կառուցել էր «տիկինն Սպրամ…ի գաւառին Սոդէից»:

45 Յ. **Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, հտ. I, գիրք 1. *Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում)*, Եր., 1998, էջ 148-151: Ջերմաջուր գիւղը մէկ յիշատակութեամբ է յայտնի՝ Ծարի Ս. Սարգիս եկեղեցու արեւմտեան պատի նուիրատուական արձանագրութեան մէջ. «Ես՝ Կչիկ, տվի իմ *Ջերմաջրին* ջաղացն…» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, էջ 219): Իստիսուի

- Հաճաւ (*հմմտ. Աղահեջքում Հունչալք - Հոչանց [<*Հաւչանք] գիւղանուան տարբերակների հետ զուգորդութիւնը*); Վարժակի աղբիւր - Խտիբուլաղ (*Հաճաւից 6 կմ հիւսիս-արեւելք, համադրութիւնը՝ Յովհ. Կարագեոզեանի*[46]); Եղջերուենիք - Մարալդամի (*թէպէտ եւ սա Լեւագետի հովտում է՝ խորհրդային շրջանի Բարաշլարը [II] Հանդաբերդից հիւսիս-արեւմուտք, համադրուած դեռեւս Մ. Բարխուդարեանցի կողմից*[47]); Աւձի գետ, Աւձէն - Օտղշլաղ *կամ* Օտ-

հետ համադրութեան առումով հմմտ. նաեւ **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 81:

46 *Քարվաճառի (Քելբաջարի) շրջանի յուշարձանների քարտէզ* [հեղ. խումբ՝ **Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան, Յ. Կարագեոզեան**], Եր., 1995: Խտիբուլաղի յուշարձանների եւ վիմագրերի մասին տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 47-49, որտեղ գիւղանունը թարգմանուած է՝ *Ջերմաղբիւր*: Նկատենք, որ այս համադրութեան վերաբերեալ Սլ. Սարգսեանի կասկածանքը («որը դարձեալ Սոդք գաւառի բնակավայրերից է», տե՛ս նշ. աշխ., էջ 85), չի կարելի արդարացուած համարել (թէպէտ միւս դէպքերում կան ընդունելի դիտողութիւններ շտապողական համադրումների մասին): Այս *Վարժակի աղբիւր* տեղանուան հետ համեմատելի է Արածանիի վերնահովտի յայտնի տաք հանքային աղբիւրների հինաւուրց անունը՝ *Վարշակի ջերմուկներ* (**Ղազարայ Փարպեցւոյ** *Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան*, Աշխատութեամբ **Գ. Տէր-Մկրտչեան** եւ **Ս. Մալխասեան**, Տփղիս, 1904, դրուագ Գ, գլ. ՀԳ, էջ 132, հմմտ. *ՄՀ*, հտ. Բ, էջ 2327 («ի *ջերմկին*, որ կոչի *Վարշակի*»); **Հ. Ղ. Ալիշան**, *Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց*, Վենետիկ-Ս.Ղազար, 1890, էջ 513; *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 4, Եր., 1998, էջ 790):

47 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 404 (*Եղջերուաձոր*); **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 87; **Ս. Կարապետեան**,

աղլու (*Քարվաճառ աւանից հարաւ-արեւմուտք*): *Ի դէպ, վերջին՝* Աւձէն *գիւղանուան հետ կապուած հարկ է մանրամասնել, որ Օրբէլեանի՝ մեզ հասած գրչագրերում առկայ անուանաձեւը* Աւժէն *է, այն էլ՝ որպէս յաջորդ՝* Աղանեջք *գաւառի ցուցակի առաջինը: Սակայն ենթադրում ենք, որ այդ տեղում որեւէ արտագրողի նոյն տիպի սխալ է սպրդել, ինչ տիպի սխալի պատճառով, ըստ մեր դիտարկման՝ Աղահեջքի վերջին* Աղբաթխէրտ - Աղախիրտ (*տարբ.* Աղախերդ) *գիւղանունը յայտնուել էր յաջորդող* Հաբանդ *գաւառի ցուցակի սկզբում: Գրել ենք՝ «Այսօր էլ առկայ ձեռագրերի մեծ մասում գիւղացանկերը տրուած են երկու սիւնակով, եւ եթէ ենթադրենք, որ «Հաբանդ գաւառ» բառերը գրուած են եղել մայր ձեռագրի սիւնակներից մէկի վրայ (ո՛չ թէ սիւնակների մէջտեղում), ապա դրա դիմացի սիւնակի բառը, իրականում լինելով նախորդ գաւառի վերջին գիւղը, կարող էր ընկալուել որպէս Հաբանդի առաջինը»*[48]*: Իհարկէ, այս դիտարկման մէջ մեր ներկայ դէպքի համար պէտք է փոխել* Հաբանդ *բառն* Աղանեջք*-ով: Իսկ ինչ վերաբերում է մեր կողմից վերականգնուած* Աւձէն *անուանաձեւին, ապա ենթադրում ենք, որ յայտնուելով Աղահեջքի ցուցակի սկզբում՝ այն* Աւժէն*-ի է վերածուել գրչի վրիպման հետեւանքով, յա-*

Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 32 (*Եղջերուենիք*):

48 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 276-277 [այս ժողովածոյում՝ էջ 22 – *հեղ., 2009*]:

ջուր՝ ԱՆէժ *անուան վերջին բաղաձայնի ազդեցութեամբ:*

Սոթք գաւառի գիւղացանկում վերջին (Ծարի) մասից բացի Արեւելեան Սեւանի լեռնաշղթայից արեւելք ընկած գիւղանուններ են նշմարւում նաեւ սկզբնամասում: Սկսուելով գաւառակենտրոն Սոթք *գիւղից՝ թուարկումն, ըստ ամենայնի, ընթանում է դէպի արեւելք եւ անցնում Սոդքի լեռնանցքը, որից այն կողմ յիշատակուած են Լեւազետի հովտի, գուցէ, չորս մէկ տասնեակ գիւղեր: Դրանցից* Սափչի անապատ*-ը (տարբ.* Սափչանապատ*) մեծ հաւանականութեամբ համադրելի է Հանդաբերդի դիմացի ձորահովտում ուշ միջնադարում* Չափնի *անունով յայտնի գիւղի հետ՝ իր ԺԳ դ. եկեղեցիով, մահարձանով, խաչքարերով ու վիմագրերով[49]: Իբրեւ վարկած՝ Սոթքի գիւղացանկի ա-*

49 Յուշարձանների նկարագրութիւնը եւ վիմագրերի ընթերցումը տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 34-39 (հմմտ. **Մ. մագ. Տէր-Մովսիսեան**, *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադիի եկեղեցիները եւ վանական շինութիւնները*, Երուսաղէմ, 1938, էջ 93-94): ԺԸ դ. պատմիչը յիշատակում է այս գիւղի իգքաշիներին. «Պարսոյ զօրի մէջումն կէր Զ քրիստոնեայ, որ Թահմազին դուլ են կամ իգքաշի... մինը՝ Գեղաքունու *դուն* կասեն... Գեղաքունի չորս կողմէն կասեն՝ գեղն Սոթ անվանի, այս սոթեցի Աստումի որդի Աբիջանս, չա*ր*նեցի Այտողէն բէկի որդի Աղալջանըն եւ չա*ր*նեցի Մուավենց Տէր Մուսէսի որդի Բալիզն, եւ Ճաթայկերենց Թօ*բ*ուզի որդի Հախնազարս» (**Աբրահամ Երեւանցի**, *Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի*, Հրատ. **Հ. Ս. Ճեմճեմեան**, Վենետիկ-Ս.Ղազար, 1977, ԺԸ, էջ 75):

ունների աղաւաղումներ կարող են դիտուել նաեւ հետեւեալ ուշ յորջորջումները. Զալիգեօլ՝ *Լեւից 1,5 կմ հիւսիս-արեւելք <* Աւազա՞ն *(12 միաւոր հարկաչափով)[50],* Զամիլլու՝ *Սեւդլարից 4 կմ հիւսիս-արեւմուտք < Համամաբա՞կք (7 միաւորով),* Էլեասալիլար՝ *Սեւդլարի եւ Լեւի միջեւ <* Արաւիսաբա՞կ *(տարբ.* Արեւիսաբակ, *6 միաւորով),* Կոնգուր՝ *Սեօյուդլուչայի ձախ փափը եւ լեռ նրա ակունքի մօտ <* Գուկա*ր՞նջ (տարբ.* Գուկառինճ *[<**Գունկ-առի՞ճ*], 15 միաւորով): Ի դէպ, նշուած լեռը Լէօի կալուածացանկում կրում է* Կոնղուր *անունը[51], իսկ ցարական 5-վերստանոց քարտէզում՝* Կոմուր-դաղ*: Վերջին լեռնանուան հետ համադրելի է ԺԷ-ԺԸ դդ. յիշուած* Գոմէր *գիւղանունը[52]: Միաժամա-*

50 Ս. Կարապետեանը նշում է (*Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 40), որ Լեւ «գիւղից 1,6 կմ հիւսիս-արեւելք, 15 մ բարձրութեամբ առանձնացած ժայռի ստորոտում մէջքի վրայ ընկած է գեղաքանդակ, բայց անարձանագիր խաչքար»: Այս եւ յաջորդ ուշ յորջորջումները տալիս ենք ըստ՝ *Карта генерального штаба K-38-141. Кельбаджар, масштаб 100000*, Москва, 1978:

51 Լէօ, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական ճոցեւոր դպրոցի*, էջ 673 :

52 Տե՛ս ՀԴԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4; ՄՄ, Կաթող. դիւան, թղթ. 240, վաւ. 160, թ. 4ա (նոյն բնագիրը. «...Պետրոս ճոգեւոր տէրին հրամանաւն այս քանի գիւղօրայքս մեզ բաժին տվին... Ատրէնիս, Ըռուցփոր, Քավթառանց, Հաճաւ, Բորու, Քարվաճառ, *Գումէրն*, Զուար... Գրեցաւ թվին ՌՃԺ *[=1661 թ.]*, Յուլիսի 20»); *Հայերէն արձանագրութեամբ ատարկաներ*, Աշխատասիրութեամբ Ե. Մուշէղեանի, Եր., 1964, էջ 69 («Յիշ[ատա]կ է խաչս *Կոմերեցի* Պաղտասարին եւ կողակցոյն Սիմաւոնին եւ որդոյն Դավիդին, ի դուռըն Դադեու վանքին... թ*ի*վին

նակ, իր անունը Ի դարում Սեօյուդլուչայ-ից (թարգմ.՝ Ուռիջուր) ստացած Սեւդլարը ԺԹ դ. դեռ կոչւում էր Բաշ-դամ[53], այսինքն՝ Մեծ գոմ, եւ դա գուցէ բաւարար է՝ ենթադրելու, թէ հէնց այստեղ է գտնուել ուշ միջնադարի Գոմէր գիւղը (աւելի հնում, իբրեւ վարկած՝ Գուկառին):

Արդ՝ Լեւագետի հովտի այս գիւղախմբից յետոյ է Սոթքի գիւղացանկի թուարկումը վերադառնում Սեւանի աւազան՝ հասնելով հաստատապէս այստեղ գտնուած Նորաբակք-Նորավանքին[54] եւ Վասակաշէն-Վարդենիսին[55]: Ստեփաննոս Օրբէլեանի վերոբերեալ տուեալների հետ[56] համահունչ է Բջնիի Ս. Աստուածա-

ՌՄՂԴ-ին /=1745 թ./»): Հմմտ. Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 121:

53 Հմմտ. Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 21:

54 Տե՛ս վերեւում, ծնթ. 44:

55 Հմմտ. Դիւան հայ վիմագրութեան, պր. IV, էջ 360; ՀՅՇՏ Բառարան, հտ. 4, էջ 782:

56 [Նրա ԿԱ գլխում (Պատմութիւն տանն Սիսական, էջ 249) Սիւնեաց 30 նշանաւոր վանքերից 15-րդը նշուած է Դաղէի (տարբ. Թաղէի) անունով վանքը, որին նախորդում են Ծղուկ, Բաղք, Ձորք, Արեւիք, Հաբանդ գաւառների, իսկ յաջորդում՝ Աղահեջքի (աղահեջեան Ծիծառնոյ վանքից առաջ յիշուած է այլուստ անյայտ Կուռափաձորի վանքը), Վայոց ձորի եւ Գեղամ գաւառի (որում նաեւ Սոթքի՝ «մեծ մենարանն Մաքենոցն») վանքերը: Ցաւօք, նախկինում շտապել ենք ենթադրել, թէ խօսքն անպայման Տրտուի միջնահովտի յայտնի Խութավանքի մասին է եւ դրա հիման վրայ կարելի է վերջինիս շրջակայքը եւս վերագրել Սոթքին (տե՛ս ՀԱ 2008 թ. տարեգրքում, էջ 106): Սակայն այժմ գտնում ենք, որ անկախ Սիւնեաց տարաժամանակեայ տիրա-

ծին եկեղեցու հարաւային պատի 1031 թ. ընդարձակ արձանագրութեան տեղեկութիւնը, ըստ որի Հայոց կաթողիկոսութեան կենտրոնական արքեպիսկոպոսութեան[57] սահմանները նկարագրւում են այսպէս. «Եւ արդ ... զսահմանահատ վիճակս սորա, որ է՝ յարեւելից ի Ծար գետոյ մինչեւ ի գետն Ախուրեան»[58]: Եթէ ընդունենք, որ այստեղ Ծար գետ է կոչուած Տրտուի վերին հոսանքը, ապա պէտք է նաեւ համարենք, որ հէնց գետի այդ հատուածի գոնէ մի կտորով եւ արեւելքից նրա աւազանը իր Թութխու վտակի հովտից բաժանող լեռնաբազուկով են սահմանակցել աշխարհացոյցեան Սիւնիքի Սոթք գաւառը եւ աշխարհացոյցեան Արցախի յարակից

կալների՝ Դադիվանքի «խորաձորին» յաւակնելուց (յաճախ՝ յաջողուած, ուստի ինչ-որ հիմքեր ունեցած, որոնց քննութիւնն այլ հետազօտութեան նիւթ է)՝ քննարկուած գիւղացանկի եւ ըստ այդմ՝ աշխարհացոյցեան Սոթքի արեւելեան սահմանը հասել է Լեւագետի ստորին հոսանքի «խորաձորին»՝ ներառելով Սափչի-Չափնիի ու Հանդաբերդի ձորալանջերը, բայց չանցնելով Եանշաղի ու Ծաղիկանց լեռան (>Չիչագլու. հմմտ. Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 19) կողմը – հեղ., 2009]:

57 Հմմտ. 1298 թ. Գլաձորում Մկրտիչ Թեղենեցի գրչի ընդօրինակած «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց»-ի յիշատակարանում. «Այլ եւ զքեռորդի սորին՝ զտէր Յովհաննէս զարհեպիսկոպոսն Բջնոյ եւ զվերատեսուչն Այրարատեան նահանգին...» (Ձեռ. ՄՄ 1409, թ. 330բ; Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Եր., 1984, էջ 824):

58 Այս եւ շրջակայ վիմագրերը գիտական հրատարակութեան է պատրաստել («Դիւան հայ վիմագրութեան» շարքի առաջիկայ հատորի համար) Գագիկ Սարգսեանը:

շրջանը, ճիշտ այնպէս, ինչպէս որ դա պատկերացնում էին Ստեփաննոս Օրբէլեանին հասած աղբիւրների հեղինակները: Իհարկէ, կարեւոր է նաեւ անմիջապէս ընդգծել, որ աշխարհացոյցեան Սոթք-Սաւղք գաւառը չպէտք է շփոթել նրա ձեւաւորումից առաջ, անկասկած, գոյութիւն ունեցած, բատ ամենայնի, շատ աւելի մեծ տարածքով Ծաղէացոց իշխանութեան հետ[59]:

Զարգացած եւ ուշ միջնադարում եւս Սոթքի արեւմտեան եւ արեւելեան մասերը, որոնք Սիմէոն Երեւանցու «Ջամբռ»-ում բնորոշուած են «յայսկոյս լերինն» եւ «յայնկոյս լերինն» արտայայտութիւններով, յաճախ ընկալւում էին իբրեւ մէկ ամբողջութիւն: Այդպէս ունենք դեռեւս Վարդան Արեւելցու «Աշխարհացոյց»-ում. «Սոթից գաւառն՝ Ծարայ երկիրն է»[60]: Ուշագրաւ ՚է նաեւ նոյն ԺԳ դ. կէսերին Կիրակոս Գանձակեցու կողմից նկարագրման ձեւը. «Գիւղ մի ի սահմանս Գեղարքունեաց ծովուն ի կողմ Խաչենոյ, հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր Ջերմուկն է, Ծար անուն...»[61]: Նոյն կերպ, 1647 թ. յիշատակարանում ԺԷ դ. հին Աւետարանի նորոգման վայրը գրիչ Մովսէս երէցն անուանել է «ի յերկիրըն Ծարայ, ի մայրաքաղաքըն Սոթէի»[62]:

Նշելի է լոկ, որ ուշ շրջանում լիովին Դաշտավանք-Խութավանքի տիրոյթը հանդիսացող Ծար գաւառն արեւելքում ընդգրկում էր նաեւ Թութխուի հովիտը եւ Զափար գիւղի ու Խադարավանք-Խնթրավանքի շրջակայքերը Տրտուի միջնահովտում: Սիմէոն Երեւանցին «Խութավանից» տիրոյթների արեւելեան մասը թուարկում է հետեւեալ ձեւով. «Իսկ յայնկոյս լերինն՝ Մեծ Ծար, Կաժ, Անուխս, Խօլօղանց, Դաշտակ, Հաճաւ[63], Ապահէն, Ծումէն, Քարատակ, Զուար, Մոս, Սեւաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ, Մոթանց, երկու Դաւաչխուր՝ մեծ եւ փոքր[64], Լեւ, Եանչաղ, Բարսեղի չէն, Մէյտանն, Երիցի չէն[65], Խութավանք, Զափար, Կեարաք, Նորշէն,

---

59 Վերջինիս մասին մանրամասն տե՛ս **Ս. Տ. Երեմեան**, *Ծաղէացոց իշխանութիւնը*.- «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1960, թիւ 7-8, էջ 41-52; **Բ. Ուլուբաբեան**, *Պատմաաշխարհագրական ճշգրտումներ*.- «Բանբեր Երեւանի համալսարանի», 1971, թիւ 1, էջ 182-186; **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 189:

60 *Աշխարհացոյց* **Վարդանայ վարդապետի**, Քննական բնագիր. **Հ. Պերպերեանի**, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 12: Այստեղ բնագրում տպագրական վրիպակ է սպրդել՝ *Ծառայ* փխ *Ծարայ*. հմմտ., օրինակ, Ձեռ. ՄՄ 7085 (ԺԳ դար), թ. 151բ:

61 Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, Աշխատասիրութեամբ **Կ. Ա. Մէլիք-Օհանջանեանի**, Եր., 1961, գլ. ԽԸ, էջ 322:

62 *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ (1641-1660 թթ.), Կազմեց Վ. Յակոբեան, Եր., 1984, էջ 261:

63 Վերջին անունը բնագրում ակնյայտ վրիպակով է՝ *Հաճատ*: Մինչեւ այստեղ թուարկուած են *Տրտուի* վերնահովտի գիւղերը:

64 Վերջին 12 գիւղանունները *Թութխու* վտակի հովտում են:

65 Վերջին հինգ գիւղանունները *Լեւագետի* հովտում են, իսկ յաջորդ հինգը՝ *Տրտուի* միջնահովտում, ներկայիս Մարտակերտի շրջանի արեւմուտքում:

խնթրավանք»[66]*: Այս քանութ գիւղանուններից մի քանիսը յանուանէ յիշատակուած են մեր ձեռագրերի յիշատակարաններում, վիմագրերում ու կալուածագիր-սիգելներում՝* Ծար, Դաշտակ[67], Հանաւ[68], Ապահէն[69], Մոս[70], Խնթրավանք-

66 **Սիմէոն Երեւանցի**, *Ջամբռ*, էջ 283:

67 Ձեռ. ՄՄ 3601, թ. 229բ («աւարտեցաւ Սր մատեանս Ածայինն, որ կոչի Մաշտոց, ձեռամբ յոգնամեղ եւ յանհմաստ գրչի՝ սուտանուն եւեթ Եսայի /րիցու: Գրեցաւ սայ ի յերկիրս *Ծարայ*, ի գողս, որ կոչի *Դաշտակ*, ընդ հովանեաւ Սր Ածածնին եւ Մարդադօնեաց Սր Եշանիս եւ Սր Յակոբիս եւ այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ: Ի թվիս Հայոց ՌՃԻԲ */=1673 թ./»*): Թերեւս՝ 10 տարի առաջ նոյն Եսայի գրիչը եւ նոյն *Դաշտակ* գիւղում էր արտագրել (մեր նախորդին շատ նման բոլորագրով) նաեւ ՄՄ թիւ 4053 գրչագիրը, սակայն յիշատակարանում գիւղանունը չի պահպանուել, որովհետեւ ձեռագրում մկրատով կտրուած է վերջին թերթի կէսը՝ 301ա$_2$ սիւնակի բնագրով: Իսկ 301ա$_1$-ում ունենք. «...զեղեռնագործ Եսայի Հրէցս... կատարեցի զԱւետարանս ի թվականութեանս Հայոց ՌՃԺ եւ Բ */=1663 թ./*. ամէ՟ն, եւ ի թագաւորութե Պարսից ազգին Փոքր Շահ Աբասին, եւ ի հայրապետութե Աղուանից տն Պետրոսի սրազան կաթողիկոսի: Ի յերկիրս *Ծարայ*, ի գաւղն {...}»:

68 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 226 («...տուի զԱնիրուց հողն ի *Հանաւա‹յ›* եկեղեցին...»); **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 49 («Յիշատակ է նովս Ամիրճանին, Ամիրխանին, Ախիճանին, *Հ‹ա›ն‹ա›ւ* գ‹ե›ղ‹ո›յս...»):

69 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 198-199 («...գեւղս եւ ագարակս իրեանց սահմանաւքն՝ *զԱպահէն* եւ զԵզնարածանց, եւ զՀճանց եւ զԿանաչատրն, որ ի Վայոձոր»), 216; *Հայերէն ձեռագրերի ԺԷ՟ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 489 («...եկեալ հասաք ի յերկիրըն Ծարայ, ի գեօղն, որ կոչի *Ապահէն*»); **Ս. Քամալեան**, *«Աղուանից աշխարհի» Թաղէ կամ Խոթա վանքի... մի դաբալա*,– ...Кавказ и Византия", вып. 2, Եր., 1980, էջ 153 («Ես՝ Սէտիս /*տարբ*. Սէյտիս/, որդի Գրիգորին, թոռն պարոն Հասանայ, եւու մեր վանորէից *զԱպահէն*. զԽութ. զԽոզենակս...»), էջ 154 («...տվի վախմ բաժնէն իմէ *զԱպահէն* իր մուլքովն...»):

70 *Հայերէն ձեռագրերի ԺԷ՟ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 601 («...եկեալ բնակեցաւ ի յերկիրս Ծարա‹յ›, ի գեօղն *Մոս*...»):

71 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 221 («...յիշատակ է բարեմիտ Յուրին... ի երկրէն Ծարայ. ի գեղջէն *Եանշաղէն*...»):

72 *Հայերէն ձեռագրերի ԺԷ՟ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 654 («...որ եմ յերկրէն Ծարայ, ի գեղջէն *Չափարու*»): *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 133 («Ես՝ Մլեհ, տուի զի‹մ› գնած հողերն ի *Չափարին* ի ս[ուր]բ ոխտս...»); էջ 216; **Ս. Քամալեան**, *«Աղուանից աշխարհի» Թաղէ կամ Խոթա վանքի... մի դաբալա*, էջ 153:

73 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 135, ծնթ. 1 («Ես՝ Տ[է]ր Գրիգորէս... գնացի Նոր շէնն, շինեցի երեք ջաղաց... եկի ի դուռն Ս[ուր]բ Առաքելոյս, շինեցի զԽութ... թվին ՌԷ՟ */=1558 թ./»*): Հմմտ. *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 215; **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 120; **Սիմէոն կաթողիկոս Երեւանցի**, *Ջամբռ*, էջ 519:

74 [Ժամանակին «Սիւնիքի *Ծար գաւառում*» (իբրեւ թէ, նրա «Յրագետ անապատում») է արտագրուած համարուել նաեւ ՄՄ թիւ 4074 գրչագիրը (Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթուղիկեայց», նօտրագիր, 1670-ից յետոյ), որը, սակայն, արդիւնք է անխնամ գրութեան եւ թերթի աջ եզրի քայքայուածութեան պատճառով ոչ դիւրին ընթերցուող յիշատակարանի՝ «Որոտան գաւառ»-ին վերաբերող հատուածի թիւր վերծանման: Տե՛ս *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ա, Կազմեցին **Օ. Եգանեան**, **Ա. Զեյթունեան**, **Փ. Անթաբեան**, Եր., 1965, էջ 1143; **Պ. Չոբանեան**, *Քարվանսա-*

Խաղարավանք, Եանշաղ[71], Չափար[72], Նորշէն[73], Խութավանք-Դադիվանք[74]: *Անուններից մեծ մասը*

յատակ համապրում է ԺԹ դ. քրդաբնակների յորջորջումների հետ, արտացոլուած քարտէզներում եւ այլ նիւթերում. Ծար > Ջար, *Կած* > Կեշդեկ, *Խօլօզանց* > Խոլազեյ, *Հաճաւ* > Խալաշլու *(հետագայում* Օկտեաբրբենդ), *Ապահէն* > Բեճա *(հետագայում* Քիլսեալու, *1767 մ բարձրութեամբ* Ղալա *յորջորջուած լեռնագագաթի հարաւային լանջին), Ծումէն* > Ջոմարդ, *Ջուար* > Ջուլֆուգարլու, *Մոս* > Մոզքենդ, *Սեւաջուր* > Ղարասու *(վտակ), Հալուճ* > Օրուջլու, *Դաւաչխուր - նոյնը (հետագայում* Խալլանլու), *Լեւ* > Լեւքենդ, *Եանչաղ - նոյնը, Բարսեղի չէն* > Բաղրսաղ, *Մէյտան* > Մայդանչայ, *Երիցի չէն* > Քեշիշքենդ, *Կեարաք* > Գեարաւենդ[75]: *Իսկ այն, որ «Ջամբո»-*

ոի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, էջ 219 (ցաւօք, վրիպումը կրկնուել է նաեւ ՀԱ 2008 թ. տարեգրքի մեր յօդուածում, էջ 110, ծան. 55): Բերում ենք այդ սխալաշատ ընագրի տուեալ հատուածի իրական ընթերցումը (բացելով պատուոյ նշանի տակ գրչի յապաւումները եւ նշելով եզրի կորուստները). «Ես՝ Յովասա[ա]փս, յետինս ի մանկանց եկեղեցւոյ... յերկրի/ն Սի/նե[ա]ց, ի գաւառի/ն Որո{տա}նն, ի գեղջէն Ըղուերծու, գրեցի զՄարգիս {...} ի Մեծ անապատն փոխեալ, ի Ցրագետն կ{...} յիշխանութե[ան]ն Շահ Սլէյմանին, որ թ{...}եցաւ յաւտ‹ո›րս ս[ո]ր[ա]...» (թ. 417ա$_2$) – *հեղ., 2009*]:

75 Հմմտ., օր., **Е. Кондратенко**, *Карта Елисаветпольской губернии с показаниемъ сельскихъ обществъ и распределения населения по вероисповеданию*, Тифлисъ, 1888; *Карта Кавказскаго края*, Тифлисъ, 1904 (5-վերստանոց); *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1910; *Специальная карта Евразийской России*. Тифлисъ, 1911 (10-վերստանոց); **Լէօ**, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1838-1913*, Թիֆլիս, 1917, էջ 152-156, 673-678); *Карта гене-*

ում բացակայում են յիշատակարաններից ու վիմագրերից մեզ յայտնի Բորու, Քարվաճառ[76], Գոմեր[77], Կողուր *(հետագայում* Կոթուրլու)[78], Ծպէլ *(հետագայում* Բաշտիբէլ, Բաշտուբէլ, *խորհրդային շրջանում* Բաշլիբել)[79] *անունները, բացատրւում է, հաւանաբար, նրանով, որ ԺԸ դ. վերջերին դրանք արդէն հայաբնակ չէին:*

* * *

Արցախի կենտրոնական գաւառների արեւմտեան հատուածի պատկերն ամփոփելու համար կրկնենք, որ յարակից գաւառների սահմանների նշուած ճշգրտումներից յետոյ հնարաւոր է դառնում աշխարհացոյցեան Հարչլանք *գաւառը տեղորոշել հէնց Տրտուի Թութխու վտակի աւազանում, հարեւան ինչ-ինչ տարածքների*

рального штаба К-38-141. *Кельбаджар*:

76 *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*. Մասն I (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Եր., 1955, էջ 24 («...ի հռչակաւոր երկիրս Ծար, ի գեւղս *Քարավաճառ*»); ՄՄ, Կաթող. դիւան, թղթ. 240, վաւ. 160, թ. 4ա, ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4 («...գիւղօրայքս... Հաճաւ, *Բորու*, *Քարվաճառ*, Գումէրն, Ջուար»):

77 Տե՛ս վերեւում, ծնթ. 52:

78 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 204; **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 112 («Ես՝ Յովանէս երէց *Կողրեցի*, իմ հալալ արդեամբք միաբանեցայ‹ք›...»): Համադրութեան առումով տե՛ս նաեւ **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 80:

79 **Լէօ**, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի*, 673-677: Մանրամասն տե՛ս **Ա. Յ. Յակոբեան, Յ. Ե. Սիմոնեան**, *Ղափիվանքի նորայայտ արձանագրութիւնը եւ Ծպէլի տեղադրութեան հարցը*.– «Պատմա-բանաս. հանդէս», 1998, թիւ 1-2, էջ 227-232:

հետ միասին[80]*: Մանրամասնենք, որ Թութխուի հովտում* Հարցլանք *գաւառանունը որոշակի նմանութիւն է դրսեւորում ԺԹ դարից* Օրուցլու *յորջորջմամբ գիւղի անունը՝ Կարասու վտակի գետաբերանում (որի վերնահովտում «Ջամբռ»-ում նշուած է* Սեւաջուր *բնակավայրը)*[81]*: Օրուջլուի հետ իրաւացիօրէն համադրւում է «Ջամբռ»-ի* Հալուճ *գիւղանունը*[82]*: Իսկ հաշուի առնելով Հայաստանի (նաեւ՝ յարակից երկրների) տեղանուններում հնդիրանական Ր-Լ եւ Ղ-Ր հնչիւնական անցումների յաճախակիութիւնը*[83] Հալուճ *անունը կարող է դիտուել իբրեւ* Հարցլանք *գաւառանուան հետ ուղիղ կապ ունեցող:*

Վերջինիս հետ աւելի ուղղակի կապը նկատելի է Հարջանոտս *տեղանուան դէպքում, որը յիշուած է Գանձասարի կաթողիկէի 1240 թ. շի-*

80 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Կենտրոնական Արցախի Հարցլանք եւ Փիանք գաւառների տեղագրութիւնն*, էջ 47-50:

81 **Սիմէօն Երեւանցի**, *Ջամբռ*, էջ 283: Տե՛ս վերեւում, ծան. 44: Համադրութեան առումով հմմտ. նաեւ **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 78:

82 **Մ. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 21; **Մ. Սարգսեան**, *Արցախ*, էջ 79: Գեղամ Բադալեանի կարծիքով (**Սիմէոն կաթողիկոս Երեւանցի**, *Ջամբռ*, էջ 516)՝ *Հալուճ* գիւղանունը համադրելի է Մոսի կողքին գտնուող *Ալուշալու*-ի հետ, սակայն դա հակասում է ցուցակի յստակ հերթականութեանը («...Մոս, *Սեւաջուր, Մոխատեղ, Խրանց, Հալուճ*»):

83 **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, *Индоевропейские языки и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т. I, Тбилиси, 1984, էջ 198-199; **Յ. Կարագեօզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 236:

նարարական վիմագրում (ներքուստ, հիւսիսային պատին, 27 տող), Ջալալ-Դօլա Հասան իշխանի նուիրատուութիւնների թուարկման հատուածում. «...գեղորայս Մաչեղ, Հարջանոտս, *Բոլորբոչն, :Ա: լուծ ի* Խաչինաձոր, Նորաշինկան գետն, *Այգեստանս, Եղգընդնի, զոր իմ հայրն է տուել...»*[84]*: Այստեղ թուարկուած անունները յայտնի չեն հաստատապէս Մեծ Իրանքում գտնուած Գանձասարի վանքին մօտիկ եւ վիմագրական ու այլ յաճախակի յիշատակումներ ունեցող տեղանունների թւում*[85]*, իսկ նրանցից մէկը՝* Նորաշինկան գետ-*ը (*Խաչինաձոր-*ի կողքին) համադրելի է Խաչէնագետի* վերնահովտի՝ *ԺԹ դարից* Թազաքենդ *յորջորջուող գիւղի ա-*

84 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, էջ 38-39; **Բ. Ուլուբաբեան**, *Գանձասար*, Եր., 1981, էջ 88; **Է. Գանիէլեան**, *Գանձասարի պատմութիւն*, Եր., 2005, էջ 110: Բոլոր ընթերցումները ստուգել ենք նաեւ տեղում:

85 Բացառութիւն է կազմում միայն *Մաչեղ* անունը, որին նման է Դրմբոն գիւղի շրջակայքի *Մատուռի ձոր* կոչուած հատուածում յիշատակուած *Մաչախ* տեղավայրը (տե՛ս **Շ. Մկրտչեան**, *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները*, Եր., 1980, էջ 49; **Ш. Мкртчян**, *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха*, Ер., 1988, էջ 51; *ՀՅԵՏ Բառարան*, հտ. 3, էջ 697, 716): Նշենք, սակայն, որ Դրմբոնի մօտերքում Ներքին Խաչենի տիրակալների՝ Հասան-Ջալալեանների կալուածքների գոյութիւնն ինքնին անսպասելի է, յամենայն դէպս, մեզ ծանօթ փաստերով այդ շրջանը պատկանել է Վերին Խաչէնի՝ Հաթերքի իշխաններին: Ուստի, իբրեւ զուտ վարկած (քանի որ մեր խնդիրը լուծւում է անկախ դրանից), չի կարելի լրիւ անտեսել անգամ երկու նոյնանուն տեղանունների գոյութեան տարբերակը:

նուան հետ: Դրանից հնարաւոր է ենթադրել, որ Հասան Ջալալի նուիրաբերած կալուածքները, այդ թւում եւ Հարչանտուս-ը, *գտնուել են Խաչէնագետի վերին վտակների շրջանում: Այդ դէպքում նկատելի է, որ* Հարչլանք *գաւառանուան հետ որոշակիօրէն համադրելի կարող է դիտուել նաեւ Գանձասարից քիչ արեւմուտք յառնող լեռան* Խոչալեուրտ *(նաեւ՝* Ղոչաղուրդ*) յորջորջումը, որն իր բարձրութեամբ (2389,3 մ) չի զիջում աւելի արեւմուտքում Թուխնուի եւ Խաչէնագետի ջրբաժան Արցախեան լեռնաշղթայի գագաթներին (2100-2300 մ), եւ որը հիւսիսից սեղմելով՝ Խաչէնագետի ընդարձակ վերնահովիտը բաժանում է նրա նեղ միջնահովտից: Աւելացնենք, որ այդ լեռանը կարող է վերաբերել Դադիվանքի 3 կալուածագրերում (սիկէլներում) յիշուած* Հարզաքար *(նաեւ՝* Հարազաքար, Հարցլուղայա*) լեռնանունը*[86]:

Դժուար չէ նաեւ նկատել, որ Խոջայեուրտով դէպի արեւելք ձգուող՝ Տրտուի եւ Խաչէնագետի ջրբաժան շղթայի Արծաթահանքի լեռներ *անուան*[87] *հիման վրայ հնարաւոր է առաջ քաշել այն վարկածը, թէ հաւանաբար պատահական չէ* Հարչլանք *անուան հիմքի նմանութիւնը բնիկ հայերէն «արծաթ» բառի (նաեւ «սպիտակ» նշանակութեամբ) հնդեւրոպական *Hark'- հիմքին (որից ունենք՝ խեթ. harki-, հին հնդկ. rajatá-, յուն. ἄργυρος, հին պարսկ. ardata-, լատ. argentum եւ այլն*[88]*): Նշենք, որ ըստ Յովհ. Կարագեոզեանի հաւանական ենթադրութեան՝ Հարճլանքը յիշուած է բիաինական Ռուսա Ա արքայի Ծովինարի սեպագրում (սիւնիք-արցախեան 23 «նուաճուած երկրների» թուարկման մէջ)՝ հայերէնի սեռական հոլովով դրուած (առանց աճական Հ-ի եւ բառամիջում* Կ>Ծ>Ճ *հնչիւնափոխութեան ենթակայ* Կ-*ով)* Երկիլա *անուանաձեւով*[89]*: Բայց վերջինիս հիմքը «արկտոս»-«արջ» բառով ստուգաբանելու եւ* Քիրս (=Խիրս) *լեռնանուան հետ կապելու հեղինակի փորձը*[90] *դժուար է ընդունել. փոխարէնը՝ ընդգծուած սուր, ժայռոտ եւ բոլոր կողմերից դիտարկելի գագաթով այդ լեռան անունը հաւանական է թւում բխեցնել պարզապէս հայերէն «քերծ» («ժայռ») բառի նոր պարսկերէն յորջորջումից*[91]:

Կարելի է յաւելել, որ ԺԳ դարի մի յիշատակարանում (Չիկագոյի համալսարանի մատենադարանի ձեռ. թիւ 949, Աւետարան, 1237 թ.) Գանձասար մենաստան-*ի մասին ասւում է՝*

86 **Ս. Քամալեան**, *«Աղուանից աշխարհի» Թաղէ կամ Խոթա վանքի… մի ղարպալա*, էջ 153-154:

87 **С. Лисициан**, *Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк*, Ер., 1992, էջ 30:

88 **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, *Индоевропейские языки и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т. II, Тбилиси, 1984, էջ 713: Հմմտ. **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, Եր., 1971, էջ 317-318:

89 **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 197-198:

90 Նոյն տեղում, էջ 259-260:

91 Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Կենտրոնական Արցախի Հարչլանք եւ Փիանք գաւառների տեղադրութիւնը*, էջ 49:

«*ի* գլուխ սահմանաց *Խաչէնոյ*»[92], *որը կարող է լինել արձագանքը Մեծ Իրանք եւ Հարճլանք գաւառների միջեւ հնաւուրց սահմանի: Նման ձեւով Վարդան Արեւելցու կողմից բնորոշուած է Ուտիքի Գարդման գաւառի հարաւային ծայրամասում գտնուող Գետաբակք բնակավայրը. «եւ ինքն [մոնոթելիզմին հարած Եզր կաթողիկոսից հալածուած Յովհան Մայրագոմեցին* - Ա. Յ.*] չոգաւ յԱղուանս,* ի գլուխ *Գարդման գաւառի*»[93] *(ըստ Կիրակոս Գանձակեցու՝ «երթեալ Յովհաննու՝ ընտրեաց իւր տեղի լռութեան ի կողմանս* Գետաբակս *բերդոյ*»[94]*):*

Եւ վերջապէս, եթէ ընդունելի է Հարճլանքի տեղորոշումը Թոփխուի ասպանում ու Խաչէնագետի վերնահովտում, ապա կարելի է նաեւ որոշ նմանութիւն նկատել գաւառանուան

92 Թ. 313ա. «մեք՝ Գրիգոր եւ Վարդան ...քահանայք.... յորս եմք տեղեակեալ *ի գլուխ սահմանաց Խաչենոյ*, ի սուրբ ուխ[տէն] *Գանձասար* մենաստան, որ [հան-դէպ°] դղեկիս Սխսադան Հ[ասա°]խաղաց...» (տե՛ս **F. Sanjian**, *A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States*, Los-Angeles-London, 1976, էջ 234: Հմմտ. *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 199; **Հ. Յակոբեան**, *Արցախի ձեռագիր մատեաններին արտեստի մասին*,– «ԼՂՀ անցեալը, ներկան եւ ապագան», Եր., 2007, էջ 377):

93 **Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ** *Պատմութիւն Տիեզերական*, Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861, էջ 86: Հմմտ. **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** *Պատմութիւն Տիեզերական*, Աշխատ. **Ստ. Մալխասեանց**, Ս. Պետերբուրգ, 1885, Բ.գ., էջ 88 («Իսկ նորա գնացեալ ի Գարդման, անդ կատարէ զկեանս իւր»):

94 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. Ա, էջ 55:

եւ ուշ միջնադարում յայտնի Մրջմանց *տեղանունի միջեւ (1581 թ. սիկէլում* Մարչամանց[95] *[<*Մարջամանց*], 1729 թ. ընդօրինակուած Մաշտոց ծիսարանի յիշատակարանում՝* Մրչմանց[96], *Լէօի կալուածագանկում «Միրչմանց /տճ. Մարջիմակ/»*[97]*, ԺԹ դ. այլ փաստաթղթերում ու քարտէզներում՝* Մերջիմեկ, Մարջումակ[98]*)՝ նրա սկզբում, իբրեւ վարկած, գիտելով Հայաստանի հիւսիսում տարածուած անուանակերտ* Մ *նախադիրի յաւելում (հմմտ.* Ալգէթի *[<*Ագլէթի/ -* Մանգղեաց փոր, Եզր - մեզրէ, Ազա */երկիր/ -* Մազազ*): Իսկ դրա հիման վրայ հնարաւոր է ենթադրել, որ աշխարհացոյցեան Հարճլանք գաւառի մէջ կարող էր գտնուած լինել նաեւ Մրջմանցով հոսող գետակի՝ նոյնպէս ուշագրաւ* Արագ-*չայ (=*Արագ-*ջուր [<**Հա°րգ*]) անունով վտակի հովիտը՝ արեւելքում, թերեւս, Արծաթահանք-Խոջալեւարտի լեռնազանգուածից դէպի Տրտու իջնող՝* Խաղարայ *եւ* Բերդաձորի Ս. Գրիգոր *վանքերի ձորակներով հանդերձ*[99]*:*

95 **Ս. Քամալեան**, *«Աղուանից աշխարհի» Թաղէ կամ Խոթա վանքի... մի ղաբալա*, էջ 154 («եւ՝ Գոնցէս... տվի իմ հայրենեացն Խոթաասարն, Շարքարն, Հարզաքարն, եկեղեցին *Մարչամանցու* մուլքն...»):

96 Տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 221 («Եւ՝ *Մրչմանցի* տէր Մելիքսեթի որդի Մարկոսս...»):

97 Լէօ, *Պատմութիւն Ղարապաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի*, էջ 152:

98 Մանրամասն՝ **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 74-75:

99 Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Կենտրոնական Արցախի Հարճլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն*, էջ 49-50:

Ինչ վերաբերում է Հարջլանքից հիւսիս, Տրտուի ձախ ափին ընկած ընդարձակ շրջանին (Լեւագետի ստորին հոսանքի «խորաձորից» ու Եանշաղից մինչեւ Հաթերք եւ Ականաբերդ), ապա բոլոր հնարաւոր տարբերակներից առաւել հաւանականն է, որ այն կարելի է վերագրել Մեծ Կուանք գաւառին (ինչպէս արել են շատ ուսումնասիրողներ[100]), միայն թէ նշելով, որ դրա համար առայժմ, ըստ էութեան, չունենք աղբիւրների ուղիղ վկայութիւններ: Նկատենք, որ կենտրոնական Արցախի Մեծ Իրանք (տարբ. Մեծ Առանք) եւ Մեծ Կուանք (տարբ. Մեծ Կողմանք) գաւառների հիմնական տարածքները, շնորհիւ աղբիւրներում դրանց մասին եղած մեծաքանակ յիշատակումների, նոր գրականութեան մէջ հաստատուն են տեղորոշւում: Առաջինը տարածւում էր Տրտու գետի միջին հոսանքից հարաւ՝ ներառելով Խաչէնագետի հովիտը եւ Ծիկաքար (հետագայում՝ Քարագլուխ) ամրոցի շրջանը[101] արդէն Կարկառի աւազա-

100 Տե՛ս, օր., **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 40, 48 եւ ներդիր քարտէզները: Հմմտ. **Հ. Ղ. Ալիշան**, *Արցախ*, էջ 48; **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 32: [Նորերս՝ նաեւ Պարոյր Մուրադեանի «Արցախը վրացական նորայայտ ձեռագրերում» մեծարժէք յօդուածում (**Պ. Մուրադեան**, *Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը*, պր. Ա, Եր., 2008, էջ 83) – *հեղ., 2009*]:

101 Տե՛ս *ՊԱ*, Գ.ժթ *ի/*, էջ 326. «ի լնուլ ՄՀ թուոյ Հայոց *[=821 թ.]* ելին զաղտաբար ի Պարտաւայ արք ընտիրք ի Տանկաց եւ յաւարի առին զԱմարաս գաւառ… եւ ի *Մեծ Առանց* [*bclr* Մեծիրեանց] *սահմանի* ամրացեալք՝ ի տեղւոջն, որ կոչի [*bclr* ամրացան ի *փխ* ամրացեալք…կոչի] *Ծիկաքար*: Յայնժամ արի եւ չքեղատեսա-

նում, իսկ երկրորդը՝ Տրտուի միջին հոսանքից հիւսիս՝ ներառելով նաեւ Մռաւի լեռնաշղթայի հիւսիս-արեւելեան փեշերը մինչեւ դաշտաբերան[102]: Սակայն երկու գաւառների համար էլ բուն Տրտուի հովտում դէպի արեւմուտք (դէպի Հարջլանք եւ Սոթք) տարածման սահմանը ճշտող ուղիղ աղբիւրագիտական վկայութիւնները ցաւալիօրէն պակասում են:

Արդ՝ վերն առանձնացուած տարածքում, Մռաւի լեռնաշղթայից ու Թրղի վտակի հովիտն արեւմուտքից շրջափակող նրա բազուկից (=Աբասասա՞ր) դէպի Լեւագետ ու Տրտու հոսող Մէյդան, Բուլանղըխ, Կեարաք (ԺԹ դարից յօրջորջուած՝ Աղդաբան, բայց ըստ Սարգիս Ջալալեանցի՝ Ուղտապան[103]), Պրտողագետ (մի կա-

կն Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր… յարձակեալ՝ առ հասարակ դիաթաւալ զնոսա ցիր եւ ցան կացուցանէին»: Հմմտ. **Ս. Սարգսեան**, *Խաչէնի ամրոցները*, Ստեփանակերտ, 2002, էջ 5-31:

102 Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Դիւանք գաւառների տեղադրութիւնն*, էջ 45: [«Աշխարհացոյց»-ի *Մեծ Կուանք* գաւառի եւ Ստրաբոնի *Կոմիսէնէ* եպարխիայի համադրման հնարաւորութեան մասին (*Կու-ան-ք – Կոմ-իս-էնէ* հնդեւրոպական մի շարք լեզուներում արձանագրուած *Մ – Ւ* անցումով) տե՛ս այս ժողովածոյի վերջին բաժնում – *հեղ., 2009*]:

103 **Ս. վրդ. Ջալալեանց**, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 221, հմմտ. **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 87-88: Խաչիկ Դադեանի մի նկարագրութեան մէջ ունենք. «…քիմբազի մօտով Աղաք, Ղարակեօզլու Ղշլաղի մօտով *Կարաքին գետ* կամ *Աղտաբանի ջուրը* անցայ» (ՀՊՊԿԱ, ֆ. 319, ց. 1, գ. 155, թ. 1, ըստ՝ **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յու-*

լուածագրում՝ Հաթերքոյ գետ[104]) եւ Ականաջուր ոչ մեծ վտակների հովիտների բազմաթիւ տեղանուններից Մեծ Կուանքի կազմում աղբիւրագիտօրէն վկայուած կարող է համարուել միայն ամենից արեւելք ընկած Սարսանգ-ը: Այդ տեղավայրը հանրայայտ ջրամբարի պատնէշի մօտ է, 6-7 կմ դէպի հարաւ-արեւմուտք Թրղիի գետաբերանից (որի ձախափնեակում գտնուած Աստղաբլուրը Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում բառացի արտագրութեամբ ընդգրկուած «684 թ. պատմութեան» մէջ[105] նշուած է Մեծ Կուանքի կազմում[106]), եւ

շարժանները, էջ 81):

104 Ս. Քամալեան, *«Աղուանից աշխարհի» Թաղէ կամ Խոթայ վանքի... մի դարպա*, էջ 153-154 («եւ երկրիս հողանիւթն այս է՝ *Հաթերքոյ գետն* ի վեր մինչեւ ի *սարն Ապասայ*, Մռաւայ Ծարագօյն... Հարազաքարն, Ընձայ կաչկառն, բերթն Մազրոյ եւ *գետն Հաթերքայ*...»):

105 Այդ երկի մասին, որը 630-680-ական թթ. անցքերի ականատեսի հաւաստի շարադրանքը է պարունակում, տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 196-201: **А. Акопян**, *О хронологии последних событий в „Истории 684 года"*,— „Кавказ и Византия", вып. 6, Ер., 1988, էջ 24-36: Հմմտ.՝ **Անանուն**, *684 թուականի պատմութիւն*, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**,— *ՄՀ*, հտ. Ե, Է. դար, Անթիլիաս, 2005, էջ 795-895:

106 *ՊԱ*, Ա.իը, էջ 98-99; *ՄՀ*, հտ. Ե, էջ 802, նախ. 12-13 («Եւ եկեալ հասանէին [Մաշտոցի՝ Երուսաղէմից վերադարձող սաները - *Ա. Յ.*] ...ի ձորախոխում [*bclr ձեռ.* խորախոխում], անտառայար, ի [*bclr* եւ ի] մայրաստանիկ աշխարհն Արցախայ՝ գաւառն *Մեծ Կուենից*: Եւ ի կիրճն [*a* կիրճս] ճանապարհին երկաջոկեալ գունդն, յերկուս բաժանելով՝ նստէին զուպարս յայնմ տեղւոջ, որում *Աստեղն* կոչեն *բլուր*՝ ի հիւսիսոյ կողմանէն [*a*

նրա իրանական կազմութիւն ունեցող ու թարգմանաբար «Գլուխ/Կատար քարի» նշանակող[107] անունը լիովին համադրելի է թւում է դարում յայտնի Գլխովանք-ի հետ: Իսկ վերջինիս՝ Մեծ Կուանքում գտնուած լինելը նոյնպէս ուղիղ մատնանշում է «684 թ. պատմութիւն»-ը. «Ապա հրաման տայր [Ջեւանշէր Աղուանից իշխանը Ուխտանէս կաթողիկոսի հետ միասին - Ա. Յ.] յուղարկել զնա [Իսրայէլ-Աբաս վանականին, հետագայում Մեծ Կողմանց եպիսկոպոս - Ա. Յ.] խաչապայծառ տապանակաւն անդրէն ի վերնակողմ [bclr ձեռ.՝ վերնակողմն] գաւառն Մեծ Կուենից՝ ի բարձրավանդակ լեառնն, ի տեղի մենաստանի [bclr մենաստանին] իւրոյ՝ ի Գլխոյ վանս»[108]: Երկի յաջորդ գլխում եւս ունենք. «Ապա զգացեալ Աստուծոյ սպասաւորին, որ էր ի Հին եկեղեցւոջ անդ, զծագումն խաչին, ...քաջայաւժար կամաւ երթայր ի Մեծ Կուենից գաւառն [a Մեծ Կուենիցն գաւառ] ի Գլխոյ վանաց եկեղեցին»[109]: Մի քանի

կողմանն], եւ գունդն երկրորդ՝ յայնկոյս Տրտուական գետոյն, ի հարաւական [*bclr* հարաւոյ] կողմանն, ի մայրոլորտ ովտի պուրակի բնակէին՝ *Չղախն* անուանեցելոյ [վերջինս Մեծ Իրանքի «փնձակում» էր - *Ա. Յ.*]»): *ՊԱ*, Ա.իթ, էջ 102; *ՄՀ*, հտ. Ե, էջ 806, նախ. 28 («զանուն տեղւոյն *Աստեղաբլուր* անուանեցին մինչեւ ցայսօր»); *ՊԱ*, Բ.իթ, էջ 205; *ՄՀ*, հտ. Ե, էջ 840:

107 Տե՛ս **Գ. Մ. Նալբանդեան**, *Պարսկերէն-հայերէն բառարան*, էջ 339-355; *Персидско-русский словарь*, Москва, 1960, էջ 276-277; *Инструкция по русской передаче географических названий Ирана*, էջ 126:

108 *ՊԱ*, Բ.լա, էջ 212; *ՄՀ*, հտ. Ե, էջ 848, նախ. 9:

109 *ՊԱ*, Բ.լգ, էջ 218; *ՄՀ*, հտ. Ե, էջ 852, նախ. 26:

*գլուխ սորբեւ, Իսրայէլին եպիսկոպոս ձեռնադրելու պատմութեան հատուածում ասւում է մի փոքր այլ կերպ. «եկեալ հասեալ նոքա ի Մի*ջնարցախն *գաւառ՝ գտանէին զնա ի* Գլխոյ վանն՝ *յիւրում մենաստանին»*[110]*: Այդ պատմութեան աւարտին յիշատակւում է նաեւ Մեծ Կողմանքի եպիսկոպոսանիստ* Տաղձանք *անունը («Եւ նոքա եկեալ՝ ի նախնականն հասանէին եպիսկոպոսանոցն, որում* Տաղձանն *[*bclr *Տաղձանս] անուանէին»)*[111]*, սակայն նրա ճշգրիտ տեղորոշումը պարզ չէ. գուցէ, հաւանական է, որ այն ընկած լինէր Գլխովանքից էլ արեւելք՝ աւելի մօտ կաթողիկոսանիստ Պարտաւին:*

Մակար Բարխուդարեանցը ձախափնեայ այս բոլոր տարածքները («Եանշաղ վտակից» մինչեւ «Թրղի գետակ»), վերագրում էր «Պատմութիւն Աղուանից»-ի Բ.ԻԹ գլխում մի փոքր անորոշութեամբ յիշատակուած «Ըստակ (Ոստակ) գաւառ»-ի՝ կոչելով այն նաեւ «Հաթերք»[112]*: Սակայն «Աշխարհացոյց»-ը եւ միւս սկզբնաղբիւրներն այդպիսի գաւառի մասին ոչինչ չգիտեն*[113]*: Իսկ նոյն «684 թ. պատմու-*

110 *ՊԱ*, Բ.լէ, էջ 234; *ՄՀ*, հտ. Ե, էջ 865, նախ. 10:

111 *ՊԱ*, Բ.լէ, էջ 235; *ՄՀ*, հտ. Ե, էջ 866, նախ. 14:

112 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 130: Նոյնը՝ **Ս. Կանայեանց**, *Անյայտ գաւառներ հին Հայաստանի*, Վաղարշապատ, 1914, էջ 128:

113 Չնայած դրան, Սլ. Սարգսեանը հակուած է Մ. Բարխուտարեանցի տեսակէտի մի տարբերակի. «սկսած ներկայիս Եանշաղ բնակավայրից... մինչեւ Թրղի (ներառեալ Հաթերքը) տարածում է «Աշխարհացոյցում» յիշատակուող Մեծկողմանքի *[?!]* Ռոստակ գաւառը» (*Արցախ*,

թեան» տուեալ հատուածի ուշադիր դիտարկումից երեւում է («Յայնժամ կամաւորութեամբ յանձն առեալ զհրամանս հայրապետին եպիսկոպոսացն երկոցունց՝ ... գային [Պարտաւից - Ա. Յ.*] Հոգւոյն Սրբոյ առաջնորդելով, հասանէին [*a չիք *հասանէին] յՌոստակ [*br *յըՌոստատակ,* c *յըՌոստակ,* l *յՌոստաստակ] գաւառն* Մեծ Կողմանցն *այնոցիկ, ի [*a չիք *այնոցիկ ի] Ջգախեան ովիտն, յապարխաձեւ դաշտակն առ ափն Տրտուական գետոյն, որ է ի վիճակին* Մեծ Իրանաց»[114]*), որ բնագրի* Ռոստակ-*ը (կամ* *Ռոտաստակ-*ը) յիշատակուած է կա՛մ որպէս Պարտաւից դէպի Մեծ Իրանք ճանապարհին ընկած Մեծ Կողմանք (Մեծ Կուանք) գաւառին վերաբերող բնութագրիչ-ածական*[115]*, կա՛մ էլ որպէս (մասամբ վերականգնման ենթակայ սկզբնօրինակում) Պարտաւի շրջակայ* Ոստ-Ռոստակ *գաւառ (նոյն՝* Ուտի Առանձնակ*), ինչպէս կարծում էր դեռեւս Վարագ Առաքելեանը*[116]*:*

էջ 37, համմտ. նաեւ **Հ. Ղ. Ալիշան**, *Արցախ*, էջ 37):

114 *ՊԱ*, Բ.իթ, էջ 205; *ՄՀ*, հտ. Ե, էջ 840, նախ. 25:

115 *Քաղաքային կենտրոն, աւան, շուկայագիւղ, շրջան* նշանակող *ռոստակ* իրանական եզրոյթի մասին տե՛ս **Գ. Մ. Նալբանդեան**, *Պարսկերէն-հայերէն բառարան*, էջ 310; *Инструкция по русской передаче географических названий Ирана*, էջ 124; **Э. Ш. Хуршудян**, *Армения и Сасанидский Иран (Историко-культурологическое исследование)*, Алматы, 2003, էջ 96:

116 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները **Վ. Առաքելեանի**, Եր., 1969, էջ 285, ծնթ. 190: Համմտ. վերեւում, ծնթ. 10: Այս հարցում Բ. Յ. Յարութիւնեանի մօտ ինչ-որ խառը պատկեր է առա-

Տեղին նշենք, որ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում բառացի արտագրութեամբ ընդգրկուած այսպէս կոչուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան» մի տեղեկութեան համաձայն՝ Ուտիք նահանգի այս կենտրոնական գաւառի հիւսիսային սահմանն անցել է մարզպանանիստ Պարտաւ քաղաքից ոչ շատ հեռու դէպի հիւսիս[117] *(«Եւ իբրեւ անցին [Վիրոն եւ իր ուղեկիցները, Զարաբերդ-Ջրաբերդից - Ա. Յ.] ընդ ձորս լերանց եւ թափեցան ի գեղեցկատես, վայելուչ, հարթ հաւասար յուռթի դաշտն* յՈւտի *[*bclr *Ուտի]* գաւառի, *ոչ կարէին իմանալ նշմարել զտեղիսն [*a *զտեղին], ընդ որ անցանէին՝ յանթիւ բազմութենէն զաւրացն Շաթայ... Գտին զնա բանակեալ ի* Գո-

ցացել. «կարելի է կարծել, որ *Մեծ Կողմանք* ասելով հեղինակն ի նկատի ունի *Ուտիք* եւ *Արցախ* սահմանային աշխարհները, քանի որ *Մեծ Կողմանց* մէջ *[?!]* է մտնում *Ռոստակ* գաւառը, որն անտարակոյս պէտք է նոյնանայ *Ուտի Առանձնակին*» (**Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 37): Նոյնն է քիչ վերեւ, ուր վարկած է առաջ է քաշում, թէ «ինչ-ինչ հանգամանքներում երկու գաւառները միաւորուել են մէկ եպիսկոպոսի ենթակայութեան կամ տեսչութեան ներքոյ», այն դէպքում, երբ աղբիւրը հէնց այդ հատուածում տալիս է ե՛ւ *Մեծ Կողմանց* Դաւիթ, ե՛ւ *Մեծ Իրանից* Յովէլ եպիսկոպոսների անունները:

117 630-632 թթ. միջեւ գրուած այդ հատուածապատում երկի մասին տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 188-196: Հրատ.՝ **Անանուն Կաղանկատուացի**, *Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց եւ պէսպէսանցից տիեզերահեծ տագնապին*. Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**.– *ՄՀ*, հտ. Դ, Է. դար, Անթիլիաս, 2005, էջ 369-414:

րին *[*bclr *նմին]* գաւառի, *ըստ* հիւսիսոյ կողմանէ, *մօտ [*a *մերձ] ի մեծ քաղաքն Պարտաւ՝ ի մէջ յորդաբուղխ մաւրաջրուցն»)*[118]*: Այդ պատճառով տուեալ սահմանահատուածը (հիւսիսից հարեւան Շակաշէն գաւառի հետ) ճիշտ կը լինէր անցկացնել ոչ թէ Հերան գետի (Կարաչայ) ստորին հոսանքով (ինչպէս Ս. Տ. Երեմեանի եւ Բ. Յարութիւնեանի քարտէզներում է), այլ աւելի հարաւ՝ մօտաւորապէս Ինջագետի ստորին հոսանքի գծով:*

Արդ՝ անհրաժեշտ է նաեւ յիշել, որ Հաթերքից մինչեւ Լեւագետ ձգուող շրջանը գոնէ զարգացած միջնադարի ժամանակահատուածում խիստ սերտօրէն կապուած է երեւում Դադիվանքի արեւմտեան՝ Սեւանի ափերին հարող սոթք-ծարեան *տիրոյթների հետ: Դեռ «ի թուին Հայոց* $\overline{ՉԿԱ}$ [=1312 թ.]» *ընդօրինակուած Աւետարանի (հետագայում Բանանցի Թարգմանչաց անապատում գտնուած) յիշատակարանում իբրեւ պատուիրատու հանդէս է գալիս՝ «ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դաստակերտէ քաջաց, ի գնդէ զաւրաց* Գրիգոր իշխան Հայոց՝ *տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, Հանդաբերդոյ եւ* Ականոյ *եւ բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Շաղուագայ, եւ գաւառք մեր յանուանէ այս է՝ Սոթ Գլուխ եւ Բերդաձոր եւ Ձորանց, Հասկաքակս, Առբենին, Կոյեր, Ուռիաձոր եւ Խորուագետ, Դուանոց, եւ այլ իւրեանց միջոց մազրովն* ի մեր ձախնեաց

118 *ՊԱ*, Բ.ժղ., էջ 159; *ՄՀ*, հտ. Դ, էջ 406, ձախ. 85-87:

մնացեալ հայրենիք է իւրեանց չորս սահմանովն...»[119]: Տարայ վանքի գեղաքանդակ խաչքարի վրայ (ներկայումս՝ կորուած) Յովհ. Շահխաթունեանցը եւ Մ. Բարխուդարեանցն ընթերցել են. «...ես՝ Սայտի, որդի պարոն Շանշին... ի թուին ՊՀԹ [=1430 թ.], տեղեացս տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ եւ Հանդաբերդոյ, եւ ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքայ, կանգնեցաք զխաչս...»[120]: Յիշենք, որ հէնց Հաթերքի տէրերն են կառուցել Դադիվանքի պահպանուած շէնքերը, այդ թւում՝ հոյակերտ կաթողիկէն, որի շինարարութիւնը 1214 թ. աւարտին հասցրեց տարաբախտ Վախթանգ իշխանի տիկինը՝ Արզու խաթունը (նրա

119 *ԺԳ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Եր., 1950, էջ 84: Տեղին նշենք, որ այստեղ յիշուած *Ուռհաձոր* գաւառակը Լեւագետի հովտի Սեհիղլարի (<*Սեօյուդլու-Ուռհաշէն*, տե՛ս վերեւում, ծնթ. 53) հետ համադրելու՝ Գեղամ Բադալեանի փորձը (**Սիմէոն կաթողիկոս Երեւանցի**, *Ջամբռ*, էջ 511-512) արդարացուած չի թւում: Այս *Ուռհաձոր*-ի հետ իրօք համադրելի է «Ջամբռ»-ի եւ 1661 թ. թղթի *Ուռուցփոր*-ը (նաեւ՝ *Ըռուցփոր*, տե՛ս վերեւում, ծնթ. 52), որը *Խութավանից... վիճակ*-ում դնելով՝ «Ջամբռ»-ը յստակ նշում է նրա եւ 1312 թ. նրա հետ յիշուած *Հոսաբակ*-ի (=*Հասկաբակս*, ԺԳ դարում՝ *Հասաթա՞ղք*) ու *Աւտարէնիս*-ի (=*Աւտրենին*, 1661 թ. թղթում՝ *Աւտրէնիս*) դիրքը. «Սոքա *յայսկոյս* լերինն են, կից Արեգունւոյն Գեղամայն»: Իսկ *Կայեր*-ը եւ *Դասայանոց*-ը (1312 թ.՝ *Դուանոց*) քիչ վեր դրուած են *Մաքենեաց վանից... վիճակ*-ում, որն Արեւելեան Սեւանի լեռներից միայն արեւմուտք էր ընկած (**Սիմէօն Երեւանցի**, *Ջամբռ*, էջ 283):

120 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 408; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 225:

վիմագրի սկզբում ասւում է. «Ես՝ Արզու խաթունս, նուաստ աղախին Ք[րիստոս]ի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վախտանկա(յ)՝ թագաւորազնո(յ) տ[եառ]ն Հաթերքո(յ) եւ ամենայն Վերին Խաչէնո(յ), յուսով մեծաւ շինեցի զս[ուր]բ կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմո(յ) եւ զաւակաց իմոց...»)[121]: Ի տարբերութիւն «Ջամբռ»-ի ներկայացրած ԺԸ դ. պատկերի, ըստ որի վանքի տիրոյթներն արեւելքում հասնում են մինչեւ Ջափար, Կեարաք ու Նորշէն[122], մեզ հասած մի քանի կալուածագրերում, «Դատէի վանից» կալուածք է համարւում նաեւ Հաթերքն իր շրջակայքով: Վերը բազմիցս յղուած ղաբալա-սիկէլի սկզբում, ըստ հրատարակիչ Սարգիս Քամալեանի՝ Գանձասարի կաթողիկոս Պետրոս Խանձկեցին (1653-1675 թթ.) «գրում է, թէ վկայ եմ, որ Հաթերքը վախմ է Թադէ առաքելոյն, աջ կողմից էլ կնիքը գրուած: Յետոյ Եսայի կաթուղիկոսի ձեռքն ու կնիքն է՝ վկայ եմ այս բանին: Երրորդ տեղը՝ Երեմիա կաթուղիկոսի ստորագրութիւնը եւ կնիքը՝ վկայ եմ այս բանին: Չորրորդ տեղը՝ Գանձասարի Գրիգոր կաթուղիկոս, որդի Մէ-

121 Տե՛ս **Բ. Ուլուբաբեան**, *Դադի կամ Խութայ վանք*, - «Էջմիածին», 1971, թիւ Զ, էջ 66-70; **P. Cuneo**, *Architettura Armena dal quarto al diciannovesimo secolo*, Roma, 1988, էջ 451-455; **Մ. Հասրաթեան**, *Հայկական ճարտարապետութեան Արցախի դպրոցը*, Եր., 1992, էջ 44-49; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 198-199; **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 90-110:

122 **Սիմէօն Երեւանցի**, *Ջամբռ*, էջ 283: Տե՛ս նաեւ վերեւում, ծնթ. 66:

լիք-բէկլին..., այս հաստատ բանիս վկայ եմ, *կնիքը աջ կողմից: Հինգերորդ տեղը՝ Փիլիպպոս Հայոց՝* վկայ եմ, *կնիքը մօտը, վեցերորդ տեղը՝ «Եմ՝ Ակոբոս...»*[123]: *Թէպէտ, անմիջապէս էլ նշենք, որ մի կարճ ժամանակ առաջ, մեր սիկէլում վկայակոչուած Հայոց կաթողիկոս Փիլիպպոս Ա Աղբակեցու (1632-1655 թթ.) կոնդակում Հաթերք գիւղը յիշուած է Եղիշէ Առաքելոյ կամ Ջրվշտիկի կոչուած վանքի թեմի (Մեծ Կուանք, Մեծ Իրանք եւ Կողթ գաւառների տարածքում) գիւղերի թւում.* «...Հաթերքու, *Ականու, Ջանկաթաղու, Կուլաթաղայ, Մոխրաթաղու, Կիսապատու, Մեծ շինու, Մաշմնու, Մալատկանու, Զարտախին, Վերին Շ(ի)նաթաղու, Ափոտուլա, Սաշլապատայ Թթուտին, Ուղտակուայ, Կոկթափին, Եղակերու, Ծակառաշինու, Վանքին, Գետաշէնու, Սլուքեցւոյ, Բաղշիքու, Մրցնու, Հաճիշինու, Քօչկայ, Հատխու, Էիբլօղայ, Միրզիկուայ, Ոսկանապատի..., Ցնծահալայ, Գետամիջու, Համասարապակուց... Եւ ընդ աւրհնութեանս ծառերուք վերոյգրեալ Սուրբ Եղիշէի Առաքելոյ վանից առհասարակ սեպհական քահանայք եւ ժողովուրդք...»*[124]:

Ամեն դէպքում, բերուած բոլոր փաստերով հանդերձ՝ առանց ուղիղ աղբիւրագիտական հիմքերի հնարաւոր չէ զարգացած միջնադարի Վերին Խաչէնի տիրակալների արեւմտեան

123 Ս. Քամալեան, *«Աղուանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի... մի դաբալա*, էջ 151: Նաեւ վերեւում, ծնթ. 101:

124 Տե՛ս Մ. եպ. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 48:

(սոթք-ծարեան) տիրոյթների եւ Դադիվանք-Հաթերքի շրջանի միջեւ կապերը բաւարար համարել, որպէսզի պատկերացնենք, թէ աշխարհացոյցեան ժամանակների Հարջլանք կամ Սոթք գաւառների հիւսիս-արեւելեան սահմանները անցել են Լեւապետի սարին հոսանքից ու Տրտուից այն կողմ: Ի դէպ՝ այդ սերտ կապերը լիովին կարող էին ձեւաւորուել Խաչէնագետի հովտից սկզբնապէս Տրտուի միջնահովտում՝ Վաղուհասում ու Հաթերքում հաստատուած եւ դրանով մասնաւորապէս վերջինիս շրջակայքի ու Մեծ Կուանքի միւս՝ հիւսիս-արեւելեան կէսի (որտեղ աւելի ուշ ձեւաւորուեցին Ջրաբերդի ու Թալիշ-Գիւլիստանի մելիքութիւնները) պատմական ճակատագրերն իրարից առանձնացրած Վերին Խաչէնի իշխանների (ԺԳ դարից՝ Դոփեաններ) հետագայ յաջորդութիւնների շնորհիւ[125]: *Ընդ որում այդ կապերը*

125 Մանրամասն տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, էջ 144-162: Տեղին նշենք, որ այս դարաշրջանում Տրտուի զոյգ ափերի (Հաթերքի ու Վաղուհասի)՝ մէկ իշխանութեան մէջ մտնելը ամենեւին չի կարող պատճառ դառնալ՝ անտեսելու վաղ շրջանի աղբիւրները, որոնցում Տրտու գետն է հանդէս գալիս իբրեւ սահման աշխարհացոյցեան Մեծ Կուանք եւ Մեծ Իրանք գաւառների միջեւ: Այդ սահմանն, այնուամենայնիւ, գետագծից հարաւ (Արծաթահանքի լեռներով) է տարուած Բաբկէն Յարութիւնեանի քարտէզներում (նոյնը եւ՝ **R. H. Hewsen**, *Armenia: A Historical Atlas*, Chicago-London, 2001, էջ 100. «Armenia According to the Seventh-Century Ašxarhac'oyc'» քարտէզում): Սակայն հեղինակի բուն բնագրում զարմանալիօրէն մատուցուած է սկզբնաղբիւրներից բխող իրական պատկերը. *«Մեծիրանից* գաւառը, ինչպէս ճիշտ

պիտի, բնականաբար, արագ ժառանգէր (թէպէտ եւ՝ մասնակիօրէն) Դադիի վանական հաստատութիւնը, եւ վերջինիս տիրոյթներն իրօք պէտք է տարածուէին աշխարհացոյցեան շրջանի Մեծ Կուանք, Հարջլանք, Սոթք եւ անգամ Գեղաքունի գաւառներում:

* * *

Առկայ աղբիւրագիտական տուեալների համադրումը ցոյց է տալիս, որ վաղ շրջանում Սիւնիքի մաս կազմող Տրտուի վերնահովիտը՝ Ծար գաւառի տարածքը, ինչպէս նաեւ Սոթքի մնացեալ, Սեւանայ լճի ափն ընդգրկող արեւմտեան հատուածը, դուրս է եկել այդ աշխարհի աւատատէրերի տնօրինութիւնից եւ միացուել Արցախ աշխարհի Մեծ Իրանք գաւառի (տուեալ դէպքում արդէն՝ Խաչէնի) իշխանների տիրոյթներին: Ըստ Մովսէս Դասխուրանցու մօտ պահպանուած ուղիղ տեղեկութեան՝ իր Սպրամ դստերը փրկելու համար Տրտուի միջնահովտում տիրոյթներ ունեցող Միհրական տոհմի վերջին իշխան Վարազ Տրդատի կինը «...ամուսնացուցանէ զՍպրամ Ատրներսեհի Սահլի որդւոյ, որ էր ի տոհմէն Հայկայ տէր Սիւնեաց, որոյ բռնադրաւութեամբ կալեալ էր

գտնում են ուսումնասիրողները, տեղադրւում է *Խաչէնագետի* վերին աւազանում եւ տարածուել է մինչեւ *Տրտու* կամ *Թարթառ* գետը: Սրա մէջ էր գտնւում Տրտուի ափին գտնուող ապարիսաձեւ *Չղախական* հովիտը, *Ճիկաքար* բնակավայրը, *Դաստակերտը*...» (Բ. Յարութիւնեան, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 38):

զգաւառն Գեղամայ»[126]: Տեղին նկատենք, որ այստեղ Գեղամայ գաւառ ասելով հեղինակն, ըստ ամենայնի, նկատի ունի ոչ թէ ամբողջ Գեղաքունի գաւառը, որն «Աշխարհացոյց»-ում ընդգրկում էր Սեւանայ լճի ողջ արեւմտեան ու հարաւ-արեւմտեան ափերը, այլ նրա միայն հարաւային մասը՝ հետագայ աղբիւրներում յիշուած սահմանացուցիչ Շողուագ (ներկայումս անհասկանալի անուանափոխութեամբ՝ Ջորաղբիւր) գիւղից արեւելք, ներառելով նաեւ յարակից Սոթքի լճակողմեան կէսը: Այս ընդգրկումով գաւառը յայտնի է նաեւ ուրիշ աղբիւրներում, օր.՝ երբ նրա բնակավայր է համարւում նշանաւոր Մաքենիսը, որը Ստեփաննոս Օրբէլեանի գիւղացանկում (եւ ըստ այդմ, գտնում ենք՝ «Աշխարհացոյց»-ում) Սոթքում էր: Այդպէս է, օր.՝ Վարդան Արեւելցու «Աշխարհացոյց»-ում. «Գեղամ Գեղարքունի է, ուր կայ ուխտն Մաքենիս...»[127]: Կամ՝ Մաշտոց Եղիվարդեցուն վերաբերող յայտնի յիշատակարանում. «...եղեալ հայրն նորա ի տիս մանկութեան, եւ գնաց պանդխտութեամբ ի գաւառին Սոթից... Յետոյ ի վախճանելն նորա յարեցաւ մանուկն Մաշթոց ի կրաւնաւորս... եւ հմուտ եղեւ Գրոց Սրբոց եւ նոցին Աստուածազգեցող զաւրութեանցն ի կրաւնաստանին, որ կոչի Մաքենոցք, ի գաւառին Գեղարքունիք»[128]:

126 *ԴԱ*, Գ.իբ/իգ/, էջ 340:

127 *Աշխարհացոյց* **Վարդանայ վարդապետի**, էջ 12:

128 Ձեռ. ՄՄ 970, թ. 359ա: Հմմտ. **Գարեգին Ա կթղ. [Յովսէփեանց]**, *Յիշատակարանք ձեռագրաց*, հտ. Ա (Ե

Իսկ Սպրամ իշխանադստեր սկեսրայր Սահլ Սմբատեանի (Մովսէս Դասխուրանցու պնդմամբ՝ «ի տոհմէն Հայկայ»)՝ «Սիւնեաց տէր» լինելու առումով ուշագրաւ է 881 թ. Մեծ Մասրիկ գիւղում նրա որդի եւ Սահլի թոռ Գրիգոր Ատրներսեհեան իշխանի կանգնեցրած խաչքարի բանաձեւը. «Ես՝ Գրիգոր Ատրներսեհեան, Սիւնեաց եւ Աղվանից իշխան, կանգնեցի զ(ս)ուրբ նշանս՝ աւգնական հաւատացելոց...»[129]: Այդպէս, արդէն ԺԱ դարում Գրիգոր Մագիստրոսը ձեւակերպում էր. «...ի մերում սեփհականին իսկ յԱղուանեանն աշխարհի աւանն՝ կոչեցեալ Տար»[130]:

Արդ՝ ուշագիր քննութեան արդիւնքում հնարաւոր է մանրամասնել, որ Սոթք-Ծարի տարածքը Խաչէնի տիրոյթների մէջ է մտցուել, հաւանաբար, միայն Սահլ Սմբատեանի իշխանութեան վերջին տարիներին, Բաբեկի ձերբակալումով Արաբական խալիֆայութեանը մատուցած նրա նշանակալի ծառայութեան դիմաց: Բաբեկին ձերբակալած Սահլ իբն Սունբատին մեծ գանձագին եւ շնորհներ տալու մասին մի քանի տարբերակով պատմում են արաբ հեղինակները՝ ատ-Դինաւարին, Բալազուրին, ալ-

դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 84; *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, Աշխատասիրութեամբ **Ա. Ս. Մաթեւոսեանի**, Եր., 1988, էջ 41:

129 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. IV, էջ 334:

130 **Գրիգոր Մագիստրոսի** *Թղթերը*, Բնագիրն առաջաբանով եւ ծանօթութիւններով... լոյս ընծայեց **Կ. Կոստանեան**, Ալեքսանդրապոլ, 1890, էջ 221:

Եակուբին, ալ-Մուկադդասին, ալ-Մասուդին, ատ-Տաբարին, Իբն ալ-Ասիրը[131]: Ըստ ալ-Մասուդիի եւ ատ-Տաբարիի՝ Խաչէնի հայ իշխանը խալիֆայից նաեւ պատրիկի թագ էր ստացել[132]: Իսկ ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի՝ նա Հայոց, Վրաց եւ Աղուանից աշխարհների իշխանաց իշխան՝ «տերանց տէր» էր նշանակուել (թերեւս, շատ կարճատեւ)[133]:

131 *Արաբական մատենագրեր Հայաստանի մասին*, Հաւաքեց եւ թարգմանեց **Բ. Խալաթեանց**, Վիեննա, 1919, էջ 95-96, 119; **Իբն ալ-Ասիր**, Թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ **Ա. Տէր-Ղեւոնդեանի** (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 11. Արաբական աղբիւրներ, Բ*), Եր., 1981, էջ 141-145, 379; 16: *Արաբ մատենագիրներ*, Ներածութիւնը եւ բնագրից թարգմանութիւնները **Ա. Տէր-Ղեւոնդեանի** (*Օտար աղբիւրները..., 16*), Եր., 2005, էջ 218, 281, 387: Հմմտ. **Ն. Ադոնց**, *Պատմական ուսումնասիրութիւններ*, Պարիս, 1948, էջ 134-136; **V. Minorsky**, *Caucasica IV: I. Sahl ibn-Sunbāṭ of Shakkī and Arrān*,– BSOAS, 1953, XV/3, էջ 509-510; **Յ. Քիւրտեան**, *Բաբակ եւ Սահլ իպն Սնբատ*, - «Բազմավէպ», 1958, էջ 9-22, 72-82, 132-139:

132 *Tarikh* **at-Tabari**, Edition critique par **M. Abu-l-Fath Ibrahim**, t. IX, Le Caire, 1969, էջ 54; **Н. А. Караулов**, *Сведения арабских писателей о Кавказе*,– СМОМПК, вып. XXXVIII, Тифлисъ, 1908, էջ 92; **Ս. Գ. Բարխուդարեան**, *Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանութիւնները*, էջ 62; *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. II, Եր., 1984, էջ 363:

133 *ՊԱ*, Գ.ի /իա/, էջ 330-331 («ի նոյն ամին /=837 թ./ նոյն տէր Սահլի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բաբան... ետ ի ձեռս Ամիր Մոմնոյ: Եւ ընդ վաստակոցն առնու յարքունեացն վարձս բարիս, զի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար... ի սոյն ամի /=838 թ./ տերանց տէրն Յովհաննէս, որ

Բնական կը լինէր մտածել, որ հէնց այդ ժամանակ Խաչէնի տէրն իր տիրոյթներին միացրել է նաեւ յարակից Սիւնիք նահանգի որոշ տարածքներ («բռնագրաւութեամբ կալեալ էր *զգաւառն Գեղամայ»): Իսկ դեռեւս Ժ դարի 20-ական թթ., ըստ Մովսէս Դասխուրանցու եւ Ստեփաննոս Օրբէլեանի՝ միեւնոյն ողբերգական դիպուածին՝ Վարազ Տրդատ Աղուանից իշխանի ու նրա մանկահասակ որդու սպանութեան վերաբերող տեղեկութիւնների համադրութեան՝* Դադոյի վանքի խորաձոր-*ի գոնէ մի մասն անհրաժեշտ է դիտել իբրեւ Սիւնեաց իշխանների տիրոյթ, կամ առնուազն՝ յաւակնութեան առարկայ: Պատմիչներից առաջինը բուն բնագրում այդ դիպուածը նկարագրում է այսպէս. «Եւ ի նոյն ամի տէր Ներսեհ ի Փղիպեան [*bclr ձեռ.՝ *Փիլիպեան] սպան զՎարազ Տրդատ ի Ստեփաննոսեան, եւ զորդի նորին ի գող մաւրն [*a ձեռ.՝ *մաւրն գող] զենին եւ զամենայն ստացուածս նորա յափշտակեցին: Այս Վարազ Տրդատ ի Միհրական տոհմէն [*a *տոհմէ] էր, որք զԱղուանս ժառանգեցին՝ որդի ի հաւրէ առնլով [*a *առլով]»[134]: Երկի նախավերջին գլխում, որտեղ Դասխուրանցին ամփոփում է Աղուանից իշխանների մասին իր տեղեկութիւնները եւ գնահատականները, աւելում է մի փոքր այլ կերպ. «Զայս Վարազ Տրդատ եւ որդի իւր Ստեփաննոս Ներսեհ [*bclr *Ներսէ] ի Փիլիպեան՝ ազ-*

Հայոց, Վրաց եւ Աղուանից եղեւ տէր»): Այս հատուածի աղբիւրի մասին տե՛ս քիչ ստորեւ:

134 *ՊԱ*, Գ.ժթ/ի/, էջ 326:

գակիցն իւր, սպան ի միում ժամու ի խորաձորն, *որ կոչի* Դադոյի վանք»[135]: *Ստեփաննոս Օրբէլեանի «Պատմութիւն տանն Սիսական» երկում նոյն դիպուածի մասին կարդում ենք գրեթէ նոյն բառերով, սակայն մի քանի էական տարբերութիւններով. «Ի սոյն ամի եւ տէր Ներսեհ* Սիւնի՝ *որդի Փիլիպպէի, սպանանէ վասն ոխութեան ինչ զՎարազ Տրդատ՝ որդի Ստեփաննոսի Աղվանից իշխանի, եւ զորդին եւս նորա ի գող մաւրն սատակէ եւ զամենայն ինչս նորա յաւարի առնու: Այս Վարազ Տրդատ ի Միհրական տոհմէն էր, որ ունէր զսեպհական տէրութիւնն Աղուանից»[136]: Թէպէտ նկարագրուած հաշուեյարդարն իրականացնողի՝* Սիւնեցի *իշխան լինելն արձանագրուած է միայն Օրբէլեանի մօտ, սակայն բովանդակային պարզ քննութեամբ կարելի է նկատել, որ այդ մանրամասը յօրինուած չէ նրա կողմից, քանի որ դրա համար որեւէ պատճառ հնարաւոր չէ նշմարել: Միանշանակ է, թերեւս, որ այդ մանրամասը պարզապէս առկայ է եղել ենթադրելի սկզբնաղբիւրում, իսկ Մովսէս Դասխուրանցու կողմից բաց է թողնուել անկարեւորութեան եւ աւելորդ մանրամասն ներառելու պատասխանատուութիւնից խուսափելու պատճառով. միեւնոյն պատճառով Սիւնեաց պատմիչի մօտ բացակա-*

135 *ՊԱ*, Գ.իբ/իգ/, էջ 340:

136 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԼԲ, էջ 115; *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 158-159:

յում է հակամարտող իշխանների՝ ինչ-որ կերպ ազգակից լինելու մասին մանրամասնը:

Տեղին նշենք, որ վերը բերուած բնագրերի համադրութեան շնորհիւ ի յայտ եկող մեծ նմանութիւնը թոյլ է տալիս ընկալել Ստեփաննոս Օրբէլեանի եւ Մովսէս Դասխուրանցու կողմից նոյն սկզբնաղբիւրը, այն է՝ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի՝ մեզ չհասած «Պատմութիւն» երկն օգտագործած լինելու իրողութիւնը, ինչպէս նաեւ ճշտել վերջինիս բովանդակութեան սահմաններն ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի: Ամբողջ ԼԲ գլխում Սիւնեաց պատմիչը ներկայացնում է Թ դ. առաջին կէսի Սիւնիքին վերաբերող վկայութիւններ, որոնք շատ դէպքերում բառացի համընկնում են Մովսէս Դասխուրանցու երկի Գ գրքում յատուկ ժամանակագրութիւն ունեցող հաղորդումների հետ: Նկատելով «Պատմութիւն Աղուանից»-ում Սիւնիքին վերաբերող վկայութիւնների անսպասելի առատութիւնը՝ մենք փորձել ենք ինչ-որ մեկնաբանութիւններ տալ դրան[137]: Սակայն այժմ կարելի է բաւարար համարել դրանցից միայն մէկը. Մովսէս Դասխուրանցին Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկում առատ նիւթ գտնելով իր խնդրոյ առարկայ «Աղուանից» երկրի վերաբերեալ՝ մեծ ծաւալով քաղել է դրանք եւ այդպիսի նիւթերի արանքում պարզապէս ընդօրինակել նաեւ զուտ Սիւնիքին վերաբերող որոշակի նիւթեր: Իսկ Մաշտոց կաթո-

137 **А. А. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 203, 210:

ղիկոսի՝ նշուած ժամանակագրական հաղորդումների աղբիւրը լինելու հանգամանքը նախկինում չի նկատուել պարզապէս այն պատճառով, որ այդ մասին ուղիղ վկայութիւնը Ստեփաննոս Օրբէլեանի շարադրանքի բովում յայտնուել է յաջորդ գլխի վերջնամասում, Թանահատի վանքի մասին տրուած պատմութիւնից յետոյ: Վերջինն առնուած չէ Մովսէս Դասխուրանցու կողմից, սակայն բնագրագիտական ուշադիր ընթերցումից երեւում է, որ ոչինչ չի խանգարում դրա գոնէ մեծ մասը եւս համարելու Մաշտոց Եղիվարդեցու կորուած երկին յանգող: Իսկ Թանահատին նուիրուած այդ պատմութիւնից յետոյ Սիւնեաց պատմիչը բառացի գրում է. «Եւ զայս ծանոյց մեզ Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի, որ ի Սեւան», եւ ապա շարունակում. «Բայց գտաք յիրոց արձանագրութեանցն, եթէ 400 ամաւք յառաջ քան զհայ թուականն շինեցաւ եկեղեցին յիշխանացն Սիւնեաց՝ (յ)անուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի»[138]: Վերն ընդգծուած երկրորդ նախադասութեան կարրն այստեղ կարեւոր է նրանով, որ ցոյց է տալիս տուեալ գլխի շարադրման համար Ստեփաննոս Օրբէլեանի ձեռքի տակ նաեւ այլ նիւթերի եղած լինելը: Այլ է եղել նաեւ նրա համար «Պատմութիւնն երանել-

138 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԼԳ, էջ 117; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԼԴ, էջ 160: Այս տեղեկութեան շնորհիւ՝ Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկի գոյութիւնը ենթադրել են բոլոր հայ մատենագրագէտները:

ւոյն Մաշտոցի» երկի կարեւորութիւնն իբրեւ սկզբնաղբիւր: Եթէ Մովսէս Դասխուրանցին գրել է այն իր երեք գրքահատուածներից վերջինի՝ մեր ճշտումների համաձայն՝ ամբողջ երկրորդ կէսի հիմքում (բացառեալ վերջին երկու գլուխները եւ դրանց նախորդող երկու պարբերութիւն ԻԱ գլխում), ապա Օրբէլեանը բաւարարուել է միայն մէկուկէս ոչ մեծ գլուխների համար (ԼԲ եւ ԼԳ) տեղեկութիւններ քաղելով: Ճիշտ է, իր սկզբնաղբիւրի մասին, ի բարեբախտութիւն մեր ժամանակի հետազօտողի, յանուանէ յիշատակել է հէնց Սիւնեաց պատմիչը:

Վերադառնալով Տրդատի վերնահովտի պատմա-աշխարհագրական վիճակի քննութեանն՝ ամփոփենք, որ այդ հովիտը միայն վերը նշուած ողբերգական դիպուածի եւ Սահլ Սմբատեանի շնորհառութեան պահի փոփոխութիւնից յետոյ է սկսում կոչուել ոչ միայն Ծար եւ Վերին Խաչէն, այլ նաեւ Փոքր Սիւնիք, ընդ որում արդէն որեւէ կապ չունենալով աշխարհացոյցեան (նաեւ՝ նախաաշխարհացոյցեան) Սիսական-ի Կոտակ - Փոքր Սիւնիք գաւառի հետ ու նշանակելով պարզապէս Սիւնիք աշխարհի մի փոքր մասը: Այդ պատկերացմանն առաջինը հանդիպում ենք ԺԳ դ. մատենագիր Վանական վարդապետի մօտ: Վերջինս ծանօթագրական բնոյթի մէկ էջանոց գրուածքում նկարագրելով Տիրոջ եօթանասուն առաքեալների քարոզչութիւնը՝ Դադիվանքի անուանադիր Դադիի մասին ներկայացնում է հետեւեալ նովելը. «Դադիում՝ յեւթանասնիցն, որ գնաց հրամանաւ

Թադէոսի ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ, եւ լուեալ զմահն Աբգարու եւ դարձեալ՝ եմուտ ի Փոքր Սիւնիս, եւ կրաւնաւորեալ անդէն ծածկաբար՝ վախճանեցաւ, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ»[139]: Ի դէպ, մեծ հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ բարբառային յօրջորջման հետեւանքով ի վերջոյ Դադէի վանք - Դադիվանք անուանումը ձեռք բերած հոգեւոր կենտրոնի իրական անուանադիր Թադէոս առաքեալի փոխարէն՝ որպէս եօթանասնից մէկը Դադէ-Դադիում անունով առաքեալի մասին նմանատիպ վանական առասպելը ձեւաւորուել է Վանականի կեանքին նախորդած վերջին ժամանակներում: Ըստ ամենայնի՝ դա արդիւնքներից մէկն է եղել տուեալ տարածքը Սիւնիքից Խաչէնի իշխաններին անցնելուց յետոյ առաջ եկած նոր իրողոյթների (ռէալիաների):

Փոքր Սիւնիք անուանումն այս տարածքի համար առաւել սովորական է դառնում յաջորդ դարից: Բանանցի Թարգմանչաց անապատի Աւետարանի վերը յղուած 1312 թ. յիշատակարանում պատուիրատու Գրիգոր Դոփեան իշխանի մասին ասւում էր. «տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, Հանդաբերդոյ եւ Ականայ եւ բարձր Լե-

139 Այլ բան է ասացեալ Վանական վարդապետին.– *Գիրք թղթոց*, Տփխիս, 1901, էջ 536: Վանականի այս շարադրանքից քաղուած նոյն բնագիրը տե՛ս նաեւ Միքայէլ Ասորուն վերագրուած «Յաղագս քահանայութեան» երկում՝ հրատարակուած «*Ժամանակագրութիւն* Միխայէլի Ասորւոյ պատրիարքի» (Երուսաղէմ, 1871) գրքում, առանձին էջադրմամբ, էջ 33:

րանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Շաղուագայ»[140]: *Ծարայ վանքի 1430 թ. խաչքարի կանգնեցնողն իրեն կոչում էր. «ես՝ Մայտի... տեղեացս ունէր եւ պարոն* Փոքր Սիւնեաց, *Ականայ, Համերքոյ եւ Հանդաբերդոյ, եւ ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքայ»*[141]: *ԺԷ դարում Առաքել Դաւրիժեցին հետեւեալ ձեւով էր գրում նախորդ դարի յայտնի հոգեւորական Յովհաննիսիկ Ծարեցու մասին. «Ի սոյն թուին եղեւ վախճան մեծ եւ երանաշնորհ վարդապետին մերոյ Յովհաննիսի, եւ զի էր նա ի յերկրէն* Ծարայ՝ Փոքր Սիւնիս կոչեցելոյ, *ի վանիցն Դադիու Սրբոյ Առաքելոյն»*[142]: *Գրիգոր Տաթեւացու «Քարոզգրքի» 1684 թ. ընդօրինակութեան յիշատակարանում գրիչ Վառվառիա միայնաւորն արտագրութեան վայրի մասին նշում էր. «գրեցաւ ի յերկիրս* Ծար՝ Փոքր Սիւնիս կոչեցելոյ, *ի ս[ուր]բ վանս Կուսանաց, ընդ հովանեաւ Դադէի Ս[ուր]բ Առաքելոյն եւ Ս[ուր]բ Կաթուղիկէին եւ Ս[ուր]բ Ա[ստուա]ծածնին եւ ամենազաւր ս[ուր]բ նշանին Մարգարզաւնեաց եւ այլ ս[ր]բոց, որ անդ կան զումարեալ»*[143]: *Նոյն*

140 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 84: Հմմտ. վերեւում, ծնթ. 119:

141 **Մ. եպ. Բարխուդարեանց**, *Արցախ*, էջ 408; *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 225: Հմմտ. նաեւ վերեւում, ծնթ. 120:

142 **Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*. Աշխատասիրութեամբ **Լ. Ա. Խանլարեանի**, Եր., 1990, գլ. ԾԵ, էջ 461:

143 Ձեռ. ՄՄ 2067 (բոլորագիր), թ. 471ա (հմմտ. **Պ. Չոբանեան**, *Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ*, էջ

տարում Դադիվանքում Բարսեղ գրչի կողմից ընդօրինակուած Աւետարանի յիշատակարանում կարդում ենք. «աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիազարդ ս[ուր]բ Աւետարանս ի թուականիս Հայոց ՌՃԼ եւ Գ ամին [=1684 թ.], *Յունիս ամսոյ Ի-ի, ի յերկիրս* Ծարայ, *որ կոչի* Փոքր Սիւնիս, *ի գերահռչակ եւ ի հին հանդիսարանի Դադէի վանիցս, ընդ հովանեաւ Ս[ուր]բ Առաքելոյն եւ Ս[ուր]բ Ա[ստուա]ծածնիս եւ ամէնազօր Մարգարզաւնեաց ս[ուր]բ նշանիս եւ այլ ամէնայն սըրբոցս, որ աստ կան ամփոփեալ...»*[144]: *Իհարկէ, ուշագրաւ է, որ այս նոյն*

219): Այս կտորից առաջ ունենք. «...ի հայրապետութն Հայոց տն Եղիազարու՝ դիտապետի լուսակառոյց գահոյին Սբ Էջմիածնի, եւ ի կողմանս Աղուանից՝ տերանցն Երեմիայի եւ Սիմէօնի կթղկսցն, եւ յառաջնորդութն գերահռչակ Սբ աթոռոյս *Դադէի վանիս* տն Պետրոսի արհիաջան եւ քաջ հովուապետի, եւ ի մէլիքութն այն նահանգի պարոն Միրզախան պէկին, եւ ի թագաւորութն Պարսից Շահ Սուլէմանին. ի թվիս Հայոց ՌՃԼ եւ Գ-ին *[=1684 թ.]*» (թ. 469բ):

144 Ձեռ. ՄՄ 7232 (բոլորագիր), թ. 322ա-բ: Շարունակութեան մէջ ունենք. «ի հայրապետութեն Հայոց տն Եղիազարու՝ մօրն լուսոյ Սբ աթոռոյն Էջմիածնի, եւ ի տանս Աղուանից՝ լուսակառոյց եւ գեղեցկաշէն Սբ աթոռոյն Գանձասարայ տեարցն սրբազանից հայրապետացն Երեմիայի եւ Սիմէօնի, եւ ի առաջնորդութեանն Սբ աթոռոյս *Դադէի* տեառն մեծի, ամէնիմաստ եւ քաջ րաբունապետին Պետրոսի»: Ի դէպ, գրչագրի 320ա էջում, Աւետարանի բնագրի աւարտից յետոյ առկայ է մէկ այլ փոքրիկ յիշատակարան (աւելի մանր բոլորագրով), որտեղ նշուած է գրիչ Եփրեմ քահանան, գրութեան տարին՝ «Հայոց ՌՃԻ *[=1671 թ.]*», եւ վայրը՝ «Օղվերծ», որը Ծղուկում է (հմմտ. *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Բ, կազմ-

գաւառաշրջանում Դադիվանքի կողմանքը նաեւ առանց փոքր ածականի յաւելման է Սիւնիք կոչւում, ինչպէս ունենք գրիչ Թօմայ վարդապետի՝ 1699 թ. արտագրած ժողովածոյի յիշատակարանում. «...կատարեց[ա]ւ տաւս ժ[ո]ղովե[ա]լ ի փիլիսոփայից... ի մի վայրի յայսմ ափի՝ ի Թուականութե[ան]ս Հայոց ՌՃԽԸ [=1699 թ.], ի Հայրապետութե[ան] Հայոց տ[եառ]ն Նահապետի Հզօր[ա]գոյն կ[ա]թ[ո]ղ[ի]կ[ո]սի՝ գահոյին // մեծին լուսակառոյց Ս[ուր]բ աթոռոյն Էջմիածնի, եւ ի կողմանս Սիւնեաց Հր[ե]շտակ[ա]րն[ա]կ եւ գեղ[ե]ցկ[ա]նկար Ս[ուր]բ աթոռոյս Դաթէի վանիցս եւ սորին յառաջնորդ վերադիտող տ[եառ]ն Զ[ա]ք[ա]րի[ա]յ յոգնահանճար բաբունապետի»[145]:

Արդ՝ նշուած ուշ եւ վերափոխուած պատկերացումներն, ինչպէս նշեցինք, պատճառ են եղել՝ շփոթելու այս Ծար - Փոքր Սիւնիքը աշխարհացոյցեան Արցախի ամենահարաւային Սիսական-ի Կոտակ - Փոքր Սիւնիք գաւառի հետ: Սակայն ակադ. Սուրէն Երեմեանն աներկբայ պարզաբանեց, որ «Աշխարհացոյց»-ի եւ Մովսէս Դասխուրանցու ուղղակի տեղեկութիւնների հիման վրայ վաղմիջնադարեան Սիսական-ի Կոտակ (կամ Սիսան, Սիսական Ոստան) գաւառը

ցին Օ. Եգանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթաբեան, Եր., 1970, էջ 487): Այն, անշուշտ, նախագաղափարին է՝ խնամքով ընդօրինակուած (ինչպէս յաճախ պատահում էր) նոր արտագրողի կողմից:

145 Ձեռ. ՄՄ 8505 (Նօտրագիր), թ. 196ա-բ (ինչպէս եւ այլուր, բացել ենք լոկ գրչի յապաւումները):

յստակօրէն տեղորոշելի է Արցախի ամենահարաւային հատուածում՝ հասնելով մինչեւ Արաքս գետի ափերը: Բնականաբար, նա նկատի ունէր նախ եւ առաջ Մովսէս Դասխուրանցու (անուանելով վերջինիս, ինչպէս շատ ուրիշներ՝ կաղանկատուացի) «Պատմութիւն Աղուանից»-ում Սիսան եւ Սիսական կոչուած գաւառի յիշատակութիւնը: Մանրամասնենք, որ Բալլականի մահմեդական իշխանաւորների մի աւարառութեան մասին (Թ դ. 40-ական թթ. սկզբին) Ժ դարի հեղինակը (թերեւս, նաեւ նրա աղբիւր Մաշտոց Եղիվարդեցին) պատմում է այսպէս. «եկին, հասին Բաղականացիքն եւ արարին վնաս Սիսան, Տրւոյ եւ Ամարաս գաւառաց: Եւ եկ Եսայի անուանեալն Աբու-Մուսէ ի վերայ նոցա եւ կոտորեաց զնոսա»[146]: Միւս տեղեկութիւնը փաստօրէն Դիզակի իշխանութեան գաւառների թուարկումն է՝ կատարուած հիւսիս-հարաւ-արեւելք ուղղութեամբ, երեք շարքով. Վերին Վայկունիք → Բերձոր → Սիսական // Հաբանդ → Ամարաս // Պազկանք → Միանք → Տրի գաւառ[147]: Դրանց համադրութիւնից երեւում է, որ Սիսան/Սիսական [-ի Կոտակ] գաւառը պէտք է տեղադրուի Հակարի գետի եւ Հադրութի գետակի ստորին հոսանքների միջեւ: Ըստ վերը բերուած վկայութիւնների տրամաբանութեան՝ նրանից հիւսիս-արեւմուտք ընկնելու էր Բերձոր գաւառը, դէպի հիւսիս՝ Միւս Հաբանդը,

146 ՊԱ, Գ.ի /իա/, էջ 331:

147 ՊԱ, Գ.ժթ /ի/, էջ 327:

իսկ դէպի հիւսիս-արեւելք՝ Ուտիք նահանգի Տրի գաւառը:

Յաւելենք, որ իբրեւ հարաւային գաւառ («ի կողմանս հարաւոյ») Սիսական-ի Կոտակը «Սիսականեացն [a ձեռ.՝ Սիսաւանեացն] գաւառ» ձեւով յիշատակում է նաեւ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում բառացի արտագրութեամբ ընդգրկուած «684 թ. պատմութիւն»-ը[148]*: Է դարի անանուն հեղինակի խօսքերով՝ դէպի այդ գաւառը «չուեալ էր», այսինքն՝ իր տիրոյթների այդ մասում իբրեւ աւատատէր «շրջայց» էր կատարում) Ջեւանշէր Աղուանից իշխանը (637-680 թթ.)*[149]*:*

Հարկ է նշել, որ Սուրէն Երեմեանի մնացեալ կարծիքները՝ Միւս Հաբանդ եւ Սիսական-ի Կոտակ գաւառների նոյնացման եւ վերջինիս ծագման ժամանակի մասին, ինչպէս արդէն ցոյց է տուել Բաբկէն Յարութիւնեանը, թւում են բաւարար չափով չհիմնաւորուած: Երջանկայիշատակ ակադեմիկոսը գրում էր. «...571 թ., երբ ամբողջ Արցախը միացուեց Սիւնիքին [?!] եւ Միւս Հաբանդը դարձաւ Սիւնեաց նախարարութեան կենտրոն, այս գաւառը կոչւում էր նաեւ Սիսական-ի-Ոստան կամ Սիսական-ի-Կոտակ: Վերջինս հոմանիշ է Փոքր Սիւնիք անուան»[150]*: Ս. Տ. Երեմեանի այս շտապողական եզրայանգման համար հիմք էր ծառայել, ան-*

148 Այդ երկի մասին տե՛ս վերեւում, ծնթ. 105:

149 *ՊԱ*, Բ.լգ. էջ 220; *ՄՀ*, հտ. Ե, էջ 854, նախ. 44:

150 **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 70:

շուշտ, Մովսէս Խորենացու տեղեկութիւնը, որը Ամարաս գիւղը (ուր աշակերտները բերեցին եւ հողին յանձնեցին Մասքթաց աշխարհում նահատակուած Գրիգորիս եպիսկոպոսի դին) վերագրում էր Փոքր Սիւնիք-*ին («Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի* Փոքր Սիւնիս, *թաղեցին յԱմարաս աւանի»*[151]*): Այնինչ Փաւստոսն այստեղ նշում էր* Հաբանդ *գաւառը («բարձին զնա, որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն* Հաբանդայ, *եւ բերին* ի գաւառն իւրեանց, *ի կողմանց Աղուանից ի սահմանս Հայոց, ի* Հաբանդ, *ի գեաւղն, որ անուանեալ կոչի Ամարաս: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի»)*[152]*:*

Համաձայն Բաբկէն Յարութիւնեանի առաւել ընդունելի մօտեցման՝ Հարաւային Արցախի Հաբանդ եւ Սիսական-ի Կոտակ (իսկ ըստ մեզ՝ թերեւս, նաեւ այլ յարակից) գաւառների մտնելը Սիւնիք աշխարհի կազմի մէջ՝ Փոքր Սիւնիք *անուան տակ (իսկ ըստ մեզ՝ թերեւս, նաեւ զուգահեռ* Հաբանդ *անուան), աւելի հաւանական է վերագրել ոչ թէ Զ, այլ Դ դարի իրողութիւննե-*

151 *ՊՀ*, Գ.գ, էջ 260; *ՄՀ*, հտ. Բ, էջ 2011, նախ. 8:

152 **Փաւստոսի Բուզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ-Ս.Ղազար, 1933, դպր. Դ, գլ. Զ, էջ 7; *ՄՀ*, հտ. Ա, էջ 283, նախ. 15: Վկայութեան բնագրագիտական քննութիւնը՝ **А. Акопян**, *„История Армении" Фавста Бузанда как источник „Повести о Вачагане" (снова о первом и втором дпрутюнах Фавста Бузанда)*,— „Кавказ и Византия", вып. 5, Ер., 1987, էջ 74-75:

րին[153]*: Կարելի է յաւելել միայն, որ դա պարտադիր չէ կապել անպայման Վարազվաղան Սիւնու եւ «Գահնամակ»-ում առկայ «Սիւնեաց երկրորդ» տոհմաճիւղի առաջացման հետ (Դ դ. երկրորդ կէսում), քանի որ վերջին անունն աւելի մեծ հաւանականութեամբ կարող էր վերաբերուել Վայոց ձորի կամ Բաղքի զուգահեռ իշխանական ճիւղերին, ինչպէս որ ունենք հետագայում: Սիւնիքի վարչական ենթակայութեան տակ Արցախի մի մասի մտնելը (եւ առաւել մեծ հաւանականութեամբ՝ հէնց հարաւային մասի, որը զգալիօրէն հեռու էր ընկած Պատմահօր ճանաչած ուտիք-արցախեան երեք իշխանական տների՝ Ծաւդէացիների, Գարդմանացիների եւ Ուտէացիների՝ մեզ բաւականին յայտնի կենտրոններից) կարող էր տեղի ունեցած լինել նաեւ Դ դ. սկզբներին կամ է՛լ աւելի վաղ դարաշրջանում: Յիշենք, որ ըստ Խորենացուն հասած պատկերացումների՝ Գարդմանացի, Ծաւդէացի եւ Ուտէացի իշխանական տոհմերի* աւանդական *նախահայր Առանն ինքը ծագում էր* Սիւնեաց *նախահայր Սիսակից*[154]*: Իբրեւ առայժմ վարկածային հարցադրում՝ կարելի է նկատի ունենալ, որ* հարաւային Արցախի *հատուածի անջատումը ուշարտաշխեան եւ վաղարշակունեան*

153 Բ. Յարութիւնեան, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 40:

154 *ՊՀ*, Բ.ը, էջ 113; *ՄՀ*, հտ. Բ, էջ 1859, ծանթ. 8: Վերջին մանրամասն քննութիւնը տե՛ս **Հ. Սվազեան**, *Խորենացիական աւանդազրոյցի Սիսակ-Առանեան ճիւղը եւ նրա պատմական ատաղձը*.– «Շուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան...», Եր., 2007, էջ 5-19:

Մեծ Հայքի Սիւնիք-Սիսական աշխարհից կարող էր կատարուած լինել այն նոյն պահին, երբ տեղի էր ունեցել անտիկ հեղինակների ճանաչած Սողուկէնէ-Ծաւդէք *նահանգի ենթադրելի մասնատումը երկու մասի՝ Սիւնիքի գաւառ* Սօդք-Սոթքի *եւ նրանից արեւելք ընկած արցախեան գաւառների: Նկատենք նաեւ, որ առնուազն Դ դ. կէսերի պատկերն արտացոլող «Զօրանամակ»-ի համաձայն՝* Սոդացի, *այսինքն՝ ըստ ամենայնի,* Սոթքի *նախարարական տունը (50 «մարտիկ արանց»-ով) Սիւնեաց գահերէց իշխանի հրամանատարութեան տակ Մեծ Հայքի* Արեւելեան դուռ-*ը պաշտպանողների թւում էր, իսկ արցախեան* Ծաւդէացի *նախարարական տունը՝* Հիւսիսային դուռ-*ը պաշտպանողների (Գուգարաց բդեշխի հրամանատարութեան տակ, 1000 «մարտիկ արանց»-ով եւ հարեւան ու նոյնքան զինուժի տիրապետող* Ուտէացի *եւ* Գարդմանեցի *նախարարական տների պէս)*[155]*: Ի դէպ, կարելի է նկատել նաեւ* Արեւելեան դռան *պաշտպանների այդ ցուցակի (որտեղ յիշատակուած են 21 նախարարական տներ աշխարհացոյցեան Սիւնիք, Վասպուրական, Պարսկահայք եւ Այրարատ նահանգներից)* Գրգնունի *տոհմանունը աշխարհացոյցեան Արցախ նահանգի Հարանդ գաւառի նշանաւոր* Գորոզու *բերդի անուան հետ համադրելու հնարաւորութիւնը (զոյգ* Ո-*երի սղման տարբերակով՝* Գ[ո]ր[ո]զգնունի*): Յայտնի է, որ* Գորոզու-*ն կամ* Գո-

155 Տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 251:

րոզ-ը հայկական եւ օտար զանազան բնագրերում կիրառուած է նաեւ իբրեւ գաւառանուն՝ Դիզակի իշխանութեան ողջ տարածքը նշանակելու համար[156], ուստի տուեալ համագրութեան ընդունման դէպքում լրացւում է վաղ շրջանում Սիւնիքի հետ Հարաւային Արցախի յատուկ կապուածութեան մասին մեզ հասած աղբիւրագիտական նիւթը: Տեղին նշենք, որ որոշ վերապահումով ենթադրելի են նաեւ մեզ հետաքրքրող հարցադրումներից միւսի՝ աշխարհացոյցեան Սիւնիքի առանձին մասերում իշ-

156 *Դիզակ-Գորոզի* իշխանութեան մասին լաւ յայտնի տուեալներին (մանրամասն՝ **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 298-300) պէտք է յաւելել Ժ դ. արաբ մատենագիր Իբն Հաուքալի 955 թ. հարկացուցակի՝ նախկինում թոյլ նկատուած տեղեկութիւնը. «Նա [Մարզուբան Սալարեանը] համաձայնեց, որ ... *Ջուրզի* տէր *Վաչական իբն Մուսան* [վճարի] 200 հազար դիրհեմ» (**V. Minorsky**, *Caucasica IV: II. The Caucasian Vassals of Marzubān*,– BSOAS, 1953, XV/3, էջ 519; **Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան**, *Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում*, – «Լրաբեր հաս. գիտութիւնների» 1969, թիւ 2, էջ 58): Չնայած ընդգծուած *Ջուրզ* երկրանունը Նիկ. Ադոնցը (*Պատմական ուսումնասիրութիւններ*, էջ 143) կապում էր Ուտիքի Սեւորդեաց իշխան Մովսէսի տարածքի հետ, իսկ Վլ. Մինորսկին՝ Քաբալայի թագաւորութեան (հարցականով), սակայն դեռեւս Բագրատ Ուլուբաբեանը (*Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, էջ) իրաւացիօրէն նկատել էր, որ Ծարւանի, Ծաքքիի, Սեւորդիք-Փառիսոսի (մեր կարծիքով՝ *Ալ-Ռուբ*), Վայոց ձորի (*Ալ-Վայզուր*), Ահր-Վարզականի, Վասպուրականի (*Ալ-Դայրանի*), Ներքին Արմինիայի (*Անի*) եւ Խաչէնի (*Խաջին*) կողքին արաբ հեղինակը յիշատակել է հէնց *Գորոզ*-ը (>*Ջուրզ*):

խանական տների արձանագրման առումով նոյնքան ուշագրաւ, նախկինում չնկատուած երկու համագրութիւնների հնարաւորութիւններ. Ցողկեպան *(100 մարտիկ)* — *Ձոր‹ք›-Կապա°ն, *եւ* Կիճան *(50 մարտիկ)* — Կէճուա°զ (Կէճաւուզ, Կէճահուզ, Գէճուազ [=Կէճու–ա°զ], *հմմտ. նաեւ խորհրդաւոր Կնէվանքի անունը), թէկուզ եւ վերջին գաւառանունն «Աշխարհացոյց»-ի եւ բազմաթիւ այլ աղբիւրների* Արեւիք *գաւառի համար (մի դրուագում՝ նաեւ* Արեւեաց տուն[157]*) լոկ ուշ միջնադարում է արձանագրուած*[158]:

Եւ վերջապէս, 571 թուականից մինչեւ է դ. կէսերը Արցախը Սիսական-Սիւնիքին իբրեւ թէ միացուած լինելու վերաբերեալ Սուրէն Երեմեանի չհիմնաւորուող կարծիքի դէմ է խօսում, թերեւս, նաեւ այն հանգամանքը, որ է դ. սկզբի համար ունենք Հայոց Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի՝ Ամարասի Մխիթար եւ Մեծ Իրանքի Սիմէոն, այսինքն՝ Արցախի եպիսկոպոսներին ուղղուած թղթի խրողութիւնը (607 թ.)[159]*: Իսկ այդ պահին Սիւնիքի եպիսկոպոսը, ինչպէս յայտնի է նոյն թղթից եւ Ստեփաննոս Օրբէլեանի բազմաթիւ տեղեկութիւններից,*

157 Տե՛ս վերեւում, ծնթ. 31:

158 Տե՛ս, օր., *Դաւիթ-Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց*, Աշխատասիրեց Հ. Ս. վրդ. Արամեան, Վենետիկ-Ս.Ղազար, 1978, էջ 122-126, 133-134, 152-160:

159 *ԳԹ*, Բ.խբ., էջ 276-279; **Աբրահամ Աղբաթանեցի**, *Պատասխանի ի Հայոց թղթոյն Մխիթարա Ամարասայ եպիսկոպոսի*, Գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**,– *ՄՀ*, հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 21-37:

Աբրահամին ենթակայ եւ լիովին նրա գաղափարակից Դաւիթն էր[160]*:*

* * *

Բաբկէն Յարութիւնեանի կողմից կատարուած Սիսական-ի Կոտակ *գաւառի առաւել հիմնաւոր քարտէզագրման մէջ*[161] *էական ճշգրտելիք կայ միմիայն նրա հարեւան գաւառների խնդրում:*

Սկսենք Բերձոր *գաւառից: Այս գաւառանունն «Աշխարհացոյց»-ից յետոյ առաջինը յիշատակում է Մովսէս Դասխուրանցին 829 թ. դէպքերի նկարագրութեան մէջ. «...զՍտեփաննոս՝ զկոչեցեալն Աբլ-Ասադ, որ չածն զԲաբան եւ եհար զԲաղականեցիսն, որ ի սուր նիզակաց կոտորեցին* զԲերձոր *գաւառի զաւանսն զՍւնեաց, զԿառնակաշ,* զՀակարի *եւ զՏափատ»*[162]*: Այս թուարկման մէջ երրորդը յիշուած* Հակարի *«աւանը» (տուեալ դէպքում = «ամրոցագիւղ») բոլոր մասնագէտների կողմից իրաւացիօրէն համադրուել է ԺԹ դարում* Աքերլու *յորջորջու-*

160 *ԴԱ*, Բ.խթ, էջ 276; *ՄՀ*, հտ. Դ, էջ 21; **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԽԵ-ԽԷ, էջ 74, 76, 82; *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 103, 105, 112:

161 Տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի* (Մաս Ա) գրքին կից քարտէզը (Եր., 2001):

162 *ԴԱ*, Գ.ժթ /ի/, էջ 327: Բերում ենք՝ այս դէպքում գրչական սխալներից զերծ մնացած Բ խմբի գրչագրերի ընթերցումը: Հատուածի սկզբնաղբիւրի մասին տե՛ս վերեւում, ծնթ. 137-138:

ած գիւղի հետ (Ի դարում այն լքուել է), որը գտնւում էր ներկայումս էլ չէն Հարար գիւղի մօտերքից հոսող վտակի ստորին հովտում, Հակարի գետի մէջ նրա թափուելու կէտից 3 կմ հիւսիս-արեւելք[163]*: ԺԶ-ԺԷ դդ. մի քանի յիշատակարաններում նշուած են «Հակարու», «Հակարի», «Հաքարու» կամ «Հագարեան» «երկրի» երեք գրչօջախ գիւղերը՝* Փարաչանց *(մեզ է հասել այստեղ ընդօրինակուած երկու գրչագիր)*[164], Գետուզ *(մեզ հասել է մէկ գրչագիր)*[165] *եւ* Հարար *(երեք գրչագիր)*[166]*:*

163 Տե՛ս, օր., *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 1, էջ 134; 665: Դրա հիման վրայ գաւառն ընդհանուր առմամբ ճիշտ են տեղորոշում նաեւ Բագրատ Ուլուբաբեանը (*Խաչենի իշխանութիւնը*, էջ 35) եւ Սլ. Սարգսեանը (*Արցախ*, էջ 42):

164 **Ս. Տէր-Աւետիսեան**, *Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, Ա, Վիեննա, 1970, էջ 127 («սկսայ Սբ Աւետարանս եւ աջողմամբն կատարեցի ի դուռս Սբ Ածածնին եկեղեցուս, ի գեղջս, որ կոչի *Փարաչանց*, ի երկիրս *Հաքարու*, ի ոտս Դիզափայտոս, ի թվին ՌԻԳ *[=1574 թ.]*: Գրեցաւ ձեռամբ սուտանուն կրաւնաւոր Աբրհամ աբեղի, ի կաթողիկոսութեան տանս Աղվանից տէր Գրիգորիսի, որ... Թահնեալմազ փաթշահ... անկամայ տաջկացուց»); **Յ. Թօփճեան**, *Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի*, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 31 («ես՝ Աբրահամ կրաւնաւորս... սկսայ զՍբ Աւետարանս... ընդ հովանեաւ Սբ Ստեփանոսի, ի յերկիրս *Հաքարի*, ի գեղս, որ անուանի *Փարաճանց*... ի թվին Հայոց ՌԻԵ-ին *[=1576 թ.]*, ի կաթուղիկոսութեան տանս Աղվանից տէր Յոհաննէս կաթուղիկոսի, յիշխանութեան խուդապանդային»:

165 Ձեռ. ՄՄ 4932, թ. 267բ-268ա («...կատարեցաւ Սբ Աւետարանս ի երկիրս *Հակարու*, ի գեղ*/268ա/*ս Գետուզ{այ} *[քայքայուած տողավերջում երեւում է բոլորա-*

Տեղին նշենք, որ Սամուէլ Կարապետեանը արցախեան Հակարի երկրի *հետ է կապում նաեւ ԺԴ դարի մի յիշատակարանում նշուած* Հայքարայ Ձորը *իր Անապատիկ գիւղով*[167]*: Սակայն այդ բնագրի («Արդ՝ գրեցաւ Պատարագի մեկ-*

գիր Ա-ի միայն ձախ ստեղը, որը կարող է լինել նաեւ {ող} - Ա. Յ./, ի դուռս սբ եկեղեցոյս Սբ Ստեփաննոսի: Թվ‹ին› ՌԺԶ */=1567 թ./*, ի ղանու*{թեան}* Շահ Թահմազ*{այ} /երեւում է Ա-ի միայն ձախ ստեղը - Ա. Յ./*, որդոց› Իսմաւյէլի, ի կաթողիկոսութ*իւն {Ա}*ղուանից տանն տն Գրիգորիսի»):

166 Ձեռ. ՄՄ 3437, թ. 239ա («Գրեցաւ սուրբ գիրքս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ մեղապարտ... Պաղտասար դպրի, ի թուականութեանս Հայոց ՌՃԺԵ */=1666 թ./*, ի յերկիրս *Հազարեան*, ի գեօղս, որ կոչի *Հարար*, ընդ հովանեաւ Սբ *‹...!›*, ի հայրապետութեան տանս Աղուանեաց տն Պետրոսի բազմահանճար կաթողիկոսի, եւ բռնակալութ*իւն* Տաճկաց Փոքր Շահապազի»); **Հայկունի**, *Ուղեգնացական ակնարկներ*, - «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885, թիւ 94 /1 Դեկտեմբերի/, էջ 1 («...այցելեցի պ. Վահան Տէր-Գրիգորեան Դադեանին, որոյ մօտ բաւականին գրչագիր մատեաններ կան: Ահա դրանց համառօտ ցուցակը... 7. Էլի «Մաշտոց», թղթեայ, ՌՃԺԷ թուին */=1668 թ./* գրուած «յերկիրս *Հազարեան* ի գեօղն, որ կոչի *Հարար*»); **Վ. Վարդանեան**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Լոնդոնի Վելքոմ ինստիտուտի գրադարանի*,– «Բանբեր Մատենադարանի», 15, էջ 323 («գրեցաւ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ... Պաղտասար դպրի, ի թուաբերութեանս Հայոց ՌՃԻ */=1671 թ./*, ի յերկիրս *Հազարեան*, ի գեօղս, որ կոչի *Հարար*, ընդ հովանեաւ Սրբոյս Ստեփաննոսի, ի հայրապետութեան տանս Աղուանեաց տեառն Պետրոսի եւ բազմահանճար կաթողիկոսի, եւ բռնակալութեան Տաճկաց Շահ Սլեմանին»): Հմմտ. **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 161:

167 **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 125:

ինչս ձեռամբ Զաքարէ աբեղի ի Ձորս Հայքարայ, *ի գեաւղս, որ կոչի Անապատիկ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի հայրապետութեանն* Տէր Ստեփաննոսի, *ի* ղանութեանն Յոխի, *ի դառնութեան ժամանակի, որ հալածումն էր քրիստոնէից... Թվ‹ին› ՊԺ* [=1361 թ.] *գրեցաւ...»*[168]*) համադիր քննութիւնից պարզ է դառնում, որ իրականում դա Կորճայք աշխարհի* Հաքեարի *յայտնի շրջանն է Մեծ Զաբ գետի միջնահովտում: Բնագրի* Տէր Ստեփաննոս *Հայրապետը, անկասկած,* Աղթամարի *կաթողիկոսութեան այն աթոռակալն է, որը «Հաւաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարայ)» վերտառութեամբ գաւազանագրքում յիշատակւած է որպէս «49. Տէր Ստ‹ե›փաննոս (Ե)»*[169]*, թէպէտ եւ Ի գ-ակցրի գիտական գրականութեան մէջ շտապողաբար համարուել է, թէ 1350-1360-ական թուականներին իբրեւ աթոռակալներ նշուած մի քանի կաթողիկոսներ «բնաւ հաւանական չէ, որ պաշտօն վարած լինեն»*[170]*, եւ անգամ ակադ. Լեւոն Խաչիկեանը, որի հրատարակած յիշատակարանների ժողովածոյի նիւթերը հիմնաւորապէս հերքում են այդ նախնական մտայնութիւնը, իր կազմած անձնանունների ցանկում նրա*

168 Ձեռ. ՄՄ 8256, թ. 113բ: Հմմտ. *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 450:

169 *Հաւաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարայ)*. Մանօթագրութիւններով լոյս ընծայեց **Մ. վրդ. Մաքսուդեան**, Վաղարշապատ-Ս.Էջմիածին, 1916, էջ 61:

170 Նոյն տեղում, էջ 66, ծան. 4: Հմմտ. **Ն. Ակինեան**, *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, Վիեննա, 1920, էջ 64-66:

մասին կասկածանքով էր գրում. «Ոմն հայրապետ (կաթողիկո՞ս, թէ՞ վանահայր)»[171]*: Իսկ Զաքարէ արեղայ գրչի կողմից* Ցոխ *կոչուած* ղանը *Ջելայիրեան սուլթան* Ուվէյսն *է (1356-1374 թթ.), որի նախորդների ստեղծած՝ Չոբանեանների տէրութիւնից բաժանուած պետութիւնն ընդգրկում էր Փոքր Ասիան, Միջագետքը եւ Հայաստանի արեւմտեան կէսը*[172]*: Կարելի է դիտարկել նաեւ ԺԴ դ. երկու այլ յիշատակարանների բնագրերի հետ, ուր նշուած է նոյն* Հայքարայ *երկրանունը. «Արդ՝ գրեցաւ սա ի Թուականիս մերում ՊԺԲ* [=1363 թ.], *ի յաւուրս նեղողաց ազգին, որ բռնացեալ ունէր զամենայն աշխարհս Հայոց եւ զայլս բազումս... յայսմ ցասմանէ հալածեալ ի սուրբ ուխտէն Բարդուղիմէոսի Առաքելոյն՝ գերծեալ անկայ ի*

171 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 748: Տեղին նշենք նաեւ, որ 1323-ից մինչեւ 1402 թ. ընկած ժամանակամիջոցում Աղուանից կաթողիկոսներից յայտնի են միայն *Սուքիասը, Պետրոսը, Զաքարիան* եւ *Դաւիթը*, ցաւօք՝ առանց իշխանութեան տարիների ճշտման հնարաւորութեան (**Բ. Ուլուբաբեան**, *Աղուանից եկեղեցի*, - Հայկական Սով. Հանրագիտարան, հտ. 1, Եր., 1974, էջ 263) [Այժմ հմմտ. նաեւ **Ա. Մաղալեան**, *Աղուանից (Գանձասարի) կաթողիկոսների գաւազանագիրը*,– «Պատմա-բանաս. հանդէս», 2008, թիւ 3, էջ 268-271 (յատկ. էջ 269), թէպէտ եւ հեղինակը, ցաւօք, չի փորձել սպառիչ ձեւով ամփոփել խնդրոյ առարկայ ողջ նիւթը – *հեղ., 2009*]:

172 Տե՛ս **Յ. Մանանդեան**, *Երկեր*, հտ. Գ, Եր., 1977, էջ 341-342, 346; **Լ. Ս. Խաչիկեան**, *Չոբանեանների եւ Ջելաիրեանների տիրապետութիւնը Հայաստանում*,– «Լրաբեր հաս. գիտութիւնների» 1969, թիւ 9, էջ 55-61; **Վ. Բայբուրդեան**, *Իրանի պատմութիւն*, Եր., 2005, էջ 269-270:

յերկիրս Հայքարայ, *զոր այժմ տիրէ Մարաց [=քրդերի* - Ա. Յ.*] իշխանութիւն եւ ամիրապետութիւն Ամատունի եւ որդւոց իւրոց»*[173]*, եւ երկրորդը՝ «Ի Թուականիս Հայոց ՊԽԷ* [=1398 թ.] *գրեցաւ Արարածոց մեկնութիւնս ձեռամբ մեղապարտ ծառայի Պետրոսի փծուն գրչի... Յայսմ ամի ըմբռնեցին զպարոնն* Հայքարա‹ց›, *որ էր յոյժ խնամակալու ազգիս քրիստոնէից, առաւել քան զնախնիքն իւր, զի ըմբռնեցին զնա եւ զորդին ի բանդի ի մէջ ծովու, եւ զաւրաւք բազմաւք եկին ի* Ջորն Դիզա‹ց› *եւ աւար հարին մինչ ի* Ջուլամէրկ*... Գրեցաւ գիրքս ի գաւառիս, որ կոչի* Բարմն, *որ է* Ախբակ, *ի դուռն Սուրբ Առաքել‹ոյ› Բարդուղիմէոսի, ի հայրապետութիւն տեառն* Ստեփաննոսի[174]*, եւ յիշխանութիւն*

173 Տե՛ս *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 458 (Վանի Բերդակ գիւղի *Աւետարան*, գրիչ՝ *Պետրոս* կրաւնաւոր):

174 Այս *Ստեփաննոսը* եւս Աղթամարի կաթողիկոս էր (այլ ոչ թէ՝ «վանքի առաջնորդ», ինչպէս նրա մասին անունների ցանկում ծանօթագրել է Լեւոն Խաչիկեանը. *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 749)՝ արձանագրուած Մեսրոպ Մաքսուդեանցի հրատարակած «Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց» գաւազանագրքում (էջ 61). «55. Տէր Ստեփաննոս (Ջ)»: Ընդ ամին ուղղելի է Ի դ. սկզբի բանասիրութիւն մտած այն թիւր մտայնութիւնը եւս (հմմտ. վերեւում, ծան. 170), թէ Գաւազանագրքում իբրեւ 1390-ական թթ. Աղթամարի կաթողիկոսներ յիշուած մի քանի աթոռակալներ (նաեւ այս Ստեփաննոսը) «չեն կրնար վաւերական համարուիլ» (*Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց*, էջ 66, ծան. 5, հմմտ. **Ն. Ակինեան**, *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, էջ 71-85):

Միր-Ալադնի *եւ* Ամիր-Զէնդնի, *որ է դեռ ըմբռնած ի մէջ կղզոյն* Ախթամարայ»[175]:

Շեղուելով հիմնական խնդրից՝ տեղին նշենք, որ ըստ Գեղամ Բադալեանի մի բանաւոր կռահման՝ Մեծ Զաբ գետի (հայկական աղբիւրներում՝ Զաւ*) միջին հոսանքի շրջանում զարգացած միջնադարից մինչեւ նոր ժամանակները* Հաքեարի *(կամ, ինչպէս Կորճայք աշխարհի Փոքր Աղբակ գաւառի Անապատիկ գիւղի գրչագրում է՝* Հաքարայ*) անունը կրած այդ գաւառակը կարող է կապուած լինել աշխարհացոյցեան Կորճայքի* Այգառք *գաւառի հետ*[176]*: Սակայն «Աշխարհացոյց»-ի քննական բնագիրը կազմելիս մենք նկատեցինք, որ նրա ընդարձակ խմբագրութեան «զԱյգառս» եւ համառօտ խմբագրութեան «զԱյ» ընթերցումների համադրման հիման վրայ*[177] *աւելի հաւանական պիտի համարուի երկի բնօրինակում «զԶա[ւ] գա[ւա]ռ» գաւառանուան վերականգնելը: Այն պիտի նոյնանար Եղիշէի ճանաչած եւ, ինչպէս իրաւացիօրէն պնդում էր դեռեւս Ստեփան Կանայեանցը*[178], Զաւ գետի *հովտում գտնուած* Ծաղէից *(=*Զաւղէից*) երկրին*[179]*: Այդտեղ Մովսէս Խորենացին գիտի* Կաղմեայ տուն*-ը եւ* Կաղմեանք *- կամ* Կաղմէականք *տոհմը*[180], *«Զօրանամակ»-ը՝* Կաղմէացի[181], *«Գահնամակ»-ը՝* Կաղմէից *(փոխանակ, ըստ ամենայնի, գրչական ոչ բարդ վրիպակով մեզ հասած* Կապէից *ընթերցման)*[182] *եւ Ագաթանգեղոսը՝* Կորդովտաց *(որը հարեւան էր* Կորդուաք*-ին)*[183] *իշխանութիւնը:*

175 Ձեռ. ՄՄ 1091, թ. 275ա-բ: *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 621-622:

176 Տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն*, էջ 286:

177 Ձեռագրական տարընթերցումները տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն*, էջ 272:

178 **Ս. Կանայեանց**, *Անյայտ գաւառներ հին Հայաստանի*, էջ 12, 14, 16:

179 Եղիշէի *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, Աշխատութեամբ **Ե. Տէր-Մինասեան**, Եր., 1957, Ա յեղ., էջ 10, Բ յեղ., էջ 51; *ՄՀ*, հտ. Ա, էջ 529, 577:

180 *ՊՀ*, Ա.ժա, էջ 34, Ա.ժդ, էջ 46, Բ.դ, էջ 106, Բ.ը, էջ 113; *ՄՀ*, հտ. Բ, էջ 1777, 1791, 1851, 1858:

181 Տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 251:

182 Նոյն տեղում, էջ 249:

183 **Ագաթանգեղայ** *Պատմութիւն Հայոց*, Աշխատութեամբ **Գ. Տէր-Մկրտչեան** եւ **Ստ. Կանայեանց**, Տփղիս, 1909, ՃԺԲ (§ 795), էջ 414; *ՄՀ*, հտ. Բ, էջ 1684, նախ. 1: Պատմիչի հաղորդած *Կորդովտաց* ձեւը յուշում է, որ «Զօրանամակ»-ի՝ *Հարաւային դռան* այս կենտրոնական կուսակալ իշխանութեան մէջ բացի *Ծաւղէք-Զաւղէք*-ից, ամենայն հաւանականութեամբ, մտնում էր նաեւ աշխարհացոյցեան հարեւան որոշ գաւառների, այդ թւում՝ երեք *Կորդիք*-ների տարածքը՝ վաղ շրջանում դուրս հանուած հետագայ գաւառի համեմատ շատ աւելի մեծ ընդգրկմամբ *Կորդուք* կուսակալութեան կազմից: Հաւանաբար, նոյնն էր դեռեւս Պտղոմէոսի «Աշխարհագրութեան մէջ, որտեղ իրար կողքի յիշատակւում են Մեծ Հայքի հարաւային *Գորդիւէնէ* (=Կորդուք) եւ *Կորտայա* (=Ծաւղէք, Կորդիք, Կաղմեանք) աշխարհները (**Ptol.** *Geogr.* V, 12, 8-9): Նշենք նաեւ, որ չի կարող ընդունելի համարուել Ստ. Կանայեանցի այն կարծիքը (*Անյայտ գաւառներ հին Հայաստանի*, էջ 14), թէ Ագաթանգեղոսի մօտ *Սիւնեաց* եւ *Ուտիացւոց* իշխանների միջեւ յիշուած (այսինքն՝ Արցախի) «*Ծաւղէից* աշխարհի իշխանը» համապատասխանում էր այս *Զաւղէքին*:

Դա նաեւ հռոմէական ու ասորական աղբիւրների Զաբդիկէնէ - Բեթ Զաւդայ մարզն է, որը, հակառակ պատմագրութեան մէջ ձեւաւորուած աւանդոյթի, իրականում գոնէ ուղիղ կապ չի ունեցել Տիգրիսից արեւմուտք գտնուած Բզաբդէ քաղաքի շրջանի հետ:

Արդ՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակային սկզբնօրինակի այդ վերականգնուող «զԶաւգաւառ» բառերում նախ՝ որեւէ վաղ արտագրող, ամենայն հաւանականութեամբ, վրիպել է բառասկզբում կրկնուող Զ-երից մէկը, ապա՝ գրիչների մօտ յաճախ նկատուող անկանոն գրութեան հետեւանքով Ա-ից յետոյ աւելացուել է Յ տառ[184], որը յաջորդ գրչին պատճառ է տուել՝ առաջացած «Զայւ» բառի վերջում վրիպելու Յ-ից յետոյ եւ գաւառ-ից առաջ դժուար լսելի դարձած Ւ տառը: Վերջապէս՝ համառօտ խմբագրութիւնը կազմելիս «խոտանուել» է հարեւան անուններում բացակայող գաւառ բաղադրիչը, թէպէտ իրականում «Աշխարհացոյց»-ի հեղինակը հաւանաբար հիմք է ունեցել ընկալելու այն հէնց իբրեւ տեղանուան բաղադրիչ ո՛չ միայն այս, այլեւ ուրիշ դէպքերում նշելով, օր.՝ «զՄարի գաւառ», «զԹրաբի գաւառ» (Նոր ժամանակներում Մերգեւեռ եւ Թերգեւեռ[185]): Իսկ ընդարձակ խմբագրութեան

184 Թերեւս նոյն ուղիով է առաջ եկել նախորդող գաւառանուան Այտրուանք ձեւը: Երկի գրչագրերում այդ կերպ ունենք նաեւ Այպահունիք, Թրպչփի, Տայգրեան եւ այլն:

185 Հմմտ. Ս. Կանայեանց, Անյայտ գաւառներ, էջ 47 եւ

միակ գրչագրում կամ նրա մայրում տեղի է ունեցել նախագաղափարի՝ հաւանաբար յաղաւուած Ա ձայնաւորով գաւ[ա]ռ բառի Ւ-ի վրիպումն ու մնացորդի ընկալումը իբրեւ նախորդի -գառ բառավերջ, որին արդէն պէտք է յաւելուէր յոգնակի հայցականի Ս ցուցիչ (զԱյ-գառ-ս):

Վերադառնալով Մովսէս Դասխուրանցու նշած Բերձոր գաւառի Հակարի «աւանին»՝ յաւելենք, որ ԺԹ դ. վերջում Գտչավանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանդեանցն իր ձեռագիր պատմական աշխատութեան մէջ մի շարք տեղեկութիւններ է հաղորդում Ագարի, այսինքն՝ մեր Հակարի/Հագարեան «գաւառի» մասին: Նա մասնաւորապէս դրա մէջ է մտցնում Օձաբերդ բնակավայրը, այսինքն՝ Խծաբերդ գիւղը Զինգեանակապ-Խաչգեանիկ վտակի վերնահովտում[186]:

Յաջորդ՝ Կառնակաշ «աւանի» կապակցութեամբ. ըստ Մակար Բարխուդարեանցի՝ իր պատկերացմամբ մինչեւ Արաքս իջնող Բերձոր (կամ Բերդաձոր) գաւառի տարածքում ԺԹ դ. վերջում հայկական «աւերակ» կամ «կիսաւեր» «եկեղեցիներ եւ հանգստարաններ» կային հետեւեալ գիւղերում. «1) Դիրի՝ Երասխի ձախ ափում... 2) Թումաս... 3) Բայաթ, այժմ Բաչա-

շար.; Ս. Տ. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 54, 65; Բ. Յ. Յարութիւնեան, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը, էջ 319-322:

186 Տե՛ս ՄՄ, ձեռ. թիւ 7822, թ. 149բ:

բաթ... 4) Հին-Փոքր Թաղլարում... 5) Հորնաւոտում... 6) Հաւոք... 7) Դաշտահատ... 8) Ձէք... 9) Փարաջան... 10) Հին-Մեծ Թաղլարում... 11) Եաւրին խութ... 12) Երկաթաւոր (Դամիրլու)... 13) Սափիան... 14) Թումասլու... 15) Ամուտուկա... 16) Խոջիկ... 17) Պատար... 18) Սարգիս... 19) Ջղջիկ, այժմ Ջաղջիկ... 20) Սպիտակ չէն... 21) Ջամին գիւմ (գոմ)... 22) Գառնակաշ... 23) Հակարի...: Դոլանլար...: Խանձաձոր...: Յարար...: Խցաքերդ...: Ղալադըլադ...»[187]: Եթէ բացի Հակարի/Աքերլու-ից եւ Գառնակաշ-ից այս ընդարձակ ցուցակում[188] լինէին նաեւ Ուռեաց-ը եւ Տափատ-ը, ապա կարող էինք մտածել, թէ Մ. Բարխուդարեանցն իր ունեցած տուեալներին պարզապէս աւելացրել է (այսպէս ասած՝ գրական հողի վրայ) Մովսէս Դասխուրանցու յիշատակած Բերձոր գաւառի 4 աւանները: Սակայն այդ երկուսի բացակայութիւնը ստիպում է մտածել, որ գիտնական եպիսկոպոսը Հակարիի եւ միւսների կողքին ուղ-

187 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 400-401: Այստեղ «Հակարի» անունը տպագրական վրիպակով է՝ «Ծակարի», որի մասին, սակայն, նշուած է գրքի վերջում դրուած վրիպակների ցանկում: Ցաւօք, վերջինս անուշադրութեան է մատնուել գրքի վերահրատարակութեան ընթացքում (Եր., «Գանձասար» կենտրոն, 1999), եւ վրիպակը կրկնուել է առանց ծանօթագրելու:

188 Թէպէտ նշելի է, որ ցուցակում պակասում են առնուազն *Վաղաւեր* (Թեզխարաբ), *Արփագետուկ*, *Հինշէն*, *Եղցահող* եւ *Կանաչթալա* գիւղերը, իսկ *Խոջիկը*, օր.՝, որտեղ ԺԹ դ. վերջի միանաւ մզկիթ է, թերեւս, կասկածելի է:

ղակի տուեալներ է ունեցել նաեւ Գառնակաշ (<Կառնակաշ) գիւղատեղիի մասին:

Մակար Բարխուդարեանցն այս տարածքում տալիս է Աքերլուից 3-4 կմ արեւելք գտնուող մի ամրոցի նկարագրութիւն, որը դժուար չէ համադրել Մովսէս Դասխուրանցու յիշատակած Կառնակաշի հետ. «Ղալալու բերդ. որի սարն առանձնացած է Բաշարաթ սարի արեւմտեան հանդէպ եւ Բազմին (Բեգմին) սարի հարաւային հանդէպ: Առանձնացած է իւր շրջապատից եւ բերդասարս, որ ունի 3600 ոտք բարձրութիւն եւ որի չուրջն ահագին քերծեր են: Հնուց եպարսպուած են մուտքի կողմերն եւ հարկ եղած տեղերն: Ամրոցիս մէջ եւս կան հին շինութեանց շատ բեկորներ եւ աւերակ մատուռ»[189]: Այս ամրոցի ուշագրաւ նկարագրութիւն է ներկայացնում նաեւ Շահէն Մկրտչեանը՝ անուանելով այն Ղալալուի բերդ-քարայր. «...Բերդի գլխին աւերակ գիւղատեղին է: «Գիւղամիջում» մի շինութիւն կայ, առանց դռների եւ լուսամուտների: Շէնքի ներսից քերծի միջով քարէ սանդուղքը իջնում է դէպի ստորգետնեայ գետակը»[190]: Նշուած տեղում Հակարի գետի Խաչգետիկ-Ջինգեանակապ ձախ վտակի ձախափնեայ մի հսկայական, ձեռակերտ կոթողի

189 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 402: Հմմտ. **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 198:

190 **Ճ. Մկրտչեան**, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, էջ 91 (հմմտ. **Ш. Мкртчян**, *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха*, էջ 103):

նմանուող ժայռի (բարձրութիւնը՝ աւելի քան 150 մ, վերին հարթակի չափերը՝ 20x100 մ) ամբողջ գագաթը զբաղեցնող ամրոցի նախնական հետազօտութիւնը 2007 թ. Սեպտեմբերին (արձակագիր Կիմ Բակշիի, լուսանկարիչ Յակոբ Բերբերեանի եւ քաշաթաղցի Մամիկ Սարաջեանի մասնակցութեամբ[191]) ցոյց տուեց, որ այն յստակօրէն կառուցուած է խաչէն-դիզակեան դարաշրջանի բերդաշինական տեխնիկայով: Ամրոցի պարիսպների պահպանուած հատուածները շարուած են տեղի բազալտի կիսամրբատաշ, միջին չափի մշակուած քարերով եւ կրաշաղախով: Շրջակայքում ամենուր թափուած են զարգացած միջնադարին բնորոշ խեցեղէնի բեկորներ:

Տրի գաւառի (տարբ. Տռի) կապակցութեամբ. ինչպէս տեսանք, ըստ Մովսէս Դասխուրանցու վկայութիւնների՝ այն մի կողմից, յարում էր Սիսական-ի Կոտակին, միւս կողմից՝ Ամարաս եւ Մխանք գաւառներին[192]: Այդ պատկերը լրացնում է «Պատմութիւն Աղուանից»-ում բառացի արտագրուած «Տեսիլն Վեհկի» վերտառութեամբ մի վաղ յիշատակագրութիւն (ոմն Աղբիանէի գրառած), ըստ որի որբոց նշխարները («ծածկեալ ի գաւառին Արցախայ, ի Մխանց տոհմին, ի վայրս Կաղնետու /ա ձեռ.՝ Կաղնետոյ]») հանելու եւ Պարտաւի աթոռանիստ հասցնելու յանձնարարականը Զ դարի Աղուանից հայրապետ Աբասից ստացել է «...Դանիէլ մեծահաւատ քահանայն Տրիոյ»[193]: Ըստ այսմ, ինչպէս նշել ենք Գտչաւանքի շինարարական վիմագրին նուիրուած աշխատանքում, Տրի-ն կարելի է քարտէզագրել Ֆիզուլի քաղաքի շրջակայքում եւ դէպի արեւելք ու հարաւ, արեւմուտքում՝ մօտաւորապէս Ուրհանսար - Կուաքասար - Խորադիզ գծից մինչեւ Գեաւուրարխի ջրանցքն արեւելքում[194]: Նշելի է, որ իրաւացիօրէն ուղղելով Տռի գաւառն Ուտիքի հարաւային մասից խիստ անբաւարար փաստարկներով Տրտու գետի միջին հոսանք («Հետագայ Ջրաբերդ գաւառի տեղում»)

191 Հմմտ. **А. Акопян**, *Крепость Карнакаш – Галалу у села Хакари в Кашатахском районе*,– "Голос Армении", 11. 10. 2007, էջ 7 (հայերէնը՝ *Կառնակաշ - Ղալալու ամրոցը Քաշաթաղի շրջանի Հակարի գիւղի մօտ*,– «Գոլոս Արմենիի», 20.10.2007, էջ 6):

192 *ՊԱ*, Գ.ժթ /ի/, էջ 327 («...Ամարաս, Պազկանք, *Մխանք*, *Տրի* գաւառ»): Գ.ի /իա/, էջ 331 («...արարին վնաս Սիս/ակ՞/ան, *Տռոյ* եւ Ամարաս գաւառաց»):

193 *ՊԱ*, Բ.գ, էջ 120-121: *Կաղնետ* գիւղանունը համեմատելի է Խոնաշէն գետակի վերնահովտում Ներկայիս *Կաղարծի* գիւղի անուան հետ: *Տրիոյ* (փխ *Տրոյ*) զուգահեռ տարբերակի համար, որը յարուցել է Բ. Յ. Յարութիւնեանի (*Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումը*, էջ 29) կասկածանքը՝ ընդհուպ մինչեւ *Տրխոյ* անձնանուն ենթադրելը (չնկատելով, որ աղբիւրը տալիս է Տրիի քահանայի *Դանիէլ* անունը), հմմտ., օր. **Ս. Ա. Աւագեան**, *Ի յանգող անձնանունների սեռական, տրական յոլովների կազմութիւնը Ժ-ԺԳ դարերի վիմական արձանագրութիւններում*,– «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Եր., 1968, էջ 129-166 (վերահրատ. *Վիմագրական պրպտումներ*, Եր., 1981, էջ 169-203, յատկ. էջ 169-170):

194 **Ա. Յակոբեան**, *Գտչաւանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 270, 299 (քարտէզը):

տեղափոխած Ս. Տ. Երեմեանի սխալը[195] *ուսումնասիրողներն այն, որպէս կանոն, քարտէզագրել են Կուրի ափերին, «Կարկառ գետի ստորին աւազանում»*[196]*: Սակայն պարզ է, որ «Պատմութիւն Աղուանից»-ի երեք ուղղակի վկայութիւնների հիման վրայ դա չապէս ուղղելի է դէպի Հարաւ-արեւմուտք, այսինքն՝ դէպի Դիզակի իշխանութեան մաս կազմած արցախեան գաւառներին յարող տարածքը: Իսկ Գտչավանքի վիմագրում* Բէլուկան*-ի (=*Բալյական*) վերագրումը Դիզակի գլխաւոր վանքի տիրոյթներին, թերեւս, դէպի արեւելք* Տրի *գաւառի առաւելագոյն ձգուածութեան մասին աղբիւրագիտական միակ կռուանն է. ըստ այդմ հիւսիս-արեւելքում այդ գաւառը կարող էր սահմանակցել* Ռոտ Պացեան, *իսկ արեւելքում* Առան-ռոտ *ուտիքեան գաւառներին, այլ ոչ թէ Կուրին:*

Ի դէպ՝ Բուն Աղուանքին միացուած 20 ուտիք-արցախեան գաւառների ցուցակում «Աշխարհացոյց»-ի հեղինակի թուարկման խմբաշարերի ուշադիր դիտարկումից (...Ուտ-Ռոստակ → Ռոտ Պացեան // Մեծ Կուանք → Մեծ Իրանք... //...// ...Սիսական-ի Կոտակ → Տրի → Առան-ռոտ)[197] *խնդրոյն երեւում է, որ* Ռոտ Պացեան*-ը (տարբ.* Ռոտ Պայեակ) *գտնուել է Ուտիք նահանգի կենտրոնական* Ուտի Առանձնակ *գաւառից անմիջապէս հարաւ, ուստի կարող է տեղորոշուել մօտաւորապէս Կարկառի ստորին հովտում մինչեւ* Աղգեօլ *յորջորջուած ճահճալճերի շրջանը: Ըստ այսմ անհրաժեշտ է անվերապահօրէն արձանագրել նոր գրականութեան մէջ գրեթէ առանց բացառութեան կրկնուող սխալը, երբ, չնկատելով կամ անտեսելով* Ռոտ Պացեան*-ի մասին մեր միակ աղբիւրի ուղիղ ցուցումը եւ հիմք ընդունելով աղբիւրների հետ կապ չունեցող երկրորդական հանգամանքներ (օր.՝ տեղանուան ստուգաբանութեան այլապաճոյճ տարբերակներ*[198]*), գաւառը թեթեւօրէն տանում են Կուր-Արաքսի միջագետքի հարաւ-արեւելեան վերջնամասը: Այնինչ այդ մասում «Աշխարհացոյց»-ն իրականում աւարտում է 20 գաւառների թուարկումը, ընդ որում՝* Տրի*-ով եւ ապա* Առան-ռոտ*-ով (տարբ.* Ասոռոտ*):*

195 Տե՛ս **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 86:

196 Տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան (V-VII դդ.)*, Եր., 1981, էջ 37-38; **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 25 եւ քարտէզը; **Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 28-29; **R. H. Hewsen**, *Armenia: A Historical Atlas*, էջ 100, բայց համմտ. էջ 41-ի «The Kingdom of Caucasian or Caspian Albania (Ałuank')» քարտէզում, թէկուզ եւ՝ հարցական նշանով:

197 Համմտ. վերեւում, ծնթ. 7, 10: Ուտիքի գաւառների թուարկման մէջ տուեալ խմբաշարը սկսւում է. «*Առան-ռոտ → Տրի → Ռոտ Պացեան //...*»:

198 Համմտ. **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան*, էջ 38 եւ **Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 30-31 (բանավէճ է այն մասին, թէ ինչի՞ց բխեցնել *Պացեան* բաղադրիչը՝ *պարսիկ*-ի՞ց, *պատել*-ի՞ց, թէ՞ «չպահածոյացուած» *պահակ*-ից): Ս. Տ. Երեմեանի մօտ (*Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 79) գաւառը «ենթադրաբար» տեղորոշուած է Տրտուի եւ Խաչէնագետի միջեւ, որը լիովին մերժում է:

Ինչեւէ, Ցիզուլի քաղաքից 10 կմ հարաւ-արեւելք գտնուող Քիրդլար *յորջորջուած գիւղի տակով (որը գուցէ հէնց Գտչավանքի շինարարական վիմագրում յիշատակուող* Քրդագետ *բնակավայրն է), անցնում է մի գետակ, որն սկսւում է Հադրութից հիւսիս բարձրացող Վնեսայ լեռան (նաեւ՝* Արգունաշ*) հիւսիսային լանջերից,* Քիրաթաղ *(նաեւ՝* Հիւքիրաթաղ, Դուդուկչի*) եւ* Իտէլեցիք *(նաեւ՝* Էդիլլու*) գիւղերից վեր: Ցիզուլի քաղաքի շրջագծի մէջ այդ գետակը մօտենում է* Իշխանագետի *ու* Մանասի *(յորջորջուած՝* Քեօնդալանչայ, *Գտչավանքի վիմագրում՝ ըստ ամենայնի,* Հզարագետ*) ձորակներին, մի քանի կմ հոսում նրանց զուգահեռ, բայց յետոյ հեռանում է եւ իր առանձին, տարուայ մեծ մասը ցամաք հունով իջնում մինչեւ Արաքս: Այդպէս են նաեւ միւս երկու գետերը, եւ բնութեան այս հետաքրքիր պատկերը՝ երեք գետերի մօտենալը մի կէտում, ապա հեռանալը, հիմք է տալիս մեզ ենթադրաբար առաջ քաշելու եւս մի վարկած. հնարաւոր է, որ հէնց դրանից է ծագել գաւառի* Տրի *անունը: Այն ուղղակի կարող էր «երեք» նշանակել (գուցէ* *Տրի-ռոտ*ի̊ց = «Երեք գետ». հմմտ.* Առան-ռոտ, Աղան-ռոտ, Ճուաշ-ռոտ, Ռոտ Պացեան, Ռոտ-ի Բաղայ *եւ այլն), ինչպէս ունեն հնդեւրոպական մի քանի, այդ թւում՝ որոշ իրանական լեզուներ*[199]*:*

199 **Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 271-272: Հմմտ. **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, էջ 576-577; **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, *Индоевропейские языки и индо-*

Իր տարածքի գոնէ կենտրոնական մասով, թերեւս, միարժէք տեղորոշւում ունի Միւս *(կամ* Փոքր*)* Հաբանդ *գաւառը՝ Հադրութի գետակի ու Իշխանագետի վերնահովիտներում եւ Մանասի միջնահովտում: Արեւմուտքում այն Արցախեան լեռնաշղթայով սահմանակցում էր Բերձոր գաւառին: Վերջինիս՝ միանշանակօրէն Հակարիի միջին հոսանքի ձախափնեակում գտնուելն ապացուցող վերը բերուած ծաւալուն հիմքերը թոյլ չեն տալիս ընդունելի համարել Բաբկէն Յարութիւնեանի պնդումն այն մասին, թէ արցախեան Հաբանդի՝* Փոքր *կամ* Միւս *կոչուած լինելը պիտի նշանակէր նրա հարեւանութիւնը սիւնիքեան նոյնանուն գաւառի հետ անպայման նաեւ «Աշխարհացոյց»-ի ժամանակներում*[200]*: Ի դէպ, նոյնքան միանշանակ է նաեւ Ստեփաննոս Օրբէլեանի բազմաբնոյթ տեղեկութիւնների (այդ թւում՝ գիւղացանկերի) հիման վրայ աշխարհացոյցեան Սիւնիքի Հաբանդ եւ Աղահեճք գաւառները հարաւից-հիւսիս Հակարի գետի ու նրա Հոչանց օժանդակի աջափնեակում տեղորոշելու անհրաժեշտութիւնը*[201]*:*

европейцы, т. II, էջ 845: «Ռոտ» բաղադրիչի մասին տե՛ս **Հ. Հիւբշման**, *Հին Հայոց տեղւոյ անունները*, էջ 284-285:

200 **Բ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (Պատմա-աշխարհագրական դիտարկումներ)*,— «Պատմա-բանաս. հանդէս», 2003, թիւ 1, էջ 131; նոյնի՝ *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 36:

201 Առաւել մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 277-279 (քարտէզը՝ էջ 323) [այս ժողովածոյում՝ էջ 22-28 — *հեղ.*,

Ուստի հնարաւոր չէ համաձայնել Ղեւոնդ Ալիշանի, Սուրէն Երեմեանի, Բաբկէն Յարութիւնեանի եւ Ռոբերտ Հիւսընի հեղինակած քարտէզներում այդ գաւառների արեւելեան սահմանները Արցախեան լեռնաշղթային հասցնելու հետ եւս (Արցախի Բերձոր եւ Վայկունիք գաւառների՝ աղբիւրագիտական բազմաթիւ տուեալներով վկայուած տարածքում)[202], որը ոչ մի կերպ չի համապատասխանում միջնադարեան սկզբնաղբիւրների տեղեկութիւններին եւ միմիայն կրկնում է ԺԹ դ. ցարական Ռուսաստանի ստեղծած Զանգեզուրի գաւառակի (ուեզդի) արեւելեան սահմանի պատկերը:

Թերեւս միարժէք է նաեւ Միւս Հաբանդից «Աշխարհացոյց»-ի շարադրման ժամանակաշրջանից յետոյ ինչ-որ ձեւով առանձնացած Ամարաս գաւառ[ակ]ի տեղորոշումը[203]: Թ դարում

2009]:

202 Տե՛ս նաեւ Հ. Ղ. Ալիշան, *Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, էջ 265-271: Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 32: R. H. Hewsen, *Armenia: A Historical Atlas*, էջ 100: Այս հարցում հետեւողականօրէն ճիշտ տարբերակն էր պնդում Թաթիկ Յակոբեանը (Թ. Յակոբեան, *Սիւնիքի թագաւորութիւնը (պատմա-աշխարհագրական առումով)*, Եր., 1966, էջ 155): Աւելացնենք, որ հնարաւոր չէ նաեւ որեւէ չափով ընդունելի համարել *Բերձոր* գաւառը («Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան որոշ ձեռագրերում՝ *Բերդաձոր*) Տրտուի միջնահովտի երկու ափերին տեղորոշող ուսումնասիրողների տեսակէտը (Խ. Դադեան, Ս. Տ. Երեմեան, Բ. Յարութիւնեան, Ռ. Հիւսըն)՝ հենուած միմիայն «*Բերդաձորի* Սուրբ Գրիգոր» կոչուած յայտնի վանքի անուանաձեւի վրայ:

203 *ՊԱ*, Գ.ժթ /ի/, էջ 327; Գ.ի /իա/, էջ 331: Հմմտ. վերեւում,

այն կարող էր ընդգրկել Ե դարի Հաբանդի մէջ մտնող Մանաս գետի ամբողջ միջնահովիտը՝ նրա Քոչիզ (նաեւ՝ Քոչուս) եւ Աղօղլան կոչուած Ամարաս վտակի ստորին աւազանով[204]: Այդտեղ եւ մասամբ դրանից հիւսիս, Դիզակի իշխանութեան տարածքի մի հատուածում ոչ ուշ քան ԺԶ դարում ձեւաւորուեց Քոչիզի մէլիքութիւնը՝ Ծովատեղ գիւղում նստող Մէլիք-Փաշայեանների տոհմի գլխաւորութեամբ[205]: Բերենք այդ դարի կէսերին ընդօրինակուած մի ձեռագրի յիշատակարանի ուշագրաւ հատուածը. «Արդ՝ գրեցաւ լուսընկալ ս[ր]բաւետ Աւետարանս ի դուռն հոյակապ եւ գրիգորաշէն Ս[ուր]բ աթոռոյս Մարասայ [=Ամարասայ - Ա. Յ.] եւ ընդ հովանեաւ Ս[ուր]բ Ա[ստուա]ծածնին եւ այլ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ձեռամբ անարժան եւ անարհեստ գրչի Ստեփաննոս եպիսկոպոսի: Գրեցի զսա Հոգով Սրբով եւ սրբագրչով ի յերկիրս Քոչիզու, ի գեաւ(ւ)ղաքաղաքս Էրեր [=Հերհեր - Ա. Յ.], ի կաթողիկոսութե[ան] Աղուանից տ[է]ր տ[եառ]ն Սարգսի եւ եպիսկոպոսութեանն Ներսէսի եւ թագաւորութեան Շահ Դահմանին, որ յայժմ ժամանակիս էառ զՇաքի, եւ իշխանաւոր տեղւոյս Մէլիք Պապային, ի թվականութեանս Հայոց ՌԲ [=1553 թ.]»[206]: 1604 թ. յայտնի դէպ-

ծնթ. 192:

204 Հմմտ. Ա. Յակոբեան, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 284-285, ծնթ. 73 [տե՛ս նաեւ այս ժողովածոյի առաջին բաժնում – *հեղ., 2009*]:

205 Հմմտ. Մ. եպ. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 104-108, 422, ծնթ. 14; Հ. Ղ. Ալիշան, *Արցախ*, էջ 114-115:

206 Ձեռ. ՄՄ 7542, թ. 304ա:

քերի կապակցութեամբ տեղի մէլիքին յիշատակում է Առաքել Դաւրիժեցին. «...Մէլիք Սուջումն ի Դիզակայ, Մէլիք Փաշիկն *ի* Քօչիզ *գեղջէ, Մէլիք Բարէն ի Բրև(ն)ախս* [տարբ. *Բրիտախս*] *գեղջէ...»*[207]*: Գաւառանունը մի քանի անգամ յիշատակուած է վիմագիր արձանագրութիւններում*[208]*: Ղարաբաղի բեկլարբեկ դարձած Մէլիք Եգանը Տող բերդաւանի իր ապարանքի մուտքի շուրջը փորագրած 1737 թ. վիմագրում դեռ թուարկում է Քոչիզն իր ենթակայութեան տակ գտնուող մահալների շարքում. «...մէկն՝ Թալիշ, մէկն՝ Ջար(ա)յպ(եր)թ, մէկն՝ Խաչան, մէկն՝ Վարնդայ, մէկն՝* Քոչէզ, *մէկն՝ Տուղաղ»*[209]*:*

Զարգացած միջնադարում նոյն կերպ Դիզակի մաս կազմած եւ ուշ միջնադարում նաեւ Վերէնդէ, Բրենտէ *անուններով յայտնի դարձած մէլիքութեան հետ միաւորուելուց յետոյ (նրա Մէլիք Բաղու օրօք)* Քոչիզն *ապահովեց ընդարձակ* Վարանդայ *գաւառի (մահալի) ձեւաւորումն իր նշանաւոր մէլիքական տոհմով (Մէլիք-Շահնազարեաններ): Տեղին նշենք, որ ինչ-որ*

207 **Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, գլ. Գ, էջ 63:

208 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, էջ 159-161, 166 («Ա[ստուա]ծ ա[ո]ղէ *Քոչիզու* ժող[ո]վ[ու]րդն...»), էջ 168 («...ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկրիս *Վարանդու* եւ *Քոչիզու*, զի եղիցի այս երկու աթոռս մի»):

209 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, էջ 180-181: **Յ. Փափազեան**, *Մէլիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրութիւնը*,– «Լրաբեր հաս. գիտութիւնների» 1985, թիւ 5, էջ 76-77:

պատճառով Րաֆֆու «Խամսայի մէլիքութիւնները. 1600-1827» մենագրութեան մէջ (Թիֆլիս, 1882) տեղ գտած չիմացութեան հետեւանքով Քոչիզի մէլիքութեան պատմութիւնն, ըստ էութեան, չի արտացոլուել նոր մասնագիտական գրականութեան մէջ (այդ թւում՝ Արցախի բազմադարեայ պատմութիւնն ամփոփող Բագրատ Ուլուբաբեանի եւ Վահրամ Բալայեանի մենագրութիւններում), իսկ երբեմն անգամ լուրջ շփոթութիւնների առարկայ է դարձել: Այդպիսի օրինակ է Սեդրակ Բարխուդարեանի եւ Յակոբ Փափազեանի մօտ առկայ շփոթը Քաշաթաղի կամ Բշթաղի սիւնիքեան մէլիքութեան հետ (Խնածախ գիւղում նստող Մէլիք-Հայկազեանների գլխաւորութեամբ)[210]*, որի հիմքում քաշաթաղեան՝ այսօր էլ չէն* Հոչանց *գիւղի Ղոչազ յորջորջման եւ* Քոչիզ *գաւառանուան որոշ նմանութեան թիւր ընկալումն է եղել*[211]*:*

Ամարաս գաւառից դէպի հիւսիս ընկնում էր Մուխանք *(տարբ.* Մխանք, Մխանց, Մոխանք*) գաւառը, որը Սուրէն Երեմեանի կողմից իրաւացիօրէն համադրուել է* Մուխուրովանի *յորջորջուած տեղավայրի հետ, հարթավայր մտնող Խնձաչէն գետակի ափերին (ներկայիս Մար-*

210 Այս մէլիքութեան մասին մանրամասն տե՛ս **Մ. Հասրաթեան**, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, Եր., 1985, էջ 155-165:

211 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 194; **Յ. Փափազեան**, *Մէլիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրութիւնը*, էջ 77:

տունի քաղաքից արեւելք)[212]*: Հարաւից-հիւսիս այն տեղորոշւում է Սեւջրի (Ծարտարի գետակի) վերնահովտում (մինչեւ Ուրեանսար եւ Կարմիր ժայռ բարձունքներով՝ Տրի գաւառի հետ սահմանը), Խոնաշէնի հովտում (մինչեւ նրա՝ հարթավայր մտնելը), ինչպէս նաեւ Կարկառ գետի աջափնեայ միջնահովտի մի հատուածում, որն արեւելքում հասնում էր, հաւանաբար, մինչեւ Ջէյլի բլրաշարից դէպի Կարկառի հունը ուղղահայեաց ձգուող տափաստանային մտաւոր գիծը*[213]*:*

Մուխանքից դէպի արեւմուտք, սկսած մօտաւորապէս Քեաթուկ *(պրսկ. «գեղուկ» - «լեռնանցք») գիւղի հատուածից, Կարկառի եւ նրա Վարարակն օժանդակի աջափնեակով ձգւում*

212 **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 71; **Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումը*, էջ 39; **R. H. Hewsen**, *Armenia: A Historical Atlas*, էջ 100: Ընդ սմին գաւառն աւելի հարաւ-արեւելք տեղորոշող եւ Արաքսի ափերի Մուղանի ու Միլի դաշտերի հետ ինչ-որ կերպ կապող ուսումնասիրողների տեսակէտը (**Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 22-24; **Բ. Ուլուբաբեան**, *Արցախի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը*, Եր., 1994, էջ 10; **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 57-59) ներկայումս կարելի է համարել էապէս յաղթահարուած:

213 Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 271-272 [այս ժողովածոյում՝ էջ 118 - *հեղ., 2009*]: Այս աշխատանքում շտապողաբար ենթադրել էինք, թէ *Մուխանքը* հիւսիսում չի հասել Կարկառի հոսանքին, որի ափերով հաւանաբար տարածուած է եղել *Պազկանք* գաւառի արեւելեան մասը: Բայց ներկայումս դա ուղղելի է՝ ըստ վերը նշուած հեղինակների:

էր Պազկանք *գաւառը (տարբ.* Պածկանք, Պարգկանք, Պարսկանք*): Սուրէն Երեմեանն, ի տարբերութիւն նախորդ եւ յաջորդ շատ գիտնականների, կարծես արժեւորեց նաեւ այս «Պարսականքի» (=*Պազկանք*, որը այլ քարտէզներում նա կոչում էր նաեւ* Բազկան*) տեղորոշումը Կարկառի վերնահովտի հատուածում՝ կատարուած Ղեւոնդ Ալիշանի կողմից, որը գրում էր. «Եւ ո՛չ մի չէն կամ վայր նշանակի ի պատմչաց յայս գաւառ, որով* բաց ի սահմանակցութենէ Ա*մարասայ՝ չէ մարթ գիտել ինչ զհանգամանս նորին: Այլ թուի թէ ունէր սա զձորահովիտն Գարգարայ, յականց նորա մինչեւ ի դաշտաբերանն Գարգարացւոց... ի հարաւոյ կուսէ առեալ զամենայն հովիտս արեւելագնաց վտակաց, մինչեւ ի ջրբաժին գետոցն, որք ի հարաւ յԵրասխ իջանեն: Եւ ըստ այսմ գրաւէր ի սմա հիւսիսային ծայր այժմեանս մեծի Վառանդինայ գաւառի, զոր եւ համարիմք ընկալ վիճակ Շուշայ, յանուն մեծի քաղաքին»*[214]*: Ընդ սմին նշելի է, որ գաւառն աւելի հարաւ՝ Արաքսի ա-*

214 **Հ. Ղ. Ալիշան**, *Տեղագրութիւն Հայաստանի - Արցախ*,– «Բազմավէպ», 1989, էջ 211 (վերահրատ. մէջ՝ Եր., 1993, էջ 107-108): Հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 77: Նաեւ՝ **R. H. Hewsen**, *Armenia: A Historical Atlas*, էջ 100: Ի դէպ, մեր նոյն աշխատանքում շտապողաբար ենթադրել էինք, թէ *Պազկանքը* հաւանաբար ընկած է եղել Կարկառի աջափնեակի առաւելապէս միջնահովտային հատուածում (**Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 283), սակայն ներկայումս դա համարում ենք էապէս ուղղելի դէպի վերնահովիտ (տե՛ս նաեւ նախորդ ծանօթագրութիւնը):

փամերձ տարբեր հատուածներում տեղորոշելուն հակուած միւս ուսումնասիրողների տեսակէտները[215] զուտ ենթադրական մօտեցումների արդիւնք են եւ որեւէ չափով աղբիւրագիտական փաստերի մատնանշման յաւակնութիւն չունեն: Պէտք է նկատել միայն, որ Ղեւոնդ Ալիշանի եւ Սուրէն Երեմեանի պատկերացրած գաւառատարածքից անհրաժեշտ է, որոշ սրբագրում կատարելով, հանել Վարարակն-Կարկառ գետագծի ձախափնեայ հատուածները (ուր Պիանք գաւառն էր) եւ փոխարէնը մացնել Կուր եւ Արաքս գետերի աւազանների ջրբաժան Բովուրխանի լեռնազանգուածից նաեւ դէպի հարաւ-արեւելք ընկած՝ Մանաս (Քեօնդալանչայ) գետի ու նրա Ամարաս վտակի վերնահովիտների տարածքները (Աւետարանոցի եւ Հերհերի գիւղախմբերը): Հէնց այս վերջին տարածքում է «Վաչագանի վէպ» կոչուած Զ դ. ամենասկզբում շարադրուած երկի[216] անանուն հեղինակը յիշատակում Արցախայ Պազկանք աշխարհի (իմա՝ գաւառի)՝ Ամարաս գեւղաքաղաք-ից ոչ շատ

215 Տե՛ս **Բ. Ուլուբաբեան**, *Արցախի պատմութիւնը*, էջ 11; **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 59-61; **Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 39:

216 Այս սկզբնաղբիւրի մասին տե՛ս **Ա. Յակոբեան**, *«Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում*,– «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Եր., 2003, էջ 45-142: Հրատ.՝ **Անանուն**, *Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի*, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**,– *ՄՀ*, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112:

հեռու գտնուած Վե(հ)կերտ բնակավայրը, որտեղից մշտապէս Ամարաս էր այցելում առաքելաշնորհ ճգնաւոր Յոբ երէցը[217]: Ըստ ամենայնի՝ դա ներկայիս Քերթ գիւղն է Ամարաս գետի վերնահովտում, որի անունն, ամենայն հաւանականութեամբ, առաջացել է իր վաղ անուանաձեւի սկզբնամասի «վե(հ) - քեհ» իրանա-հայկական բաղադրիչի անկումով եւ բաղաձայների չնչեղացմամբ (Կ-Ք, Տ-Թ): Քերթից 2 կմ հարաւ գտնուող ներկայիս Քարահունջ գիւղը եւս Քարունճ վաղնջական տարբերակով յիշատակուած է նոյն աղբիւրի յարակից երեք հատուածներում իբրեւ Ամարասից ոչ շատ հեռու աւթի տեղ (թէպէտ եւ՝ առանց գաւառի մասին նշումի)[218]: Յաւելենք, վերջապէս, որ ըստ

217 *ՊԱ*, Ա.իբ, էջ 75; *ՄՀ*, հտ. Գ, էջ 100, նախ. 1-2 («Երէց մի *Վե(հ)կերտոյ*՝ Յոբ անուն, ճգնաւոր եւ յոյժ առաքինի վարուք կեցեալ յաշխարհի, որ ունէր եւ առաքելական շնորհս, քանզի եւ բազմաչան աշխատութեամբ իւրով, հաւատովն եւ սիրովն Քրիստոսի զմեծագոյն աշխարհ մի Արցախայ՝ *Պազկանք* /*bcr. a* Պարսականս, *z* Պարզկանք, / Պազկանց/ անուն, դարձուցանէր ի ճանապարհէն մոլորութեան... եկեալ կատարէր բազում անգամ զյիշատակ սրբոյն Գրիգորիսի եւ առնէր երկիցս եւ երիցս առաջի բազմաց...»):

218 *ՊԱ*, Ա.իա, էջ 72-73; Ա.իգ, էջ 84; *ՄՀ*, հտ. Գ, էջ 97-98, նախ. 42 («հասեալք ի *Քարունճ* փոքրագոյն գիւղ մի /*bclrz* փոքրագոյն ագարակն Քարունճ/»), նախ. 53 («Եւ ի *Քարունճայ* չուե(ա)լ բանակին, յայնմիկ յայտ /*a* Յորժամ չուեալ ի Քարունճէ, կանայք յառաջ/ ելանէին ի գեւղաքաղաքն յԱմարաս /*a* գեաւղաքաղաքէն Ամարասայ/»), էջ 110, նախ. 85 («տանէր մինչեւ *զՔարունճ*՝ աւթի /*bclrz* յաւթի/ տեղ»): *Հին Քարունճ* գիւղատեղիի մասին տե՛ս. **Ш. Мкртчян**, *Историко-архитектурные*

Յովհ. Կարագեոզեանի՝ Արցախի Պագկանք գաւառի անունը հնարաւոր է բխեցնել բիաինական Ռուսա Ա արքայի Ծովինարի սեպագիր արձանագրութեան՝ ուինիք-արցախեան «նուաճուած երկրների» շարքում «Հայերէնի սեռական յոլովով» տրուած Պագուա երկրանունից (միջանկեալ *Պագիկանք տարբերակով)[219]:

Յաւարտս կրկին ընդգծենք, որ Վարարակն օժանդակի ողջ աջափնեակում արդէն սկսւում էր մշտապէս Ամարասի կամ Գտչավանքի եպիսկոպոսութեանը ենթակայ եղած հարաւային Արցախի հատուածը, ուր ուշ միջնադարում ձեւաւորուեցին Դիզակի, Վարանդայի եւ Քոչիզի մելիքութիւնները (վերջին երկուսը՝ շատով միաւորուած): Այստեղ, Վարարակնի ձորակից անմիջապէս հարաւ սկզբնաղբիւրները յիշատակում են Ջառիստ (Գտչավանքի շինարարական վիմագրի այս տեղանուան համադրումը հետագայի Ջառիլու յորջորջմամբ գիւղի հետ որոշակի թէականութեամբ է)[220] եւ Ծուշու (=Ծուշի)[221] բնակավայրերը: Վերջինիս անուան

памятники Нагорного Карабаха, էջ 121-122: Հմմտ. **Յ. Կարագեոզեան**, նշ. աշխ., էջ 155: **Ս. Սարգսեան**, նշ. աշխ., էջ 71:

219 **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 202:

220 Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 268-269 [այս ժողովածոյում՝ էջ 105-107 – *ծնթ., 2009*]:

221 *ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Մասն I, էջ 384 (Աւետարան, 1428 թ., գրիչ՝ Մանուէլ. «...ի յաշխարհիս Աղուանից. ի վիճակս Ամարասայ. ի

Ծօշ, Ծօշի կամ Ծօշու տարբերակները վկայուած են առաւելապէս ԺԸ-ԺԹ դդ. գրուածքներում ու փաստաթղթերում: Բերենք մի վկայութիւն՝ «Թալիշու մահլն, Աղջայքանդ» գիւղում Ոսկան ատենադպրի գրած հետագայի խիստ տեղեկաշատ յիշատակարանից. «Ի թվականութեանս մերում ՌՄԸ-ն էր [=1759 թ.], զոր մահ անկաւ ի յերկիրն Խամսայ, ի գիւղն Հատրութ, որ է Տիղաղ: Յետ այնորիկ անկաւ գիւղն Ծօշվու եւ ապա Դարնավազ, այլ եւ Շահբուլաղն...»[222]:

Պիանք գաւառի համար մեր վերջին յօդուածում ցոյց ենք տուել, որ «Աշխարհացոյց»-ում գաւառների թուարկման տրամաբանութեան բացայայտումից յետոյ առաւել ընդունելի տարբերակ կարող է համարուել նրա տեղորոշումը Կարկառի ձախ վերին վտակների հովիտներում, այն է՝ Պորեցիքի, Մեղրագետի, Տրակետի եւ Վարարակնի (վերջինիս՝ լոկ ձախափնեակով): Մանրամասնենք, որ նշուած գետահովիտներում անունների ակնյայտ համադրումներ առայժմ չեն նկատւում, իսկ այլ տեղորոշումներ առաջարկած ուսումնասիրողներից Ս. Տ. Երեմեանի՝ նման համադրման փորձը («Պիանք գաւառ - ...Խաչէնագետի եւ Գարգար գետերի [=Կարկառ գետի - Ա. Յ.] միջեւ,

գաւառս *Ծուշու* կոչեցեալ»):

222 Տե՛ս **Հ. Ս. Ճեմճեմեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Է, Վենետիկ-Ս.Ղազար, 1996, էջ 321 (ձեռ. թիւ 1064, էջ 51):

Բայան գիւղի շրջակայքում»)[223] մասամբ ինչ-որ տեխնիկական վրիպման վրայ է հենուած, քանի որ հեղինակի խօսքն ակնյայտօրէն Բայաթ տեղավայրի մասին է՝ ԺԸ դ. կէսերին Փանահ խանի կառուցած Շահբուլաղի (կամ Բայաթի) նշանաւոր բերդով[224]: Ընդ որում վերջինիս շրջակայքը (Վանքասարով, Շիկաքար-Քարագլուխ ամրոցով եւ հանրայայտ արցախեան Տիգրանակերտով) իրականում վերագրելի է Մեծ Իրանք գաւառին[225]: Ամէն պարագայում, սակայն, անկախ համադրումների բացակայութիւնից, վճռական դեր է խաղում մէկ այլ իրողութիւն՝ այն, որ լոկ մեր առաջարկած տեղորոշման դէպքում են իրար համընկնում «Աշխարհացոյց»-ի երկու բաժինների գաւառախմբերը: Առաջին գաւառացանկում (Մուխանք → Պիանք → Պազկանք) Պիանքը հարաւային Արցախի՝ արեւելքից արեւմուտք թուարկուած երկու գաւառների միջեւ է, իսկ երկրորդում (Մեծ Իրանք → Պիանք → Հարջլանք) նրա դիրքը մի-

223 **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 77:

224 Ամրոցի մասին մանրամասն տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 226:

225 Տե՛ս վերեւում, ծնթ. 101: Նշենք, որ Բաբկէն Յարութիւնեանը որոշ վերապահումով, այնուամենայնիվ, ընդունում է *Պիանքի* մասին Ս. Տ. Երեմեանի կարծիքը (բնագրում՝ «թերեւս աւելի հաւանական է Ս. Երեմեանի կողմից գաւառիս տեղադրութիւնը Բայան գիւղի շրջակայքում»), թէպէտ գիտէր նաեւ, որ *Մեծիրանից* գաւառ-ի «մէջ էր գտնւում... *Շիկաքար* բնակավայրը...» (**Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 38-39):

ջակայ է արդէն կենտրոնական Արցախի երկու գաւառների միջեւ (ընդ որում դրան յաջորդում է հարաւային նոյն՝ Պազկանք → Մուխանք գաւառախմբի յիշատակումը)[226]: Յաւելենք, որ Յովհ. Կարապետեանը հնարաւոր է համարում «Կարկառի հոսանքի ձախակողմեան վտակների աւազանում» տեղորոշուող Պիանք գաւառի անունը բխեցնել Ռուսա Ա-ի Ծովինարի սեպագիր արձանագրութեան՝ սիւնիք-արցախեան «նուաճուած երկրների» շարքում հայերէնի սեռական յոլովով տրուած Պիրուա երկրանունից (միջանկեալ *Պիրկանք-ով)[227]:

Պիանքը Կարկառ գետի եւ նրա Վարարակն օժանդակի ձախափնեայ հովիտներում տեղորոշելուց յետոյ կարելի է ուշադրութիւն դարձնել գաւառի հիւսիս-արեւմտեան սահմանահատուածի հետ կապուած մի մանրամասնի վրայ: Խորհրդային շրջանում եւ ներկայումս Կարկառի ձախակողմեան վտակների հովիտներն ընդգրկող Ասկերանի շրջանը հիւսիս-արեւմուտքում տարածւում է Կարկառի ու Խաչէնագետի աւազանների միջեւ ձգուող ջրբաժան լեռնա-

226 Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն*, էջ 49-50 եւ վերեւում, ծնթ. 5, 7: Այս տեղորոշման դեպքում, բնականաբար, «ուշ շրջանի *Խոջալուի* շրջակայքում» «*Հարջլանք* գաւառի... տեղադրելու» մասին Բաբկէն Յարութիւնեանի «ենթադրութեան հաւանականութիւնը» (**Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 38) այլեւս չի արդարանում:

227 **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 203:

բազուկից այն կողմ եւ իր մէջ ներառում նաեւ Խաչէնագետի աջ վտակ Քոլատակի վերնահովիտը (Կօշիկ անապատ վանքի շրջակայքը)՝ հարեւան Մարտակերտի շրջանին թողնելով նրա հովտի միայն ստորին մասը՝ Քոլատակ գիւղի հողատարածքը: Ըստ պահպանուած ցարական ժամանակաշրջանի քարտէզների՝ մօտաւորապէս այդպիսի գծով է անցել նաեւ Շուշիի եւ Ջեւանշիրի գաւառակ-ուեզդների սահմանը[228]: Արդ՝ քանի որ զանազան դարաշրջաններում վարչական բաժանումների սահմանները երբեմն մեծ ժառանգորդայնութիւն էին հանդէս բերում (իրենց հիմքում պահպանելով հինաւուրց բնակավայր-համայնքների հողատարածքների միջեւ անփոփոխ մնացող բաժանարար գծերը), ապա ենթադրաբար կարող ենք հնարաւոր համարել, որ գուցէ Քոլատակ վտակի միջնահովտով է անցել դեռեւս աշխարհացոյցեան Պիանք գաւառի հիւսիս-արեւմտեան սահմանագիծը: Այդ դէպքում նշուած վտակի անտառոտ վերին աւազանը հիւսիս-արեւմուտքից եզերող լեռնաբազուկով Պիանքին կարող էր սահմանակցել աշխարհացոյցեան Արցախի միւս կենտրոնական գաւառը՝ Հարչլանքը (եթէ այն իր մէջ իրօք ներառել է ոչ միայն Թութխուի եւ Արագջրի հովիտները, այլեւ Խաչէնագետի վերնահովիտը՝ Արծաթահանք-Խոջայեուրտի լեռնագանգուածից հարաւ-արեւ-

228 Տե՛ս **Е. Кондратенко**, *Карта Елисаветопольской губернии с показаніемъ границъ уездных полиц. участковъ и сельских обществъ*, Тифлисъ, 1888:

մուտք)[229]: Նկատենք, որ Դադիվանքի՝ Լեփ ամփոփած կալուածացանկում յիշատակուած է նաեւ Գանձակ տեղավայրը, որն, անշուշտ, վերաբերում է Խոխանաբերդից մի քանի կմ արեւմուտք Խաչէնագետին հարաւից միացող եւ Քոլատակին զուգահեռ Գանձակ աջակողմեան վտակի հովտին[230]: Պարզ է, որ այս տարբերակի ընդունման դէպքում մեր առջեւ առաւել հաւաք (կոմպակտ) է պատկերւում աշխարհացոյցեան Արցախ նահանգի կենտրոնական՝ Վարարակն-Կարկառի գետագծից հիւսիս տարածուող գաւառների խումբը՝ Պիանք - Մեծ Իրանք - Հարչլանք - Մեծ Կուանք[231], որոնց տարածքում

229 Այս վերապահման համար հմմտ. վերեւում, ծնթ. 85:

230 Լէօ, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի*, էջ 156: Հմմտ. **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 80:

231 Նշենք, որ *Մեծ Կուանք* գաւառը Աղստեւի հովտում, իսկ *Հարչլանք*-ը՝ Արաքսի ափին, Քեօնդալան վտակից հարաւ տեղորոշելու հնարաւորութեան մասին Ս. Տ. Երեմեանի՝ աղբիւրագիտական ամբողջական հիմքին հակասող տեսակէտները (*Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 62, 66) ներկայումս կարող են համարուել լիովին յաղթահարուած: Նոր գրականութեան մէջ չեն հիմնաւորուել եւ արդարացիօրէն մերժուել են նաեւ ուսումնասիրողի կողմից Ուտիք նահանգի հինգ գաւառների չյաջողուած (մէկ դէպքում «ենթադրաբար») տեղորոշումները. այն է՝ նահանգի ամենաարեւմտեան (Գետիկ-Աղստեւի հովտի) *Աղուէ* եւ հարաւային *Ռոտ Պացեան* ու *Տրի* գաւառների տեղափոխումը Տրտուի միջնահովիտ ու յարակից շրջաններ (էջ 34, 79, 86), *Գարդման*-ի (կենտրոնը՝ Ջագիր եւ Չարդախլու գետակների վերնահովտում) տեղաշարժումը Կուրի ափով դէպի արեւմուտք՝ մինչեւ Աղստեւի ու Դեբեդի ստորին հոսանքների միջակայքը (էջ 46), եւ վերջա-

հետագայում ձեւաւորուեց Խաչէնի իշխանութիւնը (ապա նաեւ՝ Խաչէնի, Ջրաբերդի եւ Թալիշի մելիքութիւնները):

Արցախեան հարաւային եւ կենտրոնական գաւառների տեղորոշումների՝ վերը կատարուած ճշգրտումները թոյլ են տալիս քննարկման ներկայացնել արաբական աղբիւրի յայտնի վկայութեան վերաբերեալ մի ուշագրաւ թուացող դիտարկում՝ հետագայում աւելի խոր հետազօտման ակնկալիքով: Թ դ. վերջի արաբ պատմիչ ալ-Բալազուրին Է դ. կէսերին Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլի զօրավարի նուաճումների նկարագրութեան մէջ ի մասնաւորի նշում է Հայաստանի (Արմինիյայի) արեւելքում ընկած վեց գաւառների հետեւեալ շարքը. «Շակշին [=Շակաշէն], Միսկուան [=Մեծ Կուանք], Ուդ [=Ուտի Առանձնակ], Միսրիան [=Մեծ Իրանք], Հարջալիան [=Հարջլանք], Տիար»[232]: Այս թու-

պէս՝ ծայր հարաւ-արեւելեան *Առան-ռոտ* գաւառի տեղորոշումը *Ուտի Առանձնակ*-ի ու *Շակաշէն*-ի միջեւ (էջ 37)՝ նրա փոխարէն Արաքսի ձախափնեակ բերելով գետի՝ ծով մտնող հին հունի աջ ափի Փայտակարան քաղաքը (Զ դարի սկզբին կառուցուած Բայլականի հետ՝ Հ. Հիւբշմանից եկող անընդունելի համադրման հիման վրայ, որը հակասում է «Աշխարհացոյց»-ի ուղիղ պնդմանը. «Փայտակարան յելից կայ Ուտիոյ, առ Երասխաւ...: Ուտիք... առ մտից կայ Երասխայ») եւ նոյնանուն նահանգի մի գաւառը (էջ 63, 88):

232 Բնագիրը եւ տառադարձութիւնները Ա. Տէր-Ղեւոնդեանի նոր թարգմանութեանն են. *Արաբ մատենագիրներ*. Ներածութիւնը եւ բնագրից թարգմանութիւնները **Ա. Տէր-Ղեւոնդեանի**, էջ 274 (հմմտ. նաեւ էջ 499՝ Իբն ալ-Ֆակիհ): Յիշենք, որ Ալ-Բահիլին այդ շրջանները

արկման մէջ վերջին անունը, որպէս կանոն, համադրուել է (աւելի յաճախ՝ Տաքար կամ Տիր տառադարձութեամբ) Ուտիքի Տրի գաւառանուան հետ[233], որն, ինչպէս տեսանք, նահանգի ամենահարաւային մասում էր (Կարեագինո-Ֆիզուլիի շրջակայքում եւ դէպի հարաւ ու արեւելք): Սակայն այժմ, նկատելով արաբական արշաւանքի նկարագրութեան մէջ արձանագրուած վեց գաւառներից հինգի փաստօրէն սպառիչ համապատասխանութիւնը Ուտիք եւ Արցախ աշխարհների կենտրոնական հատուածների գաւառախմբի հետ, գուցէ, կարելի է ալ-Բալազուրիի յիշատակած Տիար տեղանունը փնտրել մեր Պիանք գաւառի՝ վերը ճշտուած տարածքում: Իբրեւ վարկած՝ կարելի էր ենթադրել նաեւ նրա կապը Տրակետ (<*Տրագետ) գետանուան հիմքի հետ: Այդ տարբերակով, որպէս քաղաքական պատմութեանը վերաբերող դիտարկում՝ կը ստացուէր, որ արաբական տուեալ զօրաշարժը, գոնէ Թ դարի պատմիչին հասած լուրերի համաձայն, ինչ-որ կերպ իրօք չի առնչուել հարաւային Արցախի գաւառախմբի հետ եւ ուղղուած է եղել միայն կենտրոնական հատուածի գաւառների դէմ: Կարծում ենք, որ նման տարբերակով Տրակետ գետանու-

հեծեալների զօրաջոկատ էր ուղարկել *Բայլականը* պայմանագրով հնազանդեցնելուց եւ ապա *Պարտաւ* հասնելուց յետոյ:

233 Տե՛ս, օր., **Ս. Տ. Երեմեան**, *Ն. Մառը եւ VII դարի Հայոց «Աշխարհացոյց»-ը*.– «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Եր., 1968, էջ 82:

ան հիմքի ընկալման փորձը հնարաւոր է կիրառել դեռեւս բիաինական Սարդուրի Բ-ի Գանձադուան տարեգրութեան Տերիա *երկրանուան ստուգաբանութեան կապակցութեամբ, որը սեպագիր բնագրում յիշատակուած է* Կուլալբա *(>*Մեծ Կուանք՝ *Տրտուի հովտում) եւ* Ուխունե *(>*Խոխանա*/բերդ՝ Խաչենագետի հովտում) երկրներից յետոյ (բոլոր համադրումներն՝ ըստ երջանկայիշատակ Յովհ. Կարագեոզեանի)*[234]:

Այսպիսով, Սիսական-ի Կոտակ *գաւառը տեղադրւում է Արցախեան լեռնաշղթայի* Դիզափայտի *լեռնազանգուածի եւ* Արաքս-*ի միջեւ, արեւմուտքում հասնելով Հակարիի ստորին հոսանքին, հիւսիս-արեւմուտքում վերջինիս ձախ* Փոքր Ակերայ *վտակը՝ նրա վերնահովտում գտնուող Հին Թաղեր գիւղը ներառեալ: Արեւելքում* Սիսական-ի Կոտակ-*ը հասնելու էր մինչեւ* Հադրութ *գետակի վերնահովիտը հարաւից շրջափակող Յորի լեռնաբազուկին եւ գետակի ստորին հոսանքին, մօտաւորապէս մինչեւ Արաքսի վրայ գտնուող Ասլանդուզի գետանցը, որը Գտչավանքի շինարարական արձանագրութեան մէջ կոչուած է «աւագն Գետահատի»*[235]:

234 **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 138-139, 200-201, 206: Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Կենտրոնական Արցախի Հարչլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնը*, էջ 50:

235 **Ա. Յակոբեան**, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, 264-266:

V

ՀԱԿԱՐԻԻ ՎԵՐՆԱՀՈՎՏԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ. Բ

Արաքսի ձախ վտակ Հակարիի վերին աւազանում, որը համապատասխանում է նրա Շալուայ, Հոչանց եւ Աղաւնոյ վտակների հովիտների տարածքին, հնում գտնւում էին Մեծ Հայքի Սիւնիք նահանգի Աղահեճք *եւ Արցախ նահանգի* Վայկունիք *եւ* Բերձոր *գաւառները: Քոչուորաբնակների ներթափանցումից (ԺԸ դ. երկրորդ կէս) երկու դար անց Հակարիի վերնահովտի վերստին հայաշունչ դառնալու արգիւնքներից մէկը նորագոյն ժամանակների գիտութեանն անյայտ յուշարձանների անընդհատ յայտնաբերումն է հայ բնակչութեան կողմից: Այս տարածքի յուշարձանախմբերից Սամուէլ Կարապետեանի 1999 թ. մենագրութեան մէջ ներկայացուած մեծածաւալ նիւթը (այդ թւում վիմագիր արձանագրութիւններ 15 բնակավայրերից)*[1] *2000 թ. մեր կողմից լրացուեց նոր վիմագրերով, որոնք յայտնաբերուել էին 5 բնակավայրերում՝* Աղբաթխէրտ՝ *Հակարիի Աղաւնոյ վտակի վերնահովտում,* Միրիկ *եւ* Ծիծեռնա-

1 **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Եր., 1999, էջ 125-176:

վանք՝ նոյն վտակի միջնահովտում, Արախիշ եւ Աղբրաձոր (կամ Մայրեզրի վանք)՝ Հակարիի Շալուայ ձախ օժանդակի Ռախիշ վտակի ձախ եւ աջ ափերին[2]:

Ներկայ աշխատանքում դրան կ՚աւելացուեն վերջին նորայայտ վիմագրերը նախորդ յօդուածում ներկայացուած Աղբրաձոր գիւղի մօտակայ Մայրեզրի վանքից, Աղուէսաճաքի գիւղատեղիից (Աղաւնոյ վտակի վերնահովտում) եւ Քաշաթաղի շրջանի չորս վերաշէնացուած գիւղերից՝ Զորմանք (Շալուայ օժանդակի Վաղազնոյ կամ Մաղդանց կոչուած ձախ վտակի միջին հովտում), Սպիտակաջուր եւ Ուխտաձոր (Հակարիի աջ օժանդակ Հոչանցի եւ Աղաւնոյի վերնահովիտների միջեւ բարձրացող Եղնագոմերի սարահարթի հիւսիսային ու արեւելեան փեշերին), Գողթանիկ (Շալուայի աջափնեայ սարահարթին):

1. ԱՂԲՐԱՁՈՐ - ՄԱՅՐԵԶՐԻ ՎԱՆՔ

Շալուայի Ռախիշ վտակի (ԺԹ-ի դդ. յորջորջուած՝ Ղորչուչայ) միջնահովտի աջ (արեւմտեան) ձորալանջի բարձրադիր մասում գտնուող, ԺԱ դարում կառուցուած եւ ներկայումս Մայրեզրի, կամ պայմանականօրէն՝ նաեւ Աղբրաձորի կոչուող (մօտակայ վերաշէնացուած գիւղի անունից, ԺԹ դարում՝ Կիրջաբուլաղ)

2 Ա. Յակոբեան, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, - «Հանդէս ամսօրեայ», ՃԺԲ տարի, Վիեննա, 1998 (տպագրուած՝ 2000 թ.), էջ 269-322:

վանքի պարսպապատ ներսում ու նրանից հիւսիս-արեւելք փռուած հանգստարանում նկատուած վիմագրերն ուսումնասիրել ու հրատարակել էինք 2000 թ. լոյս տեսած յօդուածում[3]: 2001 թ. հոկտեմբերին հայագէտ-բիւզանդագէտներ Քլօդ Մութաֆեանի եւ Ազատ Բօզոյեանի հետ վանքի նոր այցելութեան ընթացքում յաջողուեց գտնել նախկինում չնկատուած երկու արձանագրուած խաչքարեր, որոնք ուղղակի ընկած են գերեզմանատան ներքեւի ծայրամասում:

Դրանցից առաջինը չափազանց պարզ ձեւ ունի՝ կիսաարբատաշ մշակուած, սեղանաձեւ բազալտեայ քարի ճակատի մէջտեղում երկու ուղղահայեաց գծերով նկարուած խաչով եւ նրա շուրջը, քարի եզրագծին զուգահեռ փորագրուած արձանագրութեամբ, որի թուականը եւ փորագրողի անունը չորս տողով գրուած են խաչի ներքեւում՝ կարծես փոխարինելով բացակայող վարդեակին: Իսկ երկրորդ խաչքարն, ընդհակառակը՝ կրկնում է այն հրաշագեղ քանդակազարդ երեք խաչքարերին, որոնցից երկուսի ջարդուած կտորների վրայ ընթերցել էինք հայոց ՇԺԷ (=1068 թ.) եւ ՇԺԸ (=1069) թուականները, վերջինի վրայ նաեւ՝ Առինբերանցի որդի, «իշխանաց իշխան» (ենթադրաբար՝ Դիզակի) Գրիգորի անունը[4]:

3 Տե՛ս նոյն տեղում, էջ 294-312:

4 Նոյն տեղում, էջ 295-300: Յիշենք, որ վանքի հանգստարանի մի վիշապաձեւ տապանաքարի արձանագրութիւնը վերաբերում էր «ՄԵԾԻՆ ՎԱՐԴԿՈՅ»

Առաջին նորայայտ խաչքարի վրայ ընթերցւում է (տե՛ս պատկեր 20).



Փորագրողի վրիպումները շատ չեն (տե՛ս ստորեւ), եւ բնագիրը վերծանւում է հեշտութեամբ: Խաչի շուրջը, կիսակլոր.

Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԵԱՑ ՍՊԱՏԱ‹Ց› ԵՒ ՈՒՐ ԾՆՈՂԱՑՆ. ԵՒ ՈՅ‹Ք› ԿԱՐԴԱՅՔ՝ ՅԱՂ‹ԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ›:

Խաչի ներքեւում՝ չորս տողով.

ՄԱՅՐԷՋՐԵՑՈՒ‹Յ›, ՀԱՒՐ ՍՈՍԹԵՆԻՍԻ» անձին: Դրա հիման վրայ հնարաւոր ենք համարել ենթադրել (նոյն տեղում, էջ 301-303), որ հէնց այս Աղբրաձորի տարածքում կարելի է տեղորոշել այն *Մայրեաց քուրք* (=*Մայրէջուր*) կալուածքը, որտեղից, ըստ Սամուէլ Անեցու՝ «տաճիկների» (=Գանձակի մահմեդական տիրակալների) ասպատակութիւնների հետեւանքով 1073 թ. իր ողջ ընտանիքով ու ենթակայ ազատանիով դէպի Կիլիկիա էր արտագաղթել Հեթումեան արքայատոհմի նախնին՝ Օշին իշխանը (տե՛ս **Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...*, Յառաջաբանով... եւ ծանօթութիւններով **Ա. Տէր Միքելեանի**, Վաղարշապատ, 1893, էջ 117):

ա (=Թ+Վ°) ԾԻԴ: (=1075 թ.) // ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ, // ԿԱՆԿ‹Ն›ԵՑԻ // ԽԱՉՆ:

*Արձանագրութեան առաջին նախադասութիւնը ՅԱՂ բառահատուածից յետոյ կիսատ է թողնուել՝ գրադաշտն աւարտելու պատճառով, սակայն անկասկած է, որ այդտեղ կարող էր լինել միայն «յաղ-*աւթս յիշեցէ՛ք*» աւարտը: Միւս սխալը՝ ՈՅ‹Ք› բառի մէջ վերջին տառի բացակայութիւնն է: Այն հնարաւոր է բացատրել ոչ միայն Ք յետնալեզուային բաղաձայնի պարզ վրիպումով (յաջորդ՝ Կ յետնալեզուայինից առաջ), այլեւ, գուցէ, բնագրի հեղինակի կողմից քերականական ձեւի անկանոն ընկալմամբ՝ եզակի «*որ *կարդայք» կարծրատիպի հետ զուգորդութեամբ («որք»-ի փոխարէն «ոյք» դերանուան օգտագործման պարագայում): Այլուստ, թերեւս, լրիւ անծանօթ է թուականի տառերից առաջ «Թուին» կամ «Թվ» գրելու փոխարէն մեծ, գլխատառի չափսի բոլորագիր Տ-ի նմանուող, ըստ ամենայնի, պայմանական նշան կամ խորհրդանիշ կցագիր Թ+Վ փորագրելը՝ (ա ԾԻԴ [=1075 թ.]): Իսկ ՈՒՐ ԾՆՈՂԱՑՆ ձեւը պէտք է համարել պարզապէս բարբառային-խօսուածքային՝ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ-ի փոխարէն[5]:*

Վիմագրում արձանագրուած ՍՊԱՏ *անուանաձեւի տակ, անկասկած, անհրաժեշտ է հասկանալ* Սմբատ *(տարբ.* Սնպատ, Սմպատ*) արական անձնանունը: Այն այդպէս, առանց*

---

5 Նոյն ձեւը տե՛ս նաեւ ստորեւ, Եզնազոմերի գրչագրի հետագայի (1735 թ. եւ յաջորդ) նօտրագրով գրուած յիշատակարաններում (ծնթ. 125):

սկզբնատառին յաջորդող Մ-ի (կամ Ն-ի) հանդէս է գալիս նաեւ այլ վիմագրերում, ընդ որում հրատարակիչներն, իբրեւ կանոն, ՍՊ կամ ՍԲ տառերի միջեւ վերականգնման փակագծերի մէջ աւելացնում են պակասող Մ-ն: Օր.՝ Արցախի Վաճառ գիւղի մօտ «Խէնչալ խաչ» վայրում խաչքարանման կոթողի վրայ ունենք. «...Թվին :ՈԿԵ: [=1216 թ.] *// Ես(ս)՝* Սպատ, *որդի // Վախտա//նգայ, ա[եռո]ն Խաչինո//յ...»*[6]: *Վաղուհասի մօտ, «Եղցու Թալա» հին գիւղատեղիում ժայռաբեկորի վրայ քանդակուած խաչի շուրջ գրուած վիմագրում առկայ է. «Թիվ :ՈԽԳ: էր* [=1194 թ.]*: // Ես՝ Սապուն, // կանգ(ն)եցի զխաչս // որդոյ ի//մոյ* Սպատայ...»[7]: *Վայոց ձորում, Սպիտակաւոր Աստուածածնի հարաւային պատի՝ վերեւում բերուած վիմագրում ասւում է. «...ես՝* Սբատ, *որդ//ի Լիպարտի, միաբանեցա(յ) աւ//ագ անապատիս...»*[8], *ընդ որում* ՍԲ *տառերը տրուած են կցագիր, սակայն հնարաւոր չէ մտածել, թէ նրանց հետ կցագրուած է նաեւ Մ-ն, քանի որ բնագրում մէկ տառանեակից աւելի կցագրեր կան եւ բոլորը պարունակում են երկու տառից ոչ աւելի: Գեղարքունիքում, Շողուագայ վանքի գերեզմանատան խաչքարի քիւին եւս ունենք. «Ես՝* Սպատ, *կանգնեցի*

6 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V. *Արցախ*, կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1982, էջ 83-84, N 253: Այստեղ եւ ստորեւ բերուող բնագրերում ընդգծումները ամենուր մերն են:

7 Նոյն տեղում, էջ 113, N 375:

8 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. III. *Վայոց Ձոր*, էջ 98, N 274:

զխաչս... Թ(ուին) ՈԿԵ [=1216 թ.]»[9]: *Վերջապէս* Սբատ *անուանաձեւի օգտագործման առնուազն մէկ դէպք յայտնի է նաեւ գրչագիր մատեանի, այն է՝ Ղազարեան Աւետարանի յիշատակարանում, որտեղ գրիչ Սահակ Վանանդացին յայտնում էր. «Գրեցաւ սուրբ եւ կենարար Աւետարանս այս ՅԼԶ թուականութեան Հայոց, ի հայրապետութեան Գէորգայ Հայոց կաթողիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի եւ ի տէրութեանն* Սբատայ *Բագրատունեաց...»*[10]: *Յաւելենք, որ Մատթէոս Ուռհայեցու երկի յայտնի դրուագում Յովհաննէս Զմշկիկ կայսերն օգնելու նպատակով Բագրատունեաց Աշոտ արքայի բանակում հաւաքուածների թւում «Թոռնեցի» իշխանին ձեռագրերի մի խումբ կոչում է* Ստատ *անուանաձեւով, իսկ միւսը՝* Սմբատ[11]: *Այդ ձեւերի համեմատութիւնից շատ հաւանական է թւում ենթադրել, որ ձեռագրերի նախօրինակում եղել է հէնց* Սպատ *անուանաձեւը, որի անսովորութեան պատճառով արտագրող գրիչներից մէկն «ստիպուած*

9 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. IV. *Գեղարքունիք*, կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1973, էջ 243, N 1021:

10 Ձեռ. ՄՄ 6200, թ. 220ա-բ: Հմմտ. **Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան]**, *Յիշատակարանք ձեռագրաց*, հտ. Ա *(Ե դարից մինչեւ 1250 թ.)*, Անթիլիաս, 1951, էջ 84; *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, Աշխատասիրութեամբ **Ա. Ս. Մաթեւոսեանի**, Եր., 1988, էջ 40:

11 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, [Աշխատութեամբ **Մ. վրդ. Մելիք-Ադամեանի** եւ **Ն. արկ. Տէր-Միքայէլեանի**], Վաղարշապատ, 1898, էջ 18, ծնթ. 1:

ուղղել է» այն Ստատ-ի, իսկ միւսը՝ Սմբատ-ի («Ժամանակագրութեան» աշխարհաբար թարգմանիչն առաջարկում է Ստատ-ի հիման վրայ հեղինակային սկզբնօրինակում վերականգնել Եւստաթ - Եւստատ անունը[12], սակայն այդ վարկածը, գուցէ, պէտք է համարել շատապողական):

Նշենք, որ Հր. Աճառեանն անձնանունների իր բառարանի ՍՄԲԱՏ բառայօդուածում չի դիտարկում մեզ հետաքրքրող անուանաձեւը[13], չենք հանդիպել նման անդրադարձի նաեւ այլ լեզուաբանների աշխատանքներում: Սակայն բերուած օրինակներից յետոյ համարձակուենք վարկածի կարգով ենթադրել (հետագայ հանգամանալից քննութեան համար), որ Սմբատ-ը առանց Մ-ի գրելու երեւոյթը կարող էր կապուած լինել հեղինակների (գուցէ՝ քերականների մի դպրոցի՞) կողմից տուեալ անձնանուան մէջ այդ տառի սխալ (յամենայն դէպս՝ անկանոն) ընկալմամբ՝ իբրեւ Բ, Պ երկշրթնային բաղաձայններից առաջ գոյացած աւելորդ անական հնչիւնի: Նրանց համար լեզուական այդպիսի երեւոյթի օրինակներ կարող էին ծառայել Աբբակում - Ամբակում[14], Հաբանդ - Համբանդ[15], Լաբրոն - Լամբրոն[16] եւ նմանատիպ այլ իրաւացի կամ սխալ ընկալուած դէպքերը:

12 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*. Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները **Հր. Բարթիկեանի**, Եր., 1991, էջ 486, ծնթ. 43:

13 Հմմտ. **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, Եր., 1948, էջ 537-563:

14 Հմմտ. **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա, Եր., 1942, էջ 115-116:

Մայրենջրի վանքի գերեզմանատան ներքեւի ծայրամասում ընկած նորայայտ գեղաքանդակ խաչքարի վարդեակի ձախ կողմում (խաչքարի ներքեւի աջ ջարդուած կտորն այդպէս էլ չի յայտնաբերուել) 5 տողով փորագրուած է հետեւեալը.

Տ{[Է]Ր … …}
{… … ՈՂ}
-ՈՐՄ{Ի}
ՍՊԱ
-ՏԱՅ



Արձանագրութեան առաջին տողի սկզբում նշմարուող Տ տառը թոյլ է տալիս ենթադրել, որ դա սկզբնատառն է Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ յապաւուած բառերի, ընդ որում «Աստուած» բառի փոխարէն կամ անգամ նրա կողքին կարող էր լինել նաեւ Ք[ՐԻՍՏՈ]Ս-ը: Այդ յապաւուած բառերից յետոյ 2-րդ տողի վերջում կարող էին տեղաւորուել ՈՂ//ՈՐՄԻ բառի սկզբի՝ ներկայումս ամբողջովին հողմնահարուած երկու տառերը:

15 Տե՛ս Ստեփաննոս Օրբէլեանի «Սիւնեաց պատմութեան» 1513 թ. ընդօրինակուած հնագոյն գրչագրի գիղացանկերում (Ձեռ. ՄՄ 6271, թ. 333ա):

16 Տե՛ս **Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց…*, էջ 117, տողատակ 2; *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Եր., 1950, էջ 68 («…դուստր պարոն Հեթմոյ, որ տէր էր *Լամբրունին*»):

Նոյնքան հողմնահարուած է նաեւ այդ բառի վերջին տառը 3-րդ տողի վերջում: Թերեւս հնարաւոր չէ կասկածել, որ դա եղել է -Ի, այլ ոչ թէ -ԵԱ բառաւարտը (ինչպէս ունենք քննարկուած նախորդ բնագրում՝ ՈՂՈՐՄԵԱՅ), քանի որ կորուածը մէկ տառի չափսն ունի:

Հանգուցեալի անուան Սպատ ձեւը տեսանք նաեւ վերեւի բնագրում: Արդեօ՞ք այս անուան կրողը կարող է չնոյնացուել նախորդ, պարզաւոճ խաչքարի վրայ յիշատակուած Սպատ-ի հետ (գուցէ, օր.՝ լինելով նրա պապը), թէ՞ պէտք է ենթադրենք, որ սա այն բացառութիւններից է, երբ ինչ-ինչ հանգամանքների բերումով միեւնոյն հանգուցեալի անունը յիշատակուած է եղել մէկից աւելի դամբանական յուշարձանի վրայ: Նիւթի պակասն առայժմ, թերեւս, հնարաւորութիւն չի տալիս վերջնական ճշգրտութեամբ պատասխան տալ այս հարցին: Սակայն նկատենք, որ գերեզմանատան ներքեւի ծայրամասի մեր վերջին խաչքարն իր հրաշագործ իրագործումով յարում է վանքի պարսպապատի ներսում ընկած Սոսթենէս վարդապետի եղբօրորդի Ստեփաննոսի եւ Գրիգոր իշխանաց իշխանի կանգնեցրած նոյնատիպ գեղանախշ խաչքարերին (այդպիսի երրորդն էլ ընկած է գերեզմանատան կենտրոնական հատուածում՝ առանց ջարդուած վարդեակի կտորի), որոնց վրայ պահպանուել են 1068 եւ 1069 թուականների արձանագրութիւնները (Հայոց՝ ՇԺԷ եւ ՇԺԸ): Եւ, միեւնոյն ժամանակ, Սարգիս անունով անձնաւորութեան կողմից

«Սպատի եւ իր ծնողների յիշատակին» կանգնեցուած եւ 1075-ով թուագրուած (Հայոց՝ ՇԻԴ) սեղանաձեւ խաչքարն իր պարզաւոճ իրագործումով, կարծես թէ, խորհրդանշում է նախորդ ծաղկուն ժամանակահատուածին յաջորդած հէնց այն ողբերգական տարիները, երբ սելջուկներին ենթակայ Գանձակի Փադլունեան ամիրաների կամ գուցէ անգամ այդ քաղաքից նրանց հեռացնել ջանացող սելջուկեան սուլթանի ուղարկած ինչ-որ պաշտօնեաների ասպատակութիւնների հետեւանքով իր այս Մայրեաց ջուրք (=Մայրէջուր) կալուածքից ընտանիքով ստիպուած Կիլիկիա էր արտագաղթել Օշին իշխանը. յիշենք, որ ԺԲ դարի ժամանակագիր Սամուէլ Անեցու կամ նրա շարունակողի տուեալներով՝ դա տեղի էր ունեցել Հայոց ՇԻԲ, այսինքն՝ 1073 թուականին («Ի ՇԻԲ ամին [=1073 թ.] ի բռնութենէն Տաճկաց ել Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ, որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ, ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր՝ ազատագունդ իշխանօքն եւ ամենայն գահիւն՝ ունելով ընդ իւր եւ զմասն սուրբ առաքելոյն Պետրոսի: Եւ եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց եւ աջողմամբ Քրիստոսի եւ սուրբ մասին առաքելոյն՝ էառ ի Տաճկաց եւ զականաւոր բերդն Լամբրոն...»)[17]:

17 Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., էջ 117: Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ-Ս.Ղազար, 1885, էջ 46: Ա. Յակոբեան, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրե-

Ի դէպ, եթէ մեր մեկնաբանութիւնն ընդունելի է, ապա, անշուշտ, պէտք է նաեւ ենթադրենք, որ «Հանդէպ Գանձակայ» ասելով՝ ժամանակագիրը (կամ նրա աղբիւրը) նկատի է ունեցել ոչ թէ պարզապէս այդ քաղաքի մօտակայքը, այլ Առան *կամ նաեւ* Գանձակ *կոչուող երկրի շատ աւելի մեծ հատուած, իսկ գուցէ՝ ողջ Հայոց Արեւելից կողմերն ընդհանրապէս*[18]: *Աւելացնենք նաեւ, որ Վլ. Մինորսկու հրատարակած «Շիրուանի եւ Դերբենդի պատմութեան» Առանի Շադդադեաններին վերաբերող հատուածի մի տեղեկութեան եւ արաբական այլ*

ըը, էջ 301-303: Տե՛ս նաեւ վերեւում, ծնթ. 4: Ի դէպ, Արշակ Տէր-Միքելեանի հրատարակած բնագրում ՃԻԲ թուականի փոխարէն առկայ է ՃԶԲ, որը, սակայն, լոկ տպագրական վրիպակի հետեւանք է (չնկատուած եւ գրքի վերջում դրուած «Ուղղուելիք»-ում տեղ չգտած), քանի որ ՃԻԲ ընթերցումն ունենք ինչպէս Սամուէլ Անեցու երկի բոլոր գրչագրերում, այնպէս էլ նրանից քաղուած ուշ բնագրերում (տե՛ս, օր.՝ *Ժամանակագրութիւն (XI-XVIII դդ.)*, Տպագրութեան պատրաստեց **Ն. եպ. Պողարեան**, - «Բանբեր Մատենադարանի», 9, Եր., 1969, էջ 258. «ՌՀԵ=ՃԻԲ. - Օշին իշխանն այսմ ամի ի բռնութենէն Տաճկաց ել ի ժառանգութենէն իւրմէ, որ կոչի Մայրեաց Ջուրք, հանդէպ Գանձակայ, ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր եւ ազատագունդ իշխանօք եւ ամենայն կահիւքն...»): Ընդ որում նոյն վրիպումը սպրդել է Սամուէլ Անեցու հրատարակութեան 114-117 էջերի բոլոր 4 դէպքերում, երբ տպագրուած է «ՃԶ-»՝ փոխանակ «ՃԻ-» (խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Կարէն Մաթեւոսեանին):

18 Հմմտ. **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 312, ծնթ. 75 [այս ժողովածոյում էջ 69-70 – *հեղ., 2009*]:

աղբիւրների վկայութիւնների համաձայն՝ երկարատեւ պայքարից յետոյ սելջուկների սուլթան Ալփ Արսլանն ի վերջոյ կարողացել է դադարեցնել Փադլունեան ամիրաների տիրապետութիւնը Գանձակում, իսկ վերջին ամիրայ Փադլ Բ-ին հեռացնելով Առանից՝ պատուաւոր աքսորեալի վիճակում պահել են Թալիշի կողմերում. ընդ որում այդ տեղեկութիւնը թուագրւում է Հիջրայի 469, այսինքն՝ 1075 թուականով[19]: *Համադրելով այս դրուագը Սամուէլ Անեցու վկայութեան հետ՝ հնարաւոր է ենթադրել, թէ Օշին Մայրեջրեցու հեռանալը Գանձակի երկրից դէպի Լամբրոն կապուած է եղել նրա տիրոյթների դէմ ոչ թէ Փադլունեանների (ինչպէս ընդունուած էր հայագիտական գրականութեան մէջ*[20]*), այլ վերջիններիս եւս հալածող սելջուկեան նորանշանակ ամիրաների ասպա-*

19 Տե՛ս **V. Minorsky**, *Studies in Caucasian History*, London, 1953, էջ 24-25, 33, 67-68, 72-73; **Ա. Տէր Ղեւոնդեան**, *Մունեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբիւրը Դուինի եւ Գանձակի Շադդադեանների մասին*, - «Բանբեր Մատենադարանի», 6, Եր., 1975, էջ 485-486:

20 Տե՛ս, օր.՝ **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, Եր., 1975, էջ 111-112: Հեղինակը մատնանշում է Ստեփաննոս Օրբէլեանի մօտ պահպանուած որոշ վկայութիւններ Սիւնեաց իշխանների եւ Շադդադեանների հակամարտութեան եւ արիւնալի բախումների մասին (**Ստեփաննոս Օրբէլեան**, *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԾԹ, էջ 238-239), սակայն մենք կարող ենք ենթադրել, որ աղբիւրի հաղորդումների հիմքում ընկած են եղել իրականում մէկ-երկու տասնամեակով աւելի վաղ (նախորդ ամիրայ Փադլունի) ժամանակաշրջանի իրողութիւններ:

տակութիւնների հետ: Ըստ այսմ Փաղլ Բ-ի եւ, գուցէ, ինչ-որ իմաստով նրա ստորակայ Օշին իշխանի ընտանիքի գրեթէ համաժամանակեայ հեռացումն իրենց տիրոյթներից թոյլ է տալիս ենթադրել, որ նշուած հայ եւ պարսիկ (Շադդադեանները ծագումով քուրդ էին, սակայն ԺԱ դարում արդէն, անշուշտ, լիովին պարսկացած) ատաբեկների դէմ հալածանքները փոխկապակցուած են եղել: Եւ հաւանաբար, սելջուկեան ամիրաների զոհն են եղել նաեւ միւս հայ իշխանները[21]: Ինչ վերաբերում է հայ եւ արաբական աղբիւրների թուագրումների միջեւ 1-2 տարուայ շեղմանը, ապա դա կարող է բացատրուել հեղինակների որդեգրած ժամանակագրական համակարգերի իւրայատկութիւններով (հանրայայտ է, օրինակ, որ Սամուէլ Անեցու նշած փրկչական թուականները 2 տարուայ տարբերութիւն ունեն մեր իրական ժամանակագրութիւնից):

Վերջում նկատենք նաեւ, որ Մայրեջրի հանգստարանի սեղանաձեւ խաչքարը կանգնեցնող Սարգիսը չի նշում իր ազգակցական կապը «Սպատի եւ իր ծնողների» հետ, հետեւաբար նա Սպատի՝ առնուազն որդին չէր: Հաշուի առնելով բերուած դիտարկումները՝ որոշ հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ

21 Հմմտ. աղբյուրում. «Տեղավորվեցին թուրքերը Առանի երկրում, նրա դաշտերում ու սարերում և նրա բոլոր գավառներում ու բերդերում: Զնջվեց Շադդադյանների տունը...» (**Ա. Տէր Ղեւոնդեան**, *Մունեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը*, էջ 485):

վիմերում ներկայացուած երկու դամբանական յուշարձանները նոյնացուած են եղել միեւնոյն Սպատ-Սմբատ *անունով երկու տարբեր անձնաւորութիւնների: Բացառուած չէ, որ այդ իշխանները պապ եւ թոռ են եղել (ըստ Հր. Աճառեանի դիտարկման՝ «Հայոց մէջ համանուն որդի չի լինում»[22]) եւ նրանցից երկրորդը պատմական ողբերգական ժամանակների բերումով է վախճանուել առաջինից ընդամենը մի քանի տարի անց: Իբրեւ հարցադրում. հետագայում հարկ կը լինի ճշտել մինչեւ 1070-ական թթ. ապրած երկուական ներկայացուցիչներով մեզ յայտնի (*Վարդկոյ - Սոսթենէս, Սպատ/Սմբատ - Սարգիս՝ *որոշ վերապահումով,* Օշին - Հալկամ*) Մայրեջուրցի երեք ընտանիքների, ինչպէս նաեւ նոյն ժամանակահատուածում Սիւնիքում վախճանուած (1076 եւ 1084 թթ.) եւ նրա հոգեւոր կենտրոն Վահանավանքում թաղուած* Քուրդիկ *եւ* Սողոմոն Մարէջրեցի*-ների[23] միջեւ ազգակցական կապի հնարաւորութեան խնդի-*

22 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա, էջ 278:

23 Հմմտ. «Հ[ԱՅՈՑ] Թ[ՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ] ՇԻԵ */=1076 թ./*: // ՔՈՒՐԴԻԿ // ՄԱՐԷՋՐԵՑԻ // ՅԱՂԻԹՍ ՅԻ//ՇԵՑԷ՛Ք, ԱՂ//ԱՉԵՄՔ» (**Գ. Գրիգորյան**, *Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները /1966-1970 թթ./*, - «Լրաբեր հաս. գիտությունների, 1970, թիվ 10, էջ 89), եւ՝ «ՍՈՂՈՄՈՆ ՄԱՐ//Է-ՋՐԵՑԻ ՅԱՂԱԻԹ//Ս ՅԻՇԵՑԷ՛Ք: Թ[ՈՒԻՆ] ՇԼԳ */=1084 թ./*» (*Դիվան հայ վիմագրության*, պր. II, էջ 139): Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 302, ծնթ. 71-72 [այս ժողովածույում՝ էջ 67 – *հեղ., 2009*]:

րը: Իսկ առայժմ նկատենք միայն, որ Սմբատ անձնանունը բաւականին տարածուած է եղել Կիլիկիայում Հաստատուած Օշինի յետնորդների՝ Հեթումեանների ընտանիքներում. այդ անունն են կրել Հեթում Ա արքայի աւագ եղբայրը, իր աշխարհիկ կեանքում կաթողիկոս Ներսէս Լամբրոնացին եւ այլոք[24]:

2. ՁՈՐՄԱՆՔ

Շալուայի Վաղազնոյ *կամ* Մաղղանց *կոչուած վտակի (ԺԹ-ի դարերում յորջորջուած՝* Նաղդալիչայ *կամ* Պիչանիսչայ) *միջնահովտում*[25], *նրա ձախ (արեւելեան) ափին գտնուող այս գիւղի պատմական անուան մասին առայժմ, ըստ ամենայնի, վկայութիւն չունենք: ԺԹ-ի դարերում գիւղը կրել է* Զորման *կամ* Զուրման *անունը*[26], *որից Ղեւոնդ Ալիշանը Հա-*

24 Տե՛ս Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, էջ 538-558:

25 ԺԹ դարում ոչ թէ Շալուայի վերին հոսանքը, այլ այս վտակն էր համարւում Հակարի գետի ակունքը. տե՛ս, օր.՝ *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, Աշխատասիրութեամբ **Սարգիս վրդ. Ջալալեանց**, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 309, 351: **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, էջ 270: **Ե. Լալայեան**, *Զանգեզուր. Նիւթեր ազգագրութեան համար*, - «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, թիւ 2 (Երրորդ տարի, Դ գիրք), էջ 21: *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1910:

26 Գիւղանունը *Զուրման* ձեւով է արձանագրուած է նաեւ ԺԹ դարի հայերէն գրականութեան մէջ (տե՛ս, օր.՝ **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 403):

կուած էր վերականգնելու պատմական Կոմէն *տարբերակը*[27]:

Մաղղանց գետի ձախափնեայ ցածրադիր եւ ոչ մեծ սարավանդին, անտառի փեշին նշմարուող խոտածածկ ուղղանկիւն փոսորակը, ինչպէս ենթադրում են գիւղի վերաբնակիչները, առաջացել է աւերուած եկեղեցու պատերի եզրագծով: Դրա չուրջն ընկած են երեք գերեզմանաքարեր, որոնցից երկուսն՝ արձանագրուած: Աւելի զանգուածեղ եւ միայն աջ, արեւելեան կողով պահպանուած օրօրոցաձեւ տապանաքարի վրայ բուն արձանագրութիւնը եղել է ուռուցիկ վերնամասում եւ ամբողջովին հողմնահարուած է. վերնամասի հարաւային կողմի եզրագծի վերեւում նշմարւում են միայն մի քանի տառերի (ո՛չ իրար կողքի) աղօտ ուրուագծեր: Սակայն տապանաքարի հարաւային կողին պահպանուել են թուականի խոշոր տառերը՝ ՌԾԴ *(=1605 թ.):*

Միւս տապանաքարից եւս պահպանուել է միայն աջ, արեւելեան կողը, որի վրայ արձանագրութիւնը փորագրուած է հարաւային կողի վերին մասում (Նրանից ներքեւ մարդկային եւ խաչերի քանդակազարդեր են), մէկ տողով եւ

27 Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ-Ս.Ղազար, 1893 (ներդիր քարտէզ): *Կոմէն* անունով գիւղ եղել է *Քաշունիք* (աւելի վաղ շրջանում՝ *Բաղքի* կազմում) գաւառում (**Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 377): ԺԹ-ի դարերում *Զորման* անունով քրդաբնակ գիւղ կար նաեւ Տրտուի վերնահովտում:

չարունակւում է նոյն կողի աջակողմեան եզրագծին զուգահեռ, վերեւից ներքեւ (տե՛ս պատկեր 22):



Բնագրի վերծանութիւնը հետեւեալն է.

{...ԿԱՆԳՆ}ԵՑ Խ[Ա]ՉՍ ՀՈՐ ԻՄ՝ ԱՂԱՅԻՆ: ՏԻՐՈՍԻՆ ՅԻԾ‹ԵՑԷՔ›:

Վերջին ՅԻԾ բառահատուածից յետոյ նախադասութիւնը կիսատ է թողնուել՝ գրադաշտն աւարտուելու պատճառով, եւ անկասկած է, որ այդտեղ կարող էր լինել միայն «յիշ-եցէ՛ք» բառի աւարտը: Դրան նախորդող Տիրոս-ն, ամենայն հաւանականութեամբ, վիմագրի փորագրողն է, որը բարեխտաբար «յանգգնել է» յիշատակել իր անունը հիմնական բնագրից յետոյ յաւելած փոքրիկ նախադասութեամբ:

Բնագրի պահպանուած մասի առաջին բառի վերականգնումը վերջին երկու տառերի հիման վրայ վարկածային է (վերականգնուած բնագիրը նշել ենք անկիւնաւոր փակագծերի մէջ): Ենթադրելի է, որ տապանաքարի կոտրուած եւ կորսուած ձախ մասում այդ բառից առաջ պէտք է առաջին դէմքով յիշատակուած

լինէր կանգնեցնողի՝ հանգուցեալ Աղայի որդու անունը («Ես՝ {...}ս» կարծրատիպով): Բայց այդ դէպքում երրորդ դէմքով {ԿԱՆԳՆ}ԵՑ-ի փոխարէն աւելի սպասելի էր առաջին դէմքով {ԿԱՆԳՆ}ԵՑԻ բառը: Թէպէտ, հնարաւոր է, որ ըստ փորագրողի մտայղացման (իրապէս՝ չփոթեցնող)՝ ընթերցողի կողմից Ի տառը պէտք է ընկալուէր որպէս յաջորդող Խ-ին կցագրուած:

Այլ վիմագրերում քիչ հանդիպող վրիպում է ՀՈՐ բառաձեւը, փոխանակ ՀԱԻՐ (կամ ՀՕՐ) տարբերակի: Թերեւս տարօրինակ է (յամենայն դէպս՝ իւրօրինակ) երկիցս օգտագործուած Յ տառի գրելաձեւը՝ որոշ չափով նման երկաթագիր Ծ-ի մի տեսակի, սակայն դա վերծանութեան կասկած չի առաջացնում, քանի որ վերջին բառում առկայ Ծ-ն բոլորագրի տարբերակով է:

Բնագրում արձանագրուած երկու արական անձնանուններն էլ առկայ են Հր. Աճառեանի բառարանում՝ Աղայ անունը յիշատակութեան 4 դէպքով (բոլորը՝ ԺԵ-ԺԷ դդ.)[28], իսկ Տիրոս անունը՝ 2 դէպքով (ԺԳ եւ ԺԶ դարերի)[29]: Հաշուի առնելով նաեւ հարեւան դամբանական յուշարձանի վրայ փորագրուած 1605 թուականը (Հայոց՝ ՌԾԴ)՝ կարելի է ենթադրել, որ Աղայ Զորմանցու տապանաքարը եւս անհրա-

28 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա., էջ 93-94: Հմմտ. նաեւ *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V. *Արցախ*, էջ 163, N 564, էջ 164, N 570, էջ 248, N 902 (նաեւ՝ *Աղէ* տարբերակով):

29 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ե, Եր., 1962, էջ 168:

ժեշտ է վերագրել ԺԶ դարի վերջին կամ ԺԷ դարի սկզբին:

3. ԱՂՈՒԷՍԱՀԱՔԻ

Աղաւնոյի վերին աջ վտակներից մէկի, պայմանականօրէն Աղբաթխէրտ անուանուած (յայտնի գիւղատեղիի անունից) վտակի գետաբերանից 0,5 կմ վեր, նրա ձախ ափին, ծովի մակերեւոյթից մօտ 1550 մ բարձրութեան վրայ, զարգացած միջնադարում կառուցուածի տպաւորութիւն թողնող միաթռիչք կամրջի անմիջապէս վերեւում գտնւում է դէպի գետակը հայող պարիսպներով ամրացուած մի կառոյց, որը բաղկացած է սովորականից հաստ պատերով ու հարաւահայեաց առանձին դռների բացուածքներով երկու սենեակներից: Հեռուից դիտելով կամ նկարագրութիւններին հետեւելով՝ Սամուէլ Կարապետեանն իր մենագրութեան մէջ կարծիք է յայտնում, որ այդ տեղը համապատասխանում է Տաթեւի 1730 թ. պտղացուցակում յիշուած Աղուէսահաքի գիւղին. «Հակից 3 կմ հարաւ, ձորալանջին պահպանւում են միջնադարեան գիւղի եկեղեցու եւ գերեզմանոցի աւերակներ: Ըստ տեղադրութեան (Հէրիկ եւ Հակ գիւղերի միջեւ)՝ համապատասխանում է «Ժամանակագրութեան» մէջ յիշուած Աղուէսահաք գիւղին»[30]: Մօտիկից դիտարկումը եւ

30 Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 132: Հմմտ. *Ժամանակագրութիւն* Ստեփաննոսի Օրբէլեանի, Հրատ. պատրաստեց... Աշ. Աբրահամեան, Եր., 1942 /Յաւելուած/, էջ 42:

յատկապէս՝ շինութեան արեւելեան սենեակի դրան պատերի առջեւ թափուած քարերի մաքրումը թոյլ տուեց Յակոբ Սիմոնեանի գլխաւորած հնագիտական արշաւախմբին՝ գտնելու դրան ձախ կողքի հսկայական քարի վրայի վիմագիրը եւ համոզուելու, որ շինութիւնն իրօք եկեղեցի է եղել (կամ առնուազն դարձուել այդպիսին ԺԵ դ. սկզբում):

Արձանագրութիւնը փորագրուած է աւելի շատ բերդապարիսպ կամ ամրոցի աշտարակ յիշեցնող, 1,5 մետր հաստութիւն ունեցող պատի մէջ դրսի կողմից դրուած մի հսկայական քարի բնականից հարթ ճակատին, որի չափերն են՝ 110x170 սմ (քարի հաստութիւնը 0,5 մ է)[31]: Վիմագրի ինը տողերը մեծ մասամբ անվնաս են պահպանուել եւ ունեն հետեւեալ տեսքը (տե՛ս պատկեր 25).



Թէպէտ արձանագրութեան կենտրոնական մասում ոչ մեծ ջարդուածք կայ եւ 3-րդ ու 4-

31 Ջորալանջերից գլորուած նոյնպիսի մեծ ժայռաբեկորներ ընկած կան գետակի զոյգ ափերին:

րդ տողերի միջին մասերի 6-7 տառեր կորսուած են, սակայն դրանք բաւականին հեշտ են վերականգնւում՝ շնորհիւ ենթատեքստի եւ պահպանուած շարունակութիւնների (ջարդուածքի վերականգնուած բնագիրը ստորեւ նշում ենք շեղատառ եւ անկիւնաւոր փակագծերով): Փորագրողը յապաւումները կատարել է խնամքով գրուած պատուոյ նշանների տակ (այդ յապաւումները բացում ենք քառակուսի փակագծերի մէջ):

Առաւել ուշադիր վերծանութիւն է պահանջում 8-րդ տողը: Նրա վերջին՝ երրորդ կտորում է յայտնուել նախորդ տողի նախադասութեան աւարտը (այսպիսով՝ 7→8գ*): Պատճառը հաւանաբար եղել է այն, որ տողի միջնամասում (նշանակել ենք՝* 8բ*) քարգործ վարպետն աւելի մեծ ու գեղեցիկ տառերով եւ, ամենայն հաւանականութեամբ, իբրեւ վիմագրի աւարտ սկսել է փորագրել գրութեան թուականը (*ԹՎ[ԻՆ] ՊԿԸ*)՝ ընդ որում, ինչպէս երեւում է՝ 7-րդ տողի գրելը դեռեւս չաւարտած: Դրանից յետոյ նա ոչ միայն յարմար է գտել՝* Վարդան սպասաւոր քահանայ*-ին վերաբերող 7-րդ տողի յիշատակութիւնն աւարտելու 8-րդ տողի վերջին կտորում (*8գ*), այլեւ 8-րդ տողասկզբի ազատ մնացած կտորում, թուականից առաջ (*8ա*) «յանդգնել է» սկսել ու դրա ներքեւում աւարտել բնագրի՝ իրականում վերջին նախադասութիւնը (այսպիսով՝* 8ա→9*)՝ յիշատակելով, անկասկած, հէնց սեփական անունը՝ «Թաթոս»:*

Ըստ այդմ արձանագրութիւնն ընթերցւում է հետեւեալ ձեւով.

1 ԿԱՄԱՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ԵՍ՝ ՄԱՆՎԷԼ

2 Ք[Ա]Հ[ԱՆԱՅ], ‹Յ›ԵՏՈՅ ՆՈՐՈԳԵՑԻ ԶՏԻՐ

3 -ԱՅՄԱՅՐ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆ*‹Ս ԵՒ ԶՍ[ՈՒՐ]Բ ԳՐ›*ԻԳՈՐՍ, ՅԻՇ

4 -ԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ, Հ*‹ԱՒՐ ԻՄՈ›*Յ՝ ԿԻ-ՐԱԿՈՍ Ք[Ա]Հ[ԱՆԱՅԻՆ],

5 ՄԱՅՐ Ի‹Մ› ՄԻՆԱՅԻՆ, ԵՂԲԱՐՑ ԻՄՈՑ՝ Տ[Է]Ր Տ[Է]Ր ՏԻՐԱՑ

6 -ՈՒԻ, ԹԱԹԷՈՍԻ. ՅԻՇԵՑԷ՛Ք Ի Ք[ՐԻՍ-ՏՈ]Ս, ԵՒ ԶՁԵԶ ‹Յ›ԻՇԷ Ա[ՍՏՈՒԱ]Ծ:

7 ՎԱՐԴԱՆ ՍՊԱՍԱՒՈՐ՝ ԵԿԵՂԵՑՈՅՍ Ք[Ա]Հ[ԱՆԱՅ], ‹Յ›ԱՂԱՒԹ

7→	8գ	-Ս ՅԻՇԵՑԷ՛Ք:
	8բ	ԹՎ[ԻՆ] ՊԿԸ (=1419 թ.):
	8ա	ԹԱԹՈՍՍ ‹Յ›ԱՂԱ‹Ւ›
8ա→9		-ԹՍ ՅԻՇԵՑԷ՛Ք:

Բնագրում մէկ ակնյայտ վրիպակ կայ 5-րդ տողում, որտեղ անփութութեան կամ անյաջող սղման հետեւանքով բացակայում է իրար կողքի կրկնուող Մ տառերից մէկը՝ «ի‹մ› Մինային»: Այնքան էլ սովորական չէ նաեւ մայր իմ *ձեւի առկայութիւնը՝ փոխանակ* մաւր իմ*-ի: Բնագրում տարբեր տեսքի տառեր կան Շ-ի դէպքում (Շ եւ շ):*

7-րդ տողում եւ 8ա-ում կրկնուած «աղաւթս» բառի սկզբում բացակայում է քերա-

կանօրէն անհրաժեշտ Ց նախդիրը («Ց›աղաւթս»): Նոյն կերպ Ց-ն չկայ 5-րդ տողի «Ց›իշէ» բառի մէջ, այն դէպքում, երբ միւս երեք «յիշեցէ՛ք»-ներում այն առկայ է: Նմանատիպ պատճառով 2-րդ տողում այնքան էլ սովորական չէ «եառոյ նորոգեցի» արտայայտութիւնը, որը, սակայն, պէտք է հասկանալ որպէս «վերականգնեցի», «գործածութիւնից դուրս գալուց յետոյ շատ ժամանակ անց վերանորոգեցի» իմաստով՝ այսպիսով գերադասելով սկզբնատառ Ց-ի վերականգնման ճանապարհը («Ց›եառոյ») եւ մերժելով առաջին հայեացքից, գուցէ, հրապուրիչ թուացող «եառու նորոգել» տարբերակով իմաստաւորելու գայթակղութիւնը: Տեղին նշենք, որ այս «‹յ›եառոյ նորոգեցի» խօսքին նման է Լոռաձորում «Լորիկի խաչ» կոթող-խաչքարի պատուանդանին գրուած հինգ տողանոց արձանագրութեան մէջ օգտագործուած արտայայտութիւնը. «...ե‹ս›՝ Վարդ ք[ա]հ[անայ] յետոյ նկար//եցի գնչանս ի բարեխաւսութի[ւն] ծն//ողաց իմ... // Ի թվ[ին] ՊԼԶ [=1387 թ.]»[32]:

Արձանագրութեան մէջ թուարկուած անձանց մասին Հր. Աճառեանի «Հայոց անձնանունների բառարան»-ում եւ մեր ձեռքի տակ եղած այլ աղբիւրներում տեղեկութիւններ չենք գտնում (բայց բուն անունները շատ տարածուած են եւ ունեն տասնեակ ու աւելի յիշատակութիւններ): Այդ անձինք են.

32 Դիւան հայ վիմագրութեան, պր. II. Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Եր., 1960, էջ 108, N 316:

1. Մանվէլ քահանան, որը, հաւանաբար, ոչ միայն եկեղեցու «նորոգողն» է, այլեւ «Տիրամայր-Աստուածածնի» վանահայրը:

2. Կիրակոս քահանան, որը նրա հայրն է:

3. Մինան, որը նրա մայրն է:

4-5. Տէր Թադէոսը (Թաթէոս) եւ տէր Տիրացուն, որոնք վանահօր եղբայրներն են:

6. Վարդան սպասաւոր քահանան, որը, հաւանաբար, եկեղեցու երկրորդ քահանան է կամ մեր վանական համալիրի երկրորդ՝ «Սուրբ Գրիգոր» եկեղեցու քահանան:

7. Թաթոսը, որն, անշուշտ, հէնց փորագրողն է: Գուցէ, հնարաւոր չէ բացառել այն տարբերակը, որ «փորագրող» Թաթոս-ը կարող է նոյնանալ Մանուէլ վանահօր եղբայր տէր Թաթէոս-ի հետ (թէպէտ՝ անպայման չէ):

Մեր փորագրողը «յանդգնել է» առանձին յիշատակել իր անունը միայն բնագրի վերջում (թուականը նշելուց յետոյ աւելացուած փոքրիկ նախադասութեամբ), ինչպէս երբեմն անում էին միջնադարեան քարգործ վարպետները (աւելի յաճախ՝ ձեռագիր մատեանների գրիչները): Այդպէս էր վարուել նաեւ Գինոս անունով քարգործը Աղբաթխէրտի խաչքարի վրայ (այդ գիւղատեղին գտնւում է Աղուէսահաքիից 3 կմ հարաւ, Իշխանասարի աղբիւրներից սկսւող եւ զուգահեռ դէպի հիւսիս հոսող երկու վտակների միջեւ ձգուող սարահարթի միջին մասում): Սակայն Գինոսը քիւտակի գրադաշտն աւարտելու պատճառով իր վերջին տողը գրել էր քիւի վրայ,

եւ նրա անունն առաջին հայեացքից յայտնուել է արձանագրութեան սկզբում[33]:

Կարելի է ուշադրութիւն դարձնել այն իրողութեան վրայ, որ ԺԵ դ. սկզբներին գրուած մեր վիմագրում յիշատակուած բոլոր 7 անուններն էլ հայկական քրիստոնեական են, ուստի, գուցէ, հնարաւոր է մտածել, որ այս տարածքում մահմեդական անունների մեծածաւալ թափանցումն սկսւում է աւելի ուշ ժամանակներում: Փոքր պատմական անդրադարձով նշենք, որ Մանվէլ քահանայի (Թաթոս քարգործ վարպետի) արձանագրութիւնը գրւում էր 1419 թ., այսինքն՝ Կարա-Եուսուֆ Կարա-կոյունլուի իշխանութեան շնորհիւ հայ ժողովրդի համար չափազանց ծանր դարերում մի փոքրիկ, շուրջ 10-ամեայ խաղաղութեան տարիներին (1410-1420 թթ.)[34]: Նոյնը վերաբերում է Աղբաթխէրտի խաչքարի վիմագրին, որը թուագրուած է 1413 թ.:

Ուշագրաւ է, որ Մանուէլ քահանան իր «եւտոյ նորոգած» շինութիւնը երկու անունով է կոչում՝ «Տիրամայր Աստուածածին» եւ «Սուրբ Գրիգոր»: Ճիշտ է, երկրորդ անուան սկիզբը մեր կողմից ենթադրաբար է վերականգնուած մօտ 7 տառերի չափով ջարդուածքի վերջում, սակայն դժուար է ասել, թէ ուրիշ ինչ կարող

33 **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնաՃովտի նորայայտ վիմագրերը*, էջ 274-275 [այս ժողովածոյում՝ էջ 17-19]:

34 Տե՛ս **Յ. Մանանդեան**, *Երկեր*, հտ. Գ, Եր., 1977, էջ 381-382: *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. IV, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 33-34:

էր գրուել «[...]ԻԳՈՐՍ» բառակէսից առաջ տուեալ ենթատեքստում: Մեզ ամենից աւելի հաւանական է թւում այն ենթադրութիւնը, որ յուշարձանի իւրաքանչիւր սենեակը (իր առանձին հարաւահայեաց դռնով) կարող էր մի առանձին սրբատեղի լինել. մէկը՝ «Տիրամայր Աստուածածին», միւսը՝ «Սուրբ Գրիգոր»: Այդպէս, զոյգ կից եկեղեցիներ յիշելու օրինակ ունենք, կարծես թէ, Վայոց ձորի Սպիտակաւոր վանքի Ս. Աստուածածին եկեղեցու 1322 թ. մի արձանագրութեան մէջ. «...ես՝ Էաչի, որդի պ[ա]ր[ոն] Ամիր Հասանա‹յ›, տվի նորակնունք Ս[ուր]բ Ա[ստուա]ծածին‹ս› եւ Ս[ուր]բ Կարապետ‹ս›՝ ի հա‹յ›րութե[ան] Գրիգ[ո]ր եգ[նաւո]րի՝ զՏանծի հող... Թվ‹ին› :Չ:Հ:Ա: [=1322 թ.]»[35]: Նոյն տեղում ունենք նաեւ. «ես՝ Ս‹մ›բատ, որդի Լիպարտի, միաբանեցա‹յ› ասող անապատիս Ս[ուր]բ Կարապետիս եւ Սպիտակաւոր Ա[ստուա]ծածնիս եւ տվի զՎախթանկենց այգին... Թվ‹ին› ՉՁԸ [=1339 թ.]»[36]: Իհարկէ, բոլոր բերուած դէպքերում անուններից մէկը կարող էր վերաբերուել պարզապէս վանական համալիրին, սակայն դրանում համոզուած լինելու համար լրացուցիչ փաստարկման կարիք է զգացւում: Թերեւս, համակարգուած պեղումներից եւ խորանների յատակները քար-

35 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. III. *Վայոց Ձոր*, կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1967, էջ 96, N 270 (ուղղել ենք կցագիր տառերի ընթերցման որոշ սխալներ ըստ գրչանկարի):

36 Նոյն տեղում, էջ 98, N 274:

կոյտերից լրիւ մաքրելուց յետոյ կարելի է, ըստ ամենայնի, աւելի յստակ պատասխան սպասել այս հարցին:

Մեր քննած ընդարձակ արձանագրութիւնից երեք քար վերեւ, դրան ձախ կողքի շատ աւելի փոքր չափսերով անկիւնաքարի ճակատին պահպանուել է մէկ այլ, երկտողանոց արձանագրութիւն, որն ընդամենը մի քանի բառ է պարունակում (պատկեր 21).



Այն թոյլ, գրեթէ քերծուածքային եւ որոշակիօրէն անկանոն փորագրութիւն ունի, սակայն անսխալ է վերարտագրում բոլոր տառերը եւ կարող է ընթերցուել իբրեւ՝

Պ[Ա]Ր[ՈՆ] ՂԱՒՋ՝ Թ

-ՈՌՆ Պ[Ա]Ր[ՈՆ] ՀԱՍԱՆ‹ԱՅ›:

Դժուար է միայն ասել, թէ ինչու է փորագրողը խուսափել վերջին անձնանուան՝ անգամ սեռական յոլովի վերջաւորութիւնը գրել քարի ներքեւի, դատարկ մնացած մասում (երկու տողերն էլ աւարտւում են քարի աջ եզրին), ասենք՝ երրորդ տողով:

Բնագրի առաջին անձնանունը՝ Ղաւջ, ամենայն հաւանականութեամբ, Ղոչ արական անունն է, որն ըստ Հր. Աճառեանի՝ ծագում է թիւրքերէն «խոյ» նշանակող նոյնահունչ բառից եւ «յիշուած է ԺԵ-ԺԶ դարերում», ընդ որում՝ նաեւ Ղաւչ, Ղոջ, Ղօչ գրութեամբ տարբերակներով (բառարանում՝ ընդամենը 5 դէպք)[37], *իսկ* պարոն Ղօջ-*ի պապի* Հասան *անունը (որի ծագումն արաբերէն «գեղեցիկ» բառից է) շատ աւելի է տարածուած եղել հայերի մէջ զարգացած եւ ուշ միջնադարի ժամանակահատուածում (71 դէպք)*[38]*:*

Թւում է, թէ չունենալով թուականի եւ տեղի յիշատակութիւն, այնուամենայնիւ, կարող ենք պատուաւոր «պարոն» տիտղոսը կրած այս իշխաններին որոշ մօտաւորութեամբ կապել կոնկրետ դարաշրջանի եւ կոնկրետ տարածքի հետ: Նախ, ելնելով վիմագրի յուշագրային բնոյթից՝ կարելի է ենթադրել, որ նրանց յիշատակման ժամանակն, ամենայն հաւանականութեամբ, յաջորդել է «յետոյ նորոգուած» Սուրբ Աստուածածնի արձանագրութեան թուականին՝ 1413-ին: Ի յաւելումն՝ Հասան *անունն, ըստ Հր. Աճառեանի՝ «Գործածուել է մեր մէջ սկսած Թ դարից եւ տեւել է* մինչեւ ԺԵ դարը: *Այժմ ի սպառ խափանուած է»*[39]*: Ընդգծուած ժամանակային վերջին սահմանի մասին ուսումնասիրողի դիտարկմանը հակասող փաստեր մեզ եւս չեն հանդիպել, ուստի կարելի է այն համարել ամբողջապէս հիմնաւոր եւ կասկածի ո՛չ ենթակայ՝ առնուազն «պարոնութիւն» ունեցած որեւէ «Հասանի» վրիպած չլինելու իմաստով: Իսկ դա թոյլ է տալիս մտածել, որ մեր պարոն Հա-*

37 Տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, Եր., 1946, էջ 145-146:

38 Նոյն տեղում, էջ 51-60:

39 Նոյն տեղում, էջ 51:

սանի թոռան՝ պարոն Ղօջի այցելութիւնը «Աղուէսահաքի» Սուրբ Աստուածածին եւ նրա պատին այդ մասին յիշատակում թողնելը կարող է վերագրուել 1413 թուականից մինչեւ ամենաուշը՝ նոյն ԺԵ դ. վերջին ընկած ժամանակամիջոցին: Միաժամանակ, չափազանց մեծ է հաւանականութիւնը, որ այդ սրբատեղիի մուտքի ճակատին իր անունը կարող էր որոշակի անկանոնութեամբ արձանագրել տալ (այսպէս ասած՝ «տնավարի» ձեւով) հէնց տեղի կամ շրջակայ գաւառի «պարոնը»: Եւ այդպիսով՝ Աղուէսահաքի երկրորդ վիմագրի շնորհիւ մեզ յայտնի դարձող պապ եւ թոռ Հասան եւ Ղօջ «պարոնները», ամենայն հաւանականութեամբ, կարող են համարուել Աղաւնոյի վերնահովտի, այսինքն Քաշաթաղ գաւառի հայ ազնուականական դասի ԺԵ դարի ներկայացուցիչներ:

Յաւարտս պէտք է յիշել, որ Սամուէլ Կարապետեանը Աղուէսահաքի-ն *նոյնացնում էր ԺԹ դարի գրականութեան մէջ եւ քարտէզներում արձանագրուած* Աղվատխէր-*ի հետ (որն* Աղբաթխէրտն *է)*[40]*, իսկ մենք վերապահում*

40 **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 132: Հմմտ. **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ-Ս.Ղազար, 1893, էջ 267 (նաեւ՝ ներդիր քարտէզում): Տե՛ս նաեւ **Е. Кондратенко**, *Карта Елисаветпольской губернии с показаниемъ сельскихъ обществъ и распределения населения по вероисповеданию*, Тифлисъ, 1888; *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1910; *Специальная карта Евразийской России*. Масштабъ 1:420000, Тифлисъ, 1911 (երեքում էլ՝ Адбадхиръ): «Տաթեւու թեմի...

չենք անում, թէ դա «դժուար է ճշգրտել կամ մերժել»[41]*: Սակայն մի քանի տարի առաջ Շախէր Աղբաթխէրտցու (Գինոս փորագրիչի)*[42] *եւ այժմ Սուրբ Աստուածածին եկեղեցու Մանվէլ քահանայի (Թաթոս փորագրիչի) վիմագրերի յայտնաբերումը թոյլ է տալիս իրարից հաստատապէս առանձնացնել երկու բնակավայրերը. Աղբաթխէրտը՝ աջափնեայ սարահարթի վրայ, իսկ Աղուէսահաքին՝ 3 կմ հիւսիս, նոյն վտակի ձախ ափին:*

Ճիշտ է, դեռեւս մնում է այն վերապահումը, թէ, այնուամենայնիւ, Աղուէսահաքի *անունը Տաթեւի 1730 թ. պտղացուցակի՝ մեզ հասած բնագրում կարող էր առաջանալ գրական հողի վրայ, ինչ-որ պատճառով պատմական* Աղբաթխէրտ *գիւղանուան վերաիմաստաւորման փորձի արդիւնքում*[43]*: Քրիստինէ Կոստիկեանի կողմից վերջերս յայտնաբերուած 1691/92 թ. պարսկերէն փաստաթղթում*[44] *ունենք Քաշա-*

ԺԴ գաւառացն» պտղացուցակի համապատասխան հատուածն է. «...Միրիկն..., Հէրի..., *Աղուէսահաքի*.... Հակ...» (*Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42):

41 **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 304, ծնթ. 2 [այս ժողովածուում՝ էջ 12]:

42 Նոյն տեղում, էջ 272-280:

43 *Աղուէսագին* մի հացազգի բոյսի հայերէն անուանում է (տե՛ս **Ռ. Ս. Ղազարեան**, *Բուսանունների հայերէն-լատիներէն-ռուսերէն-անգլերէն-ֆրանսերէն-գերմաներէն բառարան*, Եր., 1981, էջ 7), թէպէտ հնարաւոր է, որ հէնց այդ բուսանունը նորօրեայ գիտական հողի վրայ է ստեղծուած (թարգմանուած):

44 ՀԴԿՊԱ, ֆ. 59, ցուց. 1, գործ 1, էջ 4:

թաղ գաւառի (Սեֆեան Իրանի վարչական անուանակարգում՝ Քուշթասիֆ *կամ* Գուշթասիֆ) *ուշ միջնադարի 13 գիւղերի յիշատակում*[45], *որը մեծապէս համահունչ է մօտաւորապէս նոյն ժամանակներում՝ ԺԷ դ. վերջին - ԺԸ դ. սկզբներին արձանագրուած՝ Տաթեւի վանքապատկան տիրոյթների 1730 թ. ցանկի «Քաշթաղուց գաւառի» գիւղանունների հետ (այս պտղացուցակի ստեղծման ու գրառման ժամանակի մասին ուղիղ յայտնում է բնագրի հետեւեալ տեղին. «Զայս Յոհաննէս վարդապետի դաւթարից առեալ աստ գրեցաք թուին ՌՃՀԹ* [=1730 թ.], *որ Երեմիայ վարդապետին գրելն թուին ՌՃԽԱ* [=1692 թ.], *Մայիսի Ժ էր: Տաթեւու վանքին բահրէքն, որ է մուլքն, ես՝ տէր Աղէքսանդրս գրեցի յայն սխահիցն»)*[46]*: Ուսումնասիրողը վերծանել է հետեւեալ անունները.* Հալաք, Բայանդուր *(=*Պայինտուր*)*, Վաղազաղուն *(=*Վարազգոմ*)*, Սուարան *(<*Սթունի°ս*)*, Ղուշչի, Մերիկ *(=*Միրիկ*)*, Հարար *(<*Հէրի°կ*)*, Աֆաթխար *(=*Աղբաթխէրտ*)*, Մինքենդ *(=*Հակ*)*, Փուլ, Հոչաս *(=*Հոչանց*)*, Յալղուզղամ *(=*Եալղուզտամ*)*, Արախս *(<*Արահո°ւծ*)*[47]*: Փաստաթղթում* Աֆաթխար *վեր-*

45 **Ք. Կոստիկեան**, *Քաշաթաղի 17-րդ դարի պատմութեանը վերաբերող մի փաստաթուղթ*. - ՄՄԱԵԺ, հտ. XX, Եր., 2001, էջ 168-175:

46 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 44: «Քաշթաղուց» գաւառի գիւղացանկը՝ էջ 42:

47 **Ք. Կոստիկեան**, *Քաշաթաղի 17-րդ դարի պատմութեանը վերաբերող մի փաստաթուղթ*, էջ 169-170 (փակագծերում տրուած են մեր դիտարկումները՝ հիմնականում ըստ Տաթեւի պտղացուցակի տուեալների): Ի դէպ, ուսումնասիրողին յաջողուել է ընթերցել նաեւ 1959 թ. Յակոբ Փափազեանի կողմից հրատարակուած մի պարսկերէն հրովարտակում թուարկուած Քաշաթաղի չորս գիւղերից երեքի՝ ժամանակին չվերծանուած անունները (*Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, I. Հրովարտակներ*, պր. II, Կազմեց **Յ. Դ. Փափազեան**, Եր., 1959, էջ 124, 193, բնագիրը եւ լուսանկարը՝ էջ 531-532): Մէլիքանիստ *Խան/ա/ծախ* գիւղից յետոյ, ըստ Ք. Կոստիկեանի վերծանութեան՝ փաստաթղթում յիշատակուած են *Վ/ա/ղ/ա/զաղուն, Բայ/ա/նդ/ու/ր* եւ *Հ/է/րիկ* գիւղերը (երախտագիտութիւնս եմ յայտնում հեղինակին՝ այազայ մասնագիտական հրապարակումից առաջ այս տուեալները սիրալիրաբար տրամադրելով շրջանառութեան մէջ մտցնելու համար):

ծանուող անունը (արաբատառ՝ Āftxr*) կարող է հաստատապէս համապատասխան համարուել հայերէն* Աղբաթխէր *անուանաձեւին, այլ ոչ թէ* Աղուէսահաքի-*ին: Բայց սա՝ լոկ վերապահման կարգով, քանի որ բացառուած չէ, որ առաջին աղբիւրն խմանար միայն մի բնակավայրի մասին, իսկ երկրորդը՝ միւսի:*

4. ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ

Աղաւնոյի եւ Հոչանցի վերնահովիտների միջեւ ընկած ընդարձակ սարահարթի հիւսիսային փէշերից դէպի Հոչանցի բարձրադիր ձորալանջը ձգուող գողտրիկ հովտում գտնուող այս գիւղը Ստեփաննոս Օրբէլեանի մօտ պահպանուած Աղահեջք գաւառի գիւղացանկում, ամենայն հաւանականութեամբ, հանդէս է գալիս Ականք *անունով («...Հակ 12, Արտադետ 12, Մեղի*

12, Ականք 8, Արուական 6...»)[48]: Այն յիշատակուած է յայտնի Հակ-Մինքենից յետոյ երկու գիւղի միջակայքում[49], իսկ նրան յաջորդող Արուական գիւղը Հոչանցի միջնահովտի հարաւային բարձրադիր ձորալանջին մինչեւ խորհրդային տարիներին Ալխասլուի վերածուելը (200 տուն) գրեթէ անփոփոխ է պահպանել իր անունը: ԺԷ-ԺԸ դարերի պատկերն արտացոլող Տաթեւի թեմի պտղացուցակի համապատասխան

48 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861, գլ. ՀԳ, էջ 374-375; *Պատմութիւն նահանգին Սիսական*, Արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց**, Թիֆլիս, 1910, էջ 516; Ձեռ. ՄՄ 6271 (ընդօրինակուած 1513 թ.), թ. 333ա:

49 *Հակի* համապատասխանութիւնը *Մինքենը* գիւղին կասկած չի յարուցում, քանի որ այդ հայկական անունն արձանագրուած է գիւղի 1675 թ. կառուցուած եւ այսօր էլ կանգուն Ս. Մինաս եռանաւ բազիլիկ եկեղեցու մուտքի բարաւորի եռատող վիմագրում (ՇԻՆԵՑԱՒ Ս[ՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱԿ/ՆՈՒՆՔ ՀԱԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ: // ԹՎ[ԻՆ] ՌՃԻԴ): Տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 131; **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 282, 307, ծնթ. 34 [այս ժողովածոյում՝ էջ 34]: Նախկինում *Մինքենը* անունը սխալմամբ համադրում էր Ստեփաննոս Օրբէլեանի՝ Աղահեջք գաւառի գիւղացանկի *Մննի* գիւղանուան հետ (**Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, էջ 267; **Մ. Հասրաթեան**, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, Եր., 1985, էջ 155; **А. Карагезян**, *К локализации гавара Кашатаг*, - «Լրաբեր հաս. գիտութիւնների», 1987, թիւ 1, էջ 43): Սակայն *Մննի*-ն իրականում տեղորոշւում է շատ աւելի արեւելք՝ *Սոնասար* եւ *Հոչանց* յայտնի գիւղերի մօտերքում («...Զի[ն]ասար 6, Մատրակերտ 6, *Մննի* 6, Հունչաւք 12...»):

հատուածում («...Հակ..., Փուլն..., Եղնադոմեր..., Սպիտակաջուրն..., Քարագլուխն..., Արուական...») ունենք նոյն գիւղի ուշմիջնադարեան (նաեւ՝ վերագտած) անունը[50]: Գիւղամիջի իր յորդառատ աղբիւրով եւ վերջին տներից քիչ ներքեւ Հոչանցի հսկայ ձորը գահավիժող 40 մ-անոց ջրվէժով յայտնի Սպիտակաջուրը ԺԹ-Ի դդ. յորջորջուել է Աղբուլաղ (Սպիտակ աղբիւր)[51]:

Սպիտակաջուրի հիմնայատակ աւերուած եկեղեցու, հաւանաբար, հէնց հիմքերի վրայ քր-

50 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42: Տեղին նշենք, որ պտղացուցակում *Սպիտակաջուր*-ից յետոյ եւ *Արուական*-ից առաջ նշուած *Քարագլուխն* գիւղը հնարաւոր է համադրել ցարական շրջանի քարտէզներում եւ գրականութեան մէջ յիշուած *Շարքար* բնակավայրի հետ (*Шаръ карь*, *зимовникъ Шаръ карь*, Ղ. Ալիշանի քարտէզում՝ *Շարքար*): Վերջինս գտնւում էր Արուականից դէպի Եզնագոմերի սարահարթ եւ Սպիտակաջուր գնացող սայլուղիով 3 կմ արեւմուտք եւ Ի դ. վերածուել է անասնաֆերմայի: Հաշուի առնելով հայերէն «գլուխ» - իրանական «սար» համապատասխանութիւնը եւ ողջ մերձակայ «սար» համապատասխանութիւնը եւ ողջ մերձաւորարեւելեան տարածաշրջանում *Ս-Շ* հնչիւնափոխութեան հնարաւորութիւնը՝ կարելի է ենթադրել, որ հայերէն «քար-այ գլուխ» բառակապակցութիւնը իրանական լեզուի՝ ինչ-որ պատճառով մասնակի ընկալմամբ կարող էր ստանալ «սար-ե քար» իզաֆետային կառուցուածքը, որից էլ կ՚ունենայինք «Շարը-քար» յորջորջումը (խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Գառնիկ Ասատրեանին):

51 1970-ական թթ. գիւղն ունէր 60 տուն թիւրքացող քուրդ բնակչութիւն: Այստեղ եւ ստորեւ բնակավայրերի ծխաքանակի մասին տուեալները տալիս ենք ըստ խորհրդային զինուորական քարտէզի (*Карта генерального штаба*, *Минкенд*, Москва, 1975, масштаб 1:100000):

դարնակների կառուցած գոմի փլուած պատերից ներկայումս բազմաթիւ խաչքարերի ու տապանաքարերի կտորներ են հաւաքուած գիւղամիջի փողոցի կողքին: Այդպիսիք մեծ քանակութեամբ սփռուած են նաեւ բակերում եւ շինութիւնների պատերի մէջ՝ երբեմն առանձին տառախմբերի հետքերով: Քիչ թէ շատ ամբողջական բնագրերով արձանագրութիւններ յայտնաբերուել են, ցաւօք, ընդամենը երկու օրօրոցաձեւ տապանաքարերի վրայ, որոնք կիսահողմնահարուած վիճակում ընկած են «եկեղեցու» փողոցի ներքեւի բակում (մէկը՝ դրուած խմելու ջրի խողովակի տակ): Այդ արձանագրութիւնները եւ Սպիտակաջուրի մնացեալ յուշարձանները հետազօտելու հնարաւորութիւն ենք ունեցել գիւղապետ Թորոս Աւետիսեանի եւ բերձորցի մանկավարժ, լուսանկարիչ Զօհրաբ Ըռքոյեանի հետ[52]: Առաջին արձանագրութեան հիմնական մասը երկու տողով փորագրուած է տապանաքարի վերեւի ուռուցիկ երեսին, նրա երկայնական առանցքից դէպի հարաւային կողը, իսկ թուականը պարունակող 3-րդ տողը՝ աւելի ներքեւ, այդ կողի վերին մասում.



52 Երախտագիտութեամբ նշում եմ, որ վերջինիս եմ պարտական այս յօդուածի լուսանկարների մեծ մասի համար:

Զնայած առաջին տողերի յատկապէս սկզբի տառերի կիսահողմնահարուած վիճակին՝ վերծանութիւնը կասկած չի յարուցում.

{Ա}ՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ

ՄԷԼԻՔՍՈԹԻՆ:

ԹՎ‹ԻՆ› ՌԻԴ *(=1575 թ.)*:

Բնագրում յիշատակուած ՄԷԼԻՔՍՈԹ-ն, անկասկած, Մելիքսեթ (<Մելիքսեդեկ) *արական անձնանուան մի տարբերակն է՝ վերջին* Ե *ձայնաւորին փոխարինած* Ո*-ով: Հր. Աճառեանին եօթ տասնեակից աւելի* Մելիքսեթների *կողքին յայտնի չէ անուան «Մելիքսոթ» տարբերակի որեւէ յիշատակում*[53]*: Այդպիսին այլուր չի հանդիպել նաեւ մեզ, ուստի Սպիտակաջուրի դէպքը պէտք է համարել կա՛մ փորագրողի տեխնիկական վրիպակի արդիւնք, կա՛մ, այնուամենայնիւ, տուեալ տարբերակով եւս ենթադրելի անուանաձեւի կիրառման առայժմ եզակի օրինակ:*

Երկրորդ արձանագրութեան պահպանուած մասը երեք տողով փորագրուած է տապանաքարի հարաւային կողի ձախ մասում: Քարի ճակատները եւ յատկապէս վերեւի ուռուցիկ մասը զգալիօրէն հողմնահարուած են, սակայն նկատելի է, որ այդ արձանագիր կողի ամբողջ աջ մասը (կենտրոնում փորագրուած կլոր քանդակազարդից աջ) ինչ-որ պատճառով դատարկ է թողնուել (դուցէ, հետագայում մէկ ուրիշի ա-

53 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, էջ 300:

նունը գրելու մտայնութեա՞մբ): Այսպիսով, բնագիրն ունի հետեւեալ տեսքը.



Չնայած 1-ին տողի վերջին տառերը լրիւ հողմնահարուած են, ըստ ենթատեքստի դրանց վերականգնումը (եւ այդպիսով՝ ողջ բնագրի վերծանութիւնը) կասկած չի առաջացնում.

Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂ{ՈՐՄԵ}//Ա ԿՈՒԼԱԶ//ԻՆ:

Ինչպէս տեսնում ենք, արձանագրութեան պահպանուած մասը թուական չի պարունակում: Նրա հաւանական տեղը պիտի ենթադրել տապանաքարի վերեւի ուռուցիկ մասում, որն ամբողջապէս հողմնահարուած է:

Բնագրում յիշուած Կուլազ-*ը, հաւանաբար, Հայոց մէջ ԺԶ-ԺԸ դդ. տարածուած իգական* Գուլազ *անձնանունն է, որի օգտագործման 5 դէպք կայ Հր. Աճառեանի բառարանում*[54]*: Նախորդող ԳՈՒԼ բառայօդուածում լեզուաբանը նշում է, որ այն (որից ծագում է մեր* Գուլազը *եւ այլ անուններ)* «Արեւմտահայ *տառադարձութեամբ էլ գրւում է* Կիւլ, Կուլ»[55]*: Սակայն պարզ է, որ բաղաձայն հնչիւնների նմանատիպ փոխակերպումը որոշակի տարածում է ունեցել նաեւ Հայաստանի արեւելեան*

54 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա, էջ 496:

55 Նոյն տեղում:

շրջաններում (տե՛ս, օր.՝ հէնց այս յօդուածում տասակից =դասակից, ընդերձողք =ընթերցողք, ղէքերքն =տէցերքն, ցոչի =կոչի, Մըկըրդում =Մկրտում *ձեւերը*[56]*):*

5. ՈՒԽՏԱՁՈՐ

Գիւղանունը վերաշէնացման առիթով մեր օրերում է տրուած ԺԹ-Ի դդ. Չրաղլու *յորջորջուած քրդաբնակ գիւղին, որը գտնւում է Աղաւնոյի եւ Հոչանցի վերնահովիտների միջեւ բարձրացող Եղնագոմերի սարահարթի արեւելեան փէշերին: Ստեփաննոս Օրբելեանի մօտ պահպանուած Աղահեճք գաւառի գիւղացանկում նրան առաւել մեծ հաւանականութեամբ կարող է համապատասխանել Հակից (=*Մին-քենդ*) յետոյ նշուած* Արտագետ *գիւղը («...Հակ 12,* Արտագետ *12, Մեղի 12, Ականք 8...»)*[57]*, քանի որ յաջորդող երկրորդ բնակավայրի՝* Ականքի *համապատասխանութիւնը ԺԷ-ԺԸ դդ.* Սպիտակաջուր, *իսկ ԺԹ-Ի դդ.* Աղբուլաղ *կոչուած գիւղին, ինչպէս նշեցինք վերեւում, ըստ ամենայնի, չի կարող կասկած յարուցել:*

Ընդ սմին յաջորդ անուան տակ՝ Մեղի, *առաւել ենթադրելի է այն գիւղը, որը ԺԹ-Ի դդ. յորջորջուած էր* Ղարաքէշիշ *(խորհրդային տարիներին՝* Լեռնաքեռդ, *136 տուն): Նրա առջեւ*

56 Տե՛ս ստորեւ, էջ 370-372, 397:

57 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 374: *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 516: Ձեռ. ՄՄ 6271 (ընդօրինակուած՝ 1513 թ.), թ. 333ա:

փռուած սեւա-կաւահողային մակերեւոյթով ընդարձակ սարահարթը ցարական շրջանի Ելիզաւետպոլի նահանգի 5-վերստանոց քարտէզում հանդէս էր գալիս Место Каракишишъ *անուան տակ*[58]*: Գիւղի միջով ու նշուած սարահարթի երկայնքով հոսող եւ մի ժայռոտ ձորակից յետոյ Հակից ներքեւ, ԺԹ-ի դդ.՝* Բուլիջա *կամ* Ղալաչա, *իսկ այժմ, վերաշէնացումից յետոյ՝* Բերդիկ *կոչուած գիւղի տարածքում Աղաւնոյին հասնող գետակը նոյն ժամանակաշրջանի գինուորական 5-վերստանոց քարտէզում կոչւում էր* Ղարասու *(Карасу)*[59]*: Բառացի թարգմանութեամբ «Սեւ քահանայ» նշանակող* Ղարաքեշիշ *յորջորջումը կարող էր առաջանալ հայկական* Մեղի *գիւղանուան մէջ հնդեւրոպական մի շարք լեզուներում «մել/մեղ» բառի «սեւ, մուգ, կեղտոտ» իմաստի (ուղիղ պահուած, օր.՝ յունարէնում)*[60] *ընկալման եւ թարգմանութեան հետեւանքով (թիւրք. «ղարա»): Այդ կերպ Հայաստանի տարբեր մասերում* Ղարասու *(«Սեւ ջուր») էին դարձել* Մեղ, Մեղոս, Մելաս *անունով մի շարք գետեր, այդ թւում՝ Մշոյ* Մեղ*-ը՝ Մեղրագետը*[61]*: Յաւելենք,*

58 *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1911:

59 *Карта Кавказскаго края*, Тифлисъ, 1904; **Д. Д. Пагиревъ**, *Алфавитный указатель к пятиверстной карте Кавказскаго края...*, Тифлисъ, 1913:

60 Տե՛ս **Т. В. Гамкрелидзе**, **В. В. Иванов**, *Индоевропейские языки и индоевропейцы*, т. II, Тбилиси, 1984, էջ 783:

61 *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 3, Եր., 1991, էջ 758, 780; **Վ. Գ. Ջիհանեան**, *Հայկական լեռնաշխարհի ջրանունները*. -

որ իրանական աշխարհագրական անուանակարգում թիւրքական ստուգաբանութեամբ Ղարա-սու *ջրանունը նշանակում է «ցեխոտ, մուգ, ոչ թափանցիկ ջրով գետ»*[62]*:*

Տաթեւի 1730 թ. պտղացուցակում մի քանի դար իր անունն անփոփոխ պահպանած Հակից յետոյ նշուած բնակավայրը կրում է Փուլ *անունը («...Աղուէսահաքի..., Հակ..., Փուլն..., Եղնագոմեր..., Սպիտակաջուրն...»)*[63]*: Քրիստինէ Կոստիկեանի կողմից հրատարակուած 1691/1692 թ. պարսկերէն փաստաթղթում առկայ Քաշաթաղի գեղջաւագների (քեդխուդաների) թուարկման մէջ եւս նոյն* Փուլ *գիւղանունը յաջորդում է* Մինքենդ*-ի, այսինքն՝* Հակի *յիշատակութեանը («...Աֆաթխար [=*Աղբաթխէրտ*], Մինքենդ [=*Հակ*],* Փուլ, *Հոչաս [=*Հօչանց*]...»)*[64]*: Հնարաւո՞ր է արդեօք այս տրամաբանութեամբ ենթադրել, որ ինչպէս որ ԺԳ դարում* Արտագետը, *նոյն կերպ ԺԷ-ԺԸ դարերում* Փուլն *էր համապատասխանում ԺԹ դարից* Չրաղլու, *իսկ այսօր* Ուխտաձոր *կոչուած եւ նախկինում հայկական բնակավայրի ակնյայտ հետքեր պահպանած գիւղին: Թւում է, թէ նման վարկածը ստուգելու հնարաւորութիւն*

«Հայոց լեզուի պատմութեան հարցեր», պր. 3, Եր., 1991, էջ 252-253:

62 Տե՛ս *Инструкция по русской передаче географических названий Ирана*, Москва, 1979, էջ 107:

63 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42:

64 **Ք. Կոստիկեան**, *Քաշաթաղի 17-րդ դարի պատմութեանը վերաբերող մի փաստաթուղթ*, էջ 170:

կարող էր տալ ԺԹ դ. մի ռուսական վիճակագրական աղբիւր՝ 1886 թ. կազմուած Ռուսաստանի կայսրութեան Անդրկովկասեան երկրամասի բնակչութեան մասին վիճակագրական տուեալների ժողովածու, որտեղ Զանգեզուրի գաւառի Շահսուվարլուի գիւղական համայնքի (N 21) մէջ մտնող Բոզլու-Աղջաքենդ անունով երկու քրդաբնակ բնակավայրից մէկի (N 804) անուան կողքին փակագծում արձանագրուած է Փուլ (Пулъ) գիւղանունը:

Օգտագործելով առիթը՝ բերում ենք այդ գիւղական համայնքի մէջ մտնող բնակավայրերի ամբողջական ցուցակը՝ գիւղանունների կողքին ներառելով միայն ծխերի քանակը. "Аг-керпи (Бозналу) 84... Алпаутъ 16... Бозлу-Агджакендъ (Кяманлы) 71... Бозлу-Агджакендъ (Пулъ) 33... Варазгунъ-Герикъ 49... Мирикъ-Гасанлу 30... Минкендъ 70[65]... Шахсуварлу 59..."[66]: Ուսումնասիրողներից Գեղամ Բադալեանի կարծիքով՝ այս ցուցակի 804 համարի տակ հանդէս եկող, 33 ծուխ քուրդ բնակչութեամբ Բոզլու-Աղջաքենդ-Փուլը նոյնանում է Աղաւնոյի միջնահովտում գտնուող, Ի դարում Բոզլու (1970-ական թթ.՝ 50 տուն, Ղեւոնդ Ալիշանի մօտ՝ Բոզլու[67]) անունը կրած այն գիւղի հետ, որը վերաշէնացումից յետոյ վերանուանուած է Մոշաթաղ (Միրիկ գիւղի դիմաց, Աղաւնոյի ձախ, հիւսիսային գետափին)[68]: Սակայն այդ տեսակէտը չի կարող անվերապահօրէն ընդունուել, քանի որ ցուցակի մանրակրկիտ քննութեամբ դեռեւս անհրաժեշտ է ճշտել, թէ Մոշաթաղին արդեօ՞ք չի համապատասխանում նախորդ Բոզլու Աղջաքենդը (N 803), որի կողքին փակագծում արձանագրուած է Кяманлы գիւղանունը[69]: Վերջինս ցարական քարտէզներում կոչուած է Камаллы (խորհրդային շրջանում՝ Քեամալլու, 60 տուն) եւ գտնւում է Զրաղլուից 1,5 կմ հարաւ, Եզնագոմերի սարահարթի հարաւ-արեւելեան փէշին եւ Մոշաթաղից դէպի սարահարթ բարձրացող գրունտային ճանապարհի վերջում: Նշելի է նաեւ, որ գիւղը կարծես թէ չի կրում նախկին հայկական բնակավայրի որեւէ հետք[70]:

65 Մինքենդում բնակվող ծխերից 47-ը հայեր էին՝ 453 մարդ, միւս 23-ը (այդպէս նաեւ մնացեալ ութ բնակավայրերի բոլոր բնակիչները)՝ քրդեր:

66 *Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г., IV. Елисаветпольская губерния, Зангезурский уездъ*, Тифлисъ, 1893 (без пагин.), II участокъ, 21. Шахсуварлинское сельск. общ., N 801-808:

67 Հ. Ղ. Ալիշան, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, էջ 267-268 (նաեւ՝ քարտէզում):

68 Գ. Մ. Բադալեան, *Աղաւնօ-Քաշաթաղի տեղանունների պատմությունից /պատմա-աշխարհագրական ճշգրտումներ/*. - «20-րդ դարասկզբին ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հայկական գիւղերի բնակիչների բռնի տեղահանման 100-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերը», Բերձոր, 2005, էջ 85, 89, ծնթ. 7:

69 Հմմտ. *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 1, Եր., 1987, էջ 718 («ԲՈԶԼՈՒ ԱՂՋԱՔԵՆԴ... - Գիւղ Ելիզաւետպոլի նահանգի Զանգեզուրի գաւառում: Այժմ ՔՅԱՄԱԼԼԸ, Ադրբ. ՍՍՀ Լաչինի շրջանում»):

70 Հմմտ. նաեւ Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 128:

Ռուսական այս 1886 թ. գիւղացուցակը, անկախ իր թուացեալ պաշտօնականութիւնից, աչքի է ընկնում որոշակի անփութութեամբ եւ չատով յայտնուած 5 ու 10-վերստանոց բաւականին ճշգրիտ քարտէզների համեմատ ունեցած շեղումներով, ընդ որում քարտէզներից մէկը հէնց ուղեկցում էր այդ վիճակագրական տուեալների ժողովածոյի 1888 թ. հրատարակութեանը[71]*: Նախ՝ տուեալ համայնքի կենտրոն* Շահսուվարլուն *իր 59 ծուխ (420 շունչ) քուրդ բնակիչներով, ըստ ամենայնի, իրականում* Միրքենդի *մի թաղամաս էր*[72]*: Այնուհետեւ՝ նրանում բացակայում են 1880-ական թթ. հաստատապէս գոյութիւն ունեցած այնպիսի գիւղերի անուններ, ինչպէս գոնէ* Աղբաթխէրտը[73], Ղարաքեշիշը, Չրաղլուն *եւ* Աղբուլաղը, *եւ մնում է ենթադրել, թէ դրանց ծխերը անփութօրէն*

71 **Е. Кондратенко**, *Карта Елисаветпольской губернии с показаниемъ сельских обществъ...*, Тифлисъ, 1888:

72 1907 թ. գիւղը կոչւում էր *Շահսուվարլու-Միրքենդ* (*ՀՅՇՏ Բառարան*, հտ. 4, Եր., 1998, էջ 59): Միայն 20-վերստանոց մասշտաբով ...Е. **Кондратенко**, *Карта Закавказскаго края с показаниемъ границъ губерний, уездовъ, участковъ, сельских обществъ и распределения населения по вероисповеданию*" քարտէզում (Тифлисъ, 1888) առկայ է ...Шасуварлу" ձեւը:

73 Գիւղը ոչ միայն *Агбаахиръ* ձեւով նշուած է ցարական 10 եւ 5-վերստանոց մասշտաբներով քարտէզներում (տե՛ս վերեւում, ծնթ. 33), այլեւ *Агбахир* ձեւով՝ 1926 թ. խորհրդային մեծ հանրագիտարանի առաջին հրատարակութեան ...С. С. Р. Армения" քարտէզում (*Большая Советская Энциклопедия*, т. III, Москва, 1926, էջ 415-416):

մացուած են արձանագրուած գիւղերի բնակչութեան հաշուարկի մէջ: Վերջապէս՝ ոչ թէ աշխարհագրական, այլ այբբենական հերթականութեամբ շարադրուած ցուցակում որեւէ կերպ ծանօթագրուած չէ նոյն համարի տակ հանդէս եկող կրկնակի կամ փակագծերի մէջ առնուած գիւղանունների յարաբերակցութիւնն իրար նկատմամբ, եւ այդ հարցում ստիպուած պէտք է բաւարարուել միայն հաւանական ենթադրութիւններով՝ տուեալ կոնկրետ ժամանակաշրջանում կամ տուեալ վիճակագրական հաշուառման մօտեցումների շրջանակում վարչա-աշխարհագրական եւ, գուցէ, նաեւ տոհմացեղային հիմքերով կազմաւորուած փոքրիկ գիւղախմբերի գոյութեան մասին: Ընդ որում, եթէ այդ ենթադրելի խմբերից մէկ-երկուսի բաղադրիչների տեղայնացումը հեշտ է (օր.՝ Վարագգում-Հերիկ[74]*), ապա միւսներինը լուրջ դժուարութիւններ է յարուցում:* Միրիկ-Հասանլու *կրկնանուան երկրորդ բաղադրիչը մեզ յայտնի տեղեկատուութեան շրջանակում ոչ մի այլ համադրութեան հնարաւորութիւն չի պարունակում, բացի այն, որ* Հասանլար *է կոչուել Հակարիի վերնահովտում հաստատուած ամենից*

74 Աղաւնոյի աջ բարձրադիր ձորալանջին գտնուող *Հերիկի* (խորհրդ. շրջանում՝ *Ահմեդլու*, 160 տուն) եւ գրեթէ 8 կմ դէպի արեւելք, Աղաւնոյի ձախ (հիւսիսային) բարձրադիր ձորալանջին գտնուող *Վարագգոմ* գիւղատեղիի հայկական ուշագրաւ յուշարձանների մասին տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 132-133, 136-138:

բազմամարդ քրդական ցեղերից մէկը[75]: Գուցէ կարելի է գուշակել, որ Աղ-Քեօրփիի կողքին փակագծում նշուած Բոզնալուն եղել է Վերին Աղ-Քեօրփի գիւղի (Հոչանցի ձախ, հիւսիսային ափով տաքինից 3 կմ դէպի արեւմուտք. խորհրդային շրջանում երկու բնակավայրն էլ լքուել եւ վերածուել են ֆերմաների) այլուստ անյայտ երկրորդ անունը, թէպէտ այն կարող էր վերաբերուել նաեւ շրջակայքի մի ուրիշ բնակավայրի, քանի որ Բոզլու անունը կրում էր քրդական քոչուոր ցեղերից մէկը[76]: Գուցէ, պէտք ենթադրել, թէ Ղարաքեչիշի բնակիչներին հաշուել են համայնքի կենտրոն Ծաղուվարլուի 59 ծխերի մէջ (բայց դա՝ լոկ իբրեւ վարկած) եւ այսպէս շարունակ:

Աղբիւրի նման վիճակում առաւել հաւանական ընկալումը կարող է լինել այն, որ 1886 թ. ցուցակի Բոզլու-Աղջաքենդ-Քեամալլի ենթադրելի գիւղախումբը (N 803) իրօք ընդգրկել է այսօրուայ Մոշաթաղից բացի նաեւ Քեամալլուն եւ շրջակայքի մի երրորդ բնակավայր, օր.՝ խորհրդային շրջանի Ղալաչան (16 տուն, ներկայումս՝ Բերդիկ, Մոշաթաղից 3 կմ արեւմուտք), որը Ելիզաւետպոլի նահանգի 5-վերս-

75 Տե՛ս **А. Алекперов**, *К вопросу об изучении культуры курдов*, - „Известия Аз. ФАН", т. XXV, Баку, 1936, էջ 40; **Ա. Ավդալ**, *Անդրկովկասեան քրդերի կենցաղը*, Եր., 1967, էջ 13:

76 Տե՛ս **И. Шопенъ**, *Исторический памятникъ состояния Армянской области в эпоху ея присоединения къ Российской империи*, СПб., 1852, էջ 528; **А. Алекперов**, *К вопросу об изучении культуры курдов*, էջ 40:

տանոց քարտէզում կոչուած է Բինա (Ղեւոնդ Ալիշանի քարտէզում՝ Պինա), իսկ զինուորական 5-վերստանոցում՝ Բուլիջա[77]: Որոշակիօրէն հաւանական կարող է լինել նաեւ այն ենթադրութիւնը, որ Բոզլու-Աղջաքենդ-Փուլ ենթադրելի գիւղախումբը (N 804) ընդգրկել է հէնց Չրաղլուն (1970-ական թթ.՝ 34 տուն, այսօրուայ Ուխտաձորը, որը եւ, գուցէ, պատմական Փուլն է), Հոչանցի դիմացի, հիւսիսային ափին գտնուող Աղջաքենդը (ցուցակում նշուած Ալփոուտից 5 կմ արեւմուտք, 1970-ական թթ.՝ 40 տուն, վերաշէնացումից յետոյ՝ Անի) եւ շրջակայքի մի երրորդ բնակավայր: Դա կարող էր լինել, օր.՝ խորհրդային շրջանի Ղօշասուն՝ Աղջաքենդ-Անիից 2 կմ արեւելք, Հոչանց գետի ձախափնեայ բարձրադիր ձորալանջին (44 տուն, վերաշէնացումից յետոյ՝ Դրախտաձոր), կամ գուցէ Ծեյլանլուն՝ Չրաղլուից 5 կմ հիւսիս, Հոչանցի աջափնեայ ձորալանջին (1970-ական թթ.՝ 58 տուն, վերաշէնացումից յետոյ՝ Ծրուական)[78]:

77 Տե՛ս *Пятиверстная карта Елисаветпольской губернии*, Тифлисъ, 1910 եւ *Карта Кавказскаго края*, Тифлисъ, 1904: Ի դէպ, այս *Բուլի-ջա* անուան որոշակի նմանութիւնը հայկական *Փուլ* գիւղանուան հետ (տեղանունների վերջում յաճախ հանդիպող «ջա» բառը թիւրքերէն նշանակում է «տեղ», տե՛ս *Инструкция по русской передаче географических названий Ирана*, էջ 101) հիմք է տուել Սամուէլ Կարապետեանին (*Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 133-134)՝ հնարաւոր համարելու նրանց նոյնացումը: Այդ տարբերակն, իհարկէ, չի կարելի անվերապահօրէն բացառել:

78 Հին հայկական բնակավայրի ակնյայտ պատկերը պահպանած (թէպէտ՝ առանց յայտնաբերուած յուշար-

Ինչ վերաբերում է այսօրուայ Մոշաթաղին, ապա Ստեփաննոս Օրբէլեանի կողմից Աղահեջքի գիւղերի թուարկման հերթականութիւնը պարզաբանելուց յետոյ[79] *կարելի է ենթադրել, որ նրա հետ, հաւանաբար, համադրելի է Հակից առաջ, գաւառի գիւղացանկի սկզբում յիշատակուած (այսինքն՝ Հակից արեւելք, Աղաւնոյի ձախ ափին դասաւորուած) չորս գիւղերից մէկը («Անէմ՝ 12, Տանձուտ՝ 7, Հացեաց* [տարբ. *Հայեաց*] *աղբիւր՝ 12, Քեղաձոր՝ 10, Հակ՝ 15...»)*[80]*։*

ձանների) այս գիւղի *Շեյլանլու* յորջորջումը համապատասխանում է քրդական ցեղանուններից մէկին (**И. Шопенъ**, *Исторический памятникъ состояния Армянской области*, էջ 528; **А. Алекперов**, *К вопросу об изучении культуры курдов*, էջ 40)։ Իսկ վերաշէնացումից յետոյ նրան տրուած *Շրուական* անունն առկայ է միայն Տաթեւի 1730 թ. պտղացուցակում՝ «Քաշթաղուց» գաւառի Արուական եւ Հօչանց յայտնի գիւղերի միջեւ («...Սպիտակաջուրն..., Քարագլուխն..., Արուական..., *Շրուական*..., Հօչանց...». *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42), եւ, ըստ ամենայնի, համապատասխանում է ներկայիս Արուականի եւ Մշենիի մէջտեղում գտնուող, ԺԹ դ. քարտէզներում *Սեյտեր* (Сейтеръ) կոչուած գիւղին, որը Ի դարում լքուել ու ֆերմայի էր վերածուել։

79 **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 278-280 [այս ժողովածոյում՝ էջ 25-28]։ Վերաշէնացուած գիւղն սկզբում կոչուեց *Փոլ* (*Բոզլուի* հետ նոյն յապնէպ համադրման հիմքով), որի բարբառային իմաստն է՝ *Սարի յանջ*։ Սակայն պաշտօնական անուանակոչման համար բնակիչների ցանկութեամբ ընտրուեց աւելի բարեհունչ *Մոշաթաղ* գիւղանունը ։

80 Ձեռ. ՄՄ 6271, 333ա; **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, էջ 375; *Պատմութիւն նահանգին Սիսական*..., էջ 516։

Ընդ որում, եթէ դա նախավերջինը՝ Հացեաց աղբիւրն *է եղել, ապա կարելի է կապ տեսնել այդ անուան եւ Մոշաթաղի արեւմտեան ծայրին բխող յորդառատ աղբիւրի միջեւ (ճիշտ է՝ վերջինիս շրջապատի հաստաբուն ծառերն այսօր ոչ թէ հացիներ են, այլ ուռենիներ)։ Այս դէպքում Հակի անմիջական հարեւանութեամբ նշուած* Քեղաձորը *կարող էր համադրուել Ի դ.* Ղալաչա *կոչուած ոչ մեծ գիւղի հետ (5-վերստանոց քարտէզում՝* Բուլիջա, *ներկայումս՝* Բերդիկ)*. երկու անունների միջեւ կարելի է որոշ նմանութիւն նկատել, եթէ ընդունենք գիւղացանկի «Քեղաձոր» անուան «Քաղաձոր» հնչած տարբերակի գոյութեան հնարաւորութիւնը (որից էլ՝* Քալաձոր>Ղալա-չա*)։*

Անդրադառնանք նաեւ հարեւան Եզնագոմեր *գիւղի խնդրին։ Ըստ Սամուէլ Կարապետեանի եւ մեր տեսակէտի՝ Տաթեւի թեմի 1730 թ. պտղացուցակում հէնց հետագայի* Ղարաքէշիշ *գիւղն է կոչուած եղել այդ անունով («...Հակ..., Փուլն...,* Եզնագոմեր..., *Սպիտակաջուրն...»)*[81]*։ Վերջերս այլ տարբերակ փորձեց*

81 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի** /Յաւելուած/, էջ 42։ Հմմտ. **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 127-128 (այստեղ տե՛ս նաեւ բնակավայրում պահպանուած հայկական յուշարձանների բեկորների մասին); **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 324-325 (քարտէզ)։ Գիւղը կրում է *Եզնագոմեր* անունը նաեւ ազատագրումից ու վերաշէնացումից յետոյ։ Նրանից 2 կմ արեւելք, *Կայծքարասար* կոչուած, եւ 1 կմ դէպի արեւմուտք, պայմանականօրէն *Աւազահանք* կոչուած տե-

հիմնաւորել Գեղամ Բադալեանը՝ գրելով. «1691 թ. գրուած մի ձեռագիր Մաշտոցում (այժմ՝ ՄՄ 6725) ոմն Սարգիս երէցի կողմից թողած հետագայի յիշատակարանում (1696 թ.) նոյն բնակավայրը («Եղնագոմեր») հանդիպում է նաեւ 2-րդ օտար «Ալբաուտ» անունով, որն էլ վերջնականապէս ճշտում է վերջինիս տեղադրութիւնը: Ըստ այդմ, Եղնագոմերը նոյնական է Հագարու գետի ձախակողմեան Հոչանց վտակի ափին գտնուող ժամանակակից Ալփութ գիւղատեղիի հետ»[82]: Սակայն այդ տեսակէտը չի կարող ընդունելի լինել, քանի որ ուսումնասիրողի մատնանշած աղբիւրում ՄՄ թիւ 6725 ձեռագիր Մաշտոցի 1696 թ. յիշատակարանում, Եզ-

դանքներում բրոնզեդարեան դամբարանադաշտերի պեղումների արդիւնքների մասին տե՛ս **Ա. Գնունի**, *Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի ժամանակաշրջանի բնակավայրերը եւ բնակարանները*, Թեկնած. ատենախօսութեան սեղմագիր, Եր., 2002, էջ 25; **Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան, Ա. Գնունի**, *Արցախի եւ ազատագրուած տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազօտութիւնների հիմնական արդիւնքները (ցուցահանդէսի ցանկ)*, Եր., 2007, էջ 13:

82 **Գ. Մ. Բադալեան**, *Աղահէճք-Քաշաթաղի տեղանունների պատմութիւնից*, էջ 85 (բերուած վերջին նախադասութեան մէջ ըստ երեւոյթին պէտք է լինէր. «Հակարի գետի Հոչանց վտակի ձախակողմեան ափին»): Ուսումնասիրողը նաեւ աւելացնում է. «Ալբաուտը (al-pout, հայկական աղբիւրներում հանդիպում է նաեւ «արփաուտ» ձեւով) թիւրքական ցեղ էր, որը XVIII դ. հաստատուել էր ինչպէս Սիւնիքի հարաւ-արեւելեան, այնպէս էլ դաշտային Արցախի որոշ շրջաններում» (էջ 89, ծնթ. 6):

նագոմերը եւ Ալբաուտն *իրականում պարզապէս նոյնացուած չեն*[83]:

Առիթն օգտագործելով՝ մանրամասն անդրադառնանք այս գրչագրի՝ պատմա-մշակութային մեծ արժէք ունեցող յիշատակարանների բնագրերին: Բուն գրչի փոքրիկ յիշատակարանը գրուած է Մաշտոց ծիսարանի բնագրի աւարտից յետոյ, 127ա թերթի երկրորդ սիւնակում, բնագրաբաժան երկու զարդագծերի տակ, նոյն բոլորագրով. «Գրեցաւ Ս[ուր]բ Գիրքս ձեռամբ ե՛ւ ամենամեղ, ե՛ւ անարժան Վրդանէս իրիցու, ի թվ[ին] ՌՃԼ [=1691 թ.]»[84]: *Յաջորդ երկու էջում (թ. 127բ-128ա) այլ գրչի կողմից բոլորագրով, երկու սիւնակով գրուած է մեզ աւելի հետաքրքրող ընդարձակ յիշատակարանը, որն ամբողջութեամբ հրատարակում ենք ստորեւ՝ քառակուսի փակագծերում բացելով գրչի պատուոյ նշաններով յապաւումները, շեղատառ ուղղելով ակնյայտ վրիպումները եւ կարգաւորելով կէտադրութիւնը:*

83 Հարկ է նշել, որ ԺԷ դ. յիշատակարանների հրատարակութիւնը ցաւալիօրէն կանգ է առել 1660 թ. վրայ (*Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ /1641-1660 թթ./, կազմեց **Վ. Յակոբեան**, Եր., 1984), եւ դա արդի հետազօտողին մեծապէս կաշկանդում է Հայոց ուշ միջնադարը աղբիւրագիտօրէն լրիւ պատկերացնելու հարցում: Նոյնը, ցաւօք, վերաբերում է նաեւ ԺԶ եւ ԺԸ դարերի յիշատակարաններին:

84 Յաջորդ նօտրագիր յիշատակագրութիւնը՝ ստորեւ:

«Ես՝ Նաւասարդի տղա[85] տ[է]ր Սարգիսս գնեցի զս[ուր]բ Մաշտոցս հալալ ընչից իմոց՝ հայր իմ ՚Ն՚Նաւասարդին, մայրն իմ Ղայիթին, որ հանգ[ո]ւցեալ է առ Ք[րիստո]ս: Եղբայր իմ Մօվսէսն, միւս եղբայրն Յարութի[ւն]ին, որ հանգ[ո]ւցեալ են առ Ք[րիստո]ս: Որդիք իմ Յակոբին, Սահակին, դուստրն իւր Խաթունին. ամէն: Միւս եղբայրն Մովսէսին, կողակցուն Մարճանն, որդին իւր Գալուստն, Գրիգորն, Ոհանն, որ հանգուցեալ են առ Ա[ստուա]ծ: Եղբօրն կողակիցն իւր Փարզատին, հանգուցեալ որդին իւր Ոհանէսին, կենդան որդին իւր Ոսկանն:

Դ[ա]րձ[եա]լ[86] աղ[ա]չեմ զձեզ, ո՛վ եղբայրք, կ[ա]մ տասակի՛ց եւ ընդերձո՛ղք, յիշեցէ՛ք ,,գվատաբախտ Սարգիս Էրէցուս, ամուսին իւր Մարեանն, եւ ամ[ենայն] կարգ[ա]ցողացդ՝ ամէն: Հօրեղբայր Առաքելին, կողակից իւր Դայվաթին, որդին Աբրահամին, որ հանգուցեն առ Ք[րիստոս]: Հարսն իւր Սանդուխտն, որդին իւր Մ[ա]րգարն, որ հանգ[ո]ւց‹են›, դէքերքն իւր Ծատուրն. ամէն: Կ[ա]րդ[աւղ]ք կ[ա]մ օրին[ա]կ[ե]լ[ո]վ ի վ[ե]ր[այ] սորա՝ Ա[ստուա]ծ ողո‹ր›մի աս[ա]ցէ՛ք իւր հոգւ‹ո›յն. ամէն:

85 Գրիչը վերջին՝ *տղա* բառը գրել է տողավերեւում, ապա վրան ջնջման գիծ քաշել, իսկ նախորդ՝ *Նաւասարդի* բառի մէջ քերել եւ լրացումներ արել՝ դարձնելով՝ *Նաւասի որդի*:

86 Գրիչն այս բառը գրել է տողակզբից եւ գլխատառով, որը պարբերութեան նշան է:

Գրեցաւ[87] ի թվին ՌՃԽ եւ հինգումն [=1696 թ.], *իշխանութի[ւն]ն Շահ Ուսէինն[88], ի հ[ա]յրապետութի[ւն] տ[եառ]ն Նահապետ‹ի›ն, եպ[իսկոպո]սութի[ւն] Զաքարին, ի առ[ա]ջնոր‹դ›ութի[ւն]ն[89] Միրզախան մէլիք‹ի›ն[90], ի*

87 Վերջին բառը գրուած է տողակզբից եւ գլխատառով, որը պարբերութեան նշան է: Իսկ նրանից առաջ լուսանցքում գրուած է *Սաքին*, որը, թերեւս, նախորդ բնագրում գրչի բաց թողած մի անուան յաւելում է:

88 Կարելի է ենթադրել, որ գրիչը պարզապէս վրիպել է երկու կից Հ-երից մէկը, ուստի, գուցէ, ճիշտ կը լինէր բնագիրը վերականգնել՝ *Շա[հ] Հուսէին*ն:

89 Տուեալ տարածքի կամ բնակավայրի վերակացու նշանակող այս *առաջնորդ* եզրոյթը (գուցէ, պարզապէս *գեղջաւագ-քեղխուդա*) կիրառուած է նաեւ խնամախում Մէլիք Հախնազար Ա-ի գերեզմանին նրա կնոջ թողած տապանագրում. «ԵՍ՝ ՍԵՐԱԽՍ, Կ[Ա]ՆԳ[ՆԵՑԻ] Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԿՈՂԱԿՑԻՆ ԻՄ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ, ՈՐ ՄԵԾ ԻՇԽԱՆ ԷՐ Ի ՄԷՋ ԹԱԳՕՈՐԱՑ: ԵՒ ՈՐԴԻՆ ԻՄ ՀԱՅԿԱԶ Կ[Ա]Ն[ԳՆԵՑ]Օ ԳԵ[Ւ]ՂԻՍ *ԱՌԱՋՆՈՐԴ*: ԹՎ[ԻՆ] Ռ [=1551 թ.]: ԵՍ՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՀՊԷՂԱՍ, ԿԱԶՄԵՑԻ ԱՅՍ ՏԱՊԱՆՍ. ԵՂ/*/»: Տե՛ս **Մ. Հասրաթեան**, *Պատմա-ճնագիտական ուսումնասիրութիւններ*, էջ 162: Նշենք, որ, թերեւս, ուսումնասիրողը թուականի ընթերցման մէջ պարզապէս վրիպել է 30 կամ 40 տասնաւորը եւ, գուցէ, նաեւ ինչ-որ միաւոր (վերծանութիւնը պէտք է լինի «ԹՎ[ԻՆ] Ռ[...]»), քանի որ 1681 թ. Մէլիք Հախնազար Ա-ն դեռեւս կենդանի էր, ինչպէս երեւում է նոյն խնամախի միւս տապանագրից. «ԵՍ՝ ՀԱԽՆԱԶԱՐ, ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐԵՂԲԱՒՐ ԻՄ՝ ՂՈՒԼԻՆ. ԹՎ[ԻՆ] ՌՃԼ [=1681 թ.]» (**Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 163):

90 Յիշատակուած անձանցից Սուլթան-Հուսէյն շահը Սեֆեան Իրանի տիրակալն էր 1694-1722 թթ., իսկ Հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եդեսացին գահակալել է 1691-1705 թթ. (**Մ. արքեպ. Օրմանեան**, *Ազգապատում*, հտ. Դ, Վաղարշապատ-Ս.Էջմիածին, 2002, էջ

գտղն, որ ցոչի Եզնագումեր, ի յերկիրն, որ ասի Ալբաուտ: Գրեց[աւ] Մ[ա]րտի ամսին ԺԷ: Նմա փառք յ[ա]ւիտեն[ա]նս. ամէն:

Դ[ա]րձ[եա]լ[91] յիշեցէ՛ք զվատաբախտ եւ անարժան Մաթէոս ս[ա]րկ[աւա]գս, որ բազ[ո]ւմ աշխատանքս ունէ ի վ[ե]ր[այ] Ս[ուր]բ Գրոցս Ք[րիստոս]ի: Նմ[ա]յ փառք յաւիտեան. ամէն: Հա՛յր մեր»:

Ինչպէս տեսնում ենք, այս յիշատակարանում Եզնագումեր գիւղի համար ընդամենը ասւում է, որ այն գտնւում էր Ալբաուտ կոչուող

59, 87): *Եզնագումեր* գիւղի կամ *Ալբաուտ* գաւառի *Միրզախան մէլիք* «առաջնորդի» մասին այլուստ տեղեկութիւններ չունենք: Իսկ «եպիսկոպոս» *Զաքարն*, անկասկած, Տաթեւում թաղուած Սիւնեաց *Զաքարիա* արքեպիսկոպոսն է, որի նախորդ Ներսէսը, ըստ ԺԹ դ. կազմուած յայտնի գաւազանագրքի՝ Հայոց Փիլիպպոս Ա կաթողիկոսի (1632-1655 թթ.) սանն էր (*Պատմութիւն նահանգին Սիւնեաց*, Թիֆլիս, 1910 /Յաւելուած/, էջ 527-528): Թերեւս, հէնց նրա՝ ներկայումս կորսուած տապանաքարի արձանագրութիւնն են ընթերցել Սարգիս Ջալալեանցը եւ Երուանդ Լալայեանը Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու գաւթում («Այս՝ հանգիստ *Զաքարիայի* երջանիկ արքեպիսկոպոսի...», տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. II, էջ 36, N 76): Ըստ սմին, հիմնուելով նաեւ մեր յիշատակարանի վրայ, հարկ է այդ տապանագրի վերծանութեան վերջում, թուականի մէջ վերականգնել 40-ից ոչ պակաս տասնաւորը եւ, գուցէ, միաւորը, որպէսզի Զաքարիայի մահուան տարեթիւը հասնի 1696-ին յաջորդող տարուայ («թուականիս Հայկականի ՌՃ[...]»):

91 Այս բառը եւս գրուած է տողակզբից եւ գլխատառով, որը պարբերութեան նշան է: Այդ պարբերութեամբ յիշատակութիւն խնդրող *Մաթէոս* սարկաւագը, հաւանաբար, հէնց յիշատակարանի գրիչն է:

երկրում: Այսինքն՝ վերջին տեղանունը հանդէս է գալիս ոչ թէ իբրեւ այդ գիւղի, այլ նրա շրջակայ գաւառի, մահալի անուն: Հարկ է նշել, որ դա տուեալ երկրանուան միակ յիշատակութիւնն է եւ միայն Եզնագոմեր գիւղն իր կազմում ունենալու իրողութեան ու հետագայում (ԺԹ-Ի դարերում) յայտնի Ալփոուտ գիւղանուան հետ որոշակի նմանութեան հիման վրայ հնարաւոր չէ ամբողջականօրէն լուծել նրա սահմանների խնդիրը: Հաշուի առնելով Տաթեւի 1730 թ. պտղացուցակում նոյն Եզնագոմեր գիւղի վերագրումը «Բաշթաղուց» գաւառին՝ կարելի է միայն ենթադրել, որ Սեֆեան տէրութեան մէջ Ալբաուտ անունով «երկիրը», այսինքն՝ մահալը, գաւառը, ամենայն հաւանականութեամբ ստեղծուել է նախկինում աւելի մեծ տարածք զբաղեցրած Քաշաթաղ-Քուշթասիֆ-Գուշթասիֆ մահալի[92] հիւսիս-արեւմտեան հատուածի անջատման արդիւնքում: Ընդ որում այն, թերեւս, երկար կամ գոնէ հաստատուն կեանք չի ունեցել, քանի որ Քաշաթաղ անունը Աղաւնոյի եւ Հոչանցի վերնահովիտների տարածքի համար յիշատակուած է 1690-ական թուականներից ե՛ւ առաջ, ե՛ւ յետոյ:

Փորձենք հնարաւորութեան չափով մանրամասնել խնդիրը: Ստեփաննոս Օրբէլեանի

92 Քաշաթաղ մահալի պարսկերէն Քուշթասիֆ յորջորջման մասին տե՛ս Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, I. Հրովարտակներ, պր. II, էջ 89, 100, 124, 171; **Ք. Կոստիկեան**, Քաշաթաղի 17-րդ դարի պատմութեանը վերաբերող մի փաստաթուղթ, էջ 174, ծնթ. 10:

«Սիւնեաց պատմութեան» մէջ պահպանուած Աղահեջքի 37-38 գիւղերի ծաւալուն ցուցակի անունների հերթականութեան պարզաբանումը, համադրուած այլ աղբիւրների հետ, թոյլ է տալիս մեծ ճշգրտութեամբ պատկերացնել այդ գաւառի հիւսիս-արեւելեան սահմանագիծը վաղ եւ զարգացած միջնադարում: Հարաւ-արեւելքից հիւսիս-արեւմուտք այն, ըստ ամենայնի՛ անցնում էր Հակարի գետով ու նրա Հոչանց աջ օժանդակով, ապա վերջինիս վերին հոսանքի եւ Գորանիխ ձախ օժանդակի հովիտը հիւսիսից եզերող լեռնաշղթայով՝ սկսած այսօրուայ Ներքին Աղքեօրփի[93] լքուած գիւղատեղիի հողատարածքն արեւելքից շրջափակող, գետից դէպի 2040,8 մետր նիշով Կաբան-գեադըղ (ԺԹ դ. վերջում՝ Кабанъ) գագաթը հասնող լեռնաբազուկից[94]: Այդպիսով տուեալ սահմա-

93 Գետափնեայ այս գիւղի *Աղքեօրփի* (<*Աղ-քեօփրի*) անունը թիւրքերէնից բառացի թարգմանութեամբ նշանակում է «Սպիտակ կամուրջ» եւ, անշուշտ, կապուած է նրա տակ իրարից 0,5 կմ հեռու, Հոչանցի վրայ կառուցուած երկու կամուրջների հետ: Դրանցից աւելի հինը, ըստ պահպանուած խելերի կառուցողական առանձնայատկութիւնների, թերեւս, թուագրելի է ԺԲ-ԺԳ դարերով, իսկ նորը (դեռ կանգուն)՝ ուշ միջնադարով (նկարագրութիւնը տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 156):

94 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 269-270, 279, 324-325 (քարտէզ): Հմմտ. **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 402-403; **Թ. Յակոբեան**, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Եր., 1966, էջ 39; **А. Карагезян**, *К локализации гавара Кашатаг*, էջ 43-44 (Արմէն Ղարագեօզեանը սահմանագծի Հոչանց եւ Շալուայ վտակների ջրբաժան լեռներով անցնող

նագծից դուրս էին մնում Հոչանցի ձախ (հիւսիսային) բարձրադիր ձորալանջին դասաւորուած եւ ցարական Ռուսաստանի 1880-ական թուականների վարչական բաժանման համակարգում Շահսուվարլու-Մինքենդ (=աղահեջքեան Հակ) կենտրոնով գիւղական հասարակութեան մէջ մտնող[95] Աղջաքենդ (ներկայումս՝ Անի), Ալփոուտ (Ալբաուտ «երկրանուան» հետ, ըստ էութեան, նոյնացող անունով, ներկայումս՝ անբնակ) եւ նրանց միջեւ գտնուող Ղոշասու (ներկայումս՝ Դրախտաձոր) գիւղերի տարածքները, որոնք պիտի մտած լինէին Աղահեջքին արեւելքից սահմանակից աշխարհացոյցեան Արցախի Վայկունիք (իսկ ուշ միջնադարում՝ Մաղաւուզ) գաւառի մէջ[96]:

հատուածը մի փոքր աւելի է շարունակում դէպի արեւելք, մինչեւ այդ գետերի հատման կէտը՝ սակայն առանց խնդիրը յատուկ քննարկման առարկայ դարձնելու եւ ուղիղ ապացոյցներ բերելու): Մեծ Հայքի Սիւնիք եւ Արցախ նահանգների միջեւ Հակարի-Հոչանցով անցնող սահմանի իրողութիւնն անտեսելու պատճառով Գեղամ Բադալեանի՝ վերը նշուած աշխատանքում տեղ են գտել Սիւնեաց պատմիչի գիւղացանկում եւ այլ աղբիւրներում յիշատակուած մի շարք տեղանունների՝ պատահական նմանութեան վրայ յենուած համադրումներ (տե՛ս *Աղահնեճի*, *Հայելեան-Հայաքսի*, *Որբորոյ քարի* եւ *Արախիշի* դէպքերը՝ նշ. աշխ., էջ 84, 86-88):

95 Տե՛ս վերեւում, էջ 360:

96 Նշուած գիւղերում վերաբնակիչները հայկական յուշարձանների հետքեր չեն յայտնաբերել (հմմտ. նաեւ **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 159-160), այդ պատճառով հնարաւոր չէ ո՛չ լրացուցիչ փաստարկներով ճշգրտել նրանց մտնելը տուեալ գաւառի մէջ, եւ ո՛չ իսկ վստահ լինել նրանց տեղում

Ուշ միջնադարի ժամանակահատուածի սկզբում Աղահեջքին ամբողջապէս փոխարինած Քաշաթաղ-Քշթաղ *գաւառը, որը հանդէս է գալիս իբրեւ Մելիք-Հայկազեան իշխանատոհմի ժառանգական տիրոյթ*[97] *եւ Սեֆեան Իրանի մի մահալ, բնականաբար, ընդհանուր առմամբ պէտք է ունեցած լինէր նոյն սահմանները, այդ թւում՝ Հոչանցի վերնահովտի հատուածում: Յղելով ԺԷ դ. գերմանացի ճանապարհորդ Ադամ Օլէարիուսին՝ Լէօն թուարկում է Սեֆեան Իրանի Երեւանի բէկլարբէկութեան (պաշտօնական անուանակարգում* Չուխուր-Սաադ*) մէջ մտնող գաւառների (մահալների) հետեւեալ ցուցակը. «Ղափան, Ջուղա, Սկարուս, Սիսիան,* Քեշտաղ, *Զարգիբիլ, Երեւան, Ղըրխ-բուլաղ, Աղստափա, Աբարան, Սկարժէլ, Սաշաթ, Ինջէ, Տաբաք-Մէլեք, Թումանիս, Ալգէթ, Ջիլգեր»*[98]:

հին հայկական բնակավայրերի գոյութեան հարցում:

97 Տե՛ս Մելիք Հայկազ Բ-ի կողմից ձեռք բերուած ԺԵ դարի մի Աւետարանի՝ 1606 թ.-ից յետոյ շարադրուած յիշատակարանում (Ձեռ. ՄՄ 5303, թ. 395բ. բնագիրը՝ ստորեւ, ծնթ. 119): Հմմտ. նաեւ Խնածախ գիւղի հիւսիս-արեւելեան բարձունքին կանգնած խաչքարի երկլեզուեան (նաեւ՝ պարսկագիր) արձանագրութեան հայերէն բնագրում. «Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՇԱՀ ԱԲԱՍԻՆ, ԵՍ՝ ԱՂԱՆ *[թերեւս ուղղելի՝* ԱՂԱ[ՋԱ]Ն, *հմմտ. ստորեւ, ծնթ. 119]*, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՀԱՅԿԱԶԻՆ, ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԱՆՈՒԱՆՂՆ ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԲԱՐԵԽՕՍ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ: Ի ԹՎ[Ա]Կ[ԱՆԻ]Ս ՀԱՅՈՑ ՌԿԹ *[=1620 թ.]: ԵՐԿՐԻՍ ՄՈՅԼՔՆ Պ[Ա]Ր[Ո]Ն ՀԱՅԿԱԶԻՆ Է[Ր]»* (**Մ. Հասրաթեան**, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, էջ 162):

98 Տե՛ս **Լէօ**, *Երկերի ժողովածու*, հտ. III, Եր., 1969, էջ 56:

ինչպէս տեսնում ենք, տուեալ ցուցակում Ալբաուտ *չկայ: Սակայն վերը ներկայացուած 1696 թ. յիշատակարանի վկայութիւնը, համադրուած նախ եւ առաջ 1886 թ. արձանագրուած ցարական վարչական բաժանման պատկերի հետ, գուցէ եւ իրօք բաւարար է՝ համարելու, որ նշուած սահմանահատուածում ինչ-որ պատմական պահի տեղի է ունեցել մի էական փոփոխութիւն, ինչի հետեւանքով Քաշաթաղի գաւառի հիւսիս-արեւմտեան հատուածն անջատուել է նրանից եւ, միացուելով յարակից Աղ*ջաքենդ - Ալփոուտ *գիւղախմբի տարածքի հետ՝ վերածուել նոր վարչա-ւատական միաւորի՝* Ալբաուտ *մահալի: Օլէարիուսի ցանկի համեմատութեամբ Սիւնիքի կենտրոնական ու հարաւային հատուածի գաւառների (մահալների) էական մասնատման-մանրացման պատկեր է երեւում, օր.՝ նաեւ Տաթեւի 1730 թ. պողացուցակից: Այստեղ* Քաշթաղուց *եւ, ըստ ամենայնի, նախկինում աւելի մեծ տարածք զբաղեցրած* Սիսիանու *գաւառների կողքին (նաեւ միւս խոշոր՝* Ղափան *մահալի անուան բացակայութեամբ) թուարկուած են* Գեղուաձորու, Բաղաբերդու, Կաքաւաբերդու *(=Մեղրու),* Մացրու *(=Մանլեւի),* Աճանանու *(=Խոտանանի),* Գիլա-

---

Ըստ Շահ Աբբասի պալատական պատմիչ Իսքանդար Մունշիի ներկայացրած մարզացուցակի՝ *Քըշթաղ* մահալը մտնում էր ոչ թէ *Երեւանի*, այլ *Ղարաբաղի* վելայեթի մէջ (**И. П. Петрушевский,** *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв.*, Ленинград, 1949, էջ 137, հմմտ. էջ 127-142):

բերդու (=*Ճակատէնի, Ջուխուր-եուրդի*), Մաղանջուղու (=*Տանձավերի*), Բարկուշատու (=*Եղավարդի*), Ջանկազուրու (=*Զագեձորի*), Չաւըշտուրու (=*Շէկահողի*), Վերի ձորու (=*Աղուերծի, Որոտանի*) *«գաւառները»* (*բայց* Ալբատուտ, *միեւնոյնն է, չկայ*)[99]:

Բաշաթաղի գաւառի մասնատումը առաւել մեծ հաւանականութեամբ կարող էր կապուած լինել յատկապէս Շահ Աբբաս Ա-ի (1587-1629 թթ.) գահակալութեան ժամանակ լայն թափ ստացած՝ քոչուոր ազնուականութեանն իբրեւ զինուորական ծառայութեան դիմաց վճար հողային տիրոյթներ կամ դրանց վրայ հարկային մասնակի իրաւունքներ բաժանելու իրողութեան հետ: 1959 թ. հրատարակուած Մաշտոցի անուան Մատենադարանի պարսկերէն հրովարտակներից մի քանիսը տեղեկութիւններ են պարունակում Բաշաթաղի (Քուշթասիֆի) *հողատարածքների ժառանգական տիրակալներ Մէլիք-Հայկազեան հայ իշխանների եւ քոչուոր ցեղերին պատկանող հարկատու զինուորականութեան միջեւ արձանագրուած հակամարտութեան վերաբերեալ: Դրանցից մէկում (1609 թ.) Պարսից արքան զգուշացնում էր Թուրք-պարսկական պատերազմի օրերին անհնազանդութիւն ցուցաբերած, սակայն հետագայում ներման արժանացած «դոնուք մարդկանց»՝ իրեն մշտապէս հաւատարմօրէն ծառայած եւ այդ անհնազանդներին հետապնդած Մէլիք Հայկազ Բ-ի նկատմամբ վրէժխնդրական ոտնձգութիւններից*[100]*: Միւսում (1620 թ.) Շահ Աբբասը վերահաստատում էր Մէլիք Հայկազի սեփականատիրական (մուլքային) իրավունքները Բաշաթաղի* (Քուշթասիֆի) *եւ Ղափանի մահալներում գտնուող նրա կալուածքների վրայ*[101]*: Երրորդում (1646 թ. Դեկտեմբեր - 1647 թ. Յունուար) Շահ Աբբաս Բ-ն (1642-1666 թթ.) ազատում էր Բաշաթաղի* (Քուշթասիֆի) *չորս գիւղերը՝ դրանց թիուլատէր ոմն Աբբասկուլի-Սուլթանից բացի նաեւ Ղարաբաղի բեկլարբեկին տրուող պետական հարկի՝ կրկնակիից աւելի բարձրացուած չափից*[102]*:*

Նշուած փաստաթղթերի հրատարակիչ եւ թարգմանիչ Յակոբ Փափազեանի իրաւացի դիտարկմամբ՝ ըստ Ղեւոնդ Ալիշանի 1621 թ. վախճանուած[103] *Մէլիք Հայկազը գրեթէ մին-*

99 *Ժամանակագրութիւն* Ստեփաննոսի Օրբէլեանի /Յաւելուած/, էջ 41-43: Նշուած գաւառանունների մեծ մասը իբրեւ «երկիր» կամ «գաւառ» յիշատակուած է (մէկ կամ միւս տարբերակով) ուշ միջնադարի պատմական երկերում եւ յատկապէս ձեռագրերի յիշատակարաններում:

100 Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը. I. Հրովարտակներ, պր. II, էջ 89-90, 160-162 (վաւերագիր 9):

101 Նոյն տեղում, էջ 99-100, 170-171 (վաւերագիր 15):

102 Նոյն տեղում, էջ 124-125, 192-193 (վաւերագիր 32): Քրիստինէ Կոստիկեանի պարզաբանմամբ՝ մէլիքանիստ *Խանածախ* գիւղից յետոյ փաստաթղթում յիշատակուած են Յակոբ Փափազեանի կողմից չվերծանուած *Վաղազաղուն*, *Բայանդուր* եւ *Հէրիկ* գիւղանունները (մանրամասն՝ տե՛ս վերեւում, ծնթ. 47):

103 **Հ. Ղ. Ալիշան**, *Սիսական*, էջ 248: Մօրուս Հասրաթեանը (*Պատմա-բնագիտական ուսումնասիրութիւններ*, էջ

չեւ կեանքի վերջը ստիպուած է եղել պայքարել իր հողատիրական իրաւունքների նկատմամբ քոչուոր ազնուականութեան ոտնձգութիւնների դէմ[104]*: Յենուելով Շահ Աբբասի պալատական պատմիչ Իսքանդար Մունշիի վկայութիւնների վրայ՝ ուսումնասիրողը նաեւ ենթադրում է, որ Մէլիք-Հայկազեանների հակառակորդները օսմանցիների հետ դաւաճանաբար համագործակցած եւ նրանց պարտութիւնից յետոյ իրենց «շահսեւան» («շահին սիրողներ») հռչակած կըզըլբաշական ցեղախմբերն էին*[105]*: Այս առիթով կարելի է ենթադրել, որ 1886 թ. ռուսական վիճակագրական նիւթերում Մինքենդի գիւղական հասարակութեան կենտրոնի* Շահսուվարլու *անունը*[106]*, որը չի նոյնանում*

163) Մէլիք Հայկազ Բ-ի վախճանը դնում է 1623 թ.:

104 *Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, I. Հրովարտակներ*, պր. II, էջ 171: Որպէս հայ իշխանի եւ տիրապետող մահմեդական տարրի միջեւ շարունակական հակամարտութեան արձագանք՝ ուշագրաւ է իր մանրամասներում թէկուզ եւ խիստ անհաւաստի մի բանաւոր աւանդութիւն, ըստ որի Մէլիք Հայկազի որդին «կամենալով հօր մէլիքութիւնը հէնց նրա կենդանութեան ժամանակ ստանձնել՝ գնացել է շահի մօտ, մահմեդականութիւն ընդունել եւ Ալահվերդի անունով եւ շահի զօրքով եկել հօր դէմ: Սակայն այս միջոցին Մէլիք Հայկազը վախճանուած է եղել: Որդին սկսում է մէլիքութիւն անել եւ շինում է մի մզկիթ, որ մինչեւ այժմ էլ կայ»: Տե՛ս **Ե. Լալայեան**, *Զանգեզուր. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար*, էջ 14:

105 Նոյն տեղում, էջ 161-162: Շահսեւանների մասին մանրամասն տե՛ս **V. Minorsky**, *Shah-Sewan*, - ...Encyclopédie de l'Islam", t. IV, Leiden-Leipzig, 1934.

106 Տե՛ս վերեւում, ծնթ. 360:

մեզ յայտնի որեւէ քրդական կամ թիւրքական ցեղանուան հետ[107] *(Նրա հիմքում ընկած* Շահսուվար *եզրոյթի պարզ իմաստն է՝ «արքայ ձիաւոր, ամենալաւ ձիաւոր»*[108]*), իրականում կարող է առաջացած լինել իրանական* Շահսեւան-ի *թիւրքերէն յօրջորջման մի տարբերակից: Յիշենք նաեւ Զաքարիա Քանաքեռցու յայտնի վկայութիւնը, ըստ որի Շահ Աբբասի օրերում արձանագրուած է քրդական Ղարաչօրլու («Սեւ վրանաւոր») ցեղախմբի թափանցումը Հոչանցի հովիտ («Եւ ելին ի բնակութենէ իւրեանց եւ ցրուեցան, ոմանք՝ յաշխարհն Վրաց, ոմանք՝ յԱղուանս, ի Զակամ, ի Գեանճայ, ի Խաչէն, ի Վարանդ, եւ այլ ուր եւ կարացին: Իսկ կարբեցիքն ելին միահաղոյն... եւ դիմեցին դէպ* յերկիրն Քաշթաղու, *եւ հասին մինչ ի* գիւղն Հոչէս, *եւ անդ բնակեալ էին* սեաւ վրանօք *բազումք տունք Քրտաց...»)*[109]*:*

Այսպիսով, առայժմ եզակի յիշատակութեամբ Ալբաուտ *«երկրանունն», իրօք, կարող է կապուած լինել ԺԷ դ. ընթացքում Աղաւնոյի ու Հոչանցի հովիտներ թափանցել սկսող,* Ալփոուտ *անունը կրած թիւրքական կամ, որ գուցէ աւելի հաւանական է՝ քրդական ցեղի հետ: Ճիշտ է,*

107 Այսրկովկասի թիւրքական եւ քրդական ցեղերի ընդարձակ թուարկումները տե՛ս **И. Шопенъ**, *Исторический памятникъ состояния Армянской области*, էջ 528-538:

108 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, էջ 130:

109 **Զաքարեայ Սարկաւագի** *Պատմագրութիւն*, հտ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 9:

չպէտք է մոռանալ, որ տուեալ տարածքը քոչուորները երկար ժամանակ ներթափանցում էին լոկ իբրեւ լեռնային արօտավայրերի սեզոնային օգտագործողներ եւ, թերեւս՝ «շահսեւան» թիուլատէրեր: Իրաւացիօրէն համարում է, որ միայն «Դաւիթ բեկի ստեղծած ինքնիշխան իշխանապետութեան մարումից եւ Արցախի սղնախների անկումից յետոյ հայ մելիքները կորցրեցին իրենց ազդեցութիւնը վաչկատուն ցեղերի նկատմամբ, իսկ բնիկ հայ տարրը, չկարողանալով դիմակայել թիւրքական եւ քրդական ցեղերի բազմաբնոյթ ճնշումներին, բռնել էր գաղթի ճամփան»[110]: Բայց մեզ հետաքրքրող ենթատեքստի համար կարեւոր է այն, որ եթէ անգամ նորակազմ «Ալփոուտ» (>Ալբաստ) *գաւառի (մահալի) մէջ մտցնում ենք Աղջաքենդի ու Ղոշասուի կողքին գտնուող նոյնանուն գիւղը[111],*

110 **Լ. Յովհաննիսեան**, *Էթնիկական գործընթացները Քաշաթաղի եւ Քարվաճառի գաւառներում 18-րդ դարում եւ 19-րդ դարի առաջին կէսին*, - «Եզերք», N 1, Եր., 2006, էջ 12: Հմմտ. ...В начале XVIII ст. (1720 г.) карабахские мелики восстали против турецкого владычества. Это восстание закончилось разорением армянского населения, в результате чего карабахские мелики потеряли свое влияние над кочевниками. Кочевники овладевали землями оседлого населения и устанавливали границу чуть ли не с каждым двором новой оседавшей группы. В этот период можно было наблюдать такую картину: глубины ущелья заняты осевшими жителями, а окрестные вершины кочевниками" (**А. Алекперов**, *К вопросу об изучении культуры курдов*, էջ 37): Տե՛ս նաեւ **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 126:

111 Այսպիսի վերապահում ենք անում, քանի որ հնարաւոր չէ մինչեւ վերջ բացառել այն տարբերակը, որ մեր *Ալ-*

դա ամենեւին կասկածելի չի դարձնում ալբաստեան-քըշթաղեան Եզնագումեր-Եզնագոմերի *համադրութիւնը ԺԹ-ի դդ.* Ղարաքեշիշ *անունով յայտնի եւ նախկինում, ինչպէս նշեցինք, հայկական եղած լինելու որոշակի նշաններով բնակավայրի հետ: Լիովին իրաւացի է Սամուէլ Կարապետեանը, երբ նկատում է Տաթեւի թեմի 1730 թ. պտղացուցակում Եզնագոմերի հարկաչափի մեծութեան հանգամանքը՝ 6700 միաւոր («ԶՌ ԷՃ»)[112], այն դէպքում, երբ Խանածախի հարկաչափն էր 5500 («ԵՌ ԵՃ»), Խաղնավարինը՝ 4400, Հօչանցինը՝ 3450, Հակինը՝ 3400, Միբիկինը եւ Սպիտակաջուրինը՝ 2900-ական, միւսներինն՝ աւելի պակաս, մինչեւ ամենափոքր հարկաչափն ունեցող Քարագլուխը՝ 1100 միաւոր («Ռ Ճ»)[113]: Այդ հանգամանքը, թերեւս, ամբողջապէս բացառում է Եզնագոմերի համադրման հնարաւորութիւնը ոչ միայն սակաւահող, ժայռոտ լանջին ծուարած եւ ԺԹ-ի դարերում*

բաստ երկրանունը կարող է կապ չունենալ Հոչանցի ձախափնեակի *Ալփոուտ-Արփաուտ* գիւղակի հետ եւ լինել քոչուորների կողմից հայկական *Աղբաթխէրտ* - *Ալվատխէրի* (>Адбадхиръ) ինչ-որ մի յորջորջման արդիւնք: Անկախ դրանից՝ նմանատիպ ձեւով է ծագած թւում *ալվաթար* ցեղանունը, որն արձանագրուած է մեր տարածքի քրդական մի խմբի համար (տե՛ս **Ա. Աւդալ**, *Անդրկովկասեան քրդերի կենցաղը*, էջ 13; **Լ. Յովհաննիսեան**, *Էթնիկական գործընթացները Քաշաթաղի եւ Քարվաճառի գաւառներում*, էջ 12):

112 **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 127:

113 *Ժամանակագրութիւն* **Ստեփաննոսի Օրբէլեանի**, /Յաւելուած/, էջ 42:

ընդամենը 16 տուն ունեցած Ալփուտ գիւղակի, այլեւ (որպէս վարկածային տարբերակներ) Եզնագոմերի սարահարթի փեշերին գտնուող, բայց պակաս օգտագործելի հողեր ու բնակչութիւն ունեցող Քեամալլու, Ջրաղլու եւ Շեյլանլու գիւղերի հետ:

Տեղին նշենք նաեւ, որ մեզ ցայսօր յայտնի էին Քաշաթաղ գաւառի երկու գրչօջախներ՝ Խոզնավարը եւ Խնածախը (վերջինը Ստեփաննոս Օրբէլեանի ժամանակներում մտնում էր Աղահեճք գաւառի մէջ[114]): ՄՄ թիւ 6358 գրչագրի (Աւետարան, բոլորագիր, գրիչ, ստացող՝ Եղիա երէց) յիշատակարանում ունենք. «Արդ, գրեցաւ ս[ուր]բ Աւետարանս ի թվականութեանս Հայկազեան տումարի ՋԼԷ [=1488 թ.], ի հայրապետութեան տեառն Սարգսի, ի յաթոռակալութեան Սիւնեաց Որդանան վարդապետի եւ յաշխարհակալութեանն Եաղուպի... Եւ գրեցաւ ի գաւառիս Քաշթաղուց, ի գէղս, որ կոչի Խոզանավար, ընդ հովանեաւ Ս[ուր]բ Ստեփանոսի

114 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԴ, էջ 375; *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 517; Ձեռ. ՄՄ 6271, թ. 333ա. «...Նորաշինիկ 6, *Խանածախ /տարբ.* Խոնածախ/ 20, Վաղատու /*տարբ.* Վաղաթու = *Պայինդուր*/ 12, Ակարդոն /*տարբ.* Ակարթան/ 10, Խորխոռ 7...»: Միայն առաջին հայեացքից թիւրքերէն յորջորջում թուացող գիւղանուան իրական ստուգաբանութիւնն, անկասկած, կապուած է «ջրատեղ», «լին», «ջրաւազան» իմաստն ունեցող իրանական «խանի/խունի» բառի հետ: Հմմտ., օր.՝ *Инструкция по русской передаче географических названий Ирана*, էջ 134:

Նախավկայիս...»[115]: Նոյն Եղիա երէցն իր ընդօրինակած միւս Աւետարանի (ՄՄ թիւ 4099, բոլորագիր) յիշատակարանում գրել է. «Արդ, գրեցաւ ս[ուր]բ Աւետարանս ի թվականիս ՋԼԹ [=1490 թ.], ի գաւառիս Քաշթաղուց, ի գեղոյս, որ կոչի Խոզանավար, ընդ հովանեաւ Ս[ուր]բ Ստեփանոսի Նախավկայիս եւ այլ բազմահաւաք սրբոցն, որ աստ կան...»[116]: ՄՄ թիւ 7606 գրչագրի (Աւետարան, բոլորագիր, գրիչ՝ Միքայէլ սարկաւագ, ստացող՝ Զաքարայ) յիշատակարանում ունենք. «գրեցաւ ս[ուր]բ Աւետարանս... ի յԱստուածաբնակ եւ յանառիկ ղղեակս Քաշթաղ, ի գօղն Խզնավար, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի Հայոց վերադիտողի, ի թվաբերութեանս Հայոց ՌՃԱ [=1652 թ.]...»[117]: Մարիամ ապաշխարող գրիչն իր հօրեղբօր՝ Մարկոս եպիսկոպոսի[118] համար

115 Ձեռ. ՄՄ 6358, թ. 217բ-218ա: Հմմտ. *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Մասն III (1481-1500 թթ.), կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Եր., 1967, էջ 116:

116 Ձեռ. ՄՄ 4099, թ. 401բ: Հմմտ. *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Մասն III, էջ 148:

117 Ձեռ. ՄՄ 7606, թ. 276բ-277ա: Հմմտ. *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 506:

118 Հնարաւոր է, որ այս 1647 թ. ձեռագրի ստացող *Մարկոս եպիսկոպոսը* որոշ հաւանականութեամբ կարող է նոյնացուել Ծիծեռնավանքի պեղումների ընթացքում յայտնաբերուած աստիճանաձեւ տապանաքարի արձանագրութեան մէջ յիշատակուած *Մարկոս պարոնտէրի* հետ («ԱՅՍ Է ՀԱՆԳԻ›Ի‹ՍՏ ՄԱՐ//ԿՈՍ ՊԱՐՈ/ՆՏ[Է]ՐԻՆ. ԹՎԻ[Ն] ՌՕԻ *[=1621 թ.]*): Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը*,

ընդօրինակած Ներսէս Շնորհալու Տաղերի (ՄՄ թիւ 4281, բոլորագիր) յիշատակարանում նշում էր. «Գրեցաւ զայս ի յերկիրս Քաշթաղու, ի գեղջս Խանածախ, ընդ հովանեաւ Ամենափրկչիս, ի թվականիս Հայոց ՌՂԶ-ին [=1647 թ.]...»[119]: Վերջապէս իբրեւ արտագրութեան

Նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը, - «Հանդէս ամսօրեայ», ՃԺԵ տարի, Վիեննա, 2000, էջ 189, ծնթ. 94 [այս ժողովածոյում էջ 208]; **Յ. Սիմոնեան**, **Յ. Սանամեան**, *Ծիծեռնավանք*, - «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», Եր., 2001, էջ 204: Նկատենք, որ Տաթեւի արքեպիսկոպոսարանում այդ անունով գահակալ յայտնի չէ, ուստի մեր Մարկոսը, գուցէ, եղել է Քաշաթաղի գաւառի *եպիսկոպոսը* (հմմտ. *Պատմութիւն Նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910 /Յաւելուած/, էջ 525-534; **Ա. Յակոբեան**, նոյն տեղում):

119 Ձեռ. ՄՄ 4281, թ. 261ա: Հմմտ. *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 256: Այս եւ նախորդ քաշաթաղեան գրչագրերի յիշատակարանների տուեալները առաջին անգամ ամփոփուած տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, *Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը*, Վիեննա, 1936, էջ 183-184, ծնթ. 1: *Քաշաթաղ* գաւառը յիշուած է նաեւ հետագայի մի ուշագրաւ յիշատակարանում՝ շարադրուած Մէլիք Հայկազ Բ-ի ձեռք բերած Աւետարանի (բոլորագիր, 1495 թ., Վայոց ձորի Վերին Նորավան ուխտ) վերջում 1606 թ. յետոյ, առանց տեղի յիշատակման (բայց, հաւանաբար, Խնածախ). «Զվերջին ստացող սբ Աւետարանիս՝ զպարոն Հայկազ աղէն, որդի ազատաց ազատածնի, ստացաւ սբ Աւետարանս ի հալալ ընչից իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց, հաւրն՝ պարոն Հախնազարին, պապին՝ պարոն Հայկազին, եւ մաւրն իւր Սավարին եւ մամին՝ Շամամին, եւ եղբօրն՝ Աղաջանին, եւ նորաբողբոջ դեռաբուսիկ վարդափթիթ որդոցն՝ պարոն Աղաջանին, պարոն Հախնազարին, պարոն Գասպարին, պարոն Նազարին, եւ դստերացն... Եւ Շահ Ապասն խիստ սիրեալ, տուեալ խալաթ եւ

վայր նոյն գիւղն է նշուած 1693 թ. ընդօրինակուած, նրբագեղ մանրանկարներով ու կազմով մագաղաթեայ Աւետարանի (ՄՄ թիւ 7840, բոլորագիր, գրիչ՝ Եփրեմ քահանայ, ստացող՝ Մէլիք Հախնազարի կին Մահփարի խաթուն) յիշատակարանում. «Գրեցաւ հազար Ճ-որդի քառասուն երկ[րո]րդ-եր[ո]րդ ամի, ձեռամբ Եփրեմ մեղասիրի՝ անուամբ միայն քահանայի... յիշատակ անջնջելի Մահփարէի երկիւղածի, ի դուռն Ս[ուր]բ Ա[ստուա]ծածնին, որ անուանի Նորակնունք, ի գեօղն, որ է Խանածախ»[120]: Ի դէպ, այս յիշատակարանի սկզբում ունենք նաեւ ԺԷ դ. երկրորդ կէսի Մէլիք-Հայկազեան իշխանների մասին եզակի տոհմաբանական տուեալներ պարունակող հետեւեալ հատուածները. «Արդ՝ տեսանելով... մեծահաւատին եւ Ք[րիստո]սասիրի անուն Մահփարի, որ է տիկին մեծին Մէլիք Հախնազարին, որդւոյն Մէլիք Գասպարին[121] եւ թոռն պարոն Հայկազին,

պարոնութիւն *երկրիս Քաշթաղոյ* որպէս ինքն կամէր զտասանորդն եւ զհարկն...» (ձեռ. ՄՄ 5303, թ. 395բ, հմմտ. *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Ա (1601-1620 թթ.), Կազմեցին **Վ. Յակոբեան**, **Ա. Յովհաննիսեան**, Եր., 1974, էջ 206-207):

120 Ձեռ. ՄՄ 7840, թ. 338ա-բ:

121 Այս *Մէլիք Գասպարը*, ի տարբերութիւն 1606 թ. յետոյ գրուած յիշատակարանի տուեալների (տե՛ս վերեւում, ծնթ. 119), հանդէս է գալիս իբրեւ Մէլիք Հայկազ Բ-ի *աւագ* որդին նաեւ Խնածախի գերեզմանատանը գտնուած իր մօր տապանաքարի արձանագրութեան մէջ (Մօրուս Հասրաթեանն ընթերցել էր այն 1926 թ.): Այն բերում ենք ամբողջութեամբ՝ քառակուսի փակագծերում լրացնելով միայն պատույ նշանով յապաւում-

վասն որոյ եւ գայս Մաշփարի խաթունն՝ գուստր Բունիաթին ի գեղջէն՝ Շինաթաղ կոչեցեալ, սիրաշօժար... փափագող եղեւ մարգարտիս մեծագնոյ... Ողորմի՛ Տ[է]րն ամ[ենայն]ի հոգւոց սորին ստացողի բարեպաշտօն Մաշփարէի եւ ընտանեացն ամ[ենայն]ի: Այլ եւ այրւոյն իւրում մեծի՝ իշխան, պարոն եւ մեծազգի Հախնազարի բարեպաշտի՝ քրիստոնէից թագպարծանքի: Նաեւ որդւոցն ամ[ենայն]ի՝ Պախտամ, Աղաջան եւ Պհաթուրի, եւ Աղամի՝ բուսեալ բողբոջի: Դ[ար]ձ[եա]լ ծնօղաց Մաշփարէին՝ Բինիաթի, Պակիսէի, այլ եւ եղբարցն ամ[ենայն]ի՝ տ[է]ր Գրիգոր ք[ա]հ[անայ]ի, Շապանի եւ Յովանէսի...»[122]:

ները. «ՄԵՔ՝ ՈՐԴԻՔ ՊԱՐՈՆ ՀԱՅԿԱԶԻՆ՝ Գ[Ա]ՍԲ[Ա]ՐՍ, Շ[Ա]ՀՆ[Ա]Զ[Ա]ՐՍ, ԲԷԿՆԱԶԱՐՍ, Կ[Ա]ՆԿ[Ն]ԵՑՈՒՑԱՔ Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉ/Ս ‹Ի› ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳ[Ո]Յ ՄԱՒՐՆ ՄԵՐ[Ո]Յ /*ԳՈՒԼԱԲԻ*Խ[Ա]ՆԻՒՆ, ՈՐ Բ[Ա]Զ[ՈՒ]Մ ԵՐԱԽՏԻՍ // ՈՒՆԻ ‹Ի› Վ[Ե]Ր[Ա]Յ ՄԵՐ: ԼԸ ԱՄ ԱՅՐԻ ՆՍՏԱՒ, Բ[Ա]Զ[ՈՒ]Մ ԱՆԳ[Ա]Մ Ի ԴՈՒՌՆ Թ[Ա]Գ[ԱՒՈ]Ր[Ա]Ց ԵՒ Խ[Ա]ՆԵՐ[Ա]Ց // ԳՆԱՑ ԵՒ, ՄԵՐ Հ[Ա]ՅՐԵՆԻՔ Մ[ՈՒ]ԼՔԵՐՆ ԱՆԿԷ[Ա]Լ ԷՐ Ի ՁԵՌ[Ա]Ց. Թ[Ա]Գ[ԱՒՈ]ՐԷՆ Ղ[Ա]Բ[Ա]Լ[Ա]Յ ԷԱՌ ԱՅՍՔ[Ա]Ն ԳԵՂԻ՝ ԽՆ[Ա]Ծ[Ա]Խ, Պ[Ա]ՅԻՆԴ[ՈՒ]Ր, ԽՋՆ[Ա]Վ[Ա]Ր: // ՓՈԽԵՑԱՒ Ի ԹՎԻՍ ՌՃ /=*1651 թ.*/»: Տե՛ս **Մ. Հասրաթեան**, *Պատմա-բնագիտական ուսումնասիրութիւններ*, էջ 164:

122 Նոյն տեղում, թ. 337ա-բ: Այս բնագրի՝ «*մեծին* Մէլիք Հախնազարին, *որդւոյն Մէլիք Գասպարին* եւ *թոռն* պարոն Հայկազին» ուղղակի տոհմագրական ցուցման շնորհիւ մասնաւորապէս ակնյայտ է դառնում, որ անհրաժեշտ է սրբագրում կատարել Միրիկ գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցու շինարարական արձանա-

Եւ այժմ, այսպիսով, շնորհիւ 1691 թ. արտագրուած Մաշտոց ծիսարանի (ՄՄ թիւ 6725, բոլորագիր, գրիչ՝ Վրդանէս երէց) վերջում հինգ տարի անց՝ 1696 թուականին Սարգիս երէցի աւելացրած յիշատակագրութեան՝ մենք ունենք Սիւնեաց Քաշաթաղ գաւառի երրորդ գրչօջախի անունը՝ Եղնագումեր *(=Եղնագոմեր): Թւում է, թէ հնարաւոր չէ կասկածել, որ տուեալ արտագրութիւնը կարող էր կատարուած լինել մէկ այլ վայրում, քանի որ այդ դէպքում վերը բերուած Սարգիս երէցի՝ ընդամէնը հինգ տարի անց շարադրուած եւ չափազանց մանրակրկիտ յիշատակարանում կ'ունենայինք գրքի տեղափոխման մասին որեւէ չնչին ծանօթագրում:*

Ներկայ աշխատանքում մեզ հետաքրքրող խնդիրների առումով ուշագրաւ են նաեւ ՄՄ թիւ 6725 գրչագրի միւս հետագայ, արդէն նօտրագրով եւ պակաս գրագիտութեամբ

գրութեան նախկին վերծանութիւնների մէջ: Վիմագրում շինարարութեան գլխաւոր մեկենաս Մէլիք Հախնազարի հօր յիշատակումը կատարուած է «ՀԱՅՐՆ ԻՄ ՊՐՆ ԳՍՊԻՆ» գրութեամբ, որի վերջին բառի Պ տառը ներսից կցագրուած է նախորդող Ս-ի աջ ստեղնին: Սեդրակ Բարխուդարեանն այստեղ հապճէպ վերծանութեամբ ստացել է իրականութեան հետ կապ չունեցող ՀԱՅՐՆ ԱՊՐՀԱՄԻՆ ընթերցումը (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 196, N 703), իսկ Սամուէլ Կարապետեանը (*Հայ մշակոյթի յուշարձաններ*, էջ 134), չնկատելով կցագրումը, վերականգնել է Պ[Ա]Ր[Ո]Ն [ՍԱՐ]ԳՍԻՆ անուն: Այժմ պարզ է, որ Պ[Ա]Ր[Ո]Ն վերականգնումը պէտք է կատարուի Գ[Ա]ՍՊ[ԱՐ]ԻՆ ձեւով:

գրուած յիշատակարանները: Դրանցից առաջինը շարադրուած է յաջորդ էջի (թ. 128բ) սկզբից. «Յիշ[ա]տակ է Մաշտոցս Իպակի որդի տ[է]ր Պօղոսին եւ իւր որդոյն Մէլիքսէթին եւ զաւակացն իւր Մարեանին, Նազլուխանին, Յուրիխանին... Գրեցաւ տ[է]ր Մովսէսի որդի Զաքարայ իրիցու ձեռամբն, ի թվին ՌՃՀԱ [=1722 թ.], եւ Մայիսի Զ, օրն՝ կիրակի»: Ապա՝ այլ նոտրագրով. «Պաջառ[123] գիրոս այս է, որ է՝ թվին ՌՃՁԴ [=1735 թ.], Հոկտեմբերի ԺԶ-ումն, որ ես՝ Իփակի որդի Պօղոս էրէցըս վաստեաթ արի իմ միայմօր որդի Մէլիքսէթին, որ Տ[է]ր Ա[ստուա]ծ ուրն բարի զաւակ տացէ, որ քահանութիւն արժանի լինի, այս ձեռացայգիր Մաշտոցըս յիշատակ մինայցէ, որ այս Մաշտոցովըս կարի եւ քահանութիւն կատարէ...[124]»: Եւ այս վերջինից յետոյ է գրուել նոտրագիր մի կարճ յիշատակագրութիւն, որը 127ա էջում յաջորդում է բուն գրչի յիշատակարանին. «Այս Մաշտոցս տէր Պօղոսն իւրն թոռնոյն վահիթ արայր, որ եւ յիշատակ մնայ, որ ողորմի ուրն»[125]: Նկատենք, որ եթէ բերուած նախավերջին յիշատակագրութեամբ Պօղոս երէցն այս ձեռագիր Մաշտոցը հացկատիրոջը փոխանցելու համար վաքֆեաթ (արաբ. միջնորդ) էր «անում» իր որդի Մէլիքսէթին, ապա վերջին յիշատակարանում նշւում է տէր Պօղոսի կողմից այն իր թոռանը (առանց անունը տալու) վաքիթ անելու մասին: Նշանակում է, երկու գրառումների միջեւ ժամանակային միջակայք է եղել, հետեւաբար երկրորդի ժամանակը պէտք է վերագրել 1735 թուականին յաջորդող ինչ-որ տարուայ: Աղբիւրագիտական այս տուեալը օբյեկտիվօրէն կարեւոր է. դրա հիման վրայ առաւել փաստարկուած է դառնում այն պատկերացումը, որ հետագայում հայազրկուած Եղնագոմեր գիւղում (ԺԹ դ. հաստատապէս քրդաբնակ) հայկական կեանքը շարունակուել է առնուազն մինչեւ ԺԸ դ. կէսերը, յամենայն դէպս՝ 1735 թուականից յետոյ:

Ուխտաձորի վիմագրերին վերադառնալուց առաջ նշենք նաեւ, որ ԺԹ դ. վերջերին Եր. Լալայեանը յիշատակում էր Զրաղլուն նախկինում հայաբնակ այն գիւղերի շարքում, որտեղ խոտանոցների վերածուած եկեղեցիներ էին պահպանուել. «Հերիկի, Մերիկի, Բայենդուրի, Հոչասի, Փչանիսի, Զրախլուի եկեղեցիները խոտանոցներ են դարձուած, Կատոսի, Սունասարի, Ղորդղաճիի եկեղեցիները իբր փարախ կամ գոմ են ծառայում»[126]: Ներկայումս այդ եկեղեցու հետքերը չեն նկատւում, սակայն թւում է, թէ այն եղել է մօտաւորապէս 1970-ականներին կառուցուած գիւղական խանութի երկաթբետոնեայ շէնքի տեղում: Վերջինիս կողքի փոքրիկ

123 Բառամիջի Ջ տառը գրուած է ուղղումներով (=*պառճառ*):

124 Բնագրի շարունակութիւնը բարոյախրատական բարոզ է:

125 Վերջին *«ուրն»* (=*իւր*) խօսուածքային ձեւը տե՛ս նաեւ վերեւում, Աղբրաձորի պարզ խաչքարի վիմագրում (ծնթ. 5):

126 Ե. Լալայեան, *Զանգեզուր*, էջ 50:

պուրակում, որը, հաւանաբար, առաջացել է եկեղեցուն կից հանգստարանի տեղում, ասես հրաշքով պահպանուել են մեծ չափսերով եւ գեղեցիկ քանդակազարդերով 4 օրօրոցաձեւ տապանաքարեր (մէկը՝ ուղիղ կիսով չափ): Վիմագրեր կան նրանցից երկուսի վրայ:

Առաջինը օրօրոցաձեւ, արեւելեան ճակատին խաչի գեղազարդ քանդակ ունեցող տապանաքարի վերեւի մասում է, երեք տողով: Հիմնական բնագրի երկու տողերը փորագրուած են ուռուցիկ վերնամասի երկայնական առանցքից ներքեւ, դէպի հարաւային կողը, իսկ թուականը պարունակող 3-րդ տողը՝ այդ առանցքից դէպի հիւսիս: Տառերի փորագրումն աչքի է ընկնում մեծ կանոնաւորութեամբ, եւ վերծանութիւնը դժուարութիւն չի յարուցում (տե՛ս պատկեր 23).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԾԱՏՈՒՐ՝ ՈՐԴԻ Վ
-{Ա}ՐԴՈՒՄԻՆ, ԹՈՌ ԴԻՐՈՒՄԻՆ:
ԹՎ‹ԻՆ› ՌԾԷ (=1608 թ.):

Երկրորդ տողի սկզբում միակ լրիւ հողմնահարուած տառը որպէս Ա (եւ այդպիսով՝ հանգուցեալ Ծատուրի հօր անունը՝ Վարդում) վերականգնելը գրեթէ կասկած չի յարուցում.

Հր. Աճառեանին յայտնի են Վարդում արական անձնանուան յիշատակման չորս դէպքեր ԺԵ-ԺԸ դարերից[127]:

Միւս երկու՝ Ծատուր եւ Դիրում անունների մէջ բոլոր տառերի փորագրութիւնը շատ յստակ է: Անսպասելի է առաջինի վերջում սեռականի «ի» կամ «ին» վերջաւորութեան բացակայութիւնը (ԾԱՏՈՒՐ‹ԻՆ›), որը կարելի է, թերեւս, պարզ տեխնիկական վրիպում համարել: Երկրորդ անունը արձանագրուած չէ Հր. Աճառեանի բառարանում: Սակայն կարելի է ենթադրել, որ հայկական միջավայրում այս Դիրում անունը կազմուել է Դուրմիշ արական անձնանուան նմանութեամբ, որը թիւրքերէն durmiš բառից է՝ «մնալ», «կանգուն», «յարատեւ» նշանակութեամբ[128]:

Միւս վիմագիրը փորագրուած է աւելի մեծ չափսերով մի տապանաքարի վերեւի մասում, երկայնական երկու եզրերով, մէկ տողով: Ցաւօք, ի տարբերութիւն նախորդի՝ այստեղ հիւսիսային կողմի բնագիրը հողմնահարուած-քայքայուած է ամբողջովին, իսկ հարաւային կողմինը՝ մասնակի: Ինչպէս երեւում է գրչանկարից, փորագրումը եւս աչքի չի ընկնում կանոնաւորութեամբ ու խնամքով (տե՛ս պատկեր 24).

127 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, էջ 116:

128 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, Եր., 1944, էջ 83:

Արդիւնքում՝ հարաւային կողմի բնագրից հնարաւոր է վերծանել միայն միջնամասի {...} ԵՄ ՇԱՀ ԿԱՆԿ‹Ն›ԷՑԻ {...} բառերը, ընդ որում՝ Ա եւ Հ տառերի համար որոշ կասկածով[129]*: Դրանից յետոյ գրուած տողավերջի 4 տառերը մեծ թեքականութեամբ (որոշ փորուածքներ համարելով քարի վնասուածքներ) հնարաւոր է ընկալել իբրեւ* ՁՀ‹Ա›ՉՍ (=գծաչս)*: Իսկ ԵՄ-ին նախորդող տողասկզբի 8 կամ 9 տառերի ուրուանկարների վերծանութեան որեւէ տարբերակ չենք գտնում:*

6. ԳՈՂԹԱՆԻԿ

Գողթանիկ անունը ԺԹ-Ի դարերում Փիրջահան *կամ* Փիրջան *յորջորջուած, Շալուայի ու Հոչանցի միախառնման տեղից 8 կմ վեր, Հակարիի այդ երկու օժանդակների ջրբաժան սարահարթի բարձրունքների արեւելեան փեշերից դէպի Շալուայ հոսող համանուն առուակի ակունքի տակ փռուած գիւղին տրուել է մեր օրերում, ազատագրումից ու վերաշէնացումից յետոյ: Գողթանիկից ընդամենը 4 կմ հիւսիս է գտնւում ԺԹ դարում եւ Ի դ. սկզբին շատ յայտնի Ալիղուլի (նաեւ՝* Ալղուլիշէն, Ալիղուլիքենդ) *գիւղը (ներկայումս՝ վերաշէնացուած* Ղազարապատ)*, որի բացառապէս հայ բնակչութիւնը Հակարիի վերնահովտում վերջինն է Ի դարի սկզբին (1905 եւ 1918 թթ.) ենթարկուել կոտորածի ու բռնագաղթեցուել իր բնօրրանից. ալիղուլեցիներն ի վերջոյ ապաստան են գտել հիմնականում Ստեփանակերտում (այն ժամանակ՝* Վարարակն-Խանքենդի)[130]*: Իսկ չորս կմ դէպի հարաւ գտնւում էր Սեիդլար գիւղը (ներկայումս՝ վերաշէնացուած* Գանձայ)*, որտեղ դեռեւս ԺԹ դարի սկզբներին (ըստ 1823 թ. կամերալ ցուցակագրութեան) երեք հայազգի ընտանիք էր ապրում*[131]*:*

---

129 Հր. Աճառեանն ունէր տեղեկութիւններ *Շահ* արական անձնանուան յիշատակման 4 դէպքի մասին (**Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, էջ 102-103): Տե՛ս նաեւ *Դիւան հայ վիմագրութեան*, պր. III. *Վայոց Ձոր*, էջ 109, N 308 (1329 թ.), էջ 173, N 529 (անթուական):

---

130 Ալիղուլիի մասին տուեալների լրիւ պատկերը տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 173-174: Հմմտ. նաեւ վերջին ժողովածոյում. *20-րդ դարասկզբին ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հայկական գիւղերի բնակիչների բռնի տեղահանման 100-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերը*, Բերձոր, 2005: Հետաքրքրական է մասնաւորապէս էջ 90-ում հրապարակուած տեղեկատուութիւնը (**Գ. Մ. Բաղալեան**, *Աղահեճք-Քաշաթաղի տեղանունների պատմութիւնից...*, ծնթ. 14). «Ալիղուլիշէնի հայկական անուանումը եղել է *Սարէնշէն* (*Սարիշէն*): Այս ուշագրաւ տեղեկութիւնն անձամբ մեզ հաղորդեց 1908 թ. ծնուած, բնիկ Ալիղուլիշէնցի *Գուրգէն Յակոբեանը* 2005 թ. Հոկտեմբերի 16-ին Բերձորում... (Գ. Բ.)»:

131 Տե՛ս **Լ. Յովհաննիսեան**, *Էթնիկական գործընթացները Քաշաթաղի եւ Քարվաճառի գաւառներում...*, էջ 13 (յղումը՝ ՀԱԱ, ֆ. 93, ցուց. 1, գործ 163): Քաշաթաղի Գանձայ գիւղի մօտակայ բրոնզեդարեան դամբարանների պեղումների մասին (որոնց հարուստ գտածոները պահւում են Բերձոր շրջկենտրոնի երկրագիտական թանգարանում) տե՛ս **Ա. Գնունի, Գ. Խաչատրեան**, *Դաշտային հետազօտութիւններ Շալուայ գետի աւազանում եւ Հոչանցի ձախ ափին*, - «Հանդէս ամս-

Գողթանիկի մի տան պատերի հիմքի մէջ իբրեւ շինաքար օգտագործուած վիճակում հայկական խաչքարերի որոշ անարձանագիր կտորներ էր նկատել դեռեւս Սամուէլ Կարապետեանը[132]: Հետագայում գիւղացիները խաչքարերի ու տապանաքարերի բազմաթիւ ջարդուած կտորներ գտան դրանից ներքեւ, Ի դ. 30-ական թթ. կառուցուածի տպաւորութիւն թողնող գիւղական այրուած փոստատան արեւելեան կողմի պատի փլուզումից առաջացած քարակոյտի ու նրան կից բակերում տնտեսական շինութիւնների պատերի մէջ: Կարելի է ենթադրել, որ գիւղի եկեղեցու հիմքերը մնացել են հէնց փոստատան տակ, ուստի իմաստալից կը լինէր փոքրիկ կանոնաւոր պեղումներ կատարել այդ վայրում[133]:

Արձանագրութիւն է կրում Գողթանիկում պահպանուած տապանաքարերից միայն մէկը,

օրեայ», ՃԺԷ: տարի, Վիեննա-Եր., 2003, էջ 258-261:

132 Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 174:

133 Հայկական եկեղեցու տեղում ու նրա քարերով փոստատան շէնք է կառուցուել նաեւ Գողթանիկի դիմաց, Ծալուայի ձախափնեայ ձորալանջի սարահարթում փռուած Արտաշաւի (ԺԷ դ. զոյգ յիշատակարաններում *Արտաշիրի*) գիւղում: Այդ փլուած շինութեան քարակոյտերից եւ կողքի պուրակի հողից հանուել են արդէն մէկ տասնեակի չափ խաչքարերի ու տապանաքարերի ջարդուած կտորներ: Պահպանուած առայժմ միակ, 1481-ի թուագրումով վիմագրի (վերեւից ու ներքեւից ջարդուած խաչքարի աջ կողին, սկզբից ու վերջից՝ պակասաւոր) ընթերցումը տե՛ս Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 176:

որը քրդարնակների կողմից չորս կտորի է բաժանուել եւ այդպէս վերածուել պատի շինաքարի: Չորսից առայժմ յայտնաբերուել են միայն երկուսը՝ առաջինը եւ երրորդը, որոնց վրայ երկու տողով ընթերցւում է.



Վերծանութիւնը հնարաւոր է այսպէս.

Ա/ՅՍ Է ՏԱՊ/ԱՆ ՄԸԿԸՐԴ/ՈՒՄԻ Ն/,

ՈՐԴ/ՈՅ ..../ԻՆ: ԹՎԻ‹Ն› :ՌՄ: (=1751 թ.):

Արձանագրութիւնը գրուած է դասական երկաթագիր ուղիղ եւ համաչափ տառերով: Իւրօրինակ նախադասութիւնների (=բառախմբերի) միջեւ պահպանուած երկու խաչերը եւ թուականից յետոյ գրուած աւարտի նշանը՝ վերջակէտերի մէջ առնուած կէտորակ[134], վկայում են, որ փորագրողը յատուկ ուշադրութիւն է դարձրել իր աշխատանքի գեղագիտական կողմին: Այդպիսով, տառերից որեւէ մէկի ընկալումը կասկած չի յարուցում, բացառութեամբ բնագրի 2-րդ տողի սկզբում առկայ կցագրի, որի մէջ յստակ Ր-ի հետ անսպասելիօ-

134 Այս նշանը, գուցէ, ոճաւորուած գլխատառ Հ-ի է նմանւում, սակայն ոչ մի կերպ չի կարող վերծանուել իբրեւ այդպիսին (բնագրում ուրիշ Հ չի պահպանուել), քանի որ չափերով փոքր է միւս տառերից եւ նման ոճաւորմամբ Հ-ի փորագրման օրինակ չունենք ո՛չ ԺԸ-ԺԹ, ո՛չ էլ այլ դարերի վիմագրերում:

րէն կցագրուած են երեւում Ա-ն եւ Ո-ն[135]: Անկասկած, բնագիրը ճիշտ վերարտադրելու իմաստով դա հնարաւոր չէ: Ուստի յաջորդող ՐԴ{...}-ն հաշուի առնելով՝ պէտք է ենթադրել, թէ փորագրողը պարզապէս տեխնիկական վրիպակ է թոյլ տուել ՈՐԴԻ բառի սկզբում Ր տառին աջեւից Ա կցագրելով. այնուհետեւ նա նկատել է սխալը եւ կցագիրն ուղղել Ո+Ր-ի, սակայն, բնականաբար, այլեւս ոչ մի ձեւ չունենալով՝ քողարկելու խոտանուած Ա-ի՝ արդէն քարին տրուած տառին մասնիկները[136]: Թւում է, թէ նմանատիպ վրիպման է վերագրելի նաեւ 1-ին տողի միակ Դ-ի ձախ կիսաստեղնի տակ առկայ ուղղաձիգ փորուածքը, որը դէպի վեր կիսատ է թողնուած[137], քանի որ սխալն, ըստ երեւոյթին, աւելի շուտ է նկատուել:

Բնագրի՝ Ա-ով սկսուելը եւ ապա կորսուած քարակտորից յետոյ, բառաբաժան խաչից առաջ

135 Ի դէպ, նկատելի է, որ փորագրողը հակում է ունեցել կցագրեր կիրառելու նկատմամբ: 2-րդ տողի բառաբաժան խաչից յետոյ ԹՎԻ‹Ն› բառը վերարտադրելու համար նա, կարծես թէ, կցագրել է ոչ միայն կարծրատիպային Թ+Վ տառերը, այլեւ յաջորդող Ի-ն (մեզ հասած բնագրում ուրիշ Ի չի պահպանուել):

136 Ի դէպ, նոյնանման Ո-Ա վրիպման-ուղղման մեր ժամանակների մի օրինակ կարելի է տեսնել Երեւանի Կոմիտասի անուան զբօսայգու պանթէոնում Թորոս Թորամանեանի տապանաքարի վրայ:

137 Քանդակագործները ներկայումս էլ տառերը փորագրում են, որպէս կանոն, ներքեւից դէպի վեր ուղղութեամբ (խորհրդատուութեան համար երախտագիտութիւն եմ յայտնում քնձորցի-գիւմրեցի քանդակագործ Յովհ. Մկրտչեանին):

առկայ ԱՆ տառերը յուշում են, որ արձանագրութեան սկզբում մեծ հաւանականութեամբ գրուած է եղել «Ա{յս է տապ}ան» կարծրատիպը (իհարկէ, բառավերջի երկու տառերի հիման վրայ մեր կողմից վերականգնուած «{տապ}ան»-ի փոխարէն կարող էր լինել նաեւ «{դամբ}ան» բառը):

1-ին տողի բառաբաժան խաչից յետոյ փորագրուած կցագրում կարող են միացուած համարուել ինչպէս Մ+Ա (կամ Ա+Մ), այնպէս էլ Մ+Ը տառերը (Ը է փորագրուած նաեւ յաջորդող Կ-ից յետոյ): Երկրորդ դէպքի ընդունման պարագայում բնագրում յիշատակուած հանգուցեալի անուան վերծանումը որպէս «ՄԸԿԸՐտում» արական անձնանուան մի տարբերակ (զոյգ գաղտնավանկ Ը-երի գրառումով եւ Տ-ի փոխարէն Դ-ով), կարծես թէ, խնդրառու չէ՝ գոնէ պակասող տառերը տապանաքարի երկարութեան քառորդ մասի մէջ տեղաւորելու յարմարութեան առումով: Հր. Աճառեանը ՄԿՐՏՈՒՄ բառայօդուածում գրում է. «...<հայ. մկրտում (փխ. մկրտութիւն) բառից, ակնարկութեամբ Յիսուսի մկրտութեան Յորդանան գետում, ինչպէս ունենք Համբարձում, Երեւում: Հնագոյն յիշատակութիւնը այս անուան՝ 1652 թուից է... ապա գալիս են 1687 թ. ..., 1688 թ. ..., 1693 թ. ..., 1698 թ. ... եւ այժմ էլ գործածական է Կովկասում»[138]: Մեր վիմագրի թուագրումը

138 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, էջ 415:

Հայոց ՌՄ, այսինքն՝ Ք. յ. 1751 թուականով, լիովին համահունչ է նրա դիտարկմանը: Ցաւօք, քառատուած տապանաքարի երկրորդ, առայժմ չգտնուած կտորի վրայ է գրուած եղել, ուստի եւ կորսուած է արձանագրութեան բնագրում յիշատակուած միւս անունը, այսինքն՝ Մրկըրդումի հօր: Նկատի ունենալով պակասող քարակտորի երկարութիւնը՝ կարելի է միայն ենթադրել, որ դա պէտք է համեմատաբար կարճ անձնանուն եղած լինէր՝ բաղկացած առաւելագոյնը 4-5 տառից:

Յաւարտս՝ հարկ է յատուկ նշել, որ Գողթանիկի վիմագիրն իր համեմատաբար ուշ թուագրումով (1751 թ.), իրականում չափազանց մեծ պատմա-աղբիւրագիտական արժէք ունի: Այլեւայլ հիմքերի կողքին այն դառնում է առարկայական կարեւոր ապացոյցներից մէկը՝ փաստօրէն համարելու, որ Հակարիի վերնահովտի հետագայում շուրջ 200 տարով իր բնիկներից զրկուած բնակավայրերում հայերն ապրել են ընդհուպ մինչեւ ԺԸ դ. երկրորդ կէսը: Եւ ի յաւելումն՝ վիմագրի փորագրման բարձր որակը թոյլ է տալիս նաեւ դիտարկել տուեալ տարածքում գրեթէ համատարած հայաթափմանը նախորդած դարաշրջանում հայկական կեանքի լիարժէքութեան իրական բարձր աստիճանը:

VI

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՒ ՈՒՏԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ ԱՆՏԻԿ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ

Աշխարհացոյցեան Մեծ Հայքի 15 նահանգներից 10-րդի՝ Արցախի *անուան առաջին յիշատակութիւնը պահպանուել է մ. թ. ա. Ա դ. վերջում ստեղծագործած ամասիացի յոյն նշանաւոր մատենագիր Ստրաբոնի «Աշխարհագրութիւն» երկասիրութեան մէջ: Այն տեղ է գտել հէնց* Հայաստան-Արմենիա *երկրի նկարագրութեան հատուածում՝ XI գրքի XIV գլխում (պարագրաֆ 4) եւ մեզ է հասել որոշակիօրէն գրափոխութեան ենթարկուած* Օրխիստէնէ *(Ὀρχιστηνή <* Ὀρτσιχηνή - Օրտսիխէ՞նէ) ձեւով*[1]:

1 **Strab.** XI, XIV, 4: Հմմտ. **Г. А. Капанцян**, *Chetto-Armeniaca*, Ер., 1931, էջ 104; **Ա. Շ. Մնացականեան**, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը*, Եր., 1966, էջ 259-262; **Բ. Ուլուբաբեան**, *Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան (V-VII դդ.)*, Եր., 1981, էջ 6-7; *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 1, Եր., 1986, էջ 506; **Բ. Յարութիւնեան**, *Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը*,- «Պատմա-բանասիր. հանդէս», 1994, թիւ 1-2, էջ 260; **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, հտ. I, Եր., 1998, էջ 184-185; **Ա. Հ. Ղարագեօզեան**, *Սիւնիքի տարածքը եւ ազգաբնակչութիւնը հին եւ միջին դարերում*, - «Լրաբեր հաս. գիտութիւնների», 2002, թիւ 1, էջ 113-116:

Ըստ աշխարհագէտի ենթատեքստի՝ Հայաստանի Փաւէնէ *կամ* Ֆաւէնէ *(Φαυηνή. ձեռագրերում՝ նաեւ Φαυνηνή* - Փաւնէնէ, *Φανηνή* - Փանէնէ), Կոմիսէնէ *(Κωμισηνή) եւ* Օրխիստէնէ *(կամ* Օրքիստէնէ) *երկրամասերը (յուն.* եպարխիա - *բառացի՝ «գաւառ») յիշուած են Արաքսի եւ Կուրի գետակցից Կուրի ափով դէպի հիւսիս-արեւմուտք տարածուող* Արաքսէնէ *(Ἀραξηνή. բնականաբար, իր ծայր արեւելեան հատուածով),* Սակասէնէ *(Σακασηνή. աշխարհացոյցեան* Շակաշէն *գաւառ եւ շրջակայք) եւ* Գօգարէնէ *(Γωγαρηνή. աշխարհացոյցեան* Գուգարք *նահանգի արեւելեան կէս[2]) գաւառներին յաջորդող շարքում: Բնագիրը Հր. Աճառեանի թարգմանութեամբ հետեւեալն է (մեր շտկումներով). «Հայաստանի գաւառներից են նաեւ* Փաւնէնէն, Կոմիսէնէն *եւ* Օրխիստէնէն, *որ հայթայթում է մեծաքանակ [պատերազմական] ձի:* Խորձէնէն *[Χορζηνή] եւ* Կամբիսէնէն *[Καμβυσηνή] [Հայաստանի] ամենահիւսիսային [գաւառներն] են եւ շատ ձիւնառատ, որովհետեւ մօտ են* Կովկասեան լեռներին *եւ* Վիրքին *ու* Կողքիսին»[3]:

Քանի որ Օրխիստէնէի այս յիշատակմանը յաջորդող տեղեկութիւնը վերաբերում է արդէն

2 Հմմտ. **Բ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (Պատմա-աշխարհագրական դիտարկումներ)*,– «Պատմա-բանաս. հանդէս», 2003, թիւ 1, էջ 139: Այստեղ առաւել մանրամասն տե՛ս նաեւ Σακασηνή-ի լայն ընդգրկման մասին:

3 **Ստրաբոն**, Քաղեց եւ թարգմանեց **Հ. Աճառեան**, Եր., 1940, էջ 55-57: Այստեղ եւ ստորեւ բնագրերի բոլոր ընդգծումները մերն են:

Գօգարէնէից արեւմուտք ընկած Խորձէնէ - Կղարջքին *(այլ անտիկ երկերում՝ նաեւ Χολαρζηνή* - Խոլարձէնէ, *Καταρζηνή* - Կատարձէնէ, *«Աշխարհացոյց»-ում՝ Գուգարքի կազմում)[4], նոր ուսումնասիրութիւններում իրաւացիօրէն պարզաբանուած է, որ Ստրաբոնի* Փաւնէնէ-Կոմիսէնէ-Օրխիստէնէ *շարքն անհրաժեշտ է ընկալել նախորդից* (Արաքսէնէ-Սակասէնէ-Գօգարէնէ) *հարաւ եւ հակառակ՝ հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք ուղղութեամբ[5]: Դրա շնորհիւ առաջին՝* Փաւնէնէ եպարխիա-*ն վերականգնւում է իբրեւ* Փառնէնէ *եւ համադրւում Մեծ Հայքի* Փառնէս *գաւառի («Աշխարհացոյց»-ի՝* Քուստ-ի Փառնէս, *իրանական իգաֆետային ձեւից բառացի թարգմանութեամբ՝* Փառնէսի քուստ, *այսինքն՝* Փառնէսի կողմն, գաւառ[6]) *ու նրա շրջակայքի հետ (հետագայում՝* Փառիսոս)[7], *իսկ երկ-*

4 *Խորձէնէ*-ի հետ յիշատակուող Καμβυσηνή գաւառանունը շտկելու անհրաժեշտութեան մասին տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 28-30: Այստեղ չխորանալով քերականական, բնագրագիտական եւ այլ մանրամասների մէջ՝ նշենք, որ Ստրաբոնի բուն աղբիւրում *Կամբիսէնէ*-ի փոխարէն որոշ հաւանականութեամբ կարող էր նաեւ լինել *Կալարձէնէ*՝ արձանագրուած ոչ թէ իբրեւ առանձին գաւառ, այլ որպէս *Խո[լար]ձէնէ-Կղարջք*-ի անուան մի երկրորդ տարբերակ:

5 Տե՛ս, օր.՝ **Ս. Սարգսեան**, *Արցախ. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ*, Եր., 1996, էջ 13-15; **Ա. Հ. Ղարագեօզեան**, *Սիւնիքի տարածքը*, էջ 114:

6 Հմմտ. **Հ. Հիւբշման**, *Հին Հայոց տեղւոյ անունները*, Թարգմ. **Հ. Բ. Պիլէզիկեան**, Վիեննա, 1907, էջ 421:

7 Հմմտ. **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 14: Հեղինակն արդարացիօրէն մերժում է *Փաւնէնէ*-ի համադրման վար-

բորդը՝ Կոմիսէնէն, համադրւում է նոյնահունչ Գեամիշ-Գոմէշ ամենաբարձր գագաթով Մռաւի լեռնաշղթայի շուրջն ընկած՝ Արցախի կենտրոնական գաւառների տարածքների[8], եւ հետեւաբար երրորդը՝ Օրխիստէնէն՝ այդ նահանգի դրանից աւելի հարաւ ընկած գաւառների (Մեծ Իրանք եւ շրջակայք) հատուածի հետ:

Տեղին նշենք, որ Ստրաբոնի Կոմիսէնէ եպարխիայի բաւականին յստակ տեղորոշումն Արցախի կենտրոնական հատուածում թոյլ է տալիս աւելի մեծ վստահութեամբ փնտրել նրա համարժէքը միջնադարում եւ այդպիսով կանգ առնել նրա հետ «Աշխարհացոյց»-ի ու հայկական շատ ուրիշ աղբիւրների յիշատակած Մեծ

կածը Ստրաբոնի մի այլ պատմութեան մէջ յիշատակուած *Փաւնիտիս*-ի հետ (**Բ. Յարութիւնեան**, *Արցախի, Հայոց Արեւելից կողմերի*, էջ 263-264; նաեւ՝ *Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն*, էջ 136-137), քանի որ Փաւնիտիս երկրամասն, անկասկած, գտնուել է Արաքսից հարաւ: Նշենք, որ լիովին մերժելի է նաեւ Հ. Հիւբշմանի ակնարկը (*Հին Հայոց տեղւոյ անունները*, էջ 95) *Փաւնիտիս*-ը *Սիւնիտիս* ձեւով վերականգնելու եւ նրա տակ *Սիւնիք*-ն ընկալելու հնարաւորութեան մասին:

8 Հմմտ. **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 13-15; **Ա. Հ. Ղարագեօզեան**, *Սիւնիքի տարածքը*, էջ 113-114: Այսպիսով, իրաւացիօրէն մերժւում է Բ. Յարութիւնեանի վարկածը (*Արցախի, Հայոց Արեւելից կողմերի*, էջ 263-264, նաեւ՝ *Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն*, էջ 119-144)՝ *Կոմիսէնէ*-ի ընկալման մասին որպէս իբրեւ թէ վերականգնելի **Սովնիսէնէ*-ի գրչական խեղաթիւրման հետեւանք եւ նրա համադրումը *Սիւնիք* աշխարհի հետ. նոյն կերպ՝ *Փաւնիտիս-Փաւնէնէի* համադրման մասին *Մարդպետականի* կամ Վասպուրականի *Բագանք* գաւառի հետ (էջերը՝ 264-265 եւ 137-138):

Կուանք (*տարբ.* Մեծ Կողմանք) *գաւառի համադրման հնարաւոր տարբերակի վրայ: Հնդեւրոպական լեզուաընտանիքի մի շարք լեզուախմբերում արձանագրուած է* Մ – Ի *անցումը*[9], *ուստի* ԿՈՒ-ան-ք *եւ* ԿՈՄ-իս-էնէ *երկրանունները կարող են պարզապէս նոյնարմատ համարուել: Յաւելենք, որ Յով. Կարագեոզեանը ժամանակին* Մեծ Կուանք-*ը համադրում էր բիայնական Սարդուրի Բ արքայի Գանձադուան տարեգրութեան* Կույալբա *երկրանուան հետ, որը յիշատակուած էր* Ուխունե *(>*Խոխանա*/բերդ/՝ Խաչէնագետի հովտում) եւ* Տերիա *(թերեւս՝ >*Տրա*/կետ/) անուններից առաջ. Նա հակուած էր այդ* *Կու-Ալ-բա-*ի երկրորդ բաղադրիչի մէջ դիտարկել* Մեծ *իմաստն արտայայտող* ալբա *չստուգաբանուած բառը, որը, ենթադրաբար, վերականգնելի է նաեւ* Աղբակ *գաւառանուան հիմքում*[10]:

Մեծ Հայքի Ուտիք *աշխարհի (նահանգի) անուան յիշատակութիւնը երկրի հիւսիս-արեւելեան գաւառների շարքում պահպանուել է յոյն եւ հռոմէացի մի քանի հեղինակների երկերում: Մ. թ. Բ դարի աշխարհագէտ Պտղոմէոսը, վաղ քրիստոնէական ժամանակագիր Եւսեբիոս Կեսարացին, պատմիչ Կուադրատոսը (Դ - դար) եւ վերջինիս «Παρθικά» երկից մի քանի*

9 **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, *Индоевропейские языки и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т. I, Тбилиси, 1984, էջ 196:

10 **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 201:

կարեւոր վկայութիւն պահպանած ուշ հռոմէական բանաքաղող (կոմպիլյատոր) Ստեփանոս Բիւզանդացին (Ե դար) յիշատակում են յունարէն Օտէնէ *(Ωτηνή) տարբերակը, իսկ Ա դ. վերջի մատենագիր Պլինիոս Աւագը՝ լատիներէն* Օտենա *(Otena, Otene) ձեւը*[11]*: Պտղոմէոսը եւ Ստեփանոսը (=Կուադրատոսը՝ II, III եւ VI գրքերում) այդ անուան կողքին յիշատակում են* Օբարէնէ *(Ωβαρηνή, Ωβαρηνοί) երկրանունը*[12]*: Այն, որպէս կանոն, համարւում է* Գօսարէնէ - Գօզարէնէ *անուան վրիպակ, սակայն իբրեւ վարկած նշենք, որ* Օբարէնէ*-ն որոշ հաւանականութեամբ կարող է ընկալուել նաեւ իբրեւ Ստրաբոնի ճանաչած* *Փառնէնէ *(>*Փառէնէ) երկրանուան վրիպման արդիւնք (վրիպումը կարող էր տեղի ունենալ այնպիսի մի բուն սկզբնաղբիւրից Պտղոմէոսի արտագրելու պահին, որում, ենթադրաբար, իրար կողքի պիտի յիշուած լինէին ե՛ւ Փառնէնէն, ե՛ւ Գօսարէնէն):*

Նոյն Պտղոմէոսի «Աշխարհագրութիւն»-ում յիշատակւում է նաեւ մեզ հետաքրքրող տարածքի արեւմտեան հարեւան Սիւնիք աշխարհը՝ Սիսակէնէ, *այսինքն՝* Սիսական *տարբերակով: Ճիշտ է, գրչական աղաւաղման հետեւանքով անունը մեզ է հասել* Սիբակէնէ *(Σιβακηνή) գրութեամբ, եւ դա պատճառ է դարձել, որպէսզի ուսումնասիրողներից ոմանք յաճախ վերականգնեն այն* *Սիրակէնէ *տարբերակով ու*

11 **Ptol.** *Geogr.*, V, XII, 4; **Steph. Byz.** s. v. *Ωβαρηνοί, Ωτηνή*; **Plin.** *Nat. Hist.*, VI, 16, 41:

12 Տե՛ս նշուած տեղերում:

չտապողաբար կապեն Այրարատ աշխարհի Օբարակ *գաւառի հետ*[13]*: Աշխարհագէտի տուեալ հատուածի կարեւորութիւնից ելնելով՝ տալիս ենք այն ամբողջութեամբ եւ մեր՝ հնարաւորինս բառացի ներկայացուած թարգմանութեամբ.* *«Χῶραι δὲ εἰσιν ἐν τῇ Ἀρμενίᾳ ἐν τῷ ἀπολαμβανομένῳ μεταξὺ Εὐφράτου καὶ Κύρου καὶ Ἀράξου ποταμῶν, τμήματι παρὰ μὲν τὰ Μοσχικὰ ὄρη ἡ Καταρζηνὴ ὑπὲρ τοὺς καλουμένους Βόχας, παρὰ δὲ τὸν Κύρον ποταμὸν ἥ τε Ὠβαρηνὴ καὶ ἡ Ὠτηνή, παρὰ δὲ τὸν Ἀράξην ποταμὸν ἡ δὲ Κολθηνὴ καὶ ἡ ὑπ' αὐτὴν Σοδουκηνή, παρὰ δὲ τὸν Παρυάδρην τὸ ὄρος ἥ τε Σιβακηνὴ καὶ ἡ Σακασηνή»*[14] *(«Իսկ մարզերը Հայաստանում [սրանք] են. [առաջինը՝] Եփրատ, Կուր եւ Արաքս գետերի միջեւ շրջափակուած հատուածում. Մոսխիկա լեռների մօտ [=գրաբարի՝* ըստ, *այս դէպքում՝* երկայնքով*]՝* Կատարձէնէն, *[որը գտնւում է]* Բոխա *կոչուածից [բառացի՝* Բոխաներ կոչուողներից*] վերեւ; Կուր գետի մօտ [=երկայնքով]՝* Օբարէնէն *[=*Գօսարէ՞նէ*] եւ* Օտէնէն; *Արաքս գետի մօտ*

13 Տե՛ս, օր.՝ **Հ. Հիւբշման**, *Հին Հայոց տեղւոյ անունները*, էջ 250; **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя*. СПб., 1908 (վերահրատ. Եր., 1971), էջ 300; **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 9-13: Հմմտ. **Բ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն*, էջ 138-139:

14 Ձեռագրերում առկայ են մեզ հետաքրքրող տեղանունների միայն հետեւեալ տարընթերցումները. *Ὀσαρηνή, Ὀσσαρηνή, Τοσαρηνή, Τωσαρηνή* փխ Ὠβαρηνή; *Ὠκηνή, Μωτηνή, Μοτηνή, Τωμηνή, Τοτηνή; Τωτηνή* փխ Ὠτηνή; *Κονθηνή* փխ Κολθηνή; *Σακαπηνή* փխ Σακασηνή:

[=երկայնքով]՝ Կոլթէնէն եւ նրանից վեր [գտնուող] Սոդուկէնէն; իսկ Պարիւադրէս լեռների մօտ [=երկայնքով]՝ Սիրակէնէն [=Սիսակէնէ] եւ Սակասէնէն: [Երկրորդը՝]...»):

Ըստ Պլինիոսի Աւագի վկայութեան՝ «Ատրպատենայից Արաքս գետով բաժանւում էր Հայաստանի Օտենէ մարզը»[15]: Դա ցոյց է տալիս, որ անտիկ շրջանում եւս Մեծ Հայքի Կասպք-Փայտակարան երկրամասը (Պլինիոսի գրելու պահին՝ Հայոց թագաւորութիւնից Ատրպատականին անցած) տարածուած է եղել միայն Արաքսի հարաւակողմում, ինչպէս նկարագրուած է եւ Է դարի «Աշխարհացոյց»-ում («Փայտակարան յելից կայ Ուտիոյ, առ Երասխաւ...» եւ «Ուտիք... առ մօտ կայ Երասխայ»)[16]: Կարեւոր է նաեւ, որ Փայտակարանին Արաքսով սահմանակից է նշւում լոկ Ուտիքը (իսկ Արցախը՝ ոչ). դա պիտի ստիպի մեզ՝ խուսափել Մեծ Հայքի Կասպք նահանգի սահմանը դէպի արեւմուտք երկար տարածելուց (ինչպէս որ, այնուամենայնիւ, կատարուած է Բ. Յարութիւնեանի եւ Ռ. Հիւզընի քարտէզներում):

15 **Plin.** *Nat. Hist.*, VI, 42 («Atropatenae ab Armeniae Otene regione discrete Araxe»): Տե՛ս նաեւ VI, 16 եւ XII, 28 («et Armeniae partae, quae vocatur Otene»):

16 *Армянская география VII века по Р. Х.*, Текст и перевод издал **К. П. Патканов**, СПб., 1877, էջ 19; **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, Եր., 1944, էջ 350; **Մովսէս Խորենացի**, *Աշխարհացոյց*,— «Մատենագիրք Հայոց» (այսուհետեւ՝ *ՄՀ*), հտ. Ա-Բ, Ե դար, Անթիլիաս, 2003, էջ 2172, 2188:

Բանաքաղող Ստեփանոս Բիւզանդացին, ի թիւս այլոց, պահպանել է հետեւեալ համառօտ, սակայն ուշագրաւ վկայութիւնը. «Կուադրատոսը «Պարթիկա»-ի երրորդ գրքում ասում է. «Հայաստանի թագաւոր Պակորոսը [=Բակուր, Բ դար - Ա. Յ.] այդ ժամանակ գտնուելով Արտաքսատայի եւ Օտենէի մօտ»[17]: Պէտք է ենթադրել, որ Դ դարի հռոմէացի պատմիչի խօսքը վերաբերել է ոչ թէ անձամբ Բակուրին, այլ նրա զօրքին, ուստի այս վկայութիւնը կարող է միանալ հայ հեղինակների տուեալներին՝ Ուտիք նահանգի կամ, գուցէ, նրա մի մեծ հատուածի մասին իբրեւ Հայոց արքաների ձմերոցի (Ագաթանգեղոս, Մովսէս Խորենացի եւն)[18]:

Նշելի է, որ վաղ հայկական աղբիւրներում եւս վկայուած է Ուտիք գաւառ-ի (Ուտի Առանձնակ եւ շրջակայք) անուան Օ (աւ) սկզբնահնչիւնով տարբերակը՝ Աւտիացւոց, Աւտէացւոց, Աւտիական գաւառ: Մասնաւորապէս դա նկատւում է նաեւ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի մէջ, ըստ ամենայնի,

17 **Steph. Byz.** s. v. *Ὠτηνή*: Թարգմանութեան մէջ՝ «Բնակիչների անունը եւս ինքն է [տալիս]՝ [գիրք] երկրորդում. «Կուրի մօտ բնակւում են Օբարէնները եւ Օտէնները, որոնք կազմում են Հայաստանի զգալի մասը»:

18 **Ագաթանգեղայ** *Պատմութիւն Հայոց*, Աշխ. **Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Կանայեանց**, Տփղիս, 1909, § 28, էջ 21 («յանդիման եղեւ թագաւորին Խոսրովու յՈւտի [*որոշ ՁՁ*՝ յԱւտի] գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց»); **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Աշխ. **Մ. Աբեղեան, Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. ԽԴ-ԽԵ, էջ 169-170:

բառացի արտագրութեամբ ընդգրկուած՝ երկու դէպքում էլ անանուն հեղինակների՝ «Վաչագանի վէպ» (Զ դար)[19] *եւ «684 թ. պատմութիւն» (Է դար) անուանուած երկերում*[20]*:*

Հայոց Արեւելից կողմանց Արաքսէնէ, Սակասէնէ, Փառնէնէ, Կոմիսէնէ *եւ* Օրխիստէնէ *գաւառանուններից բացի անտիկ աշխարհագրական աւանդոյթում պահպանուած է նաեւ* Ծաւդէք-Սաւդք *(=Սոթք) գաւառի անուան* Սոդուկէնէ *(Σοδουκηνή) ձեւը: Այդ* խորա-*ն յիշատակում է Պտղոմէոսը*[21]*, եւ վերեւում բերուած ենթատեքստից կարելի է ընկալել, որ այն ընդգրկել է աշխարհացոյցեան Արցախի կենտրոնական ու հարաւային տարածքները (վերջին կողմում, հաւանաբար, սահմանակցելով* Կոլթէնէ-Գոլթէնէ-*ին), արեւմուտքում՝ Սեւանայ լճի արեւելեան ափերով հանդերձ: Այդպիսով* Սոդուկէնէ-*ն կարող էր համընկնել Ագաթանգեղոսի, Մովսէս Խորենացու երկերում եւ «Զորանամակ»-ում վկայուած* Ծաւդէացւոց *իշխանութեան հետ*[22]*:*

19 Նոր քննական հրատարակութիւնը տե՛ս **Անանուն**, *Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի*, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**, - *ՄՀ*, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112:

20 Նոր քննական հրատարակութիւնը տե՛ս **Անանուն**, *684 թուականի պատմութիւն*, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**, - *ՄՀ*, հտ. Դ-Ե, Է. դար, Անթիլիաս, 2005, էջ 795-895:

21 **Ptol.** *Geogr.*, V, XII, 4:

22 Վերջինիս մասին տե՛ս **Ս. Տ. Երեմեան**, *Ծաւդէացւոց իշխանութիւնը*,- «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1960, թիւ 7-8, էջ 41-52; **Բ. Ուլուբաբեան**, *Պատմա-աշխարհագրական ճշ-*

Տեղին նշենք, որ Սոդուկէնէ-*ի կողքին Պտղոմէոսի յիշատակած* Կոլթէնէ *(Κολθηνή) երկրանունը, փաստօրէն, նոյնահունչ է աշխարհացոյցեան Արցախ աշխարհի* Կողթ *կամ Վասպուրական աշխարհի* Գողթն *գաւառանունների հետ (երկուսն էլ՝ Արաքս գետից հիւսիս): Առաջին տարբերակի հիման վրայ* Կոլթէնէ-*ի եւ* Կողթ-*ի նոյնացումն է ենթադրում Ս. Սարգսեանը*[23]*: Սակայն, ելնելով սկզբնաղբիւրի ամբողջական ենթատեքստից, խիստ դժուար է համաձայնել դրան, ուստի ուսումնասիրողները կանգ են առնում Գողթն գաւառի հետ* Սոդուկէնէ-*ի նոյնացման տարբերակի վրայ*[24]*: Վերջերս մէկ այլ համադրութեան փորձ կատարեց Բաբկէն Յարութիւնեանը, որն առաջարկում է Պտղոմէոսի ձեռագրերում յիշատակուած* Կոլթէնէ *անուանաձեւը համարել գրչական աղաւաղման արդիւնք եւ նրա փոխարէն վերականգնել* Կասպէնէ, *այսինքն՝ Մեծ Հայքի՝ Արաքս գետից հարաւ ընկած* Կասպիանէ-Կասպք-Փայտակարան *աշխարհը*[25]*: Այդ տեսակէտը եւս հնարաւոր չէ ընդունել, քանի որ աղբիւրի ենթատեքստում,*

գրտումներ,- «Բանբեր Երեւանի համալսարանի», 1971, թիւ 1, էջ 182-186; **Յ. Կարագեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 189:

23 **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 13-15:

24 *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 3, Եր., 1991, էջ 190; **R. H. Hewsen**, *Armenia: A Historical Atlas*, Chicago-London, 2001, էջ 67 («Ptolemy's Map According to Modern Cartography» քարտէզում հարցականով նշուած է նաեւ Կողթը):

25 Տե՛ս **Բ. Յարութիւնեան**, *Արցախի, Հայոց Արեւելից կողմերի*, էջ 263-264:

ինչպէս տեսանք, յատուկ նշւում է նկարագրուած տարածքի՝ Արաքսից հիւսիս լինելը:

Նկատենք, որ ընդարձակ սահմաններով Գողթն գաւառի մասին Պտղոմէոսի պատկերացումը լիովին հնարաւոր է համադրել մեր ունեցած աշխարհագրական տեղեկատուութեան հետ: Մովսէս Խորենացու՝ թէկուզ եւ կիսաառասպելական տեղեկութիւններից բխում է, որ Գողթնացի իշխանները սերուել են Սիւնեաց աւանդական նախահայր Սիսակից եւ վաղ ժամանակ նկատելի դեր են խաղացել Հայոց արքունիքում[26]: Յաւօք, Դ դ. կէսերի պատկերն արտացոլող «Զօրանամակ»-ի մէջ հասած միակ ձեռագրական տարբերակում Գողթնեցի *իշխանական տուն է նշուած «Հարաւային դուռն» պաշտպանների թւում (Կադմէացւոց կուսակալ իշխանութեան հրամանատարութեան տակ, 500 մարտիկների ոչ մեծ քանակով)[27], եւ դա, ամենայն հաւանականութեամբ, պէտք է գրչական վրիպման արդիւնք համարուի ու վերականգնում կատարուի կա՛մ* Գառնեցի° *(Վասպուրականի Գառնի գաւառի), կա՛մ, գուցէ,* Տոսպեցի° *տարբերակներից մէկով: Փոխարէնը՝ Դ դարավերջի պատկերն արտացոլող «Գահնամակ»-ում* Գողթան տէր-*ը նշուած է «պատուաւոր» 16-րդ տեղում[28]: Գողթնի դեռեւս բարձր կարգավիճակն է վկայում Կորիւնը, ըստ որի հէնց այնտեղ էր սկսուել եւ վճռական պահերին շարունակուել Մաշտոցի վարդապետական գործունէութիւնը[29]: Ինքը՝ Բ. Յարութիւնեանը եւս ընդունում է, որ* Գողթն *վարչական միաւորը ժամանակին ունեցել է աւելի բարձր կարգավիճակ, քան աշխարհացոյցեան գաւառն է, եւ, մասնաւորապէս, իր կազմում է ունեցել հետագայի Արեւիք գաւառի տարածքը[30]: Կարեւոր է նաեւ ուսումնասիրողի այն դիտարկումը, որ Գողթնի տարածքն արդէն Բ-Գ դարերում մաս է կազմել Մարդպետական կոչուած գործակալութեան[31], որն, ըստ Ալբերտ Մուշեղեանի մանրակրկիտ քննութեան, ամենայն հաւանականութեամբ, երբեւ սահմանապահ կուսակալութիւն իրականացնում էր Մեծ Հայքի «Արեւելեան դրան» պաշտպանութիւնը՝ մինչեւ այդ իրաւասութեան անցումը Սիւնեաց իշխաններին[32]:*

Մ. թ. Բ դարում Մեծ Հայքի Գողթն մարզի ընդարձակ սահմանների եւ նրանից հիւսիս

26 **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Աշխատութեամբ **Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913, գիրք Ա, գլ. Լ, էջ 83-84, Բ, գլ. Ը, էջ 117:

27 Տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 252:

28 **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 249:

29 **Կորիւն**, *Վարք Մաշտոցի*, Բնագիրը ... առաջաբանով եւ ծանօթութիւններով ի ձեռն **Մ. Աբեղեանի**, Եր., 1941, էջ 40, 60; **Կորիւն**, *Վարք Մեսրոպ Մաշտոցի*, *Աշխատութեամբ* **Ա. Մաթեւոսեանի**, Եր., 1994, գլ. Ե, էջ 88, գլ. ԺԳ, էջ 94; *ՄՀ*, հտ. Ա, էջ 235, 242:

30 **Բ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն*, էջ 141:

31 **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Մաս Ա, Եր., 2001, էջ 382:

32 **Ա. Վ. Մուշեղեան**, *Մովսէս Խորենացու դարը*, Եր., 2007, էջ 219-221:

(«վեր») Սոդուկէնէի մասին Պտղոմէոսի տեղեկութիւնը թոյլ է տալիս հնարաւոր համարել վերջինիս համադրումը այլ աղբիւրների, մասնաւորապէս, Ստրաբոնի յիշատակած Արաքսէնէ-ի հետ: Թւում է, թէ կարելի է հէնց ուղղակի ընկալել աշխարհագէտի խօսքերն այն մասին, որ մինչեւ Կուրի ափերը հասնող (ինչպէս տեսանք բերուած հատուածում) այդ երկրամասը սկսւում է, կարծես թէ, Արարատեան դաշտից յետոյ[33]: Հր. Աճառեանի թարգմանութեամբ (մեր որոշ շտկումներով)՝ «Հայաստանի քաղաքներն են՝ Արտաշատը, որը նաեւ կոչւում է Արտաշաշատ, հիմնուած Հաննիբալի [կողմից] Արտաշէս թագաւորի համար, եւ Արքշատ[34], երկուսն էլ Արաքսի վրայ, Արքշատն Ատրպատէնէի սահմանների մօտ, իսկ Արտաշատը՝ Արաքսէնէի դաշտի մօտ [πρὸς τῷ Ἀραξηνῷ πεδίῳ], գեղեցիկ քաղաք, որ եւ երկրի մայրաքաղաքն է՝ շինուած [գետի] թեւի [ձեւաւորած] թերակղզու վրայ...»[35]: Ընդ որին բոլոր մասնագէտները իրաւացիօրէն համարել են, որ Ստրաբոնի կողմից որոշակիօրէն աղաւաղուել է իր օգտագործած աղբիւրի տեղեկութիւնը, որտեղ պէտք է նշուած լինէր Արաքսէնէի դաշտի հետ հէնց երկրորդ՝ Արքշատ քաղաքի (Արտաշատից արեւելք) հարեւանութեան մասին:

33 Strab. XI, XIV, 6:

34 [Արքշատ → *Մարաշատ (< *Մարաւան) վերականգնման հնարաւորութեան մասին վարկածը տե՛ս այս ժողովածոյում, նախորդը, էջ 231-232 – Խմբ., 2009]:

35 Ստրաբոն, էջ 57-59:

Այս համադրումը կարեւոր է նաեւ նրանով, որ թոյլ է տալիս համադրել Սոդուկէնէ եւ Օրխիստէնէ երկրամասերը՝ գոնէ այնքանով, որքանով Ստրաբոնի Օրխիստէնէն նշւում է բաւականին յստակ տեղորոշւող Կամբիսէնէից հարաւ, իսկ Պտղոմէոսի Սոդուկէնէն՝ Գողթն-Արաքսէնէից հիւսիս: Այս դէպքում առաւել հաւանական ենթադրութիւնը կարող է լինել այն, որ Օրխիստէնէի մէջ պէտք է պատկերացնել աշխարհացոյցեան Սոթք, Հարջլանք, Մեծ Իրանք եւ Պիանք գաւառների տարածքները (որոշ հաւանականութեամբ՝ գուցէ, նաեւ Մուխանքի, Պազկանքի եւ Վակունիքի), իսկ Արաքսէնէի մէջ՝ գրեթէ ողջ հարաւային Արցախի (հետագայի Դիզակի իշխանութեան), գումարած հետագայ Սիւնիքի հարաւային հատուածը՝ առնուազն Հաբանդ գաւառի ընդգրկումով: Հարաւային այս ընդարձակ տարածքով մարզը (գուցէ, նաեւ սահմանապահ կուսակալութի՞ւնը), ենթադրաբար, ինչ-ինչ ժամանակահատուածներում կարող էր բացի Արաքսէնէ ու Կոլթէնէ անուանումներից կրել նաեւ Փոքր Սիւնիք եւ Հաբանդ անունները, որոնցից առաջինն արձանագրուած է Խորենացու յայտնի վկայութեան հատուածում, իսկ երկրորդը՝ ի յայտ գալ աշխարհացոյցեան Սիւնիք եւ Արցախ նահանգներում նոյնանուն Հաբանդ գաւառների (երկրորդը՝ Միւս, Փոքր) ձեւաւորման իրողութեան մէջ:

Ահա այսպիսի Կոլթէնէ - (նրանից վեր) Սոդուկէնէ մարզերի զոյգից յետոյ է կարելի առարկայօրէն պատկերացնել Պտղոմէոսի նշած յաջորդ

գոյգը՝ Պարխադրէս - Սեւանի լեռնաշղթայի երկայնքով ընկած (իսկ իրականում՝ անտիկ աշխարհագէտի կամ, գուցէ, նրա աղբիւրի հեղինակի առջեւ փռուած սխեմատիկ քարտէզում իրենց անունների գրադաշտի պատկերին այդպէ՛ս համապատասխանող) Սիսակէնէ- Սիսական *եւ* Սակասէնէ-Շակաշէն *երկրամասերը*[36]*: Միաժամանակ, կարելի է ենթադրել, որ եթէ այս դարաշրջանի* Սիսակէնէ-Սիսական-*ն աւելի փոքր էր հետագայի Սիւնիքից, ապա պտղոմէոսեան* Սակասէնէն, *ընդհակառակը՝ իր մէջ ընդգրկել էր նաեւ ստրաբոնեան* Փառնէնէ *եպարխիայի տարածքը՝ այդպիսով յարելով Պարխադրէս լեռներին, ինչպէս որ նշուած է աղբիւրում: Վերջին իրողութիւնն ընկալել է արդէն Բ. Յարութիւնեանը, ըստ որի այդ ընդարձակուած Սակասէնէ մարզին է իր տարածքով համապատասխանել հետագայի Գարդմանացւոց իշխանութիւնը՝ արեւելքում հասնելով մինչեւ Տրտու*[37]*: Իհարկէ, դա ընդունելի է՝ նշուած արեւելեան սահմանը ոչ աւելի քան Ինջայի գետագծին հասցնելու մասին Ս. Սարգսեանի վերապահումով*[38]*: Իրօք, աւելի հաւանական է մտածել, որ աշխարհացոյցեան Մեծ Կուանքի տարածքը մաս է կազմել ոչ թէ Գարդմանացւոց, այլ Ծաւդէացւոց իշխանութեան: Այդ դէպքում կարելի է ենթադրել, որ առնուազն նշուած իշխանութիւնների ձեւաւորման պահին է տեղի ունեցել նրանց միջեւ ստրաբոնեան* Կոմիսէնէ *եպարխիայի բաժանումը եւ դրանից են առաջ եկել աշխարհացոյցեան* Կողթ *եւ* Մեծ Կուանք *գաւառները: Ուշագրաւ է (ինչպէս նկատել է դեռեւս Բ. Յարութիւնեանը), որ 370-ական թթ. Մուշեղ Մամիկոնեանի կողմից Հայոց պետութեան ապստամբած մարզերի հպատակեցումը նկարագրելիս Փաւստոսն առանձին գլուխներում է ներկայացնում* Արձախ երկիրը *(ենթադրաբար՝ Ծաւդէացւոց իշխանութեան տարածքով) եւ Աղուանից թագաւորի հետ գործակցած միւս արեւելեան գաւառները, այդ թւում աշխարհացոյցեան Արցախից՝ լոկ Կողթը («զՈւտի, զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ,* զԿողթ *եւ այլ, որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք»)*[39]*: Եւ նոյն տրամաբանութեամբ՝ անտիկ* Օտէնէ *մարզը (հետագայ Ուտէացւոց իշխանու-*

36 Հմմտ. **Բ. Յարութիւնեան**, *Արցախի, Հայոց Արեւելից կողմերի*, էջ 265 (շարունակութիւնը՝ «Պատմա-բանաս. հանդէս», 1995, թիւ 1, էջ 205-206):

37 Նոյն տեղում, էջ 260:

38 **Ս. Սարգսեան**, *Արցախ*, էջ 9-13: Հեղինակն իրաւացի է նաեւ, երբ պնդում է, որ չի կարելի ԺԹ դ. երկրագիրների նկարագրութիւններում *Ամիրվար* գիւղի մօտակայ փոքրիկ աւերակ բերդի (քարախունկի իր նշանաւոր հանքերով յայտնի Փիփ-Ջագլիկից մի քանի կմ հարաւ-արեւմուտք)՝ *Քրթմանիկ* անուանման հիման վրայ աշխարհացոյցեան Գարդման գաւառի սահմանը տեղափոխել Շամքոր գետից նաեւ արեւելք, այսինքն՝ Արցախի *Կողթ* գաւառի տարածքը (էջ 9), որի մասին «Աշխարհացոյց»-ում յատուկ նշում կայ. «Կողթ, յորում լինի քարախունկ» (*ՄՀ*, հտ. Բ, էջ 2153, 2172, 2188):

39 **Փաւստոսի Բուզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ-Ս.Ղազար, 1933, դպր. Ե, գլ. ԺԲ («Յաղագս Արձախայ») եւ ԺԳ («Յաղագս Աղուանից»), էջ 214-215; *ՄՀ*, հտ. Ա, էջ 389-390:

թիւնը) ինչ-ինչ պահերի կարող էր կիսուած լինել Սակասէնէ-*ի եւ* Արաքսէնէ-*ի միջեւ կամ ընդգրկել նրանց տարածքների որոշ մասեր:*

Անտիկ հեղինակները որոշ լրացուցիչ տեղեկատուութիւն են յայտնում թուարկուած գաւառների մասին: Նրանք, նշում են Արաքսէնէի եւ Սակասէնէի զարմանալի բերքատուութիւնը, ինչպէս նաեւ Օրխիստէնէում (կամ նաեւ՝ Փաունէնէում ու Կոմիսէնէում) ձիաբուծութեան զարգացած լինելը[40]*: Սակասէնէում մ. թ. ա. Է դարում սակերի հաստատման մասին Ստրաբոնի պահպանած վկայութիւնը («Սակերը նուաճեցին Հայաստանի լաւագոյն հողը [=մարզը], որը նրանց անունից կոչուեց Սակասէնէ»)*[41] *այն հազուագիւտ աղբիւրագիտական հիմքերից է, որոնք թոյլ են տալիս՝ Կուրի աջափնեակը հաստատապէս Հայոց պետութեան սահմաններում ընկալելու ուշ բիայնական եւ Երուանդեան թագաւորութեան դարաշրջանում:*

Անտիկ հեղինակների տեղեկութիւնների համադիր քննութիւնը մերօրեայ ուսումնասիրողներին թոյլ է տալիս վերջնականապէս մերժել մի շարք այլ աշխարհագրական անունների կապը Հայոց Արեւելից կողմանց հետ (Ուիտիա, Փաւնիտիս, Բասորոպեդա *եւ այլն)*[42]*: Միաժամա-*

40 Տե՛ս **Strab.** XI, XIV, 4 (Ստրաբոն, էջ 55-57):

41 Տե՛ս **Strab.** XI, VIII, 4 (Ստրաբոն, էջ 37. թարգմանութիւնը՝ մեր շտկումներով):

42 Այդ կարգի սխալների մասին տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, էջ 74-83; **Հ. Ս. Սվազեան**, *Աղուանից աշ-*

նակ, իբրեւ վարկած, հետագայ քննարկումների ու ճշգրտման համար հնարաւոր է թւում առաջադրել երկու այսպիսի հիպոթետիկ դրոյթներ:

ա) Հայոց Արտաշէս Ա արքայի տարածքային ձեռքբերումների Ստրաբոնեան նկարագրութեան մէջ յիշուած Փաւնիտիս *երկրանունը (Φαυνίτις. բոլոր ձեռագրերում՝ այդպէս), թերեւս, հնարաւոր է ընկալել իբրեւ աշխարհացոյցեան Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհի Զարեւանդ-Զարաւանդ գաւառանուան* *Զարաւնիտիս *հնարաւոր ձեւի գրչական խեղաթիւրման հետեւանքով առաջացած ընթերցում: Կարելի է ենթադրել, որ Ստրաբոնի սկզբնագրում եղել է* Զրաւնիտիս *ձեւով գրուած գաւառանունը (*ZPAYNITIΣ), որը միջնադարեան ընդօրինակութիւններում կրտսեր մինուսկուլային կոչուած փոքրատառերով ունեցել է *ζραυνίτις պատկերը, եւ վերջինիս երկու սկզբնատառերն ինչ-որ մի գրչի կողմից իրար կողքի ընկալուել են որպէս յունարէն մէկ՝* Ֆաու *(Φ, φ) տառ*[43]*:*

բ) Նոյն հատուածում Բասորոպեդա *երկրանունը (Βασοροπέδαν. բոլոր ձեռագրերում՝ այդպէս), թերեւս, հնարաւոր է ընկալել իբրեւ երկի յաջորդող կտորներից մէկում նշուած՝ պարթեւներին Տիգրան Մեծի յանձնած ու վերադարձրած 70 հովիտների (մեզ հասած բնագրում՝ 'εβδομηκόντα 'αυλόνας) յիշատակման հետ որոշակի*

խարհի պատմութիւն (հնագոյն շրջանից - VIII դարը ներառեալ), Եր., 2006, էջ 108-109:

43 Խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Ծովինար Յարութիւնեանին:

կապի մէջ: Այն կարող էր բաժանուել հետեւեալ բաղադրիչների. Բասոր (*Βάσορ*. գրիչների կողմից առայժմ լրիւ չվերականգնուող նշանակութեամբ ընկալուած), Օ միկրոն, որի թուային նշանակութիւնը 70 է, եւ *πεδάν* - պեդա՝ ընկալուած որպէս յուն. *πεδίον* - պեդիոն - «հովիտ», «դաշտ» բառի առայժմ չվերականգնուող քերականական ձեւ, որն անյայտ խմբագրողը փոխարինել է այրնաս հոմանիշով: Այս վարկածից բխում է, որ Սարարոնի սկզբնագրում, թերեւս, ոչ թէ նշուած են եղել ինչ-որ անհասկանալի հովիտներ, այլ նոյն Պարսպատունիք-Բասորոպեդա գաւառը պարթեւներին յանձնելը եւ ապա վերադարձնելը: Նշենք, որ Բ. Յարութիւնեանն ուղղել է Պարսպատունիքի անընդունելի տեղորոշումն Արաքսի հարաւային ափերին[44] եւ քարտէզագրել այն Կոտոր-Կարմիր գետի միջնահովտում (թերեւս, ճիշտը ոչ թէ աջ, այլ ձախ ափն է, դէպի Աղանդրոտ)[45]: Կարեւոր է, որ նրա փոքրիկ տարածքը սահմանակցում էր Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Հեր գաւառի հետ, ուստի հնարաւոր է ենթադրել, որ վաղ շրջանում Պարսպատունիք-Բասորոպեդա սահմանամարզն ընդգրկել է նաեւ ողջ Հերը եւ շրջակայքը՝ հիւսիսում Արաքսին հասնող («Աշխարհացոյց»-ում «մինչեւ ցերասխ գետ») Զրաւնիտիս-Զարաւանդ «բախտակից» մարզից հարաւ:

---

44 Տե՛ս **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 1963, էջ 77; **R. H. Hewsen**, *Armenia*, էջ 100:

45 **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը*, էջ 373-375:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Պատկեր 1. Աղբաթխէրտի տապանաքարը

Պատկեր 2. Աղբաթխէրտի խաչքարը

Պատկեր 3. Միրիկի եկեղեցու բարաւորի արձանագրութիւնը

Պատկեր 4. Ծիծեռնավանքի նորայայտ վիմագիրը

Պատկեր 5. Գիորգ Աշխատաւորի ինքնագիրը Ծիծեռնավանքում

Պատկեր 6. Ծիծեռնավանքի հարաւային ճակատի վիմագիրը



Պատկեր 7. Ռախիշի (Արախիշի) խաչքարը



Պատկեր 8, 9. Գրիգոր իշխանաց իշխանի խաչքարի վիմագիրը Աղբրաձորում (Մայրէջուր)

Պատկեր 10. Սոսթենէս վարդապետի խաչքարի վիմագիրը Աղբրաձորում (Մաքրէշուր)

Պատկեր 11. Սոսթենէսի խաչքարի պատուանդանի վիմագիրը (արեւմտեան ճակատ)

Պատկեր 12. Սոսթենէսի խաչքարի պատուանդանի վիմագիրը (հարաւային ճակատ)



Պատկեր 13. Աղբրաձորի ԺԴ. դարի խաչքարի վիմագիրը (ճակատ եւ հարաւային կող)



Պատկեր 14, 15. Վարդկոյ Մայրեջրեցու տապանաքարի եռատող վիմագիրն Աղբրաձորում (Մայրէջուր)



Պատկեր 16. Աստուածատուր նահատակի վիմագիրը Ծիծեռնավանքում

Պատկեր 17. Մհոտիկի վիմագիրը Ծիծեռնավանքում

Պատկեր 18 Մարկոս Պարոնտէրի տապանաքարը Ծիծեռնավանքում

Պատկեր 19. Ծիծեռնավանքի մելանագիրը

Պատկեր 20. Աղբրաձորի նորայայտ խաչքարը



Պատկեր 21. Պարոն Ղօջի վիմագիրը Աղուէսաճաքիի Տիրամայր Աստուածածին եկեղեցու պատին

Պատկեր 22. Զորմանքի տապանաքարի վիմագիրը



Պատկեր 23. Ուխտաձորի առաջին տապանաքարի վիմագիրը

Պատկեր 24. Ուխտաձորի երկրորդ տապանաքարի վիմագիրը

Պատկեր 25. Աղուէսահաքիի Տիրամայր Աստուածածին եկեղեցու վիմագիրը

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս Աղուանից կաթ. 110, 297
Աբբակում 326
Աբբասկուլի-Սուլթան 379
Աբգար *թագ.* 273
Աբդիշու 151
Աբեղնացով 149
Աբեղեան Մանուկ 231, 408, 411
Աբիջան 236
Աբուլաճէ Իլիա 152, 153
Տէր Աբրահամ 157
Աբրահամ Աղբաթանեցի 283, 284
Աբրահամ *Եզնացոմերցի* 370
Աբրահամ Երեւանցի 236
Աբրահամ Կրետացի 100
Աբրահամ կրաւնաւոր 285
Աբրահամեան Ա. Ա. 21
Աբրահամեան Աշ. 95, 119, 136, 151, 216, 217, 219, 338, 408
Աբրիհամ 285
Աբրոդաք 162
Ագաթանգեղոս 291, 408-410
Ադամ 376
Ադարութա 101
Ադին 116
Ադոնց Նիկ. 214, 267, 281, 282, 291, 407, 412
Ադրիանէ 296
Ազարեան Լ. 196
Ազարիա 39, 40, 149
Աթանէս 206
Ալահվերդի 380
Ալեքպերով Ա. 364, 366, 382
Ալիշան Հ. Ղեւոնդ 9, 103, 132, 135, 219, 220, 302, 307, 308, 334, 360, 365, 379
Ալփ Արսլան 331
Ախինճան 242
Ակինեան Հ. Ներսէս 5, 287, 289, 386
Ակորոս 262
Ահարոն 129
Աղագոլ 32
Աղաղուլի 32
Աղամ 388
Աղայ 336, 337 (նաեւ Աղէ)
Աղայպէկ 38
Աղայջան 236
Աղան 376 (տե՛ս Աղաջան)
Աղաջան 376, 388 (նաեւ Ա-ղան)
Աղէ 337 (տե՛ս Աղայ)
Աղէքսանդր 350
Աճապ 15, 16
Աճառեան Հր. 20, 112, 124, 127, 326, 333, 337, 342, 346, 347, 355, 356, 393, 399, 402, 413
Ամատունիներ 289
Ամբակում 326
Ամիր-Զէնդ 290
Ամիր Հասան 345

Ամիրխան 242
Ամիրճան 242
Ամիրջանեան Սերգէյ 116, 117
Այտղէն բէկ 236
Անանեան Հ. Պօղոս 5
Անանիա *Մրծնենափանցի* 39, 149
Անանիա Շիրակացի 95, 149, 151, 216, 217, 219, 231, 408
Անանիա Մոկացի 60, 126
Անանուն *Զ դարի* 308, 408
Անանուն *684 թ-ի* 254, 408
Անանուն Կաղանկատուացի 258
Անապատիկ 286, 287, 290
Անթաքեան Փայլակ 243, 276
Աշճեան Մեսրոպ արքեպ. 159
Աշոտ Բագրատունի 325
Աշոտիկ Սիւնեցի 60, 203, 204
Ապրհամ *վրդպ.* 31, 389 (տե՛ս Գասպար)
Աջար 18 (տե՛ս Անապ)
Առան *Նախահայր* 280, 330
Առաքեալ գրիչ 142
Առաքել Դաւրիժեցի 27, 274, 304
Առաքել *Եզնագոմեցի* 370
Առաքելեան Բաբկէն 196
Առաքելեան Գէորգի (Մենուշ) 36, 174, 210
Առաքելեան Վարագ 42, 94, 137, 226, 257
Ասատրեան Գառնիկ 155, 353
Ասծատուր 210 (տե՛ս Աստուածատուր)
Աստուածատուր 148, 151, 154, 160, 168, 170, 171 (հմմտ. Ցիզղբուզիղ)
Ատոմ գրիչ 19
Ատոմ *Սոթեցի* 236
Ատրներսեհ *Դիզակի իշխան* 61, 321
Ատրներսէհ *Լոռու իշխան* 60
Ատրներսեհ *Խաչէնի իշխան* 52, 59, 102, 226, 264, 266
Ատրներսէհ *Փառիսոսի իշխան* 59
Արամեան Ս. վրդ. 283
Արեւիկ 123, 127
Արզու 260, 261
Արմէնեան Յար. 31
Արշակունիներ 94, 232, 280, 308
Արուիճան, Արուեւծան *տոհմ* 205
Արտաշէս Ա 413, 416
Արտաշիսեաններ 232, 280
Արտաւազդ 231
Աւրպէլ 37
Աւագեան Սուրէն 20, 113, 124, 297
Աւգերեան Հ. Մկրտիչ 152, 167
Աւդալ Ա. 364, 383
Աւդալբեգեան Մայիս 152
Աւետիսեան Թորոս 354
Աւետիսեան Ի. 126
Աւետիսեան Հ. 124
Աւտուք 32, 209

Բաբախանեանց Ա. 62 (տե՛ս Լէօ)
Բաբան 99, 107, 284, Բաբէկ 266
Բագրատունիներ 61, 325
Բաղալեան Գեղամ 246, 260, 290, 360, 368, 375
ալ-Բալազուրի 266, 316, 317
Բալայեան Միշա 48
Բալայեան Վահրամ 305
Բալիզ 236
ալ-Բախիլի 317 (տե՛ս Սալման իբն Ռաբիա)
Բախտ 53
Բակշի Կիմ 296
Բակուր 406 (տե՛ս Պակորոս)
Բաղդասար միտր. Ջալալեանց 74, 79
Բայբուրդեան Վահան 288
Բարթիկեան Հրաչ 151, 326
Բարխուդարեան Սեդրակ 15, 30, 51, 75-77, 81, 82, 84, 86, 87, 90, 107, 122, 149, 187, 188, 198, 220, 222, 223, 226, 227, 305, 324, 325, 345, 389
Բարխուդարեանց (Բարխուտարեանց) Մակար եպ. 62, 75, 79, 80, 117, 122, 219, 220, 221, 224, 234, 256, 260, 293-295
Բարսեղ գրիչ 275
Բարսեղ Վաղաղնի քհ. 142
Բարսեղեան Յովհ. 25, 229
Բարտող Վլադ. 153
Բեժքեն 19 (տե՛ս Բէշքեն)
Բեհրութեան Ս. 133
Բեյլիս Վ. Մ. 109
Բերբերեան Յակոբ 296
Բէկնազար 388
Բէշքեն 14, 17, 19 (նաեւ Բեժքեն, Պեշգինէ)
Բինիաթ 388
Բիւզանդացի Նորայր 5
Բիւրթէլ 17
Բոզոյեան Ազատ 321
Բուղտայ 17
Բունիաթ 388

Գագիկ *Դիզակի թագ.* 62
Գալուստ 370
Գամկրէլիձէ Թամազ 27, 113, 246, 249, 300, 358, 404
Գանդոլֆո Ֆ. 171
Գառնիկ *եպ.* 94
Գասպար (տե՛ս Մէլիք Գասպար)
Գասպարեան Հր. 201
Գարդմանացիներ, Գարդմանեցի *տոհմ* 280, 281, 416
Գեորգ կաթ. *Գառնեցի* 325
Գերգ, Գէորգ *Արախիշցի* 49-54, 127
Գերգոս *Նուիրատու* 123, 127
Գեւոնեան Գեղամ 159
Գեօլեցեան Ս. 150
Գէորգ վան. *Բղենի* 44, 198
ս. Գէորգ (Գէորգիոս, Գիորգ, Գեւորգ) 137-141, 143, 147, 171, 178, 198, 199, 210
Գինոս 14, 15, 17, 20, 343, 349
Գիորգ (Գէորգ) Աշխատաւոր 39, 40, 42, 43, 45, 197-199, 200, 202, 203
Գիտ Արահեզացի 186, 189

Գնունի Արտակ 35, 368, 395
Գողթնացի, Գողթնեցի *տոհմ* 410, 411
Գոճանեան Հ. Պօղոս 8
Գոնզէ 251
Գորգիսեան Սամուէլ 48
Գուլ 356 (նաև Կիւլ)
Գուլաբիխան 34, 387-388
Գուլազ 356
Գուլաք 123, 128
Գուլխաս 37
Գուստաստաս Ս. 127
Գրզնունի *տոհմ* 281
Գրիգոր *Աղուանից կաթ. ԺԸ դ.* 225, 261
Գրիգոր Ատրներսեհեան 59, 266
Գրիգոր (Գրիգորիկ) *Բ Բաղաց թագ.* 60, 198, 203, 204
Գրիգոր *քհ. Գանձասարի* 250
Գրիգոր իշխանաց իշխան *Դիզակի* 57, 59, 61, 63, 64, 321, 328
Գրիգոր Դոփեան իշխան 243, 259, 273
Գրիգոր *Եղնագոմերցի* 370
ս. Գրիգոր Լուսաւորիչ 33, 93, 94, 138, 167, 251, 279, 302, 341, 343-345
Գրիգոր *քհ. Ծիծեռնավանցի* 39, 40, 150
Գրիգոր Մագիստրոս 16, 266
Գրիգոր *քհ. Շինաթաղցի* 388
Գրիգոր (Գրիգորիոս, Գրիգորիս) Ռաժիկ (Ռէյացի) 154, 161-170 (նաև Գրիգոր Պարսիկ, Երուանդ-Վշնասպ, Մանաճիհր, Պիրանգուշնասպ)
Գրիգոր *վան. Սպիտակաւորի* 345
Գրիգոր Սիւնեաց երէց 129
Գրիգոր Սիւնեաց իշխանաց իշխան 274
Գրիգոր Սիւնեաց վրդ. 129
Գրիգոր Տաթեւացի 274
Գրիգոր քհ. *Տաթեւի* 129
Գրիգոր Փառիսոսի թագ. 61
Գրիգոր Փառիսոսի իշխան 60
Գրիգորէս *Մայրեջուրցի* 65
Գրիգորէս *Նորշէնցի* 65, 243
Գրիգորիգ *վրիպ.* 41 (տե՛ս Գիորգ)
Գրիգորիկ, Գրիգորիոս, Գրիգոր *վրիպ.* 137-139 (տե՛ս Ս. Գէորգ)
ս. Գրիգորիս 84, 92, 93, 118, 119 167, 279, 304, 309
Գրիգորիս *Աղուանից կաթ. ԺԶ դ.* 285, 286
Գրիգորեան Գրիգոր 61, 67, 68, 172, 203, 204, 333
Գրիքոր աբեղայ 207

Դադեան Խաչիկ վրդ. 75, 81-87, 90, 117, 221, 224, 253, 285
Դադի (Դադէ, Դադիում) առաքեալ 272, 273
Դալվաթ 370
Դամիանոս 139
Դանիէլ մարգարէ 149
Դանիէլ *Խաչէնցի* 74
Դանիէլ Տրիոյ քհ. 110, 297
Դանիէլեան Էդուարդ 247

Դավիդ 238
Դաւիթ Աղուանից կաթ. 288
Դաւիթ Անհողին 60
Դաւիթ-Բէկ 382, 283
Դաւիթ Դւնեցի 158, 159
Դաւիթ Մեծ Կողմանց եպ. 258
Դաւիթ Ծոռոթկա որդի 124
Դաւիթ Սիւնիքի եպ. 284
ադ-Դինաւարի 266
Դիրում 392, 393
Դուրմիշ 393
Դոփեաններ 263, 273
Դրովանդական 155

ալ-Եակուբի 266
Եաղուպ 384
Եաւրի 294
Եգան, Եկան (տե՛ս Մէլիք Եգան)
Եգանեան Օնիկ 243, 276
Եզր կաթողիկոս 250
Եղայզար 116
Եղիա երէց Խոզանավարցի 384, 385
Եղիա գրիչ Հատրուղեցի 100
Եղիազար կաթ. *Այնթապցի* 275
Եղիազարեան Հ. 188
Եղիշայ երէց 37
Եղիշէ *պատմիչ* 290, 291
Եռանշահիկներ 253
Եսայի Աբու-Մուսէ 61, 62, 97, 277
Եսայի երէց 242
Եսայի Հասան Ջալալեանց 74, 78, 79, 81, 83-87, 89, 90, 221, 225, 261
Երախիս *վրիպ.* (տե՛ս Երասխ)
Երեմեան Սուրէն 9, 98, 118, 213, 214, 230, 231, 240, 259, 276, 278, 283, 298, 299, 302, 305, 307, 308, 311, 312, 315, 317, 409, 417
Երեմիա Աղուանից կաթ. 261, 275
Երեմիա վրդ. 350
Երեւում 399
Երուանդ-Վշնասպ 62, 166 (տե՛ս Գրիգոր Ռաժիկ)
Երուանդեաններ 415
Եւսեբիոս Կեսարացի 405
Եւստաթ, Եւստատ 326
Եւստաթէ առաքեալ 131
Եփրեմ գրիչ *Խանածախցի* 32, 387
Եփրեմ կաթ. *Ձորագեղցի* 74
Եփրեմ քհ. գրիչ *Օղվերձցի* 275,

Զաբարգան, Զաբերգան 163
Զագիկ 16
Զաքարայ երէց Եզնագոմերցի 390
Զաքարայ Խոզանավարցի 385
Զաքարէ արդ. *գրիչ* 287, 288
Զաքարիա Աղուանից կաթ. 288
Զաքարիա (Զաքար) Սիւնեաց եպ. 371, 372
Զաքարիա Քանաքեռցի 381
Զեյթունեան Անդրանիկ 243, 276

Զէյվա *(Բաղք)* 134
Զրադուշտ 161

Էաշի 16, 345
Էլուր (Էլրոյ) 13
Էլտկուզեաններ 117
Էմին Մկրտիչ 21, 61, 96, 129, 157, 227, 250, 352
Էփրիկեան Հ. Ս. 104, 112

Ըսըրյեան Զոհրաբ 48, 354

Թադէոս առաքեալ 238, 273
Թադէոս երէց *Րախիշցի* 46, 222
Թաթէոս, Թադէոս քհ. *(Աղուէսահաքի)* 339, 341, 343
Թաթոս 339, 340, 341, 343, 344, 349
Թահմազ *շահ* 236, 286, Թահեայմազ 285
Թամթա 18
Թանգրիղուլի, Թանգրգուլ, Թանկրիղուլ 33
Թասալ 38
Թարգմանչաց անապատ 259, 273
Թովմա Վանանդեցի 132
Թորամանեան Թորոս 398
Թօքուզ 236
Թօմայ 276
Թօփճեան Յակ. 285
Ժամկոչեան Միշա 12

Իազիդրոզիդ, Իազդրոզիդ *աստ.* 153, 157 (տե՛ս Ցիզդրուզիդ)
Իբն ալ-Ասիր 267
Իբն Հաուքալ 282
Իբն Սունբատ, Սնբատ 266, 267 (տե՛ս Սահլ)
Իբրահիմ Աբու-լ-Ֆաթհ 267
Իպակ 390 (տե՛ս Իփակ)
Տէր Իսահակ 157
Իսայ 116
Իսրոզէտէս *յուն.* 152 (տե՛ս Ցիզդրուզիդ)
Իսուր 223
Իսրայէլ, Իսրայէլ-Աբաս 255, 256
Իսքանդար Մունշի 377, 380
Իւանով Վեաչ. 27, 113, 246, 249, 300, 358, 404
Իզքաշեան Կարէն 152
Իքեր 153
Իւստի Ֆ. 154
Իփակ 390 (նաեւ Իպակ)
Իքեակ 117 (տե՛ս Իգաք)

Լաքուր Ժ. 168
Լալայեանց Եր. 62, 132, 133, 334, 372, 380, 391
Լար, Լիր 13 (տե՛ս Լուր)
Լէօ 62, 237, 251, 315, 376 (նաեւ Բաբախանեանց)
Լիպարիտ 324, 345
Լիսիցեան Ստ. 248
Լորդկիպանիձէ Մ. 60
Լուր (Լրոյ) 13 (նաեւ Լար)

Խաթուն *Եզնացոմերցի* 370
Խաթուն *Ծիծեռնավանցի* 37
Խաթուն *Մայրէջուրցի* 65
Խալաթեանց Բ. 267
Խալթ Փաուզոս 136
Խանլարեան Լ. Ա. 25, 274
Խաչատրեան Ա. Օ. 188

Խաչատրեան Գագիկ 395
Խաչիկեան Լեւոն 100, 108, 142, 245, 260, 287-289, 327, 385
Խըդըմիր 37
Խոյլալ 155
Խոսրով, Քոսրաու Անուշիրուան 151, 155, 160, 162-164, 166, 167, 169
Խոսրով Ապրուէզ 215
Խոսրով Պերոզ մոզ 154
Խոսրովիկ *իշխան* 204
Խուդապանդա շահ 285
Խուրշուդեան Էդուարդ 257

Ծատուր (Ածատուր) 148 (տե՛ս Աստուածատուր)
Ծատուր *Եզնացոմերցի* 370
Ծատուր *Փոլեցի* 392, 393
Ծաւղէացի, Ծաւղէացւոց *տոհմ* 240, 280, 281 (համտ. Սողացի)

Կադմեայ տուն, Կադմեանք, Կադմէականք *տոհմ* 291
Կահէն Քլ. 421
Կաղանկատուացի (տե՛ս Մովսէս Դասխուրանցի)
Կայեն, Կաեն 81, 89, 92
Կայծ-Սիւնի 132, 133
Կանայեանց Ստ. 256, 290-292, 408
Կասպէից *տոհմ* 291
Կատայ 68
Կարա-Եուսուֆ 344
Կարա-կոյունլուներ 344
Կարագեոզեան Յովհ. 23, 29, 103, 113, 119, 233, 234, 240, 246, 249, 310, 313, 318, 401, 405, 410
Կարաուլով Ն. Ա. 267
Կարապետ գրիչ *Արախիշցի* 45
Կարապետեան Սամուէլ 12, 20, 30, 31, 34, 35, 39, 41, 48, 53, 69, 103, 106-108, 116, 134, 142, 143, 150, 172, 202, 206, 210, 226, 234, 236-239, 243, 246, 251, 253, 286, 295, 312, 319, 338, 348, 361, 363, 365, 367, 374, 375, 382, 383, 389, 395, 396
Կաւատ, Քովադ արքայ 114, 162, 167
Կիզողեան Յովհ. 7
Կինեան *տոհմ* 283
Կիրակոս Գանձակեցի 62, 240, 241, 250
Կիրակոս քհ. 341, 343
Կիւլ 356 (տե՛ս Գիւլ)
Կիւրէղեան Ատոմ 55
Կիւրիկեաններ 60-61
ս. Կոզմաս 139
Կոկոն 62
Կոմիտաս 298
Կոնդրատենկո Ե. 11, 144, 348, 362
Կոստանդեանց Առաքել վրդ. 104, 108, 111, 114, 293
Կոստանդին Ծիրանածին 60
Կոստիկեան Քրիստինէ 28, 136, 349, 351, 359, 373, 379
Կորիւն 413
Կուադրատոս 405, 409
Կուլազ 356
Կունէո Պաոլո 171, 180, 261
Կչիկ 423

Հայկամ 69, 329, 330
Հաճուք 223
Համամչեան Միքայէլ 182
Համբարձումեան Վազգէն 229
Համինազար *վրիպ.* 31 (տե՛ս Մէլիք Հախնազար)
Հայկ Նահապետ 264, 266
Հայկունի 286
Հայրապետ 51-53
Հաննիբալ 413
Հասան *(Կեչառոյք)* 243
Հասան *Պռոշեան* 243
Հասան (տե՛ս Ամիր Հասան; Ջալալ-Դօլա)
Հասան պարոն 346-348
Հասան Ջալալեաններ 247
Հասրաթեան Մուրադ 146, 171, 186, 189, 195, 196, 261
Հասրաթեան Մորուս 20, 23, 27, 34-36, 41, 130, 171, 173, 175, 177, 180-183, 186, 187, 189, 191, 195, 197, 202, 204, 208, 209, 352, 371, 376, 379, 387, 388
Հեթում Ա արքայ 334
Հեթում իշխան 327
Հեթումեաններ 69, 322, 334
Հէգազ 37 (տե՛ս Մէլիք Հայկազ)
Հէրզ 37
Հիւբշման Հ. 104, 214, 220, 233, 301, 316, 404, 407
Հիւզըն Ռոբերտ 263, 298, 302, 306, 307, 409, 411
Հոռմիզդ 163
Հոփման Գ. 161, 162
Հրահատ 44

Ձագիկ 422

Ղազար Փարպեցի 234
Ղազարեան Արմէն 172, 180
Ղազարեան Ռ. Ս. 124, 349
Ղազիեան Ալվարդ 133
Ղայիթ 370
Ղանալանեան Արամ 133
Ղասում խօջայ 116
Ղարագեօզեան Արմէն 144, 204, 205, 352, 374, 401, 403, 404
Ղաւչ, Ղաւչ 346-348 (նաեւ Ղօչ, Ղօչ)
Ղափանցեան Գրիգոր 401
Ղաֆադարեան Կարօ 158, 159
Ղաֆադարեան Կորիւն 172
Ղոչ, Ղոչ 346, 348 (տե՛ս Ղաւչ)
Ղորղանեան Ն. Կ. 100
Ղուլ 371
Ղուլեան Արտակ 143
Ղունկիանոս 43
Ղօչ, Ղօչ 346-348 (տե՛ս Ղաւչ)

Ճաղարեան Վլադ. 172
Ճապ *վրիպ.* 16 (տե՛ս Աճապ)
Ճեմճեմեան Հ. Սահակ 236, 311

Մաթեւոսեան Արտաշէս 239, 266, 325, 413
Մաթեւոսեան Կարէն 330
Մաթեւոսեան Ռաֆիկ 60
Մաթէոս 372
Մալխասեանց Ստ. 234, 250

Մախոժ 153, 154 (տե՛ս Ցիզըբուզիդ)
Մահան 204
Մահաւզուն 203
Մահբանու 203
Մահբար 203
Մահեւանեաններ 204
Մահի 203
Մահմլբէ 203
Մահուտ, Մահուտիկ 202-204 (տե՛ս Մնուտիկ)
Մահփարի 203, 387, 388
Մաղալեան Արտակ 104, 288
Ս. Մամաս 139
Մամիկոնեաններ 234, 417
Մանաճիհր (Մանաճհրի) 165-167, 169 (տե՛ս Գրիգոր Ռաժիկ)
Մանանդեան Յակոբ 288, 344
Մանաւէլ 120, 311
Մանկիկ 129, 204
Մանվէլ, Մանուէլ 339, 341, 343, 344, 349
Մանուկեան Թորգոմ արքեպ. 97
Մաշթոց, Մաշտոց Եղիվարդեցի 265, 270, 271, 272, 277
Մաշտոց, Մեսրոպ Մաշտոց 74, 104, 243, 254, 275, 368, 378, 411
Մառ Նիկ. 153, 297, 317
Մասուդ իբն Նամդար 109
ալ-Մասուդի 267
Մատթէոս Ուռհայեցի 325, 326
ս. Մար 139
Մարզար 370
Մարեան 370, 390
Մարզուբան իբն Մուհամմադ 282
Մարի (Մարուն) 36, 38
Մարիամ գրիչ 385
Մարկոս եպ. 208, 385, 386
Մարկոս *Մրջմանցցի* 251
Մարկուարտ Եօզէֆ 153
Մարճան 370
Մարտիրոս *Խաճմաճոռցի* 117
Մարտիրոս *Խնձորեկցի* 46, 222
Մարտիրոսեան Պարգեւ արքեպ. 211
Մաքսուդեանց Մեսրոպ վրդ. 100, 289
Մելիքսեդեկ *անձնան.* 355
Մելիքսեթ *Մրջմանցցի* 251
Մելիքսոթ *Սպիտակաւորցի* 354-355
Մեհեւան 204
Մեչլումեան Տիգրան 48
Մերանգուլ 33
Մերդան 117
Մէլիք-Ադամեան Մ. վրդ. 325
Մէլիք Բաբէ (Պապայ) 303-304
Մէլիք-Բախշեան Ստեփան 24, 229
Մէլիք Բաղի 304
Մէլիք-Բէկ 261-262
Մէլիք Գասպար, Պարոն Գասպար 32, 387, 388
Մէլիք Եգան 304, 305
Մէլիք Թանգրղուլ 33
Մէլիք Հախնազար Ա 371
Մէլիք Հախնազար Բ 30, 32, 387, 388, 389

Մէլիք (Պարոն) Հայկազ, Հէգազ 20, 34, 38, 206, 208, 376, 379, 380, 386, 388
Մէլիք-Հայկազեաններ 204, 305, 376, 378, 380, 387
Մէլիք-Շահնազարեան-ներ 304
Մէլիք Սույամ 117, 304
Մէլիք-Փաշայեաններ 303
Մէլիք Փաշիկ 304
Մէլիք-Օհանջանեան Կա-րօ 241
Մէլիքեան Գուրգէն 36
Մէլիքսէթ *Եզնագոմեր-ցի* 390, 391
Մէլիքսէթ-Բէկ Լեւոն 60
Մըղօվուզ 106 (տե՛ս Մա-ղաւուզ)
Միլլեր Վ. Բ. 224, 255
Միհր 204
Միհրական տոհմ 264, 268, 269
Միհրան 162, 164-166
Միհրնարսէ 164
Մինայ *Աղուէսահաբե-ցի* 341, 343
Մինայ *Արախիշցի* 49-51
Մինորսկի Վլադ. 109, 267, 282, 330, 331, 380
Միսայէլ 39, 40, 149
Միսաք 149
Միր-Ալադին 290
Միրզախան բէկ 275
Միրզախան մէլիք 371, 372
Միքայէլ, Միխայել Ասո-րի 273
Միքայէլ *Խզնավարցի* 385
Մլեհ 243
Մխիթար Աթարբեկ 202, 203
Մխիթար *Ամարասի եպ.* 283
Մխիթար *Մայրեջուրցի* 65
Մխիթարեաններ 5, 97, 98, 217, 311
Մկրտիչ Թեղենեցի 239
Մկրտիչ եպ. *Քաշաթա-ղի* 206
Մկրտում Մըկըրդում 357, 397, 399, 400
Մկրտչեան Ալիկ 172
Մկրտչեան Արթուր 73
Մկրտչեան Յովհ. 201, 398
Մկրտչեան Շահէն 100, 101, 103, 104, 115, 117, 166, 247, 295
Մկրտչեան Ռուզան 148
Մհոտիկ 202-204 (նաեւ Մահոտ)
Մնացականեան Ասա-տուր 401
Մոմիկ 18, 201, 204
Տէր Մովսէս 157
Մովսէս Դասխուրանցի 9, 34, 43, 44, 52, 53, 60, 62, 93, 94, 97, 107, 136-138, 140, 144, 205, 220, 225, 226, 233, 254, 257, 258, 264, 266, 268-272, 276-278, 284, 293-296, 408 (նաեւ Կաղանկատուացի)
Մովսէս *Եզնագոմերցի* 370, 390
Մովսէս Խորենացի 93, 215, 216, 231, 279, 280, 291, 408-410, 413, 414
Մովսէս *Սեւորդեաց իշ-խան* 282
Մովսէս Տաթեւացի 386
Մովսիսեան Հ. Աթա-նաս 127, 171, 194

Մութաֆեան Քլօդ 321
ալ-Մուկադդասի 267
Մունեջջիմ-Բաշի 331
Մուշեղ Մամիկոնեան 417
Մուշեղեան Ալբերտ 215, 413
Մուշեղեան Ե. 237
Մուսա *իշխան Ջուրգի* 282
Մուսէ *Դիզակի իշխան* 62
Մուսէս *իշխան Չարենի* 236
Մուրադեան Պարոյր 71, 118, 124, 140, 152, 252
Մռավենց *տոհմ* 236
Մսրի, Մսրիխաթուն 19
Մսրիկ 13, 14, 17, 19
Մսրիշահ 19
Մօսէս *Խծաբերդցի* 116
Մօվսէս *Եզնագոմերցի* 370

Յազդպանահ 160, 161, 162, 167, 169, 170 (հմմտ. Յիզդբուզիդ)
Յակոբ *Եզնագոմերցի* 370
Յակոբ Ոյծայ երէց 129
Յակոբեան Ալ. 35, 43, 63, 94, 97, 107, 126-131, 137, 138, 144-151, 198, 200, 205, 221-226, 235, 245-249, 251-258, 270, 279-283, 296, 297, 300-303, 306, 310, 313, 318, 320, 329, 330, 333, 344, 349, 352, 366, 367, 374, 403, 406, 413, 418
Յակոբեան Արթուր 55
Յակոբեան Գուրգէն 106, 395
Յակոբեան Թաթիկ 24, 229, 302
Յակոբեան Նիւրա 159
Յակոբեան Վազգէն 117, 126
Յակոբեան Յոլակ 7
Յակովբ Ալիդուլիի քհ. 106
Յարութիւն *Եզնագոմեր-ցի* 370
Յարութիւնեան Բաբկէն 94, 133, 214-217, 231, 257-259, 263, 264, 278-280, 284, 290, 293, 298, 299, 301, 302, 306, 308, 312, 313, 401, 402, 404, 407, 408, 411, 413, 416, 417, 420
Յարութիւնեան Ծովի-նար 419
Յարութիւնեան Սարգիս 133
Յարութիւնեան Սէթ 177, 408
Յարութիւնեան Վարազ-դատ 171, 172, 177
Յըզըմխուաստ 156
Յիզդբուզիդ, Յիզտ-բուզտ 151, 154-155, 157-160, 165, 168-170 (տե՛ս Իազիդբոզիդ)
Յիսուս Քրիստոս, ՔՍ 39, 155, 161, 163, 167, 169, 329, 399
Յոբ 119, 309
Յոխ 287, 288 (տե՛ս Ովէյս)
Յոհան 38
Յոհաննէս *Աղուանից կաթ.* 285
Յոհաննէս *Գանձասարի վան.* 51
Յոհաննէս *Տաթեւի վրդ.* 350
Յովանէս Կողբեցի 245
Յովանէս *Ճինաթաղցի* 388
Յովաննէս եպ. Սիւնեաց 198
Յովասափ 244
Յովէլ 258
Յովհան Մայրագոմեցի 250

Յովհաննէս Ամարասի եպ. 62
Յովհաննէս *Բղենի քհ.* 45, 198
Յովհաննէս *Բրջնոյ արք-եպ.* 239
Յովհաննէս Դրասխանակերտցի 157, 158
Յովհաննէս Չմշկիկ 325
Յովհաննէս տերանց տէր 267
Յովհաննէս Օձնեցի 125, 126
Յովհաննիսեան Աշոտ 47, 223, 387
Յովհաննիսեան Լեւոնիկ 382, 383, 395
Յովհաննիսիկ (Յովհաննէս) Մարեցի 274
Յովսէփեան Գարեգին 16, 204, 265, 325.
Յուդայ 81, 89, 92
Յունան 209
Յուրիխան 390
Յուրին 243
Յրիկ 13

Նաբուգոդոնոսոր 149
Նազար պարոն 386
Նազարեան Ո. 126
Նազլուխան 390
Նալբանդեան Գ. Մ. 224, 255, 257
Նախապետ 154
Նահապետ Ա Եդեսացի 276, 371
Նաճարեան Քերոլայն եւ Ջորջ 36
Նաջագուլ, Նաջարգուլ 33, 209
Նատոյ 155
Նաւասարդ, Նաւաս 370
Ներսէ, Ներսեհ Փիլիպեան 268, 269
Ներսէս *Ամարասի եպ.* 303
Ներսէս Բ Բագրեւանդացի 157, 166, 168
Ներսէս *Բոլի եղցու եպ.* 121
Ներսէս *Դիզակցի* 64
Ներսէս Լամբրոնացի 334
Ներսէս Շնորհալի 386
Ներսէս Ռաժիկ 155
Ներսէս Սիւնեաց եպ. 372
Նիխորական, Նիհորական 154, 169
Նոարգս *վրիպ.* 32

Շահ *Փոլեցի* 394
Շաղղաղեաններ 330-332
Շաթ 258
Շալմայ եպ. 164
Շահ Աբբաս 371, 378-381,
Շահ Ապաս 286
Շահ Ապազ Փոքր, Շահապազ 242, 286
Շահ Դահման (=Թահմասպ) 303
Շահ Իսմայէլ 286
Շահ Ուսէին, Հուսեին 371 (տե՛ս Սուլթան-Հուսեյն)
Շահ Սուլէման, Սըլեման, Սլէյման 244, 275, 286
Շահանդուխտ 60, 68
Շահինեան Սամուէլ 23
Շահխաթունեանց Յովհ. (Յոհաննէս) Շահրիարեցի 74, 75, 77- 81, 260
Շահունեցիներ 204
Շամամ 386
Շանշի 260
Շապան 388

Շատաղէկ 20, 21
Շատարեւ 20, 21
Շատքարի 20, 21
Շատեմայր 20
Շատլոյս 20, 21
Շատխէր 14, 19-22, 349
Շոպէն Ի. 364, 366, 381
Շոռոթիկ 124

Ոհան *Եզնագոմերցի* 370
Ոհան *Միծեռնավանցի* 37
Ոհանէս *Եզնագոմերցի* 370
Ոհանէս, Ոհաննէս վրդ. *Միծեռնավանցի* 38, 207
Ոսկան *Եզնագոմերցի* 370
Ոսկան *Թալիշցի* 311
Որդանան վրդ. 384
Որմիզդ արքայ 166
Ուլուբաբեան Բագրատ 60, 61, 68, 226, 228, 229, 240, 247, 252, 261, 263, 282, 285, 288, 298, 299, 305-308, 331, 401, 410
Ուխտանէս 255
Ուվէյս 288 (նաեւ Յոիս)
Ուտէացի իշխանատոհմ, Ուտիացիք 280, 281, 291

Չոբանեան Պաւէլ 225
Չոբանեաններ 288

Պագիրեւ Դ. Դ. 27, 358,
Պալեան Խորէն 141
Պախտամ 388
Պակիսէ 388
Պակորոս, Բակուր 406
Պաղտասար 237
Պապաք 123, 124, 127
Պատկանեան Ք. Պ. 95, 216, 219, 408
Պաւղոս քարգործ 73
Պեշգինէ 19 (տե՛ս Բէշքեն)
Պետերս Պոլ 156, 170
Պետրոս առաքեալ 132, 329, 372
Պետրոս գրիչ *Աղբակեցի* 289
Պետրոս Աղուանից *կաթ. ԺԴ դ.* 288, 329
Պետրոս Աղուանից կաթ. *ԺԷ դ. սկզբի* 117
Պետրոս Աղուանից կաթ. *Խանձկեցի* 237, 242, 261, 275, 286, 289
Պետրոս *Միծեռնավանցի* 38
Պետրոս գրիչ *Վանեցի* 289
Պետրուշեւսկի Ի. Պ. 139, 376
Պերոզ 114, 154, 155, 162
Պերպերեան Հայկ 131, 240
Պէգիխան 37
Պէգիսուլթան, Պէկինսուլթան 36, 37
Պիգուլեւսկայա Ն. Վ. 214, 404
Պիլէզիկեան Հ. Բ. 214, 404
Պիրանգուշնասպ 162, 169 (տե՛ս Գրիգոր Ռաժիկ)
Պլինիոս Աւագ 406, 408
Պհաթուր 388
Պողարեան Նորայր արք-եպ. 169, 330
Պոռշեաններ 16
Պտղոմէոս 291, 405, 406, 409-411, 413-415
Պօղոս առաքեալ 372
Պօղոս վրդ *Խնածախցի* 376
Պօղոս երէց *Եզնագոմերցի* 390, 391

Ջալալ-Դօլա Հասան 51, 54, 247, 248
Ջալալեանց Սարգիս 75, 77-79, 82, 84, 85, 106, 107, 122, 225, 253, 334, 372
Ջաճուկեան Գեւորգ 103
Ջեզայիրեաններ, Ջեզայիրեան 288
Ջեւանշէր 205, 255, 278
Ջիհանեան Վ. Գ. 358
Ջուրջեանց 204

Ռուսա Ա. 233, 249, 310, 313
Ռստակէսեաններ 207, 210

Սաբի 370
Սադուն 324
Սալարեաններ 282
Սալման իբն Ռաբիա ալ-Բախիլի 316, 317
Սահակ *Առտպատականցի* 155
Սահակ *Եզնացոմերցի* 370
Սահակ Ջորափորեցի 141
Սահակ-Սամուէլ 156
Սահակ Սեւադայ 59-61
Սահակ *Միննաց իշխան* 96
Սահակ Վանանդացի 325
Սահակիկ *Սիւնեցի* 204
Սահինեան Ալ. 171, 180
Սահլ (Սահլի) Սմբատեան 59, 226, 253, 264, 266, 267, 272 (նաեւ Իբն Սունբատ)
Սաղումեան Սուրէն 17
Սամուէլ Անեցի 69, 70, 156, 322, 327, 329-332
Սայտի 243, 260, 274 (նաեւ Սէյտի)
Սանամեան Յովհ. 35, 38, 135, 146, 171-174, 176, 180, 181, 184, 190, 193, 198, 201, 234, 368, 386
Սանդուխտ 370
Սանջեան Ֆ. 250
Սասանեաններ 114, 151, 168, 177, 215, 257
Սավար 386 (տե՛ս Սարաւ)
Սարաչեան Մամիկ 296
Սարաւ 37, 371 (նաեւ Սավար, Սաւար, Սերաւ)
ս. Սարգիս 139,
Սարգիս Ա. Սեւանցի 227
Սարգիս *Գ կաթ.* 384
Սարգիս *Աղուանից կաթ.* 303
Սարգիս *Արախիշցի* 54
Սարգիս *Արջաձորցի* 54
Սարգիս եպ. Գտչավանքի 91
Սարգիս *Դիզակցի* 123, 127
Սարգիս *Եզնացոմերցի* 368, 370, 389
Սարգիս Ծարեցի վրդ. 51, 224
Սարգիս *Մայրեգուրցի* 323, 328, 332, 333
Սարգիս Շնորհալի 243
Սարգիս Պարոն *վրիպ.* 31, 389 (տե՛ս Մելիք Գասպար)
Սարգսեան Գագիկ 239
Սարգսեան Սլաւա 220, 403, 404, 407,411, 416
Սարդուրէ Բ 318, 405
Սարը-Մուստաֆա փաշա 225
Սարհատլ 38
Սաւար 36 (տե՛ս Սարաւ)

Սբատ (տե՛ս Սմբատ)
Սեդրաք 149
Սեներքերիմ 68
Սերաւ 371 (տե՛ս Սարաւ)
Սեֆեաններ 350, 373, 376
Սէյտի, Սէտի 243 (տե՛ս Սայտի)
Սիմայ 237
Սիմէոն Ամարասի եպ. 283
Սիմէոն, Սիմէօն Երեւանցի 228, 229, 240-243, 246, 260, 261
Սիմէոն Ծաղատոյ վան. 129
Սիմէօն *Աղուանից կաթ.* 275
Սիմի (Սիմուն) 36
Սիմոնեան Յակոբ 35, 38, 44, 135, 146, 147, 171-174, 176, 184, 190, 234, 245, 339, 368, 386
Սիսակ Նախահայր 280, 411
Սլէյման, Սըլեման 244(տե՛ս Շահ Սուլէման)
Սմբատ *Հեթումեան* 334
Սմբատ, Սբատ Ա Բագրատունի 325
Սմբատ, Սբատ Բ Սիւնեցի 203, 324, 326
Սմբատ, Սմբատիկ *Սիւնեցի իշխ.* 96, 204
Սմբատ,Սմպատ, Սպատ *Մայրեգուրցիներ* 322, 323, 325-329, 332, 333
Սմբատ, Սպատ, Ստատ Թոռնեցի 325, 326
Սմբատ,Սպատ *Խաչէնցի* 324
Սմբատ, Սպատ *Շողուագեցի* 324
Սմբատ, Սպատ *Վաղուհասցի* 324
Սմբատեան Կարէն 201
Սմբատեանց Արտակ եպ. 132, 133
Սողացի *տոհմ* 281 (հմմտ. Ծաւղէացի)
Սողոմոն 67, 333
Սոսթենէս 58, 59, 64, 66, 67, 322, 328, 333
Սուլէման 375 (տե՛ս Շահ Սուլէման)
Սուլթան-Հուսէյն շահ 371 (նաեւ Շահ Հուսեին)
Սուքում (տե՛ս Մէլիք Սուքում)
Սուքիաս կաթ. 288
Սոփի *արքայադուստր* 68
Սոփի *թագուհի* 62
Սպանդարեան Սպ. 135
Սպատ (տե՛ս Սմբատ)
Սպրամ 233, 264, 266
Սվազեան Հենրիկ 280, 417
Ստեփաննոս (Ստեփանոս) Արլ-Ասադ 61, 107, 284
Ստեփաննոս Ե Աղթամարցի 287
Ստեփաննոս Զ Աղթամարցի 289
Ստեփաննոս *Բդենոյ քհ.* 44
Ստեփաննոս (Ստեփանոս) *Որճեռնավանքի վան.* 38, 40, 129, 146, 149
Ստեփաննոս (Ստեփանոս) *Մայրեգուրցի* 58, 64, 67, 328
Ստեփաննոս *Մաքենոցաց վան.* 129
Ստեփաննոս Նախավկայ 271, 384, 385
Ստեփաննոս *Քօշիցի եպ.* 303

Ստեփաննոս Օրբէլեան 9, 21, 24-31, 35-37, 40, 44, 45, 60, 61, 67-71, 96, 99, 119, 129, 130, 131, 136, 143, 144, 149, 156, 160, 187-189, 198, 205, 227-229, 232, 238, 240, 265, 268-271, 283, 284, 301, 327, 331, 338, 349-353, 357, 359, 366, 367, 373, 378, 383, 384
Ստեփաննոս (Ստեփաննոս) Աղուանից կաթ. 68
Ստեփաննոս Բիւզանդացի 408
Ստեփաննոս Տարօնեցի Ասողիկ 250
Ստրաբոն 232, 401-404, 406, 414, 415, 418-420

Վախթանգ, Վախտանգ, Վախտանկ 260, 261, 324
Վահան Մամիկոնեան 234
Վահանիկ *իշխան* 204
Վանական Վարդապետ 272, 273
Վաչական (Վաչագան) իբն Մուսա 282
Վաչագան *Բարեպաշտ* 93, 94, 279, 308, 408
Վառվառիա 274
Վասակ 16
Վարազ-Տրդատ Ստեփաննոսեան 264, 268, 269
Վարազվաղան 280
Վարդ *քհ.* 342
Վարդան *վրդպ.* 79-81, 89 (տե՛ս Վրթանէս)
Վարդան *Աղուէսահաքիի քհ.* 339-341, 343
Վարդան Բարձրաբերդեցի (Արեւելցի) 61, 131, 157, 240, 250, 265
Վարդան *Գանձասարի քհ.* 250
Վարդան Մամիկոնեան 186, 291
Վարդանեան Վ. 286
Վարդիկ, Վարդկոյ 66, 67, 70, 333
Վարդոմ 392, 393
Վարոս 139
Վենիկ 296
Վիրոյ 258
Վրթանէս *վրդպ.* 81, 123
Վրդանէս *Եգնագոմերցի* 369, 389
Վրթանէս, Վրդանէս 78, 79, 80, 81, 89, 91, 109, 123, 128

ատ-Տաբարի 267
Տարսայիճ 18
Տէր-Աւետիսեան Սմբ. 285
Տէր-Գրիգորեան Դաղեան Վահան 286
Տէր-Դաւթեան Քն. 152
Տէր-Ղեւոնդեան Արամ 267, 282, 316, 331, 332
Տէր-Մինասեան Եր. 291
Տէր-Միքայէլեան Ն. 325
Տէր-Միքելեան Արշակ 69, 330, 322
Տէր-Մկրտչեան Գալուստ 165-167, 234, 291, 408
Տէր-Մովսիսեան Մեսրոպ մագ. 236
Տիգրան Բ 419
Տիրացու 339, 341, 343
Տիրոս 336, 337

Տոնոյեան Գեւորգ 64
Տրդատ 264, 268, 269

Փաղլ 331, 332
Փաղլուն 331
Փաղլունեաններ 61, 70, 329, 331
Փանահ 312
Փարզատ 370
Փաւստոս Բուզանդ, Բուզանդացի 93, 279, 417
Փափազեան Յակոբ 304, 305, 351, 379
Փիլիպպէ (Փղիպեան) *Միհրանեան* 268, 269
Փիլիպպէ *Սիւնեաց իշխան* 129
Փիլիպպէ *Փառիսոսի իշխան* 61
Փիլիպպոս Ա Աղբակեցի 262, 372, 385
Փիլոն Տիրակացի 151
Փիրազ 39
Փիրանգուշնասպ 162 (տե՛ս Գրիգոր Ռաժիկ)

Քալանթարեան Արամ 155
Քամալեան Սարգ. 69, 243, 248, 251, 254, 261, 262,
Քեշիշեան Մ. վրդ. 100
Քիլաղպեան Հ. Եղիա 97
Քիւրտեան Յար. 267
Քոթանջեան Նիկ. 172
Քուրդ իշխանաց իշխան 261
Քուրդիկ 67, 333

Օլէարիուս Ադամ 376, 377
Օհանէս *հայրապե՞տ* 64
Օշին 69, 322, 329, 331-334
Օրբէլի Յովսէփ 50, 54
Օրմանեան Մաղաքիա արքեպ. 126, 371

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբասասար 253
Աբասդար 136
Աբարան *գւռ.* 376
Ագար *գւռ.* 96, 107, 108, 293 (տե՛ս Հակարի)
Ագարակուգետ 27
Ագլէթի 251 (տե՛ս Ալգէթի)
Ագուլիս 132 (նաեւ Արգուլիք)
Ադաք 253
Ադբաղխիռ, Ադբախիռ *վր.*, *ռուս.* 11, 348, 362, 383 (տե՛ս Աղբաթխէրտ)
Ադիեամաճ 112
Ադրբեջան, ադրբեջանցիներ 11, 12, 46, 103, 134, 225, 319, 377
Ազա 251
Ազիզբէկովի շրջան 188
Աթոն 153
Ալբաղխիռ *ռուս.* 11 (տե՛ս Աղբաթխէրտ)
Ալբատտ *գւռ.* 368, 369, 372, 373, 375, 377, 378, 381, 382
Ալբանիա 94, 138, 254, 258, 270, 403, 406 (տե՛ս Աղուանք)
Ալգէթի, Ալգէթ 251, 376 (նաեւ Ագլէթի)

Ալեակչի 71
Ալիղուլի, Ալիղուլիքենդ, Ալ-ղուլիշէն 106, 394
Ալխասլու 205, 352 (տե՛ս Ա-րուակաճ)
Ալուչալու 246
Ալպատխիր, Ալփատխէր 11 (տե՛ս Աղբաթխէրտ)
Ալփաթար բրդեր 383
Ալփոուտ, Ալփաուտ, Ալ-փութ գիւղ 360, 365, 368, 373, 375, 377, 381, 382-384 (նաեւ Արփաուտ)
Ախբակ 289 (տե՛ս Աղբակ)
Ախուրեան 239
Ակաճարերդ 252
Ակաճայ 259-262, 273, 274
Ակաճաջուր գ. 254
Ականք 25, 36, 351, 352, 357
Ակարդոճ, Ակարթաճ 424
Ակրա 164, 165
Աճմեղլու 363 (տե՛ս Հէրիկ)
Աճր 282
Աղախերդ, Աղախիրտ 22, 235 (տե՛ս Աղբաթխէրտ)
Աղաճեջք, Աղաճեչ, Աղա-ճէճք 9, 10, 23-27, 34-36, 71, 96, 130, 131, 136, 142, 143, 144, 203-205, 227, 234, 235, 301, 319, 351, 357, 366, 374-376, 384
Աղաճդ-ոստ 113, 300, 420
Աղաւճոյ գ. 9, 10, 11, 27-29, 30, 63, 78-80, 83-85, 89, 92, 96, 99, 134, 143-146, 227, 319, 320, 338, 348, 351, 357, 358, 360, 361, 366, 373, 381 (նաեւ Աղուճոյ)
Աղբաթաճք 29, 283
Աղբաթխէրտ, Աղբաթ-խէր 11, 14, 17, 21, 22, 24, 25, 28, 29, 34, 145, 235, 319, 338, 343, 344, 348-351, 359, 362, 383 (նաեւ Աղբադխիռ, Ալպատխիր, Աղախերդ, Աղվատխէր, Աֆատխար)
Աղբակ 29, 289, 290, 405 (նաեւ Ախբակ)
Աղբաճու խեռպ 29
Աղբուլաղ 36, 353, 357, 362
Աղբրաձոր 55, 61, 64, 68, 70, 320, 322, 390 (նաեւ Կիւրջաբուլաղ, Ղորչու-բուլաղ)
Աղգեօլ 299
Աղդաբաճ 253 (տե՛ս Ուղ-տապաճ)
Աղդաւ 24 (տե՛ս Աղտաւ)
Աղթամար, Ախթամար 287, 290
Աղիճ ճաճապարհային կամուրջ 64
Աղուաճք, Աղուաճից 9, 43, 52, 59-62, 68, 74, 93-97, 102, 110, 136, 138-141, 143, 146, 205, 213, 215-219, 225-228, 250, 254-256, 258, 266-270, 277-279, 296-298, 303, 381, 403, 406, 408. Աղուաճեաճ 266, Աղ-ւաճեաց 286, Աղուաճիս 115 (նաեւ՝ Ալբաճիա)
Աղուդի 183
Աղուերծ 275, 378 (նաեւ Ը-ղուերծ, Օղվերծ)
Աղուէ 216, 218
Աղուէսաճաքի, Աղուէսա-ճաք, Աղուէսայաքի 12, 320, 338, 343, 348, 349, 351, 359
Աղուճոյ, Աղուճայ գ. 63, 79-89, 92, 96, 227. Աղուա-ճոյ 80 (տե՛ս Աղաւճոյ)

Աղջայեազի 54 (տե՛ս Ար-ջաձոր)
Աղջայքաճդ *(Ներքի-շէճ)* 311
Աղջաքեճդ 365, 375, 377, 382 (տե՛ս Աճի)
Աղջաքեճդ 360-365 (տե՛ս Բոզլու-Աղջաքեճդ)
Աղստափա *գտ.* 376
Աղստեւ գ. 315
Աղվատխէր 11, 348 (տե՛ս Աղբաթխէրտ)
Աղտաբաճի ջուր գ. 253 (համմտ. Ուղտապաճ)
Աղտաւ, Աղտաւ 24 (նաեւ Աղդաւ)
Աղցք 177
Աղքեօրփի, Աղ-քեօր-փի 360, 374
Աղօղլաճ գ. 11, 27, 143 (տե՛ս Արքուգետ)
Աղօղլաճչայ գ. 121, 303 (տե՛ս Ամարասի գետակ)
Աճաճաճ 377
Ամաղուի Նորավաճք 18
Ամարաս *վաճ* 73, 93, 119, 128, 279, 302, 308 (նաեւ Մարաս)
Ամարաս *գտ* 63, 89, 91, 93, 94, 97-99, 109, 110, 120-122, 252, 277, 283, 296, 305, 310
Ամարասի գետակ գ. 118, 121, 122, 283, 303, 309
Աճապատճ Տաթեւու 132
Ամիրվար 416
Ամուստեղ, Ամուստուկ 10, 294
Այգաոք 290 (տե՛ս Ջաւ գա-ւառ)
Այգեստաճ 247
Այպաճուճիք 292
Այտրուաճք 292
Այրարատ 22, 230, 233, 234, 281, 401, 406
Այրարատեաճ ճաճաճգ 239
Աճկեղակոթ 16
Աճդրկովկաս 135, 360, 362, 364, 365, 383. Այսրկով-կաս 381 (համմտ. Կովկաս)
Աճէժ 236, 366
Աճի *քաղ.* 204, 282
Աճի *գիւղ* 365, 375
Աճուխս 241
Աճուշաւաճ, Աճոշաւաճ, Ա-ճուշավաճք 25
Աճտիոք 163
Աշաճ 119 (տե՛ս Արաժաճք)
Աշտարակ 179, 180, 191, 210
Ապաճէճ 241-244
Ապասայ սար 254
Առաճ 70, 110, 113, 117, 162, 163, 267, 330-332 (նաեւ Արրաճ)
Առաճ-ռոտ, ռովտ 95, 110, 113, 217, 218, 298-300, 316 (նաեւ Ասոոտ)
Ասպաճդուզ 99, 100, 318
Ասկերաճ 313
Ասորիք, Ասորոց 152, 153, 156, 160, 165-170, 180, 273, 292 (նաեւ Սիրիա)
Ասորոկ 26 (տե՛ս Աւարակ)
Ասոոտ 95, 299 (տե՛ս Ա-ռաճ-ռոտ)
Աստղաբլուր, Աստեղա, Աս-տեղճ բլուր 254, 255
Ս. Աստուածածիճ. *Աճապա-տիկի՛* 287, *Արախիշի՛* 45, *Միրիկի՛* 28, 388
Ատրէճիս, Ատարէճիս, Ատ-րեճիճ 237, 259, 260

Ատրպատական 155, 231, Ատրոպատէնէ 408, 413
Արաբներ 266, 267, 316
Արագ, Արագչայ, Արագջուր գ. 251, 314
Արամանք 119 (հմմտ. Աշան)
Արախիշ 45, 46, 51, 54, 55, 71, 106, 222, 320, 375
Արախշում 46, 47, 222
Արածանի գ. 234
Արածոյ կողմն 230
Արահուծ 25, 28, 53, 350 (նաեւ Արաւիս *(վրիպ.)*, Արբիլար, Մալիբեյ)
Արամայէ 161-163, 165, 168 (տե՛ս Մահոզէ դ' Բեթ Արամայէ)
Արան-ռովտ 218, 299 (տե՛ս Առան-ռոտ)
Արարատեան գաւառ 75
Արարատեան դաշտ 413
Արաւիս 28, 350 (տե՛ս Արահուծ)
Արաւուսի գետակ գ. 10
Արաքս գ. 63, 78, 82, 85, 92, 96-100, 109, 112, 114, 120, 214, 228, 277, 293, 299, 300, 307-308, 318-319, 404, 407-408, 411, 412, 414, 420 (նաեւ Երասխ)
Արաքսէնէ 402, 403, 409, 412-415
Արբիեան 24, 25, 205
Արգուլիք 228 (տե՛ս Ագուլիս)
Արգունաշ 112, 300
Արեգունի լ. 260
Արեւեաց գաւառ 228, 283 (տե՛ս Արեւիք)
Արեւելեան Սեւանի լեռն. 236, 260, 264, 281
Արեւելից կողմանք Հայոց 69, 70, 216, 217, 258, 281, 297-299, 301, 306, 308, 312, 313, 330, 401, 404, 409-411, 416, 418
Արեւխաբակ, Արաւխաբակ 237
Արեւիք 238, 283, 412 (նաեւ Արեւեաց գաւառ)
Արբիլար 17 (տե՛ս Արահուծ)
Արիքլու 46, 53, 222 (տե՛ս Արախիշ)
Արծաթահանք լ. 248, 251, 314 (նաեւ Խոջալնուրտ)
Արկաթալի 105
Արձախ 96, 417 (տե՛ս Արցախ)
Արմենիա 71, 93, 118, 180, 279, 377, 401
Արմինիա, Արմինիյա 316
Արուական, Արուայեան, 25, 205, 352, 353 (նաեւ Արբիեան, Արպիեան)
Արչայձոր 116
Արպիեան 23
Արջաձոր 54 (նաեւ Աղջայեազի)
Արտագետ 351, 357, 359
Արտանիշ 229
Արտաշատ 211, 231, 232, 406, 413, Արտաշաշատ 413 (նաեւ Արտաքսատա)
Արտաշաւի, Արտաշաւա, Արտաշեաքի, Արտաշեւի 47, 223, 224, 396
Արտաշիքի, Արտայշիքի, Արտաշիպի 47, 223, 396
Արտաւնկն գ. (Արփայ) 230

Արտաքսատա, Արտաշատ 232, 406
Արրան 117, 162, 163, 267 (տե՛ս Առան)
Արցախ 5, 6, 7, 9, 10, 47, 48, 51, 59, 60, 63, 68-70, 73-75, 77, 93-96, 99, 106, 109, 110, 120, 122, 184, 213-216, 219-221, 227, 228, 239, 245, 248, 249, 252, 264, 276-283, 286, 297, 298, 301, 302, 305, 308, 310, 312-319, 324, 375, 382, 401, 404, 408, 410, 417 (նաեւ Արձախ)
Արփագետադուկ 104, 115, 294
Արփայ գ., Արփաւնկն 186, 187, 189, 230 (նաեւ Մոզան գետ)
Արփաւուտ 383 (տե՛ս Ալփոուտ)
Արքայաշէն 144
Արքշատ, Արքսատա 232, 413 (հմմտ. Մարաշատ)
Արքոյ, Արքոյքա 24, 53
Արքուագետ, Արքուգետ, Արքունագետ 53, 136, 137, 141, 143-145
Արքունաշէն, Արքուշէն 141
Աւազան 237
Աւազահանք 367
Աւազլար 135, 136
Աւան 196
Աւարակ, Աւերակի 24 (նաեւ Աստրոկ)
Աւետարանոց 111, 112, 118, 308
Աւժէն 235, Աւձէն 234, 235
Աւձի գետ 234
Աստէացուց, Աստիացուց, Աստիական գաւառ 408 (տե՛ս Ոստիք)
Ափիտոլայ 262
Աքերայ գ. 96 (տե՛ս Հակարի գ.)
Աքերլու 107, 284, 294, 295 (տե՛ս Հակարի *աւան*)
Աֆաթխար 350, 351, 359 (տե՛ս Աղբաթխէրտ)
Բաբաշլար 234
Բաբէլոն 149
Բագանք 404
Բագկան 307
Բազմածակք 23 (տե՛ս Ծաղկաբերդ)
Բազմատուռ, Բազմայտուռ, Բազմայտովեց 223
Բազմին, Բեզմին լ. 295
Բալեանդ 109
Բաղաբերդ 131, 377
Բաղականացիք, Բաղականեցիք 97, 107, 284, 277 (հմմտ. Բայլական)
Բաղշիք 262
Բաղրաադ 244
Բաղք, Բաղաց 60, 61, 68, 99, 136, 146, 203, 228, 280
Բայաթ, Բայան 293, 312
Բայանդուր, Բայենդուր 224 350, 379 (հմմտ. Վաղաթու)
Բայլական 108, 109, 114, 277, 298 (հմմտ. Բաղականացիք)
Բանանց 259, 273
Բաշ-դամ 238 (նաեւ Մեծ գոմ)
Բաշարաթ 293, 295
Բաշտիբէլ, Բաշլիբել, Բաշտուբէլ 245 (տե՛ս Տպէլ)

Բաստրոպեղա 416, 419, 420
Ս. Բարդուղիմէոսի վանք 288, 289
Բարկուշատ 378
Բարձրաստան 44
Բարմն 289
Բարսեղի չէն 241, 244
Բարտապան 105
Բեթ Բալան 164
Բեթ Զաղայ 292 (նաև Զաքէ, Զարդիկէնէ)
Բեյլկանի 108
Բեհ-Շապուր, Բեշապուհ 153
Բեղապատ 114
Բենա 244 (տե՛ս Ապահէն)
Բերդակ 289
Բերդաձոր *գիւղ* 105, 294 (նաև Ղալաղշլաղ, Ղարադիշլաղ)
Բերդաձոր *գտ.* 293, 302 (տե՛ս Բերձոր)
Բերդաձոր *գտկ. Սոթքի* 259
Բերդաձորի Ս. Գրիգոր *վանք* 251, 302
Բերդիկ 358, 364-367 (հմմտ. Բինա, Ղալաչա, Պինա)
Բերձոր *գտ.* 9, 10, 62, 95, 98, 102, 107, 108, 120, 216, 217, 277, 284, 293, 294, 301, 302, 319
Բերձոր *քաղ.* 102, 106, 107, 172, 201, 221, 354, 361, 395, 398
Բեւեռաթափ *լ.* 221 (նաև Միխթոքեան)
Բզաբդէ 292
Բէյլական 63, 92, 108, 109, 121, 298
Բիհարդաշիր 162
Բիւզանդիա 215
Բիւլիւդուզ, Բիւրատուս 223
Բղեն 42, 44, 198
Բճանց 242
Բոզլու, Բոզտու 360, 361, 364, 366 (տե՛ս Մոշաթաղ)
Բոզլու-Աղջաքենդ 360, 361, 364, 365
Բոզնալու 360, 364
Բոլորբոչն 247
Բոխա, Բոխաներ 407
Բովուրխան *լ.* 118, 308
Բորու 237, 245
Բուլանըխ 253
Բուլիչա 358, 365, 367 (տե՛ս Բերդիկ)
Բուն Աղուանք 93, 95, 213, 215-218, 298, 369
Բջանիս 71, 102, 103, 222 (տե՛ս Վակունիս)
Բջնի, Բջնոյ 238, 239
Բռի եղցի 43, 121
Բրենտիս, Բրենտէ, Բրետիս, Բրիտիս 304 (տե՛ս Վարանդայ)
Գաղիմկիմեչա անտառ 55
Գահտահվատ 90 (տե՛ս Գետահատ)
Գանձակ *քաղ.* 61, 68-70, 114, 225, 322, 329-331
Գանձակ *վտակ* 315
Գանձակի երկիր 330, 331
Գանձայ *գիւղ* 395
Գանձասար 50-54, 73, 74, 223, 225, 246-250, 261, 275, 288, 294
Գառնակաշ 294, 295 (տե՛ս Կառնակաշ)
Գառնի *աւան* 173
Գառնի *գտ.* 411

Գատահատ *գ.* 78, 83, 99, Գատահվատ 84, Գատուհատ 79, 90 (տե՛ս Գետահատ)
Գարգար *գ.* 307, 311 (տե՛ս Կարկառ)
Գարգարացւոց դաշտ 307
Գարդման 69, 216, 218, 250, 315, 416
Գարդմանաձոր 417
Գաք 92, 116, 120 (տե՛ս Իգաք)
Գեամիշ, Գոմէշ *լ.* 403
Գեանջայ, Գեանճայ 225, 381 (տե՛ս Գանձակ)
Գեարաւենդ 244 (տե՛ս Կեարաք)
Գեաւուրարխ 100, 110, 297
Գեղամայ ծով 219, 259, 260, 274
Գեղամ գաւառ 238, 260, 265, 268
Գեղաքունի 228, 229, 236, 264, 265. Գեղարքունի 32, 59, 223, 240, 265, 324, 325
Գեղուաձոր 377
Գետաբակք 232, 250
Գետահատ 63, 78, 79, 83, 84, 89, 90, 92, 99, 100, 101, 318 (նաև Գահտահվատ Գետոյհատ, Գտուհատ, Կտուհատ)
Գետամէջ *(Կողթ)* 262
Գետամիջոյ վանք *(Սոթք)* 232, 233
Գետաշէն 262
Գետիկ *գ.* 315
Գետոյհատ 78, 79, 90 (տե՛ս Գետահատ)
Գետուզ 108, 285
Ս. Գէորգ *Տեղի* 139, 195
Գէնուազ 283 (տե՛ս Կէնաւուզ)
Գիլաքերդ 377
Գիւլիստան 105, 263
Գիւռուլու 135
Գլաձոր 239
Գլխովանք 255, 256
Գողանոց 86, 88, 92, 110-112, 120, 121
Գոլթէնէ 410 (տե՛ս Կոլթէնէ)
Գողթանիկ 320, 394, 396, 400 (նաև Փիրջահան)
Գողթն 231, 410-414
Գոմէր 237, 238, 245 (նաև Գումէր, Կոմեր)
Գորայք 23
Գորանիխ *գ.* 10, 374
Գորդիւէնէ 291
Գորիս 15, 342
Գորոզու, Գորոզ 61, 281, 282
Գորու 23
Գուգարք 141, 281, 402, 403
Գուկառիճ, Գուկառինճ, Գուկառինջ 237, 238
Գումէր 245 (տե՛ս Գոմէր)
Գուշթասփ 350, 373 (տե՛ս Քաշաթաղ))
Գուրգան 162, 163 (տե՛ս Վիրք)
Գոզայրակ, Գոզայ բակ 229
Գտուհատ 79, 90 (տե՛ս Գետահատ)
Գտչավանք, Գտիչ, Գտչայ 7, 9, 63, 73-76, 78, 79, 81, 91, 92, 99, 104, 105, 109, 115, 122, 128, 221, 293, 297, 298, 300, 310, 318

(նաեւ Քաթիշայ վանք, Քթիշ)
Գօզարէնէ 402, 403, 406, Գօսարէնէ 406, 408
Գօշավանք 43
Դադէի վանք *Սրճի- թում* 238 (տե՛ս Թադէի վանք)
Դադիվանք, Դադէի վանք, Դադիու վանք, Դաթէի վանք, Դադի 20, 73, 103, 236, 238, 241, 243, 245, 248, 251, 254, 259, 260-263, 272-276, 315 (նաեւ Խութա-, Խութավանք)
Դադոյի վանքի խորաձոր 239, 268, 269
Դաղստան 52, 225
Դամիրլու 294
Դայաքուց եղցէ 115
ալ-Դայրանի 282
Դանահրիտ 164
Դաշաթլի 104, 105 (տե՛ս Քարատնիս)
Դաշալթի 105 (տե՛ս Քարինտակ)
Դաշտակ 241, 242
Դաշտահատ 294
Դաստակերտ 264
Դատէի 261 (տե՛ս Դադիվանք)
Դարայ 229
Դարանակ 228
Դարնավազ 311 (տե՛ս Դոնավարզ)
Դաւալանոց 260 (տե՛ս Դուանոց)
Դաւաչխուր 244
Դաւիթ-Բէկ *գիւղ* 134
Դեբեդ *գ.* 316
Դեղակ *վր.* 79 (= Դիզակ)
Դերբենդ 330
Դիզակ 61, 63, 75, 79, 89, 92, 95, 98, 100, 102, 108-110, 114, 117, 121, 220, 277, 282, 298, 303, 304, 310, 311, 321, 414, Դիզաղ 105 (նաեւ Տիզակ, Տիզաղ, Տուզաղ)
Դիզայ Ջոր *(Կորճայք)* 289
Դիզափայտ *լ.* 97, 98, 114, 285, 318, Դեզափայտ 114
Դիրի 293
Դիտակալան 118
Դոլանլար 294
Դող 116 (տե՛ս Տող)
Դուանոց 259, 260 (նաեւ Դաւալանոց)
Դուդուկչի 112, 300
Դուին, Դունայ 151, 154-159, 167, 169, 170, 180
Դոնավարզ 63, 311 (նաեւ Դարնավազ)
Դրախտաձոր 365, 375
Դրախտիկ 229
Դրմբոն 247
Եայղուզտամ, Եայղուզդամ 28, 136, 350
Եադին 10
Եանշաղ 241, 243, 244, 252, 256
Եգր, Եգերք 163, 164, 251 (նաեւ Լազիկա, Հեգար)
Եզնագոմեր 323, 353, 357-359, 362, 364, 367, 368, 371-373, 383, 389, 391, Եզնագումեր 371, 372, 383, 389 (նաեւ Ղարաքեշիշ)
Եզնագոմերի սարահարթ 320, 357, 361, 383-384
Եզնարածանց 242

Եկեղեցական ճանապարհներ, Եկեղեցական ճահանգ 10, 25, 135, 144, 244, 334, 348, 358, 361, 362, 364, 365
Եկեղեցաբերդ 103 (տե՛ս Խոծաբերդ)
Եկեղցաձոր, Եկեղեցաձոր 82, 83, 85, 88, 92, 108, 114, 120
Եղակեր 262
Եղավարդ 378
Եղզընգէն 247
Եղեգիս, Եղեգեաց 186, 187, 189
Եղեգնաձոր 188, 189 (նաեւ Քեշիշքենդ)
Եղիշէ Առաքելոյ վանք 262 (նաեւ Ջրվշտիկ)
Եղջերխոռ, Եղջերիս, Եղջերխու, Եղջերուի խոռ, Եղջիւր խոյի 137, 140, 142, 143, Եղջախոռ 142 (հմմտ. Իշխանասար)
Եղջերուենիք, Եղջերուագոմ 234, 235 (հմմտ. Մարալդամի)
Եղվարդ 174
Եղցահող 294
Եղցու թալա 324
Եղցուն ծոր 115
Եղցուն ձոր 115
Ենհիտ 229
Երասխ *գ.* 63, 78, 82, 85, 92, 96, 99, 120, 228, 230, 293, 307, 408 (տե՛ս Արաքս)
Երեկթուա 233
Երերի 233
Երեւան 398
Երեւանի վելայեթ 376, 377
Երեւանի գաւառ 376
Երէրոյք 177, 180, 189
Երիշատ 228
Երիցմանկանց 43
Երիցի չէն 244 (նաեւ Քեշիշքենդ)
Երիցու վանք 129
Երկաթաւոր 294
Երկիւս 249
Երնջակ 228
Երուսաղէմ 97, 169, 204, 236, 254, 273,
Եփրատ *գ.* 218, 407
Զար *գ.* 287, 290
Զարէ 164 (տե՛ս Բեթ Զաւդայ)
Զարդիկէնէ 292 (տե՛ս Բեթ Զաւդայ)
Զարուխ 27 (հմմտ. Ծարակի)
Զարուխչայ *գ.* 11
Զազլիկ 416 (տե՛ս Փիփ)
Զալիգեօլ 237
Զակամ 381
Զանգեզուր, Զանկազուր 10, 135, 302, 360
Զառ 244 (տե՛ս Ծար)
Զառիսլու 105, 107, 310 (հմմտ. Զառիստ)
Զառիստ, 63, 79, 80, 92, 105-108, 113, 114, 120, 310, Զառէստ 106, Զարիստ, Զարիստր 79, 80 (հմմտ. Զառիսլու, Զերտի)
Զարաւանդ, Զարեւանդ 418-420
Զարաւանիտիս 418 (տե՛ս Զարաւանդ)
Զարզիբիլ, Զարուզիբիլ 225, 376
Զաւ գաւառ 290, 292, Զաւդէք, Զաւդէից 291
Զերտի 10, 107, 114, 120

Զէյվա, Զեյվա, Զեյվա-լու 133-136
Զիյրիկ, Զիկրիկ 136
Զինգեռնակալ գ. 293, 295
Զմմառ 100
Զուար 237, 241, 244, 245
Զուարթնոց 43, 196
Զուլֆուգարլու 244 (տե՛ս Զուար)
Զրանիտիս 418-420 (տե՛ս Զարասանդ)
Զքարտա դ՛ Ոկթ Օա-յան 164
Զորախաչ 46
Էգիպտ 112, 300
Էիրլօղայ 262
Էլեսապիլար 237
Ս. Էջմիածին 74, 75, 165, 275, 276
Էրեր 303 (տե՛ս Հերհեր)
Ըղուերձ 244 (տե՛ս Ա-ղուերձ)
Ըռեզա կաշկառ 254
Ըռմբի խոռ 96, 227, 228 (տե՛ս Ռմբի խոռ)
Ըռուցփոր 260 (տե՛ս Ու-ռուցփոր)
Ըռստակ 256 (տե՛ս Ոստի Առանձնակ)
Թաղէի վանք, Թաղէ առա-քելոյ վանք 242, 243, 248, 251, 254, 261, 262 (տե՛ս Դադիվանք)
Թաղէի (Դադէի) վանք *Սիւ-նիքում* 238
Թազաքենդ 247
Թաթարներ 224
Թալիշ *գիւղ* 118
Թալիշ *գտ.* 263, 304, 311, 316
Թալիշ *մերձկասպեան* 331
Թաղավարդ 62
Թաղեր, Թաղլար 318 (տե՛ս Հին Թաղեր)
Թանահատ 188, 271
Թարթառ 98, 102, 264 (տե՛ս Տրտու)
Թաւրիզ 142, 224
Թեզխարաբ 294
Թեղենիս 239
Թերգեւեռ 292
Թթուռ 262 (վրիպ. Քը-թուռ)
Թիւրքեր, թուրքեր 112, 225, 332, 346, 353, 358, 359, 365, 368, 374, 378, 380-382, 384, 393
Թիֆլիս 21, 44, 305
Թղիկ 10
Թոխարներ 113
Թոխլուջա 229
Թոմաս 293
Թովմասար *լ.* 10
Թութխուռ 239, 241, 245, 246, 248, 250, 314
Թումանիս 376
Թումայլու 294
Թրաքի, Թրայփի 292
Թրղի 253, 254, 256
Իգաք, Իգակ 92, 116, 117, 120 (նաեւ Գաք, Իքեակ)
Իկիրմիտեօրտ 105
Ինջագետ գ. 259, 416
Ինջէ գտ. 376
Իշիխլի լ. 142
Իշխանագետ գ. 112, 115, 116, 300, 301
Իշխանասար լ. 11, 142, 143, 343 (հմմտ. Եղջերխոռ)
Իսաւրիա 180

Իստիբուլաղ 234 (հմմտ. Ջերմաղբիւր)
Իստիսու 52, 102, 233 (հմմտ. Ջերմաջուր)
Իտէլեցիք 112, 300
Իրան, Իրանշահր 153, 163, 224, 246, 255, 257, 350, 359, 365, 376, 384
Իրիշատ 229
Իրիցաթումբ 44
Լաբրոն 327 (տե՛ս Լամբ-րոն)
Լաղան 164
Լազիկա 163 (տե՛ս Եգր)
Լամբրոն 327, 329, 331, 334 (նաեւ Լաբրոն, Լապրուն)
Լաչին 11, 361
Լենինքենդ 357 (տե՛ս Եզ-նագոմեր)
Լեռնակերտ 179
Լեռնային Ղարաբաղ, ԼՂՀ 100, 106, 221, 247, 248, 250, 295, 361, 395
Լեւ *գիւղ* 237, 241, 244, Լեւ-քենդ 244
Լեւագետ, Լեւ գ. 228, 234, 236, 238, 239, 241, 252, 253, 259, 260, 263
Լիսագոր 105
Լիտուացիներ 126-127
Լոնդոն 286
Լոռի 60, 61
Լորաձոր 342
Լսորք, Լսորս 27, 71
Խաղարավանք 128, 241-243, 251 (նաեւ Խնթրա-վանք)
Խազաբիւրթ 103 (տե՛ս Խ-ծաբերդ)
Խազազ լ. 110
Խազինամարգ 78, 80, 92, 119, 121
Խազնավար 22, 35, 135, 383 (տե՛ս Խոզանավար)
Խալաշլու 244 (տե՛ս Հա-նա)
Խալլանլու 244
Խամամայ 305, 311
Խանածախ, Խնածախ 22, 33-35, 209, 305, 351, 371, 376, 379, 383-387 (նաեւ Խնածորկ, Խոնածախ)
Խանձաձոր 117, 294
Խանձք (Խանձկեցի) 261
Խանքենդի 106, 395 (տե՛ս Ստեփանակերտ)
Խաչան 304 (տե՛ս Խաչէն)
Խաչատրոյ վանք 130
Խաչգետիկ գ. 293, 295
Խաչենամարգ *վրիպ.* 79 (տե՛ս Խազինամարգ)
Խաչերոյ խոռ 228, 230
Խաչէն 59-61, 105, 106, 228, 261-264, 266-268, 272, 273, 296, 304, 316, 381, Խաչեն 74, 92, 226, 228, 229, 240, 250, 252, 253, 263, 282, 285, 331, Խաչինոյ 324, Ներքին Խաչէն 247, Վե-րին Խաչէն 247, 261-263, 272 (նաեւ Խաչան, Խա-ջին)
Խաչէնագետ գ. 247, 248, 250, 252, 263, 264, 299, 311, 313-315, 318, 405
Խաչիկ *գիւղ* 230
Խաչինաձոր 247
Խաջին *արաբ.* 282 (տե՛ս Խաչէն)
Խեթեր 29, 113, 248

Խզնավար 34, 385 (տե՛ս Խոզանավար)
Խէնչալ խաչ 324
Խիրս *լ.* 249 (տե՛ս Քիրս)
Խծաբերդ 103-105, 108, 114, 115, 293, Խծեցի 116 (հմմտ. Խազաբերք, Խոզաբերդ, Խուզաբիրթ, Օձաբերդ)
Խնածախ 23, 32, 34, 209, 305, 371, 376, 384, 386, 387 (տե՛ս Խանածախ)
Խնածորկ 33, 209 (տե՛ս Խանածախ)
Խնթրավանք 241, 242 (տե՛ս Խաղարավանք)
Խնձորեսկ 22, 209. Խնձորեկ 46, 222
Խոզաբերդ 63, 78, 83, 84, 90, 92, 103, 104, 120 (հմմտ. Խծաբերդ)
Խոզագետ, Խոզանագետ, Խոզանարգ *վրիպ.* 78, 83, 84, 90 (տե՛ս Խոզաբերդ)
Խոզանավար, Խոզնավար 22, 34, 35, 135, 383, 384, 385 (նաեւ Խզնավար, Խազնավար)
Խոզենակ 243
Խոթավանք 243, 248, 251, 254, 262 (տե՛ս Դադիվանք)
Խոթասար *լ.* 251
Խոլազեյ 244 (տե՛ս Խօլօզանց)
Խոլարձէնէ 403 (տե՛ս Կալարձէնէ)
Խոխանաբերդ 315, 318, 405
Խոնածախ 22, 34, 384 (տե՛ս Խանածախ)
Խոնաշէն *գ.* 100, 118, 297, 305, 306
Խոշալու 313
Խոջալեուրտ 248, 251, 314 (նաեւ Ղոջաղուրդ, տե՛ս Արծաթաճանք)
Խոջիկ 294
Խուռ 23
Խուռակերաց վանք 16
Խուռանան 377
Խուտորպլեզ 187 (տե՛ս Խստորպլէզ)
Խորադիզ 99, 100, 110, 297
Խորդեղ *վրիպ.* 79 (*հմմ* խոտոյ տեղ)
Խորեայ 22
Խորխոռ, Խորխոր 22, 384
Խորձէնէ 402, 403
Խորուագետ 259
Խուդափերին 99
Խուզաբիրթ 103 (տե՛ս Խծաբերդ)
Խուզաստան, Խուժիկ 156, 161 (նաեւ Հուզայէ)
Խութավանք 238, 241, 243, 260, 261, Խութ 243
Խստորպլէզ 187-189 (նաեւ Խուտորպլեզ, Սխտորպլէզ)
Խրանց 241, 246
Խրով, Արաւուս *գ.* 10
Խցաբերդ 294 (տե՛ս Խծաբերդ)
Խօլօզանց 241, 244

Ծագաձոր 46 (տե՛ս Ձագեձոր)
Ծակառաշէն 262
Ծակարի *վրիպ.* 294 (տե՛ս Հակարի)
Ծակքար 229
Ծաղիկանց *լ.* 239

Ծաղկաբերդ 23 (նաեւ Բազմածակք, Մազմազակ)
Ծար *գիւղ* 222-227, 232, 241-244, Ծարայ վանք 260, 274 (նաեւ Ձառ)
Ծար *գւռ.* 46, 52, 96, 98, 219, 220, 222, 224-227, 232, 236, 239, 240-243, 245, 259, 263, 264, 266, 272, 274-276
Ծար *գ.* 239
Ծար *լ.* 241
Ծաւդէք, Ծաւդէից աշխարհ, իշխանութիւն *Արցախի* 281, 291, 409, 417 (հմմտ. Սոդուկէնէ)
Ծաւդէք, Ծաւդէից երկիր *Կորճայքի* 290, 291, 409 (հմմտ. Ձաւդէք, Ձաւ)
Ծափանիս 52, 224
Ծիծեռնավանուց գետ *գ.* 10, 11, 27, 143-145
Ծիծեռնավանք 7, 33, 35, 36, 38, 40, 44-46, 129, 130, 132-136, 141, 143, 146, 147, 160, 168, 170-174, 176, 177-179, 180, 182, 185, 186, 189, 194-197, 201, 203, 205, 206, 208, 210, 211, 319 385, Ծիծառնայ վանք 40, 129, 131, 149, Ծիծառնոյ վանք 27, 40, 129, 130, 131, 238, Ծիծառնուվանք 27, 131, Ծիծեռան 132, Ծիծեռնակու 130, Ծիծեռնայ, Ծիծեռու, Ծիծռա, Ծիծռան, Ծիծռանա վանք 131
Ծիրանաւոր վանք 180, 191
Ծղուկ 71, 129, 142, 238, 275
Ծովատեղ *Ծարում* 241, 246
Ծովատեղ *Պազկանքում* 303
Ծովինար 119, 233, 249, 310, 313
Կաբան գետաղ *լ.* 374
Կաղմէից, Կաղմէացի, Կաղմէացւոց *իշխանութիւն* 291, 411
Կաժ 241, 244 (հմմտ. Կեշդեկ)
Կալարձէնէ 403
Կալեր 259, 260
Կաղարծի 297
Կաղսեռ 110, 297
Կամբիւսէնէ 402, 403
Կայծքարսար 367
Կանաչաւոր վանք 242
Կանաչթալա 294
Կապադովկիա 180
Կապաղակ 51, 224
Կապան 134, 283 (տե՛ս Ղափան)
Կապտավանք 21
Կառնակաշ 107, 284, 293, 295
Կասպք 408, 411. Կասպէնէ, Կասպիանէ 411
Կատարձէնէ 403, 407
Կատոս 391
Կարալչայ *գ.* 259 (տե՛ս Հերան)
Ս. Կարապետ Նորավանքի 18, 345
Ս. Կարապետ Վաղաղնոյ 16, 142, 345
Կարասու *գ.* *(Աղահեջք)* 358
Կարասու *գ.* *(Ծար)* 246
Կարաքին գետ *գ.* 253 (հմմտ. Կեարաք)
Կարբի 381

Կարբինք 23
Կարգա դ՚Լադան 161
Կարեացիոտ 112, 317 (նաև Ֆիզույի)
Կարբզըշտագ *ուս.*, *վր.* 144 (տե՛ս Ղարադշլաղ)
Կարկառ գ. 105, 107, 118-120, 252, 298, 299, 306-308, 311, 313, 315
Կարմիր գետ գ. 420
Կարմիր Սոցի 62
Կարմիր ժայռ 118, 306
Կարմունջ 229
Կատաբասար լ. 110, 121, 297
Կաքավաբերդ 377
Կեարար 241, 244, 253, 261 (հմմտ. Կարաքին գետ)
Կեշղեկ 244 (տե՛ս Կած)
Կեչառոյք 16
Կեռտամբալաքէ 119
Կէնաուզ, Կէնահուզ, Կէնուազ 283 (նաև Գէնուազ)
Կիլիկիա 69, 180, 322, 329, 334
Կիսապատ 262
Կիրանց ջուր գ. 141
Կիրչաբուլաղ 55, 320 (տե՛ս Աղբրաձոր)
Կղարջք 402, 403
Կղօնք 187 (տե՛ս Սրկղունք)
Կնէվանք 283
Կոդուր, Կոթուրլու 245
Կոզլու 224
Կոթ 112, 229
Կոլթէնէ 407, 408, 410, 411, 415
Կողթ 69, 216, 262, 409, 410, 416, 417
Կողքիս 402 (տե՛ս Եգր)
Կոմեր (Կոմերեցի) 237 (տե՛ս Գոմեր)
Կոմուր դաղ *լ.* 237 (հմմտ. Գոմեր)
Կոնգուր *լ.* 237
Կոնդուր 237
Կոռնիձոր 22
Կովկաս 25, 27, 111, 244, 267, 358, 365, 399, 402 (հմմտ. Անդրկովկաս)
Կոտոր գ. 417, 420
Կորդիք, Կորդովտաց 291
Կորդուք (Կորդուաք) 291
Կորճայք 29, 108, 287, 290
Կորտայք 291
Կուլաթաղ 262
Կույալբա, Կուալբա 318, 405
Կունէն գ. 141
Կուռափաձորի վանք 238
Կուսանաց վանք *(Մար)* 274
Կուր գ. 20, 51, 108, 114, 224, 298, 299, 308, 402, 407, 412, 415
Կոզաբակ, Կորզաբակ 228, 229
Կոմէն 103, 335
Կտուհատ 79 (տե՛ս Գետահատ)
Կօկթափա 262
Կօմիսէնէ 404, 409, 415, 417
Կօշիկ անապատ 314

Հաբանդ 10, 21, 22, 25, 34, 96, 227, 235, 238, 301, 326, 414, 415 (նաև Համբանդ)
Հաբանդ *Միւս* 63, 93, 98, 120, 279, 281, 303, 414, 415 (տե՛ս Միւս Հաբանդ)

Հագարեան, Հագարան 108, 285, 293. Հագարու 96, 368 (տե՛ս Հակարի *գտ.*)
Հադրութ 98-101, 112, 113, 277, 300, 301, 318. Հատրուդ, Հատրութ, Հադրուդ *(վրից)* 100,
Հաթերք 247, 252, 256, 274, 259-263
Հաթերքոյ, Հաթերքայ գետ գ. 254
Հալաբս, Հալաք 27, 28, 106, 350, 375 (նաև Հայելեակ)
Հալէ, Հալիձոր 23
Հալուն 241, 244, 246
Հակ 11, 25, 28, 34, 145, 338, 350-353, 357-359, 366, 367, 375, 383 (նաև Մինքեանդ)
Հակակու 116 (նաև Հկակու)
Հակարի *աւան* 79, 86-88, 92, 107, 108, 120, 145, 293, 294, 296 (հմմտ. Աքերլու)
Հակարի *գտ.* 79, 108, 285, 286, 293 (նաև Ագար, Հագարեան, Հաքարի)
Հակարի գ. 7, 9, 10, 23, 25, 63, 72, 96, 98, 99, 101, 103, 105-108, 113, 127, 130, 144, 145, 149-150, 198, 200, 221, 235, 277, 282, 284, 295, 296, 301, 318-320, 329, 330, 333, 334, 344, 349, 352, 363, 366, 367, 374, 375, 394, 395, 400
Հաղարծին 236
Հաղբատ, Հաղբաթ 29
Հաղունոյ, Հաղունայ գ. 79, 83 (տե՛ս Աղաւնոյ)
Հաճաւ (Հաճար) 234, 241, 242, 244 (հմմտ. Հոնջենք)
Հաճիշէն 262
Համաթիար 228
Համամաբակք 237
Համասրապակ 262
Համբանդ 21, 326 (տե՛ս Հաբանդ)
Ս. Համբարձում եկեղեցի *Բերձորի* 201
Հայեաց աղբիւր 366 (տե՛ս Հացեաց աղբիւր)
Հայելեակ 27, 106, 375 (տե՛ս Հալաբս)
Հայթաղ 55 (նաև Ղորչու)
Հայկական մարզ 364, 366, 381
Հայոց մարզպանութիւն, Մեծ Հայք շահր 151, 215, 267, 268
Հայրի 25-27, 28, 145 (հմմտ. Հէրիկ)
Հայքարի, Հայքարայ Ձոր 286-290 (տե՛ս Հաքեարի)
Հանդաբերդ, Հանդու 52, 102, 234, 236, 240, 259, 260, 273, 274
Հաջի-Սամլու 107 (տե՛ս Վազգէնաշէն)
Հաջիլար 27
Հասանլար քրդեր 363
Հասանլու 363 (տե՛ս Միրիկ)
Հասկաբակք 259, 260 (նաև Հոսաբակ, հմմտ. Հասաթաղք)
Հատիս 262
Հատրուդ, Հատրութ 100, 311 (տե՛ս Հադրութ)
Հարք 294
Հարար 27, 105, 107, 108, 285, 286, 350

Հարգ գ. 251 (տե՛ս Արագ)
Հարգաքար, Հարագաքար լ. 248, 251, 254 (հմմտ. Հարցլուղայս)
Հարթաշէն 23
Հարջանոտս 246-248
Հարքյանք 95, 213, 216, 221, 245, 246, 248, 250-253, 263, 264, 312, 314-316, Հարճյանք 53, 249, Հարքաղիան աշխար. 316
Հարցլուղայս լ. 248 (հմմտ. Հարգաքար)
Հացեաց աղբիւր 366, 367 (նաեւ Հայեաց աղբիւր)
Հաւախաղաց լ. 250
Հաւատուս 224 (տե՛ս Հովատուս)
Հաւոցպտուկ 50
Հաւուց թառ 204
Հաւչանք 234 (տե՛ս Հոչանց գիւղ)
Հաւսաթաղք 260 (հմմտ. Հասկաքակք)
Հաքարի 79, 285 (տե՛ս Հակարի գտ)
Հաքեարի 286-290 (նաեւ Հայքարի)
Հեզար, Հեզարի 163, 164 (տե՛ս Եզր)
Հեր գտ. 420
Հերան գ. 259
Հերէթի 108
Հերիկ 363, 391 (տե՛ս Հէրիկ)
Հերհեր Պազկանքի 118, 303, 308 (նաեւ Էրեր)
Հերհեր Վայոց ձորի 42
Հզարագետ գ. 82, 86, 88-90, 92, 110, 121, 300
Հէրիկ, Հէրէ, Հէրի 23, 25, 28, 30, 338, 350, 351, 363, 391,. Հարար վրիպ. 28, Վարազգուն-Գերիկ ռուս. 360 (նաեւ Հայրի, Հերիկ, Անմեղլու)
Հընկուզակ, Հինգուզակ 224 (հմմտ. Հովատուս)
Հին Թաղեր, Հին Մեծ Թաղլար 294, 318
Հին Փոքր Թաղլար 294
Հինշէն 293
Հիքիրաթաղ 112, 300 (տե՛ս Քիրաթաղ)
Հկակու, Հկազվայ 116 (տե՛ս Հակակու)
Հնդիկներ 29, 113, 249
Հոնջենք 233 (հմմտ. Հանաւ)
Հոչանց գիւղ 25, 28, 234, 305, 350, 359, 383, Հոչազ 25, Հոչաս 28, 350, 359, 391, Հոչէս 381 (նաեւ Հաւչանք, Հունչաք, Հօչանց, Ղոչազ)
Հոչանց գ. 9, 10, 25, 130, 144, 145, 221, 301, 319, 320, 351-353, 357, 364, 365, 368, 373-376, 381, 383, 394, 395
Հոչանց լ. 179
Հոսաքակ 260 (տե՛ս Հասկաքակք)
Հովատուս 223, 224 (նաեւ Հաւատուս, հմմտ. Հընկուզակ)
Հորնատուն 294
Հուզայէ, Հուզիստան 161 (տե՛ս Խուզաստան)
Հունչաք, Հունչաք 25, 144, 234, 352 (տե՛ս Հոչանց գիւղ)

Հոոմ, Հոոմէացիներ 7, 163, 164, 292, 401, 405
Հրեաներ 156
Հօչանց 25, 28, 234, 350, 359, 383 (տե՛ս Հոչանց գիւղ)
Ձագ 229
Ձագեձոր, Ձագաձոր 23, 378 (նաեւ Ծագաձոր)
Ձինասար, Ձեւասար, Ձիասար, Ձինարու 25, 130 (հմմտ. Սոնասար)
Ձոր 97-98 (տե՛ս Տրի)
Ձոր Դիզայ, Ձոր Հայքարայ 289
Ձորագետ 61
Ձորաղբիւր 265
Ձորափոր, Ձորոփոր 29, 141
Ձորք-Կապան 283 (հմմտ. Ցողկեպան)
Ղազալկապ 119
Ղազարապատ 106, 394
Ղալա լ. 244, 294, 367
Ղալալու 295, 296 (տե՛ս Կառնակաչ)
Ղալաղշլաղ 294 (տե՛ս Բերդաձոր գիւղ)
Ղալաչա 358, 364, 367 (տե՛ս Բերդիկ)
Ղաջար 110
Ղարաբաղ 52, 105, 106, 224, 237, 245, 251, 304, 315, 376, 379, 382 (նաեւ Ղարապաղ, հմմտ. Լեռնային Ղարաբաղ)
Ղարակեօզլու Ղշլաղ 253
Ղարաղիշլաղ Բերձորի 105 (տե՛ս Բերդաձոր գիւղ)
Ղարաղշլաղ Աղահեջքի 144
Ղարաչաննի 55
Ղարաչորլու քրդեր 381
Ղարապաղ 105, 237, 245, 251, 315, Ղարապաղ գաւառ 105 (տե՛ս Ղարաբաղ)
Ղարասու գ. Աղահեջքի 358, 359
Ղարասու գ. Մարի 244
Ղարաքեափանակ 229
Ղարաքեշիշ, Կարաքեշիշ 357, 358, 362, 364, 367, 383 (տե՛ս Եզնագոմեր)
Ղափան 15, 342, 376, 377, 379, Ղափանցիք 283 (նաեւ Կապան)
Ղըրխ-բուլաղ 376
Ղոշասու 365, 375, 382
Ղոչազ 25, 305 (տե՛ս Հոչանց գիւղ)
Ղոջաղուրդ լ. 248 (տե՛ս Խոջայնուրտ)
Ղորղանի 391 (տե՛ս Մովսէսաշէն)
Ղորչու 55 (տե՛ս Հայթաղ)
Ղորչուբուլաղ 55 (տե՛ս Աղբրաձոր)
Ղորչուչայ գ. 46, 55, 71, 320 (տե՛ս Բախիշ գ.)
Ղուշչի 28, 35, 350
Ճաթայկերենց տոհմ 236
Ճակատէն 378
Ճահուկ 24, 28, 228
Ճարտարի գետակ գ. 118, 306 (նաեւ Մեւջուր)
Ճոխանց 259
Ճուաշ-ռոտ 113, 300
Ճումէն 241, 244 (նաեւ Ջոմարդ)
Մազանդ 231 (տե՛ս Մարաւան)

Մազազ 251
Մազմազակ 23 (տե՛ս Մաղկաբերդ)
Մազրոյ բերթ 254
Մալաթիան 262
Մալիբեկ 28, 53 (տե՛ս Արածուծ)
Մախոյն 53
Մածնաբերդ 19
Մակարոց 23
Մաճանա (Մաճանու) 262
Մանոզէ դ՝ Բեթ Արամայէ 161-163, 165, 168
Մաղանջուղ 378
Մաղաւուզ (Մաղաւզայ, Մաղաւզոյ, Մաղաւուզոյ) 46, 47, 51, 71, 72, 106-108, 222, 223, 225, 375, Մաղայոզ, Մաղայուզ 47, 223 (նաեւ Մըղօվուզ)
Մաղղանց գ. 71, 101-103, 222, 320, 334, 335 (նաեւ Նաղղալի)
Մաղուճո գ. վրիպ. 83, 85 (տե՛ս Աղաւնոյ)
Մամելի գ. 71
Մայդանչայ գ. 244 (հմմտ. Մէյտան)
Մայրաղուրք 71
Մայրեաց ջուրք (Մայրեացջուրքցի) 69, 70, 322, 329, 330 (հմմտ. Մայրէջուր, Մարէջուր)
Մայրէջուր (Մայրեջրեցի, Մայրէջուրցի) 66, 67, 70, 71, 320, 322, 327, 329, 331-333 (հմմտ. Մայրեաց ջուրք, Մարէջուր)
Մանասս գ. 111, 112, 118, 121, 300, 301, 303, 308
Մանզղեաց փոր 251
Մանկնւ 377
Մաչախ 247
Մաչեղ 247
Մասրութք, Մասրթաց 93, 279
Մատուռի ձոր 247
Մատրակերտ 352
Մարաթուզ 71 (տե՛ս Մայրաղուրք)
Մարալդամի 234 (հմմտ. Սղչերունենիք)
Մարակերտ 231 (հմմտ. Մարաստան)
Մարանդ 231
Մարաշատ, Մարաքսատայուն 232, 414
Մարաս 303 (տե՛ս Ամարաս)
Մարաստան քաղաք 230, 231, 413 (հմմտ. Մարակերտ, նաեւ Մարմանդքն...)
Մարգիս 27, 31, Մարգք 27
Մարդաղաւնեաց Ս. Նշան 242, 274, 275
Մարդպետական 412
Մարէջուր (Մարէջրեցի) 67, 69, 333 (հմմտ. Մայրէջուր)
Մարի գաւառ 292
Մարկի(ս)այ վրիպ. 31 (տե՛ս Միրիկ)
Մարմանդքն, Մարմանոք, Մարմարանքն, Մարմարոն, Մարմարան 231 (տե՛ս Մարաստան)
Մարչամանց, Մարջամանց, Մարջումակ, Մարջիմակ 251 (տե՛ս Մրջմանց)
Մարսէլ 181
Մարտակերտ 241, 314

Մարտունի 305
Մարունայ 230 (տե՛ս Մարաստան)
Մարք, Մարաց 231
Մարք (քրդեր) 289
Մարքիզ 27
Մացրու գաւառ 377
Մաքենիս, Մաքենեաց, Մաքենոց, Մաքենոցաց 129, 228, 265
Մեգրէլներ 251
Մելաս գ. 358
Մեծ Անապատ (Ցրագետի) 244
Մեծ Առանք, Մեծ Առանք 252 (տե՛ս Մեծ Իրանք)
Մեծ Գոմ 238 (տե՛ս Բաշդամ)
Մեծ Ջար 287, 290
Մեծ Թաղլար, Հին-Մեծ Թաղլար 294
Մեծ Իրանք, Մեծիրանք 95, 99, 216, 247, 250, 252, 255, 257, 258, 262, 264, 283, 298, 312, 315, 316, 404, 415, Մեծիրեանք 252 (նաեւ Մեծ Առանք)
Մեծ Ծար 241 (տե՛ս Ծար)
Մեծ Կուանք 95, 216, 218, 252-255, 257, 258, 262-264, 298, 315, 316, 318, 404, 405, Մեծ Կողմանք, Մեծկողմանք 252, 255-258, 404, 405, Մեծ Կունենք 254, 255, Մեծ Կուենք 255
Մեծ Ջաղ 59, 229
Մեծ Մասրիկ 266, Մեծ Մազրա 59
Մեծ շէն 262
Մեծ Սիւնիք 131 (տե՛ս Սիւնիք)
Մեղ գ. 358
Մեղի 351, 357, 358
Մեղու 358
Մեղրագետ 311, 358
Մեղրի 377
Մերգեւտ 292 (հմմտ. Մարի գաւառ)
Մերիկ 28, 350, 391 (տե՛ս Միրիկ)
Մերձաւոր Արեւելք 27, 225
Մերջիմեկ 251 (տե՛ս Մրջմանց)
Մեքսիկա 192
Մէլիքաշէն 144, 146
Մէյտան 241, 244
Մէյտան գ. 244, 253 (նաեւ Մայդանչայ)
Մըղիդարա 53
Միլի դաշտ 108, 306
Միխթոքեան լ. 221 (տե՛ս Բեւեռաթափ)
Ս. Մինաս Խոզնավարի 135
Մինքենդ 11, 25, 28, 145, 350, 352, 353, 357, 359, 360, 362, 375, 380 (տե՛ս Հակ)
Միշնի 25 (տե՛ս Մշենի)
Միջագետք 168, 288
Միջնարգախ 256
Միսկուան արար. 316 (տե՛ս Մեծ Կուանք)
Միսրիան արար. 316 (տե՛ս Մեծ Իրանք)
Միրզիկ 262
Միրիկ 12, 28, 30-34, 35, 319, 349, 350, 361, 363, 383, 388, Միրիկ-Հասանլու *ոռւ.* 360 (տե՛ս Մերիկ)

Միրշմանց 251 (տե՛ս Մրջմանց)
Միս Բաղը 99 (տե՛ս Քաշունիք)
Միս Հաբանդ 63, 93, 95, 98, 99, 110, 120, 121, 215, 217, 277-279, 281, 301-303, 414 (նաեւ Փոքր Հաբանդ)
Մխանք 63, 98, 277, 296, 305, Մխանց 110, 118, 297, 305
Մննի 352
Մշենի 25, 144, 366
Մոզան *գ.* 187 (տե՛ս Արփայ)
Մոզբենդ 244 (տե՛ս Մոս)
Մոթանց 241
Մոլլալար 135, 136
Մոխանք 95, 118, 305 (տե՛ս Մուխանք)
Մոխենիս, Մոխենիք 81, 88, 117, 118, 120, Մոխրենէս 117, Մոխրենիք 118 (նաեւ Սուսանլըղ)
Մոխրաթաղ 262
Մոնղոլներ 38, 91 (նաեւ Նետողաց ազգ)
Մոշաթաղ 361, 364, 366, 367
Մոս 222, 241-244, 246 (նաեւ Մոզբենդ)
Մոսխիկա 407
Մոսկուա 140
Մովսէսաշէն 36, 48, 391 (նաեւ Ղորդղաճի, Քիւրդհաջի)
Մուխանք 95, 106, 110, 118, 121, 216, 305, 306, 312, 313, 415 (նաեւ Մխանք, Մոխանք)
Մուխուրովասի 305
Մուխրանէս 117 (տե՛ս Մոխենիս)
Մուղանի դաշտ 108, 306
Մունջուխլու 71
Մուշ 358
Մռաւ *լ.* 253, 254, 404
Մրջմանց, Մրչմանց 251 (նաեւ Մարչամանց, Միրշմանց, Մարջումակ, Մերջիմեկ)
Մրցնի (Մրցնու) 262
Յագուրի *վրիպ.* 79 (տե՛ս Հակարի *աւան*)
Յալդուզդամ 28, 136, 350 (տե՛ս Եալդուզտամ)
Յարար 294 (տե՛ս Հարար)
Յոյներ 113, 125, 152, 156, 249, 358, 401, 405, 416, 417
Յովհաննավանք 140
Յորդանան *գ.* 399
Յուսայ 422
Նախճաւան 230, 231, Նախիջաւան 24, Նախիջեւան 228
Նակորզան, Նակորզեան 96, 99
Նաղդալի, Նաղդալիշայ *գ.* 71, 101, 103, 222, 334 (տե՛ս Մաղդանց)
Նետողաց ազգ 91 (տե՛ս Մոնղոլներ)
Ներքին Աղբեօրփի 374
Նիկիա 125
Նովիբաշ, Նովի գլուխ 223
Նորաբակք 233, 238 (հմմտ. Նորավանք *Սոթքում*)
Նորաշինիկ *Հաբանդի* 384
Նորաշինիկ *Ճահուկի* 24
Նորաշինկան գետ *գ.* 247

Նորավան 386 (տե՛ս Վերին Նորավան ուխտ)
Նորավանք 18 (տե՛ս Ամաղուի Նորավանք)
Նորավանք 44-45, 198 (տե՛ս Բղենոյ Նորավանք)
Նորավանք *Սոթքում* 233, 238 (հմմտ. Նորաբակք)
Նորշէն 241, 243, 261
Նսիբին 163
Շաբակի 27 (նաեւ Շապոկի, հմմտ. Զաբուխ)
Շալուայ *գ.* 9, 46, 47, 52, 71, 101-103, 106, 221-223, 259, 316, 319, 320, 394
Շախկախ 100
Շակաշէն, Շակշին 69, 216, 218, 402, 416, 417
Շահապոնք 24
Շահբուլաղ 311, 312
Շահսուվարլու, Շասուվարլու 360, 362, 364, 375, 380, Շահսուվար 381, Շահսեւաններ 380-382
Շաղատ 129
Շաղուագ, Շաղվաք 259, 260, 274 (տե՛ս Շողուագ)
Շամշադին 21
Շամրթայ 24 (նաեւ Շմրթայ, Շոմրթայ)
Շամքոր 114
Շապոկի 27 (տե՛ս Շաբակի)
Շարագօլ 254
Շարուր 230, 231
Շարուան 282 (տե՛ս Շիրուան)
Շարքար, Շարքեար, Շար կար 353
Շաքի 108, 227, 267, 303
Շեյլանլու 365, 366, 384
Շէկահող 378
Շիկաքար 252, 312
Շինաթաղ 262, 388
Շինուհայր, Շնհեր, Շնոյհերք 23
Շիրակ 407
Շիրուան 330 (նաեւ Շարուան)
Շղուաք 229 (տե՛ս Շողուագ)
Շմրթայ 24 (տե՛ս Շամրթայ)
Շողուագ 265, 324 (նաեւ Շաղուագ, Շղուաք)
Շոմրթայ 24 (տե՛ս Շամրթայ)
Շուշ 161
Շուշի 105, 115, 216, 221, 280, 307, 310, 314, Շուշու 120, 310, 311 (նաեւ Շօշ)
Շրուական 365, 366 (նաեւ Սեյտեր)
Շօշ, Շօշի, Շօշու, Շօշվու 311 (տե՛ս Շուշի)
Ոկունիս 229
Ոսկանապատ 262
Ոսկեպար *գ.* 141
Որբոքոյ քար 106, 375
Որդուատ 228
Որոտան *գ.* 23, 142
Որոտան *գտ.* 243, 244, 378
Ուռոյ 97 (տե՛ս Տրի)
Ուղ *ապաք.* 316 (տե՛ս Ուտի Առանձնակ)
Ուփտիա 417
Ուխուն 318, 405
Ուխտաձոր 320, 357, 359, 365, 391 (հմմտ. Փող)
Ուղտակալ 262

Ուղտապան 253 (նաեւ Աղդարան, Աղտարան)
Ույծ 129
Ուջանարաս 135
Ուռեաց 107, 284, 294
Ուռխաձոր 259, 260
Ուռխաշէն 260
Ուռիջուր գ. 238
Ուռուցփոր 260 (նաեւ Ըռուցփոր)
Ուտ-Ռոստակ 216, 219, 257, 298 (տե՛ս Ուտի Առանձնակ)
Ուտի Առանձնակ 218, 257, 258, 299, 316, 408 (նաեւ Ուդ)
Ուտիք 5, 5, 6, 7, 69, 99, 110, 118, 121, 213-219, 250, 258, 278, 280, 297-299, 317, 401, 405, 408, 409, Ուտի (Ուտիոյ) 316, 408, 417 (նաեւ Աւտէացւոց, Ուդ, Ուտ-Ռոստակ)
Ուրեանսար 110, 118, 121, 297, 306
Ուրծաձոր 230
Չաքնի, չաքնեցի 236 (տե՛ս Չափնի)
Չայքուռուն լ. 143
Չանախչի 111
Չարաբերդ 258, Չարայպերթ 304 (հմմտ. Ջրաբերդ)
Չարդախլու գ. 315
Չարտախ 262
Չաւընտուր 378
Չափար 241, 243, 261
Չափնի 236 (նաեւ Չաքնի)
Չէհլ լ. 118, 306
Չիկագո 249
Չիչագլու լ. 239 (տե՛ս Ծաղիկանց)
Չղախ, Չղախական, Չղախեան 255, 257, 264
Չովդար 19
Չորմանք, Չորման, Չուրման 103, 320, 334, 335, 337
Չուխուր Սաադ 376, 378
Չրաղլու, Չրախլու 357, 359, 361, 362, 365, 384, 391 (տե՛ս Ուխտաձոր)
Պազկանք, Պազկանց, Պազիկանք, Պազուա 63, 98, 118-120, 277, 296, 307-310, 312, 313, 415 (նաեւ Պածկանք, Պարզկանք, Պարսկանք)
Պածկանք 95, 118, 216, 307 (տե՛ս Պազկանք)
Պահես *վրկ.* 79 (տե՛ս Տահիս)
Պայինդուր, Պայինտուր 28, 34, 350, 384 (տե՛ս Վաղատու)
Պարզկանք, Պարզկանց 118, 307, 309 (տե՛ս Պազկանք)
Պարիադրէս, Պարիւադրէս լ. 407, 414, 416
Պարսկանք, Պարսականք 118, 307, 309 (տե՛ս Պազկանք)
Պարսկահայք 281, 416, 419, 420
Պարսպատունիք 419, 420
Պարտաւ 114, 256-259, 297
Պարսք, Պարսից, պարսիկներ 99, 153, 154, 157, 164-168, 224, 249, 306, 332, 359, 378, Պարսոյ 236
Ս. Պետերբուրգ 97, 250

Պերոզշաբոր 161, 164
Պիանք 95, 216, 308, 311-315, 317, 414
Պինա 365 (տե՛ս Բերդիկ)
Պիչանիսչայ գ. 334 (տե՛ս Մաղդանց)
Պիրուա, Պիրկանք 313 (տե՛ս Պիանք)
Պորտուգալիա 211
Պոլ *ռուս.* (տե՛ս Փոլ)
Պտրեցիք գ. 311
Պրտողագետ գ. 253
Ջագիր գ. 325
Ջաղացաձոր 228
Ջաղջիկ 294
Ջամիլլու 237
Ջամին գիւմ 294
Ջանկաթաղ 262
Ջերմաղբիւր 234 (նաեւ Իստիբուլաղ)
Ջերմաջուր 52, 102, 233 (նաեւ Իստիսու)
Ջերմուկ Ծարի 240
Ջեւանշիր 314
Ջիլ 229
Ջիղեր 376
Ջղջիկ 294
Ջոխտ Պոլածառ 62
Ջողազ գ. 141
Ջոմարդ 244 (տե՛ս Ճումէն)
Ջուլամէրկ 289
Ջուղա 228, 285, 376
Ջուրգ 282 (տե՛ս Գորոզու)
Ջրաբերդ 105, 258, 263, 297, 316 (հմմտ. Չարաբերդ)
Ջրվշտիկի վանք 262 (տե՛ս Եղիշէ Առաքելոյ)
Ռազա 155, Ռաժիկ 154, 155, 162, 165-167, 169 (հմմտ. Ռայ)
Ռայ, Ռայացի 155, 164, 167, Ռէյ, Ռէոյ, Ռէյացի 155, 162
Ռմբի խոռ 228 (նաեւ Ըռմբի խոռ)
Ռշտունիք 29
Ռոստակ, Ռոսաստակ, Ռոստաստակ, Ռստակ 256, 257, 258 (տե՛ս Ուտի Առանձնակ)
Ռոտ-ի Բաղայ 300
Ռոտ Պացեան, Ռոտ Պարսեան, Ռոտ Պայեակ 110, 113, 118, 216, 218, 298, 299, 300, 315
Ռոտաստակ 257 (տե՛ս Սիսականի Կոտակ)
Ռուք 282 (հմմտ. Սեւորդիք)
Ռուսաստան, Ռուսիա, ռուսներ 10, 27, 134, 244, 302, 348, 360, 362, 364, 375, 380
Սակաւէնէ 402, 403, 407, 409, 414-416
Սակեր 415
Սահլապատ 262
Սաշաթ 376
Սարգիս *գիւղ* 294
Սարէնշէն, Սարիշէն 106, 395
Սարկողովք 187 (տե՛ս Սրկղունք)
Սարսանգ 254
Սաւոք 240, 409 (տե՛ս Սոթք)
Սափիան 294
Սափչի, Սափչանապատ 236, 239

Սեհիլար *Ծարի* 237, 238, 260
Սեհիլար *Մաղատուգի* 395
Սելեվկիա 168
Սելջուկներ 68, 70, 117, 329, 331, 332
Սեյտեր 366 (տե՛ս Օրոտա-կան)
Սև վրանատերներ 381 (տե՛ս Ղարաչորլու)
Սևանա լիճ 228, 238, 259, 264, 265, 409
Սևանի լեռնաշղթա 415
Սևանի վանք 271
Սևաջուր 241, 244, 246
Սևորդիք 282
Սևջուր գ. 118, 306 (նաև Մեծամորի գետակ)
Սեօգիւթլու Մեծ 51, 224
Սեօյուդլու 238
Սեօյուդլուչայ գ. 237, 238
Սէրոջ գ. 217
Սթունիս 28, 350
Սիրակէնէ 406, 407 (տե՛ս Սիսակէնէ)
Սիսական 95, 108, 213, 228, 269, 281, 283, 406, 415, 416 Սիսականեայք, Սիսաւա-նեայք 278, Սիսականեան աշխարհ 205 (նաև Սիւ-նիք)
Սիսական-ի Կոտակ 7, 10, 21, 63, 95, 97, 98, 110, 120, 213, 214, 216, 217, 219, 220, 272, 276-279, 284, 296, 299, 318, Սիսական 102, 277, Սիսական-ի Ոս-տան 276, 278, Փոքր Սիւ-նիք 276, 278, Փոքր Սիսա-կան 220 (նաև Սիսան)
Սիսակէնէ 406, 407, 415, 416
Սիսան 97, 98, 110, 276, 277 (տե՛ս Սիսական-ի Կո-տակ)
Սիսիան 15, 183, 342, 376, 377
Սիստան 69, 329
Սիրակէնէ 407 (տե՛ս Սիսա-կէնէ)
Սիրիա *ոստ., ֆր.* 152, 153, 156, 170, 180 (տե՛ս Ասո-րիք)
Սիրնեաց *վրիպ.* 423 (տե՛ս Սիւնիք)
Սիւնիտիս *վրիպ.* 404 (տե՛ս Փաւնիտիս)
Սիւնիք, Սիւնեաց 9, 10, 17, 23, 44, 59, 60, 61, 67, 68, 96, 109, 129-133, 136, 142, 144, 154, 160, 183, 187, 203, 205, 210, 220, 221, 226-228, 230, 232, 239, 249, 259, 260, 264, 266, 268-276, 278-283, 301, 305, 310, 313, 319, 374, 377, 384, 389,404, 406, 407, 413, 415, 416, Մեծ Սիւնիք 131 (նաև Սիսական)
Սլատոններ 29, 113
Սլուբեցիք (Սլուբեցոյ) 262
Սխաղան դղեակ 250
Սխտորալէզ 188 (տե՛ս Խստորալէզ)
Սկաբուս 376
Սկարժէլ 376
Սկեւռայ 152
Սղնախ 382
Սոդուկէնէ 281, 407, 409, 410, 412-415
Սոթ, Սոթք *գիւղ* 236, Սոթ Գլուխ 259

Սոթք *գտ.* 24, 25, 28, 226, 228, 232, 236, 238-240, 253, 259, 263-266, 274, 281, 409, 414, Սոդք, Սոդէ-ից 226, 227, 233, 234, Սո-թէի 241 (նաև Սատք, Սօդք)
Սոնասար 25, 130, 352, 391 (նաև Սունասար. հմմտ. Զինասար)
Սովնիսէնէ *վրիպ.* 404 (տե՛ս Կոմիսէնէ)
Սուարան *արար.* 28, 350 (տե՛ս Սթունիս)
Սուլթանքենդ 144 (տե՛ս Մէլիքքաշէն)
Սունասար 25, 391 (տե՛ս Սոնասար)
Սուս 27, 71 (հմմտ. Լոռիք)
Սուսանըղդ 117 (տե՛ս Մո-խենիս)
Սպիտակաշէն, Սպիտակ շէն 115, 294
Սպիտակաջուր 25, 36, 320, 351, 353-355, 357, 359, 367, 383
Սպիտակաւորի Ս. Աստուա-ծածին 188, 324, 345
Ստեփանակերտ 7, 106, 216, 253, 395
Ս. Ստեփաննոս *Զէյվայի* 134, 135
Ս. Ստեփաննոս *Հարարի* 286
Ս. Ստեփաննոս *Վաղադնի* 15
Ս. Ստեփանոս *Գետուգի* 286, 405
Ս. Ստեփանոս *Խոզնավա-րի* 384, 385
Սրկղունք, Սրկղօնք 187 (նաև Սարկողովք)
Սօդք 281 (տե՛ս Սոթք)
Վազգէնաշէն 47, 107 (նաև Հաջիսամլու)
Վախթանկենց այգի 345
Վակունիս 52, 63, 85, 86, 92, 101-103, 120, 220-224 (նաև Վրկընիս, Վկունիս)
Վակունիք 95, 101, 220, 415 (տե՛ս Վայկունիք)
Վահանավանք 67-69, 333
Վաղադնոյ վանք, Վաղադ-նավանք 15, 16, 142-143
Վաղազադուն 27, 350, 379 (տե՛ս Վարազգոմ)
Վաղազին 101, 102, 221-223
Վաղազնոյ գետ, Վաղազ-նագետ գ. 63, 80, 85, 86, 89, 92, 101-103, 120, 221, 320, 334
Վաղաթու, Վաղատու 22, 34, 384 (հմմտ. Բայան-դուր)
Վաղարշապատ 69, 75, 134, 156, 165, 229, 256, 287, 322, 325, 371, 381
Վաղաւեր 294
Վաղունաս 263, 324
Վաճառ 324
ալ-Վայզուր 282 (տե՛ս Վա-յոց ձոր)
Վայկունիք 9, 10, 51-53, 62, 70, 95, 98, 101, 102, 108, 120, 216, 220, 221, 225, 226, 277, 302, 319, 375, 415 (նաև Վակունիք, Վերին Վայկունիք)
Վայոց ձոր 71, 96, 186-188, 204, 228, 230, 280, 282, 324, 345, Վայոձոր 243 (նաև Ալ-Վայզուր)
Վայունիք *գիւղ* 52, 102, 226
Վան 289
Վանանդ *(Գողթն)* 228

Վանք *գիւղ* 262
Վանքասար 312
Վանքով խաբարայ 223
Վառանդիճ 307 (տե՛ս Վարանդայ)
Վասակակերտ, Վասակերտ 24
Վասակաշէն 238 (նաև Վարդենիս)
Վասպուրական 29, 93, 214, 230, 231, 281, 282, 404, 409 (նաև Ալ-Դայրանի)
Վատնեան դաշտ 93
Վարազգոմ 27, 350, 379, Վարազգոմն 363, Վարազգոմն-Գերիկ *ռուս.* 360 (նաև Վաղազաղոմն)
Վարանդայ, Վարանդ 105, 111, 304, 310, 381 (նաև Վառանդիճ, Վարնդա, Վերէնդէ)
Վարարակն *գ.* 306, 308, 310, 311, 313, 315, 395
Վարդենիս 238 (տե՛ս Վասակակերտ)
Վարզական 282
Վարժակի աղբիւր 234
Վարնդա 304 (տե՛ս Վարանդայ)
Վարշակի ջերմուկներ 234
Վեճկերտ, Վեկերտ 309
Վենետիկ 217, 218
Վերէնդէ 304 (տե՛ս Վարանդայ)
Վերի ձոր 378 (տե՛ս Աղուերծ)
Վերին Խաչէն 261-262, 372 (տե՛ս Խաչէն)
Վերին Նորավան ուխտ 286
Վերին Ծինաթաղ 262
Վերին Վայկունիք 62, 98, 101, 102, 221, 277 (տե՛ս Վայկունիք)
Վըկընիս 103 (տե՛ս Վակունիս)
Վիրք, Վրաց 60, 152, 162, 163, 166, 205, 267, 381, 402 (նաև Գուրգան)
Վկունիս 46, 222 (տե՛ս Վակունիս)
Վնեսայ *լ.* 112, 300
Տաբար 317 (ճմմտ. Տրակետ)
Տաբար-Մէյեր 376
Տաթեւ 9, 12, 21, 23, 28, 29, 33, 40, 43, 45, 106, 119, 129, 131, 132, 136, 146, 198, 205, 206, 227, 236, 338, 348--352, 359, 366, 367, 372, 373, 377, 383
Տաճէս, Տաճիս 115, 120 (տե՛ս Տայիս)
Տաղձանք, Տաղձանս 256
Տաճիկներ 68-70, 252, 286, 329, 330
Տայգրեան 292
Տայիս 79, 115
Տայմա 162
Տայք 29
Տանձի ճող 345
Տանձավեր 378
Տանձուտ 366
Տաշալթի 105 (տե՛ս Քարատնիս)
Տաշիր 60
Տափատ 107, 284, 294
Տեկոր 180
Տեղ 22, 177, 195, 196
Տերիա 318, 405 (ճմմտ. Տրակետ)

Տիար, Տիր 316, 317 (ճմմտ. Տրակետ)
Տիգրանակերտ 312
Տիգրիս 168, 292
Տիզակ 117, Տիզաղ 311 (տե՛ս Դիզակ)
Տիզքոն 153, 164, 168
Տիրամայր Աստուածածին *Աղուէսահարքիի* 148, 341, 343-345, 347-349
Տոլորս 27, 71 (նաև Տուլուս)
Տող 76, 92, 115-117, 120, 304
Տոսպեցի *տոհմ* 411
Տուզաղ 304 (տե՛ս Դիզակ)
Տուլուս 27, 71 (տե՛ս Տոլորս)
Տումի, Տումից 62, 76, 116, 117
Տուս Քուստակ 216, 218, Տուչքաստակ 218
Տպէլ 245 (նաև Բաշտիբէլ)
Տրի 218, 296, 297, 299, 315 (տե՛ս Տրի)
Տրակետ, Տրագետ 317, 406 (նաև Տաբար, Տիար, Տիր)
Տրի 6, 63, 95, 98, 99, 110, 113, 118, 120, 121, 217, 218, 277, 278, 296-300, 306, 317, Տրիոյ 110, 297, Տրխոյ *վրիպ.* 297, Տրւոյ 97, 98, 110, 277, 296, 297 (նաև Տրի, Տրւոյ)
Տրտու *գ.* 20, 52, 98, 102, 219, 220, 221, 225, 226, 232, 238, 239, 241, 245, 248, 251-253, 263, 264, 272, 297, 299, 302, 315, 318, 335, 414. Տրտուական 255, 257 (նաև Թարթառ)
Րախիշ 45, 46, 55, 71, 320 (տե՛ս Արախիշ)
Րախիշի գետակ *գ.* 46, 51, 54, 55, 70, 71, 222, 320 (նաև Ղորչուչայ)
Ցաղաց քար 56, 187
Ցնծահայ 262
Ցողկեպան 283 (ճմմտ. Ջորք-Կապան)
Ցորի *լ.* 318
Ցրագետ անապատ 243, 244
Փայտակարան 219, 316, 408, 411
Փանէնէ 401, 402 (տե՛ս Փառնէնէ)
Փառիսոս 59-61, 227, 267, 282, 403
Փառնէնէ 403, 406, 409, 414, 415
Փառնէս, Փառնէսի քուստ 403 (տե՛ս Քուստ-ի Փառնէս)
Փարախ *(")* 92
Փարաջանց 108, 285, Փարաճանց 285, Փարաջան 294
Փարիզ 21, 44, 131, 140
Փարպի 179
Փաւնէնէ 401-404, Փաւէնէ 401, 402 (տե՛ս Փառնէնէ)
Փաւնիտիս 404, 416, 419
Փիրջահան, Փիրջան 394 (տե՛ս Գողթանիկ)
Փիփ 416 (նաև Ջագլիկ)
Փորակ *գւռ.* 228
Փոլ 28, 350, 353, 359, 360, 365-367
Փոքր Ակերայ 10, 98, 318

Փոքր Աղբակ 290
Փոքր Ասիա 288
Փոքր Հաբանդ 95, 121, 217, 301, 414 (տե՛ս Միւս Հաբանդ)
Փոքր Հայք 218
Փոքր Զաբ 219
Փոքր Սիւնիք 93, 95, 98, 131, 220, 259, 260, 272-276, 279, 415
Փշանիս 391 (տե՛ս Բշանիս)
Քարալայի երկիր 282
Քաթիշայ վանք 74, 75 (տե՛ս Գոշավանք)
Քահանայի բլուր 55 (տե՛ս Քեշիշթափա)
Քաղամոր, Քալամոր 367 (տե՛ս Քեղամոր)
Քամալլը *ռուս.* 361
Քաշաթաղ *գւռ.* 9, 12, 20, 21, 24, 34-37, 55, 102, 203, 204, 221, 296, 305, 320, 348, 349, 359, 373-379, 384, 389, Քաշթաղ 28, 350, 373, 376, 377, 381, 384, 385, 386 (նաեւ Քեշտաղ, Քշթաղ, Գուշթասիֆ, Քուշթասիֆ)
Քաշաթաղք *գիւղ* 143, 144, 385
Քաշունիք 99, 335 (նաեւ Միւս Բաղք)
Քասաղ 171, 174, 177, 180
Քաւթառանց 237
Քարագլուխ *Աղահեջքի* 353, 366, 383
Քարագլուխ *Դիանքի* 252, 312
Քարահան *գ.* 141
Քարահունջ *Հաբանդի* 119
Քարահունջ *Դազկանքի* 119, 309
Քարաշէն 23, 143
Քարավաճառ 245 (տե՛ս Քարվաճառ)
Քարատակ 241
Քարատնիս 63, 86, 92, 103, 105, 114, 115, 120 (տե՛ս Տաշալթի)
Քարաւազ 99, 227
Քարդագետ 82 (տե՛ս Քրդագետ)
Քարինզ 104
Քարինտակ, Քարէնտակ 105, 115 (նաեւ Դաշալթի, Տաշալթի)
Քարուէն, Քարուինայ 119, 309
Քարվաճառ 225, 234, 235, 237, 245 (նաեւ Քարավաճառ, Քելբաջար)
Քեաթուկ 306
Քեամալլու, Քեամանլի, Քյամալլը 360, 361, 364, 384
Քելբաջար 234, 237 (տե՛ս Քարվաճառ)
Քեղամոր 366, 367 (նաեւ Քաղամոր)
Քեշիշթափա 55 (նաեւ Քահանայի բլուր)
Քեշիշքենդ 188 (տե՛ս Եղեգնաձոր)
Քեշիշքենդ 244 (տե՛ս Երիցի շէն)
Քեշտաղ 376 (տե՛ս Քաշաթաղ)
Քերթ 224, 309
Քերման 153

Քեօնդալան, Քեօնդալանչայ *գ.* 110, 111, 118, 300, 308, 315 (տե՛ս Մանաս)
Քեօղլար 23 (համմտ. Քրաւնք)
Քեօսալար 135
Քթիշ (Քթշա), Քթիսոյ վանք 74, 120
Քիլսեալու 244
Քիրս *լ.* 249
Քիւրաթաղ 112, 113, 300 (նաեւ Հիւքիւրաթաղ)
Քիւրդլար 112, 114, 300
Քիւրդհաջի 36 (տե՛ս Մովսէսաշէն)
Քնարիկ, Քունարցի 154
Քշթաղ, Քըշթաղ 305, 376, 377, 383 (տե՛ս Քաշաթաղ)
Քոլատակ *գիւղ* 314
Քոլատակ *գ.* 314, 315
Քոչիզ, Քոչիզու 303-305, 310, Քոչէզ 304, Քոչուս 118, 121, 303 (նաեւ Քօչիզ)
Քունար, Քունարցի 153, 154
Քունարաստան, Քուրաստան, Քունարեստան 153
Քուշթասիֆ 350, 373, 378, 379 (նաեւ Գուշթասիֆ, տե՛ս Քաշաթաղ)
Քուստ-ի Փառնէս 216, 403
Քռաանի 64
Քրաւնք 23 (նաեւ Քրօնք)
Քրդագետ 82, 86-88, 92, 105, 112-115, 120, 121, 300 (նաեւ Քարդագետ)
Քրդեր, Քրտաց 209, 381
Քրթմանիկ 416
Քրօնք 23 (տե՛ս Քրաւնք)
Քօնդալան 111 (տե՛ս Քեօնդալան)
Քօշկայ 262
Քօչիզ 304 (տե՛ս Քոչիզ)
Օբարէնէ 405-407
Օկտեաբրբերդ 244 (տե՛ս Հանաւ)
Օձաբերդ 103, 104, 108, 114, 293, Օխծաբերդ 103 (տե՛ս Խծաբերդ)
Օձուն 180
Օղվերծ 275 (տե՛ս Աղուերծ)
Օտաղլու 234
Օտենա 405, 407, Օտէնէ 406-408, 417
Օտղշլաղ 234
Օրխիստէնէ 401-404, 409, 413-415
Օրուջլու 244, 246 (համմտ. Հայլուն)
Օրքիստէնէ, Օրտսիխէնէ 401 (տե՛ս Օրխիստէնէ)
Ֆաւէնէ 401 (տե՛ս Փառնէնէ)
Ֆիզուլի 112, 297, 300 (նաեւ Կարեագին)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ...5
I. Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը 9
II. Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ Հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները.......................73
III. Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը, նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը.......................129
IV. Սիսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի.......................213
V. Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը. Բ 319
VI. Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք աշխարհները անտիկ աղբիւրներում.......................401
Լուսանկարներ 421
Ցանկեր 431


ԳԵՂԱՄԱՅ ԾՈՎ
ՎԱՅՈՑ ՁՈՐ
ՄԵԾ ԻՐԱՆՔ
ԱՐՑԱԽԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՍԻՒՆԻՔԻ
ՀԻՒՍԻՍ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԱՒԱՌՆԵՐԸ
ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի
Մասշտաբ 1:650000
ՈՒՏԻՔ Մեծ Հայքի աշխարհներ
ԲԵՐՁՈՐ Մեծ Հայքի գաւառներ
Աշխարհների սահմաններ
Գաւառների սահմաններ
Արախիշ Վաղ եւ ուշ միջնադարի գիւղեր
Վանքեր
Բերդեր
Եղջերխոռ 3550 Լեռնագագաթներ

ՆԵՐԴԻՐ 3


ՄԱՍՇՏԱԲ
1 : 225000
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ՎԱԿՈՒՆԻՍ
Պատմական գյուղեր և գյուղատեղիներ
Հայթաղ
Այլ բնակավայրեր
Եկեղեցիներ կամ վանքեր
Տապանաքարեր և խաչքարեր
Հին կամուրջներ
ՍԱՀՄԱՆՆԵՐ
Սիւնիքի և Արցախի սահմանը
Սիւնիքի և Արցախի գավառների սահմանները
ՎԱԿՈՒՆԻՍ
ՎԱՂԱՑԻՆ
ԱՐՏԱՇԱՒԻ
ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ
ԵՋՆԱԳՐՄԵՐ
ԱՐՈՒԱԿԱՆ
ՀԱԿ
ՎԱՐԱԶԳՈՄ
ՍՈՆԱՍԱՐ
ՀՈՑԱՆՑ
ԱԹՈՒՆԻՍ
ԽՈՋՆԱՎԱՐ
ՎԱՂԱՏՈՒՐ
ԱՐԱՀՈՒԾ
ՇԱՐԱԽ
ԱՐԱՒԻՍ
ՏԵՂ
ԿՈՌՆԻՁՈՐ
ԽՆՁՈՐԵՍԿ
ԲԱՑՄԱԾԱԿՔ
ԳՈՐՈՒ
ՔՐՈՆՔ
ԱՄՈՒՏԵՂ
ՄԵԾՇԵՆ
ՀԱՐԱՐ
ՀԱԿԱՐԻ
Որոտան
Հակարի



«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՔԱՐՏԵԶ-ՍԽԵՄԱՅԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ (ՈՒՏԻՔ, ԱՐՑԱԽ, ՍԻՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՀԱՏՈՒԱԾ)

ՆԵՐԴԻՐ 4

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՒ ՈՒՏԻՔ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի
Հեղինակ՝ ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ © 2009
Հիմքում օգտագործուած է Ա. Մ. Ոսկանեանի՝ «Հայկական լեռնաշխարհի եւ հարեւան շրջաններ» (Եր., 1976) ֆիզիկական ստուերատուած քարտէզը
ՄԱՍՇՏԱԲ՝ 1:1.500.000
ԱՐՑԱԽ
Մեծ Հայքի աշխարհներ
Աշխարհների սահմաններ
ԲԵՐՁՈՐ
Մեծ Հայքի գաւառներ
Գաւառների սահմաններ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆ
Մեծ Հայքի հարեւան երկրներ
Մեծ Հայքի սահմաններ
ՆԱԿՈՐԶԱՆ
Բնակավայրեր եւ ամրոցներ
Երասխ Արաքս
Գետեր (հին եւ նոր անուններ)
2577
Լեռնագագաթներ (հին եւ նոր անուններ)
ՕՐԽԻՍՏԵՆԷ
Անտիկ աղբիւրների յիշատակած մարզեր
Թուերով նշուած գաւառներ. 1 - ԵՕԹՆՓՈՐԱԿԵԱՆ ԲԱԳԻՆՔ (Փայտակարան), 2 - ՋԱՐԱՒԱՆԴ (Պարսկահայք), 3 - ՆԱԽՃԱՒԱՆ (Վասպուրական), 4 - ԱՐԱԾՈՅ ԿՈՂՄՆ, 5 - ՄԱՍԵԱՑՈՏՆ, 6 - ԱՐԱԳԱԾՈՏՆ (Այրարատ)